

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՀՆԱԳՈՒՅՆ  
ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ  
ՄԻՆՁԵՎ  
ՄԵՐ ՕՐԵՐԸ





NATIONAL ACADEMY OF THE SCIENCES OF REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

THE CULTURE OF WATER USE  
IN ARMENIA  
FROM ANCIENT TIMES  
TO OUR DAYS

YEREVAN  
AICA-Armenia, Institute of Contemporary Art  
2024

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ  
ՄԻՆՁԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

ԵՐԵՎԱՆ  
ԱԿԱ-Արմենիա, Ժամանակակից արվեստի ինստիտուտ  
2024

UDC 94(479.25):626  
BISAC HIS026000, SOC008070

**The Culture of Water Use in Armenia from Ancient Times to Our Days.** Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia. Yerevan. AICA-Armenia, Institute of Contemporary Art, 2024. 280 p.

DOI: <https://doi.org/10.70459/cm/2024.001>

The monograph includes results of studies in humanities and social sciences as well as interdisciplinary studies related to the culture of water use in Armenia, in particular, the irrigation systems, and shows the current state and the relevance of these investigations. In the presented articles, the issues related to the culture of water use are considered and discussed from the point of view of archeology, ethnography, philology, epigraphy, archaeobiology and other related disciplines, which until now were considered understudied. The articles are accompanied by descriptions and photographs of cultural landscapes, historical and cultural monuments, artifacts, cultural processes and phenomena, as well as natural environments and bioclimatic factors that have influenced the culture of water use, which further increases the value of the work.

The publication was prepared within the framework of the project "The Culture of Water Use in the Armenian Highlands from Ancient Times to the Present" (21AG-6A080) funded by the Committee of Higher Education and Science of Armenia.

ISBN 978-9939-9339-0-0 (print)  
ISBN 978-9939-9339-1-7 (eBook)

© AICA-Armenia, Institute of Contemporary Art 2024  
© Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia, 2024



ՀՏԴ 94(479.25):626  
ԳՄԴ 63.3(5Ը)+38.77  
Ջ 860  
BISAC HIS026000, SOC008070

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Ժողովածուի խմբագիրներ՝ Արսեն Բորոխյան, Ռոման Հովսեփյան  
Տեխնիկական խմբագիրներ՝ Հասմիկ Գալստյան, Անի Սարատիկյան, Ավետիս Գրիգորյան

**Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը /**

Ջ 860 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ. – Եր.: ԱԻԿԱ-Արմենիա, Ժամանակակից արվեստի ինստիտուտ, 2024. – 280 էջ:

DOI: <https://doi.org/10.70459/cm/2024.001>

Կոլեկտիվ մենագրությունը ներառում է Հայաստանի ջրօգտագործման մշակույթին, մասնավորապես՝ ոռոգման համակարգերին առնչվող հումանիտար, հասարակագիտական և միջգիտաճյուղային հետազոտությունների արդյունքներ, որոնք ցույց են տալիս ոլորտում կատարվող ուսումնասիրությունների ընթացիկ վիճակը և այդ հետազոտությունների արդիականությունը: Ներկայացված հոդվածներում ջրօգտագործման մշակույթին վերաբերող հարցերը դիտարկվում և քննարկվում են հնագիտության, ազգագրության, բանագիտության, վիճագրագիտության, հնակենսաբանության և հարակից այլ գիտաճյուղերի տեսանկյունից, որոնք մինչև օրս համարվում էին չուսաբանված: Հոդվածները ուղեկցվում են մշակույթային լանդշաֆտների, պատմամշակութային հուշարձանների, արտեֆակտների, մշակութային գործընթացների և երևույթների, ինչպես նաև ջրօգտագործման մշակույթի վրա ազդեցություն թողած բնական միջավայրերի և բնակլիմայական գործոնների մասին պատմող նկարագրություններով և լուսանկարներով, ինչն ավելի է մեծացնում աշխատանքի արժեքը: Ժողովածուն պատրաստվել է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» նախագծի (21AG-6A080) շրջանակում:

ISBN 978-9939-9339-0-0 (տպագիր)  
ISBN 978-9939-9339-1-7 (էլ. հրատ.)

© ԱԻԿԱ-Արմենիա, Ժամանակակից արվեստի ինստիտուտ, 2024  
© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

## CONTENTS / ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

INTRODUCTION AND SUMMARY	8
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	14
1. <i>Boris Gasparyan, Artur Petrosyan, Varduhi Melikyan, Hayk Haydosyan, Ani Adigoyzalyan, Dmitri Arakelyan, Samvel Nahapetyan, Phil Glauberman</i> USE OF WATER RESOURCES AT THE TERRITORY OF ARMENIA BY THE PALEOLITHIC POPULATION	21
<i>Բորիս Գասպարյան, Արթուր Պետրոսյան, Վարդուհի Մելիքյան, Հայկ Հայդոսյան, Անի Ադիգոյզալյան, Դմիտրի Արակելյան, Սամվել Նահապետյան, Ֆիլ Գլաուբերման</i> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	21
2. <i>Hayk Avetisyan, Artak Gnuni, Levon Mkrtchyan, Gagik Sargsyan</i> CULTIC COMPLEXES IN THE CONTEXT OF IRRIGATION SYSTEMS	63
<i>Հայկ Ավետիսյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Գագիկ Սարգսյան</i> ԾԻՍԱՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	63
3. <i>Arsen Bobokhyan</i> "ALALU SONGS AND THE IMAGE OF ASTGHİK": IRRIGATED AGRICULTURE ORGANIZATION SPECIFICS IN ANCIENT VASPURAKAN	72
<i>Արսեն Բոբոխյան</i> «ԱԼԱԼՈՒ ԵՐԳԵՐՆ ՈՒ ԱՍՏԳԻԿԻ ՊԱՏԿԵՐԸ». ՈՌՈԳՈՎԻ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ	72
4. <i>Roman Hovsepian</i> ON THE PREHISTORIC IRRIGATED AND RAIN-FED AGRICULTURAL SYSTEMS IN THE TERRITORY OF ARMENIA (ACCORDING TO ARCHAEOBOTANICAL STUDIES)	80
<i>Ռոման Հովսեփյան</i> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՈՌՈԳՈՎԻ ԵՎ ԱՆՋՐԴԻ ԵՐԿՐԱԳՈՐԾՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՇՈՒՐՁ (ԸՍՏ ՀՆԱԲՈՒՍԱԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)	80
5. <i>Arsen Bobokhyan</i> THE LION-DRAGON OF EBLA AND THE ICONOGRAPHY OF THE FLOW OF HEAVENLY WATERS	90
<i>Արսեն Բոբոխյան</i> ԷԲԼԱՅԻ ՎԻՇԱՊԱՌՅՈՒԾԸ ԵՎ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՀՈՍՔԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	90
6. <i>Tork Dalalyan</i> MYTHOLOGICAL DRAGON AND THE EMERGENCE OF IRRIGATION SYSTEMS	99
<i>Տորք Դալալյան</i> ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՇԱՊԸ ԵՒ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՋԱՅՈՒՄԸ	99
7. <i>Ani Saratikyan</i> THE WATER USE SYSTEM IN THE SHNOGH RIVER BASIN (FROM ANCIENT TIMES UNTIL OUR DAYS)	106
<i>Անի Սարատիկյան</i> ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՇՆՈՂ ԳԵՏԻ ԱՎԱՋԱՆՈՒՄ (ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ)	106

8. *Mikayel Badalyan, Stéphane Deschamps, François Fichet de Clairfontaine, Henrik Danielyan*  
ON THE WATER SYSTEM OF EREBUNI FORTRESS 117  
*Միքայել Բադալյան, Ստեֆան Դեշամպ, Ֆրանսուա Ֆիշե դը Բլեֆոնտայն, Հենրիկ Դանիելյան*  
*ԷՐԵԲՈՒՆԻ ԱՍՐՈՑԻ ԶՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇՈՒՐՁ* 117
9. *Levon Mkrtchyan, Gagik Sargsyan*  
WATER RESERVOIRS OF MEDIEVAL FORTRESSES 125  
*Լևոն Մկրտչյան, Գագիկ Սարգսյան*  
*ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՍՐՈՑՆԵՐԻ ԶՐԱՀԱՎԱՔ ՊԱՀԵՍՏԱՐԱՆՆԵՐԸ* 125
10. *Tigran Aleksanyan, Artak Hakhverdyan*  
THE RESERVOIRS OF THE MEDIEVAL FORTRESSES OF BERD REGION 135  
*Տիգրան Ալեքսանյան, Արտակ Հախվերդյան*  
*ԲԵՐԴԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՍՐՈՑՆԵՐԻ ԶՐԱՀԱՎԱՔ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ* 135
11. *Hamlet Petrosyan, Ruben Hovsepyan, Hamazasp Abrahamyan*  
PRELIMINARY OBSERVATIONS ON THE WATER SUPPLY OF DVIN 143  
*Համլետ Պետրոսյան, Ռուբեն Հովսեփյան, Համազասպ Աբրահամյան*  
*ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՎԻՆԻ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ* 143
12. *Arman Nalbandyan*  
NEW DISCOVERIES TOWARDS THE WATER USE SYSTEMS  
OF THE MEDIEVAL BATHS OF THE LORE BERD FORTRESS 151  
*Արման Նալբանդյան*  
*ՆՈՐԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ԼՈՌԵ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՂՆԻՔՆԵՐԻ*  
*ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ* 151
13. *Avetis Grigoryan, Boris Gasparyan, Dmitri Arakelyan,*  
*Ani Adigyozyalyan, Hayk Haydosyan, Artur Petrosyan*  
MANAGEMENT OF WATER RESOURCES IN MEDIEVAL ARMENIA BASED  
ON THE ARCHAEOLOGICAL AND EPIGRAPHIC SOURCES (SEVERAL EXAMPLES OF COMBINATION) 164  
*Ավետիս Գրիգորյան, Բորիս Գասպարյան, Դմիտրի Առաքելյան,*  
*Անի Ադիգոզալյան, Հայկ Հայդոսյան, Արթուր Պետրոսյան*  
*ԶՐԱՅԻՆ ՊԱՀԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*  
*ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԻՄԱԳԻՐ ՄԿՋԲՆԱԳՔՈՒՐՆԵՐԻ*  
*(ՀԱՄԱԴՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ)* 164
14. *Arsen Harutyunyan*  
CANAL CONSTRUCTION IN MEDIEVAL ARMENIA  
ACCORDING TO ARMENIAN EPIGRAPHIC SOURCES 187  
*Արսեն Հարությունյան*  
*ԶՐԱՆՑՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ*  
*ԸՍՏ ՀԱՅ ՎԻՄԱԳԻՐ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ* 187
15. *Ashot Manucharyan*  
EVIDENCE OF WATER USE IN EPIGRAPHIC INSCRIPTIONS OF ARAGATSOTN 196  
*Աշոտ Մանուչարյան*  
*ԶՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ* 196
16. *Avetis Grigoryan*  
HISTORY OF THE STUDY OF SUBMERGED MONUMENTS OF ARMENIA  
ACCORDING TO THE ARCHIVAL DOCUMENTS OF THE PROTECTION SERVICE 205  
*Ավետիս Գրիգորյան*  
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶՐԱԾԱԾԿ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*  
*ԸՍՏ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ* 205

17. <i>Rafik Gabrielyan</i>		
IRRIGATION SYSTEMS OF TERRACES IN ARMENIAN CULTURE		222
<i>Ռաֆիկ Գաբրիելյան</i>		
ԴԱՐԱՎԱՆԴՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ		222
18. <i>Gevorg Gyulumyan</i>		
REFLECTION OF PROBLEMS RELATED TO IRRIGATION IN THE FOLKLORE OF THE ARMENIANS OF GARDMAN		231
<i>Գևորգ Գյուլումյան</i>		
ՈՌՈԳՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ԳԱՐԴՄԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ		231
19. <i>Hasmik Galstyan</i>		
THE SIGNIFICANCE OF THE CONSTRUCTION OF THE SHIRAK CANAL AND ITS REFLECTION ON FOLKLORE		243
<i>Հասմիկ Գալստյան</i>		
ՇԻՐԱԿԻ ՋՐԱՆՑՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ		243
20. <i>Hagop Tcholakian</i>		
PAST AND PRESENT IRRIGATION OPPORTUNITIES IN KESSAB DISTRICT		254
<i>Յակոբ Չոլաքեան</i>		
ՔԵՍԱՊԻ ՇՐՋԱՆԻ ՈՌՈԳՄԱՆ ՆԱԽԿԻՆ ԵՒ ԱՐԴԻ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ		254
21. <i>Ani Saratikyan, Tork Dalalyan</i>		
IRRIGATION SYSTEM ON THE ARMENIAN-AZERBAIJAN BORDER. THE CASE OF BERKABER (JOGHAZ) WATER RESERVOIR (TAVUSH REGION)		264
<i>Անի Սարատիկյան, Տորք Դալալյան</i>		
ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐՋԻ ԲԵՐԲԱԲԵՐԻ (ՋՈՂԱՋԻ) ՋՐԱՄԲԱՐԻ ՕՐԻՆԱԿԸ		264
AUTHORS / ՀԵՂԻՆԱԿՆԵՐ		277

## INTRODUCTION AND SUMMARY

“Waters flow from the high peaks of the mountains, with the full irrigation satisfying the fields, which, flourishing with a population of countless men and women, supply the city with abundant bread and wine, aromatic and honey-sweet vegetables, and various oil-bearing seeds.” This is how Ghazar Parpetsi describes the process of irrigation of the Ararat valley in the 5<sup>th</sup> century, but with such words that seem to refer to Armenia of all times.

The Armenian Highlands, being the richest geographical junction with water resources in South Western Asia, have used this wealth as an economic and spiritual potential since ancient times. The importance of these resources has been great for meeting the needs of the country's population. The water arteries coming out of the highlands nourished the Syrian-Mesopotamian steppe zones, and as a result of the organization of water use, the first organized communities appeared in those regions. The importance of the water network of Armenia for the population of both the highlands and the regions south of it has become the basis for the formation of various religious and mythological ideas. In those ideas, the highlands were perceived as a heavenly zone rich in water, traditions were created about water sources, and their opening or closing.

Evidence of water use in Armenia is known since the Stone Age, and written sources are present from the Bronze Age. According to the "irrigation civilization" theory, the first states arose as a result of the organization of irrigated agriculture, which implied the concentration of communal labor and human potential. This process was expressed in different ways and different zones. Thus, if in the societies of the Syrian-Mesopotamian type, irrigation was organized by changing the course of rivers and creating oases in the steppe regions, during which complex engineering measures were used, then in the mountainous regions, the possibilities of vertical zonation were used and water from the rain and melting snow of the high mountain zones was brought down to the foothills and plains. The organization of water resource consumption contributed somewhat to the development of communication systems and the formation of identities. Thus, river basins were indicators of

the main roadways that formed the communication system in certain areas. The significance of the lakes, which, as landmarks, played a significant role in the formation of space, was exceptional. Ancient Armenia can be defined as a zone of "mountain and lake-centered" societies, the arteries of which were the rich rivers and streams flowing from the high mountains.

Water is important in the material and spiritual lives of local people in Armenia, even nowadays. Drinking water resources, the main accumulations of which are located in mountainous countries characterized by a volcanic landscape, are becoming less and less in the modern world. From this point of view, Armenia belongs to the number of exceptional countries that are not only capable of satisfying the needs of the country with its own resources but also provide a surplus in the form of water flowing outside the territory of the country. The abundance of these resources may become a factor in emphasizing the country's importance in the future. When building a vision of the future, it is necessary to rely on the characteristics of the territory and population. In that vision, it is important first of all to reawaken the "worship of water" in the inner world of the citizen, which will instill in him care and concern for water. Only that sense of caring can make water an inner wealth and an outer factor.

Even though specialists from various fields have paid enough attention to the problem of water resource use, the culture of water use has rarely been considered as an object of systematic research. The present collection of studies is such an attempt, which aims at highlighting the history of water use from prehistoric times to the present days, discussing issues related to water resources management, as well as material and non-material cultural heritage. This multi-authored work includes the results of studies deriving from the humanities as well as interdisciplinary research related to the culture of water use in Armenia, particularly irrigation systems, which show the current state of research in the field and the relevance of this research. In the presented studies, the issues related to the culture of water use are considered and discussed from the point of view of archaeology, ethnography, philology, epigraphy, archaeobiology, as

well as other related disciplines. Various manifestations of the culture of water use are presented in separate sections, starting from the earliest stages of human settlement in Armenia to the present day. The research is accompanied by descriptions and photographs of cultural landscapes, historical and cultural monuments, artifacts, cultural processes, and phenomena related to water use, as well as natural environments and bioclimatic factors that have influenced water use culture.

Below, we present the brief content of the work "The Culture of Water Use in Armenia from Ancient Times to the Present Days", according to the conclusions given in individual sections.

In the section "**Use of water resources at the territory of Armenia by the Paleolithic population**" (Gasparian et al., current publication), the authors, summarizing the data related to the Paleolithic, conclude that water resources had primary importance in the lives of the first societies settled in the territory of Armenia and for the selection of certain landscapes by them. As evidence, the authors refer to the distribution of prehistoric settlements and stations along water basins, river banks and terraces, and near-shore areas of lakes, which provided the subsistence needs of hunter-gatherers. Moreover, the water basins also provided the Paleolithic people with the raw materials needed to make working tools: Paleolithic tools, especially those of the earliest phases (Olduvian and Acheulean stone-working traditions), were made of stones collected from nearby rivers. In addition to the above, the hunter-gatherers preferred to stay in the parts of the lakes where the rivers and streams that feed them flow. These shallow water flow sites were particularly attractive to game animals, whose herds visited these sites to drink water, becoming a target for hunters.

In the section "**Ritual complexes in the context of the irrigation system**" (Avetisyan et al., current publication), the authors refer to the sanctification of irrigation systems or their separate parts in later eras, which was perhaps inherited from the Paleolithic. Reference is made to the ritual objects that were supposed to ensure the ritual purity and safety of irrigation systems. It is noted that dragon-stone monuments, menhirs, ritual towers, and stone pile platforms were placed near natural springs, at the sources of rivers, at the beginning points and junctions of canals, and on the shores of natural and artificial reservoirs. These sacred areas, considered ritually purified, were also the locations of burial grounds. Irrigation systems were perceived as a whole, together with the ritual objects that protected or served them. To substantiate their thoughts, the authors also

refer to waterline maps with schematic images of the irrigation network drawn on boulders. Then it is mentioned that in the Bronze and Iron Ages, emphasis was placed on the use of rainwater and snowmelt water, and during the Van kingdom, in the conditions of a unified state, stable and uninterrupted irrigation was valued. As a result, ritual complexes associated with irrigation systems were subject to state standards, as evidenced by puluse-type monuments with royal inscriptions and curse formulas.

In the article "**Alalu's songs and Astghik's image: Peculiarities of the organization of irrigation agriculture in Ancient Vaspurakan**" (Bobokhyan, current publication), the author moves from the specific case mentioned in the title to the problem of the evolution of irrigation systems in the Armenian Highlands. Summarizing the written (cuneiform, Armenian) and archaeological data related to the topic, the author proposes a sustainable model of creating an irrigated agricultural landscape for the Armenian Highlands, which implies the construction of a canal by the initiative of the elite (bringing water from high mountain regions), the creation of a fertile zone (garden, field, meadow), the construction of cult structures (statue, tower), the ceremonies accompanied by ritual songs and sacrifices. Based on the results of the research on dragon stone monuments, the author suggests that the roots of the above model can reach early agricultural societies, having various forms of expression in different eras. If in the Early Bronze Age, in the Urartian and Classical periods, the inhabitants of the Armenian Highlands organized the irrigated agricultural landscape mainly at the horizontal level (focusing on the plains, rationally using natural and human resources and almost not going up to the highlands), then in the Chalcolithic, Middle Bronze Age, Late Bronze - Early Iron Ages, and Mediaeval period, they made mostly vertical movements (moving from the plains to the foothills, actively occupying the highlands, especially mountain plains). It is emphasized that the most important era of the organization of the irrigated agricultural area in the Armenian Highlands is obviously the Middle Iron Age, the period of existence of the Urartian state. The Urartian elite, possessing superior hydroengineering knowledge and imitating the South-West Asian value system, was concentrated in the plains, using river water locally, unlike the Bronze-Iron Age period people, who are archaeologically recorded especially in the foothills and high mountains and manage water resources from snowmelt through artificial ponds and associated canals (pre-Urartian techniques were not sufficient to use water from rivers). The author summarizes his work by noting that the or-

ganization of the vital space of agriculture, regardless of whether it is communal or state, was always accompanied by ritual practices, which sanctified (legitimized) the economic initiative.

The working theories and interpretations discussed in the section "**On the irrigated and rain-fed agricultural systems of the prehistoric times in the territory of Armenia**" (Hovsepyan, current publication), which are made based on archaeobotanical studies, complement the data discussed in the previous section. The author explains the practicing of agriculture in hard-to-reach and hard-to-cultivate mountain lands in prehistoric times with the aridification of the climate when the water resources in the lowlands were reduced, while there were still sufficient water resources for agriculture in the mountains (rain, springs, etc.). The work mentions that in the South Caucasus from the Early Bronze to the Early Iron Ages, only or mostly cereals were cultivated, and the situation was the same both in the mountains and in the lowlands. According to the author, the phenomenon of cultivating only cereals in the mountains can be explained by climatic conditions, while the cultivation of only cereals in the lowlands has other reasons. The author gives the following explanations for the phenomenon of people living in the lowlands, who cultivated only cereals during the Bronze Age and Early Iron Age. First, communities living in the mountains had an environmental and economic advantage due to having better access to water. Thanks to this factor, their agricultural traditions spread to communities living in the lowlands with worse conditions for subsistence. The second reason, according to the author, was the increase in demand for cereals in parallel with the growth of animal husbandry in mountainous conditions due to human biological requirements. As a result, there was low demand for pulses and oil-crops, because the need for proteins and fats/oil was covered by animal products, and they were pushed out of agriculture. The author also notes that the people living in the lowlands and the highlands were probably representatives of the same community (ies) (cf. the Yazidis of today's Armenia, who have a partly sedentary and partly transhumant lifestyle).

In the research "**The Lion-dragon of Ebla and the iconography of the flow of heavenly waters**" (Bobokhyan, current publication), based on the existing parallels, the author restores an iconographic motif of water spouting from the animal's mouth spread in the mountainous and lowland zones of the Near East. The iconography of the Ebla basalt monument and the limestone basin is taken as an example, which, in addition to the image of a dragon splashing water, has general and significant parallels with the iconography of the con-

temporary Trialeti and Karashamb silver vessels (hunting, procession, captivity, feast with musicians, feline, fish, lion-bull struggle, anzu bird, etc.). The author believes that the dragon stones belong to this same cultural world and are dated to the same era, or at least their bull-shaped and mixed versions, which do not lose their significance even in the Late Bronze Age. As an indirect argument, the author cites the topographic (mountain summits, near water sources) and iconographic (bull, fish, hybrid, bird, dragon fight, etc.) elements of the dragon-stones, which have parallels with the clearly dated Syrian and Mesopotamian monuments. The author also talks about the *longue durée* of this tradition. Thus, in later Armenian mythology, there are also dragon-like hybrids of the ancient Near Eastern style, among which is the dragon-lion.

In the work "**The mythological dragon and the emergence of irrigation systems**" (Dalalyan, current publication), the author tries to restore the mytheme underlying the myths of different peoples of the world regarding the emergence of irrigation systems. He notes that at the most primitive level, the formation of rivers and lakes is related to the activity of huge dragon-like beings, as a result of which they, as non-rational creatures, unwittingly cause seismic processes on the earth's surface. According to the author, at a more advanced level, the formula "dragon vs. dragon" works, when changes in the earth's crust are related to the conflict of two or more dragon-like beings. And at the most advanced level of dragon fighting, the "dragon vs. hero" formula already works, in which case the dragon's involuntary action is transformed into an imposed or simply conscious and voluntary behavior by the thunderous hero. According to the author, the most recent manifestations of this last level refer to the images in which the dragon is yoked to the plowshare or the plow and plows the land under the compulsion of the thunder hero, who acts as a farmer.

In the work "**The water use system in the Shnogh River basin**" (Saratikyan, current publication), the author refers to the societies that originated in the area of this river since the Early Bronze Age. She notes that the Iron Age sites - tombs, settlements and cyclopean fortresses - prove that there was a large population here in the first millennium B.C. Water use was more extensive in the Middle Ages, when water was consumed to irrigate gardens (mainly vineyards) and used for castles. The use of water for mining purposes is noteworthy, which, according to archaeological data, has a history of thousands of years in the river basin.

"**About the aqueduct system of the Erebuni fortress**" (Badalyan et al., current publication): the authors of the

research with the example of the aqueducts excavated in Altin Tepe and Erebuni talk about the existence of a highly developed aqueduct system in Urartu. Such aqueducts were built soon after the plans of the castles were designed in the preliminary stage and were mainly underground. The authors believe that the aqueducts mostly had a drainage function, but they do not reject the possibility that at least some of them were used for water supply.

Summarizing the data related to the advanced Middle Ages, the authors of the work **"Water collection-storage of medieval castles"** (Mkrtchyan, Sargsyan, current publication) write that it was impossible to provide gravity-lead water supply to castles built on hard-to-reach mountain tops, which is why special water collection basins were built. According to the authors, the water in these basins was accumulated in two ways: water was stored in small reservoirs, having been brought from the foothills or a nearby spring with animals (for example, Kaqavaberd, Vasakaberd, Qsuz, etc.). And, for larger reservoirs, rainwater was accumulated there using water collection platforms and then applying water purification methods (Arteni, Hatis, Qyoroghli, etc.). The authors also note that in many places all available methods of water storage were probably used simultaneously.

The authors of the work **"Water collection structures of the medieval fortresses of the Berd region"** (Alexanyan, Hakhverdyan, current publication) note that the water collection structures preserved in the medieval fortresses of the studied region have not been studied archaeologically and present the textual, dimensional and diagrammatic descriptions of the water collection structures they have researched.

The authors of the work **"Preliminary remarks on the water supply of Dvin"** (Petrosyan et al., current publication), summarizing the information provided by the historians, note that there were orchards and crop-fields around the city and not far from it, of which testimonies about rice and cotton cultivation are especially distinguished. Almost all written sources mention a river flowing near the city walls of Dvin and the city's water sources. In some parts of the city walls of Dvin and the citadel, traces of the surrounding water ditch, which was once filled with the waters of the Azat River, are clearly visible. Parts of that system, of varying size and significance, are still in use. As the most important achievement, the authors mention the sediment of the water supply ditch excavated and investigated as a result of their archaeological works in Dvin. The situation preceding the layer allows the authors to date the sedimentation of the trench from the 9<sup>th</sup> century onward.

The author of the work **"Discoveries on the water use systems of the medieval baths of Lore fortress city"** (Nalbandyan, this publication), describing the archaeological and architectural situations revealed as a result of the excavations of the "First Bath", concludes that the Lore fortress passed from hand to hand and was subjected to many raids, but the fortress and the building of the bathhouse located almost in the center have not gone out of use for centuries. The bath has not lost its importance, regularly adapting to the requirements of new times, first, for a long time, it functioned with its original purpose as a bathhouse, then as a craft structure, and later it was also used as an economic and livestock-purpose building. Based on the data obtained as a result of the excavation of the "Second Bath", the author concludes that the bath was used for different purposes in different eras, and different walls and platforms were added inside, in which fragments of tombstones were also used. Some areas were clearly used later for economic purposes, as evidenced by various pit-like structures and vessels.

From the data obtained as a result of the research entitled **"Management of water resources in medieval Armenia, according to archaeological and epigraphic sources"** (Grigoryan et al., this publication) it can be concluded that the contribution of the medieval population and management bodies of Armenia to the design, creation and maintenance of water construction structures is enormous and without it the progress of the economic life of the given community would be impossible. In fact, they continued to care about and exploit the most important water distribution systems created during the Bronze Age and Iron Age periods, while also creating new ones. They carried the same traditions of water exploitation that were formed in the prehistoric periods. In addition to diversifying the use of water, the legal aspect of its consumption has been regulated and ensured. The mentioned activities, however, were not able to solve the problem of fully providing the country's population with water. The authors conclude that with climate change, global warming, growing population and economic demands, the Republic of Armenia may be facing similar challenges to water resource management and consumption as the societies of its past. It is believed that the complex study of medieval water distribution systems will enable us not only to value the great experiences of the past and apply them in the process of creating new systems but also to restart a large part of them with the introduction of modern solutions and serve the modern needs of the population and the economy, thus also extending the life of these structures and contributing to the development of science-based tourism.

In the work "**Canal construction in medieval Armenia according to Armenian epigraphic sources**" (Harutyunyan, this publication), the author, summarizing the data related to the topic, states that the evidence of canal construction, known since the time of cuneiform inscriptions, continued to be reflected in Armenian medieval epigraphs. However, they were not limited to mentions of the construction or repair of streams and canals, mills and springs, but covered much more significant phenomena, such as water use and distribution, its rights and tax obligations, in a broad sense, also the country's agriculture, mostly, horticulture, and in particular, the development of viticulture and winemaking. The author notes that the studied epigraphs provide a geographical and chronological description of the canal constructions, highlight the names of the initiators and funders and, of course, their desire to be remembered in the prayers of the readers of the inscriptions.

In the article "**Evidences of water use in the epigraphs of Aragatsotn**" (Manucharyan, this publication), the author shows various manifestations of different aspects of water use culture in medieval Aragatsotn with concrete examples. Such unique epigraphic evidence as the fight over water, its regulation and the imposition of the death penalty on violators of the verdict are noteworthy.

In the work "**The history of the study of the water-covered monuments of Armenia, according to the archival documents of the Conservation Service**" (Grigoryan, current publication), the author covers the course of the negative impact of reservoir construction on historical and cultural monuments, giving examples from Armenia. In general, the work presents concerns regarding the fate of five monuments in Akhuryan, Aparan, Berqaber and Tolors reservoirs and one monument in the water coverage area of still unfinished Kaps reservoir, as well as the archaeological and architectural works carried out at these monuments. According to the author, rapid archaeological research and relocation-restoration works of the caravansary of Nerkin Jrapı, the 19<sup>th</sup> century church of Verin Jrapı, the 7<sup>th</sup> century church of Shirakavan in the water coverage area of the Akhuryan reservoir, and Surb Vardan and Tuhk Manuk churches in the water coverage area of the Aparan Reservoir are notable. Reference is also made to the two largest – the Spandaryan reservoir in the upper stream of the Vorotan River and the Kechut reservoir in the Arpa River's upper stream.

In the work "**Terrace irrigation systems in Armenian culture**" (Gabrielyan, current publication), the author shows how the water supply problems of agricultural

terraces have obtained unique solutions due to long-term experience. In particular, in the conditions of a steep landscape, irrigation systems serving agriculture were created, adapting to the specifics of the terrain. The author notes that the rational use of water resources, the management of water on the slopes, would be impossible without these constructions and that their creation was a rather difficult and long process. He concludes that there was a caring attitude towards the cultivable lands in the very centers of agriculture, particularly in mountainous Armenia with not much cultivable lands, which is characteristic of sedentary ethnic communities.

The author of the work "**Reflection of problems related to irrigation in the folklore of Gardman's Armenians**" (Gyulumyan, this publication), as a result of the examination of the folklore material, concludes that most of Gardman's villages, originally built in the foothills and mountainous areas, have always felt the lack of irrigation water, which, taking root over time, forced people to resort to all kinds of tricks and superstitions, as a result of which magical rituals, prayers, curses, incantations, etc. were created and reached till present days. He notes that people, unable to overcome the difficulties of water deficit and solve the problem of irrigation, began to ask for water from the "sky", the village priest, a tree, a stone or a rock. According to the author, these rituals and the incantations accompanying the rituals are quite different from similar folklore material in other provinces of the Armenian Highlands, except for the folklore of Nagorno-Kharabagh (Artsakh), because both Lowland (North) and Mountainous Kharabagh are from the same folk branch.

In the study "**The significance of the construction of the Shirak Canal and its reflection in folklore**" (Galstyan, this publication), the author discusses the cultural background and the impact of water construction works in the Soviet period. In his research, the author describes how the construction of the canal became a tool of Soviet propaganda, the most discussed and praised fact in 1922-1925 and after that. It shows how the construction of the Shirak Canal found a wide echo not only in literature but also in folklore. It is noteworthy that, in some cases, conversations about real events have acquired folklore and lyrical characteristics, and that most of the folklore materials correspond to facts described in archive documents.

In the work "**Previous and modern possibilities of irrigation in the Kesab region**" (Cholakéan, current publication), the author describes the cultural and economic aspects of the use of water resources in the Kesab

region, also referring to the history of water use and the culture of it from a folkloristic point of view. In particular, the author notes that in Kesab, mainly vegetable gardens and plant nurseries were irrigated, while other sowings, gardens and tree nurseries (tobacco, tomatoes, etc.) were non-irrigated. The author also describes how agriculture changed in the 1960s-70s due to mechanization and electrification. At this time, artesian wells belonging to individual farms began to be opened, reservoirs were built, and means were created to transport water in large carriers. As a result, former nurseries and vegetable gardens are abandoned, and these productions are moved to larger plots of land, apple and peach orchards are mostly irrigated, and drip irrigation is spreading.

In the research entitled "**The irrigation system on the Armenian-Azerbaijani borderline of Tavush province: the construction of Berkaber (Joghaz) Reservoir**" (Saratikyan, Dalalyan, current publication), the authors describe the history and the cultural processes around the reservoir located on the Armenian-Azerbaijani border, which is in a state of disuse due to the conflict. It is noted that due to the location of the reservoir

and the Armenian-Azerbaijani conflict, the pumping stations cannot be operated. In addition, the water pipeline from the reservoir to the villages of Noyemberyan passes through the territory of Azerbaijan, thus making it inaccessible for the Armenian side. The main pipeline and the network have been looted. The authors note that despite being close to the reservoir, large lands in many near-border villages are without irrigation and have been abandoned.

*Our thanks go to the authors of the collection, as well as to all the individuals and supporting organizations who contributed to its creation. This collection of articles was prepared for publication as a result of the works carried out in the framework of the scientific project (21AG-6A080) entitled "Culture of water use in the Armenian Highland from antiquity to the present days" at the Institute of Archaeology and Ethnography, NAS Armenia and we would like to express our gratitude to the funding organization - the Higher Education and Science Committee of Armenia.*

**Arsen Bobokhyan  
Roman Hovsepyan**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Լերանց բարձր կատարներից ջրեր են հոսում՝ լիովի ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք, անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ փարթամացած, ուստան են մատակարարում առատ հացով և գինով, անուշաբույր ու մեղրահամ բանջարեղենով և յուղատու զանազան սերմերով»։ այսպես է նկարագրում Ղազար Փարպեցին հայկական միջնաշխարհի՝ Արարատյան դաշտավայրի ոռոգման ընթացքը 5-րդ դարում, սակայն այնպիսի խոսքերով, որոնք, կարծես, բոլոր ժամանակների Հայաստանին են վերաբերում:

Հայկական լեռնաշխարհը, լինելով Առաջավոր Ասիայի ջրային պաշարներով ամենահարուստ աշխարհագրական հանգույցը, հնագույն ժամանակներից ի վեր օգտագործել է այդ հարստությունը որպես տնտեսական և հոգևոր ներուժ: Այդ պաշարների կարևորությունը մեծ է եղել երկրի բնակչության պահանջմունքները բավարարելու տեսանկյունից: Լեռնաշխարհից դուրս եկող ջրային զարկերակները սնել են սիրիա-միջագետքյան տափաստանային գոտիները, իսկ ջրօգտագործման կազմակերպման արդյունքում այդ շրջաններում ի հայտ են եկել առաջին կազմակերված համայնքները: Հայաստանի ջրային ցանցի կարևորությունը ինչպես լեռնաշխարհի, այնպես էլ դրանից հատկապես հարավ ընկած շրջանների բնակչության համար հիմք է դարձել տարատեսակ կրոնաառասպելական պատկերացումների ձևավորման համար: Այդ պատկերացումներում լեռնաշխարհն ընկալվել է որպես ջրերով հարուստ դրախտային մի գոտի, ստեղծվել են ավանդաբանություններ ջրային աղբյուրների, դրանց բացման կամ փակման վերաբերյալ:

Հայաստանում ջրօգտագործման վերաբերյալ տվյալներ հայտնի են սկսած քարի դարից, իսկ բրոնզի դարից արդեն առկա են գրավոր աղբյուրներ: Ըստ «Քոնիգսցիոն քաղաքակրթության» տեսության՝ առաջին պետական միավորումներն առաջացել են ոռոգովի երկրագործության կազմակերպման արդյունքում, ինչը ենթադրում էր համայնական աշխատանքի և մարդկային ներուժի կենտրոնացում: Այս գործընթացը տարբեր գոտիներում տարբեր ձևով է արտահայտվել: Այսպես, եթե սիրիա-միջագետքյան տիպի հասարակություններում ոռոգումը կազմակերպվել է տափաստանային շրջաններ-

ում գետերի հունը փոխելու և օազիսներ ստեղծելու միջոցով, որի ընթացքում օգտագործվել են բարդ ինժեներական միջոցներ, ապա լեռնային շրջաններում օգտագործվել են ուղղահայաց գոտիականության հնարավորությունները, և ջուրն իջեցվել է նախալեռներ և դաշտավայրեր բարձր լեռնային գոտիների անձրևների և հալչող ձյան ջրերից: Ջրային պաշարների կազմակերպումը որոշակիորեն նպաստել է հաղորդակցական համակարգերի զարգացմանը և ինքնությունների ձևավորմանը: Այսպես, գետերի հուները ճանապարհային հիմնական ուղիների ցուցիչներ են եղել, որոնք ձևավորել են որոշակի տարածքների հաղորդակցական համակարգը: Բացառիկ է եղել լճերի նշանակությունը, որոնք, որպես ուղենիշներ, էական դեր են խաղացել տարածության ձևավորման գործում: Հին Հայաստանը կարելի է սահմանել որպես «լեռնային և լճակենտրոն» հասարակությունների գոտի, որի զարկերակներն են եղել բարձր լեռներից բխող հարուստ գետերն ու գետակները:

Ջուրը կարևորվում է մարդու նյութական և հոգևոր կյանքում նաև մեր օրերում: Արդի աշխարհում գնալով պակասում են հատկապես խմելու ջրի պաշարները, որոնց հիմնական կուտակումները գտնվում են հրաբխային լանդշաֆտով բնորոշվող լեռնային երկրներում: Հայաստանն այս տեսանկյունից պատկանում է այն բացառիկ երկրների թվին, որոնք ոչ միայն ի վիճակի են բավարարել ջրի ներքին պահանջարկը սեփական պաշարների միջոցով, այլև ավելցուկ են տալիս՝ երկրի տարածքից դուրս հոսող ջրերի ձևով: Այդ պաշարների առատությունը ապագայում կարող է դառնալ երկրի կարևորությունն ընդգծող գործոն: Ապագայի տեսլականը կառուցելիս անհրաժեշտ է հենվել տարածքի և բնակչության առանձնահատկությունների վրա: Այդ տեսլականում առաջին հերթին կարևոր է քաղաքացու ներաշխարհում վերարթնացնել «ջրի պաշտամունքը», որը կսերմանի խնամք և հոգատարություն: Միայն այդ հոգատարության զգացումը կարող է ջուրը դարձնել ներքին արժեք ու հարստություն և արտաքին ազդու գործոն:

Տարբեր ոլորտների մասնագետներ բավական ուշադրություն են դարձրել ջրային պաշարների օգտագործման խնդրին, մինչդեռ ջրօգտագործման

մշակույթը հազվադեպ է դիտարկվել որպես համակարգային հարցադրում: Ներկայացվող ժողովածուն նման մի փորձ է, որը նպատակ ունի վեր հանել ջրօգտագործման անցած ճանապարհը նախապատմական շրջանից մինչև մեր օրերը՝ քննարկելով նաև ջրային պաշարների կառավարմանը, կյուրական և ոչ-կյուրական մշակութային ժառանգությանը վերաբերող խնդիրներ: Այս բազմահեղինակ աշխատությունը ներառում է Հայաստանի ջրօգտագործման մշակույթին, մասնավորապես՝ ոռոգման համակարգերին առնչվող հումանիտար, հասարակագիտական և միջգիտաճյուղային հետազոտությունների արդյունքներ, որոնք ցույց են տալիս ոլորտում կատարվող ուսումնասիրությունների ընթացիկ վիճակը և այդ հետազոտությունների արդիականությունը: Ներկայացված հոդվածներում ջրօգտագործման մշակույթին վերբերող հարցերը դիտարկվում և քննարկվում են հնագիտության, ազգագրության, բանագիտության, վիճագրագիտության, հնակենսաբանության և հարակից այլ գիտաճյուղերի տեսանկյունից: Առանձին բաժիններով ներկայացվում են ջրօգտագործման մշակույթի տարատեսակ դրսևորումներ՝ սկսած Հայաստանում մարդու բնակության վաղնջագույն փուլերից մինչև մեր օրերը: Հետազոտություններն ուղեկցվում են ջրօգտագործմանն առնչվող մշակութային լանդշաֆտների, պատմամշակութային հուշարձանների, արտեֆակտների, մշակութային գործընթացների և երևույթների, ինչպես նաև ջրօգտագործման մշակույթի վրա ազդեցություն թողած բնական միջավայրերի և բնակլիմայական գործոնների մասին պատմող նկարագրություններով ու լուսանկարներով:

Ստորև ներկայացնում ենք «Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» աշխատության հակիրճ բովանդակությունը՝ ըստ առանձին բաժիններում տրվող եզրակացությունների:

**«Հայաստանի տարածքի ջրային ռեսուրսների օգտագործումը հին քարի դարի բնակչության կողմից»** (Գասպարյան և այլոք, սույն աշխ.) բաժնում հեղինակները, ամփոփելով հին քարեդարին վերաբերող տվյալները, եզրակացնում են, որ Հայաստանի բնակեցման սկզբնափուլերը ներկայացնող հասարակությունների կենսագործունեության մեջ և որոշակի լանդշաֆտների ընտրության ժամանակ ջրային ռեսուրսներն ունեցել են առաջնային նշանակություն: Որպես ապացույց հեղինակները բերում են հինքարեդարյան բնակավայրերի և կայանների բաշխվածությունը ջրային ավազանների երկայնքով, գետերի դարավանդներին և լճերի մերձափնյա հատվածներում, ինչը ապահովել է որսորդ-հավաքչարարների կենսադային կարիքները: Ավելին,

ջրային ավազանները հին քարեդարյան մարդկանց ապահովել են նաև աշխատանքային գործիքներ պատրաստելու համար անհրաժեշտ հումքով. պալեոլիթյան գործիքները, հատկապես՝ ամենավաղ փուլի (քարի մշակման օլդովեյան և աշելյան ավանդույթների), պատրաստված են մոտակա գետերից հավաքված գլաքարերից: Բացի վերոնշյալը, Հայաստանի որսորդ-հավաքչարարները նախընտրել են կայանել լճերի այն հատվածներում, որտեղ թափվում են դրանք սնուցող գետերը և գետակները: Այս ծանծաղ և ջրային հոսքի ցածր էներգիա ունեցող տեղամասերը հատկապես գրավիչ են եղել որսի կենդանիների համար, որոնց հոտերն այցելել են նշված տեղամասեր ջուր խմելու նպատակով՝ դառնալով որսորդների թիրախ:

**«Ծիսապաշտամունքային համալիրները ոռոգման համակարգի համատեքստում»** (Ավետիսյան և այլոք, սույն աշխ.) բաժնում հեղինակներն անդրադառնում են հետագա դարաշրջաններում ոռոգման համակարգերի կամ դրանց առանձին մասերի սրբացմանը, ինչը, թերևս, ժառանգվել է հին քարի դարից: Անդրադարձ է կատարվում այն ծիսապաշտամունքային օբյեկտներին, որոնք պետք է ապահովեին ոռոգման համակարգերի ծիսական մաքրությունն ու անվտանգությունը: Նշվում է, որ այդ ծիսապաշտամունքային համակարգը բնական աղբյուրների մոտ, գետերի ակունքներում, ջրանցքների սկզբնակետներում և հանգույցներում ներառելիս է եղել բնական և արհեստական ջրավազանների ավերին տեղադրված վիշապ-քարակոթողները, մենհիրները, ծիսական աշտարակները, քարակույտ-հարթակները: Սրբագործված այդ տարածքները, համարվելով ծիսականորեն մաքրագործված, եղել են նաև դամբարանադաշտերի տեղակայման վայրեր: Ոռոգման համակարգերն ընկալվել են որպես մի ամբողջություն՝ այն պաշտպանող կամ սպասարկող ծիսապաշտամունքային օբյեկտների հետ միասին: Իրենց մտքերը հիմնավորելու համար հեղինակները հղում են անում նաև ժայռաբեկորների վրա արված ոռոգման ցանցի սխեմատիկ պատկերներով ջրագծերի քարտեզներին: Ապա նշվում է, որ բրոնզի և երկաթի դարերում շեշտադրումը կատարվել է անձրևաջրերի և ձնհալի ջրերի օգտագործման վրա, իսկ Վանի թագավորության ժամանակաշրջանում, միասնական պետության պայմաններում արժևորվել է կայուն և անխափան ոռոգումը: Արդյունքում ոռոգման համակարգերի հետ կապված ծիսապաշտամունքային համալիրները ենթարկվել են պետական չափանիշներին, ինչի մասին են վկայում ուրարտական պուլուսի (puluse) տիպի կոթողները՝ արքայական արձանագրություններով և անեծքի բանաձևերով:

**«Ալալու երգերն ու Աստղիկի պատկերը. Ռոզո-վի երկրագործության կազմակերպման առանձնահատկությունները հին Վասպուրականում»** (Բոբոխյան, սույն աշխ.) հոդվածում հեղինակը վերնագրում նշված մասնավոր դեպքից անցում է կատարում Հայկական լեռնաշխարհում ռոզոզման համակարգերի էվոլյուցիայի խնդրին: Ամփոփելով թեմային առնչվող գրավոր (սեպագրական, հայկական) և հնագիտական տվյալները՝ հեղինակն առաջարկում է ռոզոզովի երկրագործական լանդշաֆտի կերտման Հայկական լեռնաշխարհի համար կայուն մի մոդել, որը ենթադրում է վերնախավի նախաձեռնությամբ ջրանցքի անցկացում (ջուր բերելով բարձր լեռնային շրջաններից) – բարեբեր գոտու (այգի, դաշտ, մարգագետին) ստեղծում – պաշտամունքային կառույցների (արձան, աշտարակ) կերտում – ծիսական երգերով և զոհաբերություններով ուղեկցվող արարողություններ: Ելնելով վիշապ քարակոթողների հետազոտության արդյունքներից՝ հեղինակը գտնում է, որ վերոնշյալ մոդելի արմատները կարող են հասնել մինչև վաղ երկրագործական հասարակություններ՝ տարբեր դարաշրջաններում ունենալով տարատեսակ արտահայտչաձևեր: Եթե վաղ բրոնզի դարում, ուրարտական և անտիկ շրջանում Հայկական լեռնաշխարհի բնակիչները ռոզոզովի երկրագործական լանդշաֆտը գլխավորապես կազմակերպել են հորիզոնական մակարդակում (կենտրոնանալով դաշտավայրերում, ռացիոնալ օգտագործելով բնական և մարդկային ռեսուրսները ու գրեթե չբարձրանալով բարձրլեռնային գոտիներ), ապա պղնձի, միջին բրոնզի, ուշ բրոնզ-վաղ երկաթի դարերում և միջնադարում նրանք հիմնականում ուղղահայաց շարժեր են կատարել (տեղաշարժվելով դաշտավայրերից դեպի նախալեռներ՝ ակտիվորեն յուրացնելով բարձրլեռնային գոտիները՝ դարավանդների ձևով): Ընդգծվում է, որ Հայկական լեռնաշխարհում ռոզոզովի երկրագործական տարածքի կազմակերպման ամենաառանցքային դարաշրջանն ակնհայտորեն միջին երկաթն է՝ ուրարտական պետության գոյության շրջանը: Ուրարտական վերնախավը, ունենալով բարձրակարգ ինժեներական գիտելիքներ և նմանակելով առաջավորասիական արժեհամակարգը, կենտրոնանում էր դաշտավայրերում՝ տեղում օգտագործելով գետային ջրերը, ի տարբերություն բրոնզ-երկաթիդարցիների, որոնք «տեսանելի են» հատկապես նախալեռներում և բարձր լեռներում ու կառավարում են ձնհալից առաջացած ջրային պաշարները՝ արհեստական լճակների և դրանց առնչող ջրանցքների միջոցով (նախաուրարտական տեխնիկական հնարավորությունները բավարար չեն եղել գետերի ջուրն օգտագործելու համար): Հեղինակն իր աշխատանքն ամփոփում է՝ նշելով, որ երկրագործական կենսատա-

րածքի կազմակերպումը, անկախ դրա համայնքային կամ պետական լինելուց, մշտապես ուղեկցվել է ծիսական պրակտիկայով, ինչով սրբացրել (լեգիտիմացրել) է տնտեսական նախաձեռնությունը:

**«Հայաստանի տարածքի նախապատմական ժամանակների ռոզոզովի և անջրդի երկրագործական համակարգերի շուրջ»** (Հովսեփյան, սույն աշխ.) բաժնում քննարկվող աշխատանքային տեսությունները և մեկնությունները, որոնք արվում են հնարաստիստական ուսումնասիրությունների հիման վրա, լրացնում են նախորդ բաժնում քննարկված տվյալները: Նախապատմական ժամանակներում լեռնային դժվարամատչելի և դժվար մշակվող հողատարածքներում երկրագործությամբ զբաղվելը հեղինակը բացատրում է կլիմայի չորայնացմամբ, երբ ցածրադիր շրջաններում ջրային ռեսուրսները կրճատվել են, իսկ լեռներում դեռ կային երկրագործության համար բավարար ջրի պաշարներ (անձրև, աղբյուրներ, ևն): Աշխատանքում նշվում է, որ Հարավային Կովկասում վաղ բրոնզի դարից մինչև վաղ երկաթի դարերում միայն կամ հիմնականում հացաբույսեր են մշակել, ընդ որում՝ թե՛ լեռներում, թե՛ ցածրավայրերում նույն իրավիճակն է: Ըստ հեղինակի՝ լեռներում միայն հացաբույսեր մշակելու երևույթը կարելի է բացատրել բնակլիմայական պայմաններով, սակայն ցածրավայրերում միայն հացաբույսերի մշակությունը այլ պատճառներ է ունեցել: Հեղինակը բրոնզ – վաղերկաթեդարյան ժամանակահատվածում ցածրավայրերում ապրող մարդկանց միայն հացաբույսեր մշակելու երևույթի համար տալիս է հետևյալ բացատրությունները: Առաջին՝ լեռներում ապրող համայնքները ջուր ունենալու շնորհիվ միջավայրային և տնտեսական առավելություն են ունեցել, և դրա շնորհիվ նրանց գյուղատնտեսական ավանդույթները տարածվել են ցածրավայրերում ապրող և պակաս կենսապայմաններ ունեցող համայնքներում: Երկրորդ պատճառը, ըստ հեղինակի, եղել է լեռնային պայմաններում անասնապահության ծավալների աճին զուգահեռ հացաբույսերի պահանջարկի աճը՝ պայմանավորված մարդու կենսաբանական պահանջարկներով: Դրա արդյունքում պակաս պահանջարկ ունեցող բակլազգի և յուղատու բույսերը դուրս են մղվել գյուղատնտեսությունից, քանի որ սպիտակուցների և ճարպերի/յուղերի պահանջը բավարարվել է կենդանական սննդի միջոցով: Հեղինակը նաև նշում է, որ ցածրավայրերում և բարձրավայրերում ապրող մարդիկ հավանաբար միևնույն համայնքի ներկայացուցիչներ են եղել (հմտ. մեթոդա հայաստանցի եզդիների, որոնք մասամբ նստակյաց, մասամբ հեռագնա անասնապահական կենսակերպ են վարում):

**«Էրլայի վիշապառնությունը և երկնային ջրերի հոսքի պատկերագրությունը»** (Բոբոխյան, սույն աշխ.) հետազոտության մեջ, առկա գուգահեռների հիման վրա, հեղինակը վերականգնում է Առաջավոր Ասիայի լեռնային և դաշտավայրային գոտիներում առկա կենդանու բերանից ջրի ժայթքման պատկերագրական մի մոտիվը: Որպես օրինակ է վերցվում Էրլայի բազալտե կոթողի և կրաքարե ավազանի պատկերագրությունը, որը, բացի ջուր ցայտող վիշապառնությունից, ընդհանուր և էական գուգահեռներ ունի համաժամանակյա Թռեղքի ու Քարաշամբի արծաթե անոթների պատկերագրության հետ (որս, երթ, գերեվարություն, խնջույք երաժիշտներով, կատվագգի, ձուկ, առյուծ-ցուլ պայքար, անգու առասպելական թռչուն ևն): Հեղինակը գտնում է, որ այս նույն մշակութային աշխարհին են պատկանում և նույն դարաշրջանով են թվագրվում վիշապաքարերը, կամ գոնե դրանց ցլակերպ և խառնէակ տարբերակները, որոնք իրենց նշանակությունը չեն կորցնում նաև ուշ բրոնզի դարում: Որպես անուղղակի փաստարկ, հեղինակը բերում է վիշապաքարերի տեղադրության (լեռան գագաթ, ջրերի ակունքների մոտ) և պատկերագրական (ցուլ, ձուկ, խառնէակ, թռչուն, վիշապամարտ, ևն) տարրերը, որոնք գուգահեռներ ունեն սիրիական և միջագետքյան հստակ թվագրություն ունեցող հուշարձանների հետ: Հեղինակը խոսում է նաև այս ավանդույթի պահպանման կամ տևականության մասին: Այսպես, հետագա հայկական դիցաբանության մեջ նույնպես առկա են հինառաջավորասիական ոճի վիշապային խառնէակներ, որոնց թվում է նույնատիպ վիշապառնությունը կամ վիշապառնությունը քաջը:

**«Առասպելաբանական վիշապը և ոռոգման համակարգերի առաջացումը»** (Դավալյան, սույն աշխ.) աշխատանքում հեղինակը փորձ է անում վերականգնել աշխարհի տարբեր ժողովուրդների ոռոգման համակարգերի առաջացմանը վերաբերող հավատալիքների հիմքում ընկած առասպելային թղթ: Նա նշում է, որ ամենամալնական մակարդակում գետերի ու լճերի առաջացումն առնչվում է վիշապանման վիթխարի էակների գործունեությանը, որի արդյունքում նրանք, իբրև ոչ-բանական արարածներ, ակամա Երկրի մակերևույթի սեյսմիկ գործընթացների պատճառ են դառնում: Ըստ հեղինակի՝ ավելի կատարելագործված մակարդակում գործում է «վիշապ vs վիշապ» բանաձևը, երբ երկրակեղևի ձևափոխումներն առնչվում են երկու կամ ավելի վիշապանման էակների համակամարտությանը: Իսկ վիշապամարտի առավել կատարելագործված մակարդակում արդեն գործում է «վիշապ vs հերոս» բանաձևը, որի դեպքում վիշապի ակամա գործողությունը վերածվում է ամպրոպային հերոսի

կողմից պարտադրված կամ պարզապես գիտակցված ու կամավոր վարքի: Ըստ հեղինակի՝ այս վերջին մակարդակի ամենաառաջին դրսևորումներին են վերաբերում այն պատկերացումները, որոնցում վիշապը լծվում է արոքին կամ գույթանին և վարում հողը ամպրոպային հերոսի պարտադրմամբ, որը հանդես է գալիս իբրև հողագործ:

**«Ջրօգտագործման համակարգը Շնող գետի ավազանում»** (Մարատիկյան, սույն աշխ.) աշխատանքում հեղինակը հնագիտական հետազոտությունների միջոցով անդրադառնում է այս գետավազանի տարածքում դեռևս վաղ բրոնզի դարում սկզբնավորված հասարակություններին: Նա նշում է, որ երկաթեդարյան հուշարձանները՝ դամբարանները, բնակատեղիներն ու կիկլոպյան ամրոցները փաստում են, որ մ.թ.ա. 1-ին հազ. այստեղ մեծաքանակ բնակչություն է եղել: Ջրօգտագործումը ավելի լայնածավալ է եղել միջնադարում, երբ ջուրն օգտագործվել է այգիների (հիմնականում՝ խաղողի) ոռոգման և ամրոցների ջրամատակարարման համար: Հատկանշական է ջրօգտագործումը հանքարդյունաբերական նպատակներով, ինչը, ըստ հնագիտական տվյալների, գետավազանում հազարամյակների պատմություն ունի:

**«Էրեբունի ամրոցի ջրատար համակարգի շուրջ»** (Բադալյան և այլք, սույն աշխ.) վերնագրով հետազոտության հեղինակները Ալթըն թեփեում և Էրեբունիում պեղված ջրատարների օրինակով խոսում են Ուրարտում բարձր զարգացում ապրած ջրատար համակարգի անկայության մասին: Նման ջրատարները կառուցվել են ամրոցների հատակագծերի նախագծումից անմիջապես հետո՝ նախնական փուլում և գլխավորապես եղել են ստորգետնյա: Հեղինակները կարծում են, որ ջրատարները հիմնականում ունեցել են ջրահեռացման գործառույթ, սակայն չեն բացառում, որ դրանց գոնե մի մասն օգտագործվել է ջրամատակարարման համար:

**«Միջնադարյան ամրոցների ջրահավաք-պահեստարանները»** (Մկրտչյան, Սարգսյան, սույն աշխ.) աշխատության հեղինակները, ամփոփելով զարգացած միջնադարին վերաբերվող տվյալները, գրում են, որ դժվարամատչելի լեռնագագաթներին կառուցված ամրոցներն անհնար է եղել ապահովել ինքնահոս ջրամատակարարումով, որի պատճառով ստեղծվում էին հատուկ ջրահավաք ավազաններ: Ըստ հեղինակների՝ այդ ավազանների ջուրը կուտակվում էր երկու եղանակով. փոքր ջրավազաններում ջուրը ամբարել են՝ նախօրոք ստորոտից կամ մոտակա աղբյուրից գրաստներով բերելով (օրինակ՝ Կաքավաբերդ, Վասակաբերդ, Քսուզ

և այլն): Իսկ մեծ ջրամբարներում կուտակել են անձրևաջրերը՝ ջրահավաք հրապարակների ու դրանց ջրերի մաքրման եղանակների կիրառմամբ (Արտենի, Հատիս, Քյոթոլի և այլն): Հեղինակները նաև նշում են, որ շատ տեղերում հավանաբար կիրառվել են ջրի ամբարման բոլոր մատչելի եղանակները միաժամանակ:

**«Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցների ջրահավաք կառույցները»** (Ալեքսանյան, Հախվերդյան, սույն աշխ.) աշխատանքի հեղինակները նշում են, որ ուսումնասիրվող տարածաշրջանի միջնադարյան ամրոցներում պահպանված ջրահավաք կառույցները հնագիտորեն ուսումնասիրված չեն եղել և ներկայացնում են իրենց հետազոտած ջրահավաք կառույցների տեքստային, չափագրական և գծագրական նկարագրությունները:

**«Նախնական դիտողություններ Դվինի ջրամատակարարման մասին»** (Պետրոսյան և այլոք, սույն աշխ.) աշխատանքի հեղինակները, ամփոփելով պատմիչների հաղորդած տեղեկությունները, նշում են, որ քաղաքի շուրջը և նրանից ոչ հեռու գտնվելիս են եղել մրգատու այգիները և ցանքատարածությունները, որոնցից հատկապես առանձնացնում են բրնձի և բամբակի մշակման մասին վկայությունները: Գրեթե բոլոր գրավոր աղբյուրներում նշվում են Դվին քաղաքի պարիսպների մոտ հոսող գետը և քաղաքի ջրի աղբյուրները: Դվինի քաղաքային պարիսպների, միջնաբերդի որոշ հատվածներում լավ տեսանելի են դրանք շրջապատող ջրի խրամատի հետքերը, որոնք ժամանակին լցվել են Ազատ գետի ջրերով: Այդ համակարգի հատվածները, տարբեր չափերով և նշանակությամբ, շարունակում են գործածվել: Որպես ամենակարևոր ձեռքբերում՝ հեղինակները նշում են Դվինում իրենց կողմից իրականացված հնագիտական աշխատանքների արդյունքում պեղված և հետազոտված ջրամատակարարման խրամատի նստվածքը: Իսկ շերտին նախորդող իրավիճակը հեղինակներին թույլ է տալիս խրամատի նստվածքը թվագրել՝ 9-րդ դարից սկսած:

**«Նորահայտումներ Լոռե բերդաքաղաքի միջնադարյան բաղնիքների ջրօգտագործման համակարգերի վերաբերյալ»** (Նալբանդյան, սույն աշխ.) աշխատանքի հեղինակը, նկարագրելով «Առաջին» բաղնիքի պեղումների արդյունքում բացված հնագիտական և ճարտարապետական իրավիճակները, եզրակացնում է, որ Լոռե բերդը ձեռքից ձեռք է անցել և ենթարկվել բազմաթիվ ասպատակումների, սակայն ամրոցի գրեթե կենտրոնում գտնվող բաղնիքի շենքը դարեր ի վեր դուրս չի եկել գործածությունից, չի կորցրել իր կարևորությունը՝ պարբերա-

բար հարմարեցվելով նոր ժամանակների պահանջներին, նախ՝ երկար ժամանակ գործելով իր բուն նշանակությամբ՝ որպես բաղնիք, ապա՝ արհեստագործական կառույց, իսկ ավելի ուշ՝ օգտագործվել նաև տնտեսական և անասնապահական նպատակներով: Պեղված «Երկրորդ» բաղնիքի պեղումների արդյունքում ստացած տվյալների հիման վրա հեղինակը եզրակացնում է, որ բաղնիքը տարբեր դարաշրջաններում օգտագործվել է զանազան նշանակություններով, իսկ ներսում ավելացվել են տարբեր պատաշարեր ու հարթակներ, որոնցում օգտագործել են նաև տապանաքարերի բեկորներ: Որոշ հատվածներ, ավելի ուշ ակնհայտորեն օգտագործվել են տնտեսական նպատակներով, ինչը հաստատում են զանազան հորանման կառույցներն ու անոթները:

**«Ջրային պաշարների կառավարումը միջնադարյան Հայաստանում ըստ հնագիտական և վիճակագիր սկզբնաղբյուրների»** (Գրիգորյան և այլոք, սույն աշխ.) վերնագրով հետազոտության արդյունքում ձեռք բերված տվյալներից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի միջնադարյան բնակչության և կառավարման մարմինների ներդրումը ջրաշինական կառույցների նախագծման, ստեղծման և սպասարկման գործում ահռելի է, առանց որի տվյալ համայնքի տնտեսական կյանքի առաջընթացն անհնարին կլիներ: Գործնականում նրանք շարունակել են խնամել և շահագործել բրոզ-երկաթի դարաշրջաններում ստեղծված կարևորագույն ջրաբաշխական համակարգերը՝ ստեղծելով նաև նորերը: Դրանք կրել են ջրի շահագործման միևնույն ավանդույթները, որոնք ձևավորվել են նախապատմական և մինչպատմական ժամանակաշրջաններում: Ջրի օգտագործումը դիվերսիֆիկացնելուց բացի կանոնակարգվել և ապահովվել է դրա սպառման իրավական կողմը: Նշված միջոցառումները, սակայն, ի վիճակի չեն եղել լուծել երկրի բնակչությանը ջրով լիարժեք ապահովելու խնդիրը : Հեղինակները եզրակացնում են, որ կլիմայի գլոբալ ջերմացման, բնակչության և տնտեսության աճող պահանջների առկայությամբ Հայաստանի Հանրապետությունը ջրային պաշարների կառավարման և սպառման առումով, թերևս, կանգնած է նույնպիսի մարտահրավերների առաջ, ինչ որ նրա անցյալի հասարակությունները: Ենթադրվում է, որ միջնադարյան ջրաբաշխական համակարգերի համալիր ուսումնասիրությունը հնարավորություն կտա ոչ միայն արժևորել անցյալի մեծ փորձը և նոր համակարգերի ստեղծման գործընթացքում կիրառել դրանք, այլ նաև դրանց մի սովոր մասը վերագործարկել ժամանակակից լուծումների ներդրմամբ և ծառայեցնել բնակչության ու տնտեսության արդի կարիքները:

րին՝ այս ճանապարհով նաև երկարացնելով այդ կառույցների կյանքը և նպաստելով գիտահեն գրոսաշրջության զարգացմանը:

**«Ջրանցքաշինությունը միջնադարյան Հայաստանում ըստ հայ վիմագիր աղբյուրների»** (Հարությունյան, սույն աշխ.) աշխատությունում հեղինակը, ամփոփելով թեմային առնչվող տվյալները, փաստում է, որ դեռևս սեպագրերից հայտնի ջրանցքաշինական վկայություններն ավանդույթի ուժով շարունակվել են նաև հայ միջնադարյան վիմագրերում: Դրանք, սակայն, չեն սահմանափակվել միայն առու-ջրանցքների, ջրաղացների ու աղբյուրների շինարարության կամ նորոգման հիշատակություններով, այլ լուսաբանում են շատ ավելի նշանակալի երևույթներ, ինչպիսիք են ջրօգտագործումն ու ջրաբաշխումը, դրա իրավունքն ու հարկային պարտավորությունները, լայն առումով նաև՝ երկրի գյուղատնտեսության, այն է՝ այգեգործության, ի մասնավորի՝ խաղողագործության և գինեգործության զարգացումը: Հեղինակը նշում է, որ հետագոտված վիմագրերը տալիս են ջրանցքաշինության աշխարհագրական ու ժամանակագրական նկարագիրը, լուսաբանում նախաձեռնողների ու մեկենասների անունները և, իհարկե, ընթերցողների աղոթքներում հիշվելու և հիշատակն ավանդելու նրանց ցանկությունը:

**«Ջրօգտագործման վկայություններ Արագածոտնի վիմագրերում»** (Մանուչարյան, սույն աշխ.) հոդվածում հեղինակը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս միջնադարյան Արագածոտնում ջրօգտագործման մշակույթի տարբեր ասպեկտների տարատեսակ դրսևորումներ: Հատկանշական են այնպիսի եզակի վիմագրական վկայությունները, ինչպիսիք են ջրի շուրջ կռիվը, դրա կարգավորումը և վճիռը խախտողների նկատմամբ մահապատժի սահմանումը:

**«Հայաստանի ջրածածկ հուշարձանների ուսումնասիրության պատմությունն ըստ պահպանության ծառայության արխիվային փաստաթղթերի»** (Գրիգորյան, սույն աշխ.) աշխատանքում հեղինակը լուսաբանում է պատմամշակութային հուշարձանների վրա ջրամբարաշինության թողած բացասական ազդեցության ընթացքը՝ օրինակներ բերելով Հայաստանից: Աշխատանքում ընդհանուր առմամբ ներկայացվում են հինգ՝ Ախուրյանի, Ապարանի, Բերքաբերի և Տոլորսի ջրամբարների և մեկ դեռևս չիրականացված՝ Կապսի ջրամբարի ջրածածկման գոտում հայտնված հուշարձանների ճակատագրի վերաբերյալ մտահոգությունները և իրականացված հնագիտական, ճարտարապետաշինարարական աշխատանքները: Ըստ հեղինակի՝ հիշարժան են

Ախուրյանի ջրամբարի ջրածածկման գոտուց Ներքին Ջրափիի քարավանատան, Վերին Ջրափիի 19-րդ դ. եկեղեցու, Շիրակավանի 7-րդ դ. եկեղեցու, Ապարանի ջրամբարից Ս. Վարդան և Թուխ Մանուկ եկեղեցիների արագընթաց հնագիտական ուսումնասիրության և տեղափոխման-վերականգնման աշխատանքները: Անդրադարձ է կատարվում նաև Որոտան գետի վերին հոսանքում գտնվող ՀՀ ամենամեծ՝ Սպանդարյանի ջրամբարին և Արփա գետի վերին հոսանքում գտնվող Կեչուտի ջրամբարին :

**«Գարավանդների ոռոգման համակարգերը հայկական մշակույթում»** (Գաբրիելյան, սույն աշխ.) աշխատանքում հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես են երկրագործական դարավանդների ջրամատակարարման խնդիրները տևական փորձի արդյունքում ձեռք բերել ուրույն լուծումներ: Մասնավորապես՝ գաղիվայր լանդշաֆտի պայմաններում երկրագործությանը ծառայող ոռոգման համակարգերը ստեղծվել են՝ հարմարվելով տեղանքի առանձնահատկություններին: Հեղինակը նշում է, որ ջրային պաշարների ռացիոնալ օգտագործումը, թեքությունների վրա ջրի կառավարումը, անհնար կլինեք առանց այդ կառույցների, որոնց ստեղծումը բավականին ծանր և տևական ընթացք է ունեցել: Նա եզրակացնում է, որ երկրագործական մշակույթի բուն կենտրոններում, մասնավորապես լեռնային և սակավահող Հայաստանում, մշակելի հողատարածքի հանդեպ հոգատար վերաբերմունք է գոյություն ունեցել, որը բնորոշ է նստակյաց էթնիկ հանրություններին:

**«Ոռոգմանն առնչվող խնդիրների արտացոլումը Գարդմանի հայերի բանահյուսության մեջ»** (Գյուլումյան, սույն աշխ.) աշխատանքի հեղինակը բանահյուսական նյութի քննության արդյունքում եզրակացնում է, որ Գարդմանի գյուղերի մեծ մասը, ի սկզբանե կառուցված լինելով նախալեռնային ու լեռնային հատվածներում, մշտապես զգացել է ոռոգման ջրի պակասը, որը, ժամանակի ընթացքում արմատանալով, մարդկանց ստիպել է դիմել ամենատարբեր հնարքների ու սնահավատությունների, որոնց արդյունքում էլ ստեղծվել և մեզ են հասել հմայական ծեսեր, աղոթքներ, անեծքներ, օրհանքներ և այլն: Նա նշում է, որ մարդիկ, անկարող լինելով հաղթահարել բնության դժվարություններն ու լուծել ոռոգման խնդիրը, սկսել են ջուր խնդրել «երկնքից», գյուղի քահանայից, ծառից, քարից կամ ժայռից: Ըստ հեղինակի՝ այդ ծեսերը և ծեսերն ուղեկցող հմայախոսությունները բավականին տարբեր են Հայկական լեռնաշխարհի մյուս գավառներում ստեղծված նմանատիպ նյութից՝ բացառությամբ Լեռնային Արցախի բանահյուսության, քանի

որ թե՛ Դաշտային (Հյուսիսային) և թե՛ Լեռնային Արցախը սնվում է մեկ ընդհանուր ժողովրդական ճյուղից:

**«Շիրակի ջրանցքի կառուցման նշանակությունը և դրա արտացոլումը բանահյուսության մեջ»** (Գալստյան, սույն աշխ.) ուսումնասիրության մեջ հեղինակն անդրադառնում է խորհրդային շրջանում ջրաշինարարական աշխատանքների մշակութային ֆոնին և թողած ազդեցությանը: Հեղինակն իր հետազոտությունում նկարագրում է, թե ինչպես է ջրանցքի կառուցումը դարձել խորհրդային քարոզչության գործիք, ամենաքննարկվող և գովաբանվող իրողությունը 1922–1925 թթ. և դրանից հետո: Ցույց է տրվում, թե ինչպես է Շիրակի ջրանցքի կառուցումն իր լայն արձագանքը գտել ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև բանահյուսության մեջ: Հատկանշական է, որ որոշ իրապատում գրույցներ բանահյուսական հատկանիշներ են ձեռք բերել, իսկ գրույցների մեծ մասը համապատասխանում է ախիվային փաստաթղթերին:

**«Ոռոգման նախկին և արդի հնարարությունները Քեսապի շրջանին մեջ»** (Չոլաքեան, սույն աշխ.) աշխատանքում հեղինակը նկարագրում է ջրի պաշարների օգտագործման մշակութային և տնտեսական ասպեկտները Քեսապի շրջանում՝ անդրադառնալով նաև ջրօգտագործման պատմությանը և այդ մշակույթին՝ բանագիտական տեսանկյունից: Հեղինակը, մասնավորապես, նշում է, որ Քեսապում ոռոգելի են եղել հիմնականում բանջարանոցները և սածիլանոցները, իսկ այլ ցանքերը, պարտեզները և տնկարանները (ծխախոտ, լոլիկ և այլն) անջրդի են եղել: Հեղինակը նաև նկարագրում է, թե ինչպես է 1960–1970 թվականներից գյուղատնտեսությունը փոխվում՝ պայմանավորված մեքենայացմամբ և էլեկտրաֆիկացիայով: Այս ժամանակներում են բացվում անհատական տնտեսությունների պատկանող արտեզյան ջրհորներ, կառուցվում ջրամբարներ և ստեղծվում միջոցներ՝ մեծ կրիչներով ջուր տեղափոխելու համար: Արդյունքում նախկին սածիլանոցները և բանջարանոցները լքվում

են, իսկ այդ արտադրությունները տեղափոխվում են ավելի ընդարձակ հողատարածքներ, խնձորի և դեղձի այգիները մեծամասամբ դառնում են ոռոգելի, տարածվում է կաթիլային ոռոգումը:

**«Ոռոգման համակարգը հայ-ադրբեջանական սահմանին. Տավուշի մարզի Բերքաբերի (Ջողազի) ջրամբարի օրինակը»** (Սարատիկյան, Դալալյան, սույն աշխ.) հետազոտության մեջ հեղինակները նկարագրում են հայ-ադրբեջանական սահմանին գտնվող և հակամարտության պատճառով անօգտագործելի վիճակում գտնվող ջրամբարի պատմությունը և դրա շուրջ ծավալված մշակութային գործընթացները: Նշվում է, որ ջրամբարի դիրքի և հայ-ադրբեջանական հակամարտության պատճառով պոմպակայանները հնարավոր չէ շահագործել: Բացի այդ, ջրամբարից դեպի Նոյեմբերյանի գյուղեր ջրախողովակաշարը անցնում է Ադրբեջանի տարածքով, հիմնական խողովակաշարը և ցանցը թալանված է: Հեղինակները նշում են, որ ջրամբարին մոտ գտնվելով հանդերձ՝ սահմանամերձ մի շարք գյուղերում մեծաքանակ հողատարածքներ անջրդի են, որի պատճառով այդ տարածքները լքվել են:

*Մեր շնորհակալությունն ենք հայրնում ժողովածուի հեղինակներին, ինչպես նաև բոլոր այն անհարներին և աշակից կազմակերպություններին, որոնք նպաստել են դրա կայացմանը: Սույն աշխատությունը հրատարակման է պատրաստվել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում իրականացվող «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» վերնագրով գիտական նախագծի (21AG-6A080) շրջանակում կատարվող աշխատանքների արդյունքում, որի ֆինանսավորման համար շնորհակալություն ենք հայրնում ՀՀ ԿԳՄՄԵ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեին:*

**Արսեն Բորոխյան  
Ռոման Հովսեփյան**



# USE OF WATER RESOURCES AT THE TERRITORY OF ARMENIA BY THE PALEOLITHIC POPULATION

*Boris Gasparyan<sup>1,5</sup>, Artur Petrosyan<sup>1</sup>, Varduhi Melikyan<sup>1</sup>, Hayk Haydosyan<sup>1</sup>,  
Ani Adigoyalyan<sup>1,6</sup>, Dmitri Arakelyan<sup>2</sup>, Samvel Nahapetyan<sup>4</sup>, Phil Glauberman<sup>3</sup>*

1. Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

2. Institute of Geological Sciences, NAS, Armenia

3. The Catalan Institute of Human Paleoeology and Social Evolution, Tarragona, Spain

4. Independent researcher

5. Yerevan State University

6. Museum of History of Armenia

## Abstract

Exploitation of water resources is one of the most important elements of the landscape organization and life supporting strategy of ancient societies, which however has never been the subject of a separate study. In this article we undertook an attempt to outline certain patterns of relations of the ancient inhabitants of Armenia with water bodies, based on geomorphological and palaeoenvironmental reconstructions in comparison with the data obtained from the study of the archaeological sources. The implemented study shows the role of water for shaping the lifestyles of ancient hunter-gatherers as one of the primary and crucial factors in the formation of landscape organization strategies of primitive societies. Particularly, it is obvious that the Paleolithic inhabitants of Armenia organized their activities along river nets and embankments of paleolakes, which was related with everyday use of drinking water, for toolstone raw materials procurement and for the search of effective ways of hunting. In general, water consumption traditions in Armenian Highlands were established during the Paleolithic Period and were transformed into special concepts and worldviews as a result of evolution of the similar activities developed by the later societies.

Keywords: Republic of Armenia, life-supporting strategies, lacustrine sediments, alluvial sediments, open-air sites, cave-sites, rhythm of water bodies, raw material sources, Paleolithic, hunter-gatherers.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀԻՆ ՔԱՐԻ ԴԱՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

*Բորիս Գասպարյան<sup>1,5</sup>, Արտուր Պետրոսյան<sup>1</sup>, Վարդուհի Մելիքյան<sup>1</sup>, Հայկ Հայդոսյան<sup>1</sup>,  
Անի Ադիգոյալյան<sup>1,6</sup>, Դմիտրի Արակելյան<sup>2</sup>, Սամվել Նահապետյան<sup>4</sup>, Ֆիլ Գլաուբերման<sup>3</sup>*

1. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

2. ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

3. Մարդկային պալեոէկոլոգիայի և սոցիալական էվոլյուցիայի կատարյալական ինստիտուտ

4. Անկախ հետազոտող

5. Երևանի պետական համալսարան

6. Հայաստանի պատմության թանգարան

## Անվտիպագիր

Վաղագույն մարդկանց կողմից ջրային պաշարների շահագործումը հնագույն հասարակությունների լանդշաֆտային կազմակերպման և կենսապահովման ռազմավարության կարևորագույն տարրերից մեկն է, որը, սակայն, առանձին ուսումնասիրության առարկա երբևէ չի դարձել: Մույն հոդվածում, համադրելով հնամոռֆոլոգիական և հնաաշխարհագրական վերակազմությունների և հին քարի դարի հնագիտական սկզբնաղբյուրների ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տվյալները, փորձ է արվում ուրվագծել Հայաստանի հնաբնակների կողմից ջրային մարմինների հետ փոխհարաբերության որոշակի օրինաչափություններ: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս հնագույն որսորդ-հավաքչարարների կյանքում և պարզագույն հասարակությունների լանդշաֆտային կազմակերպման ռազմավարություններում ջրի՝ առաջնային և որոշիչ գործոններից մեկը լինելու իրողությունը: Մասնավորապես, ակնհայտ են հին քարի դարաշրջանում Հայաստանի բնակիչների կողմից իրենց կենցաղն ու գործունեությունը գետային ցանցի և լճերի ափամերձ հատվածներում կազմակերպելու վկայությունները: Դա կապված էր ջրով կենցաղային նպատակներով օգտագործելու, աշխատանքային գործիքներ պատրաստելու համար գլաբալային հումքի հայթայթման, արդյունավետ որս կազմակերպելու նպատակների հետ: Ընդհանուր առմամբ,

ջրային պաշարների օգտագործման ավանդույթները Հայկական լեռնաշխարհում ձևավորվել են դեռևս հին քարի դարում և աստիճանաբար հայեցակարգային և յուրօրինակ մտածելակերպի բնույթ են ձեռք բերել հետագայի հասարակությունների կենսագործունեության արդյունքում:

**Հիմնաբառեր.** Հայաստանի Հանրապետություն, կենսապահովման ռազմավարություն, լճային նստվածքներ, ալյուվիալ նստվածքներ, բացօթյա կայաններ, քարայր-կացարաններ, ջրային ավազանների հոսք, հումքի աղբյուրներ, հին քարի դար, որսորդ-հավաքչարարներ:

**Ներածություն**

Հայաստանի Հանրապետության տարածքը, որն ընդարձակ Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան մասն է կազմում, չորրորդական երկրաբանական դարաշրջանում կամ պլեյստոցենում հարուստ է եղել ջրային պաշարներով: Այդ մասին են վկայում Արարատյան, Շիրակի, Լոռու, Ապարանի, Որոտանի գոգավորությունների սահմաններում պահպանված ուշ պլիոցեն-պլեյստոցենյան հասակի լճային՝ դիատոմիտային և ավազային կազմ ունեցող նստվածքների շերտախմբերը: Այդ նստվածքների հզորությունը տատանվում է մի քանի մետրից մինչ մի քանի հարյուր մետրը, ինչը կապված է ռելիեֆի ձևավորման համալիր գործընթացների (հրաբխականություն, երկրակեղևի տեկտոնիկ շարժումներ, սառցապատումներ և այլն) հետ (նկ. 1, 2):

Նշված նստվածքների մի մասը շերտագործն աղերսվում է չորրորդական հրաբխածին (հրաբխային, հրաբխային-նստվածքային) ապարների (բազալտային հոսքեր, տուֆային գոյացություններ) հետ: Այս նստվածքները պարփակված, ծածկված են նշված ապարներով կամ նստած են վերջիններ-

րիս մակերևույթին, ինչը թույլ է տալիս ապարների հարաբերական կամ ճշգրիտ հասակագրման միջոցով պատկերացում կազմել հնալճերի գոյության ժամանակագրական միջակայքի վերաբերյալ: Լճային նստվածքները հաճախ պարունակում են հրաբխային մոխիր, որը ևս հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ կերպով իրականացնել դրանց բացարձակ հասակագրումը (նկ. 3-5):

**Հայաստանի տարածքի ջրային պաշարները չորրորդական երկրաբանական դարաշրջանում (ուրվագիծ)**

Հայաստանի տարածքում առկա հնալճերի և դրանց մասին վկայող լճային նստվածքների համալիր ուսումնասիրությունը (քարտեզագրում և զբաղեցրած տարածքի ուրվագծում, հասակագրում, առաջացման, բաղադրության առանձնահատկությունների, շրջակա լանդշաֆտների, կլիմայական պայմանների վերակազմություն, կենսաշերտագրական տվյալների փաստագրում և այլն) տևական և շարունակական գործընթաց է: Նման ուսումնասիրություններ իրականացվել են վերը նշված՝ Արարատյան, Հրազդան-Կոտայքի, Եղվարդի, Շիրակի,



նկ. 1. Ապարանի գոգավորության լճային նստվածքները Հարթավան գյուղի մոտ՝ Արագած լեռան համայնապատկերով (Արագածոտն)



Նկ. 2. Որոտանի գոգավորության լճային նստվածքները Շամբ գյուղի մոտ (Սյունիք)



Նկ. 3. Ստորին պլեյստոցենյան հասակի բազալտային հոսքերով պարփակված լճային նստվածքներ Քարինջ գյուղի մոտակայքում (Լոռի)

Լոռու, Ապարանի, Որոտանի գոգավորությունների սահմաններում (Aslanyan, 1958; Paffengolts, 1964):

Առանձնակի կարևորություն ունեն վերջին տարիներին Լոռու, Որոտանի, Ապարանի, Հրազդան-Կոտայքի և Եղվարդի գոգավորությունների սահմաններում փաստագրված լճային նստվածքների՝ արդի մեթոդներով իրականացված ուսումնասիրությունները: Դրանց արդյունքում, օրինակ, հաջողվել է որոշել Լոռու գոգավորության սահմաններում առկա հնալճի գոյության ժամանակը (Զորագե-

տում պահպանված լճային նստվածքները ծածկող բազալտային հոսքը K/Ar մեթոդով թվագրվել է մեզանից առաջ մոտ 1,9 միլիոն տարի) (Sheth et al., 2015): Ստորին պլեյստոցենի սկզբնափուլերին համապատասխանող հասակ է արձանագրվել նաև Փարաքար գյուղի մոտ բացված՝ դիատոմիտային լճային նստվածքների հետ անմիջական շփում ունեցող բազալտի (ծածկում է) Ar/Ar մեթոդով ստացված թվագրման արդյունքում (մեզանից առաջ մոտ 2,4 միլիոն տարի):



Նկ. 4. Փամբակ գետի հովտի՝ միջին պլեյստոցենյան հասակի տուֆի շերտով ծածկված լճային նստվածքները՝ Արջուտ գյուղի մոտակայքում (Լոռի)




Նկ. 5. Հրաբխային մոխիր Ապարանի գոգավորության միջին պլեյստոցենի լճային նստվածքներում (Արագածոտն)


Որոտանի գոգավորության սահմաններում առկա դիատոմիտային լճային նստվածքների թվով 17, տարբեր մեթոդներով ( $K/Ar$ ,  $Ar/Ar$ ,  $U/Th$ ) իրականացված ռադիոմետրիկ վերլուծությունների, ինչպես նաև մագնիսաստրատիգրաֆիկ ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա ստացված թվագրումները թույլ են տալիս եզրակացնել, որ մեզանից մոտ 1,21 միլիոն տարի առաջ (ստորին պլեյստոցենի եզրափակիչ փուլեր) երկրակեղևի տեկտոնիկ շարժման արդյունքում սկսվել է

այս հնավրի ձևավորումը: Մեզանից մոտ 993 հազար տարի առաջ տեղի ունեցած հրաբխային ժայթքումների արդյունքում արտադրված բազալտային լավայի հոսքերը ծածկել են ֆլյուվիալ-լճային նստվածքները, ինչը նշանակում է, որ Որոտանի գոգավորության հնալիճը պահպանել է իր գոյությունը մոտ 200 հազար տարի (Ollivier et al., 2010; Krischer et al., 2014):

Ավելին, դիատոմիտային նստվածքներում առկա փոշեհատիկային մնացորդների, բույսերի և



Նկ. 6. Շագանակատերև կաղնու տերևների դրոշմներ Որոտանի խմբի տեղավայրերից (Սյունիք)  
(Source: I. G. Gabrielyan)



Նկ. 7. Գորտի դրոշմ Որոտանի խմբի  
Շամբի տեղավայրից (Սյունիք)  
(Source: I. G. Gabrielyan)

կենդանիների դրոշմների և, ընդհանրապես կենսաշերտագրական տվյալների համալիր ուսումնասիրությունն իր հերթին հնարավորություն է տալիս վերակազմել նշված ժամանակահատվածում Որոտանի գոգավորության կլիմայական պայմանները, շրջակա հնամիջավայրն ու լանդշաֆտ և որ ամենակարևորն է հնագիտական խնդիրների տեսանկյունից, իրականացնել հնագույն մարդկանց կենսապահովման ռեսուրսների՝ սննդի համար պիտանի բուսական և կենդանական տեսակների առկայության որակական գնահատում (նկ. 6, 7): Նշված ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ սույն տարածքն ունեցել է ներկայից խիստ տարբեր՝ մարդու կենսագործունեության համար ավելի բարենպաստ (ավելի բարձր տարեկան ջերմաստիճաններով և ավելի խոնավ) կլիմայական պայմաններ և հարուստ կեսաբազմազանություն, ինչն այսօր ավելի բնորոշ է Կասպից ծովի հարավային մերձափնյա տարածքներին (Bruch & Gabrielyan, 2002; Joanic et al., 2010; Scharrer 2013; Gabrielyan & Gasparyan, 2003):

Արագածի արևմտյան լանջերին տարածվող Ապարանի գոգավորության հնալճերի ուսումնասիրության ուղղությամբ իրականացված ծրագրի շրջանակներում քարտեզագրվել են լճային նստվածքներ

րի և վերջիններիս տարածման սահմանները: Նմուշարկվել են հնալճի առաջացման կամ, ավելի ճիշտ, առաջին փուլի բնական պատվարի և լճային նստվածքների տակ գտնվող բազալտային հոսքերը, որոնց K/Ar մեթոդով վերլուծության շնորհիվ հաջողվել է պարզել վերջինիս միջին պլեյստոցենյան հասակը (մեզանից առաջ մոտ 800 հազար տարի): Ապարանի հնալիճը, փոփոխելով իր չափերն ու կոնֆիգուրացիան՝ կապված Արագածի ժայթքումների հետ, ամենայն հավանականությամբ գոյատևել է մինչև վերին պլեյստոցենի ավարտը, իսկ հոլոցենում՝ վերածվել ճահճացած տեղամասերի: Չսայած նրան, որ ի տարբերություն Որոտանի գոգավորության հնալճի կողմից թողած դիատոմիտային կազմ ունեցող նստվածքների, Ապարանի՝ ավազային կազմ ունեցող լճային նստվածքները գուրկ են կենսաշերտագրական տվյալներից, այսուհանդերձ, դրանց համատեքստում փաստագրվել են ստորին (ուշ աշելյան) և միջին հին քարեդարյան (մուստերյան) գտածոներ, բացօթյա հնավայրեր և կայաններ (Gasparyan et al., 2004; Colonge et al., 2013): Դրանց պլանիգրաֆիական և մորֆոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քարեդարյան այս հուշարձանները տարածվում են հենց հնալճի ավերին, ինչն, ինքնին ուշագրավ երևույթ է:



նկ. 8. Լճային նստվածքներ Եղվարդի սարահարթում՝ Նոր Երզնկա գյուղի դիմաց (Կոտայք)



նկ. 9. Թռչնաֆաբրիկա-1 կտրվածքի և ուսումնասիրման ենթարկված շերտերի լուսանկարները (Կոտայք)

Հնալճերի վերաբերյալ մեկ այլ համալիր ուսումնասիրություն էլ իրականացվել է Եղվարդի սարահարթի կամ գոգավորության տարածքում, որտեղ լայն տարածում ունեն չորրորդական հասակի լճային նստվածքները (նկ. 8): Սույն հետազոտությունը կապված է Հրազդան գետի կիրճում փաստագրված «Նոր Գեղի-1» ստորին հին քարեդարյան կայանի շրջակա միջավայրի վերակազմության հետ, որի շերտագրական կտրվածքի հիմքում բացվել են դիատոմիտային կազմ ունեցող լճային նստվածքներ (Sherriff et al., 2019):

Ուսումնասիրված նստվածքների կտրվածքը գտնվում է Եղվարդի սարահարթի արևելյան հատվածում, Հրազդան գետի կիրճից արևելք՝ Լուսակերտի թռչնաֆաբրիկայի տարածքում, ինչի համար էլ պայմանականորեն ստացել է Թռչնաֆաբրիկա-1 (Bird Farm-1) անվանումը (նկ. 9): Կտրվածքը ծածկված է Հրազդան գետի կիրճի միջին հոսանքի ամենաերիտասարդ բազալտային հոսքով (Ar/Ar վերլուծությամբ հասակագրվել է մեզանից առաջ մոտ 200 հազար տարով) և տեղակայված է մեկ այլ բազալտային հոսքի վրա (Ar/Ar վերլուծությամբ հա-

սակագրվել է մեզանից առաջ մոտ 440 հազար տարով), այսինքն ներփակված է երկու լավաների միջև: Ժամանակագրորեն այն գրեթե համընկնում է «Նոր Գեղի-1» կայանի շերտագրական համատեքստի հետ. երկուսն էլ ունեն այլովիալ, ապա նաև լճային փուլերին վերաբերող շերտեր և միևնույն հիպոտեզային բարձրությունները (ծովի մակերևույթից մոտ 1400 մ) (Sherriff et al., 2021):

Շերտագրական այս կտրվածքը ենթարկվել է համալիր ուսումնասիրության. իրականացվել են գեոմորֆոլոգիական, լիթոշերտագրական, նստվածքաբանական, միկրոմորֆոլոգիական, երկրաքիմիական, մոխրաշերտագրական վերլուծություններ, դիատոմիտների կազմի որոշում: Այս ուսումնասիրությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Եղվարդի սարահարթի այս հնալիճն առաջացել է լանդշաֆտում արձանագրված տեղաշարժերի՝ հրաբխականության (Գեղամա լեռների ժայթքումներից մեկի՝ հավանաբար Գույթանսարի լավային հոսքը պատվարել է Հրագդան գետը), կլիմայական տատանումների, տեկտոնիկ շարժումների, հողմնահարման և այլ գործոնների հետևանքով և փուլային (լիճ-գետ-լիճ) ու ռեժիմային (մակարդակի տատանումներ) փոփոխություններով գոյատևել է մեզանից առաջ մոտ 440-320 հազար տարի ժամանակագրական միջակայքում (միջին պլեյստոցեն) (Sherriff et al., 2019; Sherriff et al., 2021):

Առանձնակի կարևորություն ունի Շիրակի գոգավորության սահմաններում փաստագրված չորրորդական դարաշրջանի հնալճերի գոյության փաստը, որոնց ուսումնասիրությունը սկսվել է դեռևս 19-րդ դ. վերջերին՝ պայմանավորված այն բանով, որ դրանցում պարբերաբար խոշոր կաթնասուններ (հատկապես փղակերպեր), ապա նաև միկրոֆաունայի հարուստ հավաքածուներ (այսպես կոչված «Լենինականյան ֆաունիստիկ համալիրը») էին հայտնաբերվում: Այս համալիրը մասնագետների կողմից վերագրվել է վաղ կամ ստորին պլեյստոցենին՝ ելնելով նրա շերտագրական դիրքից և հայտնաբերված կենդանական մնացորդների կազմից (Avakyan, 1959, 59-66):

Այսուհանդերձ, միայն վերջին տարիներին է, որ հասակագրման արդի մեթոդների և կենսաշերտագրական զանազան վերլուծությունների կիրառմամբ հետազոտվել են Հայաստանի հյուսիսային հատվածների՝ Շիրակի, Լոռու և Տավուշի՝ Ախուրյան, Ձորագետ, Դեբեդ գետերի ավազանների ստորին-միջին պլեյստոցենի հրաբխականությունը, նստվածքային շերտախմբերը (այլովիալ և լճային նստվածքներ): Այս ուսումնասիրությունների նպա-

տակն է եղել վերակազմել Հայկական լեռնաշխարհի հյուսիսային հատվածում վաղագույն մարդկանց բնակեցման հնաաշխարհագրական և լանդշաֆտային պայմանները՝ փորձելով կորելացնել դրանք այստեղ փաստագրված ստորին հին քարեդարյան հնավայրերի և կայանների հետազոտության արդյունքում ստացված տվյալների հետ (Trifonov et al., 2016): Մասնավորապես, համաձայն այս ուսումնասիրությունների տվյալների, վերը նշված Շիրակի գոգավորության կամ Լենինականյան հնալիճի ձևավորման փուլը, ըստ այն ներկայացնող լճային նստվածքների (Անիի և «Լենինականյան ֆաունիստիկ համալիր»-ը պարունակող Առափիի հորիզոններ) և դրանց երկրաբանական համատեքստի, պետք է հասակագրել ոչ ուշ, քան մեզանից առաջ 1,25 միլիոն տարով: Այս հորիզոններից ամեն մեկը ներկայացնում է լճային նստվածքների կուտակման երկու տարբեր ցիկլեր, որոնք ավարտվում են միջին պլեյստոցենում (մեզանից առաջ 750-600 հազար տարի)՝ այլովիալ նստվածքների առաջացմամբ (լճային ռեժիմը փոխվում է գետայինով)՝ կապված տեկտոնիկ բարձրացումների հետ, որոնք կարող էին հզոր երկրաշարժերի հետևանք լինել: Լճերի առաջացման մեխանիզմն այստեղ միևնույն է, ինչ Լոռու և Ապարանի գոգավորությունների ու Եղվարդի սարահարթի պարագայում և հանդիսանում է լավային հոսքերի կողմից Պալեոախուրյան գետի պատվարման արդյունք (Trifonov et al., 2017; Shalaeva et al., 2019): Ընդ որում, լճային այս նստվածքներից կորզված կենսաշերտագրական տվյալները (փոշեհատիկի, փափկամարմինների, ձկների, երկկենցաղների, մանր կաթնասունների ուսումնասիրությունը) ցույց են տալիս Անիի անտառածածկ (անտառներ-տափաստաններ՝ անտառների գերակշռությամբ) շերտախմբի գոյության ժամանակահատվածը: Անտառածածկ շերտերը փոխվում են առավել բաց լանդշաֆտների Առափիի հորիզոնի ձևավորման ընթացքում, ինչն, ամենայն հավանականությամբ, լճի հայելու մակարդակի իջեցման կամ կրճատման հետևանք է եղել ( Tesakov et al., 2019):

Ընդհանուր առմամբ, Շիրակի գոգավորության հնալճի ուսումնասիրությունն ունի առանցքային նշանակություն, քանի որ, ինչպես երևում է Հայաստանի տարածքի հնալճերի ուսումնասիրության այս համառոտ ակնարկից, դրանք, որպես կանոն, ունեն կենսաշերտագրական հարուստ տվյալներ, որոնց համատեքստում բացակայում են պլեյստոցենի հնագիտական հուշարձանները (Ռրոտանի գոգավորություն), և կամ հակառակը, ունեն հնագիտական համատեքստ, սակայն բացակայում են

1 Մանրամասն տե՛ս (Avakyan, 1959, 7-17), ինչպես նաև (Haydosyan et al., 2021), որոնցում բերված է Շիրակի գոգավորության լճային նստվածքներից հայտնաբերված հնակենդանաբանական նյութերի ուսումնասիրության պատմության ակնարկը:



Նկ. 10. Լճային և գետային փուլերի հերթափոխ ներկայացնող կտրվածք Հարթավան գյուղի մոտակայքում (Արագածոտն)

կենսաշերտագրական տվյալները (Ապարանի գոգավորություն): Շիրակի հնալճի պարագայում առկա են հարուստ կենսաշերտագրական տվյալներ և համաժամանակյա (ստորին հին քարի դար) հնավայրեր: Ցավոք, մինչ այժմ այս տարածքի երկրաբանական, կենսաշերտագրական և հնագիտական տվյալների կորելացիան իրականացված չէ, քանի որ բացակայում են նշված հուշարձանների պեղման, ուսումնասիրության և հասակագրման տվյալները: Նման տվյալների կուտակումն ապագա նախագծերի խնդիր է:

Լճային նստվածքների ուսումնասիրության հետ է կապված նաև չորրորդական դարաշրջանի այլուվիալ (գետային) նստվածքների ուսումնասիրության խնդիրը, քանի որ վերջիններս անմիջականորեն կապվում են հնալճերի կենսատեժիմների հետ և, ինչպես նկատելի է կտրվածքներից, դրանցում հաճախ երևում են լիճ-գետ-լիճ հերթափոխի վկայությունները (նկ. 10):

Այլուվիալ նստվածքների ուսումնասիրությունը պակաս կարևոր չէ հնագույն մարդկանց կենսակերպը և մշակույթը վերակազմելու համար: Ինչպես ցույց կտրվի ստորև, հնագույն հասարակությունների կենսագործունեությունը մեծ մասամբ կապվում է գետային դարավանդների հետ՝ հատկապես գետերի միախառնման կամ գետերի՝ լճերի մեջ լցվելու տեղամասերում, որոնք ամենահարմար է կոլտրոշերն են հանդիսացել ինչպես քարիդարյան մարդկանց, այնպես էլ հետագա հասարակությունների համար՝ ապահովելով պաշտպանված տարածք, նպաս-

տելով որսի կազմակերպմանը, ինչպես նաև մատակարարելով գործիքներ պատրաստելու բարձրորակ և անհրաժեշտ ձև ունեցող հումք (գլաքարերի տեսքով):

Ընդ որում, այլուվիալ նստվածքների ուսումնասիրության և հասակագրման գործիքակազմը և մեթոդները գրեթե չեն տարբերվում լճային նստվածքների ուսումնասիրության և հասակագրման գործիքակազմից ու մեթոդներից: Դրանք անմիջականորեն փոխհարաբերվում են հրաբխային մորֆոլոգիաների հետ (ծածկված են կամ նստած են նրանց վրա), պարունակում են կենսաշերտագրական տվյալներ (փոշեհատիկ, հնակենդանաբանական նյութեր և այլն) (նկ. 11):

Եզրափակելով Հայաստանի տարածքի այլեստոցների լճա-գետային նստվածքների ուսումնասիրության արդյունքները ներկայացնող այս համառոտ ակնարկը՝ անհրաժեշտ է նշել, որ հողվածում ներառվել է դրանց միայն մի փոքր մասը, որոնք ունեն քիչ թե շատ ուսումնասիրված տվյալներ: Հայաստանի տարածքում երկրաբանական այս գոյացությունները ահռելի քանակ են կազմում: Այս նստվածքների ապագա՝ արդի մեթոդներով ուսումնասիրությունը հնագիտական տեսանկյունից ունի առանցքային նշանակություն, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, դրանք անմիջականորեն կապված են Հայաստանի հնաբնակների կողմից թողած նյութական մշակույթը ներկայացնող սկզբնաղբյուրների հետ և հանդիսանում են նրանց առօրյա կյանքի կազմակերպման անքակտելի մասը (Gasparyan, 2010):



Նկ. 11. Ալյուվիալ ծագում ունեցող (գետային) ստովածքներ՝ ծածկված ստորին պլեյստոցենի բազալտային հոսքով, Քարինջ (Լոռի)

**Ուսումնասիրվող նյութերը և մեթոդները**


Հողվածում օգտագործվել են Հայաստանի Հանրապետության տարածքում 1960-ական թթ. վերջերից առ այսօր պեղված հինքարիդարյան հուշարձանների՝ քարայր կացարանների, բացօթյա կայանների և հնավայրերի երկրահնագիտական և հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում գրանցված տվյալներն ու նյութերը: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ժամանակահատվածի ընթացքում էական քանակական և որակական տեղաշարժ է արձանագրվել ինչպես պեղման մեթոդների, հասակագրման, այնպես էլ բացված կտրվածքների նմուշարկման և տարատեսակ մեթոդներով վերլուծության շնորհիվ, որոշ հուշարձանների տվյալներ վերանայվել ու թարմացվել են:

Հինքարիդարյան հուշարձանների երկրահնագիտական, երկրաշերտագրական, կենսաշերտագրական, կլիմայաշերտագրական, մշակութաշերտագրական տվյալների ամփոփումն իրենից ներկայացնում է ժամանակի որոշակի միջակայքում կամ տարբեր միջակայքերում՝ որոշակի հասարակական կազմավորման կամ կազմավորումների արտադրական և տեխնոլոգիական հմտությունների, շրջակա միջավայրի հետ փոխհարաբերության և կենսապահովման խնդիրների լուծմանն ուղղված համալիր միջոցառումների շղթա և համակարգ, այլ բառերով ասված՝ էկո և սոցիոհամակարգերի փոխհարաբերություն: Այս համակարգի մեջ ինչպես բնական, այնպես էլ հասարակական գործոնների

ազդեցությամբ ձևավորված ու պահպանված ազդանշանները կամ հետքերը չափելի են և կարող են փաստագրվել, գնահատվել ու վերակազմվել վերը նշված մեթոդների ընձեռած գործիքների օգնությամբ: Օրինակ՝ պեղված հնավայրի շերտերում ձկների ոսկրային մնացորդների հայտնաբերման հիման վրա կարելի է առաջ քաշել այն վարկածը, որ տվյալ տարածքի բնակչությունը զբաղվել է ձկնորսությամբ, սակայն որոշակի վերապահումներով, քանի որ ձկների մնացորդները կարող են հայտնվել շերտերում նաև բնական գործոնների արդյունքում՝ որսված լինել թռչունների և կենդանիների կողմից, որոնք էլ իրենց հերթին են դարձել մարդկանց կողմից իրականացված որսի արդյունք: Այս տեսանկյունից կարևորվում են, այսպես կոչված, զուգահեռ տվյալները՝ ոսկրային մնացորդների այրվածությունը, կտրատման հետքերի տեսանելիությունը, դրանց հայտնաբերման տաֆոնոմիկ իրավիճակը, ձկնորսական գործիքների և հարմարանքների (կարթեր, հարպուններ, ցանցեր կամ դրանց դրոշմներ) առկայությունը: Այս համատեքստում կարևորվում են նաև շրջակա լանդշաֆտի ուսումնասիրության արդյունքում փաստագրված տվյալները՝ ջրային ավազանների առկայությունը, դրանց տեսակն ու կենդանական աշխարհի էկոլոգիական ցուցիչները, կլիմայական ռեժիմը: Ավելին, ձկների ոսկորների վատ պահպանված լինելու պատճառով դրանց տեսակը որոշելու անհնարինության դեպքում առավել կարևոր է դառնում շրջակա ջրային ավազանների ստովածքներից փաստագրված ձկների մնա-



Նկ. 12. Մաստարահեղեղատ գետի՝ գլքարերով առատ հունը՝ Արարատյան սարահարթ դուրս գալու տեղամասում (Արմավիր)



Նկ. 13. Աղստևի վտակ Լուսաձոր գետի հունի մեջ և ափերին սփռված գլքարեր (Տավուշ)

ցորդների, դրոշմների առկայությունը, որոնք ժամանակագրորեն մոտ են կամ համընկնում են հնավայրի գոյության հետ, և որոնց միջոցով տեսակի որոշումն ավելի հավանական է ու ցույց է տալիս տարածքի հնաբնակների համար «հասանելի» ձկնաշխարհի գոյությունը:

Ջրային ռեսուրսների օգտագործման մասին անմիջականորեն վկայող հետքերը կամ ազդանշաններն ավելի վարկածային են, քանի որ այս իրո-

դությունների մեծ մասը չունեն հստակ չափորոշիչներ: Այսուհանդերձ, ջրային ավազանների (լճերի և գետերի) մոտակայքում հնավայրերի տեղադրության բազմակի և կրկնվող օրինաչափությունները թույլ են տալիս որոշակի եզրահանգումներ անել ջրային պաշարների հետ Հայաստանի հնաբնակների փոխհարաբերության շուրջ: Առավել հաստատուն են գործիքներ պատրաստվող համար պիտանիքարի հումքի՝ ջրային ավազաններից կամ դրանց



*Նկ. 14. Խոշոր կաթնասունների՝ խիստ հատվածային վիճակում պահպանված ոսկրային մնացորդներ Մուսալեռի մոտ մերկացող լճային նստվածքների կտրվածքում, Արարատյան գոգավորություն (Արմավիր)*

թողած նստվածքներից ու շերտերից հայթայթելու իրողությունը ցույց տվող փաստագրումները, քանի որ հնավայրերի շերտերից հայտնաբերված քարե արտադրահամալիրների մի սովոր մասը հին քարի դարի բոլոր ստորաբաժանումներին վերաբերող սկզբնաղբյուրներում պատրաստված է հենց գլաքարային հումքից, որի առաջացման հիմնական աղբյուրը ջրային ալիքն ու հոսանքն են (նկ. 12, 13):

Հայաստանի հինքարիդարյան հնավայրերի գլաքարային հումքի օգտագործման օրինակափոյունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հումքը հավաքվել է կամ գործող գետերի ծանծաղ՝ դանդաղ հոսք ունեցող ափամերձ հատվածներից (Արփա, Ռոտտան, Քասախ), կամ էլ ցամաքած գետերի հնահուններից ու անհետացած հնալճերի գոգավորությունների եզրային՝ երբեմնի ափամերձ տեղամասերից (Մուշական, Աղավնատուն, Բավրա): Գլաքարային հումքի ձեռք բերման այս ռազմավարությունն ավելի բնորոշ է վաղագույն փուլի (գլաքարային մշակույթին վերաբերող) հուշարձաններին, որոնց բնակիչները, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ամենայան հավանականությամբ հումքերի աղբյուրներ չեն այցելել: Գլաքարային հումքի հայթայթման այս ռազմավարությունը շարունակվել է նաև քարի դարի հետագա դարաշրջանների ընթացքում՝ համադրվելով այլ եղանակների հետ:

Եվ վերջապես, ափամերձ հատվածներում որսի կենդանիների՝ կաթնասունների տարածման մասին է վկայում Մուսալեռ գյուղի մոտ մերկացող լճային նստվածքների կտրվածքներում դրանց ոսկրային մնացորդների առկայությունը: Ընդ որում, լճային նստվածքների վերին շերտը ծածկված է հրաբխային մոխիրի շերտով, որի մեջ տեսանելի են հրաբխային ռումբեր՝ քարաբեկորների տեսքով (նկ. 14): Ասվածը թույլ է տալիս ենթադրել, որ ջուր խմելու համար տեղանքում հայտնված հոտը «ոմրակոծության է ենթարկվել» մոտակա հրաբուխներից մեկի ժայթքման ժամանակ, ինչը բերել է կենդանիների ոչնչացման:

Խոշոր կաթնասունների կենսակերպի վրա էական ազդեցություն են թողել նաև վերևում նշված հնալճերի կենսատիթթների տատանումները: Մասնավորապես, նման օրինակներ ունենք փղակերպերի հետ կապված, որոնք ջուր խմելու նպատակով մոտեցել են ճահճացած ափերին, խրվել են տորֆի և ցեխային նստվածքների մեջ և այլևս չեն կարողացել դուրս գալ: Որոշ դեպքերում էլ կաթնասունները զոհ են դարձել սելավային հզոր հոսքերին կամ լճերի մեջ լցվող գետերի կտրուկ վարարումներին: Նման օրինակներ ունենք Նոտնուսում (Հրազդան գետի կիրճ), Լերմոնտովո գյուղի մոտ (Փամբակ գետի ավազան), Շիրակի գոգավորությունում (Aghajanyan & Sayadyan 1983, 102-103):



Նկ. 15. Հաղթանակ-3 բացօթյա կայանի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից (օդային լուսանկար)

### Ջրի օգտագործման վկայությունները ստորին հին քարի դարում կամ ստորին պալեոլիթում


Ջրային ավազանների հարևանությամբ որսորդ-հավաքչարարների կայանների և հնավայրերի գոյության առաջին փաստերը վերաբերում են ստորին պալեոլիթի վաղագույն (քարի մշակման օդուվյան և աշելյան ավանդույթով ներկայացված) փուլերին: Լավագույն օրինակներ են «Հաղթանակ-3» բացօթյա կայանի (Դեբետ գետի կիրճ), «Արենի-1» և «Արենի-2» քարայրների (Արփա գետի հովիտ), «Դալարիկ-1» քարայրի (Մաստարա հեղեղատ գետի կիրճ), «Նոր-Գեղի-1» կայանի (Հրագդան գետի կիրճ) և այլ կայանների տեղադրությունը գետային դարավանդների վրա, նշված գետերի հոսքին շատ մոտ կամ անմիջական հարևանությամբ:

«Հաղթանակ-3» կայանի տեղանքը, որը ներկայումս Դեբեդ գետի աջակողմյան դարավանդներից մեկն է, տարածվում է բուն գետի և նրա վտակներից մեկի կողմից կազմավորված դարավանդի վրա: Կայանի գեոհնագիտական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այստեղ գործ ունենք 2,1 միլիոն տարի առաջ Դեբեդի հնահովիտը լցրած ստորին պլեյստոցենի բազալտային հոսքի հետ, որը փոխել է գետի կոնֆիգուրացիան: Այստեղ հաստատված վաղագույն մարդկանց խումբն ապրել է գետապտոյտի ափին: Այս մասին է վկայում կայանի ստորին շերտի գտածոների և բազալտային հոսքի փոխհարաբերությունը. բազալտն այստեղ ունի


նկատելի թեքություն՝ դեպի հյուսիս-արևելյան ընդլայնական կտրվածք, որը մոտենում է գետի երբեմնի տավեղին: Բերված վերկազմության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ գտածոների թիվն աճում է նշված ուղղության վրա, այսինքն՝ դեպի գետի մերձափնյա տեղամասը (Նկ. 15):

«Հաղթանակ-3»-ի ստորին պալեոլիթյան՝ ալյուվիալ ծագմամբ 13-րդ շերտում փաստագրված բոլոր գլաքարերը և դրանց հենքի վրա պատրաստված գործիքները բերովի են, այսինքն տեղում են հայտնվել մարդու գործունեության արդյունքում. հավանաբար հավաքվել են գետի՝ դանդաղ հոսք ունեցող տեղամասերից (Նկ. 16): Դրանց շարքում առկա են ինչպես հրաբխային, այնպես էլ մետամորֆիկ և նստվածքային ծագմամբ ապարներ, որոնք ունեն ձեռքի մեջ բռնելու համար հարմար և օպտիմալ չափեր: Գլաքարերի մի մասն օգտագործել են որպես գործիքներ պատրաստելու հարմարանքներ՝ ջարդիչներ: Նստվածքային ապարների (հիմնականում՝ կրաքարի) պարագայում բնակտորներն ունեն ավելի շուտ սալիկավոր կառուցվածք, քան գետաքարային, քանի որ ավազա-կրաքարային ծագում ունեցող նստվածքներն այստեղ հանդես են գալիս միմյանցից առանձնացող շերտերի կամ թերթաքարերի տեսքով:

Այսուհանդերձ, «Հաղթանակ-3»-ից հայտնաբերված գլաքարային գործիքները հարդարվել են բեկոտման պարզագույն հնարների կիրառության միջոցով: Սկզբում հեռացվել է գլաքարի եզրերից մեկը, ինչի արդյունքում ստեղծվել է հետագա, հա-




Նկ. 16. Հաղթանակ-3 կայանի ստորին՝ 13-րդ շերտում փաստագրված գլաքարային տիպի գործիքներ (չոպերներ)



Նկ. 17. Հաղթանակ-3 կայան: Բազալտից պատրաստված չոպերներ

մեմատաբար ավելի նուրբ բեկոտում իրականացնելու համար անհրաժեշտ մակերես, որից հետո մի քանի հանույթների արդյունքում ձևավորվել է աշխատանքային եզրը: Այս գործիքները գործնականում ամենապարզունակ կացիներն են, որոնք հնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել չոպերներ (կոպիտ գործիքներ): Դրանց գերակշիռ մեծամասնությունը պատրաստված է հենց հրաբխային ծագում ունեցող գետաքարերից՝ կանաչավուն երանգի խոշորահատիկ բազալտից (նկ. 17):

«Հաղթանակի» հավաքածուում հանդիպում են նաև ավելի խնամքով մշակված չոպերների օրինակներ, որոնք հարդարված են գետաքարի երկ-



Նկ. 18. Հաղթանակ-3 կայան: Բազալտից և լավարիտից պատրաստված չոպերներ

փեղկման և ճեղքման տեխնիկայով և ունեն ավելի խնամքով, երբեմն՝ մասնակի երկկողմանի մշակում (նկ. 18): Այս համգամանքը կարելի է բացատրել հումքի ֆիզիկա-մեխանիկական հատկություններով՝ հատկապես կարծրությամբ, կարծր հումքի բեկոտումն ավելի մանրակրկիտ հարդարում է պահանջում: Այսպիսով՝ տեսնում ենք, որ աշխատանքային գործիքների պատրաստումը ևս անմիջական կապ ունի հուշարձանների հարևանությամբ գոյություն ունեցած ջրային մարմինների հետ, որոնք ապահովում էին օգտագործվող հումքի քանակը, որակական հատկանիշները և չափերը (Gasparyan, 2010):

«Հաղթանակ-3»-ի ուսումնասիրության արդյունքներին նմանվող տվյալներ են արձանագրվել նաև «Արենի-1» և «Արենի-2» քարայրների՝ ստորին պալեոլիթի վաղագույն փուլերին վերաբերող նյութերի ուսումնասիրության արդյունքում: Երկու քարայրների ծագումն էլ կապված է Արփա գետի կիրճի ձևավորման հետ, երբ գետը կտրել է կրաքարերի մեջ ձևավորված բնական դատարկությունը և ստեղծել «Արենի-1»-ն ու «Արենի 2»-ը (նկ. 18):

Ստորին պլեյստոցենում Արփա գետի մակարդակը բարձր է եղել նրա ներկայիս նիշերից: Այն անցել է Արենի-1 քարայրի մերձքարայրային հրա-




Նկ. 19. Արենի-1 և Արենի-2 քարայրների դիրքը Արփա գետի նկատմամբ (օդային լուսանկար)



Նկ. 20. Արենի-1 քարայրի մուտքը և դիմացի հրապարակը հյուսիսից (օդային լուսանկար)

պարակի տարածքով, ինչը, բացի կիրճի տեսանելի ուրվագծից, ապացուցվում է նաև քարայրի մուտքի հարևանությամբ գտնվող ժայռերի ճեղքերում գլաքարերի առկայությամբ, որոնք այս մակարդակի վրա կարող էր հասցնել միայն գետի աշխատանքը (Նկ. 19, 20): Ավելին, «Արենի-1»-ի ծածկը եղել է ավելի առաջ, քան այն ներկայումս է, իսկ հետագայում փլուզվել է հողմնահարման և հագարամյակների ընթացքում տեղի ունեցած երկրաշարժերի հետ-

ևանքով, ինչի մասին են վկայում դիմացի լանջին սփռված զանգվածեղ ժայռաբեկորները: Քարայրի առաջին բնակիչներն ապրել են նրա մուտքի մոտ, անմիջապես ծածկի տակ՝ Արփայի երբեմնի հունի ափին, ինչը հաստատվում է գլաքարային գործիքների՝ միայն այս հատվածում փաստագրվելու իրողությամբ: Քարայրի՝ ներկայիս ծածկի տակ գտնվող հատվածների պեղումներից գլաքարային գործիքի, գործիքների հարդարման արտադրական թափոնի



Նկ. 21. Արենի-1 քարայր: Բազալտից, կվարցացված կրաքարից և կրաքարից պատրաստված չոպերներ

գեթ մեկ նմուշ չի հայտնաբերվել: Այսինքն, «Արենի-1» քարայրի պարագայում ևս վաղագույն մարդկանց բնակեցման համար կարևոր նախապայման է հանդիսացել ջրային ավազանի, տվյալ դեպքում՝ Արփա գետի երկայնքով բնակեցումը՝ համադրված բնական ծածկի տակ պատասպարվելու հնարավորություն ունենալու հետ: Ընդ որում, քարայրը գտնվում է Արփայի և նրա աջակողմյան վտակ Գնիշիկի միախառնման կետի հարևանությամբ: Սա կարևոր հանգամանք է կենդանիների միգրացիոն ուղիների, նրանց ջուր խմելու համար հարմար հատվածների առկայության տեսանկյունից, ուստի նաև որսի կազմակերպման ռազմավարությունների համար: Այս առումով ուշագրավ է քարայրի դիմացի հրապարակի պեղված հատվածներից հայտնաբերված քարանձավային արջի, վայրի խոզի, եղջերուի և այլ կաթնասունների՝ խիստ ֆոսիլիզացված վիճակում գտնվող մնացորդների փաստագրումը:

Այսուհանդերձ, անդրադառնալով «Արենի-1»-ից հայտնաբերված, ստորին պալեոլիթի քարի

մշակման գլաքարային կամ օլդովեյան ավանդույթին պատկանող գործիքների դիտարկմանը, կարող ենք փաստել հետևյալը. դրանք պատրաստված են բացառապես գետաքարերի հենքի վրա և հարդարված են այն նույն միջոցներով, որոնք տեսանք տեսանք «Հաղթանակ-3»-ի պարագայում (Gasparyan et al., 2020, 148-150):

Նշված իրերի շարքում առկա են ինչպես անմիջապես գլաքարերի հենքի վրա հարդարված չոպերների դասական օրինակներ, որոնց աշխատանքային մասերը հարդարված են գլաքարի եզրերի ձևափոխության շտրիիվ (նկ. 21: 1, 2, 4), այնպես էլ վերջիններիս ճեղքման կամ երկփեղկման միջոցով ստացված օրինակներ (նկ. 21: 3) (Gasparyan et al., 2014a, 46, 47, 62; Gasparyan et al., 2020, 148-150):

Հումքի վերլուծության տեսանկյունից, որը կարևոր է մեր խնդրի համար, հիշատակելի են կանաչավուն երանգ ունեցող բազալտից և կվարցացված կրաքարից պատրաստված օրինակները (նկ. 21: 1-3): Այս հումքատեսակներին պատկանող գլաքա-



նկ. 22. Աղավնատուն-1 բացօթյա կայանի ընդհանուր տեսքը հարավից



նկ. 23. Աղավնատուն-1 բացօթյա կայանի շերտագրական կտրվածքը




նկ. 24. Աղավնատուն-1 (1-3) և Աղավնատուն-2 (4) բացօթյա կայաններ: Դոլերիտային բազալտից (1) և դացիտից (2-4) պատրաստված չոպերներ (1-2, 4) և ձեռքի հատիչ (3)

րերն առկա են հենց Արփա գետում, մինչդեռ կարմրավուն երանգ ունեցող գլաքարը, որի հենքի վրա հարդարված է զանգվածեղ չոպերը (նկ. 21: 4), հանդիպում է Գնիշիկ գետի կողմից լվացվող ապարներում: Սա նշանակում է, որ գլաքարային հումքի պաշարները ներառում են Արփայի ավազանն ավելի լայն իմաստով:

Համանման տվյալներ են գրանցվել նաև ստորին պալեոլիթի հաջորդ՝ քարի մշակման աշելյան

ավանդույթին պատկանող հնագիտական աղբյուրների ուսումնասիրության արդյունքում:

Օրինակ՝ «Աղավնատուն-1»-ը տարածվում է հենց պալեոլիտի երկայնքով ավամերձ հատվածի անմիջական հարևանությամբ, որը հետագայում ծածկվել է Արագածի ժայթքման հետևանքով ձևավորված միջին պլեյստոցենի հասակի (մեզանից 800-600 հազար տարի առաջ) տուֆային շերտով: Ընդհանուր շերտախմբի հիմքում բացվում են Արա-




Նկ. 25. Դավարիկ-1 քարայրի երկրաբանական համատեքստը

գած լեռան դացիտային լավային հոսքերը, որոնք, ըստ արդի պատկերացումների, ունեն մեզանից առաջ 1 միլիոն 200 հազարից մինչև 1 միլիոն տարի հասակ (բաժին են ընկնում վաղ պլեյստոցենի եզրափակիչ փուլին) (Նկ. 22, 23):

Վաղ աշելյան ավանդույթին պատկանող շերտը նստած է դացիտային հոսքի վրա և տուֆային՝

պիրոկլաստիկ նստվածքի միջև գտնվող պալեոհորի շերտում: Այսուհանդերձ, կայանի գտածոների մեծ մասը վերգետնյա են, քանի որ հուշարձանի պեղումները դեռևս ընթացքի մեջ են: Այս գտածոները և որոշակի պատկերացում են տալիս աշխատանքային գործիքների պատրաստման և որսորդական ռազմավարությունների հետ կապված խնդիրների




Նկ. 26. Դավարիկ-1 քարայրի հատակագիծը, որտեղ երևում են պեղումներով բացված հատվածները և Մաստարահեղափայտ գետի հետ փոխհարաբերությունը




Նկ. 27. Դավարիկ-1 քարայրի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից (օդային լուսանկար)

վերաբերյալ, որոնք առնչվում են ջրային ավազանների անմիջական հարևանությամբ հաստատվելու հետ: Արարատյան գոգավորության լիճ լցվող գետի առկայությունը, ամենայն հավանականությամբ, որսի համար պիտանի կենդանիների ջուր խմելու վայր է եղել: Մինչդեռ, դատելով Աղավնատան կայաններից հայտնաբերված դաջիտե գործիքների

(երկկողմանի հարդարմամբ չոպերների և ձեռքի հատիչների) նշանակալի չափերից ու զանգվածեղ բնույթից, պետք է ենթադրել, որ Աղավնատան հնաբնակների որսի թիրախ են հանդիսացել բավական խոշոր կաթնասուններ, և դրանց մարինը մասնատելու համար պոտենցիալ էներգիայի մեծ պաշար ունեցող գործիքակազմի կարիք է եղել:



Նկ. 28. Դալարիկ-1 քարայր: Ասղեզիտային բազալտե խոշոր ցլեպի վրա հարդարված ուշ աշելյան ձեռքի հատիչ



Նկ. 29. Դալարիկ-1 քարայր: Դացիտե (2-4) և վանակատե (5) հումքերից հարդարված ուշ աշելյան բիֆասներ


Դիտարկելով այդ գործիքների պատրաստման հումքը՝ կարող ենք տեսնել, որ առկա են ինչպես տեղական դացիտից, այնպես էլ դրսից բերված մանրահատիկ դոլերիտային բազալտից (ամենայն հավանականությամբ՝ Արայի լեռից կամ Գեղամա լեռներից ծագող) պատրաստված օրինակներ (նկ. 24): Ընդ որում, եթե ուշադրություն դարձնենք չոպերների հարդարմանը, ապա, ի տարբերություն «Հաղթանակ-3»-ից և «Արենի-1»-ից հայտնի օրինակների, դրանք արդեն ունեն երկկողմանի կամ մասնակի երկկողմանի հարդարում և ուղեկցվում են բավական կոպիտ ուրվագծեր ունեցող ձեռքի հատիչներով: Վերջիններիս կողերը հարդարված են միայն բեկոտման միջոցով, իսկ աշխատանքային կողերը հաստ են ու կորագիծ (նկ. 24: 3): Նման զանգվածեղ գործիքների պատրաստման համար տեղում առկա է եղել առատ հումք՝ խոշոր և մանր չափերի գլաքարերի տեսքով, որոնք ստեղծել է դացիտային մայր ապարները լվացող գետը (Gasparyan et al., 2014a, 43, 44, 60):

Աշելյան ավանդույթի եզրափակիչ փուլերին պատկանող հնավայրերը ևս ուղղակիորեն առնչվում են ջրային ավազանների՝ գետերի և լճերի հետ և տարածվում են դրանց անմիջական հարևանությամբ: Ասվածի լավագույն օրինակն է վերջերս հայտնաբերված և նախնական ուսումնասիրության ենթարկված «Դալարիկ-1» քարայրը, որտեղ բացվել է ուշ աշելյան մշակութային մնացորդներ պարունակող շերտ՝ առնվազն 1,2 մ հզորությամբ: Չնայած որ քարայրի և նրա մշակութային շերտերի հա-

սակագրումը, ինչպես նաև կենսաշերտագրական տվյալների ուսումնասիրությունը դեռևս ընթացքի մեջ են, Դալարիկի աշելյան համալիրը նախնականորեն հասակագրվում է մեզանից մոտ 500 հազար տարի առաջ ժամանակաշրջանով (միջին պլեյստոցեն):

Քարայրը գտնվում է Մաստարա հեղեղատ գետի աջ ափին և առաջացել է նրա՝ ներքևից հաշված երկրորդ դարավանդի վրա՝ երկու բազալտային հոսքերի կոնտակտում, որոնց միջև չկա որոշակի ընդմիջում: Հրաբխային ծագում ունեցող ոչ մեծ չափերի դատարկություն է, որի կամարածն մուտքը բացվում է դեպի հարավ-արևելք: Քարայրի շրջակա լանդշաֆթը ձևավորել են Արագած լեռան չորրորդական՝ բազալտային, բազալտ-ասղեզիտային լավաները, ինչպես նաև տուֆային գոյացությունները, որոնցից ներքև բացվում են Արարատյան գոգավորության հնալճի դիատոմիտային, ավազային նստվածքները (Gasparyan et al., 2023, 127-141) (նկ. 25-27):

Քարայրի՝ աշելյան փուլի բնակիչների կողմից օգտագործման ժամանակահատվածում Մաստարա հեղեղատ գետը հոսել է անմիջապես նրա մակարդակի վրա: Մարդիկ կազմակերպել են իրենց կենսակերպը հենց ջրային ավազանի անմիջական հարևանությամբ, ինչի շնորհիվ հոգացել են իրենց կենցաղային կարիքները: Մինևույն ժամանակ, Մաստարա հեղեղատ գետի երկայնքով է անցել Շիրակի գոգավորությունից դեպի Արարատյան գոգավորություն մի շարք կաթնասունների (տվյալ դեպ-



Նկ.30. Նոր Գեղի-1 բացօթյա կայանի ընդհանուր տեսքն արևմուտքից




Նկ.31. Նոր Գեղի-1 բացօթյա կայանի շերտագրական կտրվածքը

քում՝ վայրի ձիերի) սեզոնային միգրացիոն երթուղին, ինչը վաղագույն մարդկանց համար որսորդական ռազմավարությունների իրագործման կարևորագույն պայմաններից է եղել:

Գետային հոսքի աշխատանքի (տվյալ դեպքում՝ Մաստարա հեղեղատի)՝ հարյուր հազարավոր տարիներ տևած իրողությունը էական դեր է խաղացել նաև աշխատանքային գործիքներ պատրաստելու համար անհրաժեշտ հումքի հայթայթման պարագայում: Այսպես, երբ դիտարկում ենք «Դալա-

րիկ-1»-ի արտադրահամալիրի ստեղծման հումքային առանձնահատկությունները, տեսնում ենք հետևյալ պատկերը: Քարայրի աշելյան բնակիչներն օգտվել են տեղում կամ մոտակայքում առկա բազալտի և դացիտի ելքերից: Այս հումքից պատրաստվել են խոշոր չափեր ունեցող հատիչները և դանակները, որոնք օգտագործվել են որսված կենդանիների մարմինները մասնատելու համար (նկ. 28): Այս իրերի հետ մեկտեղ առկա են նաև ավելի փոքր չափեր ունեցող հատիչներ, հատիչ-դանակ-



Նկ.32. Նոր Գեղի-1 բացօթյա կայան: Վանակատե իրեր. a. հատիչ, b. բեկոտված հատիչ, c. Լևալուազայան միջուկ

ներ, քերթիչներ, որոնք ակնհայտորեն պատրաստված են գլաքարերի և նրանց ճեղքման արդյունքում ստացված ցլեպների հենքի վրա (Նկ. 29): Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում վանակատեի հումքի օգտագործման մանրամասները, քանի որ Դալարիկի իրերի մեծ մասը պատրաստված է Մաստաբա հեղեղատ գետի կողմից լվացվող և գետի հովտում տարածված՝ Փոքր Արտենիի աղբյուրի գետաքարերից. հումքի աղբյուր, որը չափազանց մոտ է քարայրին (գտնվում է նրանից 18 կմ հյուսիսարևելք): Այսուհանդերձ, բեկոտման թափոնի մեջ առկա են նաև ցլեպներ, որոնք ցույց են տալիս Գոթանասարի և Տեկորի (Կարս) աղբյուրների օգտագործման փաստը: Ընդհանուր առմամբ, կարող ենք նշել, որ «Դալարիկ-1»-ի աշելյան բնակչության համար գետաքարը կարևոր դեր է խաղացել՝ կիրառվելով որպես աշխատանքային գործիքներ պատրաստելու հումք (Gasparyan et al., 2023, 136-139):

Ամփոփելով «Դալարիկ-1» քարայրի աշելյան բնակիչների կենցաղվարման բնութագիրը՝ կարող

ենք նշել, որ ակնհայտ է ջրի կենցաղային օգտագործման իրողությունը, որը փոխկապակցված է եղել սննդի, ինչպես նաև աշխատանքային գործիքների քարե հումքի հայթայթման ռազմավարությունների հետ: Ինչպես կտեսնենք ստորև, կենսապահովման այս մոդելը կենսունակ է դարձել հին քարի դարի վաղագույն փուլերում և շարունակել է գործել հազարամյակներ:

Համանման մոդելի ենք հանդիպում նաև աշելյան ավանդույթի այլ հուշարձաններում, որոնց շարքում է նրա եզրափակիչ փուլերով հասակագրված (մեզանից 340–330 հազար տարի առաջ) և Հրազդան գետի միջին հոսանքում (աջ ափին) հիմնված «Նոր Գեղի-1» բացօթյա կայանը: որը փոխկապակցված է եղել սննդի, ինչպես նաև աշխատանքային գործիքների քարե հումքի հայթայթման ռազմավարությունների հետ: (Նկ. 30): Շերտագրական այս պատկերը, ինչպես նաև շերտերում առկա հրաբխային մոխիրը հնարավորություն են տվել՝ հասակագրելու կայանի բնակեցման փուլերը (Նկ. 31): Ընդ որում, մշակութային շերտագրության տեսանկյունից այստեղ առկա է երկու ուշ աշելյան շերտ, որոնցից վերինը (Units 1-2) ներկայացված է ձեռքի հատիչներով և հիերարխիկ (լևալուազայան) և ոչ լևալուազայան միջուկներից հանված նախապատրաստուկների հենքի վրա հարդարված գործիքներով, իսկ ստորինը (Units 3-4)՝ բացառապես երկկողմանի հարդարմամբ ձեռքի հատիչներով, որոնց վրա առկա են նաև բեկոտման՝ գործիքի թարմացման նշաններ: Ասվածից կարելի է եզրակացնել, որի դեմ «Նոր Գեղի-1»-ի՝ գործ ունենք անցումային հուշարձանի հետ, որն աշելյան ժամանակաշրջանից անցնում է միջին պալեոլիթ (Adler et al., 2012, 23-26, 32-35; Adler et al., 2014):

Վերին և ստորին աշելյան շերտերը միմյանցից բաժանված են այնուվիպ ծագում ունեցող գլաքարերի շերտով, ինչը խոսում է այն մասին, որ կայանը բնակեցվել է երկու ժամանակագրական հերթափոխով: Հրազդան գետի հնահունի անմիջական հարևանությամբ ապրող մարդկանց կայանն ինչ որ փուլում հեղեղվել է գետի ջրերով, ինչի հետևանքով նրանք լքել են տարածքը, ապա կրկին վերադարձել, երբ գետի հոսքը կրկին կարգավորվել է: Ընդհանուր առմամբ, Նոր Գեղիի հնագիտական նյութերի փաստագրման ընթացքում դրանց դիրքերի դիտարկումը ցույց է տալիս, որ դրանք միշտ չէ, որ ունեն հորիզոնական դասավորվածություն: Առկա են ուղղահայաց, ինչպես նաև կողքի թեքված իրեր, ինչը ցույց է տալիս նստվածքների մեջ դրանց որոշակի տեղաշարժ, որն էլ խոսում է նստվածքների խոնավ, ցեխային բնույթի մասին: Ասվածից կարելի է ենթադրել, որ ջրային ավազանների երկայնքով



նկ. 33. Ապարանի գոգավորության հյուսիս-արևելյան հատվածի համայնապատկերը



նկ. 34. Ապարանի գոգավորություն: Քուչակի բացօթյա հնավայրերը՝ Ապարանի ջրամբարի հյուսիս-արևմտյան ափին


րնակեցումը, բացի որոշակի առավելություններից, ունեցել է նաև թերություններ, քանի որ նշված հատվածները ժամանակ առ ժամանակ հեղեղվել են և անհարմարություններ ստեղծել կենցաղում:

Անդրադառնալով Նոր Գեղիի ուշ աշելյան արտադրահամալիրի ստեղծման հումքային ռազմավարությանը՝ կարող ենք նշել, որ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, կայանի հնարանակները չեն ունեցել որոշակի ելքեր՝ այցելելու և


վանակատ հայթայթելու համար (Frahm et al., 2020): Հավասարապես օգտագործվել են ինչպես այն ժամանակ հասանելի ելքերը, այնպես էլ՝ Հրազդան գետի կողմից լվացվող գետաքարերը (նկ. 32):

«Նոր Գեղի-1»-ին ժամանակակից մեկ այլ՝ «Դաշտադեն-3» բացօթյա կայանի (Տաշիրի սարահարթ) բնակիչներն արդեն օգտվել են դացիտե հումքից: Կայանը գտնվում է Տաշիր գետի վտակներից մեկի հովտում՝ նրա ձախ ափին վեր խոյացող ոչ

ԱՊԱՐԱՆԻ ԳՈՂԱԿՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԻՆ ՊԼԵՅՏԱՏՈՑՆԵՐԻ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՓՈՒԼԻ ԵՎ ՎԵՐԻՆ ՊԼԵՅՏԱՏՈՑՆԵՐԻ ՍԿԶԻԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԶԻՆ ԶԱՐԻ ԴԱՐԻ ՀՆԱԿԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ (Մ 1:100 000)



Նկ. 35. Ապարանի գոգավորության միջին-վերին պլեյստոցենի երկրաբանական քարտեզը և պալեոլիթյան հնավայրերի բաշխվածությունը




Նկ.36. Ուշ աշելյան վանակատե ձեռքի հատիչներ Ապարանի գոգավորության բացօթյա հնվայրերից

բարձր հրվանդաի վրա, և շրջակայքի նկատմամբ ունի գերիշխող դիրք: Հուշարձանի տարածքը ձևավորում են Ջավախքի լեռնաշղթան կազմող լեռների չորրորդական հրաբխականության արդյունքում առաջացած դացիտային, պիրոկլաստիկ, անդեզիտա-բազալտային և բազալտային հոսքերը, որոնք փոխհարաբերվում են Լոռու գոգավորության սառցադաշտային խոշոր հովիտների ֆլյուվիոգլացիալ-պրոլուվիալ գոյացությունների հետ: Ուշ աշելյան բնակիչների աշխատանքային գործիքների պատրաստման համար այստեղ որպես հումք են ծառայել դացիտի՝ խոշոր չափերի սալիկներն ու գլաքարերը, որոնք նույնպես գետի հոսքի կողմից մշակման արգասիք են ( Kolpakov, 2009, 3-9):

Ըստ մեր ձեռքի տակ եղած տվյալների՝ արդեն Հայաստանի տարածքի ուշ աշելյան բնակչությունն է, որ սկսել է բնակեցնել նաև վերևում նշված հնավանդի ափամերձ հատվածները, ինչը տեսնում ենք Կոտայքի (Հատիս) (Gill et al., 2021) և Ապարանի գոգավորությունների պարագայում (նկ.33, 34): Վեր-

ջինիս սահմաններում միջին պլեյստոցենի վաղ փուլում (մեզանից մոտ 800 հազար տարի առաջ) առաջացած լիճը նրա ուշ փուլերում և վերին պլեյստոցենի սկզբում, կապված Արագած լեռան ժայթքումների և Քասախ գետի հնահունի փոփոխությունների հետ, բաժանվել է մի քանի լճերի, որոնք մինչև այժմ կապված են եղել կասկադներով (նկ.35): Դրանց ափամերձ հատվածների հնագիտական ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են ուշ աշելյան՝ վանակատից և դացիտից պատրաստված ձեռքի հատիչներ, որոնց մի մասը հարդարված է գլաքարերի վրա (նկ.36): Չնայած նրան, որ այստեղի ուշ աշելյան կայաններն ամբողջությամբ լվացվել են, այնուամենայնիվ, նշված գտածոները խոսում են այն մասին, որ Ապարանի գոգավորության հնավանդի մերձափնյա և շրջակա տարածքները շահագործվել են՝ որպես կենսապահովման ռեսուրսներով հարուստ էկոխորշեր: Այս մասին ավելի մանրամասն կխոսենք ժամանակագրական հաջորդ փուլին վերաբերող հատվածում,



Նկ. 37. Ապարանի գոգավորություն: Վարդենիս-Քուչակի հնավճի համայնապատկերը հյուսիսից, որտեղից երևում է էրոզացման ենթարկված պատվարը

որը նվիրված է Հայաստանի միջին պալեոլիթյան բնակչության կողմից ջրային պաշարների շահագործմանը (Gasparyan et al., 2004; Colonge et al., 2013):

**Ջրի օգտագործման վկայությունները միջին հին քարի դարում կամ միջին պալեոլիթում**

Անցնելով ջրային պաշարների օգտագործման խնդրին միջին պալեոլիթում՝ նշենք, որ Հայաստանի բնակեցման այս փուլը ներկայացնող հնագիտական սկզբնաղբյուրների գերակշիռ մասն առնչվում է ջրային՝ գետային ցանցի և հնավճերի ավազանների հետ: Դրանց շարքում լավագույն օրինակը վերը նշված Ապարանի գոգավորության հնավճն է, որի ավերին փաստագրվել են մոտ վեց տասնյակից ավելի քարիդարյան կայաններ և հնավայրեր (Gasparyan et al., 2004; Colonge et al., 2013, 111-116):

Գոգավորության սահմաններում մարդկանց բնակեցման վաղագույն փուլերի ուսումնասիրության ծրագիրն ունեցել է երկու՝ միմյանցից անկախ բաղադրիչ: Դրանցից առաջինը կրել է զուտ երկրաբանական բնույթ, որի խնդիրն է եղել հետազոտել տարածքի չորրորդական երկրաբանությունը և վերակազմել չորրորդական հրաբխականության, սառցապատման փուլերի և երկրակեղևի տեկտոնիկ շարժումների միջև առկա հնարավոր կապն ու փոխհարաբերությունը: Քարտեզագրվել և ուսումնասիրվել են տարածքում բավական լայն տարածում ունեցող միջին-վերին պլեյստոցենի հասակի լճային նստվածքները, լճերի պատվարները և այլն: Նշված ուսումնասիրությունների արդյունքում վերակա-

ուցվել են Ապարանի հնավճի ուրվանկարը և զարգացման փուլերը՝ կապված Արագած լեռան հրաբխականության և կլիմայական-հնաշխարհագրական փոփոխությունների հետ: Զուգահեռաբար իրականացվել է ծրագրի հնագիտական նպատակը՝ հայտնաբերել և փաստագրել գոգավորության տարածքի քարիդարյան հուշարձանները:

Ծրագրի վերջին փուլում համադրվել են երկրաբանական և հնագիտական տվյալները՝ արտացոլվելով մեկ ընդհանրական քարտեզում: Արդյունքում ի հայտ է եկել մի պատկեր, որտեղ Ապարանի գոգավորության միջին պալեոլիթյան փուլն արտահայտող սկզբնաղբյուրները տարածվում են հնավճի գոյատևման՝ վերը նշված միջին փուլի ավամերձ հատվածների հետ, այսինքն տարածվում են դրանց երկայնքով: Ավելի մանրամասն դիտարկումները ցույց տվեցին, որ վերջիններիս մեծամասնությունը բաժին է ընկնում արևմտյան և հյուսիսային ափերին, ընդ որում, այն տեղամասերին, որոնք հանդիսանում են լճի մեջ լցվող կամ լիճը սնուցող գետերի գետաբերանները: Մույն իրողությունը պետք է բացատրել նաև այն տեսանկյունից, որ հնավճի արևելյան ափերը, որոնք ներկայացված են Ծաղկունյաց լեռների նստվածքային ապարներով, կայուն չեն, և այստեղ առկա հնավայրերն ու կայանները կարող են կամ էլ ամբողջությամբ լվացված ու տեղատարված լինել (նկ. 36):

Հակառակ այս իրավիճակի՝ բավական լավ են պահպանվել հնավճերի արևմտյան ափերը, որոնք ձևավորվել են հիմնականում Արագածի լավային հոսքերից: Ժայթքումների արդյունքում դեպի ար-



Նկ. 38. Ապարանի գոգավորություն: Ռյա Թագա-5 բացօթյա կայանի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից


և ելք տարածված լավաները փոխել են Քասախ գետի հունը՝ մոտեցնելով այն Ծաղկունյաց լեռներին, և տեղ-տեղ փակելով գետի հոսքը՝ ստեղծել են պատվարներ, ինչի արդյունքում էլ առաջացել են լճերը (Նկ. 36): Այս իրողությունը հետագայում նաև այդ լճերի «ինքնառչնազման» պատճառ է դարձել. դրանց ջրերի մեխանիկական էներգիայի աշխատանքի արդյունքում պատվարները քայքայվել են և բացել ջրի հոսքը: Ակնհայտ է, որ այդ ազդեցությունը պետք է ավելի զգալի լիներ ավելի փափուկ ապարներից կազմված պատվարների հատվածներում: Բացատրենք ասվածը Վարդենիս գյուղից դեպի հարավ տարածվող հնալճի գոգավորության օրինակով (Նկ. 39): Բերված նկարում երևում է հնալճի էրոզացված պատվարը, որի քայքայված մասը ձախից հարում է Ծաղկունյաց լեռներին: Կարելի է տեսնել նաև հնալճի աջակողմյան ափերը կազմող Արագածի միջին պլեյստոցենի լավային հոսքը և նրա վրա տարածվող «Վարդենիս-3» պալեոլիթյան բացօթյա հնավարի տեղադիրքը, այսինքն՝ հնալիճ-պալեոլիթյան հնավար փոխհարաբերությունը:

Ընդ որում, այս փոխհարաբերության վարկածը հնարավոր է եղել փորձարկման ենթարկել դաշտային հետազոտությունների հետագա փուլում, որի նպատակն էր ավելի մանրամասն ուսումնասիրել քարեդարյան հնավայրերն ու կայանները: Մերձափնյա հատվածներից որոշակի հեռավորության վրա գտնվող հատվածներում պալեոլիթյան դարաշրջանին պատկանող սկզբնաղբյուրներ չեն փաստագրվել: Ավելին, այն հատվածներում, որտեղ

դժվարություններ են եղել՝ որոշելու հնալճերի ափամերձ հատվածները ըստ նստվածքների և ռելիեֆի, դա իրականացվել է հուշարձանների դասավորության օգնությամբ:

Բերված տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Ապարանի գոգավորության՝ միջին պլեյստոցենի վերջի և վերին պլեյստոցենի բնակիչներն իրենց կենսակերպը կազմակերպել են այստեղ առկա հնալճերի ափամերձ հատվածների երկայնքով: Լճի մեջ թափվող գետերի հարևանությամբ հաստատվելը թույլ է տալիս ենթադրել որսի ռազմավարության մասին, քանի որ նշված հատվածները կաթնասունների և նրանց հետևող գիշատիչների ջուր խմելու տեղամասերն են, որտեղ կարելի էր կազմակերպել ամենաարդյունավետ որսը:

Ի վերջո, նշված լճերի ափամերձ հատվածները հարուստ էին աշխատանքային գործիքներ պատրաստելու համար հիմնական հումք հանդիսացած վանակատե գլաքարերով, քանի որ պալեոֆասսայնը լվանում էր Ծաղկունյաց լեռների վանակատի երևակումները՝ հասցնելով դրանք բնակելի տարածքներ: Այս հանգամանքը բավականին հեշտացնում էր հումքի հայթայթման գործընթացը, և գոգավորության հնաբնակները չէին կտրում մեծ տարածքներ՝ հումքին հասնելու համար, մանավանդ սառցապատման փուլերում, երբ աղբյուրներն առավել անհասանելի էին դառնում: Մինչդեռ, այս գլաքարերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք իրենց չափերով լրիվ բավարար էին երկկողմանի և միանակերտությամբ բեկուտման համար,




Նկ. 39. Աշելո-մուստերյան վանակատե և դացիոնե արտեֆակտներ Ապարանի գոգավորության բացօթյա հնավայրերից:

ինչպես նաև ունեին բարձր որակ, քանի որ բնական ճանապարհով ենթարկվել էին ճաքճքած հատվածների մաքրման և հեռացման:

Գործնականում, Ապարանի գոգավորության հնավճերի ափերի երկայնքով փաստագրված միջին պալեոլիթյան բացօթյա հնավայրերն ու կայանները կազմում են միմյանց հարևանությամբ տեղադրված՝ հնագույն մարդկանց կենսագործունեության մի ամբողջ շրջա կամ համակարգ, որն ապահովում էր կենցաղային ջուր, պայմանավորում որսի և աշխատանքային գործիքների պատրաստման համար անհրաժեշտ հումքի հայթայթման հնարավորություններ: Այս սկզբնաղբյուրների պլանիգրաֆիական և մորֆոլոգիական հետազոտություններից հաջողվեց պարզել նաև, որ դրանք, որպես կանոն,

գրադեցնում են ոչ բարձր բլուրների թամբարդան տեղամասերը, ինչը էական դեր կարող էր խաղալ քամուց և վայրի կենդանիներից պաշտպանվելու համար (Gasparyan et al., 2004) (նկ. 34, 40):

Վերը նշված հուշարձաններից հավաքված և պեղված հազարավոր նյութերը, ինչպես արդեն նշել ենք, վերաբերում են քարի մշակման ուշ աշելյան և մուստերյան ավանդույթներին, որոնք հաճախ հնարավոր չէ ժամանակագրորեն հստակ տարանջատել միմյանցից, և այդ տարանջատումն իրականացնելն, իհարկե, ապագայի խնդիր է: Այսուհանդերձ, դրանց նախնական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք միջին պալեոլիթի առնվազն մի քանի ենթափուլերում բնակչության որսորդական կենսակերպը ցույց տվող համալիր-



Նկ. 40. Միջին պալեոլիթյան վանակատե և դացիտե արտեֆակտներ Ապարանի գոգավորության բացօթյա հնավայրերից:

ների հետ, որտեղ ներկայացված է բեկտոման ամբողջ ցիկլը՝ հումքից մինչև պատրաստի գործիք և գործիքների վերանվազում (Colonge et al., 2013) (նկ. 37, 38):

Բարձր լեռնային (Իջևանի լեռնաշղթա), ոչ մեծ չափեր ունեցող լճի հարևանությամբ է փաստագրվել նաև «Հովք-1» միջին պալեոլիթյան քարայրային կայանը, որի շերտերը հասակագրվում են մեզանից առաջ մոտ 110 հազար (միջին պալեոլիթ), 60 հազար, 40-35 հազար (ուշ միջին պալեոլիթ) տարիների ժամանակագրական միջակայքերով: Քարանձավային արջերի հետ սեզոնային հերթափոխերով և բնակեցման չափազանց կարճատև փուլերով շա-

հագործված այս քարանձավային կայանի հարևանությամբ առկա ոչ մեծ չափեր ունեցող լճի հետքերը այսօր էլ տեսանելի են կարստային ձագարի տեսքով (Pinhasi et al., 2011; Bar-Oz et al., 2012):

Լճային այս գոյացության հետ փոխհարաբերության տվյալները չնչին են, բայց հետաքրքիր: Քարայրի պեղումներով բացված 4-րդ՝ մեզանից 40-35 հազար տարի առաջ ժամանակահատվածով հասակագրված շերտում փաստագրվել են սաղմնագիների պատկանող ձկների կողոսկրեր<sup>2</sup>: Ուսումնասիրության ներկայիս մակարդակում դժվար է ասել, թե ինչի արդյունքում են այս ոկրային մնացորդները հայտնվել քարայրում: Դրանք կա՛մ քա-

2 Տվյալները հրատարակված չեն: Նույնականացումը՝ հնակենդանաբան Դ. Վասիլյանի:

րայրի բնակիչների կողմից կատարված ձկնորսության արդյունք են, կա՛մ էլ քարայր են բերվել՝ որպես քարանձավային արջի սննդակարգի տարրեր: Այսուհանդերձ, սույն իրողությունը խոսում է լիճ-պալեոլիթի կայան փոխհարաբերության մասին:

Ամենայն հավանականությամբ՝ Արարատյան գոգավորության լճի մոտակայքում է գործել նաև «Բառոժ-12» ուշ միջին պալեոլիթյան (մեզանից մոտ 60-32 հազար տարի առաջ ժամանակագրական միջակայքով հասակագրվող) բացօթյա կայանը: Նախկինում իր զուգահեռը չունեցած այս հուշարձանը զբաղեցում է ավելի քան 6 հա տարածք, որտեղ պահպանված մոտ 1,2 մ հզորությամբ շերտերը պարունակում են միլիոնավոր վանակատե արտեֆակտներ: Հուշարձանի՝ երկու գետերի միջև պարփակված հարթ մակերեսով հրվանդանը նայում է դեպի Արարատյան գոգավորություն: Կայանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քարի մշակման մուստերյան ավանդույթներին հետևող որսորդ հավաքչարարները որոշակի ընդմիջումներով, սակայն բավականին երկար տևած ժամանակահատվածներում զբաղեցրել են նշված տարածքը և հարմարվել կլիմայի տատանումներից առաջացող չոր և խոնավ պայմանների հերթափոխին, որը պետք է կապված լիներ Արարատյան գոգավորության հնալճի մակարդակի տատանումների հետ: Մինևույն ժամանակ, կայանի շերտերի ձևավորման վրա որոշակի ազդեցություն են թողել հարևանությամբ հոսող գետերի հոսքի փոփոխությունները (այլուվիալ գործընթացները), որոնցից վերջինը կապված է վերջին սառցապատման մաքսիմումի ավարտի հետ, որը լվացել ու մասնակի տեղատարման է ենթարկել բնակեցման վերին շերտը (Glauberman et al., 2020a; Glauberman et al., 2020b):

«Բառոժ-12»-ի բնակիչները կիրառել են աշխատանքային գործիքների հուսքի՝ վանակատի հայթայթման մինևույն ռազմավարությունը, ինչ տեսնում ենք նախորդիվ նկարագրված հուշարձաններում: Այստեղ հիմնականում օգտագործվել է գետերի կողմից լվացվող և հուշարձանի տարածք հասնող գլաքարային հումքը, չնայած որ Արտին լեռան վանակատի ելքերը գտնվում են կայանից ոչ ավելի, քան 300 մ հեռավորության վրա (Երկարով բլուր): Այս հանգամանքը խոսում է մուստերյան արտադրահամալիրի ստեղծման համար գլաքարերի՝ տեխնիկապես հարմարավետ լինելու մասին: Վանակատի հայթայթման վայրերի մոտ ևս փաստագրված են կայանի բնակչության գործունեության հետքերը, երբ անհրաժեշտ է եղել արտադրել խոշոր չափերի հասնող նախապատրաստուկներ: Ուշագրավ է նաև այն փաստը, որ «Բառոժ-12»-ի տարածքում ունենք

հեռավոր աղբյուրներից եկող մեծաքանակ իրեր, որոնք այստեղ են հասել պատրաստի՝ ավարտուն հարդարում ունեցող սրածայրերի տեսքով: Դրանցից ամենահեռավորը ներկայիս արևելյան Թուրքիայում գտնվող Մեյդանդաղի աղբյուրն է, որը կայանից գտնվում է 160 կմ ուղղագիծ հեռավորության վրա (Gasparyan & Glauberman 2022, 283-289):

Հայաստանի միջին պալեոլիթյան հասարկությունների՝ բնակեցման ընթացքում գետերի հետ ունեցած փոխհարաբերության բազմաթիվ տվյալներ կան նաև այլ՝ քարայրային և բացօթյա կայանների ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված տվյալների շարքում: Այսպես, Հրազդան գետի կիրճում (նրա ստորին և միջին հոսանքներում) գտնվող «Երևան-1» և «Լուսակերտ-1» քարայրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք շահագործող համայնքներն ապրել են անմիջապես գետի ափին՝ գետապտույտի տեղամասերում: Առավել հետաքրքիր տվյալներ ենք տեսնում «Բառոժ-12»-ին ժամանակակից (ուշ միջին պալեոլիթ) «Լուսակերտ-1» քարայրի ստորին շերտախմբի ձևավորման լիթոստրատիգրաֆիական առանձնահատկություններում<sup>3</sup>: Ինչպես ցույց են տալիս միկրոմորֆոլոգիական և նստվածքաբանական ուսումնասիրությունները, քարայրի բնակեցման սկզբնական փուլում (D2-D1 և C2 շերտեր) պալեոհրազդանը ժամանակ առ ժամանակ հեղեղել է քարայրը, և մարդկանց բնակեցումն այստեղ կրել է սեզոնային բնույթ (ամռանը կամ աշնանը), ինչը կապված էր նաև կլիմայական տատանումների հետ: Քարայրի բնակեցման 30 հազար տարիների ընթացքում կլիմայական պայմանները երեք անգամ փոխվել են՝ ցուրտ-տաք ցուրտ: Տարվա տաք ամիսներին էր, որ որսի համար պիտանի կենդանիները (ծիակերպեր, վայրի այծ/ոչխար) ջուր էին խմում Հրազդան գետից և արածում գետի հովտում: Դատելով հնաբուսաբանական և հնակենդանաբանական ուսումնասիրություններից՝ քարայրի հնաբնակ որսորդ-հավաքչարարները պետք է որ շահագործեին տեղի բուսական և կենդանական ռեսուրսները, մինևույն ժամանակ հեշտությամբ վանակատե հումք հայթայթեին տեղում առկա հանավայրերից և գետափնյա տեղամասերից (Frahm et al., 2020; Gasparyan & Glauberman 2022, 283-289):

Մերձափնյա այլուվիալ նստվածքների հետ են կապվում նաև «Բառոժ-12»-ին և «Լուսակերտ-1»-ին ժամանակակից «Կալավան-2» և «Ալափարս-1» (բնակեցման վերջին փուլը) բացօթյա կայաններում մարդկանց կենսագործունեության հանգամանքները: Միմյանցից տարբերվող լանդշաֆտներում գտնվող, սակայն մինևույն գեոմորֆոլոգիական

3 Տվյալները գտնվում են հրատարակության փուլում:

առանձնահատկություններն ունեցող այս սկզբնաղբյուրների առկայությունը կապված էր երկրակեղևում տեղի ունեցող տեկտոնական բարձրացումների հետ: Դրանք գետերի կողմից ապարների կտրման և նստվածքների տեղատարման գործընթացների ինտենսիվացման էին հանգեցնում, որն էլ իր հերթին ազդեցություն էր ունենում բնակեցման ռեժիմի վրա (Sherriff et al., 2019; Malinsky-Buller et al., 2020; Malinsky-Buller et al., 2021; Gasparyan & Glauberman 2022):

Հրաբխականության, տեկտոնիկ շարժումների և միջին պալեոլիթում մարդկանց բնակեցման վրա դրանց ունեցած ազդեցության դասական օրինակներ են նաև Դեբեդ գետի հովտում փաստագրված «Բագրատաշեն-1» բացօթյա կայանի հետազոտության արդյունքում ստացված շերտագրական տվյալները: Մեզանից առաջ մոտ 34 հազար տարով հասկազրված այս հուշարձանի պեղումները ցույց են տալիս, որ այստեղ ապրող մարդկանց խումբը բնակեցրել է Դեբեդ գետի ափամերձ հատվածը (հին դարավանդը), որտեղից էլ հայթայթել էդացիտի գլաքարերը՝ աշխատանքային գործիքներ պատրաստելու համար: Ընդ որում, կայանի ուշ միջին պալեոլիթյան շերտերում առկա է տարատեսակ գլաքարերի մեծ քանակ, որոնք օգտագործվել են որպես գնդաններ, ջարդիչներ, շփածիչներ և այլն (Egeland et al., 2016):

Հուշարձանը պեղվել է երկու առանձին փոսորակներով (Trench 1 և Trench 2), որոնց կտրվածքներում երևում են նրա ձևավորման փուլերը: Դրանք կապված են այլովիալ նստվածքների և դրանց միջակայքերում առկա հողառաջացման գործընթացների (պալեոհողերի) հետ: Երկրորդ փոսորակի շերտագրական կտրվածքում բացվել են երկու մուստերյան հորիզոններ, որոնք միևնույնից բաժանված են հրաբխային մոխրի և ջրի կողմից լվացված շերտով: Ընդ որում, ստորին շերտում հայտնաբերված առարկաները վատ են պահպանվել և ունեն տեղատարման բարձր աստիճան՝ ի տարբերություն վերինի, որտեղ դրանք ունեն հորիզոնական դասավորվածություն և պահպանվածության գերազանց աստիճան: Ասվածը ունի հետևյալ մեկնաբանությունը: Ստորին՝ երկրորդ շերտի (դեռևս չի հասակագրված) գոյության ընթացքում տեղի է ունեցել հրաբխային ժայթքում (ամենայն հավանականությամբ՝ Ջավախքի լեռնաշղթայում), որն ազդել է Դեբեդ գետի հոսքի վրա, ինչի արդյունքում տեղի է ունեցել գետի վարարում կամ մակարդակի բարձրացում: Արդյունքում կայանի տարածքը հեղեղվել է, և մարդիկ լքել են այն՝ վերդառնալով և վերաբնակվելով այնտեղ, երբ կրկին կարգավորվել են գետի մակարդակը և հոսքը: Նշենք նաև, որ բնակեցման այս եր-

կու փուլերի միջև ժամանակային մեծ ընդմիջում առկա չէ (Egeland et al., 2016, 13-17):

Այսքանով կարելի է սահմանափակել միջին պալեոլիթում Հայաստանի տարածքի բնակչության կողմից ջրային պաշարների օգտագործմանը վերաբերող տվյալների ներկայացումը:

**Ջրի օգտագործման վկայությունները վերին հին քարի դարում կամ վերին պալեոլիթում**

Վերին պալեոլիթում Հայաստանի տարածքի բնակչությունը շարունակել է ջրային ռեսուրսների և կենսատարածքի կազմակերպման՝ նախորդ փուլերի ավանդույթները: Անատոմիապես ժամանակակից մարդկանց համար կարևոր նշանակություն են ունեցել սառցադաշտերի պարբերական հալման ընթացքում ձևավորված ժամանակավոր ջրային ավազանները՝ լճակներն ու ճահճուտները, գետերի հովիտները, որոնք հարուստ կենսաբազմազանությամբ են ապահովել տեղի բնակիչներին: Նշված գործընթացների քննարկման համար ունենք երկու սկզբնաղբյուր՝ «Աղիտու-3» քարայրը և «Կալավան-1» բացօթյա կայանը: Ստորին և միջին պալեոլիթի փուլերի համեմատ այս փուլում հնագիտական սկզբնաղբյուրների քանակի սահմանափակ լինելը բացատրվում է նրանով, որ Հայաստանի՝ վերին պալեոլիթի հուշարձանների բացահայտումը և ուսումնասիրությունը միայն վերջերս են մեկնարկել, սակայն եղած տվյալները բավարար են՝ կատարելու արժեքվոր դիտարկումներ (Gasparyan et al., 2014, 107-110):

«Աղիտու-3» քարայրը գտնվում է Որոտան գետի կիրճում՝ համանուն գյուղի հարավային վերջավորության վրա: 11x16x8 մ չափեր ունեցող քարայրն առաջացել է վերին պլեյստոցենի բազալտային հոսքի մեջ: Հուշարձանի պեղումների արդյունքում հաջողվել է բացել մոտ 5,5 մ հզորությամբ նստվածքները (Gasparyan et al., 2014b, 110-113, 119-125; Kandel et al., 2017, 38-40) (նկ. 41, 42):

Շերտագրական ամբողջ սանդղակը բաժանվել է թվով 12 երկրաբանական հորիզոնների (GH-1-12), որոնցից յոթը հնագիտական են (AH-I-VII): Հնագիտական յոթ հորիզոնները ներկայացնում են քարայրի բնակեցման փուլերի հերթափոխը: Այս շերտերից վերցված օրգանական մնացորդների (ածուխ և ոսկոր) ռադիոածխածնային 33 վերլուծությունների արդյունքում երևան է գալիս հետևյալ ժամանակագրական պատկերը. AHVII-ը (GH 11) հասակագրվում է մեզանից առաջ 39-36 հազար տարի ժամանակագրական միջակայքով, AHVI-ը (GH 10)՝ մեզանից առաջ 36-32 հազար տարի: AHV-ը և IV-ը բաժին են ընկնում մեզանից 32-29 հազար տարի առաջ ժամանակահատվածին, և վերջապես



Նկ. 41. Որոտան գետի պալեոհովիտը, որի ձախակողմյան բազալտային հոսքերի մեջ առաջացել են Աղիտու-1-4 քարայրները



Նկ. 42. Աղիտու-3 քարայրի ընդհանուր տեսքը 2016 թ. պեղման աշխատանքներից հետո (օդային լուսանկար)

AHIII-ը (բաժանվում է 4 ենթահորիզոնների II-Ia-IIIId) հասակագրվում է մեզանից առաջ 29-24 հազար տարիների ժամանակագրական միջակայքով: AHII-ը և I-ն արդեն վերաբերում են հոլոցենին և պարունակում են մեզոլիթի, Վանի թագավորության, դասական դարաշրջանների և զարգացած միջնադարյան նյութական մշակույթի մնացորդներ: AH-VII-AH-III-ը պարունակում են վերին պալեոլիթյան մշակութային մնացորդներ, որոնք ներկայացված են վանակատե, կայծքարե արտադրահամալիրներով, կենդանիների ոսկրային մնացորդներով, օջախների հետքերով և մոխրաբծերով հագեցած

տեղամասերով, որոնք ցույց են տալիս քարայրի օգտագործումը գրեթե 15 հազար տարվա ընթացքում՝ մեզանից 39-24 հազար տարի առաջ ժամանակագրական միջակայքում: Հնագիտական առումով դրանք բաժին են ընկնում Հայաստանի հնագիտական սանդղակի վաղ և միջին վերին պալեոլիթների ենթափուլերին (Kandel et al., 2017):

Քարայրի շրջակա տարածքն իրենից ներկայացնում է Որոտան գետի պալեոհովիտը, որի սահմաններում առկա է եղել սառցադաշտերի հալման արդյունքում պարբերաբար առաջացող ճահճալճային մի ավազան, որի ափին իրենց սեզոնային



նկ. 43. Ոսկրե բզեղ կամ հերուններ (1-2) և հիմքում աչք ունեցող ասեղ (3) Ադիտու-3 քարայրի IIIc-IIId հնագիտական հորիզոններից (մեզանից առաջ 29-27 հազար տարի)



նկ. 44. Ծովախեցիներից պատրաստված ուլունքներ Ադիտու-3 քարայրի IIIa-IIIc հնագիտական հորիզոններից (մեզանից առաջ 29-24 հազար տարի)

կենցաղն են կազմակերպել «Ադիտու-3»-ի հնագույն բնակիչները տարվա ամենատաք ամիսներին: Մրամապին են խոսում հնակենդանաբանական և հնաբուսաբանական նյութերի, ինչպես նաև քարե արտադրահամալիրների ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները: Այսպես, քարայրի բնակեցման բոլոր փուլերի բնակիչների որսի հիմնական կենդանիները եղել են վայրի այծը կամ ոչխարը, ձիակերպերը, և դրանց տեսակային կազմը չի փոխվել: Փոփոխվել է միայն վերջիններիս տոկոսային հարաբերությունը՝ չնայած նրան, որ կլիման զարգացել է տաքից դեպի ցուրտ: Ավելին՝ քարայրի ամենաինտենսիվ բնակեցումը փաստագրվել է հենց ամենացուրտ կլիմայի պայմաններում (AHIII) և, ինչպես երևում է միկրոկաթնասունների տեսակային կազմից, այն ավելի ցուրտ է եղել, քան ներկայումս: Դատելով քարայրի շերտերից հայտնաբերված թռչնատեսակների մնացորդներից՝ անհրաժեշտ է նշել, որ դրանց ներկայությունը ևս վկայում է հուշարձանի շրջակայքում քաղցրահամ ջրավազանի առկայության մասին՝ ռիպարյան բուսականության առկայությամբ: Իշխանի և այլ ձկնատեսակների մնացորդները խոսում են ձկնորսության տարածվածության մասին (Kandel et al., 2017, 49-54; Bertacchi et al., 2021):

Դատելով հումքի հեռավոր աղբյուրներից այստեղ բերված վանակատե և կայծքարե առարկաների առկայությունից՝ մարդկային կենսակերպը սկսել է դառնալ ավելի շարժուն՝ մոտ 250 կմ շառավղով ինչը ցույց է տալիս նաև քարայրի հնաբնակների կապերի ակտիվացումը հյուսիս-արևմուտք, հարավ-արևմուտք և արևելք (Կասպից ծովի ավազան) ուղղություններով:

Շեռաքրքիր տվյալներ են տալիս քարայրի շերտերի հնաբուսաբանական ուսումնասիրությունները (մակրոմնացորդներ, փոշեհատիկ և հողային ԴՆԹ), որոնց արդյունքում հնարավոր է եղել որոշել քարայրի հնաբնակների կողմից օգտագործված մոտ 43 բուսատեսակներ, որոնք կիրառվել են սննդի մեջ՝ որպես համեմունք, ինչպես նաև բժշկական և կենցաղային-տեխնիկական, օրինակ՝ գործվածքների արտադրության նպատակներով: Դրանց շարքում են եղեգի և ջրային այլ բուսատեսակների մնացորդները, որոնք նույնպես վկայում են քարայրի շրջակայքում լճային միջավայրի առկայության և դրա օգտագործման մասին (Ter Schure et al., 2022):

Կրկին վերադառնալով քարանձավի պեղումների արդյունքում հայտնաբերված քարե արտադրահամալիրին՝ նշենք, որ այն պատրաստելու համար օգտագործվել են նախ հումքի տեղական աղբ-



նկ. 45. Գեղիկ գետի (Աղստնի ավազան) ձախակողմյան վտակ Բարեպատի հովիտը, որտեղ փաստագրվել է Կալավան-1 բացօթյա կայանը

յուրները (92-99%՝ ըստ տարբեր շերտերի): Հեռավոր աղբյուրներից այստեղ հասած հումքի տոկոսային հարաբերությունը AH VII-ից AH III աճում է 1-ից 8%-ի: Վանակատի հեռավոր աղբյուրները գտնվում են ուղիղ գծով 110-180 կմ հեռավորության վրա, և դրանցից ամենահեռավորը Մեյդանդաղն է: Տեղական աղբյուրները Սյունիքի խմբի վանակատի ելքերն են: Վանակատ հայթայթվել է ինչպես Ռոտտանից մանր գլաքարեր հավաքելով, այնպես էլ հենց հանավայրեր ուղիղ այցելության ճանապարհով: Հետաքրքիրն այն է, որ հումքի հայթայթման համար անմիջապես սկզբնաղբյուրներ այցելելու երևույթն ավելի ինտենսիվ է դառնում վերին՝ AH III հորիզոնում (Kandel et al., 2017, 47-49; Frahm et al., 2019):


Ի վերջո, «Աղիտու-3»-ի քարի արտադրահամալիրը տեխնիկա-մորֆոլոգիական տեսանկյունից դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ այն փոքր չափերի՝ պրիզմատիկ և կոդային հանույթներով միահրապարակ և բազմահրապարակ միջուկներից հանված նուրբ շերտերի և միկրոշերտերի արտադրություն է, որոնց հենքի վրա էլ հարդարվել են աշխատանքային գործիքները և որսորդական զենքերը: Աշխատանքային գործիքները ներկայացված են տարատեսակ ծայրային քերիչներով, դանակներով, կտրիչներով ու ծակիչներով, որոնք օգտագործվել են ոսկրի, կաշվի, փայտի մշակման համար, իսկ որսորդական զենքերը ներկայացված են

բթացված կողերով սրածայրերով և ասեղնաձև նետապաքներով: Վերջիններս կիրառվել են մանր կաթնասունների և թռչունների որսի համար և լիովին համապատասխանում են մշակութային շերտերից հայտնաբերված կենդանական մնացորդներին (Kandel et al., 2017, 48-50): «Աղիտու-3» քարայրի վերին պալեոլիթյան շերտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս ջրային ավազանների շրջակայքում ձևավորված այն բազմազան ու հարուստ կենսամիջավայրը, որը ժամանակակից մարդկանց համար անատոմիապես ապահովում էր վերին պլեյստոցենի լանդշաֆտը, անգամ բավականին ցուրտ կլիմայական պայմաններում:

Բացի նշվածից՝ որոշակի տվյալներ կան նաև անատոմիական կառուցվածքով ժամանակակից մարդկանց՝ աղբյուրների հարևանությամբ իրենց կենցաղը կազմակերպելու վերաբերյալ: Այդպիսի տվյալներ փաստագրվել են «Կալավան-1» (Բարեպատ գետի հովիտ) ու «Ճատկերան-1»<sup>4</sup> (Հրազդան գետի ավազան) վերին պալեոլիթյան բացօթյա կայանների ուսումնասիրության արդյունքում:

Վերին պլեյստոցենի ավարտական փուլերին վերաբերող և Հայաստանի վերին պալեոլիթի եզրափակիչ փուլը ներկայացնող միակ հնագիտական սկզբնաղբյուրն է «Կալավան-1» բացօթյա կայանը, որը պատկանում է մեզանից առաջ 18-16-րդ հազարամյակների ժամանակագրական միջակայքին: Կայանը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի նույ-

4 Այս հուշարձանը գործնականում ոչնչացված է, տարածքի մեծ մասը՝ կառուցապատված: Տարածքում առկա աղբյուրների գոյությունը փաստագրել ենք հուշարձանի տեղը և տուրգորաֆիակական առանձնահատկությունները ճշգրտելու նպատակով վերջերս այստեղ կատարած դաշտային այցելության ժամանակ:



Նկ. 46. Կալավան-1 բացօթյա կայանի տոպոհանույթը, որտեղ երևում է հուշարձանի և Բարեպատ գետի փոխհարաբերությունը

նանուն գյուղի վարչական սահմաններում՝ գյուղից մոտ 1,5 կմ հարավ, 1640 մ բարձրության վրա, Աղստևի վտակ Գետիկ գետի վտակներից մեկի՝ Բարեպատ գետի հովտում (նկ. 45):

Հուշարձանի տարածքը լանդշաֆտային միավոր է, որն ընկած է Բարեպատ գետի հովտի և նրանից վեր բացվող ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա տարածվող ալպյան մարգագետինների միջև: Այս դիրքը ռազմավարական կարևորություն է ունեցել սեզոնային որսի կազմակերպման համար: Դրա շնորհիվ հովիտը վայրի կաթնասունների համար միգրացիոն միջանք է եղել. դրանք բարձարցել և իջել են այստեղով: Կալավան-1-ը տարածվում է Բարեպատ գետի հին (ներքևից հաշված երկրորդ)՝ աջակողմյան ալյուվիալ դարավանդի մակերևույթին (նկ. 46):


Գեոմորֆոլոգիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առկա է հուշարձանի նստվածքների ձևավորման դինամիկայի երկու փուլ՝ հիմքում ալյուվիալ, վերևի մասում կոյուվիալ (լանջային): Վերին պալեոլիթյան ուշ փուլի բնակեցումը վերաբերում է 7-րդ (7d1 և 7d3) շերտի ձևավորման ժամանակին: Այս շերտը սկսել է կազմավորվել կոյուվիալ նստվածքագոյացման փուլի ամենասկզբում, ինչի

հետևանքով հնագիտական մնացորդները սկսել են արագ ծածկվել և բավականին լավ են պահպանվել: Նշված շերտերի տաֆնոմիկ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց խաթարման գործոններ են հանդիսացել բիոտրոֆացիան, սառցակալման արդյունքում առաջացած ճնշումները և մասնակի տեղատարումը, սակայն դրանք մեծ ազդեցություն չեն ունեցել հնագիտական մնացորդների՝ տեղում մնալու և պահպանվածության վրա (Chataigner et al., 2012, 52-54; Montoya et al., 2013; Gasparian et al., 2014b, 113, 114, 126-131):

«Կալավան-1»-ը կարելի է դիտարկել որպես բարձր լեռնային կայան, որտեղ իրականացվել է մանր եղջերավոր անասունների որս: Հնակենդանաբանական ուսումնասիրություններն իրենց հերթին ցույց են տալիս, որ կայանի բնակիչների համար որսի թիրախ են եղել վայրի այծակերպերը (Caucasian caprinae = Ovis sp./Capra sp. = Ovis orientalis gmelini?): Ընդ որում, որսի կազմակերպման ռազմավարությունը ներառել է միայն հասուն տարիքի (1-6 տարեկան) առանձնյակներին, ինչն ինքնին ուշագրավ հանգամանք է: Որսված կենդանիների անատոմիական մասերի գրեթե ամբողջական լինելը ևս խոսում է Կալավան-1-ի՝ որսի կայան հանդիսանալու օգտին: Երի-



Նկ. 47. Կալավան-1 բացօթյա կայանի՝ պեղումներով բացված տեղամասի կենտրոնական հատվածը



Նկ. 48. Կալավան-1 բացօթյա կայանի՝ պեղումներով բացված տեղամասի հատակագիծը և առանձին քառակուսիներում փաստագրված իրավիճակները

տասարդ առանձնյակներին կամ ձագերին չորսալու երևույթը կարելի է բացատրել երկու պատճառով: Նախ, ձագերը չեն ապահովում այնքան միս և ուտելի հատվածներ, որքան հասուն առանձնյակները: Եվ երկրորդ, սույն փաստը կարելի է բացատրել հայեցակետային տեսանկյունից, քանի որ ձևավորվել էր

այն ընկալումը, որ ձագերը հաջորդ տարվա համար նախատեսվող որսի օբյեկտներ են, և դրանց ոչնչացումը կարող էր խաթարել կենդանիների վերարտադրությունը: Կարելի է ասել՝ «Կալավան-1»-ի բնակիչների համար որսը վարքից վերածվել էր մշակույթի (Torner et al., 2016) (նկ. 47):



Նկ. 49. Կալավան-1 բացօթյա կայան: Վանակատե մանր շերտեր արտադրելու պրիզմատիկ միջուկներ

Ավելին, ինչպես ցույց է տալիս ուսումնասիրությունը, «Կալավան-1»-ն արդեն որոշակի գործառնական հատվածներից բաղկացած պլանավորում ունեցող կայան է կամ նախաբնակատեղի: Այստեղ կարելի է առանձնացնել աշխատանքային գործիքներ և որսորդական զենքեր պատրաստելու, գործիքների պատրաստումից և օգտագործումից հետո թափոնը կուտակելու, կենդանիների մարմինները մասնատելու և սնունդ պատրաստելու տեղամասեր: Վերջիններիս շարքում առանձնանում է G28 քառակուսում փաստագրված օջախը, որտեղ առկա են քարե առարկաներ, այդ թվում՝ միջուկներ և բթեցված կողով սրածայրեր: GF 23-24 քառակու-

սիներում, որոնց տարածքն, ամենայն հավանականությամբ, ծառայել է որպես աղբավայր, առկա են 1200 կենդանական մնացորդներ, այդ թվում՝ այծակերպերի 20 ստորին ծնոտներ (Montoya et al., 2013, 636-638) (նկ. 48):

Քարե առարկաների հումքի վերլուծության համաձայն՝ այստեղ օգտագործվել է ինչպես բերովի վանակատը (տեղում վանակատի աղբյուրները բացակայում են), այնպես էլ տեղական՝ կվարցացված կրաքարի, կայծքարի, պորֆիրիտների հումքը՝ 60/40% փոխհարաբերությամբ: Վանակատի աղբյուրների նույնականացման համար LA-ICP-MS մեթոդով իրականացված վերլուծությունը ցույց է տա-




Նկ. 50. Կալավան-1 բացօթյա կայան: Կվարցացված կայծքարից, կայծքարից և վանակատից պատրաստված բթեցված կողերով սրածայրեր և ասեղնաձև նետապարներ

լիս, որ «Կալավան-1»-ի բնակիչներն օգտագործել են Սևանա լճից արևմուտք և հարավ գտնվող ելքերը (Գեղասար, Գուֆանսար, Հատիս և Սյունիքի բարձրավանդակ), որոնք Կալավանից մոտ 3-ից 4 օր քայլելու հեռավորության վրա են (Chataigner et al., 2012, 54, 61; Montoya et al., 2013, 626-628):

Ամենայն հավանականությամբ, «Կալավան-1»-ում հայտնաբերված երկարավուն ուրվագծերով շեղբերը բեկոտվել են հենց հումքի աղբյուրների մոտ և բերվել կայանի տարածք պատրաստի վիճակում, քանի որ այստեղ բացակայում է նման բեկոտման արտադրական շղթան (chaîne opératoire): Այդ շեղբերի կտրող կողերի որակը և նրանց կոպտությո-

յունը կամ երկրորդային հարդարման բացակայությունը խոսում են վերջիններիս՝ կենդանիների մորթի դանակներ լինելու օգտին:

Հակառակ դրան, մանր շեղբերի և միկրոշեղբերի արտադրական շրջափուլն այստեղ ամբողջական է. տարատեսակ կոնաձև, գլանաձև, սեղանաձև՝ միահրապարակ և երկհրապարակ միջուկներից պրիզմատիկ տեխնիկայի հնարով հանվել են նման նախապատրաստուկներ, որոնք վերածվել են որսորդական գույքի՝ բթեցված կողով, ինչպես նաև ասիմետրիկ սրածայրերի, ասեղնաձև նետապարների և միկրոկտրիչների (նկ. 50, 51): Որսորդական այս գույքի տեխնիկա-տիպաբանական հատկանիշ-



Նկ. 51. ալավան-1 բացօթյա կայան: G27-F27 քառակուսիներում բացված աղբյուրը շերտագրական ընդլայնական կտրվածքի վրա

ները՝ հատկապես բթեցված սրածայրերը, կայուն աղերսներ ունեն, այսպես կոչված, «միկրոգրավետյան սրածայրերի» հետ, որոնք լայն տարածում են ստացել Եվրոպայում վերջին սառցային մաքսիմումի ընթացքում՝ ձևավորելով Էպիգրավետյան ավանդույթը (Montoya et al., 2013, 628-638):

Չոր, ցուրտ կլիմայի պայմաններում կազմավորված կայանի շրջակայքն ունեցել է տափաստանային բուսականությամբ լանդշաֆտներ, որոնք շրջապատված են եղել գետերի հովիտների երկայնքով տարածվող անտառներով: «Կալավան-1»-ը Փոքր Կովկասում փաստագրված առաջին հուշարձանն է, որը վկայում է որսորդ-հավաքչարարների կողմից վերջին սառցային մաքսիմումի (LGM) ընթացքում բարձր լեռնային լանդշաֆտների վերայուրացման մասին:

Ընդհանրացնելով նկատենք, որ վերին պալեոլիթի ավարտն ազդարարող այս կայանի բնակիչների կյանքում Բարեպատ գետն ունեցել է առանցքային նշանակություն, քանի որ ապահովել է որսի համար պիտանի կենդանիների սեզոնային միգրացիոն երթուղին: Ուշագրավ է նաև այն փաստը, որ կայանի պեղումների ընթացքում F27 քառակուսու հիմքում հայտնաբերվել է տեղում բխող աղբյուրի հետագիծ (պալեոկանալ), որի հարևանությամբ առկա են տեղատարված քարե արտեֆակտներ (Նկ. 49): Սույն փաստը թույլ է տալիս ենթադրել, որ կայանի բնակիչներն իրենց որսը ճաշակել են անմիջապես ջրի մոտ, ավանդույթ, որը պահպանվել է հասել է մինչև մեր օրերը:

**Քննարկում**

Սույն հոդվածում, մինչ սկզբնաղբյուրների ներկայացումը, կատարվել են անցած երկրաբանական դարաշրջանում (չորրորդական կամ պլեյստո-

ցեն) այսօրվա Հայաստանի տարածքում գոյություն ունեցած ջրային ավազանների (հնալճեր, գետային ցանց) ձևավորման ու զարգացման օրինաչափությունները, գոյատևման ժամանակագրական միջակայքերը պարզելուն և դրանց հասակագրմանն ուղղված վերլուծություններ: Շրջակա լանդշաֆտների կենսամիջավայրի և կլիմայական փոփոխությունների վերաբերյալ որոշ օրինակներ են բերված հնալճերի ռեժիմների փոփոխության և լճային նստվածքների քարտեզագրման, շերտագրական առանձնահատկությունների ուսումնասիրության, ինչպես նաև կենսաշերտագրական տվյալների հիման վրա: Ներկայացված է նաև ալյուվիալ (գետային) նստվածքների ուսումնասիրության խնդիրի կարևորությունը, քանի որ վերջիններս, որպես կանոն, կապված են հնալճերի կենսառեժիմների հետ և հանդիսանում են վերջիններիս վերանալու կամ վերականգնվելու իրողությունը փաստող չափորոշիչներ: Դրանց ուսումնասիրությունը և հասակագրումը ոչ պակաս կարևոր է հնագույն մարդկանց կենսակերպը և մշակույթը վերակազմելու համար:

Հաջորդիվ ներկայացված են ուսումնասիրության հիմքում դրված նյութերն ու մեթոդները: Որոշակի փորձ է կատարված՝ բացատրելու, թե ինչպես են միմյանց հետ կապվում երկրաբանական և հնագիտական ուսումնասիրությունները, և թե ինչպես կարելի է օգտագործել երկրաբանական տվյալները՝ վաղագույն մարդկանց բնակեցման հնաաշխարհագրական պայմանները և կենսամիջավայրը վերակազմելու և դրանք նյութական մշակույթի կայացման ու զարգացման ընթացքի ուսումնասիրության մեջ օգտագործելու համար:

Քննարկված են նաև ջրային ռեսուրսների օգտագործման՝ հնագիտական սկզբնաղբյուրներում պահպանված հետքերը կամ ազդանշանները, որի

նպատակն է հասկանալ, թե դրանցից որոնք կարելի է համարել այս իրողությունների առկայության չափորոշիչներ: Նշված չափորոշիչներն առանձնացվել են մի շարք օրինաչափությունների անընդհատական դիտարկման հենքի վրա, որոնք թույլ են տվել որոշակի եզրահանգումներ անել ջրային պաշարների հետ Հայաստանի հնաքանակների ունեցած փոխհարաբերության շուրջ: Առավել համոզիչ են գործիքներ պատրաստելու համար պիտանի քարի հումքի՝ ջրային ավազաններից կամ դրանց նստվածքներից ու շերտերից հայթայթելու իրողությունը ցույց տվող փաստագրումները: Առանձնակի ուշադրություն է դարձվել աշխատանքային գործիքներ պատրաստելու համար պիտանի գլաքարային հումքի հայթայթմանն ու կիրառմանը, քանի որ հնավայրերի շերտերից հայտնաբերված քարե արտադրահամալիրների հիմնական մասը պատրաստված է հենց գլաքարային հումքից, որի առաջացման հիմնական աղբյուրը ջրային ալիքն ու գետերի հոսանքի բարձր էներգիան են՝ ջրի աշխատանքը:

Հաջորդիվ ներկայացված են Հայաստանի՝ ստորին, միջին և վերին հին քարի դարերի հնագիտական սկզբնաղբյուրները, տրված են շրջակա լանդշաֆտների, ջրային ավազանների հետ դրանց ունեցած փոխհարաբերության մանրամասները լիտոստրատիգրաֆիական, քրոնոշերտագրական, կենսաշերտագրական տվյալների համառոտ ուրվագիծը: Որոշակի անդրադարձ է կատարված շրջակայքում առկա հումքի աղբյուրների, աշխատանքային գործիքների պատրաստման տեխնիկամորֆոլոգիական բնութագրին: Բերված տվյալների համալիր ներկայացման հենքի վրա փորձ է կատարված՝ ուրվագծելու ջրային ռեսուրսների հետ Հայաստանի տարածքում ապրած հնագույն հասարակությունների փոխհարաբերության օրինաչափությունները և ցույց տալու ջրի դերն ու նշանակությունը անցյալի հասարակությունների կենսագործունեության և հարմարվողական ռազմավարությունների զարգացման գործում:

### Եզրակացություններ

Ամփոփելով բերված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի բնակեցման սկզբնափուլերը ներկայացնող հասարակությունների կենսագործունեության մեջ ջրային ռեսուրսներն ունեցել են առանցքային նշանակություն, եթե չասենք, որ դրանց առկայությունը լանդշաֆտում հանդիսացել է բնակեցման համար սեզոնային վայրեր ընտրելու առաջնային գործոններից մեկը: Այս մասին է վկայում պալեոլիթյան սկզբնաղբյուրների բաշխվածությունը ջրային ավազանների երկայնքով, գետերի դա-

րավանդներին և լճերի մերձափնյա հատվածներում: Այս հանգամանքը նախ և առաջ ապահովել է որսորդ-հավաքչարարների կենցաղային կարիքները:

Ավելին, ջրային ավազանների ռիթմը պայմանավորել է նաև աշխատանքային գործիքներ պատրաստելու համար պիտանի հումքի հասանելիությունը, ինչպես նաև այդ հումքի չափային և ձևային առանձնահատկությունները: Ինչպես ցույց են տալիս բերված տվյալները, պալեոլիթյան գործիքները՝ հատկապես ամենավաղ փուլի (քարի մշակման օլդովեյան և աշելյան ավանդույթների), պատրաստված են մոտակա գետերից հավաքված գլաքարերից: Աշելյան ավանդույթի եզրափակիչ փուլերում սկսել է կարևորվել նաև վանակատը, որի՝ ջրային հոսքի շնորհիվ մշակված միջին և մեծ չափեր ունեցող գլաքարերը գերադասելի են եղել բեկոտման ողջ ցիկլն ապահովելու համար՝ «խնայելով ժամանակ» և դառնալով այլընտրանք հումքի հեռավոր և բարձրադիր աղբյուրներ այցելությանը հատկապես սառցապատումների ընթացքում:

Միևնույն ժամանակ Հայաստանի որսորդ-հավաքչարարները «գերադասել են» կայանել լճերի այն հատվածներում, որտեղ թափվում են դրանք սնուցող գետերը և գետակները: Այս ծանծաղ և ջրային հոսքի ցածր էներգիա ունեցող տեղամասերը հատկապես գրավիչ են եղել որսի կենդանիների համար, որոնց հոտերն այցելել են նշված տեղամասեր ջուր խմելու նպատակով՝ դառնալով որսորդների թիրախ:

Ընդհանուր առմամբ, համադրելով վերը թվարկված գործոնները, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի վաղագույն որսորդ-հավաքչարարների համար ջրային մարմիններն ապահովել են կենցաղ, գործիքներ պատրաստելու հումք և սնունդ հայթայթելու հնարավորություն՝ որս և հավաքչարարություն, այլ բառերով ասված՝ հանդիսացել են կենսափուլի կազմակերպման հիմքը:

Այսպիսով, ջրային պաշարների օգտագործման ավանդույթները Հայկական լեռնաշխարհում ձևավորվել են դեռևս հին քարի դարում և շարունակվել են զարգանալ հետագա հասարակությունների կենսագործունեության արդյունքում: Այդ ավանդույթների որոշ տարրեր հասել են մինչև մեր օրերը, ինչպես օրինակ՝ աղբյուրների հարևանությամբ խնջույքի կազմակերպումը:

### Նշումներ և շնորհակալություններ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ՝ 21AG6A080 ծածկագրով թեմայի շրջանակներում: Աշխատանքում օգտագործվել են Հայաստանի պալեոլիթյան հուշարձանների ուսումնա-

սիրության մեջ մեծ ներդրում ունեցած հայ-իդյան-դական, հայ-բրիտանական, հայ-ֆրանսիական, հայ-գերմանական, հայ-իսրայելական, հայ-ամերիկյան համատեղ արշավախմբերի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքները: Նշված աշխատանքները համաֆինանսավորվել են Ամերիկայի «Գֆոելլեր Ռենեսանս ֆաունդեյշն» հիմնադրամի կողմից:

### Acknowledgments

The research was carried out with the support of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia under the code 21AG-6A080. The work used the results of the joint Armenian-Irish, Armenian-British, Armenian-French, Armenian-German, Armenian-Israeli, Armenian-American expeditions that made a great contribution to the study of Paleolithic monuments in Armenia. The mentioned works were co-financed by the American “Gfoeller Renaissance Foundation”.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Avakyan, L. A. (1959). *Quaternary Fossil Mammals of Armenia* (A. A. Gabrielyan, Ed.). Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Aslanyan, A., T. (1958). *Regional Geology of Armenia*. Haypethrat (in Russian).
- Aghajanyan, A. & Sayadyan, Y. (1983). Findings of Remains of small Mammals in Plio-Pleistocene deposits of Armenia. In A. T. Aslanyan & Y. V. Sayadyan (Eds.), *Questions of Geology of the Quaternary Period of Armenia* (pp. 102-105). Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Gabrielyan, I., G. & Gasparyan, B. (2003). Living Conditions of Primitive man in the canyon of the Vorotan River according to Paleontological data. *Proceedings of the International Conference “Archaeology, Ethnology and Folklore of the Caucasus”*, 17-18 November, Yerevan, Azarashen, 23-29 (in Russian).
- Gasparyan, B., Nahapetyan, S., Arakelyan, D., Kolone, D., & Shatenye, K. (2004). Stone Age sites of the Aparan Depression (Republic of Armenia). *International Scientific Conference “Archeology, Ethnology and Folklore of the Caucasus”*, dedicated to the 90th anniversary of academician A. M. Apakidze, *Collection of abstracts of reports*, 49-50 (in Russian).
- Paffengolts, K. (1964). *Post-Pliocene, Geology of the Armenian SSR*. In K. Paffengolts (Ed.), *Stratigraphy* (vol. II, pp. 382-414). Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Adler, D., Yeritsyan, B., Wilkinson, K., Pinhasi, R., Bar-Oz, G., Nahapetyan, S., Mallol, C., Berna, F., Bailey, R., Schmidt, B., Glauberman, P., Wales, N. & Gasparyan, B. (2012). The Hrazdan Gorge Palaeolithic Project, 2008-2009. In P. Avetisyan & A. Bobokhyan (Eds.), *Archaeology of Armenia in Regional Context. Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography*, 15-17 September, 2009, Yerevan, Gitutyun, 21-37.
- Adler, D., Wilkinson, K., Blockley, S., Mark, D., Pinhasi, R., Schmidt-Magee, B., Nahapetyan, S., Mallol, C., Berna, F., Glauberman, P., Raczynski-Henk, Y., Wales, N., Frahm, E., Jöris, O., MacLeod, A., Smith, V., Cullen, V., & Gasparian, B. (2014). Early Levallois technology and the Lower to Middle Palaeolithic transition in the Southern Caucasus. *Science*, 345 (6204), 1609-1613. <https://doi.org/10.1126/science.1256484>
- Bar-Oz, G., Weissbrod, L., Gasparyan, B., Nahapetyan, S., Wilkinson, K., & Pinhasi R. (2012). Taphonomy and zooarchaeology of a high-altitude Upper Pleistocene faunal sequence from Hovk-1 Cave, Armenia. *Journal of Archaeological Science*, 39, 2452-2463.
- Bertacchi, A., Gasparyan, B., Gruwier, B., Rivals, F., & Kandel A. (2021). Upper Paleolithic animal exploitation in the Armenian Highlands: The zooarchaeology of Aghitu-3 cave. *Quaternary International*, 578-588, 400-414. <https://doi.org/10.1016/j.quaint.2020.04.029>
- Bruch, A. & Gabrielyan I. (2002). Quantitative data on the Neogene climatic development in Armenia and Nakhichevan. *Acta Universitatis Carolinae-Geologica*, 46(4), 41-48.
- Chataigner, C., Gasparyan, B., Montoya, C., Arimura, M., Melikyan, V., Liagre, J., Petrosyan, A., Ghukasyan, R., Colonge, D., Forlobey, K., Arakelyan, D., Astruc, L., Nahapetyan, S., Hovsepyan, R., Balasescu, A., Tome, K., & Radu, V. (2012). From the Late Upper Palaeolithic to Neolithic in North-Western Armenia: Preliminary results. In P. Avetisyan & A. Bobokhyan (Eds.), *Archaeology of Armenia in Regional Context. Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography*, 15-17 September, 2009, Yerevan, Gitutyun, 52-63.
- Colonge, D., Jaubert, J., Nahapetyan, S., Ollivier, V., Arakelyan, D., Devilder, G., Fourlobey, C., Jamois, M-H., Gasparian, B. & Chataigner, C. (2013). Le Paléolithique Moyen De La Haute Vallée du Kasakh (Arménie): Caractérisation technologique et peuplement de montage. *Paléorient*, 39(2), 109-140.
- Egeland, Ch., Gasparian, B., Fadem, C., Nahapetyan, S., Arakelyan, D. & Nicholson, Ch. (2016). Bagratashen 1, a stratified open-air Middle Paleolithic site in the Debed River Valley of Northeastern Armenia, A preliminary report. *Archaeological Research in Asia*, 8, 1-20. <https://doi.org/10.1016/j.ara.2016.10.001>
- Frahm, E., Kandel, A. & Gasparyan B. (2019). Upper Palaeolithic settlement and mobility in the Armenian Highlands: Agent-Based Modeling, Obsidian Sourcing, and Lithic Analysis at Aghitu-3 Cave. *Journal of Paleolithic Archaeology*, 2, 418-465. <https://doi.org/10.1007/s41982-019-00025-5>
- Frahm, E., Jones, C., Corolla, M., Wilkinson, K., Sherriff, J., Gasparyan, B. & Adler, D. (2020). Comparing Lower and Middle Palaeolithic lithic procurement behaviors within the Hrazdan basin of central Armenia. *Journal of Archaeological Science, Reports*, 32, 102389. <https://doi.org/10.1016/j.jasrep.2020.102389>
- Gasparyan, B. (2010). Landscape organization and resource management in the Lower Palaeolithic of Armenia,

- Turkish Academy of Sciences Journal of Archaeology*, 13, 159-183.
- Gasparyan, B. & Glauberman, Ph. (2022). Beyond European boundaries: Neanderthals in the Armenian Highlands and the Caucasus. In F. Ramagnoli, F. Rivals, & S. Benazzi (Eds.), *Updating Neanderthals, understanding behavioural complexity in the Late Middle Palaeolithic*. Academic Press, 275-301. <https://doi.org/10.1016/B978-0-12-821428-2.00018-4>
- Gasparyan, B., Adler, D. S., Egeland, Ch. & Azatyan, K. (2014). Recently discovered Lower Paleolithic sites of Armenia. In B. Gasparyan & M. Arimura (Eds.), *Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age archaeology in the Republic of Armenia* (pp. 37-64). Center for Cultural Resource Studies, Kanazawa University, Japan.
- Gasparyan, B., Dan, R., Petrosyan, A., Vitolo, P., Haydosyan, H., Adigoyalyan, A., Azizbekyan, H., Azatyan, K., Zecchi, Ch., Moradi, Gh., Saccone, T., Bonfati, A. & Dadfar, F. (2020). The Vayots Dzor Project (VDP): A preliminary overview of the first three years' activities (2016-2018). *Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies*, X (1-2), 143-183. <https://doi.org/10.32028/ajnes.vi.922>
- Gasparyan, B., Kandel, A. & Montoya, C. (2014). Living the high life: The Upper Paleolithic Settlement of the Armenian Highlands. In B. Gasparyan & M. Arimura (Eds.), *Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age archaeology in the Republic of Armenia* (pp. 107-131). Center for Cultural Resource Studies, Kanazawa University, Japan.
- Gasparyan, B., Petrosyan, A., Glauberman, Ph., Adigoyalyan, A., Haydosyan, H., Aghaian, S., Arimura, M., Frahm, E., Nahapetyan, S., Arakelyan, D., Sherriff, J., Karampaglidis, T., Krakovsky, M. & Ariel-Buller, A. (2023). Dalarik-1: A New Lower Paleolithic Cave Site in the Republic of Armenia. In Y.H. Grekyan & A.A. Bobokhyan (Eds.), *Systemizing the Past, Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday* (pp. 127-141). Archaeopress Archaeology, Oxford.
- Gill, J., Adler, D., Raczyński-Henk, Y., Frahm, E., Sherriff, J., Wilkinson, K. & Gasparyan B. (2021). The techno-typological and 3D-GM analysis of Hatis-1: a Late Acheulian open-air site on the Hrazdan-Kotayk Plateau, Armenia. *Journal of Paleolithic Archaeology*, 4(29), 1-49.
- Glauberman, Ph., Gasparyan, B., Sheriff, J., Wilkinson, K., Bo, L., Knul, M., Brittingham, A., Hern, M., Arakelyan, D., Nahapetyan, S., Raczyński-Henk, Y., Haydosyan, H. & Adler, D. (2020). Barozh 12: Formation processes of a late Middle Paleolithic open-air site in western Armenia. *Quaternary Science Reviews*, 236, 1-23.
- Glauberman, Ph., Gasparyan, B., Wilkinson, K., Frahm, E., Nahapetyan, S., Arakelyan, D., Raczyński-Henk, Y., Haydosyan, H. & Adler, D. (2020). Late Middle Paleolithic technological organization and behavior at the open-air site of Barozh 12 (Armenia). *Journal of Paleolithic Archaeology*, 1-54.
- Haydosyan, H., Petrosyan, A., Arakelyan, D., Glauberman, Ph. & Gasparyan, B. (2022). The Paleolithic archaeology of Shirak province and the open-air site of Aghvorik. *Aramazd, Armenian Journal of Near Eastern Studies*, XV(1-2), 1-24. <https://doi.org/10.32028/ajnes.v15i1-2.1298>
- Joannin, S., Cornee, J.-J., Munch, P., Fornari, M., Vasiliev, I., Krijgsman, W., Nahapetyan, S., Gabrielyan, I., Ollivier, V., Roiron, P. & Chataigner, C. (2010). Early Pleistocene climatic cycles in continental deposits of the Lesser Caucasus of Armenia inferred from palynology, magnetostratigraphy, and <sup>40</sup>Ar/<sup>39</sup>Ar dating. *Earth and Planetary Science Letters*, 291(1-4), 149-158. <https://doi.org/10.1016/j.epsl.2010.01.007>
- Kandel, A., Gasparyan, B., Allué, E., Bigga, G., Bruch, A., Cullen, V.L., Frahm, E., Ghukasyan, R., Gruwier, B., Jabbour, F., Miller, Ch., Taller, A., Vardazaryan, V., Vasilyan, D. & Weissbrod, L. (2017). The earliest evidence for Upper Paleolithic occupation in the Armenian Highlands at Aghitu-3 Cave. *Journal of Human Evolution*, 110, 37-68.
- Kolpakov, E. (2009). The Late Acheulian site of Dashtadem-3 in Armenia. *PaleoAnthropology*, 3-31.
- Krischer, U., Bruch, A., Gabrielyan, I., Scharrer, S., Kuiper, K. & Bachtadse, V. (2014). High resolution magnetostratigraphy and radio-isotope dating of Early Pleistocene lake sediments from southern Armenia. *Quaternary International*, 328-389, 31-44. <https://10.1016/j.quaint.2013.06.010>
- Malinsky-Buller, A., Glauberman, Ph., Wilkinson, K., Bo, L., Frahm, E., Gasparyan, B., Tymms, R., Sherriff, J. & Adler, D. (2020). Evidence for Middle Palaeolithic occupation and landscape change in central Armenia at the open-air site of Alapars-1. *Quaternary Research*, 1-25. <http://doi:10.1017/qua.2020.61>
- Malinsky-Buller, A., Glauberman, Ph., Ollivier, V., Lauer, T., Timms, R., Frahm, E., Brittingham, A., Triller, B., Kindler, L., Knul, M., Krakovsky, M., Joannin, S., Hren M., Bellier, O., Clark, A., Blockley, S.P.E., Arakelyan, D., Marreiros, J., Paixao, E., Calandra, I., Ghukasyan, R., Nora, D., Nir, N., Adigoyalyan, A., Haydosyan, H. & Gasparyan, B. (2021). Short-term occupations at high elevation during the Middle Paleolithic at Kalavan 2 (Republic of Armenia). *Plos One*, 1-59. <http://doi:10.1371/journal.pone.0245700>
- Montoya, C., Balasescu, A., Joannin, S., Ollivier, V., Liagre, J., Nahapetyan, S., Ghukasyan, R., Colonge, D., Gasparyan, B. & Chataigner, C. (2013). The Upper Palaeolithic site of Kalavan-1 (Armenia): An Epigravettian settlement in the Lesser Caucasus. *Journal of Human Evolution*, 65, 621-640. <http://10.1016/j.jhevol.2013.07.011>
- Ollivier, V., Nahapetyan, S., Roiron, P., Gabrielyan, I., Gasparyan, B., Chataigner, C., Joannin, S., Cornee, J., Guillou, H., Scaillet, S., Munch, P. & Krijgsman W. (2010). Quaternary volcano-lacustrine patterns and Paleobotanical data in Southern Armenia. *Quaternary International*, 223-224, 312-326.
- Pinhasi, R., Gasparian, B., Nahapetyan, S., Bar-Oz, G., Weissbrod, L., Bruch, A., Hovsepyan, R. & Wilkinson, K. (2011). Middle Paleolithic human occupation of the high altitude region of Hovk-1, Armenia. *Quaternary Science Reviews*, 30(27-28), 3846-3857. <https://doi.org/10.1016/j.quascirev.2011.09.020>
- Scharrer, S. (2013). *Frühpleistozäne Vegetationsentwicklung im Südlichen Kaukasus - Pollenanalytische Untersuchungen an Seesedimenten im Vorotan-Becken (Armenien)*, Dissertation zur Erlangung des Doktorgrades der Naturwissenschaften vorgelegt beim Fachbereich Geowissen-

- schaften der Johann Wolfgang-Goethe-Universität in Frankfurt am Main, Frankfurt.
- Shalaeva, E., Trifonov, V., Lebedev, V., Simakova, A., Avagyan, A., Sahakyan, L., Arakelyan, D., Sokolov, S., Bachmanov, D., Kolesnichenko, A., Latyshev, A., Belyaeva, E., Lyubin, V., Frolov, P., Tesakov, A., Sychevskaya, E., Kovalyova, G., Martirosyan, M. & Khisamutdinova, A. (2019). Quaternary geology and origin of the Shirak Basin, NW Armenia. *Quaternary International*, 509, 41-61. <https://doi.org/10.1016/j.quaint.2018.09.017>
- Sherriff, J., Wilkinson, K., Adler, D., Arakelyan, D., Beverly, E., Blockley, S.P.E., Gasparyan, B., Mark, D., Meliksetyan, K., Nahapetyan, S., Preece, K & Timms, R.G.O. (2019). Pleistocene volcanism and the geomorphological record of the Hrazdan valley, central Armenia, linking landscape dynamics and the Palaeolithic record. *Quaternary Science Reviews*, 226, 105994. <https://doi.org/10.1016/j.quascirev.2019.105994>
- Sherriff, J., Wilkinson, K., Harding, P., Hawkins, H., Timms, R.G.O., Adler, D., Beverly, E., Blockley, S.P.E., Gasparyan, B., Manning, C., Mark, D., Nahapetyan, S. & Preece, K. (2021). Middle Pleistocene environments, landscapes and tephrostratigraphy of the Armenian Highlands: Evidence from Bird Farm 1, Hrazdan Valley. *Journal of Quaternary Science*, 1-22.
- Sheth, H., Meliksetyan, K., Gevorgyan, H., Israyelyan, A. & Navasardyan G. (2015). Intracanyon Basalt lavas of the Debed River (Northern Armenia), Part of a Pliocene-Pleistocene continental flood basalt province in the South Caucasus. *Journal of Volcanology and Geothermal Research*, 295, 1-15.
- Ter Schure, A.T.M., Bruch, A., Kandel, A., Gasparyan, B., Bussmann, R., Brysting, A.K., de Boer, H.J. & Boessenkool, S. (2022). Sedimentary ancient DNA metabarcoding as a tool for assessing prehistoric plant use at the Upper Paleolithic cave site Aghitu-3, Armenia. *Journal of Human Evolution*, 172, 103258. <https://doi.org/10.1016/j.jhevol.2022.103258>
- Tesakov, A., Simakova, A., Frolov, P., Sytchevskaya, E., Syromyatnikova, E., Foronova, I., Shalaeva, E. & Trifonov, V. (2019). Early-Middle Pleistocene environmental and biotic transition in North-Western Armenia, Southern Caucasus. *Palaeontologia Electronica*, 1-39. <https://doi.org/10.26879/916>
- Tornero, C., Balasse, M., Balasescu, A., Chataigner, C., Gasparyan, B. & Montoya, C. (2016). The Altitudinal Mobility of wild sheep at the Epigravettian site of Kalavan 1 (Lesser Caucasus, Armenia): Evidence from a sequential isotopic analysis in tooth enamel. *Journal of Human Evolution*, 97, 27-36.
- Trifonov, V., Lyubin, V., Belyaeva, E., Lebedev, V., Trikhunov, Ya., Tesakov, A., Simakova, A., Veselovsky, R., Latyshev, A., Presnyakov S., Ivanova, T., Ozhereliev, D., Bachmanov, D. & Lyapunov, S. (2016). Stratigraphic and tectonic settings of Early Paleolithic of North-West Armenia. *Quaternary International*, 420, 178-198. <https://doi.org/10.1016/j.quaint.2015.08.019>
- Trifonov, V., Shalaeva, E., Sahakyan, L., Bachmanov, D., Lebedev, V., Trikhunov, Ya., Simakova, A., Avagyan, A., Tesakov, A., Frolov, P., Lyubin, V., Belyaeva, E., Lstyshev, A., Ozherelyev, D., & Kolesnichenko, A. (2017). Quaternary tectonics of recent basins in north-western Armenia. *Geotectonics*, 51(5), 499-519. <https://doi.org/10.1134/S0016852117030116>



# CULTIC COMPLEXES IN THE CONTEXT OF IRRIGATION SYSTEMS

Hayk Avetisyan<sup>1,3</sup>, Artak Gnuni<sup>1</sup>, Levon Mkrtchyan<sup>2</sup>,  
Gagik Sargsyan<sup>3</sup>, Anzhela Tadevosyan<sup>4</sup>

1. Yerevan State University

2. "Service for The Protection of Historical Environment and Cultural Museum-reservations" SNCO

3. Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

4. Vagharshapat Historical-Ethnographical Museum

## Abstract

Water was the main factor of sustenance, itself an object of worship. Water supply complexes and natural objects were also objects of worship. Similar complexes could be located near natural water sources. The cultic platforms and dragon stone stelae placed near the Lakes Aylakh, Al, Sev, Khoznavar, and Kari can be classified in this group. The latter were also placed at the sources of rivers (Martuni, Arpa). The sacralization of the place is also evidenced by the tombs located on the lake shores (Sevan, Al, Sev, Khoznavar). The next group of religious objects is located near artificial irrigation complexes: canals, and water basins (Aragats irrigation system). This fact can indicate that the area was under taboo. At the same time, irrigation systems and cultic complexes act as a single co-structure with defensive and economic complexes forming a comprehensive natural and manmade landscape cell with natural, cultic, economic and defensive components. The inscriptions placed along the Urartian irrigation complexes should be considered in these same contexts.

**Keywords:** life support culture, ritual-cult complex, irrigation system, multifunctional complex, canal, vishap, tomb.

## ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ ՈՌՈՂՈՒՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հայկ Ավետիսյան<sup>1,3</sup>, Արտակ Գնունի<sup>1</sup>, Լևոն Մկրտչյան<sup>2</sup>,  
Գագիկ Սարգսյան<sup>3</sup>, Անժելա Թադևոսյան<sup>4</sup>

1. Երևանի պետական համալսարան

2. «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պարմական միջավայրի պահպանության ծառայության» ՊՈԱԿ

3. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

4. Վաղարշապատի պատմազգագրական թանգարան

## Ամփոփագիր

Ջուրը և դրան առնչվող միջավայրը՝ ջրամատակարարման համալիրները՝ որպես կենսաապահովման մշակույթի հիմնական գործոն, արժանանում էին պաշտամունքի: Նմանատիպ համալիրները կարող էին տեղադրված լինել ջրի բնական աղբյուրների մերձակայքում: Այս խմբին կրելի է դասել Այլախի, Ալ լճերի, Սև լճի, Խոզնավարի լճի, Քարի լճի մերձակայքում տեղադրված պաշտամունքային հարթակներն ու վիշապ-քարակոթողները: Վերջիններս տեղադրվում էին նաև գետերի ակունքներում (Մարտունի, Արփա): Տեղանքի սրբազործման մասին են վկայում լճափերին տեղադրված դամբարանները (Սևանա լիճ, Ալ լիճ, Սև լիճ, Խոզնավարի լիճ): Պաշտամունքային օբյեկտների հաջորդ խումբը տեղադրված էր ռոռգման արհեստական համալիրների՝ ջրանցքների, ջրավազանների մոտակայքում (Արագածի ռոռգման համակարգ): Բացառված չէ, որ սա վկայում է տարածքի մոզարգելվածության մասին: Ռոռգման համակարգերը և ծիսապաշտամունքային համալիրները, պաշտպանական և տնտեսական համալիրների հետ միասնական համակարգ կազմելով, միևնույն ժամանակ նաև ամփոփ բնական-մարդածին լանդշաֆտային բջիջ էին կազմում՝ բնական, պաշտամունքային, տնտեսական և պաշտպանական բաղադրիչներով: Այս նույն համատեքստերում պետք է դիտարկել նաև ուրարտական ռոռգման համալիրների երկայնքով տեղադրված արձանագրությունները:

**Հիմնաբառեր.** Կենսաապահովման մշակույթ, ծիսապաշտամունքային համալիր, ռոռգման համակարգ, բազմազործառության համալիր, ջրանցք, վիշապ-քարակոթող, դամբարան:

## Ներածություն

Ներկայացվող հաղորդումը նվիրված է ոռոգման համալիրների համատեքստում տեղադրված ծիսապաշտամունքային միավորներին: Դիտարկվում են բրոնզի և երկաթի դարերում ձևավորված բազմագործառության համալիրները և դրանց բնաշխարհագրական, սոցիալ-տնտեսական և հոգևոր բաղադրատարրերը: Առանձնապես արժևորվում են հետազոտության հիմնական առանցք հանդիսացող ծիսապաշտամունքային համալիրները: Նմանատիպ համալիրների հետազոտության կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հին և ավանդական հասարակությունների ողջ կենսակերպը պարուրված էր կրոնամիստիկական պատկերացումներով: Հետազոտության շրջանակներում դիտարկվում են ոռոգման ինչպես բնական, այնպես էլ արհեստական համալիրները: Բնական ջրավազանների թվին կարելի է դասել լճերը, գետերի ակունքները: Հատուկ ուշադրության է արժանանում քարացրոնային ջրհորների խնդիրը: Պաշտամունքային համալիրներ լինելուց բացի, այս տարածքները նաև թաղումային հողարկավորության հուշաքարերի և հուշարձանների տեղակայման վայրեր էին: Նշվում է, որ տվյալ տարածքները կարող էին նաև մոզարգելված լինել: Արհեստական ոռոգման համալիրները (մայրուղային և երկրորդական ջրանցքներ, ջրահավաք և բաշխիչ ջրավազաններ) սրբագործվում էին երկու եղանակով՝ ակունքների և հանգուցային կետերի սրբագործում և, այսպես կոչված, ջրագծերի քարտեզներ-ժայռափոր քանդակների տեղադրում: Թեպետ ուրարտական ժամանակաշրջանի ջրանցքաշինությունը կենտրոնացված պետության պայմաններում իր տրամաբանությամբ մի փոքր այլ էր, քան բրոնզ-երկաթեդարյան նմանատիպ հուշարձանների շինարարությունը, սակայն տեղանքի ընկալման առումով կարելի է որոշ գույզահեռներ տեսնել: Մասնավորապես այստեղ ևս առկա է տարածքի սրբագործման երևույթը, որը կենտրոնացված պետության պայմաններում դրսևորվում է ջրանցքների երկայնքով և վերջնակետերում սեպագիր արձանագրությունների տեղադրմամբ:

Կենսաապահովման մշակույթը բաղկացած է մի շարք բաղադրատարրերից, որոնց շարքում առաջնային տեղ են զբաղեցնում բնակավայրային և սննդին առնչվող բաղադրիչները (Markaryan et al., 1983, 56): Այս երկու կարևորագույն բաղադրիչների ձևավորումը պայմանավորված էր բնական միջավայրի ներգործությամբ, որի կարևոր տարրը ջուրն էր (Markaryan et al., 1983, 60): Միևնույն ժամանակ, էկոլոգիական և պատմական գործոնները գտնվում են մշտական և կայուն փոխազդեցության մեջ (Ka-

reev, 2011, 65): Ավելին, այդ գործոններից յուրաքանչյուրը կարևորվում է մյուսների գոյությամբ և փոխազդեցությամբ (Heidegger, 2008, 138-139), իսկ դրանց ամբողջությունը ձևավորում է մարդուն և նրա պատկերացումների աշխարհը (Kareev 2011, 68): Այս փոխգործակցության հետևանքն է բնական միջավայրին մարդու հարմարումը, որի արդյունքում ձևավոխվում է կենսոլորտը՝ ձևավորելով մարդկային գիտակցության ոլորտը՝ նոոսֆերան (Vernardsky, 1944, 117): Նոոսֆերայի տեղային դրսևորումը բազմագործառության լանդշաֆտային համալիրն է, որն իր մեջ միավորում է ինչպես բնաշխարհագրական, այնպես էլ տնտեսական, սոցիալական և հոգևոր բաղադրատարրեր:

Բազմագործառության համալիրներում կարևորագույն դերակատարում ունի հոգևոր բաղադրիչը, քանի որ հին մարդու ողջ կյանքը պարուրված էր մոզական պատկերացումներով, իսկ իրականությունն ամբողջովին միստիկական էր (Levi-Bryul, 1994, 27-28): Սա պատահական չէ, քանի որ մարդը, կազմավորելով իր հաբիտուսը, առարկայնացնում է այն՝ օգտագործելով մտավոր, սոցիալական և հոգևոր բնորոշիչների ողջ զինանոցը (Markaryan et al., 1983, 56): Արդյունքում ձևավորվում է ծեսերի և արարողությունների մի համալիր, որը կոչված է ապահովել բազմագործառության համալիրի խորհրդանշական պաշտպանությունը և բնականոն գործունեությունը: Ինչ դեր էր խաղում այս ամենում ջուրը: Փորձենք հարցին անդրադառնալ հնագույն Հայաստանի օրինակով:

### Պաշտամունքային համալիրները բնական ջրավազաններում

**Ա. Լճեր:** Հայկական լեռնաշխարհում հազարամյակների ընթացքում լճերը եղել են քաղաքակրթություն ձևավորող գլխավոր տարրերից մեկը (Reklyu, 1906, 451): Այս առումով չափորոշիչային դերակատարում ունի հոգևոր կյանքի կազմակերպումը Սևանա լճի ավազանում: Լինելով ջրի անսպառ աղբյուր, տեղադրված կարևորագույն ճանապարհների խաչմերուկում՝ Սևանա լճի ավազանը եղել է հին հասարակությունների տնտեսական, քաղաքական և հոգևոր գործունեության կենտրոն, ինչին նպաստում էին ջրի անսպառ պաշարները (լիճը և դրա ավազանում գտնվող լճակները, օր.՝ Գիլին, լիճը թափվող տասնյակ գետակները, Հրազդան գետը, առափնյա շրջանում և գետահովիտներում գտնվող ստորգետնյա ջրերի հարյուրավոր աղբյուրներ) (Zaikov & Belinkov, 1932): Թեպետ լճից դուրս է գալիս միայն Հրազդանը, սակայն ոռոգման համար օգտագործվում էին նաև ձյունապատ լեռների պաշարները:

Սևանա լճի մեծ ռազմաքաղաքական և տնտեսական նշանակությունը կանխորոշում էր նաև նրա հոգևոր դերը: Ընդ որում, ինչպես և աշխարհիկ բնույթի շինությունները, հոգևոր համալիրների տեղաբաշխումն այս տարածաշրջանում ևս ենթարկվում է որոշակի տրամաբանության: Այսպես, դեռևս 1960-ականներին, ուսումնասիրելով Գեղամա լեռների ժայռապատկերների տեղադրությունը, Հ.Մարտիրոսյանը նկատել է, որ դրանք տեղադրված են լիճն օղակող բարձունքների լանջերին և ստորոտներին (Martirosyan & Israyelyan, 1971, 7): Այս համատեքստում պետք է դիտարկվեն նաև տարածաշրջանը սահմանազատող պաշտամունքային օբյեկտները՝ Սելիմի լեռնանցքում (վիշապ-քարակոթողներ, մենհիրներ, փոսիկաձև քարեր) (Avetisyan et al., 2015, 31; Avetisyan et al., 2019, 618-622) և Սևասարում (ժայռապատկերներ) (Avetisyan et al., 2018, 39; Avetisyan et al., 2019, 618-622): Նույն համատեքստում պետք է նշել Ներքին Գետաշեն գյուղից ոչ հեռու «Կուտի Խարաբա» կոչվող վայրում դեպի օրթոստատ քարերով օղակված կառույց տանող մենհիրների շարքերը (Lalayan, 1906, 32, 37): Նման ծիսապաշտամունքային համալիրների կենտրոնացում է նկատվում նաև այլ լճերի շրջանում: Այսպես, ծիսապաշտամունքային օբյեկտների խիտ կուտակում կա Ալ լճերի ավազանում: Այստեղ ծիսապաշտամունքային համալիրները ներկայացնում են ժայռապատկերները, որոնք հավաստված են Փոքր Ալ լճի ավազանում՝ ափամերձ քարացրոններում և Գորտագետի գետաբերանամերձ հատվածներում:

Համալիրների հաջորդ տիպը քարակույտ-հարթակներն են: Վերջիններս ներկայացնում են քարացրոնների և լճերի ափամերձ գոտու միջև տեղակայված քարակույտեր, որոնց կենտրոնական հատվածում փորված են խցանման կերտվածքներ: Այս տիպի կառույցների մեջ կենտրոնական դիրք է զբաղեցնում «Հսկայի տունը» (Մեծ օղուզը), որի կենտրոնական հատվածում 10 խուց է փորված:

Հուշարձանների հաջորդ տիպը ժայռային հարթակներն են: Ալ լճերի ափամերձ գոտում, Խոզնավարի լճի մոտ փաստագրված են նաև վիշապ-քարակոթողներ (նկ. 1-4): ՀՀ Սյունիքի մարզի և ԱՀ Քաշաթաղի շրջանի սահմանագլխին գտնվող Սև լճի ծիսա-պաշտամունքային նշանակության մասին (նկ. 5) վկայում են ավանդազրույցները, որտեղ Սև լիճը համարվում է վիշապների բնակավայր (Ghanalanyan, 1969, 79): Գ. Իսմայիլովը հիշատակում է ժայռապատկերներ նաև Սև լճի ավազանում (Pharadjeva, 2009, 194): Մեզալիթյան համալիրները ներկայացված են քարակույտ-հարթակներով և ցից քարերի տեսքով՝ մշակված քարերի և ժայռային ելուստների շարքով:



նկ. 1 Արփա գետի ակունքում տեղադրված վիշապ-քարակոթողը (Source: A. Bobokhyan)



նկ. 2 Մեծ Ալ լճի առափնյա մասում տեղադրված վիշապ-քարակոթողը (Source: A. Bobokhyan)

Որոշակի տրամաբանության է ենթարկվում նաև դամբարանների տեղադրությունը: Դամբարանները կարող էին գտնվել անմիջականորեն լճի ափին (Ադիաման, Ծովինար, Ծովակ 2) (Biscione et al., 2002, 114-116): Ե. Լալայանը նշում է, որ Սևանա լճի առափնյա շրջանների դամբարանադաշտերում առավել մեծ դամբարանները ափագծի մոտ են (Lalayan, 1906, 32, 37): Իհարկե, Լալայանի այս դիտարկումը պետք է ընդունել որոշակի վերապահությամբ՝ հաշվի առնելով Սևանա լճի ափային գծի փոփոխականությունը, սակայն այս նույն տրամաբանությունը դիտվում է նաև այլ բարձր լեռնային լճերում (Սև



նկ. 3 Աղյախի վիշապ-քարակոթողը  
(Source: A. Bobokhyan)



նկ. 4 Խոզնավարի լճի վիշապ-քարակոթողը  
(Source: A. Bobokhyan)



նկ. 5 Սև լճի ավազանի մենհիրների շարքը (Source: A. Gnuni)

լճում, Խոզնավարի լճում): Դամբարանների համալիրներ հավաստված են նաև Փոքր Մասիսի գագաթին: Առաջիններից Փոքր Մասիսի գագաթամերձ տարածքում դամբարանադաշտի մասին վկայում է Ֆ. Պարրոտը (Parrot, 1990, 97-99): Նույն տարածքի նկարագրությունն առկա է նաև Մ.Թաղիադյանի ուղեգրություններում: Մ.Թաղիադյանը մանրամասն նկարագրում է տեղանքը. լեռան հարթ գագաթը, այնտեղ տեղադրված լճակը, գագաթին մերձ գտնվող մենհիրների շարքը (ուղտերի քարավանը) (Taghidean, 1846, 142; Taghidean, 1975, 51): Հանրագումարելով Փոքր Մասիսի գագաթամերձ տարածքի հուշարձանների մասին տեղեկությունները՝ Ղ. Ալիշանը փորձում է գատ-գատ դիտարկել փոքր և մեծ տրամագծերով քարե շրջանները (Alishan, 1890, 485-487; Tsocikean 1917, 413-414; Grigorean, 2014, 25):

**Բ. Ակունքներ:** Նույն կերպ սրբազործվում էին գետերի ակունքները: Այս համատեքստում պետք է քննության առնել Արփայի ակունքում գտնվող սրբավայրը: Այստեղ վիշապ-քարակոթողի անմիջական հարևանությամբ կրոնիկա-հարթակ է: Վիշապի հարակից շրջակայքում կան կրոնիկաներ, 250 մ հյուսիս-արևմուտք՝ ճանապարհով դամբարաններ, 500 մ դեպի հարավ՝ քառակուսի և կլոր կա-

ռույցների հետքեր, որից 200 մ արևելք՝ դամբարաններ և հսկայի տուն: Դեպի սրբատեղի տանող ճանապարհն անցնում է Մուրադ սարի ժայռապատկերների և հսկայի տների կողքով (Avetisyan et al., 2021, 202-204): Ընդարձակ սրբատեղի է տեղակայված նաև Մարտունի գետի ակունքներում գտնվող «Քարե ձի» տեղամասում, որտեղ ներկայացված են բազմաթիվ մենհիրներ և վիշապ-քարակոթողներ (Avetisyan et al., 2015, 91): Նշված սրբատեղիները կարող են դիտարկվել ինչպես համապատասխան գետերի, այնպես էլ Սևանա լճի և Ալ լճերի հուշարձանների համատեքստում՝ հանդիսանալով տվյալ սրբազան շրջանների սահմաններ: Վիշապ-քարակոթողներ են հայտնի նաև Արարատյան դաշտավայրի հողերը ռոռոգող Վեդի գետի ակունքների շրջանում (Atrpet, 1929, 58):

Այս համատեքստում պետք է դիտարկել Գորիսի տարածաշրջանի Վերիշեն գյուղի «Իշակ Մեդան» տեղամասում գտնվող բնակավայրի կենտրոնական մասում տեղակայված փոսիկազարդ ժայռային հարթակը: Այստեղից են բխում Վարարակն գետի ակունքները: 10-րդ դարում Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի կողմից այստեղ ջրանցք է կառուցվում, որը հետագայում վերանորոգվում է, ինչի մա-

սին վկայում է 1294 թ. արձանագրությունը: Հատկանշական է, որ այս նույն քարի վրա առկա են ուշ շրջանի պահլավերեն արձանագրության հետքեր (Barkhudaryan, 1960, 75, 77):

**Գ. Մեզալիթյան ջրհորներ:** Ալ լճերի և Սև լճի ավազանում գտնվող քարակույտ-հարթակների մի տիպը փաստագրված է անմիջականորեն քարացրոններում: Դրանք երբեմն քարե շարքերով օղակված քարակույտեր են: Սրանք ստացվել են քարացրոնների քարերը հետզհետե հեռացնելու եղանակով և, հավանաբար, կարող էին կապ ունենալ ջրերի կուտակումների հետ: Համեմատության համար տեղին է հիշատակել ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղից 13 կմ հյուսիս-արևելք գտնվող «Տիգրանի ջրհորը» (տես Կոտայքի մարզի Գեղաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, ցուցիչ՝ 6.23/40), որը նույնպես տեղակայված է քարացրոնների մեջ: Նմանատիպ ուղղանկյուն և բոլորաձև հատակագծով փորվածքներ կան Զառի և, մասնավորապես, Տիգրանաբերդի մոտակայքի քարացրոններում, որոնք տեղացիները կոչում են «քարե ջրհորներ» (ուսումնասիրությունը՝ Կոտայքի մարզի հուշարձանների երկարամյա պահպանման՝ Ա. Սեդրակյանի, ում պատկանում են հուշարձանների այս բացառիկ օրինակների գրեթե բոլոր նորահայտումները): Նախորդ դարի 60–70 ականթվականներին, ամառային խոտհունձքի ժամանակ դեռ խմելու ջուր էին վերցնում նման «քարե ջրհորներից» (A. Sedrakyan, pers. comm.):

Նշենք, որ քարացրոնների առանձին քարաբեկորների տակ սովորաբար կուտակվում են մթնոլորտային և ճնհալի ջրերը և նույնիսկ՝ սառույցը (Gabrielyan, 1961, 99-100; Gladtsin, 1930, 438):

Մինևույն ժամանակ ջրհորը կարող էր սրբագործվել (Հմմտ. Երդման ջրհորը, Genesis, 21, 14, 31): Ալ լճերի շրջանում, ենթադրյալ ջրհորների համատեքստում, հավաստված են ժայռապատկերներ, ինչպես նաև՝ մարդակերպ կոթող: Ս. Գրքում խոսվում է ջրհորի և գոհասեղանի համադրության մասին. «Եւ շինեաց անդ սեղան եւ կարդաց անդ գանուն Տեառն: Եւ եհար անդ զխորան իւր: Փորեցին ծառայքն Իսահակայ անդ ջրհոր» (Genesis, 26, 25): Միջագետքյան դիցաբանության մեջ լեռը և ջրհորը կարող էին դիտվել մի ծիսական միասնության համատեքստում (Rabinovich, 1973, 103-105): Աշխարհները միավորող յուրատեսակ առանցք կարելի է համարել հնդկական դիցաբանության Տրիտայի ջրհորը (Rigveda, I, 1989, 105): Նմանատիպ սյուժեներ հանդիպում են նաև հայկական ժողովրդական հեքիաթներում (հմմտ. ջրհոր, որտեղից ոչ ոք չէր վերադառնում, ջրհոր, ուր, դևին փնտրելով, իջնում է պատանին) (Gulakyan, 1983, 165):

Արդյունքում ձևավորվում է լիճ-գետ-աղբյուր սրբազան մի գոտի, որը երաշխավորում է ինչպես ավելի ցածրադիր գոտիներում տեղակայված երկրագործական շրջանների, այնպես էլ բարձր լեռնային արոտավայրերի ծիսական անվտանգությունը: Այսպիսի գոտու օրինակ է Բյուրակնի շրջակայքը, որտեղից սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհի խոշորագույն գետերը: Դիտարկելով այստեղի ծիսապաշտամունքային կառույցները՝ Ատրպետը նշում է բազմաթիվ վիշապ-քարակոթողներ, որոնք տեղադրված են Սրբահան գետի ակունքներում, ինչպես նաև Զիարեթ լճի առափնյա շրջանում (Atrpet, 1929, 56; Atrpet, 1931, 309): Այս նույն համատեքստում են դիտվում նաև Արաքսի ակունքներում կառուցված, այսպես կոչված, կալաները՝ ըստ նկարագրության՝ կիկլոպյան աշտարակները (Atrpet, 1931, 308):

Բարձր լեռնային գոտում գտնվող այս սրբատեղիների նշանակությունը չէր սահմանափակվում գուտ երկրագործական տարածքների ծիսական անվտանգությունն ապահովելով: Դրանք կոչված էին ապահովելու նաև բարձր լեռնային գոտիներում տեղադրված խոշոր անասնապահական համալիրների ծիսական մաքրությունն ու անվտանգությունը, ինչը խիստ արժևորվում է մ.թ.ա. III-I հազ. հեռագնա անասնապահության զարգացման պարագայում: Այս համատեքստում կարելի է դիտարկել լճափին՝ անասնապահական համալիրների մերձակայքում տեղադրված Այլախի, Ալ լճերի, Բյուրակնյան լեռների անասնապահական համալիրները (Atrpet, 1931, 310):

#### Պաշտամունքային համալիրներն արհեստական ոռոգման համակարգերում

Պաշտամունքային օբյեկտների հաջորդ խումբը հանդիպում է ոռոգման արհեստական համալիրների՝ ջրանցքների, ջրավազանների մոտակայքում: Նման հնագույն համալիրներ հայտնի են Արագածի հարավային լանջերին: Այս համակարգը ներառում էր ջրահավաք լճեր, գլխավոր ջրանցքների ընթացքում գտնվող միջանկյալ լճեր, մայրուղային ջրանցքներ, երկրորդական առուներ (Kalantar, 2007, 283, 284), որոնց վերջնակետը Ակնալիճն էր (Khachatryan, 1971, 136): Զրանցքների համակարգ գոյություն ուներ նաև Շիրակում՝ Արփի լճի ավազանում: Ինչպես Ակնալիճը Արարատյան դաշտում, այստեղ էլ Արփի լիճը համակարգի վերջնակետն էր, որի ուղղությամբ էին հոսում Ազ Բար լեռնազագաթից հոսող ջրերը (Atrpet, 1924, 34-35):

Նման համակարգեր են հայտնաբերվել նաև Գեղամա լեռներում (Kalantar, 2007, 292, 294): Ամենայն հավանականությամբ նույնն առկա էր նաև



Նկ. 6 Միրիկի ջրարաշխական համակարգի քարտեզը (Source: G. Sargsyan)

Մեծ Մասիսի լանջերին: Դեռևս 19-րդ դ. այստեղ փաստվել են դարավանդաձև տեղադրված արհեստական լճեր (Shopen, 1852, 420-421): Եվս մեկ ջրանցք հայտնի է Մեծ և Փոքր Մասիսները բաժանող գոգավորությունում: Ա. Մխիթարյանն այն նկարագրում է որպես մեծ, տիտանյան մի շինություն, որը կործանվելով, ցրել էիր բեկորներն այս ու այն կողմ (Mkhitarean 1904, 158): Այս առումով հետաքրքիր է, որ Յակոբ ալ-Համավին Մասիս լեռն անվանում է Ջարբալ ալ Հադիր՝ Երկրագործի լեռ (Yaqut al-Hamawi, 1965, 138):

Այս համակարգերի ծիսական անվտանգությունն ապահովվում էր մի քանի եղանակով: Առաջին եղանակը հանգուցային կետերում վիշապ-քարակոթողներ, պաշտամունքային այլ օբյեկտներ, կիկլոպյան աշտարակներ տեղադրելն էր (Kalantar, 2007, 290): Այսպես, վիշապ-քարակոթողներ տեղադրված են Վերին Սասնաշենում, Դաշտադեմում, Բագմադրյուրում, Ջիարեթում (Bobokhyan et al., 2015, 306; Khachatryan, 1971, 135): Վիշապ-քարակոթողներ կան նաև Արփի լճի ավազանում (Atrpet, 1929, 58; հետազոտությունը՝ Ա. Բոբոխյանի): Գեղարքունյաց լեռներում վիշապ-քարակոթողների կուտակում հայտնի է Թոխմախսան գյուղում (Kalantar, 2007, 292-294; Khachatryan, 1971, 294): Ջրանցք-վիշապ համադրությունը դիտվում է նաև Սպերում (Atrpet, 1929, 59-60): Մասիս-վիշապ համադրություն շատ հաճախ է հանդիպում առասպելներում: Օրինակ, Վիշապի տեսքով կախարդը դառնում է Ալեքսանդր Մեծի մոր սիրելեանը, հետագայում փախչում և բնակվում Մասիսի ստորոտում (Lalayan. 1898 a, 271), Մասիսի գագաթին բնակվում է օձերի թագա-

վորը, և օձերը երբեմն նրան հյուր են գնում (Haxthausen, 1857, 118):

Բացառված չէ, որ նշված տարածքները լինեին ամբողջությամբ կամ մասնակիորեն մոգարգելված (Atrpet, 1931, 310), ինչը կարող էր հետապնդել նաև զուտ պրակտիկ նպատակներ: Այսպես, ֆլամանդական ճանապարհորդ Վ. Ռուբրուկը դեռևս 13-րդ դ. նշում է, որ ոչ ոք իրավունք չունի բարձրանալ Մասիսի գագաթ, քանի որ նա աշխարհի մայրն է (Rubruk, 1900, 270): Մ. Թադիադյանը հաղորդում է, որ երևանցիները Մասիսը «Մուխն Աշխարհ» են կոչում և հավելում են, որ մահկանացուն քաջքերի կողմից կարող է նետվել վիհը (Taghidean, 1846a, 104): Ըստ Ա. Մխիթարյանի՝ արգելվում է ձիով Ս. Հակոբի աղբյուր բարձրանալը (Mkhitarean, 1904, 158):

Այս համատեքստում ուշագրավ են ոռոգման համակարգերի քարտեզները, որոնց թվում հատկապես կարևոր է Մեծամորի քարտեզը (առաջին հաղորդումը՝ Ter-Movsesyan, 2009, 240; Kalantar 1933, 173; Kalantar 2007, 287; Khachatryan 1971, 127-130; Aghakhanyan, 1960, 18; Atrpet 1929, 164): Ջրագծերի ևս մեկ քարտեզ հայտնաբերված է Կաքավաբերդում, որի ժայռաքանդակի փոսիկները (հավանաբար՝ ջրավազանները) մեծ քանակություն են կազմում (Khanzadyan et al., 1973, 151-152): Գեղարքավանքում հայտնաբերվել է երկրորդական օգտագործման քարե սալ, որի վրա փորագրված էր նմանատիպ «քարտեզ» (Bobokhyan & Hovhannisyan, 2016, 248): Բացառված չէ, որ նույն գործառույթն ուներ նաև «Միրիկ 4» ժայռային քանդակը (նկ. 6), քանի որ տվյալ ամփոփ տարածքում է գտնվում Խոզնավարի լիճը, որի հարևանությամբ

վիշապ-քարակոթող է հայտնաբերվել (Sargsyan et al., 2022, 74-76):

Ջրանցքաշինության հիմնական պատասխանատուն պիտի լինեն քրմական դասը, որն, ըստ Ատրպետի, կազմակերպում և համակարգում էր կառուցման, սպասարկման և պաշտամունքի հետ կապված գործունեությունը (Atrpet, 1926, 175-176):

Ջրանցքաշինությունն իր հետագա զարգացումն է ստանում ուրարտական ժամանակաշրջանում: Ուրարտական ջրանցքների թվին են դասվում Շամիրամի, Բերկրիի, Ռուսախինիլիի, Ուլխույի, Զվարթնոցի, Դավմայի, Մամուռի և այլ ջրանցքները (Harutyunyan, 1964, 18-25; Aghakhanyan, 1960, 18-20; Shirmazan, 1962, 12-13, 22-23: Զվարթնոցի ջրանցքի մասին տես նաև՝ Ter-Movsisyan 2010a, 220-221): Ռ. Թորոսյանն ուրարտական ջրանցքաշինության հատկությունները է դիտարկում նաև Դոլակի ջրանցքը (Torosyan, Without the date, 2):

Թեպետ ուրարտական ժամանակաշրջանի ջրանցքաշինությունն իր տրամաբանությամբ մի փոքր այլ էր, քան բրոնզ-երկաթեդարյան նմանատիպ հուշարձանների շինարարությունը, քանի որ կենտրոնացված պետության պայմաններում մեծապես արժևորվում էր մշտական և կայուն ռոտզումը, այնուամենայնիվ տեղանքի ընկալման առումով կարելի է գտնել որոշ զուգահեռներ: Մասնավորապես այստեղ ևս առկա է տարածքի սրբազորման երևույթը, որը կենտրոնացված պետության պայմաններում դրսևորվում է ջրանցքների երկայնքով և վերջնակետերում սեպագիր արձանագրությունների տեղադրմամբ: Այսպիսի արձանագրություններ տեղադրված են Տուշպայում, Ռուսախինիլիում, Սարդարապատում, Զվարթնոցում (Shirmazan, 1962, 12-13; Harutyunyan, 1964, 18-22, 47), որոնցում առկա է նաև անեծքի բանաձև և զոհաբերությունների ցանկ: Ռ. Թորոսյանն այս նույն համատեքստում է դիտում նաև Մայր Տաճարի խորանի տակ հայտնաբերված puluse տիպի կոթողը (Torosyan, Without the date, 2-3):

Չնայած ուրարտական շրջանում ջրանցքաշինության ընթացքում շեշտադրվում էր ոչ թե անձրևաջրերի կուտակումը, այլ գետերի ջրային պաշարների օգտագործումը, սակայն բացառված չէ, որ անձրևաջրերը նույնպես կարող էին օգտագործվել:

Այսօրինակ ենթադրության հիմք կարող է ծառայել Կապուտանի ամրոցից ոչ հեռու տեղադրված աստիճանաձև պատվարների համակարգը: Թեպետ ամրոցի տարածքում պեղումներ չեն իրականացվել, սակայն հատակագծային առանձնահատկությունները և շինարարական արվեստը թույլ են տալիս ենթադրել, որ այն պատկանում է բիայնական ժամանակաշրջանին (հետազոտությունները՝ Գ. Սարգսյանի, Լ. Մկրտչյանի, Ա. Գնունու), երբ

ռոտզման համալիրները սրբազործվում էին պետական պաշտամունքի համատեքստում:

## Եզրակացություններ

Բազմագործառնության սրբազան-աշխարհիկ լանդշաֆտային համալիրներում ռոտզման համակարգերը կատարում էին հանգուցային դեր՝ շաղկապելով համալիրի տարբեր բաղադրատարրերը և հանդիսանալով տվյալ հանրության կենսաապահովման հիմնական գործոնը: Ընդ որում, ռոտզման համակարգերը կարող էին ձևավորվել ինչպես բնական տեղանքի հնարավորությունների օգտագործմամբ, այնպես էլ արհեստական լանդշաֆտային համալիրների կազմավորմամբ:

Այս համակարգում կարևորագույն դերակատարում ունեին ծիսապաշտամունքային օբյեկտները, որոնք պետք է ապահովեին համակարգերի ծիսական մաքրությունն ու անվտանգությունը: Խորհրդանշական պաշտպանության համակարգը ներառում էր բնական աղբյուրների մոտ, գետերի ակունքներում, ջրանցքների սկզբնակետերում և հանգույցներում, բնական և արհեստական ջրավազանների ափերին տեղադրված վիշապ-քարակոթողները, մենհիրները, ծիսական աշտարակները, քարակույտ-հարթակները: Սրբազործված այս տարածքը, համարվելով ծիսականորեն մաքրագործված, նաև դամբարանադաշտերի տեղակայման վայր էր: Մինևույն ժամանակ, ելնելով ինչպես կրոնական պատկերացումներից, այնպես էլ գործնական նկատառումներից, անհրաժեշտ էր սահմանափակել տվյալ տարածքների հասանելիությունը, հետևաբար չի բացառվում դրանց մոզարգելված լինելը: Միասնական էր ընկալվում ոչ միայն ռոտզման համակարգը, այլև դրա գործառնումն ապահովող ծիսապաշտամունքային օբյեկտների ամբողջությունը, ինչի ապացույց են, այսպես կոչված, ջրագծերի քարտեզները՝ ռոտզման ցանցի սխեմատիկ պատկերները ժայռաբեկորների վրա:

Վանի թագավորության շրջանում ռոտզման համակարգերում որոշակի նորություններ են ներմուծվում: Եթե բրոնզի և երկաթի դարերում շեշտադրումը կատարվում էր անձրևաջրերի և ձնհալի ջրերի օգտագործման վրա, ապա Վանի թագավորության ժամանակաշրջանում, միասնական պետության պայմաններում արժևորվում էր կայուն և անխափան ռոտզումը, ծիսապաշտամունքային համալիրները ենթարկվում էին պետական կանոնակարգման, ինչի մասին են վկայում puluse տիպի կոթողները՝ արքայական արձանագրություններով և անեծքի բանաձևերով:

## Նշումներ և շնորհակալություններ

Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Հայաստանի բրոնզ-երկաթե դարյան ծիսական լանդշաֆտի մոդելավորում» նախագծի (24SSAH-6A036) շրջանակում:

## Acknowledgements

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project №24SSAH-6A036) entitled “Modeling of the Bronze-Iron Age Sacral landscape of Armenia”.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Aghakhanyan, G. (1960). Development of water economy in Armenia. Haypethrat (in Armenian).
- Alishan, Gh. (1890). Ayarat, Nature of Armenia. St. Lazar (in Armenian).
- Atrpet (1924). Shirak canal. Research. Monthly Review, 1-2, 31-46 (in Armenian).
- Atrpet (1926). Nairi Civilization. The Gotchnag an Armenian Weekly, 2, 175-177 (in Armenian).
- Atrpet (1929). The basin of Chorrok. Vienna Mkhitarian Printing House (in Armenian).
- Atrpet (1931). The cult of Dragon fighters. Bazmavep, 7-8, 308-319 (in Armenian).
- Avetisyan, H., Bobokhyan, A., & Sargsyan, G. (2015). The sacred landscape of Bronze-Iron Age Syunik. Yerevan State University (in Armenian).
- Avetisyan, H., Bobokhyan, A., Gnuni, A., & Danielyan, H. (2015). Open air cultic platforms and their types. Proceedings of the International Conference dedicated to the 50th anniversary of the Excavations of Metsamor Archaeological Site and the 45th anniversary of the Foundation of the Museum-Reservation “Metsamor. The Chronicle of Fifty years of excavations”. Service for the protection of historical environment and cultural museum-reservation, NSCO, 32-51 (in Armenian).
- Available at: <http://www.old.yasu.am/files/bacotyapashmunqayin.pdf>. Accessed on May 20, 2024.
- Avetisyan, H., Bobokhyan, A., Gnuni, A., Mkrtchyan, L., & Avetisyan, N. (2019). Features of the archaeological landscape study. History and culture, 1, 95-107 (in Armenian).
- Avetisyan, H., Bobokhyan, A., Sargsyan, G., Mkrtchyan, L., & Davtyan, A. (2021). Archaeological Landscapes of Al Lakes. In P. Avetisyan & A. Bobokhyan (Eds.), Archaeology of Armenia in Regional Context (pp. 201-214). Institute of Archaeology and Ethnography.
- Barkhudaryan, S. (compiler). (1960). Divan Armenian lithography, Goris, Sisian and Khapan provinces (H. Orbeli, & B. Arakelyan, Eds.), (issue II). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Biscione, R., Hmayakyan, S. G., & Parmegiani, N. (2002). The North-Eastern frontier Urartians and non-Urartians in the Sevan Lake basin. Roma: CNR, Istituto di studi sulle civiltà dell' Egeo e del Vicino Oriente. Available at: <https://lib.ugent.be/catalog/rug01:001915293>. Accessed on June 14, 2024.
- Bobokhyan, A., Gilbert, A., & Hnila, P. (2015). Archeology of Dragon Stones. In A. Petrosyan & A. Bobokhyan (Eds.), Dragon-stones (pp. 269-396). Gitutyun (in Armenian).
- Bobokhyan, A., & Hovhannisyan, K. (2016). Dragon stones in the studies of Taragros. Herald of social sciences, 3, 240-253 (in Armenian).
- Gabrielyan, G. (1961). Chingils of the Armenian Highlands. Nature, 4, 99-100 (in Russian).
- Ghanalanyan, A. (1969). Armenian Traditions (Avandapatum). Academy of sciences of Armenian SSR (in Armenian).
- Gladtsin, I. (1930). Kurums. Nature, 4, 436-444 (in Russian).
- Grigoryan, A. (2014). Alishan's naturalistic and philosophical perceptions. Bazmavep, 1-2, 15-30 (in Armenian).
- Gulakyan, S. (1983). Motives of Index of Armenian Fairy Tales. Yerevan State University (in Russian).
- Harutyunyan, N. (1964). Agriculture and cattle breeding of Urartu. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Haxthausen, A. (1857). Transcaucasian region. Main Staff of the HEM for Educational institutions (In Russian).
- Heidegger, M. (2008). The Source of Artistic Creation. Academic project (in Russian).
- Kalantar, A. (2007). Armenia. From Stone age to Middle Ages. Gitutyun (in Armenian).
- Kareev, N. (2011). Historiology. Libriscom (in Russian).
- Khachatryan, M. (1971). The Engraved Drawing of the pre-Urartian water distribution system of Aragatsotn. Herald of social sciences, 3, 127-137 (in Armenian).
- Khanzadyan, E., Mkrtchyan, K., & Parsamyan E. (1973). Metsamor. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Lalayan, Y. (1898). Traditions about Alexander The Great. Ethnographic Journal, 3(1), 171-172 (in Armenian).
- Lalayan, Y. (1906). Nor Bayazet province or Gegharkunik. Ethnographic journal, 15, 165-206 (in Armenian).
- Levy-Bryul, L. (1994). Supernatural in primitive thinking. Pedogogika (in Russian).
- Markaryan, E., Arutyunov, S., Barseghyan, I., Yengibaryan, S., Melkonyan, E., & Sarangulyan, K. (1983). Culture of life support and ethnicity. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Mkhitarean, A. (1904). To Ararat. Hermes (in Armenian).
- Parrot, F. (1990). From Dorpat to Ararat. Hayastan (in Armenian).
- Pharadjeva, M. (2009). Rock art of Azerbaijan. Aspoliqraf (in Russian).
- Rabinovich, E. (1973). Well of Shamash. Bulletin of Ancient History, 2, 103-105 (in Russian).
- Rigveda (1989). Mandalas I-IV. Nauka (in Russian).

- Rubruk, W. (1900). The Journey of William of Rubruk to the Eastern Parts of the World, 1253-1255. Printed for the Hukluyt Society.
- Sargsyan, G., Gnuni, A., & Mkrtchyan, L. (2022). Castles of the Kashatagh Region of the Republic of Artsakh. Nrane (in Armenian).
- Shirmazan, G. (1962). Episodes from the History of Irrigation in Armenia. Haypetgyughrat (in Armenian).
- Shopen, I. (1852). Historical monument to the state of the Armenian region during the era of its annexation by the Russian Empire. Imperial Academy of Sciences (in Russian).
- Sorokin, P. (1991). Human, civilization, society. Political literature (in Russian).
- Taghiadean, M. (1846a). The view on Masis. Azgaser, B(33), 104 (in Armenian).
- Taghiadean, M. (1846b). The view on Lesser Masis. Azgaser, B(38), 142-143 (in Armenian).
- Taghidean, M. (1975). Travel notes, articles, letters, documents. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Ter-Movsisean, M. (2010). Collection of Articles. Etchmiadzin (in Armenian).
- Torosyan, R. (n.d.), Ancient water supply systems of Vagharshapat and their remains. Etchmiadzin Historical Ethnographic Museum (in Armenian).
- Tsocikean, S. (1917). Caucasia-Ararat. Frezno (in Armenian).
- Vernardsky, V. (1944). A few words about the noosphere. Advances in modern biology, 18(2), 113-120 (in Russian).
- Yaqut al-Hamawi, (1965). Geographical Dictionary. Foreign Sources about Armenia and Armenians, Arabic sources, 3. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Zaikov, B., Belinkov, S. (1932). Hydrological studies in the Sevan Lake basin. Materials on the study of Lake Sevan and its basin. Transcaucasian Sevan Committee (in Russian).



# “ALALU SONGS AND THE IMAGE OF ASTGHIK”: IRRIGATED AGRICULTURE ORGANIZATION SPECIFICS IN ANCIENT VASPURAKAN

*Arsen Bobokhyan*

*Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia*

## Abstract

The present work reveals the mechanisms of formation of irrigated agricultural landscapes in ancient Armenia, and refers to the features of their ritualization, taking the area of historical Vaspurakan as an example. Moreover, Vaspurakan is chosen as a research target not only because the most important data on the irrigated agricultural landscape of the region originate from here, but also because it is the key zone of the first highly organized society of the Armenian Highland, the Kingdom of Urartu, a society that greatly contributed to the history of organization of irrigated agricultural areas at the interregional level.

Written (cuneiform, Armenian) and archaeological data restore a stable model of organization of the irrigated agricultural area for the Armenian Highland, the semantic bundle of which consists of the following elements: the construction of a canal by the initiative of the elite (bringing water from the high mountainous regions) – creation of a fertile zone (garden, field, meadow) – construction of cultic structures (statue, tower) – ceremonies accompanied by ritual songs and sacrifices.

Based on archaeological data of recent years, related to the research of dragon stones placed at the sources of irrigation systems, the roots of this model can be traced back to the early agricultural societies.

It becomes clear that the organization of the agricultural landscape, regardless of its being communal or state-oriented, has always been accompanied by ritual practices, which legitimized = sanctified the economic initiative.

**Keywords:** Armenian Highland, Vaspurakan, Bronze and Iron Ages, Urartu, irrigated agricultural landscape, dragon stone.

## «ԱԼԱԼՈՒ ԵՐԳԵՐՆ ՈՒ ԱՍՏԴԻԿԻ ՊԱՏԿԵՐԸ». ՈՌՈԳՈՎԻ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

*Արսեն Բոբոկյան*

*ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

## Ամփոփագիր

Ներկայացվող աշխատանքում ցույց են տրվում ռոտոնդի երկրագործական լանդշաֆտների ձևավորման մեխանիզմները հին Հայաստանում, անդրադարձ է կատարվում դրանց ծիսականացման հատկանիշներին՝ որպես օրինակ օգտագործելով պատմական Վասպուրականի տարածքը: Ընդ որում, Վասպուրականը որպես հետազոտական թիրախ է ընտրվել ոչ միայն այն պատճառով, որ այստեղից են ծագում ռոտոնդի երկրագործական լանդշաֆտի վերաբերյալ ամենաուշագրավ տվյալները, այլև այն պատճառով, որ այն Հայկական լեռնաշխարհի առաջին գերկազմակերպված հասարակության՝ Ուրարտուի առանցքային գոտին է, մի հասարակություն, որը մեծ ավանդ ունի ռոտոնդի երկրագործական տարածքների կազմակերպման պատմության մեջ:

Գրավոր (սեպագրական, հայկական) և հնագիտական տվյալները վերականգնում են ռոտոնդի երկրագործական տարածքի կազմակերպման՝ Հայկական լեռնաշխարհի համար կայուն մի մոդել, որի իմաստաբանական բույրը բաղկացած է հետևյալ տարրերից՝ վերնախավի նախաձեռնությամբ ջրանցքի անցկացում (ջուր բերելով բարձր լեռնային շրջաններից) – բարերբ գոտու (այգի, դաշտ, մարգագետին) ստեղծում – պաշտամունքային կառույցների (արձան, աշտարակ) կերտում – ծիսական երգերով և զոհաբերություններով ուղեկցվող արարողություններ:

Ելնելով վերջին տարիների՝ ռոտոնդի համակարգերի ակունքներում դրված վիշապ քարակոթողների հետազոտության հետ կապված հնագիտական տվյալներից՝ այս մոդելի արմատները կարելի է տանել մինչև

վաղ երկրագործական հասարակություններ: Պարզվում է, որ երկրագործական կենսատարածքի կազմակերպումը, անկախ դրա համայնքային կամ պետական լինելուց, մշտապես ուղեկցվել է ծխական արարողությամբ, ինչով օրինականացվել (=սրբացվել) է տնտեսական նախաձեռնությունը:

**Հիմնաբանը.** Հայկական լեռնաշխարհի, Վասպուրական, բրոնզի և երկաթի դարեր, Ուրարտու, ռոռգովի երկրագործական լանդշաֆտ, վիշապաքար:

### Ներածություն

Գրավոր (սեպագրական, հայկական) և հնագիտական տվյալները վերականգնում են ռոռգովի երկրագործական տարածքի կազմակերպման՝ Հայկական լեռնաշխարհի համար կայուն մի մոդել, որի իմաստաբանական բույրը բաղկացած է հետևյալ տարրերից՝ համայնքի կամ վերնախավի նախաձեռնությամբ ջրանցքի անցկացում (ջուր բերելով բարձր լեռնային շրջաններից) – բարեբեր գոտու (այգի, դաշտ, մարգագետին) ստեղծում – պաշտամունքային կառույցների (արձան, աշտարակ) կերտում – ծխական երգերով և գոհաբերություններով ուղեկցվող արարողություններ: Հողվածում այս մոդելի կենսունակությունը ցույց է տրվում պատմական Վասպուրականի օրինակով: Ընդ որում, Վասպուրականը որպես հետազոտական թիրախ է ընտրվել ոչ միայն այն պատճառով, որ այստեղից են ծագում ռոռգովի երկրագործական լանդշաֆտի վերաբերյալ ամենաուշագրավ տվյալները, այլև այն պատճառով, որ պատմական այս գոտին լեռնաշխարհի առաջին գերկենտրոնացված պետության՝ Ուրարտուի առանցքային շրջանն է, մի հասարակություն, որը մեծ ավանդ ունի ռոռգովի երկրագործական տարածքների կազմակերպման պատմության մեջ՝ միջտարածաշրջանային մակարդակով: Հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ երկրագործական կենսատարածքի կերտումը, անկախ դրա համայնքային կամ պետական լինելուց, մշտապես ուղեկցվել է ծխական պրակտիկայով, ինչով օրինականացվել = սրբացվել է տնտեսական նախաձեռնությունը:

Հայկական լեռնաշխարհն իր հարուստ ջրային պաշարներով եղել է մի կողմից սիրիա-միջագետքյան գոտու մատակարարը, մյուս կողմից՝ ապահովել է ներքին ենթաշրջանների ջրաբաշխումը: Գարնանը ձնհալի ջրերը բարձր լեռներից հոսել են դեպի դաշտավայրեր<sup>1</sup>: Արհեստական լճակների ու ջրանցքների բարդ համակարգի միջոցով, լեռնային գետակների ռեժիմի կարգավորման արդյունքում լեռնաշխարհի բնիկները կարողացել են արդյունավետ օգտագործել ջրային պաշարները՝ դրանք ուղ-


ղորդելով դեպի նախալեռնային և դաշտավայրային շրջաններ (մանրամասների համար տե՛ս Qalantar, 1937): Ներկայացվող աշխատանքն իր առջև խնդիր է դնում ցույց տալ հին Հայաստանում ռոռգովի երկրագործական վերոհիշյալ գործընթացների ձևավորման մեխանիզմները, անդրադառնալ դրանց ծխականացման հատկանիշներին՝ որպես հիմք ընդունելով պատմական Վասպուրականի տարածքը:

### Ռոռգովի երկրագործական կենսատարածքի «վասպուրականյան» մոդելը

Ասորեստանի արքա Սարգոն II-ի Աշուր աստվածությանն ուղղված նամակում նկարագրվում է մ.թ.ա. 714 թ. դեպի Ուրարտու նրա արշավանքը: Այստեղ Սարգոնը հիշատակում է Վասպուրականի Մարանդ գավառում, լեռան լանջին գտնվող ամրացված Ուլիու քաղաքը, որի շրջակայքում Ուրարտուի արքա Ուրասն կերտում է երկրագործական լանդշաֆտ՝ բազմաթիվ հուններով ջրանցք է փորում, ջրով ու պտղաբերությամբ լցնում ամայի տարածքները՝ դրանք դարձնելով պտղատու գոտիներ, խաղողի այգիներ, ցորենի դաշտեր, մարգագետիններ, իսկ մարդկանց տալիս «ուրախ ալալու երգելու» հնարավորություն (Dyakonov, 1951; Oganesyanyan, 1973; Tahmizyan, 1977; Daniel Yerazhisht, 2022).

Երկրագործական տարածքի կերտման այս ձևը հանդիպում է նաև հետագայում, որի փայլուն օրինակ է ներկայացված Թովմա Արծրունու՝ Արտամետ քաղաքի հիմնադրման պատմության մեջ: Ըստ այդ պատմության՝ Արտաշես արքան օգտագործում է «վերևում» ցայտող աղբյուրը և ջրի պահպանության համար ամուր պարսպում քարաբլուրը, իսկ գոգաձև հովտում կառուցում է աշտարակ՝ Աստղիկի պատկերով: Այնտեղ՝ լեռան գագաթի հարավակողմում, գտնում է սակավաբույս աղբյուր, որից ջրմուղ անցկացնելով, ջուրը բերում է հովիտ՝ այն դարձնելով ծառաշատ ու այգեվետ: Ապա պատմիչը հիշատակում է «Մուկավետ լեռան վրայի սրբերը», մասնավորապես՝ Քոյուս սրբի պաշտամունքը, և, որ Արտաշեսի կին Սաթենիկը «չիրաժարվեց Աստղիկի պատկեր անվանված կոռքերից»<sup>2</sup>:

1 Եփրատի վարարումների համատեքստում Միջագետքի ռոռգման համակարգի մասին խոսելով՝ Ստրաբոնը (XVI, 1, 9) գրում է. «Ընդ որում, ջուրը սկսում է գալ գարնանը, Հայաստանում ձնհալի ժամանակ» (հմմտ. Andrianov, 1978, 93): Նույն կերպ Արարատի հավիղ ձյան ջրերի հավաքման և պարսից կառավարության կողմից ջրանցքով վար ուղղորդման մասին է վկայում Ֆ. Պարրոտը (1990, 64):  
2 Թովմա Արծրունի I. Ը: Արտամետի հիմնադրման պատմության մեջ Արծրունին նկատի ունի Վարազ լեռը, թեև դրա անունը չի տալիս, իսկ մինչ այդ հիշատակում է դիմացը երևացող Մասիքը՝ Միփանը: Ասվածի օգտին է խոսում նաև Վարազա լեռ-



Նկ. 1. Վանա լճի ավազանը. ըստ տեքստում հիշվող հիմնական տեղանունների (Source: A. Ananyan)

Ինչպես Սարգոնի, այնպես էլ Թովմա Արծրունու վկայության մեջ ռոտզովի երկրագործական տարածքի կերտումն ուղեկցվում է ծիսական պրակտիկայով: Առաջին դեպքում մարդիկ երգում են «ալալու» կոչված երկրագործական կամ հունձքի, բերքահավաքի երգեր (Ի. Դյակոնովի թարգմանությամբ՝ жатвенные песни), երկրորդ դեպքում կերտվում է աշտարակ/արձան՝ Աստղիկի պատկերով:

Ռոտզովի երկրագործական լանդշաֆտի կազմակերպման այս մոդելն ավելի վաղ ակունքներ ունի (հասնելով մինչ վաղերկրագործական հասարա-

կություններ) և արտահայտված է մի կողմից Աստղիկի պատկերը խորհրդանշող, Վանա լճի շրջակայքում փաստագրված, բարձրլեռնային ռոտզման համակարգերի ակունքներում գտնվող վիշապ քարակոթողներով և դրանց համապատասխան հնագիտական միջավայրով (աշտարակներ, դամբարանաբլուրներ, ևն) (Bobokhyan, 2020a, 6–8, 98–102)<sup>3</sup>, մյուս կողմից՝ քարե վիշապ Ուլիկումիի մասին խոսիական վիպերգով, որտեղ Ալալուն աստվածների առաջին արքան է, իսկ նկարագրվող լանդշաֆտը՝ Վանա լճի շրջակայքը (Petrosyan, 2006, 24–29; Bobokhyan 2019)<sup>4</sup>:

նահովտում գտնվող Աստղիկի մեհյանի կամ Աստղկան բերդի մասին առկա ժողովրդական ավանդագրույցը. այն մի մեծ քարաբարձունք է՝ շրջապատված բնական հրաշալի տեսարաններով (Ghanalanyan, 1969, 211):

3 Վիշապաբարերի առկայությունն Աստղիկի հետ առաջարկել է Մ. Աբեղյանը (1941): Այդ կապի այլ հիմնավորումների մասին հմնտ. Բոբոխյան 2020բ, 262: Փաստորեն Արծրունու մոտ խոսեցված է հավաքական մի հիշողություն, որը կարող է վերաբերել Արտաշեսից շատ ավելի վաղ ընկած ժամանակներին: Այստեղ, բացի վիշապային միջավայրերի նկարագրությունը, ուշագրավ է նաև Արտամետի ջրանցքի հիշատակման հանգամանքը. ինչպես հայտնի է, Արտամետը գտնվում է Մենուայի (Շամիրամի) ջրանցքի կարևոր հատվածում:

4 Ալալուներն ինչ-որ կերպ պահպանվել են հայկական հիշողության մեջ. մասնավորապես առկա են ժողովրդական երգեր, որոնցում կան խոսիական աստվածություններին, այդ թվում՝ Ալալունի հիշեցնող տարրեր (Simonyan, 2014, 216, հմնտ. Simonyan, 2006, 113, 180): Խոսքը, թերևս, հորովելների մասին է, որոնք կարող էին նվիրված լինել նաև վիշապներին, ընդ որում՝ դրանց իգական-ձկնային մարմնավորումն Աստղիկից բացի, նաև՝ արական-եգա/ցային մարմնավորումն Արային, ինչի մասին Գ. Ղափանցյանը գրում է. «Արան այս կապակցությամբ մարմնավորվում է եզի մեջ, որ տեսնում ենք նրա քարակոթողների վրա: Նրա գոհված գլուխը և մորթին դրվում է բազմի վրա և պաշտվում: Եզի գանգը դրվում է ծառերի վրա, որ բերքը շատ լինի և աչքով չտան: Մեր հողագործը եզն անձնավորում է՝ իր երգի մեջ «եզօ» անվանելով, նման մարդկանց անուններին, այսինքն՝ Արային է կարծես թե անդրապատկերում, – մի սրբազան պաշտամունք, որ այդքան տաղանդավոր կերպով ձայնագրել է Կոմիտասը իր «Կալի երգում», որի վերջին նվագը հիշեցնում է «Շտրիեա տեր» եկեղեցական նման մոտիվը՝ ուղղված, կարծես թե, նույն Արային՝ տիրոջը, որ առատ բերք շնորհի (թերևս հորովելը հենց ստացվել է Արա-վել նախահայկական բառերից՝ նշանակելով «Արա շնորհի» կամ «Արա օգնի» և նման բան)» (Ghapantsyan, 1945, 158): Դա-

Երկրագործական կենսատարածքի ստեղծման «վասպուրականյան» տարբերակում արքան (= վերնախավը) հանդես է գալիս որպես դեմիուրգ՝ մարդկանց շնորհելով ջուր և պտղաբերություն: Բայց առկա տեղեկություններում, որպես ենթատեքստ, տեսանելի է նաև համայնքային կամ ժողովրդական նախաձեռնությունը:

Այսպիսով, առկա տվյալները վերականգնում են ռոտոգովի երկրագործական տարածքի կազմակերպման մի տարբերակ, որին բնորոշ է վերնախավի (և համայնքի) նախաձեռնությամբ ջրանցքի անցկացում (ջուր բերելով բարձր լեռնային շրջաններից), երկրագործական գոտու ստեղծում, ինչն ուղեկցվում է ծխական կառույցների կերտմամբ և համապատասխան արարողություններով:

**«Վասպուրականյան» մոդելի գուգահեռները**

Ռոտոգովի երկրագործական տարածքի կազմակերպման վերոհիշյալ մոդելը բնորոշ պիտի լինի ողջ Հայկական լեռնաշխարհի համար: Այստեղ բերենք նույն բովանդակության երկու օրինակ պատմական Տարոնից և Արարատից:

Այսպես, Խորխորյան տարեգրության մեջ Արգիշտի I-ը հիշատակում է Տուարածինեի հովտի գրավման և այստեղ ջրանցք անցկացնելու մասին: Այս հովիտը նույնականացվում է Վանա լճից հյուսիս-արևմուտք, Հարքի և Բագրևանդի միջև գտնվող հայկական Տուարածատափի հետ: Տուարածինեի հովտի շրջանում է հիշատակվում Գուրքու լեռ/քաղաքը, որը նույնացվում է Քարքեին, Աշտիշատ քաղաքի մոտ, իսկ Տուարածատափ բառը նշանակում է «հովիվների հովիտ» (Harutyunyan, 1964): Նշված գոտին հայտնի է նաև հայկական միջնադարյան աղբյուրներից և իր բովանդակությամբ մեզ վերստին տեղափոխում է նախապատմական շրջան: Մասնավորապես Ջենոբ Գյակի՝ Գիսանե և Դեմետր եղբայրների՝ Հոդկաստանից Տարոն տեղափոխվելու և այստեղ Վիշապ քաղաքի կառուցման մասին տեղեկության համատեքստում Կ. Այվազյանը, ըստ էության զարգացնելով Ն. Մառի տեսակետը (Mar, 1924), գրում է, որ «այդ անունը տանում է մեզ դեպի ձուկ-վիշապների առեղծվածային

կոթողների պատկերները»: Վիշապներին և դրանց կոթողներն առնչելով հիմնականում Գիսանեին (հետագայում՝ Սբ. Կարապետին)՝ հեղինակը շեշտում է, որ վերջինիս արձանը գտնվում էր Քարքե լեռան վրա, Իննակնեան աղբյուրների և ամառային արտավայրերի միջավայրում. Բացի դա, Գիսանեն հայտնվում էր ամպրոպային միջավայրում՝ անձրևից առաջ՝ մարմնավորելով երկրային և երկնային ջրերը, նրան զոհաբերում էին ցլեր և խոյեր (Ayvazyan, 1976): Եթե հաշվի առնենք Տարոնից հնագիտորեն հայտնի վիշապ քարակոթողները և ռոտոգմանն ու ծխական լանդշաֆտներին դրանց առնչության հնագիտական համատեքստերը (Bobokhyan, 2020a)՝ ակնհայտ նմանություններ կգտնենք Վասպուրականի երկրագործական տարածքների կազմակերպման վերոհիշյալ մոդելի հետ:

Ուրարտական արձանագրություններում նկարագրվում են նաև Արարատյան դաշտում իրականացված ռոտոգման նախաձեռնությունները: Դրանցից հիշենք միայն Ռուսա II-ի Զվարթնոցի սեպագիր արձանագրությունը, որտեղ արքան նշում է Կուառլինի երկրի անմշակ հովտի, նրա դաշտերի մշակման, խաղողի այգիների ու նոր ցանքադաշտերի հիմնման, Իդարունիա գետից Ումեշինի անվամբ ջրանցք անցկացնելու, ինչպես նաև Խալդի, Թեյշեբա, Շիվինի, Անիկու աստվածություններին զոհաբերություններ մատուցելու մասին (Harutyunyan, 2001): Եթե Կուառլինին Զվարթնոցի շրջանն է, ապա բացառված չէ, որ Զվարթնոցում գտնվող սրբավայրը մինչուրարտական շրջանում առնչվել է Կուեռա-Կուառ պտղաբերության և քաղցրահամ ջրերի վիշապաբնույթ աստվածության հետ (Hmayakyan, 1990; Bobokhyan et al. 2019): Արարատյան դաշտի ռոտոգման համակարգը մշտապես նկարագրվել է միջնադարյան հայ հեղինակների կողմից, որոնցից հատկապես հիշարժան է Ղազար Փարպեցու վկայությունը (Parpetsi, I): Եթե հաշվի առնենք, որ Արարատյան դաշտը եզերող բոլոր լեռները (Արագած, Գեղամա, Հայկական պար և Արարատ) հայտնի են պաշտամունքային վիշապ քարակոթողներով, որոնք դրված են եղել ռոտոգովի համակարգերի հանգուցակետերին՝ ուղղվելով դեպի Արարատյան դաշտ (Bobokhyan 2020, 6-8, 98-102; Bobokhyan, Tarontsi 2020)<sup>5</sup>, ապա պարզ կլինի, որ

նիել Երածիշտը Ուրաս-Ուլխուի և ալալունների հիշատակման նույն համատեքստում գրում է. «Իսկ երբ լսում ենք Կոմիտասի երգերը, խմբերգերը, մասնավորապես՝ գութաներգերը, սայլերգերը, կալերգերը, մեր առջև հառնում է Հայոց բնաշխարհը, որը հայերը շենացրել են դեռ Ուրարտուի ժամանակաշրջանում՝ մ.թ.ա. 8-րդ դարում» (Daniel, 2022, 70):

5 Գրականության մեջ բազմիցս խոսվել է Արագածի և Գեղամա լեռների մշակութային լանդշաֆտի ու մասնավորապես վիշապաքարերի մասին, մինչդեռ ավելի քիչ է շեշտվել Մասիսը: Մակայն Մեծ ու Փոքր Մասիսները և Հայկական պարը հայտնի են ջրանցք-ջրավազաններով (Chopin, 1832, 420–421; Parrot, 1990, 64): Ճաստապարհորդ Ա. Մյսիթայրյանն Արարատի բարձունքների հնությունների մասին գրում է. «Մասիսի ուշադիր այցելուն ամեն մի քայլափոխում հանդիպում է մի հին, հրաշալի, կորած կուլտուրայի հետքերի, որ գիտեր օգուտ քաղել նույնիսկ լեռնային այս դժվարակոխ լանջերից և նրա զատիվները, ուր միայն կար ամենափոքր հնարավորություն, դարձնել պարտեզ ու այգի»: Նա, մասնավորապես, հիշատակում է կիկլոպյան պատեր, հսկայական ջրանցքներ և պատվար-պատնեշներ, աշտարական մեծ կառույցներ՝ ատամնավոր կատարներով, որ «կրում են խորին հնության կնիք» և պատկանել են «մի հին ու ջքնաղ քաղաքակրթության»: Աշտարակների

խոսքը վերստին երկրագործական լանդշաֆտի կերտման նույն մոդելի մասին է:

### Ոռոգովի կենսատարածքի երկակի գործառույթը

Ոռոգումն ունեցել է երկու կարևոր գործառույթ՝ տնտեսական և, դրանից բխող՝ ծիսապաշտամունքային: Առաջին տեսանկյունից ոռոգման համակարգի կազմակերպումը հաճախ եղել է պետականության առաջացման, իսկ դրա խանգարումը՝ պետականության անկման պատճառ, ինչը տեսանելի է նաև Հայկական լեռնաշխարհի ողջ պատմության ընթացքում (Andrianov, 1978; հմմտ. Marr, Smirnov 1931; հմմտ. Mikhankova, 1949; Yovsepean, 1941): Այսպես, ոռոգման համակարգերի մասին մեր տվյալները բրոնզ-երկաթեդարյան, ուրարտական, հին և միջնադարյան Հայաստանից վկայում են, որ ջրային տնտեսության կազմակերպումը մշտապես էական դեր է խաղացել հասարակական ներուժի կենտրոնացման ընթացքում (Areshian 2007; Belli 1997; Grekyan, 2002; Grekyan, 2013–2014; հմմտ. Harutyunyan, 1971; Bdoyan 1972):

Խոսելով հնագույն Հայաստանում պետականության ձևավորման գործընթացի մասին՝ Հ. Մարտիրոսյանն ընդգծում է անասնապահության և երկրագործության բարձր զարգացման մասին, ինչի խթան հանդիսացավ ոռոգման համակարգի ստեղծումը: Ճիշտ է, ոռոգման համակարգը չհասավ զարգացման միջագետքյան մակարդակին, բայց այն ուներ իր տեղական առանձնահատկությունները: Բարձրադիր շրջաններում՝ ալպյան մարգագետինների կից, ստեղծվում էին ջրանցքների ու ջրավազանների համակարգեր, որոնց մի մասը մինչև այժմ պահպանվել է Արագածի ու Գեղամա լեռների լանջերին՝ վիշապ քարակոթողների հարևանությամբ (Martirosyan, 1971): Ոռոգման աշխատանքների աճը զուգորդվում էր այլ սոցիալական խոշոր փոփոխությունների հետ<sup>6</sup>:

Ոռոգման համակարգի կազմակերպումը կատարելության է հասնում ուրարտական շրջանում: Վանի թագավորության արքաները մեծ ճարտարապետներ էին և նվաճված տարածքները թալանելուց բացի դրանցում նաև բարեկեցություն էին ապահովում՝ ջրանցքներ և այգիներ հիմնելու միջոցով: Պատահական չէ, որ գրավված տարածքներում նրանց առաջին գործերից մեկը ջրանցք և այգի հիմնելն էր, որով արքան հաստատում էր իր իշխանությունը: Ընդ որում, ուրարտական արքաները ջրաբաշխական համակարգ և այգիներ հիմնելը հաճախ համարում էին «տղամարդուն հատուկ գործ/հերոսություն» (Harutyunyan, 1964): Առաջին հայացքից ստեղծվում է տպավորություն, թե Ուրարտուի տարածումը ջրաբաշխական համակարգի և այգեգործական գոտիների տարածման պատմություն է: Իսկ ավելի ճշգրիտ՝ Ուրարտուի տարածումը վարչական համակարգի և տնտեսակարգի տարածում էր, որը հիմնված էր երկրի բնական (ջուր, հանքեր) և մարդկային ներուժի արդյունավետ օգտագործման վրա:

Բ. Պիտրովսկին ենթադրում է, որ ուրարտացիներն ընդլայնում էին այն ջրաբաշխական համակարգերը, որոնք արդեն գոյություն ունեին տեղական միջավայրում մինչ նրանց այդտեղ գալը: Այդպիսի ջրանցքներ հանդիպում են Հայաստանի տարբեր շրջաններում, որոնց կից գտնվում են վիշապ քարակոթողներ (Piotrovski, 1944): Ն. Հարությունյանը, քննարկելով լեռնային ոռոգման խնդիրը, նույնպես գտնում է, որ Ուրարտուն օգտագործում էր տեղական բնակչության դարերով ձևավորած համակարգը, որը հայտնի է արհեստական լճակներով, ոռոգովի ջրանցքներով և դրանց հանգուցակետերում գտնվող ու ոռոգման պաշտամունքին առնչվող վիշապ քարակոթողներով: Այս կառույցները նախորդել են Արարատյան դաշտի ուրարտական նվաճումներին, ինչի մասին վկայում է նաև Արգիշտի I-ի՝ վիշապաքարի վրա փորագրված Գառնիի արձանագրությունը: Հնարավոր է, որ ուրարտական արշավանքների ժամանակ լեռնային ոռոգման

կապակցությամբ գրում է. «Մեր առասպելական քաջերի բնակարանները չեն արդյոք դրանք» (նկատի ունի Արտավազդի պատմությունը): Ջրանցքի մասին գրում է. «Ջրանցքն սկսվում է երկու խորանոթների խաչաձև կտրվածքից, դեպի ուր հոսում են Մասիսի հավիտենական ձյունների ու սառույցների ամենաստորին սահմանից բխած ջրերը, և այս ցիկլոսայան ջրանցքը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի արհեստական շտեմարան, ուր ամբարվում էին Մասիսի այնքան թանկագին ջրերը ու հոսում դեպի Կոզովտի՝ մի ժամանակ բարեբեր և բուսաշատ, իսկ այժմ չոր, ամայի, սմբակ գավառը»: Մի այլ տեղ նա Փոքր Մասիսի վրա հիշում է «օդուզի գերեզմաններ» (Mkhitarian, 1904, 17, 86–88, 147–148, 154):

6 Որոշ հեղինակներ, ոռոգման անսխալաբեր զարգացումը, օրինակ՝ ուշ բրոնզի դարում, զուգահեռում են կիկլոսայան ամրոցների տարածման և ոսկու լայն շահագործման հետ (Pitskhelauri, 1988, 218–225; Kalantaryan, 2007, 30): Այս համատեքստում վերստին քննարկվում է վիշապաքար երևույթը. մասնավորապես ենթադրվում է, որ այդ կոթողները կանգնած են եղել այն ոռոգման համակարգերի հանգուցակետերում, որոնք սնում էին ցածրադիր ամրոցներն ու բնակավայրերը: Ն. Տոկարսկին, խնդիրը դիտելով լայն ժամանակագրական տեսանկյունից, գրում է, որ վերնախափն իր ամրոցները երբեմն կառուցում էր բարձր լեռներում, որի պատճառներից մեկը ջրամատակարարման համակարգի վերահսկումն էր: Այդպիսին է Ամբերդի օրինակը, որը պիտի վերահսկեր Արագածի հարավային փեղերի հավիտյան ջրուն ամբարոջ ջրամբարների համակարգը: Ապա հեղինակն ավելացնում է. «Արագածի ջրահավաք կառույցները, ինչպես երևում է, վերաբերում են հնագույն ժամանակներին, քանի որ դրանց մոտ՝ Ամբերդից վեր, հայտնաբերվել են վիշապներ՝ հսկա ձկների քարե արձաններ, որոնք ոռոգման հովանավորներն էին և, որպես կանոն, հանդիպում են հին, այժմ մոռացված արհեստական ջրամբարների մոտ» (Tokarsky, 1961, 42. վիշապաքարերի ու մեհիբրների՝ ամրոց-բնակավայրերի համակարգում դիտարկման այլ օրինակի համար հմմտ. Mnatsakanyan, 1968, 181):

համակարգը մասամբ տուժել է և շարքից դուրս եկել: Սակայն բացառված չէ նաև, որ ուրարտական տիրապետության շրջանում ստեղծվել է տեղական երկրագործության ու այգեգործության զարգացման նոր հնարավորություն: Ուրարտացիները մի շարք ենթագոտիներում, հատկապես պետության հյուսիսային շրջաններում, թերևս ընդլայնել և բարելավել են բնիկների կողմից ստեղծած հիշյալ ռոտզման համակարգերը: Այս իմաստով, իհարկե, չափազանցություն են ուրարտական արքաների այն վկայությունները, թե մինչև իրենց կողմից ռոտզման համակարգերի և այգիների հիմնումը, այդ տարածքները եղել են անմշակ և այգիներ գոյություն չեն ունեցել (Harutyunyan, 1964; Գառնիի վիշապաքարի և արձանագրության վերաբերյալ հմնտ. Dan et al. 2023):

Ետուրարտական շրջանում շարունակել են զուգահեռաբար գործել մի կողմից ավանդական-նախաուրարտական ռոտզման համակարգը, մյուս կողմից՝ պետական գերկազմակերպված և կենտրոնացված ռոտզումը (մանրամասների համար տես Aghakhanyan, 1960; Shirmazan, 1962; Yepremyan, 1992):

Ռոտզման երկրորդ՝ ծիսապաշտամունքային գործառույթի տեսանկյունից դրա խորհրդանիշ է մշտապես եղել վիշապը (Dalalyan, 1999): Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր գոտիներում վիշապը կապվել է ջուրը փակելու և բացելու հետ. ջուրը բացելու և անձրև բերելու համար երկրագործական բնույթի մշտական ծեսեր են կատարվել (Bdoyan, 1950, Litsyan, 1992): Ն. Մառի մտքերի և Ա. Քալանթարի իրականացրած կոնկրետ դաշտային աշխատանքների արդյունքների համադրությամբ զարգացվեց այն տեսակետը, թե վիշապաքարերը գտնվել են դաշտավայրերը ջրով ապահովող ջրաբաշխական համակարգերի կարևոր հանգուցակետերում և ուղղակիորեն կապված են դրանց հետ: Վիշապաքարերը սահմանվեցին որպես ջրի պաշտամունքի խորհրդանիշ և ջրանցքաշինության հովանավոր (Հմնտ. Shirmazan, 1962): Հ. Օրբելի «վիշապ» ձևերի քարե հսկայական արձանները բնորոշում է որպես «հեթանոսական Հայաստանի աստվածություններ», որոնք Հայաստանի ռոտզման համակարգի պահպաններն ու հովանավորներն են եղել (Orbeli, 1925, 1)<sup>7</sup>: Վիշապաքարերի ծաղկման դարաշրջանին՝ միջին բրոնզի դարին է վերաբերում նաև կովկասյան հնա-

գիտության ամենաուշագրավ գտածոներից մեկը՝ Թոնդրի արծաթե գավաթը, որի պատկերագրության մեջ ծառի արմատից երկու գետ է բխում, ինչը մասնագետները կապում են այդ դարաշրջանում ջրի կարևորության և ռոտզման հետ (Kikvidze, 1964)<sup>8</sup>: ղիտարկելով նույն վիշապաքարերի համատեքստում<sup>8</sup>:

Նմանապես ծիսականացված է եղել ուրարտական ռոտզման համակարգի կերտման գործընթացը: Ուրարտական կառավարիչների՝ այս կամ այն ռոտզման կառույցին նվիրված արձանագրությունները, որպես կանոն, դրվում էին ջրանցքների ակունքներում, կամ այն վայրերում, որոնց կառուցումը որոշակի դժվարությունների հետ էր կապված: Գործընթացն ուղեկցվում էր հատուկ ծիսական արարողություններով (Harutyunyan, 1964):

Ծիսական տարրեր առկա են նաև ռոտզման համակարգի ստեղծման միջնադարյան պատկերում: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ պետության բացակայության պայմաններում եկեղեցին էր զբաղվում ջրաշինարարական աշխատանքներով (Bdoyan, 1972): Բերենք մի օրինակ. ըստ ավանդության՝ Գրիգոր Ականատես վարդապետը, տեսնելով Լուսավորչի կանթեղը, կառուցում է Սաղմոսավանքի Ս. Սիոն եկեղեցին ու հռչակվում նաև նրանով, որ դեպի Աշտարակ հոսող ջրանցք է կառուցում (Devrikyan, 2001):

## Եզրակացություններ

Գրավոր (սեպագրական, հայկական) և հնագիտական տվյալները վերականգնում են ռոտզման երկրագործական լանդշաֆտի կերտման՝ Հայկական լեռնաշխարհի համար կայուն մի մոդել, որի բովանդակային-իմաստաբանական բույրը բաղկացած է հետևյալ տարրերից՝ վերնախավի նախաձեռնությամբ ջրանցքի անցկացում (ջուր բերելով բարձր լեռնային շրջաններից) – բարեբեր գոտու (այգի, դաշտ, մարգագետին) ստեղծում – պաշտամունքային կառույցների (արձան, աշտարակ) կերտում – ծիսական երգերով և զոհաբերություններով ուղեկցվող արարողություններ:

Ելնելով վիշապ քարակոթողների վերջին տարիների հնագիտական հետազոտության արդյունքներից (Հմնտ. Bobokhyan et al., 2018; Hnila et al., 2019)՝ կարելի է ասել, որ այս մոդելի արմատները կարող են հասնել մինչ վաղ երկրագործական հասարակություններ՝ տարբեր դարաշրջաններում ունե-

7 Ձուկ-լեռ-ռոտզում-մշակութային տարածքի ստեղծում իմաստաբանական բույն առկա է տարբեր ժողովուրդների պատկերացումներում (Топоров, 1992, 392): Լավագույն զուգահեռներից է շումերական Էնկի աստվածության կերպարը, որը ջրային սկզբի մարմնավորումն է, ձկների հովանավորը, որին ոչ միայն ձուկ են զոհաբերում, այլև պատկերում են որպես ձուկ (և այծ): Նա նաև «ջրանցքների հսկիչն» է և պահպանումում է տիեզերքի հավասարակշռությունը: Նրա հետ է առնչվում սահմանաքարերի կերտումը (Belitsky, 1980, 195, 213, 215; հմնտ. Petrosyan, 2004, 118):

8 Ուշագրավ է, որ վիշապաքարերից մի քանիսը գտնվել են Թոնդրի նույն այն դամբարանաթմբի վրա և կից, որտեղից հայտնաբերվել է ծիսական պատկերագրությամբ հարուստ արծաթե գավաթը (Narimanishvili et al, 2015, 178):

նալով տարատեսակ արտահայտչաձևեր: Առկա տվյալները ցույց են տալիս, որ եթե վաղ բրոնզի դարում, ուրարտական և անտիկ շրջանում Հայկական լեռնաշխարհի բնակիչները ռոտոնդի երկրագործական լանդշաֆտը գլխավորապես կազմակերպել են հորիզոնական մակարդակում (կենտրոնանալով դաշտավայրերում, ուղիղնալ օգտագործելով բնական և մարդկային ռեսուրսները ու գրեթե չբարձրանալով բարձրլեռնային գոտիներ), ապա պղնձի, միջին բրոնզի, ուշ բրոնզ-վաղ երկաթի դարերում և միջնադարում նրանք հիմնականում ուղիղահայաց շարժեր են կատարել (տեղաշարժվելով դաշտավայրերից դեպի նախալեռներ և ակտիվորեն յուրացնելով բարձրլեռնային գոտիները դարավանդների ձևով):

Ընդ որում, Հայկական լեռնաշխարհում ռոտոնդի երկրագործական տարածքի կազմակերպման ամենատանգրային դարաշրջանն, ակնհայտորեն, միջին երկաթն է՝ ուրարտական պետության գոյության շրջանը: Ուրարտական վերնախավը, ունենալով բարձրակարգ ինժեներներական գիտելիքներ և նմանակելով առաջավորասիական արժեհամակարգը, կենտրոնանում էր դաշտավայրերում՝ տեղում օգտագործելով գետային ջրերը, ի տարբերություն բրոնզ-երկաթեդարյանների, որոնց գործունեության արդյունքները տեսանելի են հատկապես նախալեռներում և բարձր լեռներում ու հետապնդում էին ձևալից առաջացած ջրային պաշարները արհեստական լճակների և դրանց առնչող ջրանցքների միջոցով կառավարելու նպատակ (նախաուրարտական տեխնիկական հնարավորությունները բավարար չեն եղել գետերի ջուրն օգտագործելու համար):

Երկրագործական կենսատարածքի կազմակերպումը, անկախ դրա համայնքային կամ պետական լինելուց, մշտապես ուղեկցվել է ծիսական արարողությամբ, ինչով օրինականացվել (=սրբացվել) է տնտեսական նախաձեռնությունը:

## Նշումներ և շնորհակալություններ

Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» նախագծի (21AG-6A080) շրջանակում:

## Acknowledgements

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project № 21AG-6A080) entitled “Culture of water use in the Armenian Highland from antiquity to present days”.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Abeghyan, M. (1941). *Monuments called “Vishaps” as statues of the Astghik-Derketo goddess*, Armfan (in Armenian).
- Aghakhanyan, G. A. (1960). *Development of water economy in Armenia*. Haypethrat (in Armenian).
- Andrianov, B.V. (1978). *Agriculture of our ancestors*. Nauka (in Russian).
- Areshian, G. E. 2007. From Extended Families to Incipient Polities: The Trajectory of Social Complexity in the Early Bronze Age of the Ararat Plain (Central Near Eastern Highlands). In L.M. Popova, C.H. Hartley, & A.T. Smith (Eds.), *Social Orders and Social Landscapes* (pp. 26-51). Cambridge.
- Ayvazyan, K. V. (1976). “History of Taron” and Armenian literature of the 4th-7th centuries. Yerevan University (in Russian).
- Bdoyan, V. H. (1950). Some Traces of Earth Cult among Armenians. *Proceedings of the State Historical Museum of Armenia*, 3, 5-71 (in Armenian).
- Bdoyan, V.H. (1972). *The Agricultural Culture in Armenia*, Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Belitsky, M. (1980). *The Forgotten World of the Sumerians*. Nauka (in Russian).
- Belli, V. (1997). *Urartian Irrigation Canals in Eastern Anatolia*. Arkeoloji ve Sanat.
- Bobokhyan, A. (2019). Kuntara sanctuary and the Kunkuntsi stone. In A. Bobokhyan, A. Gilibert & P. Hnila (Eds.), *Dragon on the border of fairy tale and reality* (pp. 448-459). Institute of Archaeology and Ethnography (in Armenian).
- Bobokhyan, A. (2020). *Atrpet’s “scientific adventures” and the discovery of dragon petroglyphs*. History Museum of Armenia (in Armenian).
- Bobokhyan, A. (2020). Tarmana Sea and Arara Mountain: features of habitat organization in Lake Vana basin in the 2nd millennium BC. *Journal of Social Sciences*, 3, 248-280 (in Armenian).
- Bobokhyan, A., & Tarontsi S. (2020). The newly discovered “Dragon” monument of Mets Massis, and the significance of the mountain in the regional context. *Historical-philological Journal*, 2, 47-67 (in Armenian).
- Bobokhyan, A., Gilibert A., & Hnila P. (2019). The Urartian God Quera and the Metamorphosis of the “Vishap” Cult. In P.S. Avetisyan, R. Dan, & Y. H. Grekyan (Eds.), *Over the Mountains and Far Away: Studies in Near Eastern History and Archaeology presented to Mirjo Salvini on the Occasion of His 80th Birthday* (pp. 98-105). Archaeopress.
- Bobokhyan, A., Gilibert, A., & Hnila, P. (2018). Karmir Sar: New Evidence on Dragon Stones and Ritual Landscapes on Mount Aragats, Armenia. In A. Batmaz, G. Bedianashvili, A. Michalewicz, & A. Robinson (Eds), *Context and Connection: Studies on the Archaeology of the Ancient Near East in Honour of Antonio Sagona* (pp. 255-270). *Orientalia Lovaniensia Analecta*, 268, Leuven-Paris-Bristol.
- Chopin, I. (1832). *Historical monument of the state of the Armenian region in the era of its annexation to the Rus-*

- sian Empire. Imperial Academy of Sciences (in Russian).
- Dalalyan, T. (1999). The dragon as a symbol of irrigation systems. In S.B.Harutyunyan, & D.S.Vardumyan (Eds.), *Armenian folk culture* (vol. 10, pp. 23-25). Institute of Archaeology and Ethnography (in Armenian).
- Dan, R., Bobokhyan, A., Gasparro, O., Gasparyan, B., Petrosyan, A., & Salvini, M. (2023). The Archaeological Site of Garni, Armenia. Pre-Arsacid Archaeological Evidence and an Urartian Inscription of Argišti on a Vishap. In Y. Grekyan, & A. Bobokhyan (Eds.), *Systemizing the Past: Papers in Near Eastern and Caucasian Archaeology Dedicated to Pavel S. Avetisyan on the Occasion of His 65th Birthday* (pp. 56-78). Archaeopress.
- Daniel, Yerazhisht (2022). *Komitas' artistic thinking in the light of Albert Schweitzer's theory of art*. Yearbook of the Komitas Museum-Institute, E (in Armenian).
- Devrikyan, V. (2001). *Lentern of the illuminator*. Mother See of Holy Etchmiadzin (in Armenian).
- Dyakonov, I.M. (1951). Assyro-Babylonian sources on the history of Urartu. *Bulletin of Ancient History*, 2, 255-356; 3, 205-252; 4, 283-305 (in Russian).
- Ghanalanyan, A. (1969). *Avandapatum*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Ghapantsyan, G. (1945). *The Cult of Ara Geghetsik*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Grekyan, E. (2002). Agricultural areas and irrigation system in northwestern Iran according to cuneiform sources. *Historical-philological Journal*, 2, 214-232 (in Armenian).
- Grekyan, Y. (2014). When the Gods Leave People (The Climatological Hypothesis of the Collapse of the Urartian State). *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, 8(1-2), 57-94.
- Harutyunyan, L. A. (1971). *Some fragments from the history of nutrition of Armenians*. Ministry of Health (in Russian).
- Harutyunyan, N. V. (2001). *Corpus of Urartian wedge-shaped inscriptions*. Gitutyun (in Russian).
- Harutyunyan, N.V. (1964). *Agriculture and cattle breeding of Urartu*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Hmayakyan, S. (1990). Cult of the Kuera-Kuar deity in the Armenian highlands. *Historical-philological Journal*, 1, 152-167 (in Armenian).
- Hnila, P., Gilibert A., & Bobokhyan A. (2019). Prehistoric Sacred Landscapes in the High Mountains: The Case of the Vishap Stelae between Taurus and Caucasus). In B. Engels, S. Huy, Ch. Steitler (Eds.), *Natur und Kult in Anatolien*, BYZAS 24 (pp. 283-302). Veröffentlichungen des Deutschen Archäologischen Instituts Istanbul.
- Kalantar, A. (1937). An ancient water distribution system in Soviet Armenia. *Bulletin of ASSR Institute of History and Literature*, 2, 171-194 (in Armenian).
- Kalantaryan, A. (Ed.). (2007). *The Gold of Ancient Armenia*. Gitutyun (in Armenian).
- Kikvidze, Y. I. (1964). *Irrigation in ancient Georgia (Historical and archaeological essay)*. PhD thesis (historical sciences), Tbilisi State University (in Russian).
- Lisitsyan, S. D. (1992). *Armenians of Nagorno-Karabakh*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Marr, N. Ya. (1924). Book legends about the founding of Kyiv in Rus' and Kuara in Armenia. *News of the Russian Academy of History of Material Culture*, 3, 257-287 (in Russian).
- Marr, N. Ya. (1936). Armenian culture, its roots and prehistoric connections according to linguistic data. In Kirparisov F. V. (Ed.), *Language and history* (pp. 62-85), Leningrad, Ogiz (in Russian).
- Martirosyan, H. (1971). *From the Stone Age to Urartu*. Hayastan (in Armenian).
- Mikhankova, V. A. (1949). *Nikolai Yakovlevich Marr: an essay on his life and scientific activities*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Mkhitarian, A. (1904). *Towards Ararat*. Hermes (in Armenian).
- Mnatsakanyan, H. (1968). *The monuments are speaking*. Armenia (in Armenian).
- Narimanishvili, G., Shanshashvili N., & Narimanishvili D. (2015). New data on the menhirs of Southern Georgia. In A. Petrosyan, A. Bobokhyan (Eds.), *Stone steles of Vishapa* (pp. 176-189). Gitutyun (in Russian).
- Oganesyan, A. L. (1973). Music in ancient Armenia. *Historical and Philological Journal*, 2, 61-76 (in Russian).
- Orbeli, H. (1925, December 2). Knowing the past let's build the future. *Soviet Armenia*, 1 (in Armenian).
- Parrot, F. (1990). *From Dorpat to Ararat*. Armenia (in Armenian).
- Petrosyan, A. (2006). On the origins of Armenian traditional drama. *Historical-philological Journal*, 2, 256-284 (in Armenian).
- Petrosyan, E. (2004). *Gods and rituals of ancient Armenia*. Zangak (in Russian).
- Piotrovsky, B. B. (1944). *History and culture of Urartu*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Pitskhelauri, K. (1988). Main directions of socio-economic development of Caucasian societies of the Bronze and Iron Age. *Proceedings of the Kakheti Archaeological Expedition*, VIII, 218-225 (in Russian).
- Shirmazan, G. (1962). *Episodes from the history of irrigation in Armenia*. Haypetgyughrat (in Armenian).
- Simonyan, L. (2006). *Tomarayin tsisashar* (vol. I). VMV Print (in Armenian).
- Simonyan, L. (2014). On the Interrelation between Musical Archaeology and Ethnomusicology. In A. Piliposyan (Ed.), *B.B. Piotrovsky and Archaeology* (pp. 213-221). RA Ministry of Culture.
- Tagmizyan, N. K. (1977). *Theory of music in ancient*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Tokarsky, N.M. (1961). *Architecture of Armenia IV-XIV centuries*. Armgosizdat (in Russian).
- Toporov, V. N. (1992). *Fish. Myths of the Peoples of the World*. In S. A. Tokarev (Ed.), *Soviet Encyclopedia* (vol. 2, pp. 391-393) (in Russian).
- Yepremyan, R.V. (1992). *Water supply in ancient and medieval Armenia*. Yerevan State University of Architecture and Construction (in Russian).
- Yovsepiyan, G. (1941). *On the top of Aragats* (vol. 1). New York, Matenashar hayastaneayst Ekeghetsvo (in Armenian).



# ON THE PREHISTORIC IRRIGATED AND RAIN-FED AGRICULTURAL SYSTEMS IN THE TERRITORY OF ARMENIA (ACCORDING TO ARCHAEOBOTANICAL STUDIES)

Roman Hovsepyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

## Abstract

Agriculture in the territory of the Republic of Armenia was established about eight thousand years ago, in the Ararat Valley, and was irrigated. About five and a half thousand years ago, because of the global climate changes, in particular, the aridification of the climate and the reduction of water resources in lowlands, there were still sufficient water resources for agriculture in the mountains (rain, ice and snow accumulations, springs fed from them, etc.). As a result, starting from the Early Bronze Age, local communities began to engage in rainfed agriculture in the hard-to-reach and hard-to-cultivate mountainous lands. From the Early Bronze Age to the Early Iron Age, the main or only direction of agriculture in the region was the cultivation of cereals.

This was most probably due to climate aridification, which was the original and main cause of this phenomenon: irrigation is essential to agriculture in the dry lowlands, while some hardy crops in the mountains can be cultivated without water, relying only on rain. It is noteworthy that the “specialization” of agriculture in cereals cultivation was the same both in the mountains and in the lowlands. It is possible that the access to water gave the communities living in the mountains an environmental and economic advantage, which was the reason for the spread and strengthening of their forms of production, primarily - agricultural traditions, in the communities living in the lowlands.

**Keywords:** irrigation systems, agriculture, cultivation of plants, archaeobotany, climate aridification.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՈՌՈԳՈՎԻ ԵՎ ԱՆՋՐԴԻ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾՈՒՐՋ (ԸՍՏ ՀՆԱԲՈՒՄԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)

Ռոման Հովսեփյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

### Ամփոփագիր

Ջրօգտագործման մշակույթի հիմնական բաղադրիչները և ջրային պաշարների օգտագործումը բուսական սննդի հումքի արտադրության, մասնավորապես՝ երկրագործության համար: Բույսերի աճեցումը ինքնին ենթադրում է ջրային պաշարների օգտագործում, որը կարող է լինել պասիվ ձևով՝ բուսաբուծական նպատակներով նպաստավոր պայմաններով տեղանքների ընտրությամբ (համապատասխան քանակի և ռեժիմի անձրևներ, գրունտային ջրեր, ընդհանուր մթնոլորտային խոնավություն և այլ բնույթի ջրային պաշարներ), երբ բույսն է մոտեցվում ջրին և հատուկ գործողություններ չի կատարվում ջուրը բույսին մոտեցնելու համար, և ակտիվ՝ երբ ջրային պաշարներն օգտագործվում են արհեստական ոռոգման միջոցով՝ ջրատար կառույցներով ջուրը հասցնելով բույսերին: Ինչպիսին են եղել Հայաստանի տարածքում գոյություն ունեցած տարբեր նախապատմական դարաշրջանների երկրագործական համակարգերը. ջրով (ոռոգով), թե՛ անջրդի, ինչն են որոշակի ժամանակներում և որոշակի տարածքներում կիրառել ոռոգովի կամ անջրդի երկրագործություն, որոնք են դրանց միջավայրային, սնունդական և մշակութային պատճառները: Այս հարցերին փորձում ենք պատասխանել՝ առաջադրելով աշխատանքային տեսություններ, որոնք հիմնված են հնաբուսաբանական հետազոտությունների միջոցով ստացված տվյալների, գործառնական կլիմայական փոփոխությունների վերաբերյալ առկա տվյալների և հնագիտական տվյալների համադրման վրա: Մասնավորապես՝ լեռներում երկրագործությամբ զբաղվելը մեկնաբանում ենք կլիմայի չորայնացման, ցածրադիր շրջաններում ջրային ռեսուրսների կրճատման պայմաններում երկրագործության համար լեռներում ջրի/խոնավության (անձրև, աղբյուրներ, ևն) բավարար պաշարների առկայությամբ: Միայն հացաբույսերի մշակությունը ևս բացատրում ենք ջրային պաշարների կրճատմամբ, քանզի ոռոգումը պարտադիր է չոր ցածրավայրերում երկրագործության համար, մինչդեռ որոշ դժվարադիմացկուն մշակաբույսեր լեռներում

կարող են մշակվել առանց ոռոգման՝ միայն անձրևների ջրով: Իսկ ցածրավայրերում ևս միայն հացաբույսեր մշակելու երևույթը որոշակի դարաշրջաններում բացատրում ենք. 1) Սպիտակուցների և ճարպերի արտադրության առումով ինքնաբավ լեռնաբնակ անասնապահ համայնքների քանակական գերակշռմամբ, ինչի արդյունքում տարածաշրջանում հացաբույսերի պահանջարկն է աճել, որն էլ աստիճանաբար դուրս է մղել պակաս պահանջարկ ունեցող մշակաբույսերի արտադրությունը, 2) Լեռներում ջրի հասանելիությամբ, որը այնտեղ ապրող համայնքներին տվել է միջավայրային և տնտեսական առավելություն, որն էլ պատճառ է հանդիսացել նրանց արտադրության ձևերի, առաջին հերթին՝ գյուղատնտեսական ավանդույթների՝ ցածրավայրերում ապրող համայնքներում տարածման և ամրապնդման համար, 3) Ցածրավայրերում և բարձրավայրերում ապրող մարդկանց՝ միևնույն համայնքի ներկայացուցիչներ լինելով, երբ հասարակության մի մասը վարել է նստակյաց կենսակերպ, իսկ մյուս մասը՝ հեռագնա անասնապահական կենսակերպ: Ակնկալում ենք, որ առաջադրված տեսությունները կրամշակվեն և կշտկվեն հնագիտության, հնաբուսաբանության, միջավայրային և այլ հետազոտությունների արդյունքում հընթացս կուտակվող գիտելիքներին զուգընթաց:

**Հիմնաբառեր.** ոռոգման համակարգեր, երկրագործություն, բուսաբուծություն, հնաբուսաբանություն, կլիմայի չորայնացում:

### Ներածություն

Ջուրը, մասնավորապես ջրային պաշարների հասանելիությունն է որոշիչ դեր խաղացել մարդկության էվոլյուցիայի, հատկապես՝ որսորդ-հավաքչական կենսակերպից ինքն իր համար սնունդ արտադրող, գրեթե ինքնաբավ հասարակության կայացման գործընթացում: Մնունդ արտադրող տնտեսություն և կենսակերպ ունեցող հասարակությունները առաջացել են Մերձավոր Արևելքում՝ այսպես կոչված «Բեդոն Մահիկի» տարածքում՝ մոտ 10,5 հազար տարի առաջ (Zohary et al., 2012): Բուսաբուծությունը, մասնավորապես, զարգացել է այն տարածքներում, որտեղ համապատասխան ջրային պաշարների առկայության պայմաններում հնարավոր է եղել մեծ մասշտաբների երկրագործություն ծավալել:

Ջրի առկայությունը անհրաժեշտ պայման է ընդհանրապես գյուղատնտեսության համար, սակայն ջրային մեծ պաշարների պահանջարկ ունեն

մասնավորապես բուսական հումքի արտադրությանը զբաղվող համայնքները: Միայն անասնաբուծությամբ զբաղվող կամ գյուղատնտեսությամբ ընդհանրապես չզբաղվող համայնքների պահանջարկը համեմատելի չէ բույսերի մշակությամբ զբաղվող համայնքների պահանջարկի հետ, քանզի միայն մարդկանց կամ մարդկանց և կենդանիների ջրի պահանջարկը բավարարելու համար ջրի մեծ ծավալներ անհրաժեշտ չեն և հնարավոր է բավարարվել, օրինակ, միայն աղբյուրների ջրով: Ի լրումն վերջինիս, երկրագործությամբ զբաղվողները ակամա պետք է գրեթե ամբողջ տարին հսկեն և խնամեն, մասնավորապես՝ ոռոգեն իրենց ցանքերը և տնկարկները, ինչի պատճառով կապված են տվյալ տեղանքի հետ առնվազն բույսերի մշակության (վեգետացիայի շրջանի) ընթացքում: Ի տարբերություն երկրագործական կենսակերպ ունեցողների, բուսաբուծությամբ չզբաղվող մարդիկ կարող են կենդանիների հետ միասին տեղափոխվել, եթե տվյալ



Նկ.1. Սովորական փափուկ ցորենի արտ (*Triticum aestivum subsp. aestivum (vulgare)*, Արա լեռան հյուսիս-արևմտյան լանջեր, 1850 մ ծ.մ.բ., 30.06.2018):

տարածքում գյուղատնտեսական արտադրության և մարդկանց կենսագործունեության համար անհրաժեշտ ջրի պաշարներն այլևս բավարար չեն կամ ընդհակառակը՝ դրանց ավելցուկ է առաջանում (գերխոնավ կլիմայական պայմաններ, ջրհեղեղներ և այլն):

Բույսերի արտադրությունը և հավաքչությունը եղել են սննդամթերքի և այլ հումքերի (անասնակեր, շինանյութ, դեղանյութեր, ներկանյութեր և այլն) հիմնական աղբյուրները մարդկության մեծ մասի համար: Հավաքչությունը, մասնավորապես չվերահսկվող, «գիշատիչ» հավաքչությունը, չի կարող ապահովել մթերքի նշանակալի ծավալներ և միաժամանակ լինել դրա կայուն և հարատև աղբյուր՝ հատկապես մեծ համայնքների համար: Ուստի ակնկալելի է, որ մարդկության քաղաքակրթական փոփոխությունները, տվյալ դեպքում՝ այսպես կոչված «նորքարեդարյան հեղափոխությունը», կատարվել են գյուղատնտեսական արտադրաձևերի և կենսակերպի հիմնադրման արդյունքում և կամ ընթացքում (Zohary et al., 2012):

Երկրագործությունը Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնադրվել է շուրջ ութ հազար տարի առաջ՝ Արարատյան հարթավայրում, և եղել է ոռոգովի: Մոտ հինգուկես հազար տարի առաջ գյուղացի կլիմայական փոփոխությունների, մասնավորապես՝ կլիմայի չորայնացման և ցածրադիր շրջաններում ջրային ռեսուրսների կրճատման պայմաններում լեռներում դեռ կային ջրի՝ երկրագործության համար բավարար պաշարներ (անձրև, սառույցի և ձյան կուտակումներ, դրանցից սնվող աղբյուրներ ևն): Արդյունքում, վաղ բրոնզի դարից սկսած, տեղի համայնքները սկսեցին անջրդի երկրագործությամբ զբաղվել լեռնային դժվարամատչելի և դժվար մշակվող հողատարածքներում: Վաղ բրոնզից մինչև վաղ երկաթի դարաշրջաններում տարածաշրջանում երկրագործության հիմնական կամ միակ ուղղությունը եղել է հացաբույսերի մշակությունը: Դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր կլիմայի չորայնացմամբ, որը եղել է այդ երևույթի սկզբնական և հիմնական պատճառը, քանզի ոռոգումը պարտադիր է չոր ցածրավայրերում երկրագործության համար, մինչդեռ որոշ դժվարադիմացկուն մշակաբույսեր լեռներում կարող են մշակվել անջրդի՝ միայն տեղումների միջոցով: Հատկանշական է, որ երկրագործության վերոհիշյալ «մասնագիտացումը» հացաբույսերի մշակության ուղղությամբ նույնն է եղել թե՛ լեռներում, թե՛ ցածրավայրերում: Հնարավոր է, որ ջրի հասանելիությունը լեռներում ապրող համայնքներին տվել է միջավայրային և տնտեսական առավելություն, որն էլ պատճառ է հանդիսացել նրանց արտադրության ձևերի, առաջին հերթին՝ գյուղատն-

տեսական ավանդույթների՝ ցածրավայրերում ապրող համայնքներում տարածման և ամրապնդման համար:

Ստորև քննարկվում են տարածաշրջանում որոշակի դարաշրջաններում երկրագործության անջրդի և ոռոգովի տարբերակների կիրառության հարցերը և փորձում է արվում տալ իրավիճակի հնարավոր բացատրությունները, որոնք կարող են ծառայել որպես աշխատանքային տեսություններ կամ հիպոթեզներ, և կհղվեն հնագիտության, հնակենսաբանության և հարակից գիտաճյուղերի կողմից ձեռքբերվող տվալներին համընթաց:

**Ջետագոտության կյուլթը և մեթոդները**

Ընթացիկ հետազոտության թեմատիկ առարկան են երկրագործության ոռոգովի և անջրդի համակարգերը, որոնց քննարկման ենք առել՝ օգտագործելով երկրագործության և, ընդհանրապես, բուսական տնտեսության մասին մեր ունեցած տվյալները: Աշխարհագրական առումով հետազոտությունը վերաբերվում է Հայաստանի Հանրապետության տարածքին, որը հիմնականում համընկնում է Փոքր Կովկասյան լեռնաշղթայի տարածքի հետ: Ժամանակագրական առումով հետազոտությունը ընդգրկում է երկրագործության հիմնադրումից՝ մեզանից 8 հազար տարի առաջվանից մինչև Ք.ա. առաջին հազարամյակի կեսերն ընկած ժամանակահատվածը, իսկ ավելի կոնկրետ՝ ուրարտական դարաշրջանը ներառյալ:

Հետազոտությունում օգտագործված երկրագործության և բուսական տնտեսության մասին տվյալները ստացվել են հնաբուսաբանական մեթոդներով: Նշենք, որ հնագիտությունը, հնէաբանությունը, բուսաբանությունը, ագրոնոմիան, գենետիկան, քիմիան, ֆիզիկական մարդաբանությունը և լեզվաբանությունը, ի թիվս այլ առարկաների, կարող են տարբեր աստիճանի նպաստել բույսերի նախապատմական ժամանակների տնտեսության ուսումնասիրությանը, սակայն այդ հետազոտության համար ամենավստահելի և առաջնային նյութերը բույսերի մակրոսկոպիկ (անզեն աչքով տեսանելի) մնացորդներն են: Հնապալիտոլոգիական նյութերի (ծաղկափոշի, փոշեհատիկներ, սպորներ, պալիտոմորֆներ և այլն), ֆիտոլիտի (կիսաքայքայված բուսական մնացորդներ՝ հյուսվածքների կտորներ) հետազոտությունների, հնակենդանաբանական, միկրոշերտագրական, քիմիական և այլ հետազոտությունների միջոցով ստացված տվյալները հնագիտության մեջ կարող են լրացնել մեր գիտելիքները հին հասարակությունների բուսական տնտեսության և սննդի համակարգի մասին, բայց դրանք չեն կարող ամբողջությամբ փոխարինել բույսերի մակրո-մնացորդների ուսումնասիրության արդյունքում



Նկ. 2. Թեփուկավոր երկշարք գարի (*Hordeum vulgare subsp. distichon convar. distichon*, Գեղարոտ, 2100 մ ծ.մ.բ., 06.08.2008):



Նկ. 3. Թեփուկավոր վեցաշարք գարի (*Hordeum vulgare subsp. vulgare convar. vulgare*, Գեղարոտ, 2100 մ ծ.մ.բ., 06.08.2008):

ձեռք բերած տվյալներին: Բույսերի մակրոմնացորդների կազմից էլ երկրագործության մասին ամենաառաջնային և ամենավստահելի տվյալներ տալիս են պտուղների, սերմերի և այլ գեներատիվ օրգանների ու, ընդհանրապես, դիասպորների (տարածմանը նպաստող օրգանների և մասերի) մնացորդները, որոնց ուսումնասիրությամբ զբաղվող գիտաճյուղը կոչվում է պտղասերմաբանություն: Այս նյութերը ստացվել են մարդկանց օգտագործած տարածքներում անցած դարաշրջանների մշակութային նստվածքներից հիմնականում ֆլուտացիայի և լվացման մեթոդներով բույսերի աչքով տեսանելի մնացորդների առանձնացման միջոցով (օգտագործված մեթոդների մասին մանրամասների համար՝ Hovsepyan, 2017a): Առանձնացվելուց հետո պտղասերմաբանական նյութերը խմբավորվել են ըստ ձևաբանական, կազմաբանական և կենսաչափական հատկանիշների, պահպանվածության ձևի և աստիճանի, ապա նույնականացվել, որի արդյունքում հիմնականում հնարավոր է եղել պարզել, թե ինչ բույսերի են պատկանել այդ մնացորդները և բույսերի որ մասերն են հանդիսանում (նույնականացման աշխատանքների մանրամասների և օգտագործված գրականությանը ծանոթանալու համար՝ տե՛ս, օրինակ, Hovsepyan, 2017, 2015, 2023 և այլն): Ապա, օգտվելով այդ նույնականացված կարգաբանական միավորների մասին բուսաբանության, գյուղատնտեսական գիտությունների, էկոլոգիայի, ազգագրության և այլ գիտությունների տվյալներից, փորձ է արվել կատարել վերակազմություններ սննդի համակարգի, բուսաբուծության, բուսահավաքչության, ոռոգման համակարգի, միջավայրի և այլնի վերաբերյալ:

Նախապատմական դարաշրջաններում երկրագործության իրավիճակը հասկանալու համար համադրվել են հետազոտված տարածաշրջանի

ավելի քան 40 հնավայրերի հնարուսաբանության տվյալներ, որոնք գերազանցապես վերցվել են հրապարակված աղբյուրներից (այլապես՝ հեղինակի ընթացիկ հետազոտությունների դեռևս չհրապարակված տվյալներն են): Առատաշեն, Ակնաշեն (Hovsepyan & Willcox, 2008; Hovsepyan, 2021a), Մասիս Բլուր, Թեղուտ (Torosyan, 1976), Արենի-1 (Hovsepyan, 2009; Areshian et al., 2012; Wilkinson et al., 2012; Smith et al., 2014), Գետահովիտ-2 (Hovsepyan & Kalantaryan, 2019; Chataigner et al., 2020), Գողեձոր (Hovsepyan, 2014a; Palubni et al., 2021), Գեղարոտ (Hovsepyan, 2018; Badalyan et al., 2014), Ապարան III (Hovsepyan, 2010), Ծաղկասար-1 (Hovsepyan, 2011a), Ոսկելվազ (Yanushevich, in Wasylkova et al., 1991), Լորուտ (Gandilyan, 1998), Այգեվան (Gandilyan, 1976), Էլար (P3) (Lisitsyna & Prishchepenko, 1977), Շենգավիթ (Hovsepyan, 2023), Արտանիշ-9, Սոթք-2 (Hovsepyan, 2013, 2017b), Մարգահովիտ (Gevorgyan et al., 2021), Նորաբակ-1 (Hovsepyan, 2013, 2017b), Կարմիր Սար (Hovsepyan, 2021b), Հաղարծին, Ներքին Նավեր (Hovsepyan, 2007a; 2007b), Շաղատ I (Zardaryan & Hovsepyan, 2017), Արտենի-1 (Hovsepyan, 2018), Գեղաքար (Hovsepyan, 2013), Մարգահովիտ (Gevorgyan et al., 2021), Գեղարոտ (Martin et al., 2021), Արագածի-բերդ, Ծաղկահովիտ, Հոռոմ (Mirzoyan et al., 1998), Հսաբերդ (Gabrielyan, 2001; Melkonyan & Gabrielyan, 2001), Շաղատ III, Թեյշեբախի, Ջուջևան (Chilingaryan, 1971), Մեծամոր (Gandilyan, 1998), Գեղաքար (Hovsepyan, 2013), Ույծ (VP site 21) (Zardaryan & Hovsepyan, 2017), Հոռոմ (Mirzoyan et al., 1998), Ենքավան-2 (Hovsepyan, 2011b), Արամուս (Avetisyan et al., 2005), Սև-սև քարերի բլուր, Ծաղկահովիտ (Hovsepyan, 2014b), Օձաբերդ (Badalyan et al., 2022), Կարմիր Բլուր (Piotrovsky, 1950, 1952, 1955, 1961; Gulkanyan, 1966a), Արգիշտիխիսիլի (Gulkanyan, 1966b): Յուրաքանչյուր



Նկ. 4. Թեփուկավոր երկշարք և վեցշարք գարիների հարևան արտեր (Գեղարտոի հնավայրից արևելք, 2100 մ ծ.մ.բ., 06.08.2008):



Նկ. 5. Հաճար (*Triticum turgidum subsp. dicoccum* [=Triticum dicoccum], Արայի քարավանատան հարևանությամբ, 1900 մ ծ.մ.բ., 05.08.2011, հեղուկում Արա լեռն է երևում):

հնավայրի համար նշվող տպագիր աղբյուրներից բացի, եթե այս հողվածի հեղինակը [ՌՀ] աշխատել է տվյալ հնավայրում, օգտագործվել են նաև նրա հետազոտությունների չիրապարակված տվյալները: Առկա հնաբուսաբանական տվյալները նշված հրապարակումներում, ինչպես և կարելի էր ակնկալել, հաճախ շատ տարբեր են (մշակված նստվածքների քանակով, հայտնաբերված նյութով, նույնականացման ճշգրտությամբ, գրանցված տաքսոնների անվանումներով, քանակական տվյալներով և դրանց մեկնաբանություններով, շերտագրական, մշակութային և ժամանակաշրջանային վերագրմամբ, հետազոտված իրավիճակներով և այլն): Հնաբուսաբանական նյութերի քանակությունը ևս մեծապես տարբերվում է հնավայրից հնավայր. այն բավականին բարձր է որոշ հնավայրերում (հիմնականում վերջին երկու տասնամյակների ընթացքում հետազոտվածները, օրինակ՝ Գեղարտո, Շենգավիթ, Ակնաշեն, Արենի-1, Գողեձոր, Մարգահովիտ, Մոթք-2, Արտանիշ-9 և այլն), իսկ մյուսներում լոկ նշումներ են միայն որոշ բույսերի առկայության մասին (տե՛ս հիմնականում 20-րդ դարի հրապարակումները, օրինակ՝ Piotrovsky, 1950, 1952, 1955, 1961; Lisitsyna & Prishchepenko, 1977, Gandilyan, 1998 և այլն): Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ անհնար էր պատրաստել հնաբուսաբանական տվյալների ընդհանուր և մանրամասն աղյուսակ: Որպես խնդրի փոխզիջումային լուծում՝ պատրաստել ենք հիմնական մշակաբույսերի ցուցակով աղյուսակ, որտեղ յուրաքանչյուր հնավայրում յուրաքանչյուր մշակաբույսի համար նշվում է պարզապես դրա առկայությունը կամ, եթե առկա են համապատասխան տվյալներ, առկայությունը կիսաքանակային արտահայտմամբ (աղ. 1): Ցավոք, հնաբուսաբանական ուսումնասիրությունների որակի ու ծավալի խնդիրը միակը չէ. հետազոտված հնավայրե-

րը անհավասարաչափ աշխարհագրական բաշխվածություն ունեն: Այստեղ օգտագործված տվյալները հնավայրերից են, որոնք պեղվել են տարբեր ժամանակներում (հիմնականում՝ սկսած 20-րդ դարի կեսերից), տարբեր գիտական նպատակներ հետապնդող և, ամենակարևորը, հնաբուսաբանական հետազոտությունների կարևորության նկատմամբ տարբեր վերաբերմունք ունեցող հնագետների կողմից՝ օգտագործելով տարբեր մեթոդաբանություններ կամ պարզապես գործելաճ: Անշուշտ, հնաբուսաբանական հետազոտությունների որակն ու ծավալը կախված են նաև բույսերի մնացորդների պահպանվածությունից, հնաբուսաբան մասնագետների առկայությունից, նրանց որակավորումից ու փորձից և, պարզապես, այն ժամանակներից ու բարքերից, երբ իրականացվել են տվյալ հետազոտությունները:

Այս աշխատանքում տեղ գտած քննարկումները, վերլուծությունները և մեկնաբանություններն արվել են հիմնականում հեղինակի՝ մինչ այդ կատարած հնաբուսաբանական հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա: Օգտագործվել են նաև ամփոփիչ բնույթի (օրինակ՝ Lisitsyna & Prishchepenko, 1977) և առաջնային հետազոտությունների տվյալներ դիտարկվող տարածաշրջանի և ժամանակաշրջանի հնաբուսաբանական հետազոտությունների համար (տե՛ս օգտագործված գրականության ցանկը):

**Ստացված տվյալները, դրանց քննարկումը և մեկնաբանությունը**

ՀՀ տարածքում նախապատմական ժամանակների հնաբուսաբանական նյութեր, մասնավորապես մշակաբույսերի մնացորդներ հայտնաբերվել են շուրջ 40 հնավայրերում: Հիմնական մշակաբույսերի կիսաքանակական անալիզի միջոցով կա-



րելի է առանձնացնել երեք հիմնական փուլ՝ 6 ենթափուլերով: Բուսաբուծության զարգացման այս փուլաբաժանումը հիմնականում համընկնում է հնագիտական փուլաբաժանման հետ (աղ. 1): Ահա նախապատմական դարաշրջանների թվագրումը (դարերը՝ մ.թ.ա.) Հայաստանի Հանրապետության տարածքում. Կերամիկական կամ երկրագործական նորքարեդար՝ 60-55/52, Պղնձիքարեդար՝ 52-35, Վաղ Բրոնզեդար՝ 35-24, Միջին Բրոնզեդար՝ 24-15, Ուշ Բրոնզեդար՝ 15-12, Վաղ Երկաթեդար՝ 12-9 (Avetisyan & Bobokhyan, 2012, Fig. 2):

Ստորև ներկայացնում ենք ՀՀ տարածքի նախապատմական ժամանակների վերաբերյալ առկա հնաբուսաբանական տվյալները և դրանց մեկնաբանությունները, որոնք ընդհանուր են ամբողջ Հարավային Կովկասի տարածքի համար: Ըստ ներկա հնաբուսաբանական տվյալների՝ Հարավային Կովկասում երկրագործությամբ սկսել են զբաղվել շուրջ 8 հազար տարի առաջ՝ Առատաշեն-Շուլավերի-Շոմուրեփե մշակույթի համայնքները, որոնց բնակավայրերը տեղակայված են ցածրավայրերում՝ հովտային գետերի ստորին ավազաններում: Լեռնային շրջաններում երկրագործությամբ զբաղվելու ապացուցված տվյալներ կան միայն ուշ պղնձիքարի դարից սկսած: Վաղ բրոնզի դարից մարդիկ սկսել են երկրագործությամբ զբաղվել լեռնային դժվարամատչելի և դժվար մշակելի հողատարածքներում: Երկրագործության պատմությունը ՀՀ տարածքում և, ընդհանրապես, Հարավային Կովկասում կայուն զարգացման գործընթաց չի եղել. գրանցվել են առնվազն մի քանի անկումային փուլեր: Հացաբույսերի մշակությունը (ամենուր) և խաղողագործությունը (ցածրավայրերում) եղել են բուսաբուծության ամենակայուն և անընդհատ ուղղությունները նախապատմական ժամանակների Հարավային Կովկասում: Վաղ բրոնզից վաղ երկաթի դար ընկած շրջաններում համայնքների երկրագործությունը հիմնված է եղել հացազգի բույսերի մշակության վրա (նկ. 1, 2, 3, 4, 5): Այդ ժամանակների համայնքների առնվազն մեծ մասի համար դա բուսաբուծության միակ ուղղությունն է եղել. ընդ որում, ագրոկենսաբազմազանության առումով իրավիճակը նույնն է եղել ցածրավայրերում և բարձրավայրերում: Վաղ բրոնզի դարից վաղ երկաթի դար հատվածում հիմնական մշակաբույսերն են եղել թեփուկավոր երկշաքր գարին (*Hordeum vulgare* subsp. *distichon* convar. *distichon*, նկ. 2) և սովորական փափուկ ցորենը (*Triticum aestivum* ssp. *aestivum* (*vulgare*) [= *Triticum vulgare*] (նկ. 1)): Մշակվել են նաև թեփուկավոր բազմաշաքր գարի (*Hordeum vulgare* subsp. *vulgare* convar. *vulgare*, նկ. 3), հաճար (*Triticum turgidum* subsp. *dicocum* [= *Triticum dicocum*]; նկ. 5), կունդիկ ցորեն (*Trit-*

*icum aestivum* ssp. *compactum* [= *Triticum compactum*]) և աշորա (*Secale cereale*), սակայն անհամեմատ քիչ քանակություններով: Կորեկները (*Panicum miliaceum* և *Setaria italica*) Հարավային Կովկասում հայտնվել են միջին բրոնզի դարում, սակայն դրանց մշակության ծավալները նշանակալի են դարձել միայն ուշ բրոնզի դարում և հատկապես երկաթի դարում (Martin et al., 2021): Վերոնշյալ հացազգիների խառը ցանքեր են կիրառվել, ինչը այդ մշակաբույսերի համալիրը դարձրել է ավելի հարմարվողական և դիմացկուն՝ միջավայրային զանազան անբարենպաստ պայմանների նկատմամբ: Ըստ ներկա տվյալների՝ գարին գերակշռել է հիմնականում բարձրալեռնային պայմաններում, իսկ ցորենը՝ ցածրավայրերում (Hovsepian, 2015): Վանի թագավորությանը (Ուրարտու) նախորդող ժամանակներում տարածաշրջանում բուսաբուծության փոփոխությունները հիմնականում պայմանավորված են եղել կլիմայական փոփոխություններով, սակայն գյուղատնտեսական համակարգերի վերջնական ձևավորումը կատարվել է տնտեսական արդյունավետության և գյուղատնտեսական ավանդույթների՝ ներառյալ մշակութային կապվածության ազդեցությամբ:

**Եզրակացություններ**  
(հարցադրումների (Յ) և բացատրությունների (Բ) ձևով)

Յ – Մարդիկ ինչո՞ւ սկսեցին երկրագործությամբ զբաղվել լեռնային դժվարամատչելի և դժվար մշակվող հողատարածքներում:

Բ – Կլիմայի չորայնացման, ցածրադիր շրջաններում ջրային ռեսուրսների կրճատման պայմաններում լեռներում դեռ կային երկրագործության համար ջրի/խոնավության (անձրև, աղբյուրներ, են) բավարար պաշարներ:

Հ – Վաղ բրոնզեդարից վաղ երկաթեդար ժամանակահատվածում միայն հացաբույսերի մշակությամբ բուսաբուծությունը արդյո՞ք պայմանավորված էր ջրային պաշարների կրճատմամբ:

Բ – Կլիմայի չորայնացումը, ամենայն հավանականությամբ, եղել է այդ երևույթի սկզբնական և հիմնական պատճառը, քանզի ռոտգումը պարտադիր է չոր ցածրավայրերում երկրագործության համար, մինչդեռ որոշ դժվարադիմացկուն մշակաբույսեր լեռներում կարող են մշակվել առանց ռոտգման՝ միայն անձրևների ջրով:

Հ – Ինչո՞ւ էին ցածրավայրերում ապրող մարդիկ ևս միայն հացաբույսեր մշակում:

Բ1 – Հնարավոր է՝ ջրի հասանելիությունը լեռներում ապրող համայնքներին տվել է միջավայրային և տնտեսական առավելություն, որն էլ պատճառ

է հանդիսացել նրանց արտադրության ձևերի, առաջին հերթին՝ գյուղատնտեսական ավանդույթների՝ ցածրավայրերում ապրող համայնքներում տարածման և ամրապնդման համար:

Բ2 – Լեռնաքնակ անասնապահ համայնքների աճը հացաբույսերի պահանջարկ է առաջացրել (մարդու օրգանիզմին անհրաժեշտ սննդանյութերից սպիտակուցների և ճարպերի պահանջարկը լրացվել է կենդանական մթերքով, իսկ ածխաջրերի՝ ամենամեծ պահանջարկը կարող էր ապահովվել հացաբույսերի օգտագործմամբ), որն էլ աստիճանաբար դուրս է մղել պակաս պահանջարկ ունեցող մշակաբույսերի մշակությունը:

Բ3 – Ցածրավայրերում և բարձրավայրերում ապրող մարդիկ միևնույն համայնքի ներկայացուցիչներ են եղել (այսինքն՝ ունեցել են համակցված, մասամբ՝ ստակյաց, մասամբ՝ հեռագնա անասնապահական կենսակերպ):

### Նշումներ և շնորհակալություններ

Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» նախագծի (21AG-6A080) շրջանակում:

### Acknowledgments

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project № 21AG-6A080) entitled “Culture of water use in the Armenian Highland from antiquity to present days”.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

Areshian, G. E., Gasparyan, B., Avetisyan, P. S., Pinhasi, R., Wilkinson, K., Smith, A., Hovsepian, R., & Zardaryan, D. (2012). The Chalcolithic of the Near East and south-eastern Europe: discoveries and new perspectives from the cave complex Areni-1, Armenia. *Antiquity*, 86 (331), 115-130. <https://doi.org/10.1017/S0003598X00062499>

Avetisyan, H., Avetisyan, P., Gasparyan, B., Gabrielyan, I., Nahapetyan, S., Hovsepian, R., & Arakelyan, D. (2005). Paleo- and archaeo- environment of the adjacent territories of the Aramus monument (Kotayk plateau). *Yearbook of Faculty of History of Yerevan State University*, 211-233 (in Russian).

Avetisyan, P., & Bobokhyan, A. (2012). Archaeology of Armenia in regional context: Achievements and perspectives. In P. Avetisyan, & A. Bobokhyan (Eds.) *Archaeology of Armenia in regional context*. (pp. 7-20). Gitutyun.

Badalyan, M., Mikayelyan, A., Yeghiazaryan, A., Kyureghyan, H., Hovsepian, R., Simonyan, H., & Nahapet-

yan, S. (2022). Preliminary results of 2017-2019 excavations of Odzaberd. In M. Badalyan, K. Martirosyan-Olshansky, & A. Bobokhyan (Eds.). *Armenia Maritima. Archaeological heritage of the land Uduri-Etiuni* (pp. 345-360). Yerevan, IAE (in Armenian).

Badalyan, R., Smith, A. T., Lindsay, I., Harutyunyan, A., Greene, A., Marshall, M., Monahan, B., Hovsepian, R., Meliksetian, Kh., Pernicka, E., & Haroutunian, S. (2014). A preliminary report on the 2008, 2010, and 2011 investigations of Project ArAGATS on the Tsaghkahovit Plain, Republic of Armenia. In *Archäologische Mitteilungen aus Iran und Turan* (vol. 46, pp. 123-222). Deutsches Archäologisches Institut.

Chataigner, Ch., Gratuze, B., Tardy, N., Abbès, F., Kalantaryan, I., Hovsepian, R., Chahoud, J., & Perello, B. (2020). Diachronic variability in obsidian procurement patterns and the role of the cave-sheepfold of Getahovit-2 (NE Armenia) during the Chalcolithic period. *Quaternary International*, 550, 1-19. <https://doi.org/10.1016/j.quaint.2020.02.010>

Chilingaryan, S. S. (1971). *Prehistoric monuments of the Noyemberyan region* [Unpublished doctoral dissertation]. Yerevan (in Russian).

Gabrielyan, I. G. (2001). Report on the discovery of remains of cultivated plants in archaeological excavations in the vicinity of the Hnaberd and Gegharot villages of the Aragatsotn region of the Republic of Armenia. Yerevan, IAE (in Russian).

Gandilian, P. A. (1998). Archaeobotanical evidence for evolution of cultivated wheat and barley in Armenia. In A. B. Damania, J. Valkoun, G. Willcox, & C. O. Qualset (Eds.). *Origins of Agriculture and Crop Domestication* (pp. 280-285). ICARDA.

Gandilyan, P. A. (1976). Some data on the evolution of cultivated wheat and barley based on archaeological materials. *Abstracts of reports of the 3rd Congress of Armenian society of geneticists and breeders named after N.I. Vavilov* (pp. 25-26). Yerevan (in Russian).

Gevorgyan, A., Danielyan, H., Hovsepian, R., Vanyan, H., Manaseryan, N., Manoukian, N., Azizyan, A., & Bobokhyan, A. (2021). Margahovit: Craft and subsistence economy in a Bronze/Iron Age community between Pambak and Bazum Mountains, Armenia. In P. Avetisyan, & A. Bobokhyan (Eds.). *Archaeology of Armenia in regional context* (pp. 69-86). IAE, RA NAS.

Gulkanyan, V. O. (1966a). Clay-made paired-communicating vessel from the excavations of Karmir-Blur, *Historical-Philological Journal*, 1(32), 265-270 (in Russian).

Gulkanyan, V. O. (1966b). About some agricultural crops from Argishtikhinili. *Historical-Philological Journal*, 4(35), 103-116 (in Russian).

Hovsepian, R. (2007a). Pots contents at Nerkin-Naver tomb №4 (Republic of Armenia). *Proceedings of conference “Archaeology, ethnology and folklore of the Caucasus”*. Universal, 233-234.

Hovsepian, R. A. (2007b). Paleoethnobotanical material from vessels of tomb N3 of the Nerkin Naver cemetery. *Proceedings of conference “Archaeology, ethnography and folkloristics of the Caucasus”*, Epokha, 215-217 (in Russian).

Hovsepian, R. (2008). Appendix 2: The palaeobotanical

- remains from Early Bronze Age Gegharot (pp. 97-101). In Badalyan, R., Smith, A. T., Lindsay, I., Khatchadourian, L., & Avetisyan, P., with appendices by Monahan, B., & Hovsepian, R. Village, Fortress, and Town in Bronze and Iron Age Southern Caucasia: A preliminary report on the 2003-2006 investigations of Project ARAGATS on the Tsaghkahovit Plain, Republic of Armenia. *Archäologische Mitteilungen aus Iran und Turan*, 40, 45-105.
- Hovsepian, R. (2009). Exploitation of natural vegetal resources in Chalcolithic Areni-1 cave settlement (Armenia). *Proceedings of conference "The construction of mountain territories resource exploitation and practice mobility"*. Toulouse 2 University.
- Hovsepian, R. (2010). New data on agriculture of Aparan-III Early Bronze Age settlement (Armenia). *Biological Journal of Armenia*, 4(62), 31-37.
- Hovsepian, R. (2011a). Palaeoethnobotanical data from the high mountainous Early Bronze Age settlement of Tsaghkasar-1 (Mt. Aragats, Armenia). *Ethnobiology Letters*, 2, 58-62. <https://doi.org/10.14237/ebl.2.2011.25>
- Hovsepian, R. (2011b). Archaeobotanical findings from Yenokavan-2 cave site (Armenia). *Biological Journal of Armenia*, 1(63), 83-84.
- Hovsepian, R. (2013). *First archaeobotanical data from the basin of Lake Sevan*. Veröffentlichungen des landesamtes für denkmalpflege und archäologie Sachsen-Anhalt, 67 (Archäologie in Armenien II), 93-105.
- Hovsepian, R. (2014a). Preliminary data on anthracological study at Godedzor Chalcolithic settlement (Armenia). *Habitus: Studies in Anthropology and Archaeology*, 1, 206-211.
- Hovsepian, R. (2014b). Appendix 1: Archaeobotanical Investigations at Iron Age III Tsaghkahovit (pp. 152-153, 163-164). In Khatchadourian L. Empire in the Everyday: A Preliminary Report on the 2008-2011 Excavations at Tsaghkahovit, Armenia. *American Journal of Archaeology*, 118(1), 137-169. <https://doi.org/10.3764/aja.118.1.0137>
- Hovsepian, R. (2015). On the agriculture and vegetal food economy of Kura-Araxes culture in the South Caucasus. *Paléorient*, 41(1), 69-82. <https://doi.org/10.3406/paleo.2015.5656>
- Hovsepian, R. (2017a). Archaeobotanical sampling: Instructions for fieldwork. *Proceedings of the Institute of Archaeology and Ethnography*, 2, 212-216.
- Hovsepian, R. (2017b). New data on archaeobotany of the Lake Sevan basin. *Iran and the Caucasus*, 21(3), 251-276. <https://doi.org/10.1163/1573384X-20170302>
- Hovsepian, R. (2018). Archaeobotanical data from an "agglomerated cells" type site: Plant macro-remains from Arteni-1 (Armenia). *Journal of Archaeological Science: Reports*, 21, 619-628. <https://doi.org/10.1016/j.jas-rep.2018.08.017>
- Hovsepian, R. (2021a). Current results of archaeobotanical studies at the Neolithic settlement of Aknashen (Ararat valley). In R. Badalyan, Ch. Chataigner, & A. Harutyunyan (Eds.). *The Neolithic settlement of Aknashen (Ararat valley, Armenia), excavation seasons 2004-2015* (pp. 249-256). Archaeopress.
- Hovsepian, R. (2021b). Seeds from vishaps' environment: Archaeobotanical findings from the high mountainous site of Karmir Sar (Tirinkatar, Mt. Aragats, Armenia). *Quaternary International*, 579, 19-28. <https://doi.org/10.1016/j.quaint.2020.05.026>
- Hovsepian, R. (2023). Production, foraging and use of plants at Shengavit. In H. Simonyan, & M.S. Rothman (Eds.). *Shengavit: A Kura-Araxes center in Armenia* (pp. 113-128). Mazda Publishers.
- Hovsepian, R., & Kalantaryan, I. (2019). Findings of grape from the Eneolithic layers of the Getahovit-2 cave (Ijevan) (mid 5th millennium BC). *Historical-Philological Journal*, 1(210), 171-176 (in Armenian).
- Hovsepian, R., & Willcox, G. (2008). The earliest finds of cultivated plants in Armenia: evidence from charred remains and crop processing residues in pisé from the Neolithic settlements of Aratashen and Aknashen. *Vegetation History and Archaeobotany*, 17(1), 63-71. <https://doi.org/10.1007/s00334-008-0158-6>
- Lisitsyna, G. N., & Prishchepenko, L. V. (1977). *Paleo-ethnobotanical finds of the Caucasus and the Middle East*. Nauka (in Russian).
- Martin, L., Messenger, E., Bedianashvili, G., Rusishvili, N., Lebedeva, E., Longford, C., Hovsepian, R., Bitadze, L., Chkadua, M., Vanishvili, N., Le Mort, F., Kakhiani, K., Abramishvili, M., Gogochuri, G., Murvanidze, B., Giunashvili, G., Licheli, V., Salavert, A., Andre, G., & Herrscher, E. (2021). The place of millet in food globalization during Late Prehistory as evidenced by new bioarchaeological data from the Caucasus. *Scientific Reports*, 11, 13124. <https://doi.org/10.1038/s41598-021-92392-9>
- Melkonyan, S. A., & Gabrielyan, I. G. (2001). Archaeobotanical materials of the Late Bronze Age Hnaberd. *Proceedings of conference "XXI century: Ecological Science in Armenia"*. Yerevan-Byurakan, 212-217 (in Armenian).
- Mirzoyan, L., Gabrielyan, I., Badalyan, R., & Tedesco, L. (1998). Paleoethnobotanical materials of Horom (Late Bronze Age - Iron Age). *Culture of Ancient Armenia*, 11, 47-49 (in Russian).
- Palumbi, G., Kalantaryan, I., Bălășescu, A., Barge, O., Chahoud, J., Hovsepian, R., Meliksetian, Kh., Avetisyan, P., & Chataigner, Ch. (2021). Early pastoralism and natural resource management: recent research at Godedzor. *Archéologie(s)*, 5, 285-324.
- Piotrovsky, B. B. (1950). *Karmir-Blur* (vol. 1). Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Piotrovsky, B. B. (1952). *Karmir-Blur* (vol. 2). Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Piotrovsky, B. B. (1955). *Karmir-Blur* (vol. 3). Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Piotrovsky, B. B. (1961). The main stages of ancient agriculture in Armenia. *Historical-Philological Journal*, 3-4, 108-121 (in Russian).
- Smith, A., Bagoyan, T., Gabrielyan, I., Pinhasi, R., & Gasparyan, B. (2014). Late Chalcolithic and Medieval Archaeobotanical Remains from Areni-1 (Birds' Cave), Armenia. In B. Gasparyan, & M. Arimura (Eds.), *Stone Age of Armenia, Kanazawa* (pp. 233-260). Kanazawa University.
- Torosyan, R. M. (1976). The early agricultural settlement of Teghut (IV millennium BC). *Archaeological Excavations in Armenia*, 14, 1-144 (in Armenian).

- Tumanyan, M. G. (1944). Cultivated plants of the Urartian period in the Armenian SSR. *Bulletin of Academy of Sciences of Armenian SSR, Social sciences, 1-2*, 73-82 (in Russian).
- Tumanyan, M. G., (1948). The main stages of the evolution of barley in Armenia. *Bulletin of Academy of Sciences of the Armenian SSR, Biological and agricultural sciences, 1*, 73-85 (in Russian).
- Wilkinson, K. N., Gasparian, B., Pinhasi, R., Avetisyan, P., Hovsepian, R., Zardaryan, D., Areshian, G. E., Bar-Oz, G., & Smith, A. (2012). Areni-1 Cave, Armenia: A Chalcolithic–Early Bronze Age settlement and ritual site in the southern Caucasus. *Journal of Field Archaeology, 37*(1), 20-33. <https://doi.org/10.1179/0093469011Z.00000000002>
- Zardaryan, M., & Hovsepian, R. (2017). The agriculture of Western Syunik, Armenia in the light of archaeological and archaeobotanical data (preliminary study on the economy of early Yervandid settlements). In P.S. Avetisyan, & Y.H. Grekyan (Eds.), *Bridging times and spaces: papers in Ancient Near Eastern* (pp. 385–398), Mediterranean and Armenian Studies. Oxford, Archaeopress.
- Zohary, D., Hopf, M., & Weiss, E. (2012). *Domestication of plants in the Old World*. Oxford University Press.



# THE LION-DRAGON OF EBLA AND THE ICONOGRAPHY OF THE FLOW OF HEAVENLY WATERS

Arsen Bobokhyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

## Abstract

The iconography of water emanating from the mouths of mixed elemental figures - dragons found on monuments from the lowland and mountain regions of the ancient Near East reveals a semantic cluster that has its landscape of action (mountains, underworld/heaven, sanctuary), actors (deities, dragons, heroes), description of the act (dragon slayer, ritual, fertility), objects of the action (throne, chariot, statue). The existing parallels show not only the commonality of the water emanation motif but also other connections that can be observed in the same context, which are the result of active commercial and cultural interactions. The Armenian Highland was also involved in those relations. The corresponding pictorial units reproduce a mythical landscape of the mountains, also seen from the plains. That zone is located beyond the Taurus mountains, it is rich in water resources and ensures the well-being of the Syrian-Mesopotamian lowland zone. The main period of the spread of this motif is the Middle Bronze Age, the end of the 3rd - first half of the 2nd millennium BC. However corresponding concepts are also present during the Late Bronze Age.

**Keywords:** Syria, Mesopotamia, Ebla, Armenian Highland, Middle Bronze Age, Trialeti culture, iconography, dragon.

## ԵԲԼԱՅԻ ՎԻՃԱՊԱՆՅՈՒԾԸ ԵՎ ԵՐԿՆԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԶՈՒՔԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Արսեն Բոբոկյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

### Ամփոփագիր

Հին Մերձավոր Արևելքի ցածրադիր և լեռնային շրջանների հուշարձանների վրա նկատվող տարերային խառնելակների՝ վիշապների բերանից բխող ջրի պատկերագրությունը բացահայտում է մի իմաստային բույլ, որի բաղադրատարրերն են գործողության յուրահատուկ լանդշաֆտը (լեռներ, անդրաշխարհ/դրախտ, սրբավայր), դրա կրողները (աստվածություններ, վիշապներ, հերոսներ), գործողության նկարագրությունը (վիշապամարտ, ծես, պտղաբերություն) և դրան առնչվող առարկաները (գահ, կառք, արձան): Առկա գուգահեռները ցույց են տալիս ոչ միայն ջրի արտանետման մոտիվի ընդհանրությունը, այլև նույն համատեքստում նկատվող այլ առնչություններ, որոնք ակտիվ առևտրական և մշակութային փոխազդեցությունների արդյունք են: Այդ հարաբերություններում ներգրավված էր նաև Հայկական լեռնաշխարհը: Համապատասխան պատկերային միավորները վերարտադրում են լեռների առասպելական ոլորտն ինչպես լեռնաբնակների, այնպես էլ դաշտավայրաբնակների տեսանկյունից: Այդ գոտին գտնվում է Տավրոսյան լեռներից անդին, հարուստ է ջրային պաշարներով և ապահովում է սիրիա-միջագետքյան հարթավայրային շրջանների բարեկեցությունը: Այս մոտիվի տարածման հիմնական դարաշրջանը միջին բրոնզե է՝ մ.թ.ա. 3-րդ հազ. վերջ - 2-րդ հազ. կես, սակայն համապատասխան աշխարհայացքային տարրեր հանդիպում են նաև ուշ բրոնզի դարում:

**Հիմնաբառեր.** Սիրիա, Միջագետք, Էբլա, Հայկական լեռնաշխարհ, միջին բրոնզի դար, թեոքր-վանաձորյան մշակույթ, պատկերագրություն, վիշապ:

### Ներածություն

Միջինբրոնզեդարյան Էբլայի միջնաբերդում գտնվող Իշտարի տաճարի երկու մոնումենտալ հուշարձանների՝ Իշտարի կոթողի և կրաքարե ավագանի վրա պատկերված է «վիշապառնուց» կոչված

խառնելակը: Այն բնութագրվում է առյուծի գլխով, մարմնով և առջևի ոտքերով, ինչպես նաև գիշատիչ թռչնի թևերով, պոչով ու ետևի ոտքերով՝ առնչվելով ամպրոպի աստվածությանն ու աստվածուհուն, որոնք սանձում/հաղթում են վիշապին: Վիշապի բե-

րանից, որպես կանոն, ջուր է ցայտում: Իր պատկերագրության բոլոր մանրամասներով, այս կերպարը նույնական է արքադական կնիքների վրա պատկերված համանման էակներին: Էբլայի հուշարձանների վրայի կոմպոզիցիան քաղցրահամ ջրի, ստորգետնյա ավազանի և անձրևների առաջացման գաղափարի առասպելական վերարտադրությունն է, որը հայեցակարգային զուգահեռներ է գտնում սիրիամիջագետքյան հուշարձաններից մինչև Հայկական լեռնաշխարհի վիշապ քարակոթողների խորհրդանշական համակարգը: Ընդ որում, պատկերագրական միավորները փոխներթափանցում են իրար մեջ՝ փորձելով վերարտադրել լեռների ջրային պաշարներով հարուստ լանդշաֆտը: Այս պատկերագրական դրվագի տարածման հիմնական ժամանակաշրջանը Ք.ա. 3-րդ հազ. վերջը և 2-րդ հազ. առաջին կեսն է, թեև համանման դրվագներ հանդիպում են նաև ավելի ուշ շրջանի հուշարձաններում:

Ներկայացվող հողվածը քննարկում է մեթոդաբանական այն հարցը, թե արդյոք վիզուալ պատկերագրական առնչությունը կարող է հիմք լինել հնագիտական օբյեկտների թվագրության համար: Որպես օրինակ վերցրել ենք ջուր արտաբերող վիշապի պատկերը հին առաջավորասիական արվեստում: Հայտնի է, որ այն հանդիպում է Հայկական լեռնաշխարհի կոթողային արվեստի նշանավոր նմուշների՝ վիշապաքարերի վրա: Մասնավորապես ցլակերպ վիշապաքարերի դիմային հատվածի պատկերագրական առանձնահատկությունն այն է, որ ցլի բերանից, որպես կանոն, հեղուկ է արտահոսում: Ուսումնասիրողների մեծ մասն այդ հեղուկը մեկնում է որպես ջուր. ընդ որում, ջրի ցայտման հանգամանքը հիմք է դառնում ասելու, որ կոթողները սկզբնապես ուղղաձիգ են կանգնած եղել, այլապես ցլի բերանից հոսող ջուրն այլ դիրք կունենար (Abeghyan, 1941, 86): Մի մեկնության համաձայն՝ ժայթքող նյութը «ջուր-սերմ» է (Lisitsyan, 1960, 45): Ենթադրվել է նաև, որ ցլապատկերի բերանից կարող էր արյուն ցայտել (Khanzadyan, 1969, 142; Gevorkyan & Bobokhyan, 2015; Storaci & Gilibert, 2019, 519-520) կամ բոց ժայթքել (Hmayakyan et al., 2015, 222): Այս բոլոր մեկնություններից ավելի հավանական է թվում ջրի վարկածը, հատկապես, երբ համապատասխան պատկերագրությունը համեմատում ենք առաջավորասիական համանման հուշարձանների ընդհանուր բովանդակության հետ (Matthiae, 2015, 213):

Տարերային կերպարի բերանից ջրի ցայտման մոտիվը քննարկվել է գրականության մեջ հատկապես Հասակուրի ոսկե գավաթի համատեքստում, նշվել է այդ մոտիվի առնչությունը վիշապաքարերի պատկերագրության հետ (Israyelyan 1973, 97, 98; Arakelyan 1976, 51; Kushnaryeva 1977, 55; 1991, 100; Mar-


tirosoyan 1981, նկ. 26; Petrosyan 2015, 25; Storaci, Gilibert 2019, 538-539): Վերջերս հարցն արծարծվել է հյուսիսային Իրանից ծագող բրոնզե մի թիթեղի կապակցությամբ, որը պատկերում է աստվածուհու կառքը քաշող երկու ընձառյուծ, որոնց բերանից ջրի շիթեր են ցայտում (Amiet 2006): Ներկայացվող հողվածի նպատակն է ցույց տալ համապատասխան մոտիվի առկայությունն առաջավորասիական հատակ թվագրություն ունեցող հուշարձանների վրա, որոնց ժամանակագրական սահմանները կարող են օգնել թվագրելու նաև ցլակերպ վիշապաքարերի համապատասխան պատկերագրությունը:

### Էբլայի բազալտե կոթողն ու կրաքարե ավազանը

Միջինբրոնզեդարյան Էբլայի միջնաբերդում գտնվող Իշտարի տաճարի երկու մոնումենտալ հուշարձանների վրա պատկերված է խառնէակ, որին գրականության մեջ կոչում են «վիշապառյուծ», և որի բերանից, որպես կանոն, ջուր է ցայտում: Դրանք են Իշտարի կոթողը (պատկերը՝ գլխավոր երեսի ստորին ռեգիստրում) և կրաքարե ավազանը (պատկերը՝ վերին ռեգիստրի մի կողմում): Բոլոր մանրամասներով, այս կերպարները նույնական են արքադական կնիքների վրա պատկերված համանման էակներին (Matthiae, 2015, 213, 214):

Էբլա քաղաքի արքա Իբիթ-Լիմի (Ք.ա. մոտ 2000 թ.) կողմից Իշտարին նվիրված քառակող բազալտե կոթողը, կոտրվել է Ք.ա. մոտ 1600 թ. խեթախոտիական հարձակման ժամանակ և ի մի է բերվել տարբեր կտորների հավաքման արդյունքում (Նկ. 1): Կոթողի բոլոր չորս կողմերը պատկերագրված են: Զարդագոտիների կենտրոնում՝ վերնամասում, ցլան վրա կանգնած Իշտարն է՝ թևավոր սրբավայրի մեջ, որը հսկվում է երկու ցուլ-մարդ խառնէակների կողմից, և որի շուրջ տեղի են ունենում տարբեր գործողություններ (նվիրաբերություններ, երաժիշտների նվագարկում, մարդ-առյուծ պայքար, գերեվաբուծություն, առկա են այծի և թռչնի պատկերներ): Այս պատկերագրական համակարգի ստորին հատվածում կարևոր դեր է խաղում վիշապառյուծը, որն ունի առյուծի մարմին, արծվի թևեր և օձի պոչ, «որի բերանից դուրս են ցայտում ստորերկրային ջրերը և որը աղբյուրների միջոցով պտղաբերություն է շնորհում դաշտերին»: Այս կերպարից վեր, նրա աջ մասում, թռչնի պատկեր է (Matthiae, 1986; 2013, 103-105, Fig. 9):

Էբլայի ավազանի վրայի պատկերում (Նկ. 2) վիշապառյուծի պոչը պահում է գանգուր մորուքով մերկ հերոսը, որի ձախ ձեռքից ջրի շիթեր են հոսում, իսկ աջ ձեռքից ձուկ է կախված (Matthiae, 2015): Այս կերպարը՝ արքադ. lahmu-ն (բառացի՝ «մագոս») բնութագրվում է որպես կյանքի պահա-



Նկ. 1. Միջին բրոնզեդարյան Էրլայի բազալտե քառակող կոթողի դիմային կողմի պատկերագրությունը, 172×46×27 սմ (Matthiae 2013, Fig. 9)

պան ջրային ոգի. նրա գանգուր մազերը ջրի այլ անուղղակի խորհրդանիշ են: Նա ենթարկվում է ստորերկրյա քաղցրահամ ջրերի տիրակալ Էային (Wiggemann, 1992, 148-150; հմմտ. Boehmer 1965, 92, 93): Ինչպես ճշտիվ նշում են Մ. Ստորաչին և Ա. Զիլիբերտը «Էրլայի ավազանի վրայի կոմպոզիցիան քաղցրահամ ջրի, ստորգետնյա ավազանի և անձրևների կրկնակի ծագման գաղափարի առասպելական վերարտադրությունն է, որը հայեցակարգային զուգահեռ է ստեղծում Միջերկրական Լևանտից մինչ վիշապաքարերի խորհրդանշական համակարգը» (Storaci, Gilibert 2019, 540):

**Միջագետքյան կնիքների գուգահեռները**

Առասպելական կենդանու բերանից ջրի ցայտման տեսարանը փաստագրված է նաև միջագետքյան մշակութային աշխարհում՝ սկսած Ք.ա. 3-րդ հազ. վերջերից: Մասնավորապես աքքադական շրջանի կնիքների վրա հանդիպում է ջուր արտաբերող խառնեակը, որը, ինչպես վերը նշեցինք, գրա-

կանության մեջ կոչվում է վիշապառնուր, իսկ աքքադերեն՝ abūbu (քառացի՝ «ջրհեղեղ») (Նկ.3): Այն բնութագրվում է առնուծի գլխով, մարմնով և առջևի ոտքերով, ինչպես նաև գիշատիչ թռչնի թևերով, պոչով ու հետևի ոտքերով՝ առնչվելով ամպրոպի աստվածությանն ու աստվածուհուն, որոնք սանձում/հաղթում են վիշապին: Ընդ որում, վիշապին հեծած ամպրոպի աստվածությունն այստեղ ևս հանդես է գալիս երկանիվ կամ քառանիվ կառքի վրա, իսկ նրա վերևում (թերևս լեռների վրա), որպես կանոն, կանգնած է մերկ աստվածուհին, որի ձեռքերից ջուր կամ անձրև է հորդում: Որոշ կնիքների վրա առկա է ամպրոպի աստվածության խորհրդանիշ ցուլը (Boehmer, 1965, 63, 64, Taf. XXXI; Seidl 1998; Matthiae 2015): Ինչպես ցույց են տալիս Ու. Զայդլը և Պ. Մատինեն, կնիքների վրա պատկերված վիշապառնուծի բերանից դուրս եկող տարրը ջուր է (Seidl, 1998, 112; Matthiae 2015, 213; հմմտ. նաև Dietz, 2023, Nr. 8, 9, 22):

Նույն պատկերագրական դրվագը՝ վիշապառնուծի բերանից ջուր դուրս գալու մանրամասնով,



Նկ. 2. Միջին բրոնզեդարյան Էբլայի կրաքարե ավազանի կողմերից մեկի լուսանկարը և վիշապառնուծի գծագիրը, 112×64×79 սմ (Matthiae 1966, Tav. XLVII; Seidl 1998, Abb. 10)



Նկ. 3. Աքքադական գլանաձև կնիք, պատահական գտածո, 3.4 սմ (Boehmer 1965, Nr. 373)

Նկ. 4. Վաղ բաբելոնյան գլանաձև կնիք, պատահական գտածո, 2.8 սմ (Dietz 2023, Nr. 40)

հանդիպում է նաև Ուր III (Dietz 2023, Nr. 30, 33.) և վաղ բաբելոնյան (Dietz, 2023, Nr. 39, 40, 46, 52) շրջանի կնիքների վրա (Նկ. 4): Կարծում ենք, որ վաղ բաբելոնյան կնիքների՝ խառնեակի բերանից դուրս եկող Թեշուբի եռաձանի-կայծակին նմանվող խորհրդանիշը նույնպես դիտարկելի է քննարկվող համատեքստում՝ նույնանալով կամ զուգահեռվելով ջրի հետ (որպես կանոն Ադադ=Թեշուբը նստած է վիշապագահին, կրում է կայծակի խորհրդանիշը, որի կողքին պատկերված են լեռ, ցուլ, երկնային մարմիններ):Ք.ա. 17-16-րդ դդ. թվագրվող մի սիրիական կնիքի վրա աստվածությունը կանգնած է լեռների վրա, նրա առջևում ցուլ է, իսկ բերանից դուրս է գալիս Թեշուբի սիմվոլը: Կարբենիշյան Ք.ա. 14-րդ դ. թվագրվող մեկ այլ կնիքի վրա՝ ամպրոպի աստվածությունը ցլի վրա է, որի բերանից դուրս է գալիս Թեշուբի խորհրդանիշը (Brentjes 1983, 117, 142, 180):

Ուշագրավ է, որ ուշ բրոնզեդարյան խոտիական Նուզի քաղաքն է վիշապառնուծի բերանից արտահոսող ջրի (Dietz 2023, Nr. 723, 724, 743, 726, 756,

թերևս նաև 761; հմմտ. Amiet 2006, Fig. 3) կամ Թեշուբի սիմվոլի (Dietz, 2023, Nr. 720, 739, 741, 748–750, 762) կնիքային պատկերագրության կենտրոնը (Նկ. 5): Ու. Ջայդլը հիմնավորելով, որ վիշապառնուծի բերանից դուրս եկող նյութն իրոք ջուրն է՝ բերում է նաև մի հետաքրքիր փաստ, ըստ որի՝ Նուզիի կնիքների պատկերները համապատասխանում են գրավոր աղբյուրների այն տվյալին, թե Ք.ա. 14-րդ դ. կեսերին խոտիական Տուշրատա արքան Եգիպտոս՝ Ամենհոփիս III-ի համար ուղարկում է փայտե մի տախտակ, որի վրա պատկերված էր abūbu, այսինքն՝ վիշապառնուծ (Seidl 1998, 101, 112, Abb. 11):

Կնիքների համատեքստում այստեղ հիշատակենք ևս մեկ հնարավոր առնչության մասին: Քանի որ սիրիամիջագետքյան պատկերագրության մեջ մագերը/միրուքը ևս ընկալվում են որպես ջրի անտղղակի վերարտադրություն (Wiggermann 1992, 148-150, հմմտ. Storaci, Gilibert 2019, 539, 540), ապա տրաբանական է թվում այն կարծիքը, թե Ուրի դամբարանների տավիղների ցլային պատկերի ալիքների նմանվող «միրուքը» ևս կարելի է մեկնաբանել

1 Վիշապառնուծը, տեսականորեն, կարող է արտաբերել ինչպես բոց-կայծակ (Dietz, 2023, 69), այնպես էլ ջուր (Dietz 2023, 71, 76, 89–91, 104, 124), ինչն, ի դեպ, իմաստաբանական տեսանկյունից հակասություն չի ստեղծում: Կա կարծիք նաև, թե իբր «առյուծ-վիշապի» էմանացիան ամպրոպի ձայնն է, որ պատկերվում է խառնեակի բացված բերանի միջոցով՝ խորհրդանշելով մոնյուն (Watanabe, 2018, 33, 34):



Նկ.5. Ուշ բրոնզեդարյան գլանաձև կնիք, Նուզի, 8.75 սմ (Dietz 2023, Nr.756)

որպես երկնային ջրերի խորհրդանիշ, ինչպես վիշապաքարերի վրա է (Kushnaryeva 1981, 100; հմմտ. Is 1973, 31-34, 97, 98): Այս պատկերագրական միավորին է հարում Վանից գտնված, Բրիտանական թանգարանում պահվող և նույն Ք.ս. 3-րդ հազ. վերջով թվագրվող բիզոնի բրոնզե արձանիկը, որի բերանի ներքևի հատվածից միտոս հիշեցնող ջրի շիթեր են իջնում: Ենթադրվում է, որ արձանիկն ունի շումերական ծագում (Chahin, 1987; Curtis et al., 2002, Tab. 14a):

**Վիշապառյուծի պատկերագրության իմաստաբանական բույլը**

Էբլայի հուշարձանների, միջագետքյան կնիքների, Հասանլուի գավաթի, հայկական վիշապաքարերի և այլ հուշարձանների վրա հանդիպող վիշապի բերանից ջրի էմանացիայի պատկերագրությունը բացահայտում է իմաստաբանական մի համակարգ, որն ունի իր գործողության լանդշաֆտը, ակտորները, ակտի նկարագրությունը, գործողության առարկաները:

Լանդշաֆտի տեսանկյունից նկարագրվում է երեք միավոր՝ լեռ (որի վրա պատկերված կամ կանգնած է աստվածությունը, և որտեղ ապրում է վիշապը), ստորերկրայք/երկինք, որտեղից ցայտում է ջուրը և լեռնային սրբավայր: Գործող անձանց կարելի է բաժանել երեք դասի՝ աստվածություններ (արական՝ Թեշտի ոճի և Իգական Իշտարի ոճի), խառնեակներ (վիշապ-հրեշ-ցուլ-օձ-ձկնացուլ, ցուլ-ընձառյուծ, առյուծ-արծիվ-օձ, ցուլ-մարդ), մարդիկ

(կամ հերոս-հսկաներ): Գործողությունը ներկայացվում է երեք մակարդակում՝ վիշապամարտ (ամպրոպի աստվածությունն ու սիրո աստվածուհին ծովում կամ լեռներում կռվում են վիշապի դեմ), ծես-խաղ-գոհաբերություն, պտղաբերության հաստատում (ջրի էմանացիայի միջոցով): Առարկաներից տեսանելի են գահը («վիշապագահ»), քար/բազալտ-արձանը (1-2-ը ինչ-որ տեղ նույնանում են լեռանը), կառքը (հեծնում է աստվածությունը, նստում է աստվածուհին, քաշում է ցուլը, ընձառյուծը, վիշապառյուծը), երկրորդական առարկաներ (աթոռ, անոթ, իշխանության խորհրդանիշ են):

Այն առասպելական լանդշաֆտը, որը նկարագրվում է համապատասխան պատկերագրության մեջ, լեռնային գոտի է և ակնհայտորեն գտնվում է Տավրոսից անդին: Փնտրելով այս ընկալման պատճառները՝ պետք է հաշվի առնել դրա լեռնային, հրաբխային և ջրերով հարուստ լինելու հանգամանքը: Հրաբուխների և դրանց միջավայրի մասին տեղեկություններ են պահպանվել շումերական և խուտի-խեթական առասպելներում, որոնցում նկարագրվող տարածքները տեղայնացվում են գլխավորապես Վան և Ուրմիա լճերի միջև ու Արարատ, Թոնդրակ և Նեմրուֆ սարերի շրջակայքում (Foster, 2000, 33, 34; Gadjimuradov, 2004; Haas, 2003; 2006, 131, 156-157, 172-174): Այսպես, օրինակ, շումերական «Լուգալ» վեպում, որն, ի դեպ, նկարագրում է Նի-նուրտա աստվածության պայքարն անգուի = վիշապառյուծի = abūbu-ի դեմ (Watanabe 2018, 34), իրադարձությունները տեղի են ունենում գետերի ակունքներում գտնվող, ջրերով հարուստ, լեռնային և հրաբխային մի լանդշաֆտում, որին բնորոշ են գրանիտ, բազալտ, ստեատիտ, հեմատիտ և կանաչ վանակատ քարերը: Այս հանքատեսակների և, հատկապես, կանաչ վանակատի (որը բնորոշ է միայն Վանի, մասնավորապես Նեմրուֆ լեռան գոտուն) հիշատակումը կասկած չի հարուցում, որ գործ ունենք Վանա լճի և հարակից շրջանների հետ: Չնայած բնույթով առասպելական, սակայն հիշյալ տվյալները, ինչպես ճիշտ նկատում է Կ. Ֆոսթերը, վկայում են այն մասին, որ միջագետքյաները որոշակի պատկերացումներ են ունեցել այս լեռնային գոտու մասին (Foster, 2000, 31-33): Հեղինակը փորձում է վերականգնել նաև հրաբխային այս տարածքի պատկերագրական դրսևորումները առաջավորասիական արվեստում. նրա կարծիքով այս լանդշաֆտն է պատկերված Հասանլուի ոսկե գավաթի վրա (Foster, 2000, 35-37):

Գործող կերպարներից վիշապի մասին արդեն խոսվեց՝ տարրերային մի կերպար, որն ունի մի շարք մարմնավորումներ՝ ցուլ, ձուկ, օձ, խառնեակ (վիշապառյուծ, ձկնացուլ, ցուլ-ընձառյուծ, ցուլ-մարդ): Մարդ էակները՝ հերոս-հսկաները, որոնց ամենահա-

վանական մարմնավորումը կարող է լինել խոտիական Ուլիկումին կամ միջազգետքյան *labmu*-ն, իրենց մեջ կրում են միջնորդական երկակիություն: Ինչ վերաբերում է աստվածություններին, վիճակն, այստեղ, ավելի պարզ է. խոսքը Թեշուր-Գագոն-Վահագն տիպի<sup>2</sup> արական ամպրոպային և Իշտար-Շավուշկա-Աստղիկ տիպի իգական սիրո աստվածությունների մասին է: Վիշապային համատեքստում պատմվող կանացի սկզբի մասին առասպելները հատկապես առատ են խաթա-խեթա-խոտիական աշխարհում, մասամբ ունեն գուգահեռներ Միջազգետքում և հույների մոտ, որոնցում կան լեռների և լեռների պաշտամունքի հետ առնչվող մի շարք իգական աստվածություններ (Իշտար, Իսանա, Նին-խուրսագ, Կուրբա, Լիլուրի) (Haas, 1982, 83-104): Հատկապես Իշտարն է կապվում լեռների հետ, այրում է լեռների գագաթին, ում օգնական հոգիներն են աղավաին, ծիծեռնակը, բազեն, որոնք (դրանցից երկուսը) հաճախ պատկերվում են դիմահայաց: Նրա հետ է կապվում ընծայումը: Ենթադրվում է, որ Իշտար-Շավուշկան է պատկերված նաև Հասանլուի գավաթի վրա, որպես մերկ աստվածուհի՝ երկու այծերի վրա կանգնած (Haas, 1982, 83-85, 202): Ակնհայտ է, որ նույն Իշտարն է հայտնվում Էբլայի բազալտե արձանի վրա: Նա Էբլայի ամորեական հարստության գերագույն աստվածուհին էր և կրում էր «էգ առյուծ» մականունը: Այն, մի կողմից, խթոնիկ կերպար էր՝ կապվելով պատերազմի հետ, մյուս կողմից՝ խորհրդանշում էր սերը և պտղաբերությունը: Էբլայական Իշտարի պաշտամունքը հայտնի էր նաև այդ քաղաքից դուրս (Matthiae, 2013, 103): Նույն համատեքստում պատահական չէ, որ ըստ խեթական մի տեքստի, Իշտարի արձանը դրվում էր լեռան գագաթին, աղբյուրի ակունքի մոտ (Haas, 1982, 109, 110):

Ինչ վերաբերում է գործողությանը՝ մասնագետները համակարծիք են, որ ինչպես առաջավորասիական, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի համապատասխան հուշարձաններում պատկերված է վիշապամարտի տեսարան՝ ամպրոպի աստվածության և նրան ուղեկցող աստվածուհու կոնվոլվիշապի դեմ: Վիշապամարտն ավարտվում է ծե-

տով, խաղով կամ զոհաբերությամբ, ինչը պատկերված է նաև Էբլայի կոթողի վրա: Ամպրոպի աստվածության հաղթանակը տիեզերածնության առանցքն է, այն սկիզբ է դնում հոսող ջրերին, բնության զարթոնքին, պտղաբերությանը, ինչն էլ ջրի արտահոսքի ձևով առկա է քննարկվող բոլոր հուշարձանների վրա (Petrosyan, 2015, 15, 16; Russell, 1987, 210, 211):

Պատկերագրական այս միջավայրում կարևոր դեր են խաղում առարկաները, որոնց շարքում է գաիր: Խեթա-խոտիական պատկերացումներում լեռների գագաթներն աստվածների գահերն են, որտեղ նստում է Ամպրոպի աստվածությունը: Այսպիսի ժայռային գահերի պաշտամունքն արտահայտված է խեթական ծեսերում (օրինակ՝ Խիշուվա ծեսում), որոնցում գահին, լեռներին և գետերին զոհեր են մատուցվում՝ ստորին աշխարհի տաճարում գտնվող գահի մոդելի մոտ: Գահի մասին նման պատկերացումներ, ինչպես նշում է Ֆ. Հասսը, առկա են նաև փոյուզիացիների, լիկիացիների, լիդիացիների և հայերի մոտ<sup>3</sup>: Լեռնային գահ է պատկերված նաև Հասանլուի գավաթի վրա, որտեղ առկա է լեռների ինչ-որ հովանավոր աստվածություն, և որի ետնամասից դուրս են գալիս երեք վիշապային կերպարներ. Ֆ. Հասան այս գահը կոչում է «վիշապագահ» (Haas, 1982, 201, 202): Կովկասյան գուգահեռներով խաթական մի առասպելի համաձայն՝ Ներկում անձրևները վերանում են, Ցալիանու լեռը անձրև է տենչում և ջրամբար ձևավորում, որի վերնամասում գտնվում է կունկունուցի քարից նստարանը/գահը (Ardzinba, 1985, 160):

Առարկաների թվում կարևոր է նաև կառքի կամ մարտակառքի առկայության պարագան, որը քաշվում է վիշապայությունի, ընծայությունի կամ ցլան կողմից: Ամպրոպի աստվածության՝ լեռնագագաթից կառքով իջնելու և հակառակորդի դեմ կովելու մոտիվը տարածված է տարբեր ժողովուրդների (Ivanov, 1991, 664), այդ թվում նաև՝ հայերի<sup>4</sup> մոտ:

## Եզրակացություններ

Քննարկվող պատկերագրական մոտիվի հետազոտությունը ցույց է տալիս, որ Առաջավոր Ա-

2 Այս շարքում պետք է հիշել նաև շումերական Էնկի աստվածության կերպարը, որը ջրային սկզբի մարմնավորումն է, ձկների հովանավորը, որին ձուկ են զոհաբերում և որին պատկերում են լեռան վրա կանգնած՝ որպես այծ և ձուկ: Նրա ուտերից/կողերից ջրի շիթեր են դուրս գալիս: Նա նաև «ջրանցքների հսկիչն» է և պահպանում է տիեզերքի հավասարակշռությունը: Նրա հետ են կապվում սահմանաքարերը (Belitski, 1980, 195, 213, 215; Petrosyan, 2004, 118):

3 Haas 1982, 67, 96. գահի հետ են առնչվում Արայի, Միհրի, Անահիտի նստավայրերը (Kapantsyan, 1957, 311):

4 Ըստ Մովսես Խորենացու (I, ԻԶ)՝ Տիգրանի հակառակորդ Աժդահակի երագում երևում է բարձր մի լեռ (Մասիսը), որից հետո հայտնվում է մի կին ու ծնում երեք դուստրուհու. մեկն առյուծ հեծած, երկրորդն՝ ընծայուհու, իսկ երրորդը, վիթխարի վիշապ սանձած, արշավում է Մարաստանի վրա: Մեկ այլ արխիվի ավանդագրույցի համաձայն՝ Մասիսի վրա ապրում է օձերի թագավորը, որն ամեն օր իջնում է ցած՝ ջուր խմելու: Մի անգամ նա զբոսանքի է դուրս գալիս իր հրեղեն կառքով, որը դիպչում է մի սարի՝ երկու մասի բաժանելով նրա կատարը, ինչից հետո սարը կոչվում է Վիշապասար (Ghanalanyan, 1969, 11-12) (ավանդագրույցի վրա մեր ուշադրությունը սևեռելու համար շտրիակալություն ենք հայտնում բանագետ Տ. Դավայանին): Իսկ Գրիգոր Նարեկացու «Հարության տաղ»-ում նկարագրվում է նույն Մասիս սարից իջնող և եզներով լծված սայլը, որի վրա ոսկեղեն գահ է, իսկ գահին՝ Արքայորդին է: Մայլին առնչվող երկրագործական տարատեսակ տերմինները տեքստին խոր արխիվություն են հաղորդում (Abgaryan, 1974):

սիայի լեռնային և դաշտավայրային գոտիներում առկա են ընդհանուր պատկերացումներ լանդշաֆտի, գործող անձանց, առասպելական գործողությունների, դրա հետ կապված առարկաների վերաբերյալ: Առկա զուգահեռները բացահայտում են ոչ միայն ջրի ժայթքման մոտիվի ընդհանրությունը, այլ նաև նույն համատեքստում դիտարկելի այլ զուգահեռներ: Այսպես, Էբրայի բազալտե կոթողի և կրաքարե ավազանի պատկերագրությունը, ջուր ցայտող վիշապառնուծի պատկերից բացի, ընդհանուր և էական զուգահեռներ է գտնում Թոեդի ու Քարաշամբի արծաթե անոթների պատկերագրության մեջ՝ որս (որսորդի համապատասխան դիրքով), երթ, գերեվարություն, երաժիշտներով խնջույք կատվագգի կենդանի, ձուկ, առյուծ-ցուլ պայքար, անգու<sup>5</sup> են:

Հիրավի, միջին բրոնզի դարի թռեղք-վանաձորյան մշակույթի (Avetisyan, 2014; 2017) առնչություններն առաջավորասիական շրջանների հետ էապես արտահայտված են թանկարժեք մետաղե անոթների պատկերագրության մեջ (Areshian, 2008): Այս նույն մշակույթային աշխարհին պետք է պատկանեն և նույն դարաշրջանով թվագրվեն վիշապաքարերը, կամ գոնե ցլակերպ և խառնէակ-վիշապաքարերը, որոնք իրենց նշանակությունը պահում են նաև ուշ բրոնզի դարում:

Ասվածի օգտին են խոսում վիշապաքարերի տեղադրությանը (լեռան գագաթ, ջրերի ակունքների մոտ) և պատկերագրությանը (ցուլ, ձուկ, խառնէակ, թռչուն, վիշապամարտ, ևն) վերաբերող իմաստաբանական տարրերը, որոնք զուգահեռներ ունեն սիրիական և միջագետքյան հստակ թվագրություն ունեցող հուշարձանների հետ: Թեև առաջավորասիական հիմնական վիշապը վիշապառնուծն է, սակայն ամպրոպի աստվածությունն ավելի սերտ առնչություն է ի հայտ բերում իր կենդանական մարմնավորումներից ցլան հետ հենց Ք.ա. 2-րդ հազ. սկզբներից սկսած (Watanabe, 2018, 34):

Ի լրումն այս տեսակետի նշենք, որ վիշապաքարերը, ամենայն հավանակությամբ, տեղանշել են թռեղք-վանաձորյան մշակույթի բարձրադիր և միջին բարձրության սրբավայրերը: Այս տեսանկյունից պատահական չէ, որ միջին բարձրության վիշապաքարերից մեկը գտնվել է Թոեդի 5-րդ դամբարանաթմբի վրա, որտեղից հայտնաբերվել է ծիսական պատկերագրությամբ հարուստ հայտնի արծաթե գավաթը (Narimanishvili et al., 2015, 178):

Որպես երկրորդային կարևորության շրջան պետք է նշել ուշ բրոնզի դարը, երբ միջինբրոնզեդարյան ավանդույթները վերափոխվում կամ շարունակվում են: Ճիշտ է, հողվածում հիշվող զուգա-

հեռներից որոշները, որպես կանոն, թվագրվում են վաղ երկաթի դարով (Հասանլուի գավաթը կամ հյուսիսիրանական բրոնզե թիթեղը), սակայն բոլոր հեղինակները համաձայն են, որ այդ նյութերի հիմքում ընկած են Ք.ա. 3-2-րդ հազ. սահմանագծի ավանդույթները: Այստեղ կամ գործ ունենք ավանդույթի և մշակույթային հիշողության տևականության հետ, կամ, գուցե, կարելի է մտածել քննարկվող օբյեկտներից որոշների ավելի վաղ թվագրության և դրանց, որպես նշանակալի արժեքի, սերնդե-սերունդ փոխանցման մասին:

Ավանդույթի պահպանման կամ տևականության տեսանկյունից կցանկանայինք հիշել հայկական օրինակը: Ինչպես արդեն ասվեց, վիշապառնուծի մասին առաջին պատկերացումները փաստագրված են Ք.ա. 3-2-րդ հազ. սահմանագծի սիրիամիջագետքյան մշակույթային աշխարհում: Բայց դրանք շարունակվում են մինչ Ք.ա. 1-ին հազ. սկզբները, ու, ի դեպ, վերարտադրվում են նաև ուրարտական միջավայրում (Seidl, 1998, 101, 104-106): Հետագա հայկական դիցաբանության մեջ նույնպես առկա են հինառաջավորասիական ոճի վիշապային խառնէակներ, որոնց թվում է նաև նույնանուն վիշապառնուծը կամ վիշապառնուծ քաջը (Avgerian & Chelalean 1865, 764; Taghavarean, 1909, 58; Alishan, 2002, 92-94; Mnatsakanyan, 1980, 408, 409): Իսկ միջնադարյան հայկական պատկերագրության խառնէակ-վիշապների (թևավոր, օձային, երբեմն՝ բազմագլուխ էակներ, այդ թվում՝ թռչնագլուխ, մարդագլուխ, կենդանամարմին) բերանից նույնպես հաճախ ջուր է ցայտում (Gevorgyan, 1996, 10, տախտ. 8, 12, 24, 26, 27, 39, 54, 63, 69): Ավանդույթի տևականության հանգամանքը, հիրավի, ուշագրավ է, բայց այն դժվար է բացատրել, քանի որ պակասում են այդ տևակաությունը փաստող կապող օղակները:

## Նշումներ և շնորհակալություններ

Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» նախագծի (21AG-6A080) շրջանակում:

## Acknowledgements

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project № 21AG-6A080) entitled “Culture of water use in the Armenian Highland from antiquity to present days”.

5 Քարաշամբի անոթի վրա ի հայտ եկող առյուծագլուխ արծիվը՝ անգու-ն, ընկալվում է որպես վիշապառնուծի նախատիպ և մարմնավորում (Seidl, 1998, 111; Watanabe, 2018, 31):

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Lisitsyan, S. (1960). *Holiday Vardavar*. National Archives of Armenia, Yerevan, fund 428/5, collection 82 (in Russian).
- Abgaryan, G. (1974). *Transcription of Grigor Narekatsi's "Resurrection Verse"* (vol. 1, pp. 42-48, vol. 2, pp. 39-48), Ejmiatsin (in Armenian).
- Abeghyan, M. (1941). *Monuments called "vishaps" as statues of the Astghik-Derketo goddess*. Armfan (in Armenian).
- Alishan, Kh. (2002). *The ancient Armenian faith or pagan*. Grigor Tatevatsi (in Armenian).
- Acharyan, H. (1967). *From the memories of my life*. Mitk (in Armenian).
- Arakelyan, B. (1976). *Hints of the art history of ancient Armenia*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Avetisyan, P. (2014). *The Armenian Highlands in 24th-9th centuries B.C.: the dynamics of socio-cultural changes according to archaeological data*. Doctoral thesis, Yerevan, Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia (in Armenian).
- Augerean, M., & Chelalean, G. (1865). *Hand dictionary of the Haikaznean language*. Venice, Saint Lazarus (in Armenian).
- Gevorgyan, A. (1996). *Armenian miniature painting: animal ornaments*. Anahit (in Armenian).
- Israelyan, H. (1973). *Religion and Belief in Late Bronze Age Armenia*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Khazadryan, E. (1969). Garni IV. *Archaeological Excavations in Armenia*, 12, 1-239 (in Armenian).
- Hmayakyan, S., Hakobyan, H., Hazeyan, N., & Melkonyan, M. (2015). Sarukhan's "dragon". In A. Petrosyan, & A. Bobokhyan (Eds.), *Dragon Stone Stelae* (pp. 219-223). Gitutyun (in Armenian).
- Ghanalanyan, A. (1969). *Avandapatum*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Martirosyan, H. (1981). *Rock paintings of the Geghama mountains*. *Archaeological monuments of Armenia*. Academy of Sciences of the Armenian SSR, 11 (III), 1-124 (in Armenian).
- Mnatsakanyan, A. (1980). *Armenian medieval riddles*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Chugaszyan B. (1958). Reflexions of Iranian novel conversations in Grigor Magister's "Letters". *Bulletin of Social Sciences*, 12, 63-75 (in Armenian).
- Petrosyan A. (2015). Thirty years later: Dragon stone monuments and the legend of dragon fighting. In A. Petrosyan, & A. Bobokhyan (Eds.), *Dragon Stone Stelae* (pp. 13-52). Gitutyun (in Armenian).
- Taghavarean, N. (1909). *Ancient Armenian Religions*. Mat-teosian printing house (in Armenian).
- Ardzinba, V.G. (1982). *Rituals and myths of ancient Anatolia*. Nauka (in Russian).
- Belitsky, M. (1980). *The Forgotten World of the Sumerians*. Nauka (in Russian).
- Gevorkyan, A., & Bobokhyan, A. (2015). Rapier-bull-vishap. In A. Petrosyan, & A. Bobokhyan (Eds.), *Dragon Stone Stelae* (pp. 193-204). Gitutyun (in Russian).
- Ivanov, V.V. (1991). *Wheel*. Myths of the Peoples of the World 1. Soviet Encyclopedia, 664-665 (in Russian).
- Kapantsyan, G. (1957). *Historical and linguistic works*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Kushnareva, K. (1981). Symbolism of altar steles from the sanctuaries of the ancient Dvin. In R. V. Zaryan (Ed.), *Second International Symposium on Armenian Art I* (pp. 98-105). Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Kushnareva, K. (1977). *The most ancient monuments of Dvin*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Narimanishvili, G., Shanshashvili, N., & Narimanishvili, D. (2015). New data on menhirs of Southern Georgia. In A. Petrosyan, A. Bobokhyan (Eds.), *Dragon Stone Stelae* (pp. 176-189). Gitutyun (in Russian).
- Petrosyan, E. (2004). *Gods and rituals of ancient Armenia*. Zangak (in Russian).
- Amiet, P. (2006). L'hydre et la déesse aux leopards, Les espaces syro-mésopotamiens. In P. Butterlin, M. Lebau, J.Y. Monchambert, J. L. Montero Fenollós, & B. Muller (Eds.), *Dimensions de l'expérience humaine au Proche-Orient ancien* (vol. 17, pp. 461-465). Subartu, Brepols.
- Areshian, G. (2008). Die Beziehungen der Kulturen des Armenischen Hochlands und der Zentralgebiete Südkaukasiens zu Vorderasien und der Ägäis in der Trialeti-Epoche, *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, III(2), 51-90.
- Avetisyan, P. (2017). On the Issues of Chronology and Periodisation of the Armenian Middle Bronze Age Archaeological Cultures. *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies*, XI(1-2), 57-87.
- Bobokhyan, A., Gilibert, A., & Hnila, P. (2018). Karmir Sar: New Evidence on Dragon Stones and Ritual Landscapes on Mount Aragats, Armenia. In A. Batmaz, G. Bedianashvili, A. Michalewicz, & A. Robinson (Eds), *Context and Connection: Studies on the Archaeology of the Ancient Near East in Honour of Antonio Sagona* (pp. 255-270). *Orientalia Lovaniensia Analecta*, 268, Leuven-Paris-Bristol.
- Boehmer, R. (1965). *Entwicklung der Glyptik während der Akkad-Zeit*. Berlin, Walter de Gruyter.
- Brentjes, B. (1983). *Alte Siegelkunst des Vorderen Orients*, Leipzig, Seeman.
- Chahin, M. (1987). *The Kingdom of Armenia*. London-New York-Sydney, Croom Helm.
- Curtis, J., Kruszyński, A., Pike, A., & Searight, A. (2002). *Ancient Caucasian and related Material in the British Museum*. The British Museum Occasional Paper, 121, London.
- Dietz, A. (2023). *Der Wettergott im Bild. Diachrone Analyse eines altorientalischen Göttertypus im 3. und 2. Jahrtausend v. Chr.* Münchner Abhandlungen zum Alten Orient, 8, Gladbeck, PeWe-Verlag.
- Foster, K. (1999). Volcanic Landscapes in Lugal-e. In L. Milano, S. de Martino, F. M. Fales, & G. B. Lanfranchi (Eds.), *Landscapes, Territories, Frontiers and Horizons*

- in the Ancient Near East (pp. 23-39). *Rencontre Assyriologique Internationale XLIV*, Padova, Sargon.
- Gadjimuradov, I. (2004). Die vulkanische Urheimat der altanatolischen Sukzessions- und Steingeburtsmythen. *Altorientalische Forschungen*, 31(2), 340-357.
- Gilibert, A., Bobokhyan, A., & Hnila, P. (2012). Dragon Stones in Context: The Discovery of High-Altitude Burial Grounds with Sculpted Stelae in the Armenian Mountains. *Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft*, 144, 93-132.
- Haas, V. (1982). *Hethitische Berggötter und hurritische Steindämonen*. Mainz am Rhein, Philipp von Zabern.
- Haas, V. (2003). *Materia magica et medica hethitica* (vols. I, II). Berlin-New York, De Gruyter.
- Haas, V. (2006). *Die hethitische Literatur*. Berlin-New York, De Gruyter.
- Matthiae, M. (Ed.) (1965). *Missione archeologica Italiana in Siria. Rapporto preliminare della campagna*. Roma, Università degli Studi di Roma.
- Matthiae, M. (1986). Una stele paleosiriana arcaica di Ebla e la cultura figurativa della Siria attorno al 1800 A.C. *Scienze dell'Antichità*, 1, 447-495.
- Matthiae, P. (2013). Ebla: Recent Excavations Results and the Continuity of Syrian Art. In J. Aruz, S. Graff, Y. Rakic (Eds.), *Cultures in Contact: From Mesopotamia to the Mediterranean in the Second Millennium B.C.* (pp. 96-111). New York, Metropolitan Museum of Art.
- Matthiae, P. (2015). The Old Akkadian Lion-Dragon and Water at Ebla. *Studia Eblaitica*, 1, 213-214.
- Russell J. (1987). *Zoroastrianism in Armenia*, Cambridge, MA, Harvard University Press.
- Seidl, U. (1998). Das Flut-Ungeheuer abūbu. *Zeitschrift für Assyriologie und vorderasiatische Archäologie*, 88, 100-113.
- Storaci, M., & Gilibert, A. (2019). Les poissons muets. Fish-Shaped Vishaps and Cult of Water in Prehistoric Armenia. In A. Bobokhyan, A. Gilibert, & P. Hnila (Eds.). *Visshap between Fairy Tale and Reality* (pp. 528-545), Yerevan, IAE.
- Watanabe, C. (2018). Composite Animals in Mesopotamia as Cultural Symbols. In S. Di Paolo (Ed.), *Composite Artefacts in the Ancient Near East: Exhibiting an Imaginative Materiality, Showing a Genealogical Nature* (pp. 31-38). Oxford, Archaeopress.
- Wiggermann, F. (1992). *Mesopotamian Protective Spirits. The Ritual Texts*. Groningen, Brill.



# MYTHOLOGICAL DRAGON AND THE EMERGENCE OF IRRIGATION SYSTEMS

Tork Dalalyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
Language institute named after H. Acharyan, NAS, Armenia

## Abstract

In the mythical conceptions and beliefs of different peoples of the world, a dragon is the embodiment of the chthonic - uncontrollable and disastrous forces of nature. In essence, a dragon is an anti-system by its nature and opposes the cosmic order and rule, nevertheless, many myths link the origin of irrigation systems to the mythological dragon. The latter is a fictional creature in the form of various animals, which digs the bed of future canals/ rivers with its tail, body or horn. Thus, this paper considers the narrowest, very archaic embodiment of the phenomenon of “dragon”, and accordingly, with the help of relevant myths, an attempt is made to restore the common mythologeme, supposedly constituting the base of all of them. The image of the dragon in fairy tales and epics is not considered, because in them we are already dealing with a completely different, transformed and “modernized” image. The mythological dragon is *a priori* neither a negative nor a positive figure/character; it is an uncontrollable force that can be harnessed and directed along a purposeful path. In the perfect version of the myth, this taming is done by a human or anthropomorphic supernatural being who uses the wild power of the dragon for good. In this case, we are talking about the irrigation systems necessary for developed agriculture, the emergence of which has been likened to the emergence of natural irrigation systems (rivers, lakes, etc.). Therefore, it is not surprising that the same myth and its main character, the dragon, should be at the “origins” of both.

**Keywords:** dragon, chaos, universe, mountain, creation, river, river bed, canal.

## ԱՂԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՇԱՊԸ ԵՒ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Տորք Դալալյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

## Անվտանգություն

Աշխարհի տարբեր ժողովուրդների առասպելական պատկերացումներում և հավատալիքներում վիշապն ի սկզբանե բնության խթանիկ՝ տարերային և անկառավարելի, ավերիչ ուժերի մարմնավորումն է: Ըստ էության, իր բնույթով վիշապը հակահամակարգ է և դեմ է տիեզերական կարգ ու կանոնին, սակայն շատ առասպելներ ոռոգման համակարգերի առաջացումը կապում են առասպելաբանական վիշապին: Վերջինս տարբեր կենդանիների կերպարանքով պատկերացվող մտացածին էակ է, որն իր պոչով, մարմնով կամ եղջյուրով փորում է ապագա ջրանցքների/գետերի հունը: Ընդամենը, հողվածք դիտարկում է վիշապ երևույթի առավել նեղ՝ հույժ արխայիկ մարմնավորումը, ըստ այդմ էլ համապատասխան առասպելների օգնությամբ փորձ է արվում վերականգնելու այն ընդհանուր առասպելային, որը ենթադրաբար ընկած է դրանց բոլորի հիմքում: Հողվածում չի դիտարկվում վիշապի կերպարը հեքիաթներում և էպոսներում, որովհետև դրանցում արդեն գործ ունենք այլ՝ զգալիորեն վերափոխված և «արդիականացված» պատկերացման հետ: Առասպելաբանական վիշապն ապրիորի ոչ բացասական, ոչ էլ դրական կերպար է. այն անկառավարելի ուժ է, որին հնարավոր է սանձել և ուղղորդել նպատակադրված ուղով: Առասպելի կատարյալ տարբերակում այս սանձահարումը կատարում է մարդը կամ մարդակերպ գերբնական էակը՝ վիշապի տարերային գործողությունն օգտագործելով ի նպաստ բարոյության: Տվյալ դեպքում խոսքը զարգացած երկրագործության համար անհրաժեշտ ոռոգման համակարգի մասին է, որի առաջացումը նմանեցվել է բնական ոռոգման համակարգի (գետ, լիճ են) առաջացմանը: Հետևաբար զարմանալի չէ, որ երկուսի «ակունքներում» էլ կանգնած պետք է լինեն միևնույն առասպելային և դրա գլխավոր կերպարը՝ վիշապը:

**Հիմնաբառեր.** վիշապ, քառս, տիեզերք, լեռ, արարչագործություն, գետ, հուն, ջրանցք:

### Ներածություն

Մարդու հնագույն դիցաբանական ընկալումները հիմնված են եղել բինար՝ հակադրագույզերի համակարգի վրա, որի համաձայն՝ ամբողջ աշխարհն արդյունք է կյանքի և մահվան, ցերեկվա և գիշերվա, լույսի և խավարի, ջրի և հրի, թացի և չորի, նյութականի և հոգևորի, երկրայինի և երկնայինի հակադրության, փոխներգործության ու հերթագայության: Ըստ որում, աշխարհի կամ տիեզերքի չգոյությունը հավասարազոր է մահվան, գիշերվան, խավարին, որոնցում գատված չեն ջուրն ու հուրը, թացն ու չորը, չկա նյութը, չկա Երկիրը:

Այլ խոսքով ասած՝ տիեզերքի չգոյությունը քառսն է կամ խառնաշփոթը, որը բնորոշվում է նշված հակադրագույզերի երկրորդ՝ «բացասական» հատկանիշներով կամ հավասարապես երկու բաղադրիչների չգատվածությամբ: Սա երևում է աշխարհի տարբեր ժողովուրդների արարչագործական առասպելներում, որոնք աշխարհի ստեղծումը կապում են նախաստեղծ քառսի կարգավորման գործընթացին<sup>1</sup>: Հին եգիպտացիները նախաստեղծ այդ վիճակը կոչել են Նուն, շումերները՝ Նամնու, ասքաղացիները՝ Տիամատ (Թիամաթ), ուգարիթցիները՝ Մութու, չինացիները՝ Ցի կամ Դաո, հին հույները՝ Քաոս (Τοπоров, 1992), հնդարիները՝ Անրտա: Վաղնջահայերը չկարգաբերված քառսային վիճակն անվանել են Անարդ, որը բառացիորեն նշանակել է «տձև», «անկարգ», «անճոճնի»<sup>2</sup>:

Արարչագործական կամ աշխարհաստեղծման առասպելները (cosmogonic/creation myths) բացատրում են տձև այս վիճակի ձևավորումն ու կարգավորումը, ըստ որում՝ իրական մեր կյանքում էլ յուրաքանչյուր կարգավորում ու ձևավորում կարծես կրկնում է նախնական արարման գործողությունը, ինչը համեմատական առասպելագիտության մեջ կոչվում է «mythe de l'éternel retour» (հավերժական վերադարձի առասպել) (Eliade, 1987, 27, 29, 33 ն): Արարչագործական առասպելները, որպես կանոն, ունենում են երկու մակարդակ՝ համընդհանուր (տիեզերական) և տեղայնացված (երկրամասային): Սա մոտավորապես համապատասխանում է հայե-

րեն *աշխարհ* բառի երկու նշանակություններին, որոնցից առաջինը գործածվում է լայն՝ «տիեզերք», իսկ երկրորդը՝ նեղ՝ «նահանգ, երկրամաս» առումներով: Երկու մակարդակներում էլ անկանոն ու անորոշ նախաստեղծ վիճակն աստվածային տարատեսակ գործողությունների միջոցով կարգի է բերվում, ստանում է որոշակի ձև ու բովանդակություն:

### Հայոց հիմնական առասպելի շուրջ

Հայոց արարչագործական առասպելում, երբ ստեղծվում կամ իրարից գատվում են Երկինքն ու Երկիրը, դրանց արանքում լցվում է Ծիրանի ծովը (այս պատկերացումների համակցված ամբողջացումը՝ տարբեր աղբյուրների համադրմամբ, տես Dalalyan, 2008, 22; Dalalyan, 2018, 69-70)<sup>3</sup>: Վերջինս տեղայնացված մակարդակում հաճախ նույնացվում է Վանա լճին, որը բազմաթիվ լոկալ ավանդազրույցներում և էպոսի պատումներում հանդես է գալիս որպես Ծիրանի ծովի իրական մանրակերտ (Dalalyan, 2008, 24)<sup>4</sup>: Նույն կերպ, տիեզերական մակարդակի համաշխարհային լեռը, որը հանդես է գալիս որպես *աշխարհի* առանցք, տեղայնացված մակարդակում նույնացվում է Այրարատ *աշխարհի* Ազատ Մասիս (ներկայիս Մեծ Արարատ) գագաթին (Dalalyan, 2008, 25-26): Սակայն այլ երկրամասերում առասպելական լեռ-առանցքը կարող էր տեղայնացված մակարդակում հանդես գալ արդեն տվյալ նահանգի կամ գավառի իրական լեռան տեսքով, դիցուք՝ Նեմրութի, Թոնդրակի կամ Արգեոսի:

Հայոց արարչագործական առասպելում «տիեզերական լեռան» գաղափարն առանցքային պետք է լիներ՝ տձև ու անկանոն քառսը կարգավորելու գործընթացում, քանի որ լեռ-առանցքն ասես ֆիքսում էր նախաստեղծ \*Անարդ քառսում տարուբերվող աշխարհը: Լեռան հաստատումն այդպիսով խորհրդանշում էր հաղթանակը քառսային ուժերի հանդեպ, կայունացում էր Երկիրը և նախադրյալներ ստեղծում կենդանի էակների բարգավաճման համար: Անթրոպոմորֆ (մարդակերպ) աստվածների դարաշրջանում որպես Երկնքի և Երկրի ստեղծող, համաշխարհային լեռան հաստատող հանդես

1 Շվեյցարացի գիտնական Մարի-Լուիզ Ֆոն Ֆրանցը, ով հայտնի է ժողովրդական հեքիաթների և երգերի հոգեբանական վերլուծությամբ, աշխարհի տարբեր ժողովուրդների նախաստեղծ առասպելներին անդրադարձել է դասավիտությունների հատուկ շարքով, որը հրատարակվել է մի քանի լեզուներով (տես, օրինակ, վերջին հրատարակություններից՝ Franz von, 1995):

2 Նախաքրիստոնեական այս պատկերացումն արտահայտվել է 5-րդ դարի քրիստոնյա հեղինակ Եզնիկ Կողբացու՝ հեթանոսական աշխարհայացքային դրսևորումների հերքման մեջ (Dalalyan, 2022, 43-44):

3 Ծիրանի ծովը մոտավորապես երկնքի և երկրի միջև է տեղադրում Մանուկ Աբեղյանը, վերջինիս տեսակետն ընդունում է Սարգիս Հարությունյանը, սակայն ավելի ուշ իր աշխատանքում փոքր-ինչ այլ կերպ է վերականգնում վաղնջահայերի պատկերացմամբ աշխարհի կառուցվածքը՝ Ծիրանի ծովը նույնացնելով ստորգետնյա Սև ջրի օվկիանոսին (Abeghyan, 1966, 76-77; 1975, 65-66; Harutyunyan, 1987, 11; Harutyunyan, 2000, 9-17):

4 Այս առումով կարող ենք զուգահեռ անցկացնել հնագույն սուրբ գրքերից մեկում՝ «Ավետա»-ում հիշատակվող համաշխարհային առասպելական Վորուկաշա ծովի հետ, որն առանձին աղբյուրներում որոշակի տեղայնացումներ է ստանում (Vainberg, 1999, 94):

էր գալիս արարիչ վիշապամարտիկ աստվածը, որը հաղթելով քառասյին ուժերը խորհրդանշող վիշապին՝ արարում էր աշխարհը: Ասել է՝ արքետիպային վիշապամարտը հավասարագոր էր դիտվում աշխարհի արարմանը (վիշապամարտ = աշխարհաստեղծում հղացքի վերաբերյալ հմնտ., օրինակ, Harutyunyan, 1981, 68-69): Սակայն առավել վաղնջական դարաշրջաններում այդ վիշապամարտն ընկալվում էր ոչ թե «վիշապ vs մարդակերպ աստված/հերոս» բանաձևով, այլ «վիշապ vs վիշապ», այսինքն՝ հենց վիշապանման էակների հակամարտության արդյունքում էր ստեղծվում աշխարհակարգը:

Պատկերագրական տիրույթում մարդը կարիք ուներ որևէ կերպ արտահայտելու առասպելական անկանոն քառասյին վիճակը, և գոռմորֆ (կենդանակերպ) խորհրդանիշների տիրապետման դարաշրջանում քառոսն արտահայտելու համար ամենահարմար միջոցը դարձան ձուկը և օձը, որոնք մարմնով տնն են ու լայծուն, շարժվում են անկանոն և չունեն հստակ հետագիծ, սողում են կամ լողում, բայց չեն քայլում կամ վազում՝ ինչպես մարդը: Այս երկու կենդանիները վճռորոշ դեր են խաղում *քսոս* վերացական հասկացությանն առավել «հասկանալի» և պատկերավոր մարմնավորում հաղորդելու համար: Սակայն եթե վիթխարի ձուկը կամ օձանուկը պատկերագրական տիրույթում դառնում է նախաստեղծ ջրային քառոսի խորհրդանիշ, ապա վիթխարի օձը (երբեմն նաև մողեսը) վերածվում է առասպելաբանական վիշապի խորհրդանիշի<sup>5</sup>:

Վիշապը հայոց առասպելաբանության մեջ հաճախ հանդես է գալիս որպես եղջերավոր օձ, որը կարող է ունենալ նաև այլ կենդանիների մարմնասաներ, երբեմն՝ նաև ոտքեր: Այսպես, Վասպուրականի Բերկրի բնակավայրից սերող բանասացի հաղողած ավանդազրույցի համաձայն՝ հին ժամանակներում Ջագրոս և Տավրոս լեռնահամակարգերը եղել են հսկայամարմին եղջերավոր վիշապներ, որոնք կովել են իրար դեմ (Ter Minasean, 1982, 100-101)<sup>6</sup>: Հետաքրքրական է, որ ըստ այդ առասպելի՝ նրանց հարվածներից ձորեր են բացվում, գագաթներ խոյանում, այսինքն՝ տեղի են ունենում սեյսմիկ գործընթացներ, ձևավորվում է երկրի ռելիեֆը, և այս ամենը բացատրվում է վիշապամարտով: Տավրոսի եղջերահարումից պատվում է Ջագրոսի մարմինը, և նրա փորոտիքի աղի ջրերից գոյանում է մի կողմից Վանա լիճը, մյուս կողմից՝ Ուրմիո լիճը, իսկ արյունը Ջար գետի տեսքով հոսում է նոր բաց-

ված ձորով: Սարգիս Հարությունյանը Տավրոսի և Ջագրոսի մենամարտի մասին այս ավանդազրույցը համարում է «նախնական առասպելադիցաբանական ընկալման» արտացոլում՝ վաղնջական առասպել, որը վիշապամարտի միջոցով ներկայացնում է աշխարհավիճման և նոր աշխարհի կերտման մի գործընթաց (Harutyunyan, 2000, 96, 197, 204):

Արճեշից սերող բանասացի հաղորդմամբ՝ հայոց լեռներն ավանդաբար համարվել են քարացած հսկաներ (Ghanalanyan, 1969, 10, № 9), իսկ նրանցից ոմանք, ըստ երևույթին, իբրև քարացած հսկայական վիշապ են ընկալվել. այսպես՝ Ռ. Տեր-Մինասյանը, թերևս նաև իր բանասացից ազդվելով, Հայկական Տավրոսը պատկերացրել է որպես 1000-կիլոմետրանոց վիշապ, որն ունի կանաչ կողեր, ձյունաճերմակ մեջք և անտառի պես բրդոտ ոտքեր. «Անոր մարմինը ալիքաձևի կը սողայ արեւմուտքէն արեւելք... Անոր պոչը Արածանիի և Եփրատի խառնարանի վրայէն Կոմագինի և Կիլիկիոյ սահմանները կ'երկարի...» (Ter Minasean, 1982, 95):

### Հայկական վիշապը՝ ուրի հարթող

Ըստ մի վարկածի՝ հայերեն *վիշապ* բառը ծագում է նախածանցավոր \**vi-šap* կազմությունից, որի արմատը նշանակել է «ավերել, կործանել, ոչնչացնել», այսինքն՝ *վիշապ*-ը բառացիորեն պետք է ունենար «ավերիչ, կործանիչ, ոչնչացնող» իմաստը (Dallalyan, 2019, 244-245): Սա միանգամայն համապատասխան է վիշապի առասպելաբանական կերպարին՝ իբրև քառոսիկ տարերային ուժերի խորհրդանիշ: Սակայն քանդելու և վնասելու գործողությունը կարող է ակամա վերածվել նաև դրական հատկանիշի, ինչպես կտեսնենք ստորև:

Առհասարակ, բնության տարերային, կամ առասպելաբանական տերմինով ասած՝ վիշապային ուժերի մասին խոսելիս նկատի ունենք հետևյալ երևույթները. ա) սեյսմիկ-տեկտոնային շարժեր, երկրակեղևի ձևավոխումներ-տեղաբեկումներ, բ) սրա հետ կապված՝ նաև հրաբուխներ, գ) երկնային լուսատուների՝ արևի և լուսնի խավարումներ, դ) փոթորիկ, մրրկահողմ կամ ժողովրդական բառով ասած՝ թաթառ, ե) ամպրոպ և կայծակ, զ) բերքի և ընտանի կենդանիների վնասում:

Նշված բոլոր վեց դեպքերում էլ առասպելաբանական վիշապն ամորֆ՝ ձև չունեցող, երբեմն նույնիսկ անտեսանելի կամ անհասանելի, անըմբռնելի տարերային էակ-երևույթ է, որը շատ ավելի ուշ ժամանակներում է ստացել գոռմորֆ կերպարանք-

5 Ըստ 5-րդ դարի հեղինակ Եզնիկ Կողբացու՝ «Ակնհայտ է, որ վիշապը ուրիշ էություն չունի, քան օձի» (Yeznik Koghbatsi, 1994, 85):

6 Վերջինիս՝ 1951 թ. հրատարակությունն է հղում՝ Ghanalanyan, 1969, 23-24, № 50, սակայն նա ամբողջությամբ չի մեջբերում Ռ. Տեր-Մինասյանի հաղորդած տարբերակը:

ներ, սկսել պատկերվել որոշակի կենդանու տեսքով կամ նույնիսկ մի քանի տարբեր կենդանիների մարմնամասերի համադրությամբ: Սա ակնհայտորեն երևում է 5-րդ դարի հեղինակ Եզնիկ Կողբացու երկում, որտեղ բառացիորեն գրված է. «Բայց, ասում են, զանազան խարուսիկ կերպարանքներ են ընդունում և՛ վիշապները, և՛ նհանգները...» (Eznik Koghbatsi, 1994, 83):

Հայ ժամանակակից առասպելագիտության մեջ հիմնականում ուշադրությունը դարձվել է վերոնշյալ դ. – ե. կամ գ. – ե. կետերին (Abeghyan, 1966-1985, I, 85; III, 48; VII, 66-67; VIII, 117; Harutyunyan, 1981, 68; Harutyunyan 1991, 2373; Harutyunyan, 2000, 85-88), սակայն գ. կետի վերաբերյալ շատ հստակ գրում է Եզնիկը (Eznik Koghbatsi, 1994, 85): Ինչ մնում է ա. – բ. կետերին, ապա սրանք հատուկ հետազոտության և մեկնության կարիք ունեն: Սույն հոդվածի համար կարևոր է մանավանդ ա. կետը, քանի որ սեյսմիկ գործընթացները դիտվում են որպես գետերի ու լճերի առաջացման հիմնական նախապայման (սեյսմիկ գործընթացների և վիշապների գործունեության «կապի» մասին, մի շարք ավանդագրույցների հիման վրա, խոսվում է՝ Bobokhyan et al. 2023, 248-251): Ուշ գրանցված հայոց ավանդագրույցներում վաղնջական այս պատկերացումն առկա է ոչ միայն ուղղակիորեն (հմմտ. «Ջագրոս և Տավրոս»), այլև անուղղակի են լավային/ապարային գոյացություններն առնչվում վիշապի գործունեությանը: Այսպես, օրինակ, Աղբակ գավառի վերաբերյալ գրանցված տեղագրական մի գրույցում սպիտակ քարակոշտերի գոյացությունը համարվում է վիշապի փսխուկ, որն իրականում նրա կուլ տված աղջիկն էր. *Վշքու էր* կոչվող քարայրում բնակվող վիշապն, ըստ այս գրույցի, խույս է տալիս Բարդուղիմեոս առաքյալի հարձակումից և փսխում աղջկան (Ghanalanyan, 1969, 42, № 100): Հետաքրքրական է, որ երկու ավանդագրույցներն իրարից անկախ գրի են առել տարբեր բանահավաքներ երկու տարբեր բանասացներից, որոնք սերում էին Վասպուրականից: Այստեղ էական դեր է կատարում վիշապամարտը, մի դեպքում՝ «վիշապ vs վիշապ», մյուսում՝ «վիշապ vs հերոս» բանաձևերով:

Վասպուրականից հյուսիս-արևմուտք՝ Սասուն գավառում, նախքան Յեղասպանությունը, հայտնի է եղել ճերմակ կայծքարային մի ուղի», որը կոչվել է Վիշապի ճանապարհ (Հուշիկի ճամփա) (Petoyan,

1965, 135-136, 386-387; Petoyan, 2016, 342-343, 522): Դրա հետ կապված ավանդագրույցը «ճանապարհի» առաջացումը բացատրում է ոչ թե «վիշապ vs վիշապ» կամ «վիշապ vs հերոս» բանաձևերով, այլ առանձին մի վիշապի գործունեությամբ. Ըստ էության, այստեղ վիշապամարտի մասին հիշողությունը կամ ջնջված է, կամ էլ գործ ունենք խիստ նախնական մի տարբերակի հետ, որում վիշապամարտն առհասարակ առկա չի եղել: Առասպելի համաձայն՝ հոգնած վիշապը, քսվելով սարալանջի ժայռերին, ակամա փորել է այս «ուղին», որն, ամենայն հավանականությամբ, սելավային հուն պետք է լիներ: Այն գտնվում է Գըռշիկ՝ գագաթի ուղղությամբ, լանջով ձգվում է մոտ կես կիլոմետր՝ Խիրլկա կոչված աղբյուրի մոտից դեպի Կնկահոտ ձորը, և ունի երկու մետր լայնություն. ժողովրդի կողմից այս «ժայռուղին» նմանեցվել է վիշապի գալարումների (Petoyan, 1965, 386): Ավանդաբար պատմվել է, թե ժամանակին հսկա մի վիշապ է անցել այդտեղով, իր մարմնով ճեղքել է ժայռերը և ճանապարհ բացելով՝ իջել Կնկահոտ ձորը, ուր և երկար ժամանակ ապրելիս է եղել ու այնտեղ էլ մեռել: Վիշապի փորի քսվելուց ժայռուղին ձյան պես ճերմակած է եղել ու կոչվել *Հուշիկի ճամփա*, իսկ վիշապի բնակատեղին՝ Կնկահոտ ձորը, կոչվել է նաև Վիշապաձոր կամ Մեղրաձոր (Petoyan, 1965, 136, 387): Այս մանրատեղանունները գտնվում են Գեղիեզուզան և Էղգարդ գյուղերի մոտ՝ Գեղիեսան (Հարմոյի գոմ) գետակի աջ ափին<sup>8</sup>:

Բանահավաք-ագագաբազետ Վարդան Պետոյանի արձանագրած այս ավանդագրույցում առասպելաբանական անձն վիշապը նկարագրվում է որպես ոչ-բանական կենդանի, որն ունի վիթխարի մարմին, և այն լիարժեք չկառավարելն էլ հենց պատճառ է դառնում ռելիեֆի ձևափոխման: Ջրույցում ոչինչ չի ասվում Հուշիկի ճամփի, ըստ էության՝ բացված հունի մեջ ջուր լցվելու մասին, սակայն համեմատական առասպելագիտության տվյալները հուշում են, որ վիշապի բացած ճանապարհը կամ հունը տրամաբանորեն պետք է վերածվեր գետահունի: Ստացվում է, որ վիշապն այս պատկերացման մեջ փոխաբերաբար համապատասխանում է զարնանային հեղեղին, որ ձնհալի կամ անձրևային վարարումների ժամանակ անցնում է այդ լանջով՝ իր ճանապարհին սրբել-տանելով ամեն ինչ:

7 Գըռշիկը Հայկական Տավրոսի՝ Սասունով անցնող հատվածի լեռնագագաթներից է. նշանավոր Անդրկ լեռնագագաթից հարավ խոյանում է գրեթե նույնքան բարձրության Կեփին գագաթը, որից արևելք ձգվող լեռնաշարքը՝ Գարլոր, Ավխտարբլ, Մխտորքար գագաթներով հասնում է մինչև Գըռշիկ (տե՛ս Petoyan, 1965, 386; Petoyan, 2016, 498):

8 Նշված ավանդագրույցն ունի նաև հետաքրքրական շարունակություն՝ կապված մեղունների և մեղրի հետ (Petoyan, 1965, 136, 386-387), ինչը, սակայն, չի առնչվում սույն հոդվածի նյութին: Վ. Պետոյանի գրքում ավանդագրույցը ներկայացված է երկու տարբեր գլուխներում, թերևս այդ պատճառով էլ, թյուրիմացաբար, այն որպես երկու տարբեր գրույցներ է բերում «Ավանդապատում» ժողովածուի հեղինակը՝ «Մեղրաձոր» և «Վիշապի ճանապարհ» վերնագրերով, տե՛ս Ghanalanyan, 1969, 48-49, № 122; 222, № 600:

### Չինական վիշապը՝ ջրանցք փորող

Հետաքրքիր է, որ չինացիները ևս վիշապին համարել են «ճամփա» փորող: Հին չինական առասպելական գրույցի համաձայն՝ թևավոր վիշապն օգնում է Յույին՝ Սյա գահատոհմի հիմնադրին, հետևյալ կերպ. նա գետնի վրայով քարշ է տալիս իր սեփական պոչը և գծում այն ուղիները, որոնցով պետք է փորվեն ապագա ջրանցքները (Ivanov, 1991, 3943): Հատկանշական է չինական այս գրույցում վիշապի կապը ջրի և ոռոգման համակարգի հետ: Սակայն վիշապային ուժին օգտակար ուղղորդում տվողն էլ՝ Յույը, վիշապային ծագում ունի: Ըստ առասպելական գրույցի՝ Յույը ծնվել է իր հոր՝ Գունի մարմնից, որի անունը բառացիորեն նշանակում է «վիթխարի ձուկ»: Զրույցում պատմվում է, որ մեռնելուց առաջ Գունը վերածվում է եռաթաթ կրիայի կամ այլ տարբերակով՝ դեղին վիշապի, որից ծնված Յույն էլ, իր հերթին, ունենում է երկեղջյուր վիշապի կերպարանք (Rifin, 1992, 6781): Հայր և որդի Գունը և Յույը մշակութաստեղծ հերոսներ են, որոնք պայքարում են ջրհեղեղի դեմ:

Հատկանշական է, որ կլիմայական պայմաններից կախված՝ վիշապը դառնում է դրական կերպար: Ի տարբերություն համեմատաբար սակավաջուր Հայաստանի՝ Չինաստանում բացասական կերպար էր ջրերի աստված Գուգունը՝ վիշապ Ինլունի հակառակորդը: Գուգունը կամ Գունգունը, սակայն, նույնպես պատկերվում էր օձամարմին հրեշի կերպարանքով: Չին հերոսները մի քանի սերունդ շարունակ պայքարում էին ջրհեղեղի դեմ: Վերջապես Յույին հաջողվում է փոքր ու մեծ վիշապների օգնությամբ, Ինլուն վիշապի (կամ դեղին վիշապի) գլխավորությամբ նպատակաուղղված ընթացք տալ ջրերի անկանոն հոսանքին. Ինլունը փորում է Խուանխե գետի հունը, իսկ մյուս վիշապները՝ դրա վտակների հուները (Ke, 1987, 170):

Բացի Ինլունի պոչով արված հատակագծից, Յույին մեծ օգուտ է բերում Խուանխեն անձնավորող ձկնակերպ աստծո (Խե-բո) նվիրաբերած կանաչ քարը, որի վրա ծուռումուռ, բարակ զարդանախշերի տեսքով գծված էր ջրհեղեղի դեմ պայքարելու հիմնական ուղղությունների քարտեզը: Խուանխե գետի ուղին անցկացնելիս մեծ դժվարություններ է առաջացնում Լունմենշան լեռը, որը փակում էր գետի ճանապարհը: Լեռնանցք փորելու ժամանակ հերոսը (Յույը) մի քարանձավում պատահաբար հանդիպում է գույգ եղջյուրներով սև վիշապօձի, որի երախում շողարձակում էր հսկայական աղամանդը: Պարզվում է, որ վիշապօձը 9 գե-

տերի աստվածուհու որդին է: Նրա պարզևած մոգական իրի օգնությամբ Յույը ճեղքում է լեռը երկու մասի, և այդ տեղը կոչվում է Լունմեն «վիշապի դարպաս»: Գետի հոսանքն այդ դարպասով գահավիժում էր ներքև և շարունակում ճանապարհը: Ըստ հավատալիքի՝ ձկներն այդ վայրում մրցում էին բարձրացատկի մեջ. առավել լավ ցատկողները դառնում էին վիշապ և բարձրանում երկինք (Ke, 1987, 170-172)՝:

Եթե հայկական պահպանված տարբերակում վիշապը ոչ-բանական կենդանի է, որն ականա ուղի-հուն է բացում, ապա չինական ավանդագրույցներում վիշապները գիտակցաբար՝ իրենց կամքով են օգնում մշակութաստեղծ հերոսներին: Այս պատկերացումը վերաբերում է մարդակերպ աստվածների դարաշրջանին, որոնք պետք է կառավարեին ու վերահսկեին աշխարհում տեղի ունեցող բոլոր գործընթացները: Նույն ընկալումը տեսնում ենք նաև անտիկ ժամանակաշրջանի առաջավորասիական առասպելում, որն արձանագրվել է հյուսիսային Սիրիայում: Այստեղ վիշապն ականա հուն է փորում, սակայն դա համարվում է ամպրոպային աստծո հետ նրա հակամարտության արդյունք, այսինքն՝ կրկին գործ ունենք «վիշապ vs հերոս» բանաձևի հետ: Տարածաշրջանի մերձավորությունը և առասպելի նմանությունը հիմք են տալիս ենթադրելու, որ ուշ ժամանակներում գրառված հայկական ավանդագրույցում սկզբնապես «ուղի հարթող» վիշապը պետք է այդ գործողությունը կատարեր նույնպես ամպրոպային հերոսի կամ աստծո դրդմամբ կամ պատճառով, որի կերպարը կարող էր մոռացության մատնվել քրիստոնեության օրոք: Մյուս վարկածն այն է, որ հայկական տարբերակն արտացոլում է շատ ավելի հին պատկերացումներ, որոնք ժամանակակից են կենդանակերպ գերբնական էակների դարաշրջանին և նախորդում են մարդակերպ աստվածություններին:

### Առաջավորասիական առասպելը

Հույն աշխարհագրագետ Սրտաբոնը (մ.թ.ա. 1-ին–մ.թ. 1-ին դդ.), իր նշանավոր «Աշխարհագրություն» երկում խոսելով Սիրիայի քաղաքների մասին, Աստիոքի առնչությամբ նշում է, որ դրա մոտով է հոսում Օրոնտես գետը, որը սկիզբ առնելով Կելեսի Սիրիայում՝ այնուհետև մտնում է գետնի տակ և նորից դուրս գալիս Երկրի մակերես, անցնում է մի քանի երկրամասերով և Աստիոքից հետո թափվում Միջերկրական ծով՝ Սելևկիա քաղաքի մոտ (Strabon, 1964, XVI, 2, 7, 695-696): Ըստ Ստրաբոնի՝ գե-

9 Առհասարակ, «ցատկող ձկների» վերաբերյալ առասպելությունը, որը միանգամայն իրական հիմքեր կարող է ունենալ, արտահայտված է նաև այլ ավանդություններում և առասպելաբանական հեռագնա վերլուծությունների դուռ կարող է բանալ, ինչն առանձին հետազոտության նյութ է:

տը նախկինում կոչվել է վիշապ-հրեշի անունով՝ Տյուփոն, սակայն մ.թ.ա. 4-րդ դարում գետի վրա կամուրջ կառուցած տիրակալի կողմից ստացել է իր անունը՝ Օրոնտես (հուն. *Ὀρόντης*): Սա Երվանդունիների գահատոհմին պատկանող Երվանդ II-ն է (ըստ այլ հաշվարկների՝ Երվանդ I), ով, ենթադրաբար, Էվագորասի դեմ պատերազմելիս իր գորքերով անցել է այս գետի վրայով և դրան տվել իր անունը: Ավելի ուշ Մելևկյանները գետն անվանափոխելով՝ այն կոչել են Աքսիոս (հուն. *Ἄξιός*, լատ. *Axius*)՝ Մակեդոնիայի ամենախոշոր գետի անունով:

Այժմ Երվանդ-Օրոնտես գետը կոչվում է Էլ-Ասի, ինչն արաբերեն նշանակում է «համառ», իսկ թուրքերեն այն անվանվում է «թարս հոտող գետ»: Պատճառն այն է, որ ընթանալով Միջերկրականի առափնյակին զուգահեռ՝ հարավից հյուսիս, Հաթայ գավառում այս գետը կտրուկ փոխում է իր հոսանքի ուղղությունը և թեքվելով արևմուտք՝ մտնում է Անտիոքի հովիտ ու թափվում ծով: Ջրի ցածր մակարդակի և քամիների շտրիկով տեսողական պատրանք է ստեղծվում, թե գետը սկսում է հոսել հակառակ ուղղությամբ: Ստորգետնյա հոսանքը, համառությունն ու «թարսությունը» պատճառ են դարձել գետին վիշապային հատկանիշների վերագրման:

Ըստ Ստրաբոնի՝ Երվանդ-Օրոնտես գետի հին անվանումը կապված է եղել վիշապ Տյուփոնի և արիմների ցեղի հետ, որոնք այլ աղբյուրներում հաճախ տեղադրվում են Կիլիկիայում: Հունական դիցաբանության մեջ Տյուփոնի դեմ կռվում և նրան հաղթում է շանթարձակ Զևսը, ընդ որում այս առասպելը վկայված է տարբեր հեղինակների երկերում, սակայն ոչ մի տարբերակում չի հիշատակվում Տյուփոն-Օրոնտես գետը: Միայն Ստրաբոնի հաղորդած տարբերակում է պատմվում, որ վիշապ Տյուփոնը, [Զևսից] կայծակնահար, փորձում է պատսպարվել գետնի տակ, և այդ ընթացքում նա ոչ միայն ակոսելով փորում է ապագա Օրոնտես գետի հունը, այլև ներթափանցելով ստորերկրայք՝ դուրս է բխեցնում ընդհատակյա աղբյուրները, որոնցից էլ գոյանում է իր անունով կոչված գետը (Strabon, 1964, XVI, 2, 7, 695-696)<sup>10</sup>: Ակնհայտորեն, հունական առասպելական այս գրույցն արտացոլում է տեղական հնագույն հավատալիքները, որոնց վերաբերյալ տեքստերը հայտնի են դեռևս տարածաշրջանի սեպագիր արձանագրություններից (սրանց մասին ընդհանրական ձևով տե՛ս Tcholakyan, 2023, 84-86):

## Քննարկում

Այսպիսով, ներկայացված տարբերակների հիման վրա կարելի է վերականգնել այն առասպելույթը, որն ընկած է աշխարհի տարբեր ժողովուրդների՝ ոռոգման համակարգերի առաջացմանը վերաբերող առասպելներում<sup>11</sup>: Ընդ որում՝ դիտարկելի է նաև այդ առասպելույթի զարգացումն ու կատարելագործումը հազարամյակների ընթացքում: Ամենանախնական մակարդակում գետերի ու լճերի առաջացումն առնչվում է վիշապանման վիթխարի էակների գործունեությանը, որի արդյունքում նրանք, իբրև ոչ-բանական արարածներ, ակամա պատճառ են դառնում Երկրի մակերևույթի սեյսմիկ գործընթացների: Ավելի կատարելագործված մակարդակում գործ ունենք «վիշապ vs վիշապ» բանաձևի հետ, երբ երկրակեղևի ձևափոխումներն առնչվում են երկու կամ ավելի վիշապանման էակների համակամարտությանը: Եւ վիշապանարտի առավել կատարելագործված մակարդակում արդեն գործում է «վիշապ vs հերոս» բանաձևը, որի դեպքում վիշապի ակամա գործողությունը վերածվում է ամպրոպային հերոսի կողմից պարտադրված կամ պարզապես գիտակցված ու կամավոր վարքի: Այս վերջին մակարդակի ամենանոր դրսևորումներին են վերաբերում այն պատկերացումները, որոնցում վիշապը լծվում է արոքին կամ գութանին և վարում հողը ամպրոպային հերոսի պարտադրմամբ, որը հանդես է գալիս իբրև հողագործ: Նման դրսևորման ամենացայտուն օրինակն ունենք պալոնական ավանդույթում՝ տարբեր գետերի ու վտակների առնչությամբ, բայց հատկապես՝ Դնեպրի վերաբերյալ: Ըստ ավանդազրույցի՝ երկու աստվածային դարբիններ հնագանդեցնում են հսկայական վիշապ-օձին և, լծելով գութանին, փորում Դնեպր գետի հունը (Ivanov, 1991, 3943): Հատկանշական է, որ գետահունը վարելով փորելու տարբերակը վկայված է ոչ-լեռնային՝ դաշտավայրային երկրում, որտեղ սեյսմիկ գործընթացները չչնչին դեր ունեն: Մյուս կողմից, սա արդեն արհեստական ջրանցք բացելուն շատ մոտ գործընթաց է հիշեցնում և այդ առումով բավական մոտ է չինական վիշապի գործողությանը, որն իր պոչով գծում է ապագա ջրանցքների հունները:

10 Ուշագրավ է, որ հայոց հնագույն գրի առնված էպոսում («Վիպասանք» կամ «Երգ վիպասանաց») հայոց ամպրոպային հերոսների հակառակորդներից մեկը կոչվում է *Երուանդ*, նա բոնակալ թագավոր է՝ վիշապային հատկանիշներով. Երվանդի հայացքից անգամ որձաքարերը տրաքում էին (Movses Khorenatsi, 1981, II, ԽԲ, 199): Քեսաբի բարբառում նույն բառը գործածվում է որպես հասարակ գոյական՝ *արվանդ*, և նշանակում է «վիշապ» (Tcholakyan, 2023, 100-113):

11 Առաջին նման փորձը՝ տե՛ս Dalalyan, 1999, 24. այստեղ, սակայն, որոշ եզրահանգումներ, ներկայիս հայացքով, թվում են բավական իդեալականացված և երբեմն էլ՝ տեղային:

## Նշումներ և շնորհակալություններ

Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» նախագծի (21AG-6A080) շրջանակում:

## Acknowledgements

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project № 21AG-6A080) entitled “Culture of water use in the Armenian Highland from antiquity to present days”.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Abeghyan, M.Kh. (1966-1985). *Works*, Vol. I, 1966; Vol. II, 1968; Vol. III, 1968; Vol. IV, 1970; Vol. V, 1974; Vol. VI, 1974; Vol. VII, 1975, Vol. VIII, 1985. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Bobokhyan, A.A., Tarontsi, S.S., & Dalalyan, T.S. (2023). The “Dragon stone” of Kharberd and its Cultural-Mythological Context. *Historical-Philological Journal*, 3 (224), 246-257 (in Armenian).
- Dalalyan, T.S. (1999). Dragon as a Symbol of Irrigation Systems. In S.B. Harutyunyan, & D.S. Vardumyan (Eds.), *Armenian Folk Culture - 10* (pp. 23-25), *Theses*. IAE, RA NAS (in Armenian).
- Dalalyan, T.S. (2008). The First “branch” of the epic “Vipasank” and the origin of thunder-god dynasty. In A.Ye. Petrosyan (Ed.), *Gift from heaven: Myth, ritual and history, Studies in honour of Sargis Harutyunyan on his 80th birthday* (pp. 19-50). Gitutyun (in Armenian).
- Dalalyan, T.S. (2018). On the etymology of the words *erkin-k* (sky) and *erkir* (earth). *Jahukian readings: Collection of scientific articles* (pp. 69-78). Asoghik (in Armenian).
- Dalalyan, T.S. (2019). Etymology of the word *višap*. In A.A. Bobokhyan, A. Gilbert, & P. Hnila (Eds), *Vishap between fairy tale and reality* (pp. 242-246). Yerevan, IAE (in Armenian).
- Dalalyan, T.S. (2022). From the history of one Armenian-Ossetic isogloss: *ard-* (< PIE \*art-). *Bulletin of Armenian Studies: Periodical Journal (special issue in memory of V.A. Efimov)*, 8, 41-52 (in Russian).
- Eliade, M.G. (1987). *Space and history* (Selected works, translation from French and English). Progress (in Russian).
- Ezrik Koghbatsi (1994). *Yegts Aghandots* (A.A. Abrahamyan, translation and comments). Yerevan State University (in Armenian).
- Franz von, M.-L. (1995). *Creation Myths* (Revised Edition). C.G. Jung Foundation Books, Shambhala.
- Ghanalanyan, A.T. (1969). *Avandapatum* (Collection of Armenian Legends). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Harutyunyan, S.B. (1981). Dragon Fight in Sasna Tsrer. *Herald of Social Sciences*, 11, 65-85 (in Armenian).
- Harutyunyan, S.B. (1987). *Ancient Armenian Epic World*. Arevik (in Armenian).
- Harutyunyan, S.B. (1991). Vishaps. In S.A. Tokarev (Ed.), *Myths of the world's peoples* (encyclopedia, vol. 1, p. 237). Soviet Encyclopedia (in Russian).
- Harutyunyan, S.B. (2000). *Armenian Mythology*. Vahe Setian printing house of Hamazkayin (in Armenian).
- Ivanov, V.V. (1991). Dragon. In S.A. Tokarev (Ed.), *Myths of the world's peoples* (encyclopedia, vol. 1, pp. 394-395). Soviet Encyclopedia (in Russian).
- Ke, Y. (1987). *Myths of ancient China* (2nd ed.). Nauka (in Russian).
- Movses Khorenatsi (1981). *Armenian History* (S.S. Malkhasyants, translation, preface, and comments). Yerevan State University (in Armenian).
- Petoyan, V.A. (1965). *Ethnography of Sassoun*. IAE, Academy of Sciences of the Armenian SSR, History Museum of Armenia (in Armenian).
- Petoyan, V.A. (2016). *Sassoun* (S.H. Petoyan, compiler & ed.) (in Armenian).
- Riftin, B.L. (1992). Yui. In S.A. Tokarev (Ed.), *Myths of the world's peoples* (encyclopedia, vol. 2, p. 678). Soviet Encyclopedia (in Russian).
- Strabon (1964). *Geography in 17 books* (G.A. Stratanovsky, translation, article and comments). Nauka (in Russian).
- Tcholakyan, H.M. (2023). *Armenians and other communities in the historical Antioch region*. Yerevan, IAE (in Armenian).
- Ter Minasean, R. (1982). *Memoirs of an Armenian revolutionary* (vol. V). Tehran (in Armenian).
- Toporov, V.N. (1992). Primordial Chaos. In S.A. Tokarev (Ed.), *Myths of the world's peoples* (encyclopedia, vol. 2, pp. 581-582). Soviet Encyclopedia (in Russian).
- Vainberg B.I. (1999). *Ethnography of Turan in ancient times*. Eastern literature (in Russian).



# THE WATER USE SYSTEM IN THE SHNOGH RIVER BASIN (FROM ANCIENT TIMES UNTIL OUR DAYS)

Ani Saratikyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

## Abstract

The Lori region has been one of the most active economic areas of Armenia for centuries. This is evidenced by the archaeological excavations and ethnographic studies carried out there. The developed horticultural zone of the region mainly includes the basins of Debed and its tributaries. One of the big tributaries of the Debed River is Shnogh, which passes through the territories of Shnogh and Teghut villages. Our data on the water use system of this area dates back to the 3rd and 1st millennia BC, as well as to the Middle Ages and present days. The riverside horticultural slopes of the Shnogh River basin are important evidence of the irrigation system. The intensive cultivation of these lands is evidenced by the medieval winepresses (dated from the 12th to 13th centuries) documented by excavations here. Recently, due to the construction of the Teghut mining complex, the irrigation system of gardens has been disrupted. As a result of river pollution, the riverside lands are now partially irrigated by the main water pipes of the village.

**Keywords:** river, water use, irrigation, Early Bronze Age, Iron Age, Middle Ages, excavation.

## ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԸՆՈՂ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ (ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

Անի Սարատիկյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

### Անվտիպագիր

Լոռու մարզի տարածքը դարեր շարունակ եղել է ակտիվ տնտեսական շրջան: Այդ են վկայում այստեղ իրականացված հնագիտական պեղումների ու դաշտային-ազգագրական ուսումնասիրությունների տվյալները: Մարզի զարգացած այգեգործական գոտին հիմնականում ընդգրկել է Գեղեղի և այն սնող վտակների ավազանները: Գեղեղի մեծ վտակներից մեկն է Շնող գետը, որն անցնում է Շնող և Թեղուտ գյուղերի տարածքով: Այս տարածքի ջրօգտագործման համակարգի մասին մեր ունեցած տվյալները վերաբերում են մ.թ.ա. 3-րդ, մ.թ.ա. 1-ին հազ., ինչպես նաև միջնադարյան ժամանակաշրջանին՝ հասնելով մինչև մեր օրեր: Շնող գետի ավազանի ջրօգտագործման վաղագույն օրինակը պեղումների արդյունքում հայտնաբերված բրոնզե դեղարյան արհեստանոցն է, որը կառուցվել է գետամերձ լանջին՝ լանդշաֆտը ռացիոնալ օգտագործելու նպատակով: Միջնադարյան տվյալները, որոնք առնչվում են ոռոգման համակարգին, կապված են Շնող գետի ավազանի գետամերձ այգեգործական լանջերի հետ: Հողի ինտենսիվ մշակման մասին են փաստում պեղումներով հայտնաբերված հնձանները (12–13-րդ դդ.): Վերջին շրջանում այգիների ոռոգման համակարգը խաթարվել է Թեղուտի հանքարդյունաբերական համալիրի կառուցման պատճառով: Գետի աղտոտվածության հետևանքով գետամերձ հողերն այժմ, մասնակիորեն, ոռոգվում են գյուղի հիմնական ջրատարներով:

**Հիմնաբառեր.** գետ, ջրօգտագործում, ոռոգում, վաղ բրոնզի դար, երկաթի դար, միջնադար, պեղումներ:

### Ներածություն

Բնակավայրերն ավանդաբար հիմնվել են գետերի և ջրային ավազանների շրջակայքում, քանի որ ջուրն անհրաժեշտ է կենսաապահովման ոլորտի կազմակերպման, գյուղատնտեսական և արտադրական գործունեության բոլոր բնագավառների համար: Ջրօգտագործման համակարգի ձևավորման եղանակները հասկանալու համար կարևոր են գետավազանների, դրանց տարածքի նյութական ժառանգության,

տարբեր դարաշրջանների բնակավայրերի, մարդու տնտեսական գործունեության տարատեսակ վկայությունների, երկրագործական մշակույթի, այդ թվում՝ այգեգործական գոտիների ուսումնասիրությունները: Վերոնշյալի լավագույն օրինակներից են Կուր և Արաքս գետերը, որոնց շուրջ ձևավորված հնամշակութային իրողությունները տարածաշրջանում հայտնի են Կուր-արաքսյան մշակույթ (մ.թ.ա. 3500–2500թթ.) անվամբ (Avetisyan et al., 2023):

Դերեղի աջ վտակ Շնող գետի ջուրն ավանդաբար օգտագործվել է թե՛ խմելու, թե՛ ոռոգման և թե՛ արհեստագործական նպատակով: Այդ են վկայում գետավազանի տարածքի հնագիտական հուշարձանները՝ արհեստանոցները, ամրոցները, նաև պեղված բազմաթիվ հնձանները, որոնք փաստում են զարգացած այգեգործության, մասնավորապես՝ խաղողագործության մասին: Լոռին հյուսիսարևելյան Հայաստանի խաղողագործական կարևոր գոտին է, որը մեծապես կապված է Դերեղ գետի և այն սնող վտակների ջրային պաշարների հետ (Hobosyan et al., 2021; Hobosyan & Saratikyan, 2019, 256):

Լոռու մարզը, մասնավորապես՝ Դերեղ գետի ավազանը, եղել է մետաղամշակության հնագույն օջախներից մեկը: Ձուլարաններն ու մետաղամշակման արհեստանոցներն ավանդաբար կառուցվել են գետամերձ լանջերին: Այս օրինակաչափությունն այսօր ակնեղևորեն դրսևորվում է Թեղուտի մետաղահանքի շահագործման գոտում, որտեղ հանքարդյունաբերությունն իրականացվում է Շնող գետի ստորին հոսանքի տարածքում:

### Շնող գետի ավազանը


Շնող գետը Դերեղի մեծ վտակներից մեկն է, որը սկիզբ է առնում Գուգարքի լեռնաշղթայի հյուսիսային անտառապատ լանջերից, անցնում է Թեղուտ և Շնող գյուղերի միջով, աջ կողմից միանում Դերեղին (520 մ բարձրության վրա): Գետի անտառապատ ավազանը լեռնային է՝ կազմված կավային հողով ծածկված ապարներից (Nalivayko, 2021, 31):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Շնող գետի ավազանում կան բազմաթիվ հնագիտական և ճարտարապետական հուշարձաններ, որոնք սփռված են գետամերձ լանջերին: Այդ հուշարձանները թվագրվում են տարբեր ժամանակաշրջաններով, որոնցից ամենավաղը վերաբերում է վաղ բրոնզի դարին: Ուշագրավ է, որ հուշարձանների ժամանակագրությունը գրեթե հաջորդաբար շարունակվում է, վկայելով այն մասին, որ մարդն այստեղ շարունակաբար ապրել է առնվազն մի քանի հազարամյակ: Ջրամերձ լանջերի օգտագործման վերաբերյալ վկայող հուշարձանների թվին են դասվում արհեստանոցները, դամբարանադաշտերը, ամրոցները և հնձանները:

### Ջրօգտագործմանն առնչվող հնագիտական հուշարձանները

**Ա. Արհեստանոցներ:** Հնագիտական հետազոտությունները փաստում են, որ Հայկական լեռնաշխարհը, իր հարուստ հանքային պաշարներով, վաղ մետաղամշակության ակտիվ կենտրոններից մեկն է (Meliksetian et al., 2011, 201; Bobokhyan et al.,

2014; Gevorgyan & Bobokhyan, 2014, 47-98; Bobokhyan et al., 2017): Կովկասի մետաղամշակության համար կարևոր դեր են կատարում Լոռի-Ջանգեզուրի շրջանները, որտեղ մ.թ.ա. 3-րդ հազ. ձևավորվում են մետաղագործական խոշոր օջախներ: Լոռու մարզի տարածքը, դեռևս վաղ բրոնզի դարից, մեծապես օգտագործվել է արտադրական համալիրների կառուցման՝ մետաղամշակման նպատակով (Martirosyan, 1974, 29-30): Տարածքի ջրային միջավայրի յուրացման վաղագույն օրինակներից է «Խառատանոց» հուշարձանը (մ.թ.ա. 3-րդ հազ.) (Badalyan, 2021, 426, Fig. 1; Saratikyan & Hobosyan, 2023, 68-84): Այն գտնվում է Շնող գյուղից 8 կմ հարավ-արևմուտք, Շնող գետի Խառատանոցի ջուր վտակի ձախ բարձրադիր ափին (սկ.1): Արհեստագործական այս համալիրը, ըստ հնագիտական գտածոների, ունեցել է երեք հիմնական գործառույթ, որոնցից հիմնականը եղել է մետաղագործությունը: Վերջինիս մասին են վկայում պեղումների արդյունքում հայտնաբերված խարամը, հալոցներն ու հնցին օդ մատակարարող խողովակները (սկ.2) (Badalyan, 2021, 428-429): Համարում ենք, որ սրանք ամենակարևոր գտածոներն են, քանի որ հալոցները և հնցին օդ մատակարարող չորս նրբին կավե խողովակի բեկորների առկայությունը հստակորեն վկայում են մետաղամշակության մասին: Հալոցների մեջ առկա են մալաքիտի և լազուրիտի մնացորդներ, որոնք բնորոշ են արտադրությանը: Երկրորդային նշանակություն են ունեցել վանակատե գործիքների ու գենքերի պատրաստումը (սկ.3): Ըստ վանակատի վերաբերյալ վերջին հետազոտությունների՝ այս արտադրության հումքի 42.5%-ը բերվել է Խառատանոցից ուղիղ գծով 102 կմ. հս-արմ. գտնվող Չիկիանի հնավայրից (Վրաստանի տարածք), որն էլ հանդիսացել է առաջնային հումքի աղբյուր (Juharyan, 2018, 17): Հարկ է նշել, որ Չիկիանին վանակատի հումքի տարածաշրջանային կարևոր աղբյուրներից մեկն է (Blackman et al., 1998, 209): Հնավայրի տարածքում եղել է նաև կոպիտ գործվածքների, թել մշակելու արտադրամաս: Այդ մասին են վկայում ոսկրից պատրաստված գործիքները (սկ.4), խեցեղենի բեկորներից պատրաստված մեծաքանակ անվակները: Ուշագրավ է, որ Խառատանոցի արհեստանոցը գտնվում է թեք լանջի ստորոտին, շատ անհարմար տեղում (Շնող գետն ունի խիստ մասնատված V-աձև հովիտ, Dallakyan & Asatryan, 2015, 231): Տեղանքի մանրագին հետազոտությունը թույլ է տալիս ենթադրել, որ տեղի ընտրության պարտադիր պայմանը, հավանաբար, եղել է ջուր ունենալու հանգամանքը, ուստի արտադրական համալիրը մոտակա ավելի հարմար վայրում չի կառուցվել (սկ.1.1):



Նկ.1 Խատատանց վաղբրոնզեդարյան արհեստագործական համալիրը, Ճարտ.՝ Լ. Տեր-Մինասյան (Source: S.Hobosyan)

Խատատանցից գատ, մեկ այլ գետամերձ հուշարձանում՝ «Դուքանաձոր» հնավայրում, նույնպես փաստագրվել են մետաղամշակման հետքեր: Հետաքրքիր է, որ այս տարածքը մինչ օրս Հայաստանի մետաղամշակման կարևոր օջախներից մեկն է: Մետաղամշակության հետքեր կան նաև Շնող գետի ավազանի «Ձորի գեղ» վաղբրոնզեդարյան հուշարձանում, որտեղ հայտնաբերվել են վաղբրոնզեդարյան կլոր կացարան, զարդարուն խեցեղենի նմուշներ և այլն (Badalyan, 2021, 436):

**Բ. Դամբարանադաշտեր:** Դամբարանադաշտերի դիրքի հարցը հնագիտական ուսումնասիրություններում նշանակալի տեղ է զբաղեցնում: Այս համատեքստում ջրամերձ գոտիները կարևոր նշանակություն ունեն, քանի որ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, դամբարանադաշտերը սահմանազատող լանդշաֆտների մեջ առանձնահատուկ կարևորություն ունեն գետամերձ և լճամերձ տարածքները: Որպես համեմատական, հի-

շենք Խաչենագետի, Վարանդայի, Որոտանի, Արծվաջրի, Սևանա լճի նախկին ցամաքային գծի երկայնքով ձգված Ադիամանի, Ծովինարի, Ծովակ-2 դամբարանադաշտերը (Avetisyan et al., 2017, 163): Այդպիսի տեղաբաշխվածություն ունեն նաև Շնող և Թեղուտ գյուղերի շրջակա տարածքների երկաթեդարյան դամբարանադաշտերը (Avetyan, 1998, 52-61)<sup>1</sup>: Գետավազանի տարածքում առայժմ հայտնի է 12 դամբարանադաշտ, որոնք հիմնականում սփռված են գետի ձախ կողմում, արևելահայաց լանջերին:

Շնող գետի ավազանի «Բովեր-2» դամբարանադաշտում (նկ.5) կատարված հնագիտական պեղումների ընթացքում փաստագրվել է մի ուշագրավ հանգամանք. սկսած մ.թ.ա. 7-6-րդ դարերից, այս տարածքում մեծ կարևորություն է ստանում հողի արդյունավետ օգտագործումը:

Եթե նախորդ դարերում (մ. թ. ա. 10-9-րդ դդ.) այս հնավայրի մերձակա «Բովեր-1» դամբարանա-

1 Շնող գետի ավազանի տարածքում առաջին հնագիտական ուսումնասիրությունները կատարել է պատմաբան, հնագետ Վ. Ավետյանը, որը 1972 և 1990 թթ. պեղել է միջին և ուշ բրոնզի դարաշրջանների շուրջ մեկ տասնյակ դամբարան: 2008–2021 թթ. այստեղ պեղումներ է իրականացրել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկ.՝ Ս. Հոբոսյան)



Նկ. 2. 1-3. Խարամի մնացորդներ, 4-5 կավե խողովակներ, 6-14 մետաղի հայրցներ


դաշտի տարածքում թաղումներ կատարվում էին երկրագործության համար պիտանի, հարթ տարածքների արգավանդ հողերում, այսպե՛ս մ.թ.ա. 7-6-րդ դդ. անցում է կատարվում քարքարոտ և հողամշակության համար ոչ նպաստավոր՝ անգամ շատ թեք տարածքների: Մրանից կարելի է ենթադրել, որ հողն արդեն մեծ արժեք ուներ այդ շրջանի հասարակության տնտեսական գործունեության համար:

Այն, որ երկրագործությունն առաջնային դեր ուներ տարածքի հնարնակների կյանքում վկայելու է գալիս նաև Բարձրյալ դամբարանադաշտի հարևանությամբ 2012 թ. պեղված համաժամանակյա տնտեսական նշանակության կառույցը (նկ. 6, 7, 8, 9):

Այն արևելք-արևմուտք ուղղվածությամբ, 7,35x6,05 մ չափերի կառույց է (հնավայրը գտնվում է Բարձրյալ մատուռից 30 մ հարավ, առաջին դարավանդի հարավային, ցածրադիր մասում (նկ. 9.1)): Շինության արևմտյան մասում է գտնվում 15 քմ մակերեսով բաժանմունքը, որի որոշ մասերում պահպանվել են տափակ քարերով սալահատակի հատվածներ: Շինության երկու հատվածները, հավանաբար, ցածր միջնորմով առանձնացված են եղել: Դարավանդի արևելյան մասում՝ շինությանը կից, շուրջ 23 քմ մակերեսով արտադրական նշանակության սրահի հյուսիսային հատվածում կա գրանիտի մեջ փորված, մոտ 5 տոննա տարողությամբ երկու հոր,



Նկ.3 Վանականի մշակված բեկորներ և գործիքներ



Նկ.4 Ոսկրե գործիքներ




Նկ.5 Բովեր-2 դամբարանադաշտի դիրքը

որոնք վերին մասում միջանցիկ անցքով միացված են եղել: Ըստ նախնական դիտարկումների՝ այստեղ գործ ունենք հացահատիկի վերամշակման կառույցի հետ: Դրա ակնհայտ վկայությունն են 80 քմ մակերեսով տարածքից հայտնաբերված մակույկաձև աղորիքի 65 բեկորները (նկ. 9.2): Բացի մակույկաձև աղորիքներից, հայտնաբերվել են նաև

խեցեղենի բազմաթիվ բեկորներ, որոնց մի մասը վերաբերում էր մ.թ.ա. 8-7-րդ դդ.:

**Գ. Ամրոցներ:** Շտող գետի ավազանի ամրոցների մասին մեր ունեցած տեղեկությունները հիմնված են մասնագիտական գրականության մեջ առկա տվյալների և մեր կատարած տեղագնության վրա: Ինչպես նշվում է վերոհիշյալ աղբյուրներում,


ԹԵՂՈՒՏ 2012  
ԸՄՐՁՐԵԼ ԳՆԱԿԱՅՐ




Նկ. 6 Բարձրյալ հնավայրի հանույթը, ճարտ. Լ. Տեր-Մինասյան

ՀԱՏԱԿԱԳԻԾ


0.00



ԿՏՐՎԱԾՔ 1-1



ԿՏՐՎԱԾՔ 2-2



0 1 2 3

Նկ. 7 Բարձրյալի տնտեսական նշանակության կառույցի հատակագիծը, ճարտ. Լ. Տեր-Մինասյան



1



1



2



2

Նկ. 8 Բարձրյալի տնտեսական նշանակության կառույցի նախնական տեսքը (Source: S.Hobosyan)

Նկ. 9 Բարձրյալի տնտեսական նշանակության կառույցը պեղումներից հետո (Source: S.Hobosyan)


դրանք պատկանում են երկաթեդարյան և միջնադարյան ժամանակաշրջաններին: Նախկինում այստեղ արձանագրվել է երկաթեդարյան կիկլոպյան երկու ամրոց՝ Վահանաբերդը և Կոզմանը (Avetyan, 1979, 112-114): 2017 թ. Շնողի շրջակա տարածքների տեղագրության ժամանակ պարզվեց, որ, հավանաբար, նույն դարաշրջանի ամրոց է եղել նաև գյուղից 18 կմ հարավ գտնվող Բերդատեղ կոչվող բլրի վրա, որտեղ պահպանվել են պարսպապատերի հետքեր: Ինչպես գիտենք, այս ամրացված բնակատեղիները կառուցվել են բարձր, իշխող, ջրամերձ և աղբյուրառատ վայրերում (Danielyan, 2018, 19):

Շնող գյուղի տարածքում է գտնվում նաև միջնադարյան նշանավոր Կայծոն կամ Ամանակ ամրոցը (նկ. 10): Վերջինս, չնայած հայտնի է որպես միջնադարյան ամրոց, սակայն բերդի տարածքում պատահականորեն հայտնաբերված հնագիտական գտածոները, ինչպես նաև պարսպաշարի տեղ-տեղ պահպանված մնացորդները (կիկլոպյան շարվածքին բնորոշ) թույլ են տալիս եզրակացնել, որ այն կառուցվել է ավելի վաղ ժամանակներում: Ճարտա-

րապետ Գ. Շախկյանն այդ մասին գրում է. «Նման տիպի շարվածքը, բնորոշ լինելով նախաքրիստոնեական շրջանի (առանց շաղախի օգտագործման) կառույցների, միջնադարյան Հայաստանի ամրաշինության մեջ քիչ է հանդիպում: Հնարավոր է, որ այդ մնացորդները գոյություն են ունեցել միջնադարից էլ առաջ, իսկ միջնադարում ներառվել են ամրոցի պաշտպանական համակարգի մեջ» (Shakhkryan, 1977, 133):

Կայծոն ամրոցում հնագիտական ուսումնասիրություններ չեն կատարվել, սակայն ամրոցի վերաբերյալ տեղեկություններ կան 13-րդ դարի պատմիչների մոտ: Հակիրճ, նկարագրական բնույթի ակնարկներ են հանդիպում ուշ շրջանի աղբյուրներում նույնպես (Shakhkryan, 1977, 132; Yerznkeants, 1895, 3-4):

Ամրոցը գտնվում է Շնող գյուղի հյուսիսարևելյան կողմում՝ եռանկյունաձև հրվանդանի վրա (տեղի խոսվածքով՝ Վենձ քարի գլուխ): Բերդի շրջակայքը շրջապատված է բարձր, անմատչելի ժայռերով: Հրվանդանը հյուսիս-արևմտյան երկարությամբ



Նկ.10 Կայծոն բերդը, չափազր.՝ Գ.Շախկյանի (Source: S.Hobosyan)

յամբ հարում է Դեբեդ գետի կիրճին, հարավային կողմից Առվի ձորն է (Շնող գետ): Ամրոցի հիմնական մուտքի ընտրությունը կատարվել է՝ ելնելով ռազմապաշտպանական խնդիրներից և բնական պայմաններից, ինչը հատուկ էր Հայաստանի այլ ամրոցներին ևս: Հիմնական մուտքից բացի, ամրոցն ունեցել է օժանդակ մուտք հարավային կողմից, որտեղ ժայռերը նվազ թեքությամբ իջնում են դեպի ձորը: Ամրոցի ջրամատակարարման համակարգի մասին են վկայում շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված կավե խողովակները (նկ.11), որոնց ուղղությունը ցույց է տալիս, որ ամրոցը խմելու ջուրը ստացել է Ս. Սարգսի բլրի արևելյան կողմի (Խէչի եղի կլոսան) ձորում բխող Թնդոց աղբյուրից: Աղբյուրը գտնվում է ամրոցից բարձր տեղում, ինչը տալիս է բլրի լանջով գցված կավե խողովակներով ջուրն ինքնահոսով ամրոցի ցանկացած հատված հասցնելու հնարավորություն:


Միջնադարյան Հայաստանի գրեթե բոլոր ամրոցներն ու բերդերն իրենց պաշտպանական համակարգում ունեցել են գաղտնուղիներ, որոնք ծառայել են ինչպես ջուր վերցնելու, այնպես էլ պաշարման ժամանակ արտաքին աշխարհի հետ կապ պահպանելու նպատակին: Այդ առումով Կայծոն ամրոցը բացառություն չէ<sup>2</sup>:

**Գ. Հնձաններ:** Երրորդ շրջափուլը, որն առնչվում է գետավազանի ջրօգտագործման համակարգին, միջնադարյան ժամանակաշրջանն է: Այստեղ կան ինչպես խմելու ջրի օգտագործման, այնպես էլ այգիների ռոտգման համակարգի վերաբերյալ տվյալներ: Ուշագրավ են այստեղ փաստագրված հնձանները, որոնք վերաբերում են 12–13-րդ դարերին: Այդպիսի օրինակ է «Քարաքթունկի հողեր» տեղամասը (նկ.12): Հնձանը գտնվում է Շնող գետի ձախ, բարձրադիր ավին. տեղանքի թեքության և ժայռերի առկայության պայմաններում այդ տարած-

2 1960-ականներին ամրոցի հարավային մասում՝ ավտոճանապարհի լայնացման աշխատանքների ժամանակ, բացվել է հրվանդանի կողմից դեպի ձորն իջնող գաղտնուղի, որը, պատահարներից խուսափելու նպատակով, փակված է:



Նկ. 11 Ջրի կալն փողրակներ (Source: A. Ulikhanyan)



Նկ. 12 Քարաքոթուկի հողերի հնձանը, չափ.՝ L. Տեր-Մինասյանի (Source: H. Haydosyan)

քի այգիների ոռոգման հարցը դժվար է եղել կազմակերպել: Այստեղի 20 հա տարածքով այգիները ոռոգվել են Խառատանոցի ջուր գետակից, թեք լանջով բերված 1 կմ երկարությամբ առվի ջրերով: Գետի ձախ, հանդիպակաց ափին է գտնվել այգիների հաջորդ՝ «Բաղերի ճալա» կոչվող տեղամասը, որի տարածքը շուրջ երկու անգամ ավելի մեծ է նախորդից: Հավանաբար, ջրի անբավարար չափի պատճառով, առաջին տեղամասում այգեգործությունը, դեռևս միջնադարում, մարել է, իսկ մյուսում՝ շարունակվել մինչև խորհրդային շրջան: Շնորհի ավագանում այգիները հիմնականում եղել են խաղողագործական, որտեղ մեծամասամբ մշակվել է

սև խաղող: Ըստ ազգագրական տվյալների՝ 19-րդ դարում խաղողի լավագույն այգիները գտնվել են Շնող գետի Խառատանոցի ջուր վտակի ափերին: Հնագիտական պեղումներըցույց տվեցին, որ դա միջնադարյան ավանդույթի շարունակությունն է:

**Ջրօգտագործումը խորհրդային և հետխորհրդային շրջանում**

Հայաստանի բոլոր գետերն ունեցել են մի կարևորագույն գործառույթ ևս՝ ապահովել ջրերի անկման ուժով մինչև 20-րդ դարի սկիզբն աշխատող հազարավոր ջրաղացների ու դինգերի աշխատանքը: Շնող գետի ավագանում եղել է 17 ջրաղաց (Avetyan, 1998, 15):

Ինչպես բանավոր զրույցներից, այնպես էլ պարբերական մամուլի հաղորդումներից երևում է, որ Շնող գետն օգտագործվել է նաև ձկնստության նպատակով: Մինչև 1950-ականների սկիզբը ձկնստությունը, բնակչության համար, ունեցել է տնտեսական որոշակի օժանդակ նշանակություն: Կային ձկնորսական տարբեր միջոցներ ու հնարներ, բայց ամենատարածվածն ու արդյունավետը գետերում կառուցվող դարաններն էին՝ օչխերը (Simonyan, 2009, 10-12), որոնք պատրաստում էին գարնանը և թողնում մինչև ձմեռ: Օչխերը ձուկ բռնելու համար նախատեսված՝ թոնրի ձև ունեցող ծուղակներ էին, որոք շարում էին քարերով, գետերի ափերի մոտ, արանքները փակում էին ճիւղով, բույսերով և ծղոտով՝ մի կողմում փոքր բացվածք թողնելով: Դրանցից ձուկը հանում էին հիմնականում ձմռանը: Նոր տարուց առաջ դրանք բացում էին և որսում մուրձա, ճանար, բեղլու, գոջի, ճապալ և այլ ձկնատեսակեր: Շնող գետում կառուցված օչխայի մեջ կարող էր լինել միջինը 3-4 փութ (մոտ 50-60 կգ) ձուկ (Fridrikos, 1882, 2):

Խորհրդային շրջանում Շնողում, ջրմուղ կայանի կառուցմամբ պայմանավորված (1967-68 թթ.), այն այգիները, որոնք անմշակ էին մնացել դեռևս միջնադարում, վերստին մշակվում են: Նոր հիմնված այգիներում ավելի մեծ տեղ է հատկացվում դեղձին, բայց շարունակվում էր նաև խաղողի մշակությունը:

Թեղուտի մետաղահանքի շահագործումից հետո (2010 թ.) այգեգործական գոտիների մի մասը մնաց պոչամբարի թափոնների տակ, իսկ գետի ջուրը, հանքարդյունաբերության ազդեցության պատճառով, այլևս նախկին ծավալներով չի օգտագործվում (սկ.13): Այժմ գյուղի հիմնական ջրային պաշարն ապահովվում է Շնող գետի վերին ակունքներից, «Հաղիք» կոչվող հանդամասից սկիզբ առնող, շուրջ 13 կմ երկարությամբ ջրատարը: Այն շահագործման հանձնվեց 2005 թ. և ապահովում է Թե-



1



2

Նկ.13 Թեղուտի հանքարդյունաբերական գոտին և Շնող գետը

դուտ ու Շնող գյուղերի կենցաղային կարիքները՝ մասամբ օգտագործվելով նաև ռոռգման նպատակով:

### Եզրակացություններ

Շնող գետի ավազանն իր հարուստ հնագիտական հուշարձաններով վկայում է, որ մարդն այս գետավազանի տարածքում ապրել է դեռևս վաղ բրոնզի դարից սկսած: Երկաթեդարյան հուշարձանները՝ դամբարանները, քնակատեղիներն ու կիկլոպյան ամրոցները, փաստում են, որ մ.թ.ա. 1-ին հազ. այստեղ մեծաքանակ բնակչություն է եղել:

Ջրօգտագործման մասին վկայություններն առավելապես երևելի են միջնադարյան հուշարձանների պարագայում, երբ ջուրն օգտագործվում էր ինչպես այգիների (հիմնականում՝ խաղողի) ռոռգման նպատակով, այնպես էլ ամրոցների ջրամատակարարման համար:

Վերջին տարիներին, ինչպես Հայաստանի մյուս հանքարդյունաբերական շրջաններում, Լոռու մարզում նույնպես առաջացել են ջրօգտագործման կազմակերպման հետ կապված լուրջ խնդիրներ, հատկապես այն տարածքներում, որտեղ, արդյունաբերական նպատակով, աշխատանքեր են իրականացվում (Թեղուտի կոմբինատի կառուցման հետևանքով ոչնչացվել են նախկինում այստեղ եղած այգիները, տարածքը, գրեթե ամբողջովին, դարձել է հանքարդյունաբերական գոտի): Հետաքրքրական է, որ հնագիտական պեղումների տվյալների համաձայն, հանքարդյունաբերությունն այս տարածաշրջանում կրում է շարունակական բնույթ: Այժմ, սակայն, անհամեմատ մեծացել են դրա արտադրական ծավալները և թափոնների քանակը, հետևաբար մեծացել է նաև շրջակա միջավայրի՝ անտառների, գետերի վրա հանքարդյունաբերության բացասական ազդեցությունը:

## ՆՇՈՒՄՆԵՐ և շՆՈՐԻՎԱԿԱՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հողվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» նախագծի (21AG-6A080) շրջանակում:

### Acknowledgements

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project № 21AG-6A080) entitled “Culture of water use in the Armenian Highland from antiquity to present days”.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Avetisyan, H., Gnuni, A., Bobokhyan, A., Mkrtchyan, L., & Sargsyan, G. (2017). *Spatial and Structural Traits of Burial Grounds of the Bronze Age and Iron Age in Armenia: Preliminary Notes*. *Armenological Issues*, 2(11), 160-176 (in Armenian).
- Avetisyan, H., Gnuni, A., & Bobokhyan, A. (2023). Araks river as a culture-forming axis. *Proceedings of the International scientific conference and workshop "Arevik (Meghri) Historical and Cultural Heritage and Intercultural Relations"*. November 17-18, Yerevan, IAE, 35-37 (in Armenian).
- Avetyan, V. (1998). *Shnogh* (G.M. Grigoryan, Ed.), Yerevan (in Armenian).
- Avetyan, V. (1979). *Cyclopean fortresses in the area of Shnogh*. *Herald of the Social Sciences*, 6, 112-114 (in Armenian).
- Badalyan, R. (2021). The exploitation of mineral resources in Armenia in the Early Bronze Age. In C. Marro, & T. Stöllner (Eds.), *On salt, Copper and Gold, The origins of early mining and metallurgy in the Caucasus* (pp. 425-444). MOM Editions.
- Bobokhyan, A., Meliksetian, Kh., Gasparyan, B., Avetisyan, P., Chataigner, Ch., & Pernick, E. (2014). Transition to Extractive Metallurgy and Social Transformation in Armenia at the end of the Stone Age. In B. Gasparyan, & M. Arimura (Eds.), *Stone Age of Armenia, A Guide-book to the Stone Age archaeology in the Republic of Armenia* (pp. 283-313). Japan, Kanazawa University.
- Bobokhyan, A., Kunze, R., Meliksetian, Kh., & Pernicka, E. (2017). Society and Metal in Bronze Age Armenia. In E. Rova, & M. Tonussi (Eds.), *Subartu, At the Northern Frontier of Near Eastern Archaeology: Recent Research on Caucasia and Anatolia in the Bronze Age* (pp. 501-523). Turnhout, Brepols.
- Blackman, J., Badaljan, R., Kikodze, Z., & Kohl, Ph. (1998). Chemical characterization of Caucasian obsidian geological sources. *BAR International Series*, 738, 205-231.
- Dallakyan, M. R., & Asatryan, V. L. (2015). The Changes of Benthic Community of Shnogh river (Armenia) under the Anthropogenic Impact, Modern problems of Reservoirs and their catchments. *Proceedings of the V International Scientific and Practical Conference*, 2, 229-234.
- Danielyan, H. (2018). Main stages of investigation of "Cyclopean" fortresses in Armenia. In M. Ghahriyan (Ed.) *Middle East, history, politics, culture* (vol. XIII, pp. 19-28). Gitutyun (in Armenian).
- Fridrikos (1882, December 19). *Shnogh. Tiflis, Bee of Armenia*, 2 (in Armenian).
- Gevorgyan, A., & Bobokhyan, A. (2014). Metallurgy of Ancient Armenia in Cultural and Historical Context. *Bulletin of Armenian Studies*, 1, 47-98.
- Hobosyan, S., Gasparyan, B., Harutyunyan, H., Saratikyan, A., & Amirkhanyan, A. (2021). *Armenian Culture of Vine and Wine*. Yerevan, IAE (in Armenian).
- Hobosyan, S., & Saratikyan, A. (2019). The Newly Discovered Winemaking Center in Lori. *Herald of social sciences*, 3, 256-267 (in Armenian).
- Juharyan, A. (2018). *Sources of obsidian of the Kur-Araksian monuments of Armenia according to the results of X-ray fluorescence (pXRF) analysis*. PhD thesis. Institute of Archeology and Ethnography of the National Academy of Sciences of the Republic of Armenia (in Armenian).
- Martirosyan, H. (1974). The Study of the Ancient Culture of Armenia and its Development Prospects. *Herald of social sciences*, 7, 29-39 (in Armenian).
- Meliksetian, Kh., Kraus, S., Pernicka, E., Avetisyan, P., Devejian, S., & Petrosyan, L. (2011). Metallurgy of Prehistoric Armenia. *Anatolian metal*, V, 201-210.
- Nalivaiko, V. (2021). Application for preliminary assessment of the environmental impact of the open pit operations of the second stage of the Teghut copper-molybdenum mine (extension of the open pit and extension of the period). *"Teghut CJSC"* (in Armenian).
- Saratikyan, A., & Hobosyan, S. (2023). Craft complex of Kharatanot (Lori marz). Preliminary report. *Hushardzan*, 1, 68-84 (in Armenian).
- Shakhkhan, G. (1977). Kaitson Castle. *Historical-Philological Journal*, 1, 129-140 (in Armenian).
- Shakhkhan, G. (1986). *Lori. Stone Pages of History*. Hayastan (in Armenian).
- Simonyan, R. (2009). *Fishing traditions in Tavush region*. SAMARS (in Armenian).
- Yerzkenants, G. (1985). Antiquities from the Motherland, Kaitson or Shnogh. *Arzagank*, 30, 3-4 (in Armenian).



# ON THE WATER SYSTEM OF EREBUNI FORTRESS

Mikayel Badalyan<sup>1</sup>, Stéphane Deschamps<sup>2</sup>, François Fichet de Clairfontaine<sup>2</sup>, Henrik Danielyan<sup>3</sup>

1. Institute of History, NAS, Armenia

2. Ministry of Culture, France

3. Independent researcher

## Abstract

Urartu (Biaina, Kingdom of Ararat, Kingdom of Van) is considered to have had one of the most developed irrigation systems among powers in the Ancient Near East. Many cuneiform inscriptions left by the monarchs of the Ararat Kingdom mention the construction of canals, artificial lakes, cisterns etc. To date, important investigations have been carried out in the study of Urartian canals, artificial lakes, and dams. However, there is a lack of research on the water systems (supply or sewage) in the Urartian fortresses themselves. In this context, the excavations carried out in the Altintepe Urartian fortress near the city of Yeznka in Historical Armenia provide relevant data. A very similar “aqueduct” system was also unearthed in the Erebuni fortress, Yerevan, Republic of Armenia. The discovery of fixed water systems in Altintepe and Erebuni allows us to assert the presence of a highly developed water supply or sewage system in Urartu. Apparently, such “water canals” were built after the planning of the fortresses, in the preliminary phase, and were mainly underground. It is possible that the “water canals” had a drainage or sewage function. However, it should not be excluded that at least a part of them was used for water supply. In our opinion, the provision of a water supply to Urartian fortresses built on high hills could be implemented using highly developed engineering knowledge and systems, such as, for example, the qanat system. Interestingly, the traditions and use of those Urartian systems continued also in the Middle Ages of Armenia.

**Keywords:** Erebuni, Urartu, fortress, water system, sewerage, qanat.

## ԵՐԵՒՆԻ ԱՄՐՈՑԻ ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՈՒՐՁ

Միքայել Բադալյան<sup>1</sup>, Ստեֆան Դեշամպ<sup>2</sup>, Ֆրանսուա Ֆիշե դե Կլեֆոնտեն<sup>2</sup>, Հենրիկ Դանիելյան<sup>3</sup>

1. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

2. Ֆրանսիայի մշակույթի նախարարություն

3. Անկախ հետազոտող

## Ամփոփագիր

Ուրարտուն (Բիայնա, Արարատի թագավորություն, Վանի թագավորություն) համարվում է Հին Մերձավոր Արևելքում ամենազարգացած ջրային-ռոտման համակարգ ունեցող տերություններից մեկը: Արարատի թագավորության միապետների կողմից թողնված բազմաթիվ սեպագիր արձանագրություններում հիշատակվում են ջրանցքների, լճակների, գետեղարանների կառուցման մասին: Մինչ օրս լուրջ աշխատանքներ են իրականացնվել ուրարտական ջրանցքների, արհեստական լճերի, ամբարտակների, ջրավազանների ուսումնասիրության գործում: Այս առումով, սակայն, քիչ են հետազոտությունները բուն ուրարտական ամրոցներում ջրատար համակարգերի վերաբերյալ: Այս համատեքստում, լուրջ տվյալներ են հաղորդում պատմական Հայաստանի Երզնկա քաղաքի մոտակայքում գտնվող Ալթեփե թեփե ուրարտական ամրոցում իրականացված պեղումները: Այս հուշարձանում և Երեբունիում ֆիքսված ջրատարների հանգամանքը թույլ է տալիս պնդելու Ուրարտունում բարձր զարգացած ջրատար համակարգի առկայության մասին: Ըստ ամենայնի, նման ջրատարները կառուցվել են ամրոցների պլանավորումից հետո՝ նախնական փուլում և գլխավորապես եղել են ստորգետնյա: Կարելի է կարծել, որ ջրատարները մեծամասամբ ունեցել են ջրահեռացման գործառույթ: Սակայն, չպետք է բացառել, որ դրանց գոնե մի մասն օգտագործվել է ջրամատակարարման համար: Մեր կարծիքով, բարձր բլուրների վրա կառուցված ուրարտական ամրոցների ջրամատակարարման ապահովումը կարող էր իրականացվել ինժեներական խիստ զարգացած գիտելիքների և համակարգերի կիրառմամբ, ինչպիսին, օրինակ, կարող էին լինել քյահրիզները (կանատ): Հետաքրքիր է, որ ուրարտական ջրատար համակարգերի ավանդույթները շարունակվել են նաև միջնադարում:

**Հիմնաբառեր.** Երեբունի, Ալթեփե թեփե, Ուրարտու, ամրոց, ջրատար համակարգ, ջրահեռացում, կանատ:

## Ներածություն

Ուրարտուն (Բիայնա, Արարատի թագավորություն, Վանի թագավորություն) համարվում է Հին Մերձավոր Արևելքում Ք. ա. առաջին հազարամյակում ամենազարգացած ջրառողջման համակարգ ունեցող տերություններից մեկը: Արարատի թագավորության միապետների բազմաթիվ սեպագիր արձանագրություններում հիշատակվում են ջրանցքների, լճակների, գետեղարանների կառուցման մասին: Մինչ օրս լուրջ աշխատանքներ են իրականացվել ուրարտական ջրանցքների, արհեստական լճերի, ամբարտակների, ջրավազանների ուսումնասիրության գործում (Belli, 1997; Burney, 1972, 179-186; Garbrecht, 2004), սակայն, քիչ են հետազոտությունները բուն ուրարտական ամրոցներում ջրատար համակարգերի վերաբերյալ: Այս համատեքստում, լուրջ տվյալներ են հաղորդում պատմական Հայաստանի Երզնկա քաղաքի մոտակայքում գտնվող Ալթըն թեփե ուրարտական ամրոցում իրականացված պեղումները (Karaosmanoğlu & Yilmaz, 2012, 353-66): Վերը նշված հուշարձանում ֆիքսված համակարգի զուգահեռները լավագույնս դրսևորվում են Էրեբունի ամրոցում: Ուրարտական ամրոցների ջրատար համակարգերի ուսումնասիրությունը դեռևս հնարավորություն չի տալիս միանշանակորեն պնդելու, թե՛ արդյո՞ք դրանք ունեցել են ջրահեռացման, թե՛ ջրամատակարարման գործառույթ: Մյուս կողմից, խիստ կարևոր է փորձել հասկանալ, թե ինչպե՞ս է օրինակ ջուրը մատակարարվել ուրարտական ամրոցներ:

### Ալթըն թեփեի ջրատար համակարգը (համառոտ ակնարկ)

Ալթըն թեփեում իրականացված պեղումների արդյունքում պարզ է դարձել, որ ամրոցն ունեցել է խիստ զարգացած ջրատար համակարգ: Դրա մեծագույն մասը, ամենայն հավանականությամբ, պլանավորվել և ստեղծվել է ամրոցի կառուցման նախնական փուլում (Karaosmanoğlu & Yilmaz, 2012, 353): Ալթըն թեփեն ունեցել է ստորգետնյա ջրատար համակարգի ցանց, որն ամրոցի երկայնքով տարածվել է արևելքից արևմուտք: Միանալով գլխավոր ջրահեռացման հատվածին՝ համակարգը շարունակվել և դուրս է եկել ամրոցի պարսպաշարից (Karaosmanoğlu & Yilmaz, 2012, 353): Այսինքն, սկզբնական փուլերում կառուցվել է վերը նշված համակարգը, այնուհետև՝ ամրոցի այլ կառույցները: Բացի այդ, Ալթըն թեփեն ունեցել է արհեստական ջրավազան (Karaosmanoğlu, 2021, 444): Ալթըն թեփեի ջրատար համակարգը գլխավորապես բաղկացած է քարե սալերից՝ ուղղահայաց դիրքով գտնվող հարթեցված քարերով հատակից, հատակի երկու

կողմերում զուգահեռ հորիզոնական կամ ուղղահայաց դիրքով տեղադրված սալերից: Վերջիններս ծածկվել են արդեն հորիզոնական դիրք ունեցող հարթ քարերով (Karaosmanoğlu & Yilmaz, 2012, 362, fig. 2): Որոշ դեպքերում ջրատարը ավարտվում է միջնամասում անցք ունեցող քառակուսի քարով (Karaosmanoğlu & Yilmaz, 2012, 366, fig. 16): Հավանաբար այստեղ է թափվել քարե ջրատար «խողովակներով» եկող ջուրը: Նմանատիպ համակարգեր ֆիքսվել են նաև Հայկաբերդի ներքին ամրոցում, Քեֆ ամրոցում, Թոփրակ կալերում (Karaosmanoğlu & Yilmaz, 2012, 355):

### Էրեբունի ամրոցի ջրատար համակարգը

Էրեբունի ամրոցում իրականացված պեղումների արդյունքում ևս բացվել են ջրատար համակարգի հատվածներ (նկ.1): Դրանց մի մասը փաստագրվել է դեռևս խորհրդային ժամանակաշրջանում իրականացված պեղումների արդյունքում. պարզվել է, որ այսպես կոչված Խալդի աստծո տաճարի մոտակայքում և այունազարդ դահլիճի արևմտյան պատի տակ ջրատար համակարգի մասեր են գոյություն ունեցել: Պարզվել է նաև, որ այունազարդ դահլիճի արևմտյան պատի տակով անցնող ջրատարը ծածկված է եղել փայտե գերաններով (Oganesyan, 1980, 125, fig. 91): Ջրատար համակարգի հատված էր փաստագրվել նաև Իուրջա աստծուն նվիրված Սուսի տաճարական համալիրում:

Վերը նշված հատվածներում Էրեբունի ամրոցում հայ-ֆրանսիական հնագիտական արշավախմբի կողմից 2008 թվականից սկսված պեղումները մեծապես լրացնում են մեր պատկերացումները հուշարձանի ջրատար համակարգի մասին:

### Ա. Խալդի աստծո տաճարական համալիր:

Այստեղ՝ այսպես կոչված Խալդի աստծո տաճարի արևելյան և դրան զուգահեռ պատի երկայնքով բացվել է խճաքարերով պատված ուրարտական փողոց: Հետաքրքիր է, որ այս փողոցի միջնամասում արվել է երկար ակոս՝ ջրահեռացման համար (նկ.2): Փողոցը այնուհետև թեքվում է դեպի արևմուտք և, ավելի նեղանալով, շարունակվում է Խալդիի տաճարի հարավային պատի երկայնքով: Առնվազն այս փողոցից հարավ՝ Խալդի աստծո տաճարի հարավային պատի և դրան զուգահեռ պատի երկայնքով (տեղամասեր A 1, A 2, A 3) փաստագրվել է ջրատար համակարգ (նկ.3): Այն գրեթե ձգվում է մինչև ամրոցի այս հատվածում փաստագրված նորաբաց մուտքը: Մուտքի մոտ բացվել է նաև ուկորներով լի խորշ: Այս ջրատար համակարգը բաղկացած է իրար զուգահեռ հորիզոնական և տափակ դրված քարերից: Տեղ-տեղ պահպանվել են դրանց



Նկ 1. Երեբունի ամրոցի հատակագիծը (Կարմիրով մատնանշված է այն հատվածը, որտեղ բացվել է ջրհորը: Գծագիրը՝ Վ. Մուտարեղի: © Երեբունու հայ-ֆրանսիական արշավախումբ):



Նկ. 2. Խաղդի աստճո տաճարի արևելյան պատի երկայնքով բացված ուրարտական փողոցը (© Երեբունու հայ-ֆրանսիական արշավախումբ):



Նկ. 3. Երեբունի ամրոց. A1, A2, A3 տեղամասերի գծագիրը (© Երեբունու հայ-ֆրանսիական արշավախումբ):

վրա դրված սալաքարերը: Այն ավարտվում է միջնամասում անցք ունեցող շրջանաձև քարով, որն էլ շրջանաձև եզերված է տափակ քարերով (տեղամաս A 1) (նկ.4, 5): Նմանատիպ անցքով քարեր բացվել են Քայալըղերեւում, Հայկաբերդում: Երե-

բունու՝ վերը նշված ջրատարը որոշակի զուգահեռներ ունի Արգիշթիլսինիլիի այսպես կոչված պալատական հատվածի N 14 սենյակում բացված իրավիճակի հետ (Martirosyan, 1974, 97-98, tab. XLV; Ghafadaryan, 1984, 73, fig. 23, tab. 13):



Նկ. 4. Էրեբրունի ամրոց: A1 տեղամասում բացված ջրատարը.  
(© Էրեբրունու հայ-ֆրանսիական արշավախումբ):



Նկ. 5. Էրեբրունի ամրոց. A1, A2, A3 տեղամասերը  
(© Էրեբրունու հայ-ֆրանսիական արշավախումբ):

Ջրատարի այս հատվածն իր խիստ նման գուգահեռներն ունի Ալթըն թեփեի մուտքից ներս բացված նմանատիպ կառույցի հետ (նկ.6): Մյուս կողմից, Խալդի աստծո տաճարի հետ առնչվող այս համակարգը հիշեցնում է նույն Ալթըն թեփեի տաճարական համալիրում պեղված ջրատարը (նկ.7):

Ջրատարի մեկ այլ հատվածը բացվել է Խալդի աստծո տաճարի հարավ-արևմտյան որմնահեցից դեպի հարավ (տեղամաս A 2): Շատ լավ ֆիքսվել են ջրատարը ծածկող տափակ քարերը: Ջրատարը շարունակվում է դեպի հարավ: Այն ծածկված է եղել աղյուսե հատակով (նկ. 8):

**Բ. Մյունագարդ դահլիճ:** Այստեղ՝ պունագարդ դահլիճի արևմտյան պատի մուտքից քիչ հյուսիս-արևելք՝ J տեղամասում 2014 թվականին փաստագրվեց ջրատար համակարգի նոր հատված: Այն բաղկացած է ջրատարի սկիզբը հատող լայնական



Նկ. 6. Ալթըն թեփեի մուտքից ներս ընկած մասում հայտնաբերված ջրատարը  
(Karaosmanoğlu and Yilmaz, 2012, 366, fig. 16):



Նկ. 7. Ալթըն թեփեի տաճարական համալիրում բացված ջրատարը (Karaosmanoğlu and Yilmaz, 2012, 362, fig. 2):



Նկ. 8. Էրեբրունի ամրոց. A2 տեղամասում բացված ջրատարը  
(© Էրեբրունու հայ-ֆրանսիական արշավախումբ):

տեղադրված քարից, դրա ծայրերից սկիզբ առնող և շարունակվող գուգահեռ քարե սալերից, հարթեցված քարերով հատակից (նկ.9): Ցավոք, պունագարդ դահլիճի արևմտյան պատի այդ հատվածում տեղադրված փայտե մեծ գերանները հնարավորություն չտվեցին պեղել անմիջապես պատի տակ: Սակայն, պեղումներ իրականացվեցին պատի հա-




Նկ. 9. Էրեբունի ամրոց. J տեղամասում բացված ջրատարը (© Էրեբունու հայ-ֆրանսիական արշավախումբ):



Նկ. 10. Էրեբունի ամրոց. K տեղամասում բացված ջրատարը (© Էրեբունու հայ-ֆրանսիական արշավախումբ):



Նկ. 11. Ալթըն թեփեի N5 սենյակի հետ առնչվող կառույցի ջրատարը (Karaosmanoğlu and Yilmaz, 2012, 366, fig. 15):



Նկ. 12. Ալթըն թեփեի N5 սենյակի հետ առնչվող կառույցի ջրատարը (Karaosmanoğlu, 2021, 443, fig. 5):

կառակ հատվածում՝ K տեղամասում: Այստեղ վերաբացվեց ջրատար համակարգի շարունակությունը՝ բաղկացած արդեն հորիզոնական դիրք ունեցող, իրար զուգահեռ, մոտ 70 սմ բարձրությամբ երկշար պատերից (նկ.10): Ակնհայտորեն երևում էին այունազարդ դահլիճի պատի տակով անցնող ծածկասալը և այս կառույցի պահպանված հատվածի վերջնամասում դրված մեկ այլ ծածկասալ ևս: Ցավոք, այստեղ ջրատարը խիստ վնասված էր՝ խորհրդային ժամանակաշրջանում իրականացված

հապճեպ պեղումների պատճառով: J տեղամասում բացված ջրատարի հատվածը նմանություններ ունի Ալթըն թեփեի N 5 սենյակի հետ առնչվող կառույցի հետ (նկ.11): Իսկ K տեղամասում վերաբացված ջրատարը որոշակիորեն հիշեցնում է Ալթընթեփեում ֆիքսված մեկ այլ նմանատիպ կառույցի հատված (նկ.12):


**Գ. Իուրջա աստծո Սուսի տաճարական համալիր:** Այստեղ՝ 2022 թվականին Իուրջա աստծուն նվիրված Սուսի տաճարից հարավ-արևելք տեղա-



Նկ.13. Էրեբունի ամրոց. Մուսի տաճարից հարավ-արևելք տեղակայված N1 սենյակի մուտքն ու ջրատարը (© Էրեբունու հայ-ֆրանսիական արշավախումբ):

կայված N 1 սենյակի մուտքը պեղելիս բացվեց իրար զուգահեռ քարերով, դրանց վրա տեղ-տեղ ծածկված քարերով ջրատարի հատված (նկ.13): Նման իրողություն հայտնաբերվեց նաև արդեն Մուսի տաճարից հյուսիս-արևելք գտնվող սենյակի մուտքը պեղելիս: Ըստ երևույթին, վերը նշված կառույցները կազմել են մեկ ջրատար և տարածվել Մուսի տաճարական համալիրի արևելյան հատվածի երկայնքով: Այստեղ, ջրատարի հետքեր են ֆիքսվել նաև խորհրդային տարիներին արված հետազոտությունների ժամանակ:

**Էրեբունիում բացված ջրհորը:** 1950-ականներին Էրեբունի ամրոցում՝ սյունազարդ դահլիճի արևմտյան մուտքի հարավ-արևլյան արտաքին անկյունից հարավ պեղվել է այսպես կոչված «հարավային սենյակը»: Դրա մուտքի դեմ հանդիման պեղվել է խորշանման կառույց, որի պատերը կազմել են ջրհորի մաս (նկ.14): Այս կառույցի պեղման ժամանակ գտնվել են տարատեսակ խեցեղենի բեկորներ և կենդանիների ոսկորների մնացորդներ (Loseva, 1958, 188, fig. 12):



Նկ.14. Էրեբունի ամրոցում բացված ջրհորը (Loseva, 1958, fig.12):



Նկ.15. Երևանի Մանկական այգում բացված ջրատարի հատված (Safaryan, 2022, 41, fig. 9):

**Ջրատար համակարգի ավանդույթների շարունակությունը:** Էրեբունիում բացված վերը նշված ջրատար համակարգերի ավանդույթը հայտնի է նաև Հայաստանի Հանրապետության մի շարք միջնադարյան հուշարձաններում: Այսպես, օրինակ, նմանատիպ կառույցներ են բացվել Երևանում՝ Մանկական այգում (նկ.15) իրականացված փրկարարական պեղումների ժամանակ (Safaryan, 2022, 38-42), Երևանի Քանաքեռ թաղամասի սեփական տներից մեկում, ինչպես նաև՝ Լոռե բերդաքաղաքում:

**Ջրահեռացում, թե՛ ջրամատակարարում:**

Դեռևս միանշանակորեն դժվար է պնդել, արդյոք վերը նշված բոլոր համակարգերն ունեցել են ջրահեռացման, թե՛ ջրամատակարարման գործառույթ: Այդ պատճառով մենք նախընտրում ենք կիրառել ջրատար համակարգ եզրույթը: Դեռևս ժամանակին Էրեբունին պեղող Կ. Հովհաննիսյանը կարծիք է հայտնել, որ ամրոցի ջրամատակարարման համակարգը պետք է լիներ ստորգետնյա (Oganessian, 1980, 125): Ինչպես, օրինակ, Ալթըն թեփեի դեպքում, Էրեբունիում ևս ջրատար համակարգի առնվազն մի հատվածը ծածկված է եղել և չի երևացել:

Մասնագիտական գրականության մեջ առաջ են քաշվել Էրեբունու ջրամատակարարման վերաբերյալ տարբեր տեսակետներ (Aghakhanyan & Martirosyan, 1984, 194-198; Musheghyan, 1971, 207-215): Մենք հակված ենք կարծելու, որ ջուրն Էրեբունի է բերվել Ողջաբերդից: Մինչև 20-րդ դարի կեսերը Էրեբունի ամրոցի հարավ-արևմտյան լանջին եղել է բավական հզոր առու: Այն վերացել է հնավայրի լանդշաֆտը խորհրդային ժամանակաշրջանում փոխելուց հետո: Այդ հատվածում եղել են բնակելի տներ, որոնք Էրեբունին արգելոց-թանգարան դարձնելու և «Էրեբունի-Երևան 2750» տոնակատարությունների նպատակով քանդվել են, իսկ բոլոր բնակիչներին տրվել են նոր տներ:

Ինչպե՞ս կարող էր ջուրը բարձրացվել դեպի ամրոց: Չի բացառվում, որ այդ ամենն իրականացնելու համար կիրառվել է արևելքում խիստ տարածված քյահրիզների կամ կանատների համակարգը: Համենայն դեպս, նման համակարգ Իրանի տարածքում գործել է մոտ 3000 տարի առաջ (Wulff, 1968, 94-105):

Էրեբունուց գտնված տուֆե ջրատար խողովակները: Էրեբունի ամրոցը խորհրդային տարիներին պեղող Կ. Հովհաննիսյանը ժամանակին նկատել է, որ հուշարձանի տարածքում բացված տուֆե ջրատար խողովակներն իրենց զուգահեռներն ունեն, օրինակ՝ Երևանի տարածքից գտնված 12-րդ դարով թվագրվող նմանատիպ խողովակները (Oganessian, 1980, 127): Այս առումով, Կ. Հովհաննիսյանը կարծում է, որ այստեղ գործ ունենք ջրատար համակարգի ավանդույթների շարունակականության հետ: Մենք հակված ենք կարծելու, որ վերը նշված տուֆե խողովակները պետք է վերաբերեն Էրեբունու միջնադարյան փուլին:

**Եզրակացություններ**

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ առնվազն Ալթըն թեփեում և Էրեբունիում բացված ջրատարների հանգամանքը թույլ է տալիս եզրակացնելու Ուրարտուում գոյություն ունեցած բարձր զարգացած ջրատար համակարգի առկայության մասին: Ըստ ամեն

նայնի, նման ջրատարները կառուցվել են ամրոցների հատակագծերի նախագծումից անմիջապես հետո՝ նախնական փուլում և գլխավորապես եղել են ստորգետնյա: Կարելի է կարծել, որ ջրատարները գլխավորապես ունեցել են ջրահեռացման գործառույթ: Սակայն, չպետք է բացառել, որ դրանց գոնե մի մասն օգտագործվել է ջրամատակարարման համար: Մեր կարծիքով, բարձր բլուրների վրա կառուցված ուրարտական ամրոցների ջրամատակարարման ապահովումը կարող էր իրականացվել ինժեներական խիստ զարգացած գիտելիքների և համակարգերի կիրառմամբ, ինչպիսին, օրինակ, կարող էր լինել քյահրիզների (կանատ) համակարգը: Հետաքրքիր է, որ ուրարտական ջրատար համակարգերի ավանդույթները շարունակվել են նաև միջնադարում:

**Նշումներ և շնորհակալություններ**

Լոռե բերդաքաղաքում և Երևանի Քանաքեռ թաղամասում հայտնաբերված ջրատարների վերաբերյալ տրամադրած տեղեկության համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Ա. Նալբանդյանին և Տ. Ալեքսանյանին: Հողվածի պատրաստման ընթացքում ցուցաբերած օժանդակության համար շնորհակալ ենք Թ. Քեննեդուն, Ա. Միքայելյանին, Ա. Բորոխյանին, Ռ. Հովսեփյանին և Ա. Սարատիկյանին:

**Acknowledgements**

We express our deep gratitude to A. Nalbandyan and T. Aleksanyan for the information provided regarding the canals found in Lore fortress and Kanaker district of Yerevan. We are grateful to T. Kennedy, A. Mikayelyan, A. Bobokhyan, R. Hovsepyan and A. Saratikyan for the assistance provided during the preparation of the article.

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ  
REFERENCES**

- Aghakhanyan, G. & Martirosyan, R. (1984). Water Engineering with the Occasion of Establishment of city of Erebuni. *Historical-Philological Journal*, 4(107), 194-198 (in Russian).
- Belli, O. (1997). *Uartian Irrigation Canals in Eastern Anatolia*. Arkeoloji ve Sanat Yayinlari (in Turkish).
- Burney, Ch. (1972). Uartian Irrigation Works. *Anatolian Studies*, 22, 179-186.
- Garbrecht, G. (2004). Historische Wasserbauten in Ostanatolien – Königreich Urartu, 9-7 Jh. v.Chr. In Ch. Ohlig (Ed.), *Wasserbauten im Königreich Urartu und weitere Beiträge zur Hydrotechnik in der Antike* (pp. 1-103). Siegburg, Schriften der Deutschen Wasserhistorischen Gesellschaft.
- Ghafadaryan, K. (1984). *Architecture of the City of Argish-*

- tikhinili*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Karaosmanoğlu, M. & Yilmaz, M. A. (2012). 'Altintepe Urartu Kalesi Kanalizasyon Sistemi'. In B. Söğüt (Ed.), *Festschrift in Honour of Ahmet Adil Tirpan* (pp. 353–66). Istanbul.
- Karaosmanoğlu, M. (2021). Erzincan/Altintepe. In G. R. Tsetskhladze & A. Çilingiroğlu (Eds.), *Archaeology and History of Urartu (Biainili) Dedicated to the memory of prof. Altan Çilingiroğlu* (pp. 437–456). Leuven-Paris-Bristol, Mahmut Bilge Baştürk and James Hargrave Peeters.
- Loseva, I. (1958). New Archaeological Investigations of the team of the Pushkin State Museum of Fine Arts at Arin-Berd Hill. *Soviet Archaeology*, 2, 179-195.
- Martirosyan H. A. (1974). *Argishtikhinili*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Musheghyan, G. (1971). The Question of Water-Supply in Erebuni and Teishebaini. *Historical-Philological Journal*, 1(52), 207-215 (in Armenian).
- Oganesyan, K. (1980). *Erebuni Fortress*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Safaryan, M. (2022). Rescue Excavations in Yerevan Children's park. *Hushardzan*, 2(18), 30-60 (in Armenian).
- Wulff, H. E. (1968). The Qanats of Iran. *Scientific American Magazine*, 218(4), 94-105. <https://doi.org/10.1038/scientificamerican0468-94>



# WATER RESERVOIRS OF MEDIEVAL FORTRESSES

Levon Mkrtchyan<sup>1,2</sup>, Gagik Sargsyan<sup>3</sup>

1. “Service for The Protection of Historical Environment and Cultural Museum-reservations” SNCO

2. Shirak centre of Armenological studies NAS, Armenia

3. Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

## Abstract

This article is dedicated to the water reservoirs of the High Middle Age fortresses of Armenia, which are located outside the walls and are examples of civil architecture of the given period.

Ancient and Early Medieval fortresses were usually built near water outlets (rivers, lakes or springs), from which water was brought to the fortress through pipes or culverts. However, the situation changed when in the High Middle Ages, with the deepening feudal fragmentation, the fortresses began to be located in the most isolated and inaccessible places, which soon led to the problem of water supply. Being built on the tops of rocky hills, it was even a problem to dig a deep well. Although some of the hills with fortresses were located near water sources, it was very necessary to store water for a long siege.

Since the 10th century, buildings called “water reservoirs” appeared in fortresses. These buildings are made of stone or are rock-cut, the interior of which is plastered to ensure water resistance.

Thus, we are dealing with a very important monument of medieval Armenia, which can actually become not only an architectural but also a rich engineering and technical source for specialists investigating this period. Therefore, giving these structures the status of a separate monument or sub-monument becomes a priority. Due to this, by separating a special category of “fortress”, a new unit of Armenian civil monument will be added. In this regard, the works carried out by our team using modern methods (modeling, GIS) within the framework of the “Study of Syunik and Artsakh Fortresses” program, are of particular importance. As a result, nearly two dozen fortresses were attested.

**Keywords:** Artsakh, Syunik, High Middle Ages, fortress construction, water reservoirs, digitalization and modeling.

## ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՋՐԱՅՎԱԿ ԴԱՐԵՍԱՐԱՆՆԵՐԸ

Լևոն Մկրտչյան<sup>1,2</sup>, Գագիկ Սարգսյան<sup>3</sup>

1. «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության» ՊՈԱԿ

2. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

3. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

## Անվտիպագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի զարգացած միջնադարյան ամրոցներում տեղակայված ջրահավաք պահեստարաններին՝ ռեզերվուարներին, որոնք պարապատերից դուրս են և տվյալ ժամանակաշրջանի քաղաքացիական ճարտարապետության օրինակներ են:

Հնագույն և վաղմիջնադարյան ամրոցները սովորաբար կառուցվում էին ջրային ելքերի մոտ (գետերի, լճերի կամ աղբյուրների), որտեղից խողովակներով կամ գաղտնուղիներով ջուրը հասնում էր ամրոց: Սակայն իրադրությունը փոխվեց, երբ զարգացած միջնադարում, ավատատիրական խորացող մասնատվածության պայմաններում, ամրոցները սկսեցին տեղակայվել առավել մեկուսի և դժվարամատչելի վայրերում, ինչն էլ ինքնըստինքյան առաջ բերեց ամրոցների ջրամատակարարման խնդիր: Կառուցված լինելով ժայռոտ բլուրների գագաթներին՝ այստեղ նույնիսկ խնդիր էր խոր ջրհոր փորելը: Թեպետ որոշ ամրոցանիստ բլուրներ ջրային ելքերին մոտ էին, այնուամենայնիվ, երկարատև պաշարումների համար խիստ անհրաժեշտ էր ջուրը պահեստավորել:

Սկսած X դարից՝ ամրոցներում արդեն երևան են գալիս շինություններ, որոնք ընդունված են կոչել «ջրամբարներ», «ջրահավաքներ»: Այս շինությունները լինում են քարաշեն և ժայռափոր, որոնց ներսույթը սվաղված է՝ ջրակայունություն ապահովելու համար:

Այսպիսով, գործ ունենք միջնադարյան Հայաստանի շատ կարևոր մի հուշարձանի հետ, որը փաստացի ոչ

միայն ճարտարապետական, այլև ինժեներատեխնիկական հարուստ սկզբնաղբյուր կարող է դառնալ տվյալ ժամանակաշրջանով զբաղվող մասնագետների համար: Ուստի առաջնահերթ կարևորություն է դառնում այս կառույցներին որպես առանձին հուշարձանի կամ ենթահուշարձանի կարգավիճակ տալը, որի շնորհիվ դրանք «ամրոց» ցուցիչով հուշարձանների համակարգում առանձնանալով՝ կավելացնեն հայկական քաղաքացիական հուշարձանները նոր միավորով: Այս առումով առանձնակի կարևորություն են ստանում մեր թիմի կողմից «Սյունիքի և Արցախի ամրոցների ուսումնասիրության» ծրագրով, ժամանակակից մեթոդներով (մոդելավորում, GIS) կատարված աշխատանքները, որի արդյունքում հավաստվել են մոտ երկու տասնյակ ամրոցներ:

**Հիմնաբառեր.** Արցախ, Սյունիք, զարգացած միջնադար, ամրոցաշինություն, ջրահավաք-պահեստարաններ, թվայնացում և մոդելավորում:

## Ջրապահովման խնդիրները Յին Յայաստանում

Հայաստանի զարգացած միջնադարին բնորոշ ամրոցների պարսպապատերից ներս և դրանցից ճարտարապետորեն առանձին ու մեկուսի տեղակայված են մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող հուշարձանների օրինակները, որոնք երբևէ չեն դիտարկվել որպես հուշարձանային առանձին միավորներ: Այս աշխատանքում առանձին կանդրադատանք ոչ միայն Սյունիքի և Արցախի (Որոտնաբերդ, Վասակաբերդ, Կաչաղակաբերդ և այլն), այլև Հայաստանի այլ հատվածների զարգացած միջնադարին բնորոշ ամրոցներում (սորահայտ ամրոցներ՝ Արտենի, Օձասար) մեր հավաստած ջրահավաք-պահեստարանների օրինակներին:

Հայաստանում ամրոցների ջրապահովման մշակույթը հին ավանդույթ է, հնագույն ամրոցները կամ, այսպես կոչված, «կիկլոպյան» ամրոցները, (մ. թ. ա. 2–1 հզ.) հիմնվում էին կենսական նշանակություն ունեցող տարածքների մոտ՝ օղակելով ընդարձակ արոտավայրեր, դաշտեր, հսկելով բնական աղբյուրների ելքերն ու փակելով կարևորագույն նշանակության ճանապարհները, լեռնացքները: Բնականաբար, այս ամրոցները պետք է ունենային ջրամատակարարման խնդիր: Ուստի, շատ հաճախ սրանք տեղակայվում էին իրար մոտ, մեկ շարքով՝ գետերի և հեղեղատների հովիտներում կամ լճերի ափամերձ բարձունքներին:

Շուրջ մեկ տասնյակ ամրոցներ են պատում Արփի լիճ-ջրամբարը, որի գոգավորությունը ունի տեկտոնական ծագում և ջրամբարի է վերածվել միայն 1951 թ. (Chiligaryan et al., 2001, 92): Բրոնզ-երկաթեդարյան որոշ ամրոցների կողքին առկա են փոքրիկ լճակներ, որոնց մի մասը հետագայում, հատկապես խորհրդային տարիներին, վերածվել են ջրամբարների: Այդպիսի փոքր տեկտոնական լճակ կա Ամասիայի Արդենիս 1 և 2 ամրոցների միջև (ուսումնասիրությունը՝ Լ. Մկրտչյանի): Լճակներ կան նաև Արցախի Հանրապետության Քաչաթաղի շրջանի Խոզնավարի լիճ և Բարկուշատի բերդ ամրոցների մոտ (Sargsyan et al., 2022, 76–78, 148–150): Արհեստական լճակ է պահպանվել Թդիթ գյուղի

բարձունքում գտնվող ամրոցի դիմաց: Բացի բնական լճակներից և գետերից, բարձր լեռներից հոսող ջրերն ու մթնոլորտային տեղումները կուտակելու համար թեքադիր հեղեղատներում կառուցում էին արհեստական ամբարտակներ: Հարթեցված հողե և քարե պատնեշների, դրանցից սկսվող, զույգ շարքով դրված ջրանցքների մնացորդներ են առկա ՀՀ Արագածոտնի Ավան, Կոշ և Ուջան գյուղերի միջև գտնվող խոշոր ամրոց-բնակավայրերի մոտով անցնող հեղեղատներում (ուսումնասիրությունը՝ Լ. Մկրտչյանի, Գ. Սարգսյանի): Չի բացառվում, որ որոշ ամրոցների մոտակայքից հայտնաբերված ժայռաբեկորների լերկ մակերեսներին համակենտրոն ու երկարացող փորագիր ակունքերով պատկերված են լճակների և առվակների «ժայռապատկերաքարտեզ»-ներ: Նման պատկերներ են գտնվել Մեծամորից, Մոտկան բերդից (ուսումնասիրությունը՝ Ա. Գևորգյան, Լ. Մկրտչյանի, Գ. Սարգսյանի), Կաքավաձորից (Khanzadyan et al., 1973, 150–152), Քաչաթաղի Միրիկ 4 համակառույցի տարածքից (Avetisyan et al., 2023, 36):

Ամրոցների ջրամատակարարման հետաքրքիր համակարգ է գործել նաև Վանի թագավորության ժամանակ: Էրեբունի ամրոցի պեղումներից հայտնաբերվել են քարե խողովակներ (Oganesyanyan, 1955, 16), իսկ որպես ջրամատակարարման աղբյուր՝ ծառայել է Աբու Հայաթ ջրանցքը, որը Հրազդան գետի ջրերը տեղափոխել է Թոխմախի լիճ, որտեղից էլ հայտնաբերված քարե խողովակներով ջուրը հասել է ամրոց (Musheghyan, 1977, 207): Նույն Հրազդան գետը ջրամատակարարման միջոց է եղել նաև Թեյշերաինի (Կարմիր բլուր) միջնաբերդի համար: Ջրամատակարարման և ջրակուտակման ինժեներատեխնիկապես ավելի բարձր մակարդակ ունի Արգիշտիխինիլիում պեղումներով բացված ջրահավաք-պահեստարանը, որն ունեցել է 11x10,7 մ չափսեր և ըստ հաշվարկների՝ տարողությունը կարող էր հասնել 80000 լ. ջրի (Martirosyan et al., 1975, 55):

Անտիկ ժամանակաշրջանի ջրահավաքների մասին գաղափար է տալիս Արտաշատի եռամաս բաժանվածությամբ ջրահավաք-պահեստարանը (Yepremyan, 1992, 54):



Նկ. 1. Աղջկա բերդ, օրթոֆոտոպլան, ընդհանուր պատկեր, աջ կիսաբոլոր աշտարակի պատկեր (Source: L. Mkrtchyan)

Սակայն դրությունը փոխվում է միջնադարում, երբ ֆեոդալական մասնատվածության ժամանակ անհրաժեշտ էր ամրոցները ամենաանմատչելի վայրերում հիմնել, որի հետևանքով շատ հաճախ հեռանում էին գետերից և լճերից, զրկվում բնակավայրերի հետ պատշաճ հաղորդակցությունից: Երկարատև պաշարումների համար ջրհորներն արդեն չէին բավականացնում, ուստի անհրաժեշտություն կար մեծ քանակությամբ ջուր կուտակելու:

**Ջրահավաք-պահեստարանների ուսումնասիրությունը**

Որպես հուշարձանի առանձին տեսակ՝ ջրահավաք-պահեստարանները առանձին ուսումնասիրության չեն ենթարկվել: Պատահական չէ, որ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում, որպես «ջրամբար», հաշվառված է ընդամենը երկու օրինակ՝ Կառնուտում՝ «Սբ. Մինաս» (ցուցիչ՝ 8.53/4.2) և Կոշում (ցուցիչ՝ 2.61/11.4):

Վերջին հինգ տարիների ընթացքում մենք շուրջ երկու տասնյակ ջրահավաք-պահեստարաններ ենք հավաստել Արցախում, Սյունիքում և Արարատի մարզի մի շարք ամրոցներում: Այս իմաստով խիստ կարևոր է Խոսրովի անտառում գտնվող, թերի ուսումնասիրված Քսուզ ամրոցի սրածայր գագաթին սրբատաշ քարերով կառուցված փոքր, կիսավեր ավազանը: Առանձնակի պետք է նշել Նարեկ գյուղից 2,5 կմ հարավ-արևելք գտնվող Օձասարի կամ Իլկասարի նորահայտ ամրոցը: Բացի այս

օրինակներից, այստեղ առաջին անգամ կներկայացվեն ևս երկու նորահայտ ամրոց՝ իրենց լավ պահպանված ջրահավաք-պահեստարաններով, որոնք գտնվում են Արագածոտնի մարզի Արտենի և Կարմրաթառ լեռների գագաթներին:

Ինտրո առարկա հուշարձանները գտնվում են 10–13-րդ դդ. թվագրվող, զարգացած միջնադարին բնորոշ ամրոցների պարսպապատերից ներս՝ դարավանդի վրա: Սրանք ուղղանկյունաձև հիմքով քարե շինություններ են, որոնք ներսից պատված են կրաշաղախի հաստ ծեփով: Ծածկված են եղել կիսակամարաձև տանիքներով, որոնք հիմնականում չեն պահպանվել: Ի տարբերություն Ամբերդի, Լոռե բերդի և Բջնիի ջրահավաքների, որոնք գետնափոր են, սրանք առանձին կանգնեցված ճարտարապետական շինություններ են:

Թեև սրանք ամրոցների պարսպապատերից առանձին կանգնած հուշարձաններ են, սակայն որոշ ամրոցների դեպքում, հավանաբար, ջրահավաք-պահեստարանների դեր են կատարել նաև պարսպապատի աշտարակները: Այսպես, Արագածոտնի մարզի Կոշ գյուղում գտնվող «Աղջկա բերդ» ամրոցի անկյունային չորս կիսակլոր աշտարակներից երկուսը սնամեջ են (Նկ. 1): Չորս աշտարակներից մեկը սնամեջ է նաև Արարատի մարզի Տափի բերդի պարագայում (ուսումնասիրությունը՝ Մկրտչյան Լ., Սարգսյան Գ.): Հավանաբար ջրահավաք-պահեստարաններ են նաև Քաջաթաղի շրջանի Պահու բերդի մուտքի երկու կիսակլոր սնամեջ աշտարակները (Sargsyan et al. 2022, 170–174), որոնց



Նկ. 2. Հոռոմսին, արևմտյան կլոր աշտարակ  
(Source: G.Sargsyan)

պարագայում պահպանվել են նաև կրաշաղախի հետքեր՝ ջրամեկուսացման համար:

**Արցախ:** Այստեղ ջրահավաքով ամրոցները աչքի են ընկնում իրենց չափերով և զբաղեցնում են մի քանի հեկտար տարածք՝ կազմված վարչական, տնտեսական և այլ ենթակառուցյուններից: Հավանաբար եղել են տեղական իշխանությունների կենտրոններ կամ նստավայրեր: Արցախի նշանավոր «Կաչաղակաբերդ» ամրոցում պահպանվել են երկու ժայռավոր ջրահավաք ավազանների հիմքերը: Հանդաբերդում ջրահավաք ավազանն առանձին կանգնած, քարաշեն, ներսի կողմից ծեփված պատերով կառույց է: Ջրաբերդի ամրոցում առկա ջրհահավաք ավազանները հարավարևմտյան պարսպի ներսի երկու խորը հորերն են:

Դահրազ գյուղի «Հոռոմսին» ամրոցում ջրահավաք ավազան է կառուցված արևմտյան կլոր աշտարակի մեջ (նկ. 2), որի կրակին բացված է դեպի դուրս նայող անցք՝ ջուրը թափելու և ավազանը մաքրելու նպատակով: Քաշաթաղի շրջանի «Կառնակաշ» միջնադարյան ամրոցում, դեպի գագաթի միջնաբերդը բարձրացող երկու ժայռազանգվածների միջև, նեղ սողանցքում կառուցված են երկու՝ մեկը մյուսին հաջորդող, համապատասխանաբար 5x4 և 3,5 x 3,8 մմ չափսերով, ժայռային պատին կցված քարաշեն ավազաններ (Sargsyan et al., 2022, 187), որոնք, ըստ ամենայնի, սնուցվում էին այստեղով գնացող սելավատարով:

**Մյունիք:** Այստեղ ամենամեծ ամրոցը, որն ունի ջրահավաք-պահեստարան Ռոտոնաբերդը կամ Ռոտոնն է, որը հիշատակվում է Մյունիքի նշանավոր ամրոցների շարքում (Orbelyan, 1986, 71) և գտնվում է Ռոտոն գետի բարձրադիր ափին՝ Լորաձորի գետաբերանին (1415 մ ծ.մ.)՝ զբաղեցնելով մոտ 16

հա տարածք: Ռոտոնի գետաբերանին, ժայռոտ բարձունքին է տեղակայված միջնաբերդը (նկ. 3), որտեղ էլ պահպանվել է ջրահավաք-պահեստարանը: Այն հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղվածությամբ, 8x5,5 մ չափսերով, պատի 1 մ հաստությամբ, 2,5 մ պահպանված բարձրությամբ կառույց է, որի ծածկը չի պահպանվել: Քանդված է նաև հյուսիսարևելյան հատվածը: Կառույցի պատերին դեռ մնացել են կրաշաղախի հետքեր, որոնք հատկապես լավ են պահպանվել հարավային մասում (նկ. 4):

Հացավան գյուղի հյուսիսային մասում՝ Ջոհաջուր գետի ձախ ափին, մեծ, ժայռոտ բլրին (1815 մ ծ.մ.) է գտնվում Վասակաբերդ ամրոցը (նկ. 5): Ժայռոտ բլուրը երեք կողմից շրջապատված է գետի խորը կիրճերով, հարավ-արևելյան՝ խոցելի կողմում պահպանվել է պատաշար: Ամրոցի միջնաբերդի կենտրոնական մասում՝ հյուսիսարևելք-հարավարևմուտք ուղղվածությամբ, ջրահավաք-պահեստարանի՝ ժայռում փորված հիմքերն են՝ 5,70x4,20 մ չափսերով:

Տանձավեր գյուղից 4,40 կմ հարավարևելք՝ միջնադարյան Ման և Վանանդ գյուղերի միջև՝ Քաշունի գետի բարձր ժայռերից մեկի վրա է տեղակայված Վանանդաբերդը (1495 մ ծ.մ.): Ամրոցը գտնվում է խիտ անտառում՝ ամբողջությամբ ծածկված ծառերով և մացառներով: Այն հիշատակում է Սու. Օրբելյանը (Orbelyan, 1986, 71), և, հավանաբար, եղել է Քաշունի գավառի նշանավոր ամրոցներից մեկը: Միջնաբերդի կենտրոնական՝ ամենաբարձր մասում է գտնվում ջրահավաք-պահեստարանը, որը հյուսիսարևմուտք-հարավարևելք ուղղվածությամբ, 7,60x4,50 մ չափսերով, մոտ 2,5 մ բարձրությամբ, բավականին լավ պահպանված կառույց է: Թեպետ տանիքը ամբողջովին չի պահպանվել, սակայն պահպանված կիսակամարների ստորին հատվածները կարող են պատկերացում տալ նախնական ճարտարապետական տեսքի վերակազմության մասին (նկ. 6):

**Արարատի մարզ:** Ի տարբերություն նախորդների՝ սրանք ավելի մեկուսի են՝ կտրված բնակավայրերից: Այդպիսի ամրոցներից է Քսուզը (1235 մ ծ.մ.), որը գուրկ է դասական պարսպապատումից: Գտնվում է Խոստրովի անտառի խորքերը տանող Մանկուք գետի կիրճում: Այն փորված և հարմարեցված է բնական ժայռի մեջ՝ օգտագործելով դրա բնական անմատչելիությունը: Խոցելի մասն արևելյան հատվածում է, որտեղ դրվել է պարսպապատ, որից, ցավոք, քիչ բան է պահպանվել: Ամրոցի կենտրոնական մասում՝ գրեթե արևելք-արևմուտք ուղղվածությամբ, տեղադրված է ջրահավաքը՝ մոտ 4,50x3,20 մ չափսերով: Այն շինտեխնիկայով հիշեցնում է Կոշի հայտնի ջրավազանը, բայց շատ ավելի



Նկ. 3. Որտոնաբերդ, օրթոֆոտոպլան, միջնաբերդի և ջրահավաք-պահեստարանի պատկերներ (Source: L. Mkrtychan)



Նկ. 4. Որտոնաբերդ, ջրահավաք-պահեստարան, հատված ներսույթից (Source: G. Sargsyan)




Նկ. 5. Վասակաբերդ, միջնաբերդը հարավ-արևելքից (Source: G. Sargsyan)



Նկ. 6. Վանանդաբերդ, ջրահավաք-պահեստարան, հատված ներսույթից (Source: L. Mkrtychan)



Նկ. 7. Քսուղ, ջրահավաք-պահեստարան (Source: G. Sargsyan)



Նկ. 8. Օձասար (Բլկասար), օրթոֆոտոսպլան, ամրոցի, դղյակի և ջրահավաք պահեստարանի պատկերներ (Source: L. Mkrtchyan)



Նկ. 9. Օձասար (Բլկասար), օդալուսանկար (Source: L. Mkrtchyan)

փոքր է և լցված է հողով ու ծածկված մացառներով, այդ իսկ պատճառով խորությունը դժվար է որոշել (նկ. 7):

Նարեկ գյուղից 2,5 կմ հարավարևելքում գտնվող Բլկասարի կամ Օձասարի (1464 մ ծ. մ.) գագաթին է գտնվում նորահայտ մի ամրոց: Ամրոցի պատերը օղակում են քարքարոտ լեռան ողջ գագաթը՝ ներառելով բազմաթիվ շինությունների ավերակներ, որոնց մեջ՝ ամենակենտրոնական մասում,

հավանաբար, դղյակի ավերակներն են (նկ. 8): Դղյակից հարավարևելք՝ գագաթամերձ հատվածում՝ գլխավոր մուտքի դիմաց, երկու, կողք-կողքի դրված ջրահավաք-պահեստարաններն են (նկ. 9), որոնցից չափսերով մեծը հյուսիսարևմուտք-հարավարևելք ուղղվածությամբ է՝ 17,5x6,20 մ չափսերով, որից 18 մ դեպի հյուսիս հաջորդն է՝ 13x6,5 մ չափսերով: Սրանք մոտ 1,80 մ. հաստությամբ պատերով կառույցներ են, որոնց ներսույթը ծածկված է պատե-



Նկ. 10. Կարմրաթառ (Քյորոզլի), օրթոֆոտոսպան, այրոցի և ջրահավաք-պահեստարանի պատկերները (Source: L. Mkrtchyan)




Նկ. 11. Կարմրաթառ (Քյորոզլի), ջրահավաք-պահեստարան (Source: G. Sargsyan)

րից թափված քարերով ու հողով: Սակայն կառուցի խորության մասին կարող է պատկերացում տալ մոտ 2 մ. չափսերով պահպանված արտաքին պատը: Կառույցները դարավանդի թեքության հաշվին սնուցվել են նաև անձրևաջրերով:

**Արագածոտն:** Արագածոտնի մարզի համաձայն գյուղի հուշարձանների ցանկում «Քյորոզլի» անվամբ հաշվառված ուշ միջնադարյան ամրոցը գտնվում է հրաբխային Կարմրաթառ լեռան գագաթին (1286 մ ծ.մ.): Ինչպես Իլկասարի, այնպես էլ սրա դեպքում ամրոցի պատերն օղակում են կոնաձև գագաթը (նկ.10): Ներկայումս ամրոցի ներսում հազիվ նկատելի են առանձին շինությունների հետքեր: Փո-

խարենը լավ պահպանված է քարաշեն ջրահավաք-պահեստարանը (նկ.11) և, այս պահի դրությամբ, մեր հավաստած նմանատիպ կառույցների մեջ ամենամեծ չափսերն ունի (32x9,18 մ.): Այն գտնվում է ստորոտից ավելի քան 100 մ բարձրության վրա, որտեղ շրջակա տարածքը սակավաջուր է, ուստի ամրոցը ստիպված էր ինքնուրույն «ջուր հայթայթել»՝ կուտակելով ու օգտագործելով անձրևաջուրը: Ավազանը գրեթե հյուսիս-հարավ ուղղվածությամբ է, պատերի հաստությունը մոտ 2 մ. է, իսկ խորությունը՝ մոտ 3,5 մ: Պահպանվել են ջրահավաք-պահեստարանի թեքադիր հրապարակ-ուղին ու քարե հեղեղատարներից երեքը, որոնցով սնուցվել է պա-



Նկ. 12. Արտենի, օրթոֆոտոսյան, ամրոցի, միջնաբերդի և ջրահավաք-պահեստարանի պատկերներ (Source: L. Mkrtchyan)



Նկ. 13. Արտենի, օղալուսանկար (Source: L. Mkrtchyan)

հեստարանը: Ուշագրավ է, որ ջրամբարը տեղակայված է ամրոցի ամենացածր կետում, և նրանից դեպի վեր բարձրացող թեքադիր ջրահավաք լանջի աջ և ձախ կողմերով գնացող քարե պատաշարերով անձրևաջուրն ուղղվում էր դեպի ավազան: Վերջինիս վերին եզրագծի դիմաց բացված էր ոչ խորը, երկար, խրամատաձև փոսորակ (отстойник), որտեղ անձրևաջրերի բերած ավազը նստում էր, իսկ մաքուր ջուրը՝ հեղեղատներով լցվում ավազանի մեջ: Ջրավազանն ունի կամարաձև բացվող անցք՝ ջուրը դատարկելու ու մաքրելու նպատակով:

Արտենի լեռան գագաթին (2047 մ) տարածվում է հսկայական ամրոց, որը զբաղեցնում է մոտ 2,5 հա

տարածք (Նկ.12): Այն հարավային մասում ավարտվում է բրգաշտարակներով շրջապատված դղյակով՝ 45x31 մ չափերով: Գագաթին՝ հյուսիսարևմուտք-հարավարևելք ուղղությամբ, տեղադրված է 20x5 մ չափսերով, շուրջ 3 մ խորությամբ մեծ ջրահավաք-պահեստարանը, որի արևելյան մասում՝ գրեթե հյուսիս-հարավ ուղղվածությամբ, կրկին ուղղանկյունաձև հիմքով, 8,90x6,50 մ չափսերով կառույց է առկա (Նկ.13): Հավանաբար, սա նույնպես եղել է ջրի ամբարման ավազան, բայց ի տարբերություն հարևան հուշարձանի՝ գետնափոր է: Երկու կառույցների պատերին դեռ պահպանվել են կրաշաղախի ծեփերը:



Նկ. 14. Կառնուտ, «Սր. Մինաս», օղթոֆոտոսյայան (Source: L. Mkrtychan)



Նկ. 15. Կառնուտ, «Սր. Մինաս», օղայուսանկար (Source: L. Mkrtychan)

**Շիրակի մարզ:** Կառնուտ գյուղի հյուսիսային մասում գտնվող Սուրբ Մինաս լեռան արևելյան ստորոտին է գտնվում, գրեթե արևելք-արևմուտք ուղղվածությամբ, 7,30x6,47 մ չափսերով ուղղանկյունանման կառույցը (նկ. 14), որը պետցուցակում հաշվառված է որպես «ջրամբար Սր. Մինաս» (ցուցիչ՝ 8.53/4.2): Այն կառուցված է անմիջապես ժայռոտ լեռանը հպված՝ միաժամանակ ծառայելով նաև որպես արևելյան պատ (նկ. 15):

**Եզրակացություններ**

Հայկական լեռնաշխարհում տարբեր ժամանակներում կառուցված ամրաշինական կառույցներ-

րում ջրամատակարարման ու ամբարման խնդիրը լուծվում էր՝ ելնելով տվյալ կառուցի խնդրից, դիրքից, տեղանքից և ժամանակի տեխնիկական հնարավորություններից: Բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջանների ամրոցները հիմնականում ամրացված բնակավայրեր էին, որտեղ մարդիկ մշտապես բնակվում էին: Այս ժամանակաշրջանում ամրոցները տեղակայվում էին հիմնականում գետերի ու ձորակների միախառնման կետերում առաջացած ոչ բարձր հրվանդաններում: Նրանք ջրի մեծ քանակ կուտակելու խնդիր չունեին, քանի որ մոտ էին ջրին և գրեթե բոլոր վայրերում կարելի է նկատել դեպի ջուրն իջնող գաղտնուղի՝ «ջրագողի ճանապարհ»:

Ուրարտական և հետուրարտական կենտրոնացված պետականության շրջանում ջրամատակարարումն իրականացվում էր հիմնականում քարե կամ կավաշեն խողովակաշարերի ինքնահոս ջրատարներով, որոնց բազմաթիվ օրինակները երևան են եկել պեղումների արդյունքում (Էրեբունի, Թեյշեբահինի, Արմավիր, Արտաշատ, Դվին, Անի և այլն):

Զարգացած միջնադարում, երբ ամրոցները ստիպված կառուցվում էին դժվարամատչելի լեռնագագաթներին, և անհնար էր ինքնահոս ջրամատակարարում ապահովել, ստեղծվում էին հատուկ ջրահավաք ավազաններ: Վերջիններիս ջուրը կուտակվում էր երկու եղանակով՝

– փոքր ջրավազաններում ամբարում էին նախօրոք ստորոտից կամ մոտակա աղբյուրից գրաստներով բերված ջուրը (Կաքավաբերդ, Վասակաբերդ, Քսուզ, և այլն):

– մեծ ջրամբարները կուտակում էին անձևրաջրերը՝ ջրահավաք հրապարակների ու դրանց ջրերի մաքրման եղանակների կիրառմամբ (Արտենի, Հատիս, Քյորոզլի և այլն):

Ամենայն հավանականությամբ, շատ տեղերում կիրառվում էին ջրի ամբարման բոլոր մատչելի եղանակները միաժամանակ:

## Նշումներ և շնորհակալություններ

Սույն ուսումնասիրությունը կատարվել է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 21T-6A175 «Պատմական Արցախի և արևելյան Սյունիքի ամրոցները և ամրաշինական համակարգը» գիտական թեմայի և «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի, հուշարձանների թվայնացման և մոդելավորման աշխատանքների շրջանակներում, որոնց արդյունքում առաջիկայում պատրաստ կլինեն միջնադարյան ամրոցներում առկա բոլոր ջրահավաք-պահեստարանների տեղեկությունների շտեմարանն ու տարածման քարտեզը:

## Acknowledgements

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project № 21T-6A175) entitled “The fortresses and fortification Systems of Historical Artsakh and Eastern Syunik”, and within the framework of digitization and modeling of monuments of the “Historical-Cultural Reserve-Museums and Historical Environment Protection Service”.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Avetisyan, H. G., Gnuni, A. V., Sargsyan, G. M., Mkrtchyan, L. A., & Bobokyan, A. A. (2023). *Megalithic culture of Artsakh*. Yerevan, IAE (in Armenian).
- Chilingaryan, L. A., Mnatsakanyan, B. P., Aghababyan, K. A., & Tokmajyan, H. V. (2001). *Hydrography of rivers and lakes of Armenia*. Agropress (in Armenian).
- Khanzadyan, E., Mkrtchyan, K., & Parsamyan, E. (1973). *Metsamor*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Martirosyan, A. D., Torosyan, R. M., Kafadaryan, K. K., Israelyan, R. V., & Petrosyan, L. A. (1975). Argishtikhinili Reservoir and some Issues of Urartian Hydraulic construction. *Bulletin of General Sciences*, 10, 51-67 (in Russian).
- Musheghyan, G. R. (1971). The Issue of Water supply in Erebuni and Teyshebani. *Historical-Philological Journal*, 1 (52), USSR Academy of Sciences, 207-215 (in Armenian).
- Orbelyan, St. (1986). *History of Syunik*. Soviet writer (in Armenian).
- Oganesyan, K.L. (1955). *Architecture of Teishebaini*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Sargsyan, G. M., Gnuni, A. V., & Mkrtchyan, L. M. (2022). *Castles of the Kashatagh region of the Republic of Artsakh*, Nrane (in Armenian).
- Yepremyan, R. V. (1992). *Water supply in Ancient and Medieval Armenia*. YerACI (in Russian).



# THE RESERVOIRS OF THE MEDIEVAL FORTRESSES OF THE BERD REGION

Tigran Aleksanyan, Artak Hakhverdyan

Institute of Archeology and Ethnography, NAS, Armenia

## Abstract

According to the study of preserved monuments, written sources and scientific literature, five medieval fortresses are known in the Berd region: Tavush, Nor-Berd, Matznaberd, Yergevank and Katsaret. As important points of the defense system, they are always mentioned in the sources almost together and in connection with the same historical events. The exact date of the foundation of the fortresses is not known, but according to the medieval sources and archaeological materials, they date back to the 10th-13th centuries, were heavily damaged during the Mongol invasions, and then gradually abandoned. The article is dedicated to the preliminary research of the reservoirs documented in the aforementioned fortresses, their commonalities and features with similar structures, as well as the consideration of a number of related issues. The study is based on the results of the excavations in the Tavush fortress and also the results of our fieldworks carried out in other mentioned fortresses.

**Keywords:** Berd region, medieval, archaeological excavations, fortress, reservoir, pipeline.

## ԲԵՐԴԻ ՏԱՐԱԾԱՃՐՋԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՋՐԱՅՎԱԿԱՔ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Տիգրան Ալեքսանյան, Արտակ Հախվերդյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

### Ամփոփագիր

Մեզ հասած հուշարձանների, մատենագիր աղբյուրների և մասնագիտական գրականության ուսումնասիրությունից Բերդի տարածաշրջանում (նախկին Շամշադիի շրջան) հայտնի են միջնադարյան հինգ ամրոցներ՝ Տավուշ, Նոր-Բերդ, Մաձնաբերդ, Երգեվանք և Կաձաբերդ: Դրանք՝ իբրև պաշտպանական համակարգի կարևոր օղակներ, աղբյուրներում հիշատակվում են գրեթե միասին և նույն իրադարձությունների կապակցությամբ: Ամրոցների հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ, սակայն աղբյուրագիտական և հնագիտական կյուրերի քննությամբ՝ դրանք թվագրվում են 10–13-րդ դդ., մեծապես տուժել են մոնղոլական արշավանքների ժամանակ, ապա աստիճանաբար լքվել: Հոդվածը նվիրված է հիշյալ ամրոցներում փաստագրված ջրամբարների նախնական հետազոտությանը, համանման կառուցվածքների հետ ունեցած ընդհանրություններին ու առանձնահատկություններին և հարակից մի շարք հարցերի քննությանը: Ուսումնասիրությունը հիմնված է Տավուշ ամրոցի պեղումների, ինչպես նաև մյուս ամրոցներում մեր կողմից իրականացված դաշտային հետախուզական աշխատանքների արդյունքների վրա:

**Հիմնաբառեր.** Բերդի տարածաշրջան, միջնադար, հնագիտական պեղումներ, ամրոց, ջրամբար, խողովակաշար:

### Ներածություն

Բերդի տարածաշրջանը ներառում է Մեծ Հայքի Ոսիք աշխարհի Տավուշ գավառի մի մասը: Բուն գավառը Ոսիքի ութ գավառներից հինգերորդն էր, զբաղեցնում էր ավելի ընդարձակ տարածք՝ ներառելով նաև ներկայիս Թովուզի շրջանը և Ղազախի շրջանի մի մասը: Ներկայումս շրջանը նույնական է Բերդ խոշորացված համայնքի տարածքի հետ և կոչվում է Բերդի տարածաշրջան՝ շրջկենտրոն Բերդ քաղաքի անունով:


Տարածաշրջանն ընդգրկում է Միափորի լեռնաշղթայից սկիզբ առնող երեք գետերի ավազանները, որոնք հոսում են խոր և անտառապատ ձորերով: Դրանք են Հախում գետը, որը սկիզբ է առնում Միափորի արևմտյան լանջերից, Տավուշը՝ սկիզբ առնելով նույն բարձունքի հյուսիսային լանջերից, և նրա արևելյան մասից իջնող Խնձորուտ գետը:

Միջնադարում ամրոցների կառուցման համար ընտրում էին իշխող և անառիկ ժայռային բարձունքները, որոնց ճնշող մեծամասնությունը գտնվում էր ճանապարհների և ջրային ռեսուրսների (աղբյուր-



Ջրամբար

Նկ. 1. Նոր-բերդ. միջնաբերդի ընդհանուր տեսքը արևելքից և ջրամբարը (Source: T. Aleksanyan)



Նկ. 2. Ջրամբարի չափագրություն (չափագր.՝ Ա. Հախվերդյանի)

ների) մոտ: Ամրոցները հսկում էին ճանապարհների անվտանգությունը՝ ապահովելով տնտեսության կարևոր բաղադրիչը՝ հանդիսացող առևտուրն ու բեռնափոխադրումները: Միևնույն ժամանակ ճանապարհներն այն հիմնական ուղղություններն էին, որոնցով հակառակորդը ներխուժում էր երկրի խորքը: Եվ պատահական չէ, որ նշյալ ամրոցներից մի քանիսը (Նոր-բերդ, Կածարեթ բերդ, Երգեվանք բերդ) կառուցված են Կուրի աջափնյա տափարակի

և տավուշյան անտառապատ լեռների սահմանագծին: Դրանց հիմնական խնդիրն էր հսկել հյուսիսից սեպածն բացվող լեռնահովիտներն ու դրանցով անցնող ճանապարհները:

### Նոր-բերդ

Հուշարձանը գտնվում է Վարազավան-Վազաշեն ավտոճանապարհի աջ կողմում՝ սրացումով ավարտվող ժայռոտ բլրի գագաթին: Հարավային և արևելյան կողմերից ամրոցը պաշտպանված է ուղղաձիգ կտրվող ժայռերով, հյուսիսային մասից բավական դժվարահաս է և մոտենալ կարելի է միայն արևմտյան կողմի բլրալանջով:

Մակար եպիսկոպոսը Նոր-բերդը ներկայացնում է նաև «Ցից քար» անվամբ՝ հետևելով լեռան ժողովրդական անվանաձևին: Ըստ բանահավաքի՝ լեռան գագաթին կառուցվել է դոյակ՝ անհրաժեշտության դեպքում պատելով խոցելի տեղերը: Ամրոցը գուրկ է եղել ջրամատակարարումից և, ըստ հետազոտողի, ջուրը բերել են մերձակա աղբյուրից (Barkhutareants, 1895, 359):

Ներկայումս ամրոցի պարիսպները և այլ կառույցներ չեն պահպանվել: Ամրոցանիստ բլրի միայն հյուսիսային լանջերին են երևում կառույցների և պատերի ավերակներ: Բլրի գագաթին պահպանվել է քարաշեն երկու կառույց: Դրանցից առաջինը ջրամբար է, որը կառուցված է գագաթի արևելյան եզրին: Կառույցը մեծամասամբ պահպանվել է, քանդված է միայն ծածկը: Ջրամբարի թաղակապ ծածկը կառուցված է աղյուսով, պատերը ներսից կրասվաղ են (նկ. 1, 2): Նոր-բերդի ջրամբարը ձևով, չափերով և կառուցման սկզբունքով շատ նման է Տավուշ ամրոցում պեղված ջրամբարին:

## Տավուշ ամրոց

Հուշարձանը գտնվում է շրջկենտրոն Բերդ քաղաքի հարավարևելյան մասում՝ ժայռոտ բլրի վրա: Տարածաշրջանի միջնադարյան պաշտպանական կառույցների շարքում հուշարձանը լավ պահպանվածներից է: Մինչ օրս հնավայրի տարածքում պահպանվել են միջնաբերդի հյուսիսային պարիսպները, ստորին բերդի պարսպապատերի որոշ հատվածներ, ինչպես նաև արևելյան լանջին կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին: Տարածքի նկատմամբ ամրոցն ունի իշխող դիրք և հայտնի է եղել իր անառիկությամբ, ինչի մասին վկայում են նաև գրավոր սկզբնաղբյուրները (Shahnazaryan, 2022, 33-42):

2020–2022թթ. բերդի տարբեր հատվածներում իրականացվել են հնագիտական պեղումներ (Aleksanyan & Badalyan, 2021, 113–127): Դրանց արդյունքում, ի շարս բազմաթիվ հայտնաբերումների, միջնաբերդում բացվել են ջրատար խողովակներ և ջրամբար: Խողովակաշարից հայտնաբերվել է մի հատված, որն անցնում է միջնաբերդի մուտքով և ամրության ու վնասվածքներից զերծ պահելու նպատակով պատվել է քարերով և կրաբետոնով: Կավե խողովակի սկզբնամասում բացվել է շրջանաձև փոքր ավազան, որը հետագա վերակառուցումների ժամանակ լցվել է կրաբետոնով: Ջրամբարը կառուցված է միջնաբերդի գագաթին: Այն իրենից ներկայացնում է ուղղաձիգ կտրված ժայռի հյուսիսային և արևմտյան մասում կառուցված պատերով մի շինություն, որի պատերը կառուցված են կանոնավոր, ներսից՝ կրասվաղ, դրսից՝ դարավանդաձև լայնացումով և գերանների կիրառմամբ՝ ջրի ճնշմանը դիմակայելու նպատակով: Հատակը ևս եղել է կրասվաղ, իսկ որոշ հատվածներում պահպանված կրաբեկորները ենթադրել են տալիս, որ ջրամբարը եղել է թաղածածկ (նկ. 3, 4):

Տեղագիր Մակար եպս. Բարխուդարյանցի փոխանցմամբ՝ ամրոցի ջուրը կավե խողովակներով հասցրել են մինչև ստորին բերդ, իսկ միջնաբերդ հասցրել են ամաններով. «Բերդումս չկայ ջուր, վասն որոյ խորագոյն ականով և խեցեղէն խողովակներով ջուր են բերած ի հնումն Կիլիկուան կոչուած առուակից մինչև ստորին բերդն, որից ամաններով փոխադրուած են վերնաբերդիս ջրաուզաններն» (Barkhutareants, 1895, 358): Ներկա փուլում դժվար է պնդել, որ մեր պեղումներով փաստագրված փողոակները եղել են ամրոցի միջնաբերդը սնուցող խողովակաշարի բաղկացուցիչ հատվածները: Հավանական է նաև, որ հայտնաբերված ջրագիծը լինի միջնաբերդում կառուցված ջրամբարից ստորին բերդ մղվող ջրատարի հատվածը: Ամեն դեպքում, սպառիչ պատասխանի համար անհրաժեշտ են լրացուցիչ հնագիտական ուսումնասիրություններ:

## Կածարեթ ամրոց

Ամրոցը գտնվում է Բերդի տարածաշրջանի Տավուշ գյուղի հարավային կողմում՝ երկարաձիգ բլրի ժայռոտ գագաթին: Բլրի ժայռե հիմքը ձգվում է գագաթի ամբողջ մակերեսով՝ արևելքից-արևմուտք ուղղությամբ: Մակայն ամրացված մասը բլրի միայն գագաթն է և զբաղեցնում է մոտ 400մ<sup>2</sup> տարածք: Հարավից և արևելքից այն պաշտպանված է ուղիղ կտրվող ժայռերով, հյուսիսային կողմից բլրալանջի թեքությունը այն դարձնում է դժվարահաս և մոտենալ հնարավոր է միայն արևմտյան կողմից:

Ամրոցի ուսումնասիրությանն առաջինն անդրադարձել է Մակար եպս. Բարխուդարյանցը՝ հուշարձանը ներկայացնելով իբրև դրյակ: Ըստ նրա՝ դրյակի արևելյան մասում կառուցվել է վիմափոր ջրամբար, որի ջուրը կավե խողովակներով բերել են ամրոցից արևմուտք գտնվող Ճգնավորի աղբյուրից. «Երբեմն - երբեմն ելնում են խողովակներիցս գերեզման փորելու ժամանակ, քանզի մօտ է սուրբ Գէորգ մատուռն և հանգստարանն» (Barkhutareants, 1895, 358):


Տեղում կատարած մեր ուսումնասիրությունների արդյունքները հիմնականում կրկնում են Մ. Բարխուդարյանցի նկարագրությունները: Վերոնշյալ ջրամբարը կառուցված է ժայռերի միջև առկա բնական ճեղքվածքի լայնացմամբ, որը հյուսիսային կողմից փակվել է պատով, իսկ ներսից՝ պատվել անջրաթափանց, հաստ կրաշերտով: Այժմ երևում է ջրամբարի բերանի միայն մի հատվածը, մնացած մասը լցված է հողով և առանց պեղումների դժվար է ճշգրիտ ներկայացնել կառույցի իրական չափերն ու շինարարական մանրամասները (նկ. 5, 6):

## Երգեվանք ամրոց


Հուշարձանը գտնվում է Այգեձոր գյուղի արևմտյան կողմում՝ բարձր լեռան արևելյան լանջին: Արևելյան կողմից շրջափակվել է պարսպով, մյուս կողմերից հավելյալ պաշտպանական կառուցվածքներ չկան և ապավինել են բնական անառիկությանը՝ արևմտյան կողմից անմատչելի ժայռեր, հյուսիսային և հարավային կողմերից՝ թեք լեռնալանջեր:

Բերդի տեղադրության և պահպանվածության մասին նկարագրել է Մ. Բարխուդարյանցը: Դրանցում մեզ զբաղեցնող խնդրի տեսանկյունից առավել արժեքավոր են տեղագրի պնդումները, որ Երգեվանքը ջրամատակարարում չի ունեցել, և ջուրը բերել են արևմտյան կողմի ձորի աղբյուրից (Barkhutareants, 1895, 357):

Երգեվանքի ուսումնասիրության նպատակով մեր արշավախմբի դաշտային հետազոտությունները հաստատում են հուշարձանի տեղի և դիրքի վե-




Նկ. 3. Տավուշ ամրոց: Միջնաբերդի ընդհանուր տեսքը հյուսիսից (Source: L. Mkrtchyan) և ջրամբարը (Source: T. Aleksanyan)



Նկ. 4. Ջրամբարի չափազրություն (չափագր.՝ Ա. Հախվերյանի) (Source: A. Hakhverdyan)



նկ.5. Կածարեթ բերդը: Միջնաբերդի ընդհանուր տեսքը հյուսիսից (Source: L. Mkrtchyan) և ջրամբարը (Source: T. Aleksanyan)



նկ.6. Միջնաբերդի պահպանված շինությունների և ջրամբարի սխեմատիկ չափագրություն (չափագր.՝ Ա. Հախվերդյանի) (Source: A. Hakhverdyan)

րաբերյալ մեզ հայտնի տեղեկությունները: Այժմ ամրոցից գրեթե ոչինչ չի պահպանվել: Տեղում կարելի է տեսնել միայն խոշոր քարերով կառուցված հենապատի մի հատված, իսկ դրանից ներքև՝ ջրամբարը: Ժայռի դիմացի տարածքը որոշակի հարթեցրել են, ապա պատել խոշոր ժայռաքեկորներով: Մյուս հատվածները չեն պահպանվել, սակայն կասկածից վեր է, որ դրանք լրացվել են քարե պատերով և կրաշաղախով (նկ.7, 8): Նախորդ դարի 30-ականներին ամրոցն ուսումնասիրել է Կ. Ղաֆադարյանը, ում փոխանցմամբ՝ հնավայրի տարածքում եղել է երկու ջրամբար (Ghafadaryan, 2007, 222): Դժբախտաբար, այսօր այն չի պահպանվել:


### Մածնաբերդ

Ընդունված տեսակետի համաձայն՝ Մածնաբերդը Ադրբեջանի Չովդատ գյուղից (Դաշքեսանի շրջան) հարավ-արևելք գտնվող Մլզնաբերդ ամրոցն էր: Նման կարծիքի համար հիմք են հանդիսացել Մ. Բարխուդարյանցի հաղորդումները, որոնցում հեղինակը Մլզնաբերդ ամրոցը նույնականացրել է Մածնաբերդի հետ և հուշարձանը ներկայացրել Մլզնաբերդ կամ Մածնաբերդ ձևով (Ghafadaryan, 2007, 222): Սակայն բերդի տեղորոշմանը նվիրված վերջին տարիների ուսումնասիրություններից պարզվում է, որ Մածնաբերդը նույնական է Այգե-



Ջրամբար

Նկ. 7. Երգեվանք բերդ: Ամրոցանիստ լեռան արևելյան լանջը և ջրամբարը



Նկ. 8. Ջրամբարի սխեմատիկ չափագրություն (չափագր.՝ Ա. Հախվերդյանի) (Source: A. Hakhverdyan)

ձոր գյուղից 6 կմ հարավ-արևմուտք՝ Ախնջի գետի աջափնյա ժայռի գագաթին կառուցված Աղջկաբերդի (Aleksanyan, 2024, 234-244) հետ: Ամրոցակիր ժայռը երեք կողմերից ողողում են գետի ջրերը, իսկ ժայռի ուղղաձիգ պատերն այն դարձնում են ամբողջովին անառիկ:

Հուշարձանի անդրանիկ հետազոտող Մ. Բարխուդարյանը այն ներկայացնում է որպես դղյակ: Ըստ նրա՝ գագաթի շուրջ տեղ-տեղ պահպանվել են քարուկիր պատերի հետքեր, ջրավազան, իսկ արևելյան ստորոտին՝ մի եկեղեցի և գերեզմանոց (Barkhutareants, 1895, 326-327; Yesayan, 1994, 168):


Հուշարձանի տարածքում հետազոտություն-

ներ է կատարել նաև մեր արշավախումբը: Դրանց ընթացքում միջնաբերդից ներքև՝ մուտքից աջ, փաստագրվել է ջրամբարը: Այն կառուցվել է նույն սկզբունքով, ինչպիսին առկա է նաև Երգեվանքում. երեք կողմից շրջափակված է ժայռով, իսկ դիմացի հատվածը փակվել է խոշոր քարերով (նկ. 9, 10): Հիշյալ ջրամբարների կառուցվածքում պատի դեր կատարելուց բացի, ժայռի հարթ մակերեսներն ունեն նաև ջրահավաք նշանակություն, որի մակերեսին թափվող անձրևաջրերը ձագարաձև հավաքվել և ուղղորդվել են ներքև:

### Քննարկում

Միջնադարյան ամրոցաշինության մեջ ջրամբարների կառուցումն ուներ առանձնակի կարևորություն: Դրանց անհրաժեշտությունը պայմանավորված էր ոչ միայն առօրյա կենսապահովման, այլև երկարատև պաշարման ժամանակ ջրի անհրաժեշտ պաշարներ ունենալու հանգամանքով: Այդ նպատակին էին ծառայում նաև գաղտնուղիները, որոնք թշնամու շրջափակման ժամանակ, արտաքին աշխարհի հետ կապ հաստատելուց զատ, օգտագործվել են ծածուկ կերպով ջուր բերելու համար: Կառուցվածքային տեսանկյունից՝ միջնադարյան ամրոցներում փաստագրված ջրամբարները երկու տեսակի են՝ փակ և բաց:

Առաջին տեսակի ջրահավաք կառույցներն առավել տարածված էին: Մեծ ամրոցներում դրանք ստորգետնյա են՝ իջեցված դեպի ժայռային հիմք, ունեն թաղակապ կամ կամարների վրա նստող հարթ սալերով ծածկ, իսկ պատերը ներսից պատված են անջրանցիկ կրաշաղախի հաստ շերտով: Նմանօրինակ ջրամբարներ հայտնի են Ամբերդից (Harutyunyan, 1978, 45-48), Բջնիից (Gharibyan & Hakobyan,



Միջնաբերդի շինություն




Ջրամբար

նկ.9. Մածնաբերդ: Միջնաբերդի ընդհանուր տեսքը վերևից (Source: L.Mkrtchyan) և պահպանված կառուցվածքները (Source: T.Aleksanyan)

an, 2005, 104), Դաշտադեմի ամրոցից (Babajanyan & Aghayan, 2022, 276), Իջևանի Աշոտ Երկաթ ամրոցից (Yesayan, 1992, 38), ինչպես նաև Արցախի մի շարք հուշարձաններից (Mkrtchyan, 1988, 95, 129): Մեր կողմից քննարկվող հուշարձաններում այս տիպին են պատկանում Նոր-բերդ, Կածարեթ և Տավուշ ամրոցներում փաստագրված ջրամբարները:

Երկրորդ տեսակի ջրամբարները համեմատաբար քիչ են: Նման ջրավազաններ հայտնի են Ախթալայից (Khalpakhchyan, 1972, 148), Ամբերդից (Harutyunyan, 1978, 46-48), Իջևանի շրջանի Աղջկաբերդ ամրոցից (Yesayan, 1992, 33-35), Արցախից (Mkrtchyan, 1988, 25): Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցներում նման կառուցվածքով ջրամբարներ առկա են Երգեվանք և Մածնաբերդ ամրոցներում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ամրոցների ջրամբարներին ջուրը հասնում էր երկու եղանակով՝ կավե խողովակաշարով և անձրևաջրերի կուտակումով: Մեր ունեցած տվյալներից կարելի է ենթադրել, որ ջրահավաքման առաջին տեսա-



նկ.10. Միջնաբերդի պահպանված շինության և ջրամբարի սխեմատիկ չափագրություն (չափագր.՝ Ա. Հախվերդյանի) (Source: A.Hakhverdyan)

կը կիրառելի էր հատկապես փակ ջրամբարների համար, որում ամբարված ջուրը երկար ժամանակ չէր փչանում և պիտանի էր խմելու համար: Հավանաբար մյուս տեսակի ջրամբարներն օգտագործվել են հիմնականում պաշարման ժամանակ: Նման

տեսակետի համար մեզ հիմք են տալիս Երզնկանք և Մաժնաբերդ ամրոցների նախնական հետազոտությունների արդյունքները: Հաշվի առնելով բարդ տեղանքը և ամրոցների տեղակայման բարձր դիրքը՝ դրանց համար ջրատար խողովակ անցկացնելն անհնար էր: Ջրային հիմնական պաշարը ձևավորվել է մթնոլորտային տեղումներից (Changlyan, 2011, 26-27; Khalpakhchyan, 1972, 148): Ամենայն հավանականությամբ, բացօթյա ջրամբարներում կուտակված ջուրը նեխելուց զերծ պահելու նպատակով ջրամբարի պատի վրա արվել է ջրահեռացման անցք (слив), որի միջոցով ավելացած ջուրը դուրս է եկել: Դրա շնորհիվ ջրամբար լցվող անձրևաջրերն անընդհատ թարմացրել են ջրի առկա պաշարները: Ամրոցներում տեղակայված փոքրաթիվ զինվորականների առօրյա կարիքների համար ջուրը բերել են ձեռքով կամ, որ ամենահավանականն է, գրաստներով (Mkrtchyan, 1988, 25): Մեծ ծավալով ջրի կարիք զգացվում էր հատկապես պաշարումների ժամանակ, երբ հիշյալ բերդերում էր պատսպարվում նաև շրջակա գյուղերի բնակչությունը (Harutyunyan, 1978, 46-48):

Ամփոփելով նյութը՝ նշենք, որ ուսումնասիրվող տարածաշրջանի միջնադարյան ամրոցներում պահպանված ջրահավաք կառույցների վերաբերյալ բավարար հնագիտական ուսումնասիրություններ չեն արվել: Խնդրի վերաբերյալ համակողմանի դատողություններ անելու նպատակով անհրաժեշտ են դրանց կառուցվածքային մանրամասների, ծավալների, թվագրության և մի շարք հարակից հարցերին վերաբերող ստույգ տվյալներ, որոնք հնարավոր են հիշյալ հուշարձանների պեղումներով:

## Նշումներ և շնորհակալություններ

Հետազոտությունը կատարվել է ԱՄՆ Հայագիտական հետազոտությունների ազգային ասոցիացիայի (NAASR) ֆինանսավորմամբ իրականացված «Բերդի տարածաշրջանի միջնադարյան ամրոցները» ծրագրի շրջանակներում:

## Acknowledgements

The work was done in frame of research project “The medieval fortresses of Berd region”, sponsored by The National Association for Armenian Studies and Research.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱԿ REFERENCES

- Aleksanyan, T. A., & Badalyan, H. N. (2021). Previous and current researches of the Tavush fortress. *Armenological Issues*, 2 (23), 113-127 (in Armenian).
- Aleksanyan, T. A., (2024). Observations on the issue of the Matznaberd fortress localization. *Historical-Philological journal*, 1, 234-244 (in Armenian).
- Babajanyan, A. A., & Aghayan, S. H. (2022). The architecture of the medieval castle of Dashtadem. *Herald of Social Sciences*, 2, 268-286 (in Armenian).
- Barkhutareants, M., Bishop. (1895). *Artsakh. Aror* (in Armenian).
- Changlyan, I.A. (2011). *Shamshadin. Historical information. Egea* (in Armenian).
- Garibyan, I. G., & Hakobyan, H.P. (2005). *Bjni Ancient site (preliminary results of Bjni 2003-2004 excavations)*. Hushardzan, 3, 103-118 (in Armenian).
- Ghafadaryan, K. G. (2007). *Archaeological expedition of Shamshadin in 1935. Pages of Armenian medieval culture and history*, 231-307 (in Armenian).
- Hakobyan, T. Kh. (2007). *Historical geography of Armenia. YSU* (in Armenian).
- Harutyunyan, S. V. (1978). *Amberd. Academy of Sciences of Armenian SSR* (in Armenian).
- Khalpakhchyan, O. Kh. (1972). Compositional Features of the Planning of Defensive Structures in Armenia. *Architectural Heritage*, 19, 146-166 (in Russian).
- Matevosyan, R. I. (1982). *Tashir-Dzoraget. Academy of Sciences of Armenian SSR* (in Armenian).
- Mkrtchyan, Sh. M. (1988). *Historical and Architectural Monuments of Nagorno Karabakh. Hayastan* (in Russian).
- Qartashyan, H.S. (1993). *Getakitsk monastery. Hushardzan*, 2, 104-110 (in Armenian).
- Shahnazaryan A. I. (2022). Tavush Fortress. *Armenological Issues*, 1, 33-42 (in Armenian).
- Yesayan, H. S. (1994). Excavations of Taush and Aygedzor fortresses and the issue of glazed tiles. *Herald of Yerevan state University*, 1, 164-171 (in Armenian).
- Yesayan, G.S. (1992). Material culture of the Agstev River basin in the Developed Middle age. YSU (in Russian).

1 Նման տեսակետ է հայտնում նաև Արցախի հուշարձանների երախտավոր Շահեն Մկրտչյանը:

2 Հնագետ Ս. Հարությունյանի դիտարկմամբ՝ բացօթյա ջրամբարներում կուտակված ջուրն օգտագործվել է կենդանիների համար, քանզի բաց ավազաններում ջուրը շուտ էր փչանում: Նման տեսակետի համար առավելապես հիմք է հանդիսացել նրա ղեկավարությամբ Ամբերդում փաստագրված բացօթյա, խոշորածավալ ջրամբարը:



# PRELIMINARY OBSERVATIONS ON THE WATER SUPPLY OF DVIN

*Hamlet Petrosyan<sup>1,2</sup>, Ruben Hovsepyan<sup>1,3</sup>, Hamazasp Abrahamyan<sup>1,4</sup>*

1. Institute of Archeology and Ethnography, NAS, Armenia

2. Yerevan State University

3. Armenian-Russian Slavic University

4. Museum of History of Armenia

## Abstract

One of the primary problems in the research of Dvin was and remains the water supply of the city: irrigation, economic and defense, as well as domestic and drinking water supply systems.

By combining written sources, archaeological data, aerial photos, satellite photos and field work related to the water supply of Dvin, an attempt was made in the article to clarify the main directions of the waterways going from Azat River to Dvin, to present the technical characteristics of the water networks found inside the city.

According to historical sources, orchards were located around the city and not far from it. We consider the evidence of rice and cotton cultivation to be important. Almost all authors attest to the river flowing near the walls of the city of Dvin and the water sources of the city. In some parts of the city walls and the citadel of Dvin, traces of the surrounding water ditch, which was once filled with the waters of the Azat River, are clearly visible. Parts of that system continue to be used for different purposes and to various degrees.

As a result of the excavations carried out in Dvin in 2022–2023, the sediment of the water supply ditch, which is 12m wide and up to 60 cm thick, was also excavated and examined. According to stratigraphy, the archaeological layer can be dated to the 9th century.

The network of water pipes in the city is distributed over an area of about 120 hectares. Many distributors, filters, elbows and other structures and artifacts related to water supply systems were also found during the archaeological excavations.

**Keywords:** water supply, Dvin, irrigation, moat, pipeline, river Azat.

# ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՎԻՆԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

*Համլետ Պետրոսյան<sup>1,2</sup>, Ռուբեն Հովսեփյան<sup>1,3</sup>, Համազասպ Աբրահամյան<sup>1,4</sup>*

1. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

2. Երևանի պետական համալսարան

3. Հայ-ռուսական սլավոնական համալսարան

4. Հայաստանի պատմության թանգարան

## Ամփոփագիր

Դվինի հետազոտության առաջնային խնդիրներից մեկը եղել և մնում է քաղաքի ջրամատակարարումը, որոգման, տնտեսական և պաշտպանական, կենցաղային և խմելու ջրի մատակարարման համակարգեր:

Հողվածում Դվինի ջրամատակարարման առնչվող գրավոր սկզբնաղբյուրների, հնագիտական տվյալների, օդալուսանկարների, արբանյակային լուսանկարների և դաշտային աշխատանքների համադրմամբ փորձ է կատարվել հստակեցնել Ազատ գետից դեպի Դվին գնացող ջրային ուղիների հիմնական ուղղությունները, ներկայացնել քաղաքի ներսում հայտնաբերված ջրային ցանցերի տեխնիկական բնութագիրը:

Ըստ պատմական սկզբնաղբյուրների՝ քաղաքի շուրջը և դրանից ոչ հեռու գտնվում էին մրգատու ծառատանները և ցանքատարածությունները: Կարևոր ենք համարում բրնձի և բամբակի մշակման մասին վկայությունը: Գրեթե բոլոր հեղինակները վկայում են Դվին քաղաքի պարիսպների մոտ հոսող գետի և քաղաքի ջրի աղբյուրների մասին: Դվինի քաղաքային պարիսպների և միջնաբերդի որոշ հատվածներում լավ տեսանելի են դրանք շրջապատող ջրի խրամատի հետքերը, որոնք ժամանակին լցվել են Ազատ գետի ջրերով: Այդ համակարգի հատվածները տարբեր չափերով և նշանակությամբ շարունակում են գործածվել: Դվինում 2022–2023 թթ. իրականացված հնագիտական աշխատանքների արդյունքում պեղվել և հետազոտվել է նաև ջրամատակարարման խրամատի նստվածք, որն ունի 12 մ լայնություն և մինչև 60 սմ հաստություն: Նախորդ շերտի իրավիճակը թույլ է տալիս խրամատի նստվածքը թվագրել սկսած 9-րդ դարից:

Քաղաքի ջրատար խողովակների ցանցը բաշխված է մոտ 120 հա տարածքում: Հնագիտական պեղումներով հայտնաբերվել են նաև բազմաթիվ բաշխիչներ, գոփիչներ, անկյունակներ և ջրամատակարարման համակարգերի հետ կապված այլ կառույցներ ու արտեֆակտներ:

**Հիմնաբառեր.** ջրամատակարարում, Դվին, ոռոգում, խանդակ, խողովակաշար, Ազատ գետ:

### Ներածություն

Դվինի հնագիտական հետազոտությունների առաջին տարիներից կարևորվել է քաղաքի ջրամատակարարման խնդիրներին առնչվող մի շարք հարցեր, այն է՝ ոռոգման, խմելու ջրի սկզբնաղբյուրների դիտարկումը, քաղաք հասնելու ուղիները, քաղաքի տարբեր թաղամասերի՝ խմելու ջրով ապահովումը, տեղ հասցնելու միջոցները, Դվինի պաշտպանական խանդակների, դրանց ուղեգծերի ուսումնասիրությունը, ջուրը միջնաբերդ հասցնելու խնդիրը և այլն:

Սույն հոդվածի նպատակն է համառոտ կերպով անփոփել Դվինի ոռոգման, ջրամատակարարման մասին եղած տեղեկույթը, համադրել դրանք Դվինի ջրային խնդիրներին առնչվող պատմական սկզբնաղբյուրների հետ, ինչպես նաև օդալուսանկարների, արբանյակային լուսանկարների, առկա հնագիտական տվյալների և տեղում կատարված դաշտային աշխատանքների համադրմամբ ավելի հստակեցնել Ազատ գետից դեպի Դվին գնացող ջրային համակարգի հիմնական ուղղությունները: Խնդիր ունենք նաև տիպաբանել ջրամատակարարման համակարգերի տեսակները և քննել դրանց առանձին բաղադրիչները:

Դվին քաղաքի երկարատև հնագիտական հետազոտության ընթացքում դիտարկվել են Դվինի


քաղաքաշինության, ճարտարապետության, կառուցապատման սկզբունքներին առնչվող բազմաթիվ հարցեր: Այս հարցերից են նաև քաղաքի ոռոգման, ջրամատակարարման խնդիրները: Այժմ արբանյակային լուսանկարներն ու օդալուսանկարները, նախկինում և ներկայումս իրականացվող հնագիտական պեղումները, պատմական սկզբնաղբյուրներն ու համեմատական քննությունը՝ նոր հնարավորություն են ստեղծում Դվինի ջրամատակարարման համակարգերի հետազոտության համար:

Առաջին խողովակաշարերը քաղաքի տարածքում հայտնաբերվել են դեռևս Ն. Մառի պեղումների ժամանակ (Ghafadaryan, 1952, 37): Հետագայում քաղաքի տարածքում պարբերաբար կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են բազմաթիվ խողովակաշարեր, բաշխիչներ, գոփիչներ, անկյունակներ և ջրամատակարարման համակարգերի հետ կապված այլ կառույցներ ու արտեֆակտներ:

### Ջրամատակարարման տեխնիկական խնդիրները

Առկա տվյալներով՝ Դվինի ջրամատակարարման համակարգերն ընդհանուր առմամբ բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ոռոգման բաց ջրանցքներ և խմելու ջրի խողովակաշարեր:

Ոռոգման և ջրամատակարարման համակար-



Նկ. 1. Դվինի ջրամատակարարման բաց ջրանցքների հավանական ուղղությունները, արբանյակային լուսանկար (Source: Google Earth)



Նկ. 2. Դվինի ջրամատակարարման բաց ջրանցքի պահպանված հատված, արքայակային լուսանկար (Source: Google Earth)

գերն օգտագործել են Ազատ գետից բաց ջրանցքներով հանված ջրերը: Այս խրամատների վերաբերյալ առաջին հանգամանակից քննությունն իրականացրել է Կ. Ղաֆադարյանը, ով ներկայացրել է խրամատների հավանական ուղղությունները, իրականացրել է որոշ չափումներ և այլն (Ghafadaryan, 1952, 28–30):

Արշավախմբի դաշտային հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Ազատ գետից ջրառն իրականացվել է քաղաքից ամենամոտը 5,5 կմ հեռավորությունից, որպեսզի հնարավոր լիներ ջուրը ինքնահոս հասցնել մինչև Դվին: Ջրառի այս հավանական հատվածը հիմա էլ օգտագործվում է Արտաշատյան ջրանցքի ջրառի համար: Ջրանցքի բաց հոսքը դեպի Դվին, ըստ պահպանված հատվածների, պատմական աղբյուրների և տարածքի ոռոգման տրամաբանության, իրականացվել է մի քանի առուններով (նկ. 1): Հյուսիսային և հյուսիսարևելյան կողմից հասնելով քաղաք՝ ջրանցքները, հավանաբար, լցվել են ընդհանուր ջրամբար, ապա դուրս գալով՝ եզերել են պարսպաշարերը հյուսիսարևելյան և արևմտյան կողմերից, Միջնաբերդի հարավում միացել են իրար և ընդհանուր հունով շարունակել են հոսել Կենտրոնական թաղամասի հարավային կողմով: Ուղղություններից մեկը, հավանաբար, հոսել է քաղաքային պարիսպների արտաքին կողմից: Ընդհանուր առմամբ դժվար է տարբերակել այս ջրանցքների ոռոգման և պաշտպանական նշանակությունները:


Դվինի ոռոգման համակարգի որոշ հատվածներ, որոնք հիմա նկատելի են հնավայրից հյուսիս և

արևելք, գործել են մինչև մ. թ. 20-րդ դ. 30-ական թթ. (նկ. 2): Այս մասին են վկայում դաշտային աշխատանքների արդյունքում հայտնաբերված ջրամատակարարման անօգտագործելի կամ վերանորոգված և օգտագործվող հատվածները, որոնց ուղղությունը համապատասխանում է Ազատ գետի հունից դեպի Դվին ուղղությանը: Ուշագրավ է, որ Գետազատ գյուղի տարածքում ոռոգման համակարգի նման մի հատված տեղացիներն անվանում են Դուգյունա Առու, իսկ Դուգյունը Դվինի հնավայրի տեղական անվանումներից է (Ghafadaryan, 1952, 28–30):


Ջրամատակարարման համակարգի 19–20-րդ դարերում մասամբ կիրառության մասին է վկայում նաև 1828–30-ական թթ. պարսկահայերի ներգաղթը, ովքեր բնակավայրեր հիմնեցին նաև Ազատ գետի ձախափնյա հատվածներում՝ հիմնական հունից որոշակի հեռավորության վրա՝ Դվին հնավայրի շրջակայքում: Եթե մասամբ չգործեր Դվինի ջրամատակարարման համակարգը, ապա այս հատվածներում անհնար կլիներ հիմնել բնակավայրեր՝ առանց ջրի բավարար քանակի:

Ընդհանուր առմամբ, Դվինի ոռոգման բաց ջրանցքների խնդիրն ունի նոր հետազոտությունների և հնագիտական պեղումների կարիք: Այս առիթով կարևոր էին 2022–2023 թթ. պեղումները, որոնց արդյունքներին կանդրադառնանք համապատասխան բաժնում:

Դվինի ջրամատակարարման համակարգի մյուս կարևոր բաղադրիչը խողովակաշարերով խմելու ջրի մատակարարումն ու բաշխումն է: Քա-



Նկ. 3. Ջրամատակարարման խողովակների տեսակներ, չափագրությունը՝ Գ. Քոչոյանի, ՀՊԹ՝ 213 (Source: G. Qochoyan)



Նկ. 4. Ջրիչ-պարզարան, չափագրությունը՝ Ա. Լոբոյանի (Source: A. Yrkoyan)

տանքներին նվիրված գրեթե բոլոր աշխատություններում: Այս խողովակաշարերը տարածված են քաղաքի գրեթե բոլոր հատվածներում, իսկ քաղաքից դուրս խողովակաշար հայտնաբերվել է Վերին Դվին գյուղից հյուսիս (Ghafadaryan, 1982, 81): Ընդհանուր առմամբ ջրատար խողովակների այս ցանցը բաշխված է եղել մոտ 120 հա տարածքում:

Նշենք, որ միջնադարյան Հայաստանում ջրատարներն աշխատում էին ճնշմամբ և անճնշում: Դվին քաղաքի երկարատև ուսումնասիրությունների ժամանակ գտնվել են երկու եղանակով էլ աշխատող ջրատարներ: Այսպես, Դվինի անճնշում ջրատարները կառուցված էին հետևյալ կերպ. փորվել է ոռոգման ցանցի ուղեգիծը, այդտեղ խիճ լցվել, խճապատվել, որի վրա էլ խողովակաշար է անցկացվել: Այս ամենը վերցվել է քարե սալերի մեջ, որոնք իրենց վրա են վերցրել արտաքին ճնշումը (Yepremyan, 1992, 41–42):

Դվինում տարբեր տարիների պեղումներով հայտնաբերված խողովակների տրամագիծը հիմնականում 120, 160, 180 սմ է: Տարբեր տրամագծեր ունեցող խողովակների գոյությունը ցույց է տալիս, որ զանազան ուղղություններով տարբեր քանակի ջուր է հոսել (նկ. 3): Ջրի գտման համար կիրառվել են պարզարան ծառայող կարասները: Ջրամատակարարման մեջ որպես պարզարան ծառայող մի կարաս գտնվել է 1958 թ. Վերին Դվին գյուղից հյուսիս-արևմուտք ընկած տարածքում: Պարզարանը կարմրախեցի մի փոքրիկ կարաս է՝ 50 սմ բարձրությամբ, վերին մասին երկու հակադիր կողմերում կավե խողովակներ հագցնելու ելուստավոր անցքերով (նկ. 4): Պեղումների ժամանակ գտնվել է նաև

ղաքի տարածքում տարբեր տարիների կատարված հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել են ավելի քան երեք տասնյակ խողովակաշարեր և հատվածներ, որոնց մասին առանձին անդրադարձներ կան Դվինի հնագիտական աշխատություններում:



Նկ. 5. 2022-2023 թթ պեղումների արդյունքում բացված բաց ջրանցքի նստվածքի շերտը

ջրատարի եռաբաշխիչ քար (Ghafadaryan, 1982, 81): Ջտարան կարանները օգտագործել են անճշում խողովակաշարերի պարագայում:

Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ քաղաքի կենտրոնական թաղամասում 1968 թ. բացվել է կոյուղու գիծ, որի միջով կեղտաջուրը հոսել է թաղի սահմաններից դուրս: Կոյուղու համար փորված առվի երկու եզրերին քարեր են շարել, տափակ քարերով ծածկել, վրան հող լցրել, հավասարեցրել և աննկատ դարձրել (Ghafadaryan, 1982, 79): Դվինի պեղումների ժամանակ գտնվել են քարե աղբյուրների հետքեր:

Բացի նշված խողովակաշարերը՝ հնագիտական պեղումներով հայտնաբերվել են նաև բազմաթիվ բաշխիչներ, գոհիչ-պարզարան, անկյունակներ և ջրամատակարարման համակարգերի հետ կապված այլ առարկաներ:

Պետք է նշել նաև, որ խողովակաշարերը չեն գործել միաժամանակ, այլ հաճախ առաջին խողովակաշարը վնասվելուց հետո զուգահեռ անցկացրել են երկրորդը: Այս խողովակաշարերը հիմնականում թվագրվում են ըստ պեղավայրի շերտագրության և վերաբերում են հիմնականում 5–9-րդ և 9–13-րդ դարերին:

Խնդրահարույց է մնում խմելու ջրի մատակարարման տեղի հարցը: Տեսակետներից մեկի համաձայն՝ քաղաքի ջրամատակարարման խողովակները ջուրը մատակարարել են քաղաքից 13 կմ հեռավորությամբ Գառնու աղբյուրներից: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ քաղաք ջուր էր մատակարարվում

նաև Երանոսի լեռների հարավարևմտյան աղբյուրներից: Քննարկվող թեմայի հետ է առնչվում Դվինի միջնաբերդից արևելք ընկած աղբյուրը, որի ծագման կամ նշանակության հետ կապված խնդիրները կարիք ունեն հետազոտության:

Դեպի քաղաք գնացող ջրամատակարարման խողովակաշարերի առկայության մասին է վկայում նաև տարածաշրջանի բնակավայրերում տարածված լեգենդը, ըստ որի՝ Տիկնունի և/կամ Իլկասար ամրոցից կաթ կամ ջուր են մատակարարել Դվին: Կարծում ենք, որ այս լեգենդի համար հիմք են ծառայել պատահականորեն հայտնաբերված ջրամատակարարման խողովակաշարերի մնացորդները:

### Պատմական աղբյուրներ

Դվին քաղաքի մասին զգալի տեղեկություններ են պարունակում հայկական և օտար պատմական սկզբնաղբյուրները: Դրանցում քաղաքն առավելապես հիշատակվում է ժամանակի ռազմաքաղաքական իրադարձությունների համատեքստում, սակայն անգամ այդպիսի բնույթ կրող տեղեկություններում կարող ենք հանդիպել Դվին քաղաքի ջրային աղբյուրների (ռոռզման համակարգ, առուներ, գետեր, պաշտպանական խանդակներ) մասին վկայությունների:

Դվինի ռոռզման, ջրային համակարգերի ուսումնասիրության տեսանկյունից հատկապես կարևոր են Փավստոս Բուզանդի մանրամասն հիշատակումները Խոսրով Կոտակ արքայի կողմից հիմնադրված անտառների մասին. «Եւ ետ հրաման

թագաւորն զարավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, եւ բերել զվայրենի կաղին մայրեաց, եւ տնկել զայն յԱյրարատեան գաւառին. եւ առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչեւ ի դաշտն Մեծամարի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարի մինչեւ յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղինն: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: Եւ միւս ի մայրեացն յեղէգնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն տնկով եւ կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ: Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, եւ զերկոսեան տեղինս պարսպեալ փակեցին. եւ ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին» (Buzand, 2003, 285): Նման աշխատանքները պահանջում էին նաև համապատասխան ջրային ռեսուրսների առկայություն, առանց որոնց շոգ ու չոր կլիմայական պայմաններ ունեցող Արարատյան դաշտում ծառը, անգամ շոգ կլիմայական պայմաններին դիմացող կաղնին, չէր աճի: Թեև Բուզանդը չի խոսում հատուկ այս նպատակով կառուցված ոռոգման համակարգերի մասին, սակայն նշում է, որ անտառները տնկվել են գետի երկայնքով, եղեգնուտի եզերքով, ինչը ենթադրել է տալիս, որ նորատունկ անտառները տնկվել են ջրային ռեսուրսներին մոտ՝ դրանց խնամքը հեշտացնելու համար: Մովսես Խորենացին, ով ավելի հակիրճ է խոսում Խոսրով արքայի անտառների մասին, հիշատակում է, որ դրանք տնկվել են Ազատ գետի մոտ (Khorenatsi, 1981, 248):

Ղևոնդ պատմիչը կարևոր տեղեկություններ է հաղորդում Դվինի պարիսպների շուրջ փորված պաշտպանական խանդակի մասին: Նկարագրելով Դվինի կառավարիչ, արաբ ոստիկան Աբդ-Ազիզի շինարարական գործունեությունը Դվինում՝ նա նշում է. «... վերստին շինեց Դվին քաղաքը մեծությամբ առավել հզոր և ընդարձականիստ, քան եղել էր նախկինում, ամրացրեց դռներով և դռնափակերով, պարսպի շուրջը ջրով լցված խրամատ անցկացրեց քաղաքի ապահովության համար» (Ghevond, 1982, 41): Կարելի է ենթադրել, որ արաբ ոստիկանը վերանորոգել, ամրացրել է քաղաքի պարիսպները և խրամները: Քիչ է հավանական, որ Դվինի պետ մեծ ու ամուր քաղաքը նախքան այդ չունենար խրամներ, ինչքան էլ դրանք չհիշատակվեին այլ պատմիչների կողմից:

Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչը, նկարագրելով Սյունյաց Վասակ իշխանի փախուստը Դվինից, հիշատակում է քաղաքի պարիսպների մոտ գտնվող այգիների ճանապարհը (Draskhanakertsi, 1996, 229): Այս վկայությունը կարևոր է նրանով, որ անմիջապես պարիսպների մոտ գտնվող այգիները պետք է նաև ոռոգվեին:

Դվին քաղաքի ջրային աղբյուրների մասին ընդհանրական տեղեկություններ է հաղորդում 6-րդ դարի բյուզանդացի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին. «Դուրբիտը շատ բերքատու երկիր է, ունի բավական լավ օդ և ջուր: Դաշտերն այստեղ լայնատարած են՝ ձիավարության համար մատչելի» (Kesaratsi, 1967, 142) :

Դվին քաղաքի ջրային համակարգի մասին կարևոր են 10-րդ դարի հեղինակներ Իբն Հաուկալի և Ալ Իսթախրիի հաղորդած տեղեկությունները: Այսպես, Իբն Հաուկալն իր «Երկրի պատկերը» աշխատության մեջ նկարագրելով Դվինը՝ նշում է. «Իսկ Դուինը մի մեծ քաղաք է՝ հարուստ բարիքներով, պարտեզներով, մրգատու ծառերով, ցանքատարածություններով: Նրանում կան ջրի աղբյուրներ և հոսող ջրեր: Հիմնականում ցանում են բրինձ և բամբակ: Դուինից արտահանում են այծի նուրբ բրդից և բամբակից գործվածքներ: Նրանում կան ջրի աղբյուրներ և հոսող ջրեր» (Ter-Ghevondyan, 2005, 626, 630): Բացի ջրի աղբյուրների մասին վկայությունից, կարևորում ենք բամբակի և բրնձի հիշատակումը, քանի որ սրանց մշակումը առատ ջուր է պահանջում: Իսթախրին «Գիրք թագավորությունների ճանապարհների մասին» գրքում խոսում է Դվին քաղաքի արվարձանների, քաղաքի մերձակա հողերի մասին. «Դվինը կարևոր քաղաք է, ունի անառիկ բերդ: Նրանում շատ են բարիքները, անուրը հոչակված է, բուրդը նշանավոր է, գետը հորդառատ: Սակայն այժմ նրա պարտեզները չորացել են: Ունի հինավուրց արվարձան և ամրակոտ բերդ: Նրա շուկաները խաչաձև են և նրա գյուղական մերձակա հողերը հրաշալի» (Ter-Ghevondyan, 2005, 653):

9-րդ դարի արաբ մատենագիր Յակուբին Արաբս գետն անվանում է Դվնա գետ (Ghafadaryan, 1952, 12): 13-րդ դարի պատմիչ Իբն ալ-Ասիրի մոտ Դվին քաղաքի մոտ հոսող գետը հիշատակվում է որպես Դաբիլի գետ (Dwin is referred to as Dabil in Arabic sources): Պատմիչը, նկարագրելով քաղաքի գրավումը արաբների կողմից, նշում է. «...նա (Հաբիբ իբն Մապաման) իջավ Դաբիլի գետի առջև և իր ձիավորներին ուղարկեց ու պաշարեցին քաղաքը...» (Arabic Sources, Ibn Al-Asir, 1981, 55):

Մերեոս, Ղևոնդ, Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչների վկայությունները քաղաքի մոտ գտնվող այգիների մասին ուշագրավ մանրամասներով լրացնում է 11-րդ դարի բյուզանդացի պատմիչ Հովհաննես Սկիլիցեսը՝ տալով 1046 թ. բյուզանդական զորքերի՝ դեպի Դվին արշավանքի և քաղաքի պաշարման մանրամասն նկարագրությունը: Այս արշավանքին մասնակցում էր նաև հայկական զորքը՝ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ. «Գիտակցելով, որ ինքն (Դվինի ամիրա

Արուստարը) ի վիճակի չէ ընդդիմակայելու հոռու մեացիաների միացյալ ուժերին, փակվեց քաղաքի պարիսպների ետևում, մոտիկից հոսող գետի հունը փոխեց, ողողեց համայն դաշտը և այն տիղմի վերածելով (այն կավային էր ու ճահճոտ)՝ սպասեց հակառակորդների գալստյան: Նա հետևակ նետաձիգներին ցրեց քաղաքի շուրջն ընկած այգիներում...: Երբ նրանք (բյուզանդացիները) գտնվում էին այգիների մեջ ընկած շավիղներում և ընդհուպ մոտեցել էին քաղաքին, Ապլեսֆարեսը հնչեցրեց շեփորը և հրամայեց գործի անցնել» (Bartikyan, 1967, 148): Սկիլիցեսի վկայությունից երևում է, որ այգիների մեջ ծուղակն ընկած բյուզանդացիներին խցում էին նաև պարիսպների վրայից. «...քանզի ուրիշներն էլ խցում էին իրենց պարսպի ատամնաշարի վրայից» (Bartikyan, 1967, 148):

### 2022–2023 թթ. պեղումների հնագիտական արդյունքները

Դվինի ոռոգման և ջրամատակարարման համակարգերի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր են նաև հնագիտական արշավախմբի 2022–2023 թթ. իրականացրած պեղումները:

2022 թ. քաղաքի միջնաբերդից հարավ՝ Հնաբերդ-Վերին Արտաշատ միջհամայնքային ճանապարհի աջակողմյան հատվածում իրականացվել են հնագիտական հետախուզական պեղումներ: Պեղման աշխատանքները կատարվել են հնավայրում նոր թանգարանի և այլ ենթակառուցվածքների կառուցմանն ընդառաջ, տարածքի ստուգման համար: Ըստ վերգետնյա իրավիճակի նախնական դիտարկման՝ այս տարածքով պետք է անցնեն քաղաքի միջնաբերդը ողողող խանդակից դուրս եկող հիմնական խրամատը և, հետևաբար, կար հնագիտական իրավիճակների առկայության քիչ հավանականություն:

Տարածքում առանձնացվել է 10 մ երկարությամբ, 2 մ լայնությամբ հետախուզական խրամատը: Պեղվել է մինչև 2,20 սմ խորությամբ: 2023 թ. գարնանը շարունակվել են հնագիտական աշխատանքները: Պեղվել են երկու հատվածներ, որնցից հիմնականն ունի 15 x 15 մ չափերի համադրություն և իր մեջ է ընդգրկում 2022 թ. նոյեմբերի խրամատը (արևմտյան հատված): Պեղավայրն ունի մինչև 250 սմ խորություն:

Պեղումների արդյունքում բացվել են երեք հնագիտական շերտեր: Առաջին (վերին) շերտը խառնված վիճակում է, և այստեղ չկան հնագիտական իրավիճակներ:

Քննվող թեմայի շրջանակներում կարևոր է պեղավայրի երկրորդ շերտը: Այս շերտը գտնվում է պեղավայրի հարավային կողմում և ունի 4,4 –10 մ

լայնություն: Շերտն ունի սև գույն, հազեցած է մեծ քանակությամբ խիճով և ավազով (նկ.5): Առկա է մեծ քանակությամբ տարբեր թվագրությամբ խեցեղեն, որի մեջ մեծամասնություն է կազմում

9-րդ դարով թվագրվող ջնարակապատ և հասարակ խեցեղենը: Հայտնաբերվել են նաև ապակու բեկորներ, կենդանական ոսկորներ: Խեցեղենի և ոսկորների մեծ մասը այրված են:

Այսպիսով, պեղավայրի տարածքում հետազոտվել է նաև միջնաբերդը ողողող խանդակից դուրս եկող հիմնական խրամատի նստվածքը, որն ունի 12,5 մ լայնություն: Այս նստվածքի հաստությունը եզրային հատվածներում աստիճանաբար բարակում է և ավարտվում, իսկ կենտրոնական հատվածում շերտն ունի մինչև 60 սմ հաստություն: Դվինի պաշտպանական-ռոտզման խանդակների թվագրման համար կարևոր է պեղված հաջորդ հնագիտական շերտը:

Պաշտպանական-ռոտզման խանդակի նստվածքին հաջորդող շերտը պեղավայրի հիմնական շերտն է: Այն հազեցած է բազմաթիվ հնագիտական իրավիճակներով: Շերտի տարբեր հատվածներում, տարբեր խորությունների վրա հայտնաբերվել են կրաշաղախով և չոր շարվածքով, գետաքարե և աղյուսաշար պատերի հատվածեր, թոնիր, կարաններ, օջախ և այլն: Կան նաև մեծ քանակությամբ հողաշեն հատվածներ: Առկա են նաև տոփանված կավով, աղյուսաշար և սալարկված հատակների մնացորդներ: Շերտում առկա է գրեթե ամբողջացող և բեկորային մեծ քանակությամբ ջնարակապատ և հասարակ խեցեղեն: Ջնարակապատ խեցեղենը թվագրվում է 9-րդ դարով և այս շերտում, քանակական տեսանկյունից, խորացմանը գուցաևեռ աստիճանաբար նվազում է: Շերտում առկա են նաև մեծ քանակությամբ ապակու, երկաթե բեկորներ, դրամներ, ոսկորներ, վաղմիջնադարյան թևավոր խաչի վերին թև և այլն:

Քննությունը ցույց է տալիս, որ պեղվել է Դվինի 8–9-րդ դարերով թվագրվող խիտ բնակեցված թաղամասերից մեկը, որն անմիջապես Կենտրոնական թաղամասի հարավարևելյան կողմում է: Իսկ պաշտպանական-ռոտզման խանդակի նստվածքը գտնվում է 8–9-րդ դարերով թվագրվող շերտի վրա: Այսպիսով կարող ենք փաստել, որ Դվինի պաշտպանական-ռոտզման խանդակների այս հատվածը կառուցվել կամ վերանորոգվել է 9-րդ դարից հետո:

### Եզրակացություններ

Այսպիսով, Դվինի ոռոգման, ջրամատակարարման մասին եղած տեղեկությունը, համադրելով պատմական սկզբնաղբյուրների, ինչպես նաև օդալուսանկարների, արբանյակային լուսանկարների,

առկա հնագիտական տվյալների և տեղում կատարված դաշտային աշխատանքների հետ, կարող ենք հստակեցնել Ազատ գետից դեպի Դվին գնացող ջրային համակարգի հիմնական ուղղությունները և խողովակաշարերով ջրամատակարարման խնդիրները:

Ամփոփելով պատմիչների տեղեկությունները՝ կարող ենք փաստել, որ քաղաքի շուրջը և նրանից ոչ հեռու գտնվում էին մրգատու ծառաստանները և ցանկատարածությունները: Կարևոր ենք համարում բրնձի և բամբակի մշակման մասին վկայությունը: Գրեթե բոլոր հեղինակները վկայում են Դվին քաղաքի պարիսպների մոտ հոսող գետի և քաղաքի ջրի աղբյուրների մասին: Դվինի քաղաքային պարիսպների, միջնաբերդի որոշ հատվածներում լավ տեսանելի են դրանց կից ջրի խրամատի հետքերը, որոնք ժամանակին լցվել են Ազատ գետի ջրերով: Այդ համակարգի հատվածները տարբեր չափերով և նշանակությամբ շարունակում են գործածվել:

Դվինում 2022–2023 թթ. իրականացված հնագիտական աշխատանքների արդյունքում պեղվել և հետազոտվել է նաև ջրամատակարարման խրամատի նստվածք, որն ունի 12 մ լայնություն և մինչև 60 սմ հաստություն: Իսկ տվյալ շերտին նախորդող շերտի իրավիճակը թույլ է տալիս խրամատի նստվածքը թվագրել՝ սկսած 9-րդ դարից:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Arabic sources. (1981). *Ibn Al-Asir* (vol. B). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Bartikyan, H. (1967). *Foreign sources about Armenia and Armenians, 5, Byzantine sources 1. Workbook*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Buzand, P. (2003). *Armenian Handbook* (vol. A, E century). Antilias (in Armenian).
- Foreign sources about Armenia and Armenians (1979). *10, Byzantine sources III* (diligently H. Bartikyan). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Ghafadaryan, K. G. (1952). *The City of Dvin and its Excavations, the results of the works* (vol. 1, 1937-1950). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Ghafadaryan, K. G. (1982). *The City of Dvin and Its Excavations, the results of the works* (vol. 2, 1951-1972). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Ghevond. (1982). *History* (A. Ter-Ghevondyan, translation, introduction and annotations). Soviet Writer (in Armenian).
- Khorenatsi, M. (1981). *History of Armenians*. Yerevan University (in Armenian).
- Sebeos. (1979). *History of Sebeos* (with diligence G. Abgaryan). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Ter-Ghevondyan, A., (2005). *Foreign sources about Armenia and Armenians, 16, Arab sources C, Arab chroniclers IX-X centuries*. YSU (in Armenian).
- Tosunyan, G. (1996). *History of Armenians of the Catholicos Hovhannes Draskhanakertsi*. YSU (in Armenian).
- Yepremyan, R.V. (1992). *Water supply of Ancient and Medieval Armenia*. YerACI (in Russian).



# NEW DISCOVERIES TOWARDS THE WATER USE SYSTEMS OF THE MEDIEVAL BATHS OF THE LORE BERD FORTRESS

Arman Nalbandyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
“Scientific Research Center of Historical and Cultural Heritage” SNCO

## Abstract

The fortress of Lore Berd, located in the Lori Berd community of the Lori Province of the Republic of Armenia, is one of the best-preserved fortresses in Armenia. This famous fortress of the historical Gugark region arose on a high cape formed at the intersection of gorges where the rivers Dzoraget (Tashrajur) and Urut (Miskhana) merge. It is located at an altitude of 1490 m above sea level and together with the suburbs occupies an area of 50–60 hectares (only the citadel takes up 9 hectares). Based on archaeological excavations carried out both in the Soviet Union period and in the 2000s, the cultural image of this famous fortress was revealed.

Excavations of the Lore Berd Fortress resumed in 2022, under a special grant from the RA MoESCS, within the framework of the restoration and development project, the archaeological expedition of the Scientific Research Center of Historical and Cultural Heritage (expedition leader: A. Nalbandyan, archaeologist: M. Khechoyan, assistant: S. Bislamyán). The work was carried out at several sites. They revealed significant results both in terms of architecture and the study of cultural layers.

Particularly noteworthy are the results of excavations in two baths of the Lore Berd Fortress. The studied lower, earliest layers gave not only a huge number of findings of material culture (ordinary, red-polished, stamped and glazed ceramics, glass bracelets and beads, smoking pipes, coins, various copper objects, etc.), but also led to remarkable discoveries concerning the water supply of baths, the movement/circulation of water and, the floor heating systems. The discovered pools, ditches, clay water pipes and water taps further enriched our understanding of the engineering system of the bathhouses of Lore Berd Fortress.

**Keywords:** Lore Berd Fortress, high Middle Ages, bath/bathhouse, excavations, water use, hypocaust, water tap, clay water pipe.

## ՆՈՐԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ ԼՈՌԻ ԲԵՐԴՔԱՂԱՔԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արման Նալբանդյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ

### Ամփոփագիր

ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ համայնքում գտնվող Լոռե բերդաքաղաքը Հայաստանի լավագույն պահպանված ամրոցներից մեկն է: Գուգարաց աշխարհի նշանավոր այս ամրոցը ձևավորվել է Ձորագետ (Տաշրաջուր) և Ուտուտ (Միսխանա) գետերի միախառնման վայրում գոյացած հրվանդանի վրա, որը երիզվում է ուղղաձիգ ապտաժներով: Այն գտնվում է ծովի մակերևույթից 1490 մ բարձրության վրա և արվարձանների հետ միասին զբաղեցրել է 50–60 հա տարածք (միայն միջնաբերդը՝ 9 հա): Այստեղ թե Խորհրդային տարիներին, և թե՛ 2000-ական թվականներին իրականացված հնագիտական պեղումների հիման վրա վեր է հանվել նշանավոր այս ամրոցի մշակութային պատկերը:

Լոռե բերդ ամրոցի 2022 թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արշավախմբի (ղեկ՝ Ա. Նալբանդյան) վերականգնողական պեղումները ընթացել են մի քանի տեղամասերում, որոնք բոլորն էլ տվել են զգալի արդյունքներ՝ թե՛ ճարտարապետական կառույցների տեսանկյունից և թե՛ մշակութային շերտերի ուսումնասիրման տեսանկյունից: Հատկապես պետք է առանձնացնել Լոռե բերդաքաղաքի երկու բաղնիքներում կատարված պեղումների արդյունքները: Ուսումնասիրված ստորին՝ վաղագույն շերտերը տվեցին ոչ միայն նյութական մշակույթի վիճակագրի քանակությամբ գտածոներ (հասարակ, կարմրափայլ, դաջագարդ և ջնարակված խեցեղեն, ապակե ապարանջաններ և ուլունքներ, ծխամորճեր, մետաղադրամներ, պղնձե զանազան առարկաներ և այլն), այլև հան-

գեցրին բաղնիքների ջրամատակարարմանը, ջրի տեղաշարժմանը, հատակների տաքացմանը առնչվող ուշագրավ բացահայտումների: Հայտնաբերված ջրավազանները, առվակոսները, կավե փողակներն ու ջրածորակներն էլ ավելի հարստացրեցին մեր պատկերացումները լոռերերոյան բաղնիքների ինժեներական համակարգի վերաբերյալ:

**Հիմնաքառեր.** Լոռե բերդաքաղաք, զարգացած միջնադար, բաղնիք, պեղումներ, ջրօգտագործում, հիպոկատստ հատակ, ջրածորակ, կավե փողակ:

## Ներածություն

Լոռե բերդաքաղաքը Դավիթ Անհողինի կողմից 11-րդ դ. հիմնադրվելուց և Կյուրկե II-ի կողմից Տաշիր-Չորագետյան թագավորության մայրաքաղաք հռչակվելուց հետո շարունակ կառուցապատվել է և ամրացվել վիթխարի պարիսպներով: Քաղաքում շինարարությունը շարունակել է բոտն վերելք ապրել Լոռեի հաջորդ տերերի՝ Ջաքարյանների օրոք: Կյուրիկյանների և Ջաքարյանների օրոք Լոռեում կառուցվում են աշխարհիկ և հոգևոր նշանակության շենքեր, այդ թվում՝ պալատներ, եկեղեցիներ, բաղնիքներ, շուկաներ, հրապարակներ, կենցաղային կառույցներ, շարունակ ամրացվող պարիսպ, ջրամատակարարման համակարգ, իսկ գետերի վրա՝ կամուրջներ (Gharibyan, 2009, 34): 11-12-րդ դդ. Լոռեն ուներ տասը հազարի հասնող բնակչություն: Լոռե բերդաքաղաքի դերն ու նշանակությունը ժամանակի ընթացքում այնքան մեծացավ, որ այստեղ 1208 թ. հրավիրվեց համահայկական ժողով (Gandzaketsi, 1961, 171): Ցավոք, արհեստագործական և առևտրական այս խոշոր կենտրոնը շարունակ իր կողմն էր գրավում օտար ասպատակիչների ուշադրությունը և մեկը մյուսի ետևից հարվածներ ընդունելով՝ այն կորցնում է ժամանակի իր փառքն ու գորությունը: Ամենից հուժկու հարվածը, իհարկե մոնղոլների 1236 թ. արշավանքն էր, որով կասեցվում է Լոռե բերդի ծաղկումը, և որի նկարագրությունը մանրամասնորեն տալիս է միջնադարյան պատմիչ Կիրակոս Գանձակեցին (Gandzaketsi, 1961, 253–254): Հետագայում ձեռքից ձեռք անցնելով Լոռեն աստիճանաբար վերածվում է սովորական ամրոցի կամ գյուղաքաղաքի: Լոռե բերդը հուշարձանի տարածամասնակյա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բերդաքաղաքը մշտապես բնակեցված է եղել: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ միջնաբերդի մշակութային շերտերը չափազանց հարուստ են հոգևոր և աշխարհիկ մշակույթին, քաղաքային կյանքին ու արհեստներին, առևտրին ու ռազմարվեստին, կենցաղին, պերճանքին ու ժամանցին առնչվող բազմապիսի հնագիտական իրերով:

Ամրոցն ուսումնասիրել են մի շարք անվանի հետազոտողներ, սակայն հնագիտական պեղումներ առաջին անգամ կատարվել են 1966թ.-ից մինչև 1974թ. Ի. Ղարիբյանի ղեկավարությամբ (Երևանի պետական համալսարանի գիտական արշավա-

խումբ, արշավախմբի ճարտարապետ՝ Ս. Մաթևոսյան, ինժեներ՝ Ռ. Եփրեմյան): Այս աշխատանքների ընթացքում առաջին անգամ պեղվեցին բաղնիքները, մատուռը, արևելքում գտնվող եկեղեցին, «պալատ» համարվող կառույցը, բացօթյա ջրավազանները և այլն: Պեղումների արդյունքներին, խնդիրներին ու կառույցներին վերաբերող մի շարք հոդվածներ, ի վերջո, ամփոփվեցին պրոֆ. Ղարիբյանի՝ 2009 թ. հրատարակած «Լոռե բերդաքաղաքը» մենագրությունում (Gharibyan, 2009): Երկրորդ լայնածավալ պեղումներն իրականացվեցին 2009–2014 թթ.՝ ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արշավախմբի կողմից (արշավախմբի ղեկավարներ՝ Ի. Ղարիբյան, Հ. Սիմոնյան, հնագետներ՝ Տ. Ալեքսանյան, Ա. Նալբանդյան, Հ. Բաղալյան, Խ. Վարդանյան, Կ. Ծերեթյան, երկրաբան՝ Գ. Վարդանյան), որի արդյունքները նույնպես հրատարակվել են (Simonyan et al., 2015):

## Առաջին բաղնիքի պեղումների արդյունքները

Ամրոցի կենտրոնական հատվածում գտնվող «Առաջին» կամ «Մեծ» բաղնիքը քիչ թե շատ կանգուն մնացած կառույցներից մեկն է, որտեղ նախկինում կատարված պեղումների ընթացքում բացվել են լողասրահին կից օժանդակ շինությունների՝ հանդերձարանի, ջեռոցի և այլ կցակառույցների հիմքերը: Սա Հայաստանում լավագույն պահպանված բաղնիքներից մեկն է. պահպանվել են ընդարձակ և մի քանի ենթաբաժիններով լողասրահի պատերն ու թմբուկավոր առաստաղը, որոնցից մեկը կենտրոնում պսակված է աստղաձև երդիկով: Այս բաղնիքին անդրադարձել են շատ մեծանուն ճարտարապետներ ու հնագետներ, երկարատև պեղումները տվել են լուրջ արդյունքներ և վեր հանել միջնադարյան բաղնիքի ընդհանուր նկարագիրը: Սակայն բոլոր այդ հետազոտությունների ընթացքում բաղնիքին հարակից շատ հատվածներ, մասնավորապես՝ դրանից հյուսիս ընկած ընդարձակ սրահը, մնացել են ոչ լիովին պեղված: Չափազանց կարևոր է նաև այն հանգամանքը, որ դեռևս չպեղված էր մնում բաղնիքի լողասրահի ստորին շերտը, որը կարող էր շատ կարևոր հարցերի պատասխան տալ՝ կապված բաղնիքի տիպային առանձնահատկությունների, ինժեներական համակարգի և հնա-

գիտական շերտագրությունների հետ, որոնք մասամբ ստացան իրենց պատասխանները 2022 թ. պեղումների ժամանակ:

**Ա. Լոդասրահ:** Կանգուն պատերով լողասրահի հյուսիս-արևելյան հատվածում բացվեց անխաթար պահպանված սալահատակով ուղղանկյուն ջրավազան (153x128 սմ չափսեր) (նկ.2): Այստեղ՝ 16.5 սմ խորությունում գտնվեց ամբողջական պահպանված քարե ծորակ՝ շրթնամասը ուղղանկյուն, կենտրոնում՝ միջանցիկ անցքով (նկ.9/4): Ղարիբյանը թեև անդրադառնում է ջրածորակներին (Gharibyan, 2000, 105), սակայն, ամենայն հավանականությամբ, նա ձեռքի տակ չի ունեցել սրանցից որևէ մեկը: Ավագանի արևմտյան եզրին բացվեց ջրահեռացման 8 սմ տրամագծով կավե փողոկով ջրահեռացման անցքը: Մրա շուրջը ցածրիկ պատեր կան, որոնք կարող էին ծառայել որպես նստարան՝ ջրավազանից օգտվողների համար:

Առհասարակ բաղնիքի ներսույթի I շերտի պեղումները բավականին արդյունավետ էին. հայտնաբերվեցին մեծ թվով խեցեղեն, կենդանիների ոսկորներ, ձիասանձի լկամ, քարե և ապակե ուլունքներ և այլ առարկաներ, իսկ բաղնիքի արևելյան պատի մոտ բացվեց 40 սմ տրամագծով, կավե պատերով օջախ: Այն ունի 20 սմ բարձրություն և 5,5 սմ պատերի հաստություն: Հատակը կրասավաղ է: Օջախին կից բացվեց 4 սալաքարերով շարված ուղղանկյուն հոր (44x40 սմ): Մեր կարծիքով օջախին կից գտնվող այս հորը նախատեսված էր դրանում լցված ջուրը տաք պահելու նպատակով: Նման սալաքարերով քառակուսի հոր հայտնաբերվել է նաև Դաշտադենի ամրոցի պեղումների ժամանակ, որը, նույնպես կից է շրջանաձև օջախին (ըստ հնագետ Ա. Բաբաջանյանի՝ Դաշտադենի պեղումներով բացվածը վառարան է, որն ամբողջությամբ լցված է եղել մոխրով): Հորի մոտից գտնվեցին մի քանի պղնձե անոթների բեկորներ և կիսով չափ պահպանված կավե ջրաման (15 սմ բարձր., 6.5 սմ բերանի բացվածք, կանթի բարձր.՝ 8 սմ, կանթի հաստ.՝ 1.5 սմ) (նկ.9/1): Այս փոքր չափերով անոթն ունի ուռուցիկ իրան, նեղ վզիկ, դուրս փոված շուրթ և մեկ աղեղնաձև կանթ: Նմանատիպ նուրբ խեցիով ջրամաններից ամենախոշորները 2-3 լիտր տարողությամբ են լինում, որոնք հաճախ պատված են լինում անգործով կամ ներկված լինում կարմրավուն ներկով, ապա փայլեցվում (Arakelyan, 1958, 221): Հարկ է նշել, որ քարե տաշտերից ջուրը վերցվել է կավե կամ պղնձե ամաններով (Gharibyan, 2000, 105): Պեղումները ցույց տվեցին, որ I շերտը ուշ շրջանում՝ հավանաբար 14-15-րդ դդ., մանր քարերով (նաև կոթողների բեկորներով) կրաշաղախով տոփանված հատակ է:



նկ.1. Առաջին բաղնիքի հատակագիծը և իրավիճակը պեղումների ավարտին (Գծ. Հ. Սանամյանի, Ա. Սարգսյանի)

Այս լողասրահի՝ տաքացվող հատակ ունենալու մասին ենթադրություններ է արել դեռևս Վ. Հարությունյանը (Harutyunyan, 1962, 70): Ի. Ղարիբյանը նույնպես համակարծիք է՝ որպես հիմնավորում բերելով պատերի մեջ թողնված օդամուղ անցքերը (Gharibyan, 2000, 103): Այդ առումով կարևոր արդյունքներ տվեցին բաղնիքի լողասրահի հարավ-արևմտյան անկյան II շերտի պեղումները: Այստեղ բացվեցին թվով 20 կարճ, միակտոր քարից սյուներ, որոնց մեծ մասը տուֆակերտ են, մի քանիսը՝ բազալտ (նկ.3): Ունեն տարբեր չափեր (ամենաբարձրը՝ 62 սմ), որոնք հարմարեցված են եղել ժայռային գրունտին: Դրանց վրա դրված տուֆե սալաքարերը գրեթե ամբողջությամբ քայքայվել են (պահպանվել են մի քանի փոքրաչափ բեկորներ): Սյուները նույնպես ունեն տարբեր աստիճանի մաշվածություն: Սրանցից գատ՝ բաղնիքի արևելյան պատի մեջ, հատակի մակարդակին բացվեցին 40 սմ լայնքով ուղղանկյուն անցքեր: Այս անցքերով արևելքում գտնվող ջեռոցից եռացած գոլորշին անցել է բաղնիքի հատակի տակ՝ ապահովելով դրա ջերմությունը: Բաղնիքի երկու գլխավոր բաժինները՝ արևելյան և արևմտյան հատվածներն իրարից բաժանող պատի տակ նույնպես բացվեց ստորհատակյա անցք (75 սմ



Նկ. 2. Առաջին բաղնիքի ներսում բացված ջրավազան




Նկ. 3. Առաջին բաղնիքի լողասրահում բացված հիպոկաուստ հատակի հենասյուները

լայնքով), որով, փաստորեն, եռացած գոլորշին արևելյան բաժնից անցել է արևմտյան բաժին:

Հյուսիս-արևմտյան հատվածում բացվեց ուղղանկյունաձև, 40 սմ բարձրությամբ և 180×120 սմ չափսերով հիմք-պատվանդան, որի եզրերը շարված են քարերով, իսկ մակերեսը կրաշաղախով է պատված: Մեր համոզմամբ՝ սրա վրա դրված է եղել քարե տաշտը, որն այժմ գտնվում է բաղնիքին հարակից բակում: Այս հիմքից հյուսիս՝ լողասրահի պատի մեջ կա անցք, որտեղով հնարավոր է, որ ջուրը լցվել է քարե տաշտի մեջ: Այս հիմքի և բաժանմունքը արևմուտքից արևելք բաժանող միջնապա-

տի արանքում նեղ միջանցքը ապահովել է հատակի տակով անցնող տաք օդի շարժը:

Լողասրահի տարածքում բացառիկ հայտնագործություն էր 53 սմ խորությունում հայտնաբերված կենդանու կավե արձանիկը, որի չորս ոտքերից պահպանվել են երկուսը (նկ. 4): Գլուխը հիշեցնում է փղի, նկատվում է նաև, որ կնճիթ է ունեցել, որը կտորված է: Մեջքին կա շրջանաձև թմբիկ, որի երկու կողմերում ելուստներ են: Ետևի մասում կա ևս մեկ կտորված հատված, որտեղ, հավանաբար, արձանիկի բռնակն է եղել: Ունի 3.5 սմ բարձրություն և 6 սմ երկարություն: Միջնադարյան 11-12-րդ դդ. իրե-



Նկ. 4. Առաջին բաղնիքի պեղումներով հայտնաբերված կավե արձանիկ-խաղաքարը (վերականգնումը և լուսանկարը Ա. Մելքոնյանի, գրչանկարները Թ. Հնայակյանի)

րով հարուստ շերտում գտնված կավե այս արձանիկը ունեցել է ժամանցային նշանակություն, իսկ ավելի հստակ, հավանական է, որ ճատրակի խաղաքար է:

Լողարահի հարավ-արևելյան անկյան մոտ բացվեց 23 սմ լայնքով և 40 սմ խորությամբ օդամուղ անցք, որի միջոցով հատակի տակ լցված եռացրած օդը դուրս է մղվել եթեր:

Բավականին հետաքրքիր իրավիճակ բացվեց բաղնիքի լողասրահից հարավ-արևելք: Այստեղ կա թրձած աղյուսներով շարված փոքրաչափ ավազան, որին միանում է կավե փողրակ: Վերջինս անցնում է պատի միջով, ինչը երևում է պատի քանդվածքի պատճառով: Այս փոքր՝ 2,7 մ2 մակերեսով սենյակն

իր աղբյուր ավազանով հանդերձ պեղվել է Ի. Ղարիբյանի կողմից, որը նշում է, որ նման տիպի աղբյուր-ավազաններ միջնադարյան բաղնիքներից հայտնի չեն, սակայն նման ջրավազան կա Գառնիի բաղնիքի հանդերձարանի անկյունում և թվագրվում է 3-րդ դարով (Gharibyan, 2000, 101):

**Բ. Հյուսիսային սրահ:** Բաղնիքի հիմնական կանգուն հատվածից անմիջապես հյուսիս ընկած տարածքը մասնակի պեղվել է 2009–2010 թթ., սակայն պեղումները մնացել են անավարտ (Simonyan et al., 2015): Նախկինում բացված բազմաթիվ, խառը շարվածքները թույլ են տվել ենթադրելու, որ այստեղ գտնվում են ջրամատակարարման համակարգի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են ջուրը բաղնիք հասցնող առվակոսները:

Այս տարածքում բավականին ընդարձակ կառույց է եղել (4.94×13.3 սմ), որի՝ ցածրիկ պատերով բաժանված ենթաբաժիններում բացվում են մեծաքանակ օջախ-վառարաններ: Դրանցից մեկը բացվեց կառույցի արևմտյան եզրին մոտ: Այն լավ պահպանված վիճակում է, ունի 43 սմ տրամագիծ և 28 սմ խորություն: Եվս չորսը բացվեցին իրար կից՝ մի ուղղանկյուն հատակագծով, փոքր բաժանմունքում, որի պատերը կրասվաղված և անջրաթափանց են եղել: Այս վառարաններն ունեն 60–75 սմ տրամագիծ և մոտ 25–40 սմ բարձրություն: Ինչպես հայտնի է, մետաղյա կաթսաները սովորաբար դրվում էին խցերի հատակի տակ, խարույկի վրա (Անի, Անբերդ) (Aleksanyan, 2010, 19) և չի բացատրվում, որ այստեղ մենք գործ ունենք նման խցի հետ: Ակնհայտ է, որ այս տարածքը օգտագործվել է ջրի



Նկ. 5. Առաջին բաղնիքին կից կառույցը՝ ջրաղիներով և վառարաններով

եռացման համար, որտեղից զանազան առվակոսներով ու խողովակաշարերով ջուրը տարածվել է դեպի լողաբահներ: Առվակոսներից մեկն ունի 80 սմ-ից ավել լայնություն, որի տակ կա խոշոր և կիսով չափ քարերով ծածկված ևս մեկ օջախ: Մրա հարևանությամբ բացվեց նաև սալաքարերով շարված և սալերով ծածկված ջրամատակարարման հերթական ջրուղին (սկ. 5):

Պետք է նշել, որ ընդարձակ այս կառույցի երկու շերտերն էլ չափազանց հարուստ էին 11–13-րդ դդ. հնագիտական իրերով: Մինչև 60 սմ հզորություն ունեցող շերտերից դուրս եկան մեծ թվով խեցեղեն և ոսկորներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում մանր և խոշոր եղջերավորների, ձիերի ոսկորները: Գտնվեցին նաև եղնիկի եղջյուրներ, որոնց վրա ակնհայտ են մարդկային ներգործության հետքերը: Գտածոների մեջ աչքի են ընկնում կապույտ ապակուց մանրահատիկ ուլունքը, «մանչ» և «աղջիկ» տիպի խփերի բռնակները, թեյնիկաձև ճրագի քթիկը, ճրագամանի բեկորը, ապակե սրվակների և ապարանջանների բեկորները, բրոնզե թիթեղները, մետաղադրամը այլն: Ջնարակված խեցեղենից ուշագրավ է կանաչ ջնարակով պատված բեկորը, որի վրա առկա է սևով արված արաբատառ գրերի իմիտացիա, իսկ կարմրափայլ մի բեկորի մակերեսին կա շրջանաձև արևանման դաշվածք: Կարմրափայլ մակերեսով այս բեկորը (6,3x5 սմ) անոթի իրանի հատվածից է, որի մակերեսին կա շրջանաձև, անվանման 1,5 սմ տրամագծով դաշվածք: Նմանատիպ դաջագարդ անոթները մեծ տարածում ունեն գարգացած միջնադարում և գտնվել են ոչ միայն Լոռե բերդի նախկին պեղումների ժամանակ (Gharibyan, 2009, 183; Simonyan et al., 2015, 48–49), այլև Անբերդից (Harutyunyan, 1978, 101), Արմավիրից, Թեղենյաց վանքից (Babajanyan, Miridjanyan, 2013, table IV), Դաշտաղեմի ամրոցից (Aleksanyan, Miridjanyan, 2012, 102, 106), Ավանի Սբ Աստվածածին եկեղեցուց (Badalyan, Nalbandyan, 2016, Table I), Տանձափարախի անապատից (Nalbandyan et al., 2021, 105) և այլ հուշարձանների համաժամանակյա շերտերից: Եզակի է 6.5x4.5 սմ պահպանված չափերով և 2.5 սմ հաստությամբ կրաքարե քանդակագարդ սալիկի բեկորը, որի մակերեսին պահպանվել են եզրագոտու և շրջանաձև ակնագնդի հատվածներ: Հատկապես հետաքրքիր է կարմիր տուֆից պատրաստված կոնաձև կաղապարը, որի միակ հղկված մակերեսին կա շրջանաձև փոսիկ:

Դեղնականաչավուն, կարծր կավից պատրաստված սնդկամանի բեկորներ գտնվեցին, ինչպես պարսպի, այնպես էլ բաղնիքի պեղումներով: Մրանք փքված իրանով, սրացող հատակով և խիստ նեղ բերանով անոթներ են եղել, որոնց մակերեսին

ագուցված են կաղապարի ճնշումով արված նուրբ զարդեր, ինչպիսիք գտնվել են Անիից և Դվինից (Arakelyan, 1958, 227): Դրանք, գրեթե առանց բացառության, ինչպես նաև Միջին Ասիայում գտնվածները, թվագրվում են 11–13-րդ դդ. (վերջերս նմանատիպ բեկոր գտնվել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի՝ Տավուշ բերդում կատարած պեղումների ժամանակ (հնագետներ՝ Տ. Ալեքսանյան, Հ. Բաղալյան)): Բ. Առաքելյանը տալիս է սրանց օգտագործման բոլոր հնարավոր վարկածները, որոնց թվում ճրագաման, ջրաման, շենքերի զարդարման մանրամասներ և նույնիսկ՝ հրդեհ առաջացնելու նպատակով գործածվող հրձիգ ռումբեր: Սակայն առավել ընդունված տեսակետը այն է, որ դրանք նախատեսված են եղել անուշահոտ յուղեր կամ սնդիկ պահելու համար:

### Երկրորդ բաղնիքի պեղումները

Միջնաբերդի արևմտյան եզրին՝ ձորի անմիջապես պոնկին գտնվում է «Երկրորդ» կամ «Փոքր» բաղնիքը: Այն 1960-70-ական թթ. պեղել է պրոֆ. Ի. Ղարիբյանի ղեկավարած արշավախումբը, ինչից հետո արշավախմբի ղեկավարը եկել է հանգամանալից եզրակացությունների՝ ջրամատակարարման համակարգի, ջրամբարի, տաքացվող հատակի և այլնի վերաբերյալ (Gharibyan, 2009, 92):

Այս բաղնիքը բավականին բարդ և բազմաֆունկցիոնալ կառույց է՝ տարբեր չափերի ու նշանակության սենյակներով, եթե հաշվի առնենք նաև շենքի հիմնական հատվածից դուրս գտնվող բացօթյա ջրավազանները, նաև բավականին ընդարձակ տարածք է զբաղեցրել: Այժմ կիսավեր վիճակում է: Պահպանվել են տարբեր բարձրությունների պատեր և բաժիններից միայն մեկի թաղը՝ երկու երդիկով, որից տարիների ընթացքում քարեր են թափվել: Ողջ կառույցը շարված է անմշակ որձաքարերով, իսկ վերևի հատվածները՝ ֆելզիտի բարակ կտորներով: Տեղ-տեղ պատերը լրացված են թրծած աղյուսի բեկորներով: Առանձին բաժիններն իրար կապող մուտքերը, թեև քանդված են, սակայն նկատելի է, որ ունեցել են կամարաձև վերնամասեր: Շատ հատվածներում պահպանվել են ջրամատակարարման համակարգի կավե փողրակները, որոնք պատերի քանդման պատճառով դարձել են տեսանելի: 7–16 սմ տրամաչափերով փողրակները ուղղահայաց կամ հորիզոնական դիրքերով զետեղված են եղել միդիս շարվածքով պատերի լիցքերի մեջ՝ ապահովելով նաև պատերի ջերմությունը:

Արևելյան կողմից կառույցը հարում է բնական ժայռին և որոշ դեպքերում նկատելի են ժայռի կտրելու և հարթեցնելու հետքեր, իսկ որոշ դեպքերում էլ,



Նկ. 6. Երկրորդ բաղնիքի հատակագիծը (Գծ. Գ. Գյուլամիրյանի, Ն. Քալանթարյանի)

ընդհակառակը, բաղնիքի պատերն են հարմարեցված ժայռին: Արևմտյան կողմում բաղնիքի բաժանմունքների մի մասը քանդվել և թափվել է ձորը:

Ըստ Վ. Հարությունյանի՝ բաղնիքից մոտ 30 մ հյուսիս գտնվող կառույցի ավերակները ոչ այլ ինչ են, եթե ոչ այս բաղնիքը մշտական ջրով ապահովելու համար նախատեսված ջրամբար: Ականավոր ճարտարապետը դա հաստատելու համար տալիս է մի շարք հիմնավորումներ, որոնց թվում՝ ջրի ճշումը զսպող պատերի հաստությունը, դեպի ձորը նայող ճակատի մեջ ջրահեռացման կավե խողովակների առկայությունը, բաղնիքի համեմատ բարձր նիշում գտնվելու հանգամանքը (Harutyunyan, 1962, 70):

Մեր իրականացրած պեղումները, որոնք հագեցած էին բազմաթիվ հայտնագործություններով, լրացրեցին նախորդ պեղումների տված տեղեկությունները:

Բաղնիքից հյուսիս՝ 65 մ խորությունում բացվեց արևմուտք-արևելք դիրքից փոքր-ինչ շեղված քարե տաշտ-ավազան, որի շրթի բոլոր չորս եզրերում կան ջրակոսներ: Ջրաբաշխ այս ավազանն ունի 90 սմ երկ., 70–78 սմ լայնք, և 20 սմ խորություն: Հատակի արևելյան կողմում կա անցք: Միջանցիկ անցք կա նաև արևելյան նիստին, որին ժամանակին միացել են ջրատար կավե խողովակները: Ունի տարբեր հաստության պատեր, որոնք տատանվում են 8–18 սմ միջև: Այստեղից գտնված բեկորներից

ատանձնանում են կարմրափայլ մակերեսով անոթի բեկորները և կանթը: Հատկապես ուշագրավ է վերադիր, հաստ զարդագոտիով բեկորը, որն իր տեսակով միակն է: Վերադիր գոտեզարդով այս բեկորը (6x7 սմ) աչքի է ընկնում բարձրորակ թրծումով և հաստությամբ: Այն անոթի իրանի հատվածից է, որը պատված է կարմրափայլ շփոթով՝բացի գոտու հատվածից: Գոտին, որի լայնքը թերի պահպանված վիճակում 3,5 սմ է, ունի զիգզագաձև նախշեր: Նմանատիպ զիգզագներով կամ եռանկյունիների իրար հաջորդող շարքով բեկոր Լոռեից գտնվել է միայն մեկ օրինակ: Ղարիբյանը, այն համեմատելով Դվինից գտնված դրոշմազարդ կարասի հետ, եզրակացնում է, որ սա ներմուծվել է Դվինից և հավելում, որ Լոռեն առևտրական կապեր է ունեցել Դվինի խեցեգործական կենտրոնի հետ (Gharibyan, 2009, 183, table XXIII): Նմանօրինակ բեկոր գտնվել է նաև Վայոց Ձորի Հոստոն բնակավայրի պեղումներով և թվագրվում է 12–14-րդ դդ. (Babayan, 2020, 226): Շերտից գտնվեցին նաև հախճապակու սակավաթիվ բեկորներ, կապույտով ջնարակված կավե սալիկ:

**Ա. Ջրապահեստ:** Բաղնիքի հյուսիսային բաժինը 3.85x3.00 մ չափերով սենյակ է, որը մեջտեղից պատով բաժանվում է երկու, գրեթե հավասար մասերի: Այն, ըստ Ի. Ղարիբյանի, սառը ջրի համար նախատեսված ջրամբար է եղել: Հատակը հարմարեցված լինելով ժայռային տեղանքին՝ մոտ 50 սմ



Նկ.7. Երկրորդ բաղնիքի լողասրահում բացված հիպոկաուստ հատակի հենասյուները

բարձր է բաղնիքի մյուս կառույցների համեմատ: Այս հատվածը Ղարիբյանի ղեկավարած արշավախումբը պեղել է ջեռոցը հայտնաբերելու անկալիքով: Ըստ Ղարիբյանի՝ կառուցն ունեցել է գմբեթաձև ծածկ, և ենթադրում, որ ծածկի միջից կարող էր ջրամբարը մաքրելու նպատակով արված մուտք լինել: Արևելյան պատը շարված է ժայռի կից: Հատակը սալարկված է դեղնավուն ֆելզիտով, արանքները լրացված են կրաշաղախով: Այս կառույցից 17 սմ տրամագիծ ունեցող կավե խողովակաշարով ջուրը հոսել է այժմ կանգուն թաղով բաժանմունքը: Նույն՝ հարավ-արևելյան կիսաքանդ անկյունի լիցքի մեջ բացվել են 8.5 սմ տրամագծով մի քանի խողովակաշար ևս:

**Բ. Լողասրահ:** Բաղնիքի ամենաընդարձակ բաժանմունքն է, որի նշանակության հարցում մասնագետների կարծիքները կիսվում են: Խալփախյանն ու Հարությունյանը գտնում են, որ այն լողասրահ է, իսկ տարածքում առաջին անգամ պեղումներ իրականացրած Ղարիբյանը այն համարում է հանդերձասրահ: Այն անմիջապես կիրճի պոսկին է և արևմտյան պատը քանդվել ու թափվել է ձորը:

Այստեղ 25 սմ խորությունում դուրս են գալիս թրծած աղյուսների բեկորներ, որոնցով սալարկված է եղել սրահի հատակը: Դրա տակ մոտ 5 սմ կրաշերտ է, ֆելզիտի բազմաթիվ բեկորներ ու ածխի մնացորդներ: Սրահի գրեթե կենտրոնից դեպի հարավ բացվեցին բազալտե խշոր, թերմշակ սալեր, որոնց տակ քարերի մեծ կուտակումներ կան: Սալերը պատված են կրաշաղախով, իսկ տեղ-տեղ պահպանվել են թրծած աղյուսի մնացորդներ: Նույն մակարդակում բացվեցին նաև կավե խողո-

վակաշարի մնացորդներ: Այսպիսով, այստեղ գործ ունենք սրահի հատակի հետ, որը, փաստորեն, շարված է բազալտե զանգվածեղ սալերով, պատված՝ կրաշաղախով և աղյուսներով:

Հարավային պատի մոտ բացվեց 20 սմ լայնություն ունեցող գետնախարիսխ, որի տակով դեպի հարավային լողասրահ է ձգվում կավե փողրակ: Այս գետնախարիսխն զուգահեռ կա վատ պահպանված ևս մի խողովակաշար, որը նախ ձգվում է դեպի արևմուտք, ապա անկյուն կազմելով՝ ձգվում է դեպի հյուսիս ու ավարտվում խցանով:

Այս սրահում առավել հետաքրքրական ու կարևոր էին II շերտի պեղումները, որոնց արդյունքում՝ 65 սմ խորությունում բացվեցին հատակի բազալտե սալերը պահող սյուները, որոնք, ի տարբերություն «Առաջին» բաղնիքի սյուների, ոչ թե միակտոր տուֆ էին, այլև տարբեր քարերով ու կրաշաղախով շարվածքներ (Նկ.7):

Շերտը անխաթար վիճակում է և հարուստ է հնագիտական իրերով: Շերտից գտնվեցին ոսկորներ, հասարակ ու ջնարակված խեցեղեն: Հատկապես ուշագրավ են շքաղյուսները, որոնք հիմնականում միագույն են՝ պատված կապույտ ջնարակով: Միայն մի դեպքում շքաղյուսի բեկորի մակերեսին առկա են դեղին, երկնագույն և կապույտ երանգներ: Ուշագրավ է նաև 2.8 սմ տրամագծով, շրջանաձև, կավե խաղաքարը:

Սրահից արևելյան նեղ միջանցք տանող մուտքի առջև, 110 սմ հեռավորությունում և 45 սմ խորությունում բացվեց 10 սմ տրամագծով կավե փողրակի հատված: Խողովակաշարը թեքվում է դեպի հարավ և հարավային պատի երկայնքով ձգվում է դեպի ձո-




նկ. 8. Երկրորդ բաղնիքի ներսում բացված թրձած աղյուսներով հատակը

րը: Այն, կարելի է ասել, ամբողջությամբ թաղված է եղել կրաշաղախի մեջ: Այս նույն անկյունում հայտնաբերվեց պատի միջով անցնող օդամուղ անցքը, որի միջոցով հատակի տակի եռացրած գոլորշին դուրս է մղվել:

Շերտը լիարժեք պեղելու նպատակով հանեցինք հարավարևելյան անկյունում պահպանված հատակասալերը: Այստեղ բացվեց նաև սալաքարերով շարված, 40×50 սմ չափերով ուղղանկյուն հոր: Ուշագրավ է, որ այս փոքր հորը շարված է խոշոր ջրավազանի մեջ, որն ունի կրածեփ պատեր և 120×140 սմ մոտավոր չափեր: Այն, ցավոք, կիսով չափ ընկնում է ձորը արգելափակող ճաղավանդակներից դուրս, ինչն անհնար էր դարձնում դրա ամբողջական պեղելը: Այն հավասար մակարդակում է, ինչ սալահատակը պահող հենասյուները, այսինքն՝ փորված է եղել հատակի մեջ: Սրա մեջ գտնվեցին ջնարակապատ և կաղապարի համամբ պատրաստված վերադիր զարդաքանդակներով ընտիր շքաղյուսների 48 բեկոր, որոնք մինչ այժմ հայտնաբերվածներից տարբերվում են իրենց հաստությամբ (3.5–4.5սմ), վառ կապույտ գույնով և, որ ամենակարևորն է, դրանց եզրերին առկա են բարձրաքանդակ զարդագոտի: Ղարիբյանը իր աշխատության մեջ նմանատիպ շքաղյուսների չի անդրադառնում, սակայն լուսանկարների մեջ առկա է մեկ փոքր բեկոր՝ նման մեր օրինակներին, որի մասին տեքստում խոսք չկա (Ղարիբյան, 2009, 233): Ձևով սրանք հարթ սալիկներ են, որոնք ավարտվում են

ուղղաձիգ, կարճ պատերով: Հենց այս պատերի եզրերն էլ պատված են բուսական, միանման զարդագոտիով: Կավը բավականին բարձրորակ է, թրծումը՝ նույնպես: Յուրահատուկ այս շքաղյուսները կարող էին զարդարած լինել բաղնիքի պատուհանների շրջանակները կամ, որ ավելի հավանական է՝ ջրավազանի եզրաշրթերը: Սրանք բնորոշ են 14-րդ դ. երկրորդ կեսի և 15-րդ դ. արևելյան բաղնիքներին:

**Գ. Ջեռոց:** Բաղնիքի միակ բաժանմունքն է, որի թաղը պահպանվել է: Այս նեղ՝ 6.70×2.00 մ չափերով սենյակն ունի հյուսիս-հարավ ձգվածություն: Մուտքը եղել է արևմտյան պատի հարավային եզրին մոտ և ունեցել է կամարաձև վերնամաս: Հյուսիսային պատի մեջ կա կամարով պսակված խոշոր որմնախորշ (145×65 սմ): Այս խորշին են միանում ինչպես ջրամբարի լայնաբերան խողովակաշարը, այնպես էլ՝ 4 նեղ խողովակներ, երկուսը՝ դիմահայաց պատին, մեկական՝ երկու կողմերում: Խորշը կարևոր ջրբաժան կետ է եղել, որը, հավանաբար, ունեցել է նաև քարե տաշտ-ավազան, որտեղ լցվելով՝ ջուրը հոսել է տարբեր ուղղություններով: Խորշի տակ կա դատարկ տարածություն, որը, հավանաբար, ծառայել է որպես ջեռոց և այստեղից տարածվել է եռացած գոլորշին: Կառույցի հարավային մասի ծածկը քանդված է: Այստեղ եղել է միջանցք, որից միջնորմով առանձնանում է քառակուսի հատակագծով փոքր բաժանմունք: Թեև Վ. Հարությունյանն (Harutyunyan, 1962, 70–71) ու Հ. Խալիփախյանն



Նկ. 9. Բաղնիքների պեղումներով հայտնաբերված առարկաներ. 1. Կավե ջրանոթ, 2. Պղնձե կաթսայի մաս, 3. Ծխամորճ, 4. Ծորակ (վերականգնողներ՝ Ե. Աթոյանց, Ա. Ալոյան, Ս. Բիսլամյան, լուսանկարները՝ Ա. Մելքոնյանի, գրչանկարը՝ Թ. Հնայակյանի)

(Khalpakhchyan 1971, 222) այն համարում են ջեռոց, Ի. Ղարիբյանը պնդում է, որ լողասրահ է, և հավելում, որ «բաղնիքի ջեռոցի տեղը մնում է անհայտ» (Gharibyan, 2000, 110): Սակայն մենք համակարծիք ենք նախկին ուսումնասիրողների հետ և նույնպես գտնում ենք, որ թաղակիր կառույցը հենց ջեռուցարան-հնոցն է:

Սրահի հարավային կողմում պահպանվել է 1×1.70 մ մակերեսով, թրձած աղյուսներով շարված հատակ: Սրահ մոտից 1.10 մ երկարությամբ և 60 սմ լայնքով բաժանմունք տանող նեղ միջանցք է, որը նույնպես սալարկված է աղյուսներով (նկ. 8): Մնացած հատվածներում աղյուս չկա, որի փոխարեն կրասվաղված հատակն է: Սալերն ունեն 21×21 սմ չափեր: Այս միջանցքը 1.34 մ լայնքով տարածք է, որը խաչմերուկ է թաղակիր ջեռոցի և կից լողասրահների համար. այն պեղեցինք 40 սմ խորությամբ, որի տակ բացվեց կրահատակը: Սրահ հատակի մեջ կա փորված առվակոս, որը թեքությամբ ձգվում է դեպի Մեծ լողասրահի նորահայտ ջրավազանը:

**Դ. Փոքր լողասրահ:** Այս 1.90×1.80 մ չափերով լողասրահը, որ ամենից փոքր բաժանմունքն է, նեղ մուտք է ունեցել ջեռոցի կողմից: Սենյակի հարավարևելյան անկյունում բացվեց կավե խողովակաշար, որը անկյունից սկսվելով՝ ձգվում է դեպի հյուսիս-արևմուտք: Դրա երկու կողմերում, ինչպես շատ դեպքերում, աղյուսե սալիկներով ամրացումներ են

տրված: Սրահ հարավային կեսում պահպանվել է աղյուսե սալիկների շարք, որին հարում է նեղ առվակոս: Վերջինս պատի տակով ջուրն անցկացրել է դեպի կից միջանցքը, որտեղից էլ միացել է Մեծ լողասրահին: Այս փոքր մակերեսով լողասրահը, հավանաբար, նախատեսված է եղել անհատների համար: Նման մեկուսի լողասրահներ կան նաև այլ միջնադարյան բաղնիքներում, օրինակ՝ Ասիում և Դվինում (Aleksanyan, 2010, 125):

**Ե. Հանդերձարահ:** Ուղղանկյուն սրահ է, որի արևմտյան հատվածը քանդվել և թափվել է ձորը: Սա, նույնպես ժամանակին պեղվել է Ի. Ղարիբյանի արշավախմբի կողմից, որոնց ժամանակ բացվել են թրձած աղյուսի սալիկներ, կավե փողրակներ: Մուտքը, որ գտնվում է սենյակի արևելյան պատի հյուսիսային եզրին, ունի 77 սմ լայնք: Մեր պեղումների արդյունքում վերաբացվեց նախկինում բացված իրավիճակը: Խողովակաշարը սկսվում է կառույցի արևելյան պատից և թեքությամբ ուղղվում դեպի արևմուտք: Սրահ կողքին եղել է ևս մեկ խողովակաշար, որը պահպանվել է մասամբ: Հավանական է, որ սա միացել է հարևան շարանին և այս գույգ խողովակաշարերի միջոցով լուծվել է բաղնիքի լողասրահների ջրահեռացման խնդիրը: Դրանք երկու կողմերից ամրացված են եղել կավե սալիկներով (21×21 սմ), որոնք, հավելելով խողովակներին, ապահովել են դրանց անշարժությունը: Կառույցի արևելյան պատը հիմքի մասում կրկնաշար է, և պատից գետնախարսխի պես լայնացող այս հատվածի միջով, հավանական է, որ խողովակաշար է անցնում: Այս ցածր պատի երեսը բացելիս գտնվեց խողովակաշարի՝ պատին կցվելու հատվածը, իսկ դրա անմիջապես կողքին գտնվեց մոխրագույն կավից, բարձրորակ թրձումով հիանալի պահպանված ծխամորճ: Գլխիկը գեղեցիկ զարդագոտու միջոցով միանում է կարճ փողին, որի մակերեսին նույնպես կա ուռուցիկ զարդագոտի և փորագրագծեր (նկ. 9/3):

Այս սենյակի հյուսիսային եզրին՝ մուտքի անմիջապես դիմաց բացվեց սալաքարերով ջրավազան: Այս սալաքարերով (որոշ դեպքերում տապա-նաքարերի բեկորներ) և կրաշաղախով պատված ավազանը գտնվում է մուտքի անմիջապես դիմաց: Ամենայն հավանականությամբ այս փոքր տարածքը եղել է դեպի հանդերձարան տանող նախամուտք: Լոռե բերդի Մեծ կամ Առաջին բաղնիքի հանդերձարանի մոտ նույնպես կա նման նախամուտք՝ և կրկին փոքր ջրավազանով (Gharibyan, 2000, 101):

**Զ. Լողասրահ:** Գտնվում է բաղնիքի հարավարևելքում: Սենյակն ունի ուղղանկյուն հատակագիծ, 3.10×4.20 մ չափեր, արևելյան կողմից կցված է ժայռին, տեղ-տեղ պատաշարը հարմարեցված է տե-

դանքին: Այստեղ պեղումների ընթացքում արևելյան կողմում բացվեց կրաշաղախի հետքերով շարվածքի մնացորդներ, իսկ հյուսիսային կողմում բացվեց ուշ շրջանի հարթակ: Կառույցի հարավարևելյան անկյունում կա բարակ պատով առանձնացված հոր, որտեղից դուրս եկան մեծ թվով հնագիտական նյութեր՝ խեցեղեն, բրոնզից թիթեղներ, օվալաձև և գնդաձև ուլունքներ, երկաթե գամեր և այլն:

75 սմ խորությունում շերտը փոխվում է, հողն ավելի կարծր է և տոփանված: Այս շերտից նույնպես դուրս եկան մեծ թվով խեցեղեն, ոսկորներ ու ապակու բեկորներ, գտնվեցին հերթական քթիկավոր անոթի փողրակաձև ծորակը, ծխամորճի ևս մեկ բեկոր, որն ունի դարչնագույն փայլեցրած մակերես, եզրում՝ զարդագոտիով բազմանիստ գլանակ: Բացառիկ էր գանգաձև կավե ճրագակալի կամ կանթեղի գլխիկը, որն ամբողջությամբ պատված է մի քանի շարք զարդագոտիներով: Ունի 3.5 սմ բարձրություն: Կեսը բացակայում է և բերանի տարամագիծը դժվար է որոշել: Հատակի կենտրոնում միջանցիկ անցք է: Նույն շերտից գտնվեցին մեկ այլ ճրագակալի բեկորներ ևս: Դրանց մակերեսին դաջագարդ ծաղիկի պատկերներ են, կողքերին՝ բուսական նախշեր, իսկ եզրերին՝ հյուսքեն զարդագոտիներ: Այս շքեղ բեկորները, չի բացառվում, որ լինեն բաղնիքի լուսավորության միջոցների մասեր:

III շերտի խորությունը հասցվեց 1,10 մ-ի, որից ևս գտնվեցին մի քանի տարբեր չափերի և գույների ուլունքներ, ապակու բեկորներ և բրոնզե մատանի՝ պսակված բազմանիստ վահանակի վրա ազուցված կաթնագույն ապակիով: Սենյակի արևելյան հատվածում բացվեց իր նախնական տեղում գտնվող կարասի հատակամաս, որն ունի 35 սմ տրամագիծ: 1,10 մ խորությունում գտնվեց բրոնզե մետաղադրամ՝ Բյուզանդիայի Կոստանդին կայսեր (1059-1067 թթ.) պղնձե ֆոլիս: Առանձնանում է այծերի և կենաց ծառի պատկերով դրոշմազարդ գոտիով անոթի բեկորը (6x6,5 սմ): Կենտրոնում երկու կողմից չորսական ճյուղ ունեցող Կենաց ծառն է, որի երկու կողմերում կա մեկական վայրի քարայծի պատկեր: Այծերի և եղջերուների պատկերներով 3 բեկոր գտնվել էին նաև նախորդ տարիների պեղումների արդյունքում (Simonyan et al., 2015, 48-49): Սակայն դրոշմազարդ խեցեղենի լավագույն նմուշը գտնվել է 1960-70-ական թթ. աշխատանքների ժամանակ՝ մատուռ-դամբարանի պեղումների միջոցին: Դրա վրա պատկերված են եղջերու և նրան հետապնդող երկու առյուծներ: Միջնադարյան խեցեղործական արվեստի այս հիանալի նմուշը թվագրվում է 11-12-րդ դդ. (Gharibyan, 1869, 198): Նման խեցեղեն գտնվել է միջնադարյան մի շարք նշանա-

վոր հուշարձաններից, ինչպիսիք են Դվինը, Ասին, Գառնին, Զվարթնոցը, Ամբերդը և այլն, իսկ վերջին տարիներին նման մի նմուշ գտնվեց Հավուց Թառվանական համալիրի՝ մեր իրականացրած պեղումների ժամանակ (Nalbandyan, 2017-2018, 97, 99):

**Է. Բացօթյա լողավազաններ:** Բաղնիքից հարավ գտնվում են երկու բացօթյա լողավազանները, որոնք նույնպես ժամանակին պեղել է Ի. Ղարիբյանի ղեկավարած արշավախումբը: Դրանցից մեկն ունի 5.80x2.90 մ չափեր, 70 սմ բարձրություն: Այն հայտնաբերվել և պեղվել է 1968 թ.: Լողավազանի գրեթե կենտրոնում կա պահպանված ուղղանկյուն հիմք, իսկ հարավարևելյան անկյունում՝ 60x60 սմ չափերով քառակուսի սալաքար, որի կենտրոնում ջրահեռացման անցքն է: Պեղումներով բացվեց նաև ևս մեկ անցքով սալաքար՝ 50x64 սմ չափերով և 13-20 սմ տրամագծով անցք: Լողավազանից գտնվեց պղնձե կնքամատանի, որի ամբողջական պահպանված բազմանիստ վահանակի վրա նշմարվում են արաբատառ գրեր (այն մեզ հանձնեց Լոռի բերդի բնակիչ, Լոռե բերդ արգելոց-թանգարանի աշխատակից Դ. Ասուլյանը): Նման կնիք գտնվել է նաև նախկին պեղումների ժամանակ, որի վրա արաբատառ գրություն կա (Gharibyan, 2009, 169):

Երկրորդ լողավազանը գտնվում է նախորդից մի քանի մետր հարավ-արևելք: Այն հայտնաբերվել և պեղվել է 1970 թ.: Ունի 6.20 x3.40 մ չափեր և 45 սմ բարձրություն: Սրա պատերն, ի տարբերություն նախորդի, կրկնաշար են: Այս երկու լողավազաններն ունեցել են բազմանիստ սյան տեսքով ցայտաղբյուրներ (Gharibyan, 2009, 59-61):

**Եզրակացություններ**

Այսպիսով՝ «Առաջին» բաղնիքի պեղումներով կարելի է գալ հետևյալ եզրահանգումներին.

1. Բաղնիքի լողասրահն ունեցել է տաքացվող՝ հիպոկաուստ հատակ: Հատակը սալարկված է եղել տուֆե սալերով, որոնք հենվել են հիմնականում տուֆե, կարճ, մեկ ամբողջական զանգվածից պատրաստված սյուների վրա:

2. Սրահը միջնորմերով բաժանվել է չորս անհավասարաչափ լողասրահների: Միջնորմերի առկայությունը հաստատվեց ոչ միայն պեղումներով բացված հիմքերով, այլև պատերի մեջ մնացած կավե խողովակաշարերով, որոնք անցել են այդ միջնապատերով և տաքացրել դրանք:

3. Բաղնիքն ունեցել է բավականին լուրջ ու համակարգված կառուցվածք՝ միջնապատերի տակով գոլորշու համար նախատեսված անցուղիներ և նեղ միջանցքներ, պատերի մեջ՝ օդամուղ անցքեր, ջրահեռացման փոսերով ջրավազաններ, քարե տաշտեր և այլն:

4. Բաղնիքի ստորին շերտերը որոշ հատվածներում մնացել են անխաթար, ինչի շնորհիվ պահպանվել են հենասյունների մի մասը, ջրավազանը, և բաղնիքի գործունեության ժամանակաշրջանի՝ 11-13-րդ դդ. հնագիտական նյութերով հարուստ շերտերը:

5. Ավելի ուշ (14-15-րդ դդ. և հետագայում) բաղնիքի շենքը հարմարեցվել է տնտեսական և արհեստագործական նպատակների համար:

6. Լողասրահից հյուսիս գտնվող ընդարձակ կառույցում գործել է ջրամատակարարման բարդ և բազմաբաժանմունք համակարգ, որտեղից տաք ջուրը զանազան ուղիներով հոսել է դեպի լողասրահ:

Չնայած այն հանգամանքին, որ Լոռե բերդը, ձեռքից ձեռք անցնելով, ենթարկվել է բազմաթիվ ասպատակումների, ամրոցի գրեթե կենտրոնում գտնվող բաղնիքի շենքը դարեր ի վեր դուրս չի ելել գործածությունից, չի կորցրել իր կարևորությունը՝ պարբերաբար հարմարեցվելով նոր ժամանակների պահանջներին, նախ՝ երկար ժամանակ գործելով իր բուն նշանակությամբ՝ որպես բաղնիք, ապա՝ արհեստագործական կառույց, իսկ ավելի ուշ օգտագործվել՝ տնտեսական և անասնապահական նպատակներով:

«Երկրորդ» բաղնիքի պեղումները թույլ են տալիս մեզ առաջ քաշել հետևյալ վարկածներն ու եզրակացությունները.

1. «Երկրորդ» բաղնիքի լողասրահի II շերտի պեղումների կարևորագույն արդյունքն այն էր, որ հաստատվեցին այն ենթադրությունները, ըստ որոնց այս սրահն ունեցել է տաքացվող կրկնակի հատակ: Տարբեր աստիճանի պահպանվածությամբ 18 հենամույթերի վրա հենվել են հատակի բազալտե խոշորածավալ սալերը: Այս հաստահեղյուս և քարաշեն հենամույթերը հազվագյուտ երևույթ են հայկական բաղնիքների համար, քանի որ հիպոկաուստ հատակով բաղնիքների երկրորդ հատակները հենված են եղել հիմնականում աղյուսներով շարված պուների վրա: Թեև Ի. Ղարիբյանը ենթադրում էր, որ սրահը կրկնահատակ է ունեցել և տաքացվել, սակայն վերին հատակի տակ նա չի պեղել և վերջնական հիմնավորումներ չի ունեցել (Gharibyan, 2000, 107), իսկ Ջաղացպանյանն, առհասարակ, վստահ էր, որ «Երկրորդ» բաղնիքը տաքացվող հատակ ունեցող բաղնիքների շարքից չէ (Dzhagatspanyan 1968, 246): Այս և հարավային կառույցի արանքում բացվեց սալով ծածկված նեղ միջանցք, որով և տարածվել է գոլորշին: Այս ամենի արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ ընդարձակ սրահը ոչ թե հանդերձարան է, այլև լողասրահ, որն ունեցել է տաքացվող պատեր և հա-

տակ, գոլորշին դուրս գալու համար նախատեսված օդանցքներ, ջրավազան: Այդ հատկանիշներով այն նման է Մեծ բաղնիքի լողասրահին:

2. Թաղակապ նեղ սրահը, ամենայն հավանականությամբ եղել է բաղնիքի ջեռոցը, որի հատակի տակ եղած դատարկ տարածությունը օգտագործվել է հատակի վրա՝ տաշտերի կամ կաթսաների մեջ լցված ջուրը եռացնելու համար:

3. Բաղնիքն ունի 11-13-րդ դդ. բավականին հարուստ մշակութային շերտ՝ առատ հնագիտական նյութով, որոնց թվում՝ մետաղադրամ, մատանի, լուսավորության միջոցներ, շքաղյուսներ, դաջագարդ և ջնարակված խեցեղեն, ապակե ապարանջաններ, ուլունքներ և այլն:

4. 14-15-րդ դդ. շերտերը արտահայտվում են ոչ միայն զանազան շարվածքներով, հարթակներով ու հավելումներով, որոնցում օգտագործված են նաև տապանաքարերի բեկորներ, այլև ջնարակված ու քանդակագարդ շքաղյուսներով ու կավե ծխամորճերի բեկորներով:

5. Բաղնիքը տարբեր դարաշրջաններում օգտագործվել է զանազան նշանակություններով և ներսում ավելացվել են տարբեր պատաշարեր ու հարթակներ, որոնցում օգտագործել են նաև տապանաքարերի բեկորներ: Որոշ հատվածներ, ավելի ուշ ակնհայտորեն օգտագործվել են տնտեսական նպատակներով, ինչը հաստատում են զանազան հորանման կառույցներն ու անոթները:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Grigoryan, G. (2015). Ani: A Thousand Years Old Capital of Armenians. *History museum of Armenia* (in Armenian).
- Arakelyan, B. (1958). Cities and Crafts in Armenia in the IX-XIII Centuries. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Aleksanyan, A. (2010). Bath-houses of Medieval Armenia. *Etchmiadzin: Official monthly review of Holy Etchmiadzin*, 8, 118-125 (in Armenian).
- Aleksanyan, T., Mirijanyan, D. (2012). The excavations of Dashtadem in 2011 (preliminary report). *Etchmiadzin: Official monthly review of Holy Etchmiadzin*, 8, 102-106 (in Armenian).
- Babayan, F. (2020). Results of the excavations of the medieval settlement of Hostun (Vostan) (2005-2006). *History and Culture Armenological Journal*, 2, 218-227 (in Armenian).
- Babajanyan, A., Mirijanyan, D. (2013). The pottery of Tegheniats Monastery. *Historical-Philological Journal*, 1, 134-150 (in Armenian).
- Badalyan, H., Nalbandyan A. (2016). *Excavations of the Church of the Holy Mother of God in Avan*. "Monument" yearbook, 11, 5-20 (in Armenian).
- Harutyunyan, V. M. (1962). The fortress-city of Lori. From the history of medieval urban development. *Histori-*

*cal-Philological Journal*, 3, 57-76 (in Armenian).

Harutyunyan, S. V. (1978). *Amberd*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).

Gandzaketsi K. (1961). *History of Armenians*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).

Gharibyan, I. (2009). *Lori fortress city and its excavations*. Gitutyun. (in Armenian)

Gharibyan, I. (1969). The chapel-tomb of Lori city and its monks. *Historical-Philological Journal*, 2, 194-198 (in Armenian).

Gharibyan, I. (2000). Medieval baths of Lori city castle. *Bulletin of Yerevan University*, 3, 100-110 (in Armenian).

Nalbandian, S., Nalbandyan A., Badalyan H., Aleksanyan T. (2021). *Results of the 2012-2019 excavations of the Tandzaparakh desert*. "Monument" yearbook, 16, 85-119 (in Armenian).

Nalbandian, A. (2017-1018). *The Hill Church of Havuts Tar*. "Monument" yearbook, 12-13, 75-108 (in Armenian).

Simonyan, H., Gharibyan, I., Badalyan, H., Aleksanyan, T. (2015). The fortified city of Lore (preliminary results of excavations in 2009-2013). "Monument" yearbook, 10, 29-56 (in Armenian).

Khalpakhchyan, O. (1971). *Civil architecture of Armenia (residential and public buildings)*. Stroyizdat (in Russian).

Dzhagatspanyan, A. A. (1968). Baths of medieval Armenia and their thermal-technical characteristics. *Historical-Philological Journal*, 3, 241-248 (in Russian)..



# MANAGEMENT OF WATER RESOURCES IN MEDIEVAL ARMENIA BASED ON THE ARCHAEOLOGICAL AND EPIGRAPHIC SOURCES (SEVERAL EXAMPLES OF COMBINATION)

*Avetis Grigoryan<sup>1,2,3</sup>, Boris Gasparyan<sup>1,3</sup>, Dmitri Arakelyan<sup>4</sup>,  
Ani Adigyoalyan<sup>1,5</sup>, Hayk Haydosyan<sup>1,6</sup>, Artur Petrosyan<sup>1</sup>*

- 1. Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia,*
- 2. “Service for The Protection of Historical Environment and Cultural Museum-reservations” SNCO*
- 3. Yerevan State University*
- 4. Institute of Geological Sciences, NAS, Armenia*
- 5. Museum of History of Armenia*
- 6. Shirak museum of regional studies*

## Abstract

The economic development of Medieval Armenia included periods of rise and degradation, depending on which the volumes and balance of the economy changed. However, even in the case of a decline in economic life and commodity turnover, water and the management of irrigation systems continued to play a key role in maintaining the socio-economic potential of the country.

The progress of the medieval economy of Armenia was directly related to the development of cities and city-type settlements, royal and monastic economies, and the increase in the volume of trade and goods circulation. Moreover, Armenian cities, monasteries, manors and community farms were engaged in agriculture and cattle breeding and had their own horticultural zones. In other words, the traditions of creation, operation and care of water distribution systems, originated still during the Prehistoric period and the period of the Van Kingdom continued in the Classical and Medieval periods: old canals and reservoirs were renovated and reactivated, and new ones were built.

In parallel with the archaeological data on the medieval irrigation systems of Armenia, written sources and especially epigraphic inscriptions also provide important information. Hundreds of epigraphic inscriptions are known in the territory of the Republic of Armenia, which refer to the construction, repair, donation or other circumstances related to the use of a canal, stream, reservoir, spring, or mill. In this article, an attempt is made to combine the data of archaeological monuments and epigraphic inscriptions representing water-distribution systems, which allows us to fully understand the place and role of water in the life and economy of the medieval society of Armenia.

**Keywords:** Armenia, irrigation systems, dams, weirs, natural and artificial reservoirs, irrigation canals, regulation of water flows, horticultural zones, Medieval period, epigraphic inscriptions.

## ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԻՄԱԳԻՐ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ (ՀԱՄԱԴՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ)

*Ավետիս Գրիգորյան<sup>1,2,3</sup>, Բորիս Գասպարյան<sup>1,3</sup>, Դմիտրի Առաքելյան<sup>4</sup>,  
Անի Ադիգյոալյան<sup>1,5</sup>, Հայկ Հայդոսյան<sup>1,6</sup>, Արթուր Պետրոսյան<sup>1</sup>*

- 1. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ*
- 2. «Պատմամշակութային արժեքների պահպանման և պարունակման միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ*
- 3. Երևանի պետական համալսարան*
- 4. ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ*
- 5. Հայաստանի պատմության թանգարան*
- 6. Շիրակի երկրագիտական թանգարան*

## Ամփոփագիր

Միջնադարյան Հայաստանի տնտեսական զարգացումն ունեցել է վերելքի և վայրէջքի ժամանակաշրջաններ, ինչից կախված փոփոխվել են տնտեսության ծավալներն ու հաշվեկշիռը: Այսուհանդերձ, տնտեսական կյանքի ու ապրանքաշրջանառության անկման պարագայում անգամ ջուրը և ջրաբաշխական համակարգերի

կառավարումը շարունակել է առանցքային դեր խաղալ երկրի սոցիալ-տնտեսական ներուժի պահպանման համար:

Միջնադարյան Հայաստանի տնտեսության առաջընթացն ուղղակիորեն կապված էր քաղաքների և քաղաքատիպ ավանների, իշխանական և վանքապատկան տնտեսությունների զարգացման, առևտրապարանքային շրջանառության ծավալների մեծացման հետ: Ընդ որում, Հայաստանի քաղաքները, վանքապատկան, կալվածատիրական տնտեսություններն ու ագարակները զբաղվել են երկրագործությամբ ու անասնապահությամբ և ունեցել իրենց այգեգործական գոտիները: Այլ բառերով ասած՝ դեռևս նախապատմական ժամանակաշրջանում, ապա նաև Վանի թագավորության գոյության ընթացքում ջրաբաշխական համակարգերի ստեղծման, շահագործման և խնամքի ավանդույթները շարունակվել են դասական և միջնադարյան դարաշրջաններում. վերանորոգվել և վերագործարկվել են հին ջրանցքներն ու ջրամբարները, կառուցվել նորերը:

Միջնադարյան Հայաստանի ռոտզման համակարգի մասին հնագիտական տվյալների հետ զուգահեռ կարևորագույն տեղեկություններ են տալիս նաև գրավոր աղբյուրները՝ պատմագրությունը, ձեռագիր հիշատակարանները և հատկապես վիմագիր արձանագրությունները: ՀՀ տարածքում հայտնի են հարյուրավոր վիմագիր արձանագրություններ, որոնք վերաբերում են ջրանցքի, առվի, ջրամբարի, աղբյուրի, ջրաղացի կառուցմանը, նորոգմանը, նվիրատվությանը կամ դրանց օգտագործման հետ կապված այլ հանգամանքների: Սույն հոդվածում փորձ է արվում համադրել ջրաբաշխական համակարգերը ներկայացնող հնագիտական հուշարձանների և վիմագիր արձանագրությունների տվյալները, ինչը թույլ է տալիս լիարժեքորեն ընկալել ջրի տեղն ու դերը միջնադարյան Հայաստանի հասարակության կենցաղում և տնտեսության մեջ:

**Հիմնաբառեր.** Հայաստանի Հանրապետություն, ջրաբաշխական համակարգեր, ամբարտակներ, պատվարներ, բնական և արհեստական ջրամբարներ, ջրանցքներ, ջրային հոսքերի կառավարում, այգեգործական գոտիներ, միջնադար, վիմագիր արձանագրություններ:

## Ներածություն

Միջնադարյան Հայաստանի ջրաշինական ձեռնարկումների, մասնավորապես ջրամբարների ու ջրանցքների կառուցման պատմության, օգտագործման իրավունքի, այգեգործական լանդշաֆտների ռոտզման, կենցաղային ջրի մատակարարման, պաշտպանական խրամների համար ջրի սպասարկման և այլն իրողությունների վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ՝ հրատարակված դեռևս նախորդ դարասկզբում (Mesrop Yepiskopos, 1912; Mesrop Magistros Arkepiskopos, 1936; Avdalbegyan, 1927; Avdalbegyan, 1931; Virabyan, 1975; Virabyan, 2003)<sup>1</sup>: Սակայն դրանց գերակշիռ մասում բացակայում կամ շատ քիչ են այս կամ այն ջրաբաշխական կառույցի կամ համակարգի համար ջրային պաշարների առաջացման, ամբարվող ջրի ծավալների, կառավարման ռեժիմների, ջրաշինական կառույցների և դրանց տարրերի շինարարական տեխնիկայի մասին տվյալները (Shirmazan, 1935; Shirmazan, 1964; Kalantar, 1937; Asatryan, 1989; Asatryan, 2004; Kalantar, 2007; Tonapetyan, 2020; Gabrielyan, 2023, Kalantar, 1994; Donabédian, 2022):

Միջնադարյան Հայաստանի ջրամատակարարման մասին կարևոր տվյալներ են ձեռք բերվել նաև քաղաքային բնակավայրերի, իշխանանիստ բերդերի, վանական համալիրների հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում՝ կապված

կենցաղային և տեխնիկական ջրի, այգեգործության և անասնապահության կարիքների համար ջրի առանձնացման և օգտագործման, ինչպես նաև ժամանակի արտադրական կարիքների՝ տեխնոլոգիական խեցեղենի (խողովակների), քարաբեկորների մեջ փորված խնոցների, ջրահավաք տարրությունների (զուռեր) և այլնի սպահովման հետ (Khafadaryan, 1952; Arakelyan, 1958; Khafadaryan, 1982; Khachatryan & Kalantaryan, 1972; Khalantaryan, 1976; Harutyunyan, 1978; Beglaryan, 1989; Khafadaryan & Kalantaryan, 2002; Havhannisyanyan et al., 2017; Khafadaryan, 1970; Arakelyan, 1979; Yepremyan, 1992)<sup>2</sup>: Այսուհանդերձ, միջնադարյան Հայաստանի ջրաբաշխական համակարգերի մասին հիմնական սկզբնաղբյուր են շարունակում մնալ հարյուրավոր վիմագիր արձանագրությունները, որոնք վերաբերում են ջրանցքի, առվի, ջրամբարի, աղբյուրի, ջրաղացի կառուցմանը, նորոգմանը, նվիրատվությանը, հարկերին ու տուրքերին, դրանց օգտագործման հետ կապված վեճերին, իրավական հարցերին և այլն (Barkhudaryan 1960; Barkhudaryan 1967; Barkhudaryan 1973; Avagyan, Janpoladyan 1977; Barkhudaryan, Khafadaryan, Saghumyan 2012; Barkhudaryan X 2017; Sargsyan 2007):

Մինչդեռ, միջնադարում Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված ջրաշինական կառույցների թիվը կարող էր անցնել հազարը:

1 Մեծ արժեք ունեն Գ. Շիրմազանի և Ս. Բարխուդարյանի աշխատանքները. առաջինում ներկայացվել է Հայաստանի ջրաբաշխական համակարգերի պատմությունը, իսկ երկրորդում կատարվել է տիպաբանություն, առանձնացվել է ջրանցքների շինարարության չորս կարգ. պետական, իշխանական-վանական, համայնական և անհատական, վեր են հանվել ջրօգտագործման իրավական հարցերը և հարկային համակարգը (Shirmazan 1962; Barkhudaryan 1964):

2 Տե՛ս նաև սույն հրատարակության մեջ (Petrosyan et al.) հոդվածը:



Նկ. 1. Արագած լեռան համայնապատկերը հարավ-արևելքից, որի վրա կուտակված ձյունը վերածվում է ջրային պաշարի (Source: A. Adigoyalyan)

Դրանց շարքում հիշատակության են արժանի 8-րդ դ. Թալին ավանի համար կառուցված ջրամատակարարման համակարգը, Քասախ և Շահվերդ գետերից հանված առուները (Աշտարակի «Ականատեսի առու», Ներքին և Վերին Նավերի ջրանցքները և այլն), Ամբերդի ձորի «12 բանդեր» ջրանցքը (Արագածոտն), Երերույքի տաճարի ջրամբարը (Շիրակ), Գնիշիկաձորի, Ակների, Քարագլխի (Վայոց ձոր) և Վարարակնի (Սյունիք) ջրանցքները, Մաքենյաց վանքի ու Գեղարքունիքի մյուս ջրանցքները, Երևանի խանության ընթացքում սարդարների կողմից վերանորոգված և վերագործարկված ուրարտական ջրացքները, որոնց հետքերը մինչև այժմ էլ նկատելի են Հրազդան գետի կիրճում: Գործնականում մենք հանդիպում ենք ինչպես բուն միջնադարում կառուցված և բազմակի անգամներ վերանորոգված, այնպես էլ ավելի վաղ դարաշրջաններում կառուցված և միջնադարում վերանորոգված կառույցների:

### Ուսումնասիրվող Նյութերը և մեթոդները

Ներկա հետազոտության նյութ են ընտրվել Հայաստանի Հանրապետության միջնադարյան ջրաշինական կառույցներից մի քանիսը, որոնցում առկա են դրանց ինչպես նյութական մնացորդները, այնպես էլ հիմնադրման կամ վերանորոգման մասին վիճակական արձանագրությունները: Կառույցներն ու դրանց տեղանքը ենթարկվել են մանրամասն ուսումնասիրության, հետազոտվել է վերջիններիս երկրաձևաբանական համատեքստը, իրականացվել են օդային լուսանկարահանումներ, ինչը

հնարավորություն է տվել փաստագրել նախկինում անհայտ դետալներ և կառուցվածքներ:

Մեր ուսումնասիրության համար ընտրված միավորներից երեքը (Թալինի 8-րդ դ.՝ վերը նշված ջրաբաշխական համակարգը, Աշտարակի «Ականատեսի առու» կամ «Մեծ առու» կոչվող ջրանցքը և Արուճի 7-րդ դ. հնագիտական համալիրը) գտնվում են Արագածոտնի մարզում՝ Արագած լեռան հարավային լանջերին: Արագածոտնում ջրային պաշարների առաջացման հիմնական աղբյուր է հանդիսացել և շարունակում է մնալ Արագած լեռը, որի վրա կուտակված ձյունը գարնան և ամռան ամիսներին հալչելով վերածվում է թանկարժեք այս ռեսուրսի առեղի զանգվածների (նկ. 1): Ձևակալի ջրերը լեռան գագաթից և գագաթամերձ հատվածներից սկիզբ առնելով՝ ինքնահոս ճանապարհով հասնում են նախալեռնային գոտու ցածրադիր նիշերին և սարահարթ, որտեղ ապրող հասարակությունները դեռևս Ք.ա. 8-րդ հազարամյակից զբաղվել են անասնապահությամբ և երկրագործությամբ:

Ամենայն հավանականությամբ Ք.ա. 5-2-րդ հազարամյակների ուշ էնեոլիթ-բրոնզեդարյան հասարակությունների ջանքերով է, որ ստեղծվել են Արագածի, Գեղամա լեռների հանրահայտ ջրաբաշխական համակարգերը, որոնք փաստագրել և ուսումնասիրել է Ա. Քալանթարը (Kalantar, 1937; Khalantar, 2007; Kalantar, 1994): Ջրաբաշխական այդ համակարգի միավորները՝ լճակները, ջրամբարները, դրանք միմյանց հետ կապող առուներն ու ջրանցքները հասել են մինչև մեր օրեր և որոշակի փոփոխություններ ու արդիականացում անցնելուց հետո օգտագործվում են առ այսօր (նկ. 2): ՀՀ Արա-



Նկ. 2. Արհեստական ջրամբար Թալին քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, որը վերակառուցվել է խորհրդային շրջանում և շահագործվում է առ այսօր (ամենայն հավանականությամբ հանդիսացել է Ա. Քալանթարի կողմից փաստագրված ջրաբաշխական համակարգի օղակներից մեկը) (Source: A. Petrosyan)



Նկ. 3. Տուֆե ժայռահարթակին փորագրված ջրաբաշխական համակարգի «պլան-քարտեզ» (Ք.ա. 4-րդ հազարամյակ), Ագարակավան, Արագածոտն (Source: D. Arakelyan)

գածոտնի, Կոտայքի, Արմավիրի ու Վայոց ձորի մարզերում հայտնաբերվել են փորագրված քարեր. քառակուսի փորագրությունները պատկերել են արհեստական, իսկ շրջանաձևը՝ բնական լճեր, իսկ դրանք միմյանց միացնող գծերն արտացոլել են ջրավազաններն իրար կապող առուներն ու ջրանցքները: Գործնականում այս փորվածքները համարվում են ջրաբաշխական համակարգը վերարտադրող սխեմաներ կամ քարտեզներ (Khachatryan, 1971; Hovhannisyan et al., 2017; Hakobyan et al., 2021; Khachatryan, 1976) (նկ. 3):

Ջրի առաջացման համար այլընտրանքային և լրացուցիչ պաշար են նաև տեղական իջվածքներում ու փոստրակներում կուտակվող սառույցն ու ձյունը, անձրևաջրերը, որոնք, ինչպես և նախորդ դեպքում, կախված են տարեկան կլիմայական ցիկլերից ու մթնոլորտային տեղումների քանակից: Դրանք, ինչպես կարելի է տեսնել Հայաստանի տարբեր մարզերում (նույնիսկ ամենացածրադիր), ծնունդ են տալիս փոքրիկ լճակների ու ջրամբարների, հատկապես՝ գարնանային ամիսներին: Նման ջրավազանների առաջացման պատճառ են նաև



նկ. 4. Սեզոնային գետի հոսք, Թալին, Արագածոտն  
(Source: B. Gasparyan)



նկ. 5. Տուֆային շերտից բխող աղբյուր, Կաթնաղբյուր, Արագածոտն (Source: A. Petrosyan)



նկ. 6. Ժամանակավոր գետի չորացած հուն, որտեղ բացվել են տուֆային մայր ապարները, Դաշտաղեմ, Արագածոտն  
(Source: A. Adigyoalyan)



նկ. 7. Բնական աղբյուրներից սնվող արհեստական լճակ, Վարդահովիտ, Վայոց ձոր  
(Source: D. Arakelyan)



նկ. 8. Նստվածքային ապարներից ինֆիլտրացվող ջուր, Գնդեվազ, Վայոց ձոր (Source: R. Dan)



Նկ. 9. Դալմաթի ջրանցքի փոքր թունելի կողքին գտնվող անավարտ փորվածք, Հրազդան գետի կիրճ, Երևան  
(Source: D. Arakelyan)

տեղական մշտահորդ աղբյուրները, ժամանակավոր գետակների հոսքերը, որոնց հունն արդեն մայիս ամսին լիովին չորանում է (նկ. 4, 5):

Թեև ջրաբաշխական համակարգերի ստեղծման բնաաշխարհագրական նախապայմաններն ու հայեցակարգերը գրեթե նույնն են Հայաստանի մյուս տարածքների (Գեղամա լեռներ, Սյունիքի բարձրավանդակ, Արփա գետի ավազան, Սևանի գոգավորություն և այլն) համար, այսուհանդերձ, տեղանքի երկրաբանական առանձնահատկություններից և մայր ապարների կազմից կախված, առկա են մի շարք տարբերություններ: Դրանք հիմնականում վերաբերում են ջրի ինֆիլտրացիայի խնդրիներին, բուն ջրանցքների և առուների ջրագծերի ձևավորմանը, թունելային հատվածների կերտմանը և այլն, որոնցից է կախված շահագործվող ջրերի քանակը, որակը, սեզոնային ռեժիմը և այն սպառման տեղամասեր հասցնելու անհրաժեշտ չափաբաժինը կամ ծավալները: Օրինակ՝ հրաբխային ապարների դեպքում ջրային զանգվածի ներծծման կամ ինֆիլտրացիոն գործակիցն ավելի մեծ է նստվածքային ապարներով ձևավորված լանդշաֆտների համեմատ՝ կախված, իհարկե, ապարների ճաքքվածության աստիճանից (նկ. 6, 7):

Մինևույն ժամանակ նստվածքային լանդշաֆտներում ջրի ներթափանցման գործակիցը կախված է ապարներում կավային զանգվածների քանակից և մակարդակից, որոնցից էլ իր հերթին կախված է ջրի վարքն այդ տեղամասերում: Այսուհանդերձ, նստվածքային լանդշաֆտներում ջրային

պաշարների որակն ավելի ցածր է՝ դրա մեջ լուծված կրաքարի և կավային հանքանյութերի մեծ քանակի պատճառով:

Ապարների կառուցվածքը մեծ նշանակություն ունի նաև թունելային հատվածների հարդարումն ապահովելու և դրանք փորելու համար օգտագործված տեխնիկայի ընտրության հարցում, քանի որ ապարներում հանդիպել են միջանցիկ փորվածքն ապահովելու համար ոչ պիտանի հատվածներ, և անցյալի ժայռափոր վարպետները երբեմն ստիպված են եղել ընդհատել ընտրված տեղամասում սկսած աշխատանքը և փոխել թունելի տեղադիրքը: Թունելները և ջրացքների պատերը հաճախ են քայքայվել ապարների կառուցվածային առանձնահատկությունների (բեկորային կառուցվածքի) կամ ջրային հոսքերով հեղեղման ու սելավների, երկրաշարժերի արդյունքում փլուզվելու պատճառով: Երկրաբանական-հնագիտական այս իրողությունների հետ ունեցած հետադարձ կապն այն բազմաթիվ վիճակներ արձանագրություններն են, որոնք պատմում են ջրաշինական կառույցների վերանորոգման մասին: Ընդ որում, տարերային աղետների հարվածների տակ են եղել նաև լճերի ու ջրամբարների ամբարտակներն ու պատվարները, որոնց կայունությունն ապահովելու համար գտնվել և կյանքի են կոչվել բազմաթիվ ինժեներական լուծումներ: Ընդհանուր առմամբ, ասպիսին են այն դիսկերը, որոնց հետ Հայաստանի անցյալի ջրաշինարարները ստիպված են եղել առերեսվել իրենց նախագծերի իրականացման ընթացքում (նկ. 9):



նկ. 10. Թալինի ջրամբարի պատվարի մնացորդները հյուսիս-արևելքից (Source: D. Arakelyan)



նկ. 11. Թալինի ջրամբարի պատվարի մնացորդներն արևելքից (Source: D. Arakelyan)

Այսուհանդերձ, նշված բոլոր ռիսկերի հետ միասին ջրաբաշխական համակարգերը լուծել են իրենց առջև դրված հիմնական խնդիրը, և, չնայած ջրի անցուղային կորուստներին, փլզումներին, տարերային աղետների հարվածներին, հաջողվել է ճիշտ հաշվարկել ծրագծային պիկետներն ու թեքությունները, փորել բուն ջրանցները՝ թունելային հատվածներով հանդերձ, բացել առուներ ու կառուցել լանջային ջրհորդաններ, ապահովել պատվարների կայունությունը և դրա արդյունքում ջուրը հասցնել սպառման վայրեր:

Վերը նշված դիտարկումները հաշվի առնելով՝ մեր ուսումնասիրության մեջ ընդգրկել ենք միջնադարում շահագործված մի քանի ջրաշինական կառույցներ ևս. Շիրակի (Երեբոյքի ջրամբարը), Վալոց ձորի (Գսիշիկաձորի ջրանցքը), Սյունիքի (Ակնեռի ջրանցքը), Գեղարքունիքի (Մաքենյաց «Մայր առու» ջրանցքը) մարզերում, ինչպես նաև Երևանի վարչական սահմաններում գտնվող Հրազդան գետի կիրճի ջրանցքները, որոնք, ունենալով համանման գործառույթներ, կոնստրուկտիվ լուծումների հայեցակարգեր, միևնույն ժամանակ տարբերվում են միմյանցից՝ պայմանավորված տեղանքի երկրաբանական և երկրաձևաբանական առանձնահատ-

կություններով, ջրային պաշարների առաջացման և օգտագործման ծավալներով ու ռեժիմներով:

### Ջրային պաշարների կուտակման համակարգեր (լճակներ և փոքր ջրամբարներ)

Ջրաշինական նմանօրինակ կառույցների շարքին կարելի է դասել Թալինի՝ 8-րդ դարում կառուցված հանրահայտ ջրամբարը, որի շինարարության մասին վիմագիր արձանագրությունը փորագրված է Թալինի Կաթողիկե եկեղեցու սյուներից մեկին և հանդիսանում է ջրաշինական կառույցի հիմնադրման մասին մեզանում հայտնի առաջին հայատառ վիմագիրը (Asatryan, 1989; Asatryan, 2004: See also in this publication A. Harutyunyan’s article): Ջրամբարն ուսումնասիրած երջանկահիշատակ հնագետ Ե. Ասատրյանն իր հրատարակության մեջ տվել է կառույցի մանրամասն նկարագրությունը և հատակագիծը: Նրա կարծիքով՝ ջրամբարի ստեղծման համար ընտրվել է ներկայիս Թալինից հյուսիս գտնվող բլրաշարքերի արանքում առկա մի գոգավորություն, որտեղ կուտակվել են տեղումների արդյունքում առաջացող հոսքաջրերը (նկ. 10):

Ընդ որում, ամբարտակը կամ պատվարը կառուցվել է ձորակի ամենանեղ մասում և ունեցել մոտ 80 մ երկարություն: Դրա հիմքում կառուցվել է բազալտե խոշոր բլոկներով գետնախարիսխ, որն արտաքուստ պատված է եղել տուֆե սրբատաշ խոշոր բլոկներով, իսկ այդ բլուրն իրար հետ կապակցվել են բարձրորակ կրաշաղախով (նկ. 11):

6մ լայնություն և 2մ բարձրություն ունեցող պատվարը, որն ունի նկատելի կորություն՝ ամբարվող ջրի ճնշումը նվազեցնելու համար, ըստ հաշվարկի՝ պարփակել է 58-60 հազար մ<sup>3</sup> ջուր և բավարար է եղել այդ ճնշմանը դիմադրելու: Հնագետի կողմից բերված են ինժեներական հաշվարկներ, որոնք հիմնավորում են այս իրողությունը: Գործնականում ջրի այս քանակը բավարար է եղել տարվա մեջ երկու անգամ մոտ 100 հա տարածություն ոռոգելու համար: Ասատրյանը նշում է, որ ոռոգման կարիքների համար օգտագործվող այս ջրամբարից բացի Թալինն ունեցել է նաև խմելու ջրի մատակարարման համակարգ, որի համար օգտագործվել են դեպի հյուսիս ընկած աղբյուրների ջրերը, ինչը հաստատվում է եկեղեցիներից ոչ հեռու՝ շինարարական աշխատանքների ժամանակ բացված, միմյանց հետ ագուցված վեց կավե խողովակների հայտնաբերմամբ (Asatryan 1989):

Շեռամուտ լինելով Ասատրյանի ուսումնասիրությանը՝ 2023 թ. «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գիտական նախագծի հնագի-



Նկ. 12. Թալիսից հյուսիս-արևելք գտնվող լճերի համակարգը (օդային լուսանկար) (Source: A. Petrosyan)



Նկ. 13. Թալիսից հյուսիս-արևելք գտնվող լճերից մեկը (օդային լուսանկար) (Source: A. Petrosyan)

տական արշավախումբը մանրամասն ուսումնասիրության ենթարկեց Թալիսի ջրամբարի, ինչպես նաև ներկայիս քաղաքից հյուսիս-արևելք ընկած բլրաշարերի տարածքները: Ուսումնասիրության արդյունքում հաջողվեց փաստագրել մեկ տասնյակն անցնող լճերի մնացորդներ, որոնց մեծ մասի պատվարները բավական լավ են պահպանված (նկ. 12): Այս փոքրիկ լճերը կազմակերպված են վերը

նշված բլրաշարերի լանջերին ու բլուրների արանքում գտնվող գոգավորությունների կամ իջվածքների մեջ, որոնց եզրերն արգելափակված են պատվարներով (նկ. 13):

Ի տարբերություն ջրամբարի պատվարի՝ դրանք կառուցված են ավելի պարզունակ տեխնիկայով և ունեն քարահողային լիցք, թեպետև ջրի կառավարման հայեցակարգը նույնն է բլուրի պա-



Նկ. 14. Թալինի լճերից մեկի քարահողային պատվարի մնացորդները (օղային լուսանկար) (Source: A. Petrosyan)

րագայում՝ ջրային հոսքի բացթողում ամբարտակի կողային մասից: Դիտարկումը վկայում է, որ այստեղ չի կուտակվել ջրի այնքան զանգված, որ ամբարտակները կրաշաղախով ամրացնելու կարիք լիներ: Ավելին, դատելով այս լճերի տեղադիրքից՝ կարելի է եզրակացնել, որ դրանք օգտագործել են ժամանակին այստեղ բխող աղբյուրների և ճնհալի ջրերը, այսինքն ամբարել են մաքրության տեսանկյունից ավելի որակով ջուր, որը հավանաբար օգտագործվել է խմելու նպատակով (նկ.14): Ընդ որում, ինչպես երևում է տեղանքի տոպոգրաֆիկ ուսումնասիրությունից, բոլոր լճերից բաց թողնված ջուրը մեկտեղվել է մեկ ջրատարի մեջ, որն ուղղվել է դեպի եկեղեցիների տարածք:

Ինչ վերաբերում է Թալինի ջրամբարի տարածքի երկրաբանական հետազոտությանը, ջրահավաք լիճը գտնվել է ավելի հին՝ պլեյստոցենյան հասակի լճային գոգավորության տարածքում, որտեղ ջրերի հայելին ձևավորվել է կավավազային և հնահողերի շերտագրական հերթափոխով, ինչն էլ նպաստել է ջրային զանգվածների կուտակմանը: Կարծում ենք, որ այստեղ կուտակվել են ոչ միայն անձրևաջրերը, այլև սելավային հոսքերի և Արագածի ճնհալի ջրերը, ինչն էլ ստեղծել է ջրային մեծ պաշար, սակայն այդ ջուրը պետք է օգտագործվեր գյուղատնտեսական նպատակներով:

Ամփոփելով Թալինի ջրամատակարարման համակարգի նախնական ուսումնասիրության արդյունքները՝ կարող ենք նշել հետևյալը: Դրա հիմքերը դրվել են դեռևս բրոնզ-երկաթի դարաշրջանում, երբ գործել է հյուսիսարևելյան մասում գտնվող և Արագածի ջրաբաշխական ընդհանուր համակարգի օղակներից մեկը հանդիսացող լիճը: Վաղ միջնադարում, երբ արդեն մեծացել են գյուղատնտեսական կարիքները, կառուցվել է ջրամբար, որի ամբարտակը ձևավորելու համար կիրառվել է ժամանակի առաջադեմ ջրաշինական տեխնիկա: Ջուգա-

հեռաբար ստեղծվել է նաև բնակավայրին խմելու ջուր մատակարարելու լճային համակարգը, ինչի փաստագրումը նոր է սկսվել: Գործնականում, Թալինի օրինակի վրա տեսնում ենք, որ վաղ միջնադարյան հասարակությունն օգտագործել է ջրօգտագործման դիվերսիֆիկացված համակարգ՝ տարանջատելով գյուղատնտեսական կարիքների համար օգտագործվող ջուր և խմելու ջուր հասկացողությունները, այսինքն կրկնել է դեռևս Վանի թագավորության շրջանում ձևավորված ջրօգտագործման ավանդույթները: Այդ ավանդույթների շարքում տեսնում ենք նաև ջրի՝ տեղում առկա բոլոր հնարավոր աղբյուրների օգտագործումը:

Էական տարբերություններից մեկը, որ տեսնում ենք Վանի թագավորության դարաշրջանի և ուշ դասական ու վաղ միջնադարյան ջրաշինության մեջ, ջրամբարների ամբարտակների կառուցման տեխնիկան է: Թալինի ջրամբարի պատվարը կառուցված է կրաշաղախի օգտագործմամբ, մինչդեռ ուրարտական ամբարտակներն ունեն չոր շարվածք և ամրացված են կավավազային լիցքով: Թալինի ամբարտակի կառուցմանը հայեցակարգային առումով մոտենում է վաղ միջնադարյան մեկ այլ՝ Երեբոնյի տաճարի արևելյան կողմում ստեղծված ոչ մեծ լճի պատվարի կամ ամբարտակի կառուցվածքը (նկ. 15): Այն կազմավորված է սրբատաշ քարերի միմյանց զուգահեռ երկու շարքից, որոնց արանքում առկա է քարահողային լիցք (նկ. 16): Ամբարտակն ունի ավելի պարզունակ տեխնիկայով շարված հատվածներ, ինչը հիմք է տվել այն ուսումնասիրող հայ-ֆրանսիական արշավախմբին ենթադրել, որ վերջինս հիմնադրվել է Ք.ա. 1-ին–Ք.հ. 1-ին դարերում, ապա մի քանի փուլերով վերակառուցվել է վաղ միջնադարում՝ վերածվելով ձորակի երկու կողմերը միմյանց հետ կապող ուղեկամրջի (Tonapetyan, 2020; Donabédian, 2022): Մի կողմ թողնելով կառույցի մանրամասն նկարագրությունը՝ նշենք միայն, որ այն ունի անկյուն ձևավորող հատված՝ որմնահեծերի առկայությամբ, ինչից կարելի է ենթադրել, որ այն, Թալինի պատվարի նմանությամբ, ունեցել է ամբարված ջրի ճնշումը մեղմացնելու գործառույթ: Այստեղ նույնպես ջրային պաշարի ռեժիմի կարգավորումն իրականացվել է կողային հատվածից ջուրը բաց թողնելու ճանապարհով:

Ինչպես կարելի է տեսնել բերված օրինակներից, Հայաստանի վաղ միջնադարյան ջրաշինական կառույցների շարքում ամբարտակների կառուցման ոլորտը հասել է լուրջ նվաճումների թե՛ շինարարական տեխնիկայի և թե՛ ինժինեռական լուծումների տեսանկյունից: Այն զարգացրել է նախորդ դարաշրջանների ջրաշինության նվաճումները՝ ունենալով ուրույն ներդրում այս ասպարեզում: Կար-



Նկ. 15. Երեբոյքի տաճարի հարևանությամբ գտնվող լճի մնացորդները (օդային լուսանկար) (Source: A. Petrosyan)



Նկ. 16. Երեբոյքի տաճարի հարևանությամբ գտնվող լճի պատվարի մնացորդները (Source: A. Petrosyan)

ծում ենք, որ ապագայում ճիշտ կլինեն ձեռնարկել այդ ամբարտակների մանրամասն չափագրում և կառուցողական տեխնիկայի ուսումնասիրություն: Մինչույն ժամանակ, անհրաժեշտ կլինի իրականացնել ջրամբարների սեզոնային դիտարկում՝ պարզելու համար դրանցում կուտակվող ջրերի ծավալն ու առաջացման մեխանիզմը: Ոչ պակաս կարևոր նշանակություն կունենա դրանց հիմքում առկա նավածքների երկրաբանական ուսումնասիրությունը՝ հետախուզական փոսորակների իրականացման ճանապարհով, ինչը թույլ կտա կատարել բացված նստվածքների փոշեհատիկային և միկրոմորֆոլոգիական ուսումնասիրություն:

### Մշտահոս ջրերի տեղափոխման համակարգեր (ջրանցքներ և առուներ)

Միջնադարյան ջրաշինական կառույցների շարքում կենտրոնական տեղ են զբաղեցնում նաև ջրանցքներն ու առուները, որոնց խնդիրը մշտահոս ջրերը որոշակի կետից սպառման տարածք հասցնելն էր: Ինժինեռական տեսանկյունից բավական բարդ այս աշխատանքը, ինչպես արդել նշել ենք, կապված էր բավականին լուրջ ռիսկերի հետ, ինչի պատճառով տեղափոխվող ջրի մեծ կորուստներն էին, ինչպես նաև ջրանցքների ու դրանց թունելային հատվածների պարբերական խաթարումներն ու



Նկ. 17. Հատված՝ Աշտարակի «Ականատեսի առվի» վերջնամասից (Source: D. Arakelyan)



Նկ. 18. Աշտարակի «Ականատեսի առվի» վերջին թունելը (Source: D. Arakelyan)



Նկ. 19. Տապանաքրի վերածված «ջրային քարտեզի» հատված Աշտարակի հին գերեզմանոցում (Source: R. Dan)



Նկ. 20. Տապանաքրի վերածված «ջրային քարտեզի» հատված Աշտարակի հին գերեզմանոցում (Source: R. Dan)

խցանումները, որոնք հանգեցնում էին դրանց պարբերական մաքրման ու վերանորոգման անհրաժեշտությանը:

Դասական օրինակ է Աշտարակի «Ականատեսի առու» կամ «Մեծ առու» կոչվող ջրանցքը, որը միջնադարում ստեղծված կառույց է համարվում (նկ. 17):

Ջրանցքի նման հասակագրումը կապված է նախ նրա կառուցման մասին առկա ժողովրդական ավանդազրույցի հետ, համաձայն որի այն կառուցել է Ականատես մականունով ոմն Գրիգոր վարդապետ: Բացի դա, առվի և դրա հիմնանորոգման մասին առկա են վիմագիր արձանագրություններ և ազգագրական տեղեկություններ (Shahaziz, 1987; Saghmyan, 1998; See also in this publication A. Harutyunyan's and A. Manucharyan's article):

Մեր արշավախմբի կողմից իրականացված դաշտային աշխատանքների թիրախներից մեկն «Ականատեսի առվի»՝ Աշտարակ քաղաք մտնող հատվածի ուսումնասիրությունն էր, որն ընկած է

Երևան-Գյումրի մայրուղու՝ Քասախ գետի կիրճն անցնող ժամանակակից կամրջի և Հին կամրջի միջև ընկած աջափնյա տեղամասում: Ինչպես երևում է ուսումնասիրությունից, ջրանցքը ժայռափոր է և ունի թունելային հատվածներ, որոնցից վերջինը գտնվում է Հին կամրջից վերև: Թունելը փորված է բեկորային կառուցվածք ունեցող բազալտային հուքի մեջ և, ամենայն հավանականությամբ, պետք է որ ավելի վաղ ծագում ունենա, ինչպես և ջրանցքը (նկ. 18): Այն, որ Աշտարակի ջրաբաշխական համակարգը հիմնադրվել է դեռևս բրոնզ-երկաթի դարաշրջանում, վկայում են մեր կողմից Աշտարակի հին գերեզմանոցում փաստագրված ջրաբաշխական համակարգի «պլան-քարտեզների» մի քանի հատվածներ, որոնք վերածվել են տապանաքարերի (նկ. 19, 20): Դրա օգտին է խոսում նաև Աշտարակի գլխավոր փողոցի «Ուռոց» կամ «Ուռոց» անվանումը, ուր «Մեծ առվի» երկայնքով տնկված են եղել պաշտամունքի օբյեկտ հանդիսացող ուռիներ և սոսիներ՝ արտահայտելով Հայոց վաղագույն ծիսա-



Նկ. 21. Մաքենիսի «Մայր ստուն» (Source: A. Grigoryan)



Նկ. 22. Մաքենիսի «Մայր ստովի» վիճակոր հատվածներից մեկը (Source: A. Grigoryan)



Նկ. 23. Աշտարակի «Ականատեսի ստովի» վերջին թունելի ելքը (Source: D. Arakelyan)



Նկ. 24. Դավնայի ջրանցքի փոքր թունելի ելքը (Source: D. Arakelyan)



Նկ. 25. Կոտայքի ոռոգման ցանցի թունելի ելքը (Source: D. Arakelyan)

խորհրդապաշտական համակարգի նյութականացված դրսևորումները (Tumanyan, 2001):

Միջնադարյան ջրաշինական կարևոր հուշարձաններ են պահպանվել նաև Սևանի ավազանում: Հայտնի է, որ միջնադարյան, այսպես կոչված, «ագատ քաղաք» Մաքենիսը կարևոր բնակավայր է եղել տարանցիկ Դվին-Պարտավ առևտրային մայրուղու վրա (Ghevond Alishan, 1893; Smbateants, 1895; Manandyan, 1936): Բնակավայրն ունեցել է կոմունալ հարմարություններ. գյուղից 5 կմ հարավ գտնվող «Յոթ աղբյուր» կոչվող վայրում գտնվել են 50 սմ երկարությամբ և 10-15 սմ տրամագծով կավե խողովակներ, իսկ Մաքենյաց վանքի տարածքում ավելի լայն՝ 30-40 սմ տրամագծով կավե խողովակներ, որոնցով հավանաբար իրականացվել է ջրամատակարարում կամ ջրահեռացում: Ենթադրվում է, որ նույն ժամանակաշրջանին է վերաբերում նաև գյուղի «Մայր առուն», որը տեղ-տեղ վիմափոր է (Arakelyan, 1958; Khachatryan, Kalantaryan, 1972)<sup>3</sup>:

Մեր արշավախմբի կողմից Մաքենիսի տարածքում կատարված աշխատանքների ընթացքում լրացուցիչ հետազոտության է ենթարկվել Մաքենիսի «Մայր առուն», որը, «Ականատեսի առվի» նմանությամբ, ունի ժայռափոր հատվածներ, որոնք բացվել են հրաբխային ապարների մեջ: Ի տարբերություն Աշտարակի առվի, Մաքենիսի առուն փորվել է ավելի փոխոր՝ խարամով հարուստ ապարների մեջ, սակայն կրում է շինարարական վիմափոր կառույցների արարման շինարարական միևնույն տեխնիկան<sup>4</sup> (սկ. 21, 22):

Եթե փորձենք ամփոփել ուսումնասիրության արդյունքները, ապա բերված օրինակները ցույց են տալիս, որ ժայռափոր ջրանցքների այս թունելները չափազանց մոտ են Հրազդանի կիրճի միջին հոսանքի ձախ մասում կառուցված Դավնայի ջրանցքի փոքր թունելին, որը փորված է բեկորային կառուցվածք ունեցող բազալտային հոսքի մեջ (սկ. 22-24):

Ինչպես երևում է բերված նկարների համեմատությունից, բոլոր երեք թունելների ելքային մասերում առկա են ավելի լայն ու մեծ փորվածքներ, քան ունեն բուն ջրատար թունելները: Ավելին, թունելների փորվածքն իրականացվել է որոշակի թեքությամբ, ինչը հավանաբար պետք է կապված լիներ ապարն ավելի հեշտ փորելու հմտությունների, ինչպես նաև բեկորային նյութի կայունությունը ջրի ճնշումից ու բերվող քարերի հարվածներից ավելի

ապահով պահելու նպատակի հետ: Սակայն անգամ այս լուծումները բավարար չեն եղել երաշխավորելու ջրանցքների և դրանց թունելների փրկությունը կազմաքանդումից, երբ հեղեղման ու վարարումների ընթացքում ուժեղացած ջրի հոսանքը և տեղատարվող քարերը մեծ վնաս են հասցրել այս կառուցներին, ինչն էլ պատճառ է դարձել դրանց պարբերական վերանորոգման աշխատանքների իրականացմանը: Այսուհանդերձ, կարող ենք պնդել, որ թե՛ «Ականատեսի առուն» և թե՛ «Մաքենյաց Մայր առուն» լիովին համապատասխանում են ուրարտական ջրաշինության կանոններին ու սկզբունքներին և պետք է որ այս դարաշրջանի կառույցներ լինեն, որոնք, Դավնայի ջրանցքի օրինակով, շահագործվել են միջնադարում և շահագործվում են նաև մեր օրերում:

Հիդրոթունելաշինության այս ավանդույթներն անգամ կիրառվել են մեր օրերում: Լավագույն օրինակ է Կոտայքի ռոտզման ցանցի թունելի ելքը, որը կառուցված է միևնույն սկզբունքներով, միայն այն տարբերությամբ, որ ամրացվել է կառույցի ամենաթույլ տեղը՝ ելքային հատվածի պատերը, այն էլ ազգային ճարտարապետությանը բնորոշ լուծումներով՝ թունելի ելքին հաղորդելով մոնումենտալ կառույցի շքամուտքի և ճակտոնի տեսք և կրկնելով 1940-ական թվականներից հայկական ճարտարապետության մեջ մեծ տարածում ստացած աղբյուր-հուշարձանների հիմնական տիպը (Mnatsakanyan, 1956, 208-224) (սկ. 25):

Սկզբունքային այլ մոտեցում ենք տեսնում Սյունիքի մարզում գտնվող Ակների ջրանցքի շինարարության հայեցակարգում: 932 թվականին կառուցված այս ջրանցքը, որը սկիզբ է առնում Ձագեձորի բարձունքների՝ Գորիս գետի Վարարակն կոչված լեռնային ակունքներից, անցնելով մոտ 30 կմ տարածք, ջուրը հասցրել է Տաթևի վանքի բարձունքի ստորոտ (Ցաքուտ կոչվող վայր) (Mnatsakanyan, 1956, 208-224): Ընդ որում, պատմիչ Ստեփանոս Օրբելյանի հաղորդած տեղեկությունն այն մասին, որ դրա շինարարությունը նախաձեռնած Հակոբ եպիսկոպոսը մինչև ջրանցքի կառուցումը գնել է Վարարակնի աղբյուրները, այսինքն՝ այն սնուցող աղբյուրները, ինքնին ուշագրավ երևույթ է: Իհարկե, ջրանցքի կառուցման մասին, ինչպես և «Ականատեսի առվի» պարագայում, առկա են նաև ժողովրդական ավանդազրույցներ:

3 Ըստ ժ. Խաչատրյանի և Ա. Քալանթարյանի՝ Սևանի ավազանում իրենց կողմից դեկավարվող արշավախումբը Ակունք գյուղի «Գումեր» կոչված վայրում՝ աղբյուրի մոտ, փաստագրել է 13 մեծ քարե տաշտեր, որոնք աստիճանաբար իջնում են ներքև և փոքր ակունքներով հաղորդակցվում միմյանց: Այս համալիրը կապվում է անասնապահության հետ և ուշագրավ երևույթ է: Գյուղատեղիում պահպանված նյութերը հասակագրվում են 15–16-րդ դդ. (Khachatryan, Kalantaryan 1972): Խոնցների համանման շարք է պահպանվել Վայոց ձորի մարզի Կարմրաշեն գյուղի մոտակա գյուղատեղիում:

4 Արշավախումբը Գեղարքունիքում կատարած դաշտային հետախուզական աշխատանքների ընթացքում ջրաշինական կառույցների համակարգ՝ այդ թվում ամբարտակ է փաստագրել նաև Գավառի «Աղի գյուղ» բնակատեղիում:



Նկ. 26. Ակների ջրանցքի համայնապակերը, Սյունիք (Source: D. Arakelyan)



Նկ. 27. Հատված Ակների ջրանցքից (Source: D. Arakelyan)



Նկ. 28. Ակների ջրանցքից դեպի Տաթևի վանք տանող ուղեգծի վրա գտնվող փոքր լիճ (Source: D. Arakelyan)



Նկ. 29. Տաթևի Մեծ Անապատ մենաստանի դիմաց՝ կտրվածքում բացված խողովակաշար (Source: D. Arakelyan)

Ակների ջրանցքի մնացորդները պահպանված են առ այսօր, չնայած Շիրմագանի այն պնդմանը, որ այն 14-րդ դ.-ում արդեն չէր գործում, քանի որ 13-րդ դ.-ում բավականին վնասվել էր և չէր վերանորոգվել, ինչպես դա իրականացրել էր Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսը 1294 թ.-ին՝ համաձայն իր կողմից հենց ջրանցքի կողքին «Ճղած քար» կոչվող վայրում թողած արձանագրության, կրկնելով դեռևս Վանի թագավորության դարաշրջանում ջրանցքների շինարարության մասին վավերագրեր թողնելու ավանդույթը:

Այսուհանդերձ, մեր կողմից տարածքի այցելության և ուսումնասիրության ընթացքում ակնհայտ դարձավ, որ Ակների ջրանցքն, իրոք, կառուցվել է շատ բարդ երկրաբանական պայմաններ ունեցող լանդշաֆտում և գեոմորֆոլոգիական առումով հաղթահարել անկայուն՝ լվացվող լանջերով խոր ձորեր ու սելավատար հատվածներ (նկ. 26): Ջրաշինական այս կառույցի հեղինակները կամ փորձել են շրջանցել դրանք՝ կորություն տալով ծրագծին, կամ էլ ուղղակի անցնել դրանց միջով, որոնք էլ դարձել են դրա ամենաթույլ՝ քայքայման վտանգի առջև կանգնած հատվածները: Ամեն դեպքում, առվի

ծրագիծը կառուցված է ինժեներական մեծ հմտությամբ, ինչը պահանջում էր նիշերի ճիշտ ընտրություն: Ինչ վերաբերում է առվի փորման սկզբունքներին, ապա, ճիշտ է, դա իրականացվել է հրաբխային լանդշաֆտում, սակայն, ի տարբերություն Արագածոտնի, այստեղ առկա է ինտենսիվ հողառաջացում, և ջրատար մասը կամ գոգավորությունն անցնում էր սևահողի հետ խառնված քարաբեկորների (ոչ ստաբիլ գրունտի) միջով, ինչն ինքնին բացասաբար պետք է ազդեր ջրանցքի կայունության և տեղափոխվող ջրի որակի վրա (նկ. 27):

Իհարկե, ջրանցքի շինարարության նպատակը Տաթևի վանքի գյուղատնտեսական կարիքների մասին հոգ տանելն էր, քանի որ վանքն ուներ ընդարձակ կալվածքներ և հատկապես խաղողի այգիներ, որոնց հետքերն այսօր էլ նկատելի են Որոտանի ձորում՝ Տաթևի Մեծ Անապատ մենաստանի շրջակայքում: Սակայն, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, սարահարթ իջնելիս ջրանցքը ճյուղավորվել է և դրա ջրերի մի մասն ուղղվել է ոչ մեծ ջրամբարների սնուցմանը: Ամենայն հավանականությամբ սա նպատակ է ունեցել հանգստացնել ու դանդաղեցնել ջրի հոսքը, ապա նաև ֆիլտրել՝ խմե-



Նկ. 30. Գնիշիկաձորի լայնացող հատվածի համայնապատկերը (օդային լուսանկար) (Source: R. Dan)

լու համար օգտագործելու նպատակով: Այն, որ դեպի ջրանցքի վերջնակետ է հասցվել նաև խմելու ջուր, վկայում են Տաթևի Մեծ Անապատ մենաստանի դիմաց՝ Սատանայի կամրջի հարևանությամբ առկա կտրվածքում բացված երկշարք խողովակաշարի մնացորդները, որոնք ամրացնելու համար օգտագործել են կրաշաղախ և քարաշար (նկ. 28, 29): Դրանք հիշեցնում են Հայաստանի միջնադարյան մյուս բնակավայրերում՝ Դվինում, Թալինում, Ամբերդի ամրոցում, Մաքենիսում և այլուր, վերը բերված օրինակները:

Գործնականում Ակների ջրանցքը, Հայաստանի տարածքի մի շարք միջնադարյան առուների նմանությամբ, չունի ժայռափոր հատվածներ. հատկանիշ, որն ավելի բնորոշ է Վանի թագավորության դարաշրջանի ջրանցքներին, սակայն այն իր վրա կրել է ավելի ծանր տեխնիկական պահանջներ՝ ներառելով պարբերական վերահսկողության ու վերանորոգման միջոցառումների կարիք:

Միջնադարյան ջրանցքների գերազանց օրինակներ են պահպանվել նաև ՀՀ Վայոց ձորի մարզում: Դրանց հետքերը հստակ երևում են Ելփին, Չիվա, Արենի, Գետափ, Շատին, Հորս, Սալլի, Քարագլուխ, Մալիշկա, Գնդեվազ և այլ գյուղերի շրջակա տարածքներում: Որպես օրինակ ուզում ենք կանգ առնել մեր կողմից ուսումնասիրված Գնիշիկաձորի ջրանցքի կամ, ավելի ճիշտ, առվի վրա, որը խաղողի այգիներ ջրելու համար նախատեսված կառույցի դասական նմուշ է:

Գնիշիկ գետը, որն Արփայի աջակունյան վտակներից է, մինչ նրան հարավից միանալն անցնում է բավական գեղատեսիլ և խորը կիրճով, որը ձևավորված է դևոնի, պերմի, վերին կավճի և միջին էո-

ցենի կրաքարերից, ավազաքարերից, կոնգլոմերատներից, կվարցիտներից, ինչպես նաև չորրորդական հասակի ալյուվիալ և կոլյուվիալ ծագման ավազներից, գետաքարերից ու կավավազներից: Հրաբխածին ապարներն այստեղ լիովին բացակայում են: Այս գոյացությունների հողմնահարման արդյունքում առաջացած նստվածքները տարածվում են կիրճի ստորին հատվածներում: Գետի՝ Նորավանքից ներքև ընկած միջին հոսանքում կիրճը նկատելիորեն լայնանում է, որտեղ կարելի է տեսնել դեռևս զարգացած միջնադարում ստեղծված դարավանդաձև այգիների հետքերը, որոնք շարունակել են իրենց գոյությունը մինչև 20-րդ դ. (նկ. 30, 31):

Այս այգիների մասին հիշատակություններ կան Նորավանքի նվիրատվական արձանագրություններում (Barkhudaryan, 1967; Matevosyan, 2017; Hobosyan et al., 2021), սակայն չկա որևէ հիշատակություն դրանք ռոտզող ջրանցքի մասին, որն անցնում է գետի աջ կողմով՝ այգիներից վերև, լանջի երկայնքով՝ անմիջականորեն հարելով այգեգործական լանդշաֆտին, որտեղից էլ կազմակերպվել է վերջիններիս ռոտզումը:

Ուսումնասիրելով ջրանցքի կառուցվածքն ու ծրագիծը, հաջողվեց գտնել դրա սկիզբ առնելու կետը, որը մեկնարկում էր այգիներից ոչ հեռու, դրանցից մի փոքր հարավ ընկած տեղամասում՝ Գնիշիկի աջ ափից, ապա, անցնելով ժայռերի տակով, հասնում մինչև այգիներն ու ձգվելով մոտ 800 մ՝ վերջանում այգիների սահմանի վերջնամասում (նկ. 31, 32)<sup>5</sup>:

Դատելով բուն ջրանցքի կառուցվածքից, այն փորվել է նստվածքային ծագում ունեցող գրունտի մեջ, և, թեպետ հիմնականում ունեցել է ուղղագիծ


5 Ջրանցքն այսօր արդեն չի գործում, քանի որ դեպի Նորավանք տանող ճանապարհի շինարարության արդյունքում այն մնացել է ճանապարհի աջ կողմում և կտրվել ու առանձնացել է ակունքից:



նկ. 31. Գնիշիկաձորի լայնացող հատվածի համայնապատկերը, որտեղ երևում են միջնադարյան այգիների մնացորդները և դրանք սնուցող ջրանցքը (արբանյակային լուսանկար) (Source: B. Gasparyan)



նկ. 32. Գնիշիկ գետի կիրճի աջակողմյան հատվածում տարածվող դարավանդային այգիների մնացորդները (օդային լուսանկար) (Source: R. Dan)



նկ. 33. Գնիշիկի կիրճի դարավանդային այգիները ոռոգող ջրացքը (օդային լուսանկար) (Source: R. Dan)



Նկ. 34. Մամնիի ջրանցքը Հրազդան գետի ձախ ափին՝ Երևանի Աջափնյակ թաղամասի տակ (օդային լուսանկար) (Source: A. Petrosyan)

ծրագիծ, առկա են նաև կորացող հատվածներ, որոնք խնդրահարույց պետք է լինեն ջրի հոսքի անխափան աշխատանքի համար: Չի բացառվում, որ դրա պատճառը տեղի երկրաբանական առանձնահատկություններն են եղել, որոնք կազմավորող ապարներն ու նստվածքները տեղ-տեղ այնքան փոխք ու անկայուն են եղել, որ չեն բավարարել ջրաշինական պահանջներին, և ջրանցքը փորելիս աշխատել են շրջանցել նման տեղամասերը: Դրա պատճառ կարող էին լինել նաև ջրանցքի անցնելու լանջային տեղամասի անհարմարությունը, լանջային նստվածքների ձևավորման համեմատաբար մեծ արագությունը և այլն (Նկ. 32, 33): Այսուհանդերձ ակնհայտ է, որ այս փոքրիկ ծավալի ջրանցքները ևս կարիք են ունեցել անընդհատական հսկողության և խնամքի:

Գնիշիկի առվի նման փոքր ջրանցքներն, իհարկե, ունեցել են զուտ տեղական նշանակություն: Հավանաբար այդ իսկ պատճառով դրանց նվիրված շինարարական կամ վերանորոգման բնույթի վիճակի արձանագրություններ չկան: Մինևույն ժամանակ այս համեմատ ջրաշինական կառույցները ևս ունեցել են կարևոր նշանակություն, քանի որ ապահովել են այգիների ոռոգումն ու երաշխավորել առատ բերք: Դա վանական համալիրների տնտեսությունը և միաբանության բուն գործառույթը (այդ թվում՝ գիտակրթական) պահպանելու հիմքերից մեկն էր, քանի որ ստեղծում էր հավելյալ եկամուտ:

Միջնադարյան ջրաշինական կառույցների ուրույն և բացառիկ օրինակներ են նաև Երևանի խառնուրդյան գոյության ընթացքում սարդարների կողմից կազմակերպված ուրարտական ջրանցքների

վերանորոգման և վերագործարկման աշխատանքները, որոնց հետքերը մինչև այժմ էլ նկատելի են Հրազդան գետի կիրճում: Որպես օրինակ ներկայացնենք մեր կողմից մասնակի ուսումնասիրված Մամնիի ջրանցքը:

Այն անցնում է Հրազդան գետի կիրճի ձախափնյա ժայռային գոյացությունների միջով և կիրճում գտնվող մյուս երկու ջրանցքների հետ միասին (Դավանյի և Աբուհայաթի) համարվում է ուրարտական ջրաշինական մտքի արգասիք (Նկ. 34):

Սկիզբ առնելով Հրազդան գետից՝ ջրանցքն անցնում է մոտ 10 կմ և ավարտվում Թոխմախան (Վարդավառի) լիճ թափվելով (Aghakhanyan, Martirosyan, 1984): Ներկայումս այն չի գործում, իսկ որոշակի հատվածներ էլ անդառնալիորեն ոչնչացված են:

Վերգետնյա ուսումնասիրության ենթարկելով Երևանի վարչական տարածքով անցնող ջրանցքի որոշ տեղամասեր՝ մասնավորապես Աջափնյակ և Այգեճոր թաղամասերի տակ տարածվողները, կարելի է հանդիպել վերջինիս բավականին լավ պահպանված հատվածների, որոնք ներկայացված են հզոր հենապատերով, ջրուղորդիչ պատաշարերով և դեպի այգիներ ջուր բաց թողնելու համար նախատեսված ջրհորդաններով: Ընդ որում, եթե դիտարկենք այդ կառույցների առանձին ավելի փոքր տեղամասեր, ապա ակնհայտորեն կտեսնենք շինարարական տարբեր հումք (բազալտի տարբեր տեսակներ) և մշակման ու պահպանվածության տարբեր աստիճան ունեցող օրինակներ: Ավելին, կառույցներն ակնհայտորեն տարբերվում են նաև իրենց կառուցման տեխնիկայով և հայեցակարգով:



նկ.35. Մամոնի ջրանցքը Հրազդան գետի ձախ ափին՝ Դավթաշենի կամրջի հարևանությամբ (օդային լուսանկար) (Source: A. Petrosyan)



նկ.36. Մամոնի ջրանցքի քարաշար հատված Երևանի Աջափնյակ թաղամասի տակ, Չորաբերդի հարևանությամբ (օդային լուսանկար) (Source: R. Dan)



նկ.37. Մամոնի ջրանցքի քարաշար հատված Երևանի Աջափնյակ թաղամասի տակ, Չորագյուղի հատվածում (Source: R. Dan)



նկ.38. Մամոնի ջրանցքի քարաշար հատված Երևանի Աջափնյակ թաղամասի տակ, Չորագյուղի հատվածում (Source: R. Dan)



Նկ. 39. Մամոնի ջրանցքի քարաշար հատված Ս. Սարգիս եկեղեցու տակ (Source: R. Dan)



Նկ. 40. Մամոնի ջրանցքի քարաշար հատված Ս. Սարգիս եկեղեցու տակ (Source: R. Dan)

Առկա են խնամքով մշակված՝ քառակուսի ձև ունեցող բազալտ քարերից կանոնավոր կերպով, չոր շարվածքի կիրառությամբ բարձրացված հատվածներ, միևնույն քարերից, սակայն անկանոն շարվածքով հատվածներ, որոնք վերաշարվել են հիմնական պատերի փուլգումից հետո, ավելի կոպտատաշ և կրկին չոր շարվածքով հարդարված հատվածներ, ինչպես նաև կանոնավոր ձև ունեցող, սրբատաշ քարերով կառուցված հատվածներ, որոնք արվել են ցեմենտ-բետոնային շաղախով և հանդիպում են միայն ջրանցքի բուն՝ ջրատար մասում (Նկ. 36-40):

Գործնականում, ջրանցքի ողջ կառուցվածքը դիտարկելիս կարելի է տեսնել դրա շինարարության և վերանորոգման տարբեր փուլերին վերաբերող շերտագրական իրավիճակներ, ինչն, իհարկե,

ուսումնասիրությունների ներկայիս փուլում հնարավոր չէ ենթարկել ժամանակագրական ճշգրիտ որոշման: Հնարավոր է միայն ենթադրություններ անել, թե շինարարական կամ վերականգնողական փուլերից որը երբ է կյանքի կոչվել:

Այսպես, ինչպես արդեն նշել ենք, ուսումնասիրողները միահամուտ կերպով Մամոնի և Հրագդանի կիրճի մյուս երկու ջրանցքները վերագրում են Վանի թագավորության դարաշրջանին, և այս հարցում նրանց հետ դժվար է չհամաձայնվել: Ջրանցքներն ունեն ժայռային և ժայռափոր-թունելային հատվածներ, կտրուկ լանջերն անցնելու տեղամասերում հզոր, կանոնավոր, չոր շարվածքով հենապատեր, դարավանդաձև կառուցվածքներ, հիմքում առկա ջրաբաշխ հանգույցներ կամ ջրհորդաններ, որոնք ավելի բնորոշ են ուրարտական ջրաշինա-



Նկ. 41. Մամոնիի ջրանցքը Հրազդանի ձախ ափին՝ Երևանի Այգեձոր թաղամասի տակ (օդալուսանկար) (Source: A. Petrosyan)

կան կառույցներին (նկ.35, 38-41): Սա իսկապես հիմք է տալիս դրանց ստեղծումը և սկզբնական շահագործման փուլը կապել տվյալ պատմական դարաշրջանի հետ, ավելի ստույգ՝ Էրեբունի բերդաքաղաքի և նրա վարչական տարածքի ջրամատակարարման հետ, անգամ եթե սեպագիր աղբյուրներում այս ջրանցքների մասին որևիցե տվյալ բացակայում է: Միննույն ժամանակ, պատմական աղբյուրներից հայտնի են Մամոնի մի շարք վերանորոգումների մասին, որոնցից առաջինը վերաբերում է զարգացած միջնադարին՝ 11-րդ դ. (Shirmazan, 1961; Aghakhanyan, Martirosyan, 1984): Ակնհայտ է, որ այս իրադարձությունը դժվար է կապել ջրանցքի կառուցապատման մեջ երևացող շինարարական փուլերից կամ շերտերից մեկի հետ:

Ավելի հավանական ենք համարում, որ կառուցապատման տեսանկյունից առանձնացող փուլերից մեկը կարելի է կապել հենց Երևանի խանության շրջանում իրականացված վերանորոգումների հետ, ինչի մասին կան բազմաթիվ վկայություններ (Shirmazan, 1961; Hobosyan et al., 2021):

Կարծում ենք, որ այս փուլն արտահայտված է վերը նշված կանոնավոր մշակված քառակուսի բազալտե բլոկների անկանոն վերաշարման արդյունքում ստացված պատաշարերով: Եվ վերջապես, Մամոնիի ջրանցքը վերակառուցվել ու վերագործարկվել է Խորհրդային շրջանում, ավելի ստույգ՝ 20-րդ դ. 30-ական թթ., ինչի արտահայտությունն են ցեմենտ-բետոնով շարված սրբատաշ քարերը ջրանցքի բուն՝ ջրատար մասերում: Պետք է ավելացնել նաև, որ ԵրՀԿ-1-ի շինարարության ժամանակ, կապված գետի հունի ձևափոխման հետ,

ջրանցքի Այգեձորի տակով և Ծիծեռնակաբերդի դիմացով անցնող հատվածը ենթարկվել է էական վերակառուցման (նկ. 41): Իրականում, առաջարկվող վերակազմությունը կարելի է դիտարկել միայն որպես խիստ նախնական աշխատանքային վարկած, քանի որ կիրճի ձախափնյա գառիթափի մեջ՝ դրա տարբեր հիպոտեզների կիսերի վրա երևում են նաև այլ ջրանցքների հետքեր (նկ. 35): Դրանք Մամոնիի վերականգնման ընթացքում դրա մակարդակն ու հունը փոխելու իրողություններ են, թե՛ զուգահեռ կառուցված այլ ջրանցքների մնացորդներ, ներկայումս դժվար է ասել: Այսուհանդերձ, խորապես համոզված ենք, որ ապագայում կարելի է կատարել ջրաշինական այս հուշարձանների որոշ հատվածների պեղման և չափագրման աշխատանքներ, կազմել դրանց մանրամասն հանույթները, ինչը թույլ կտա պատասխանել վերևում քննարկված հարցերին:

Ընդհանուր առմամբ, Մամոնիի ծրագծին հարող տարածքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև վերջնական նշանակետին հասնելն այն ոռոգել է Հրազդան գետի երկայնքով տարածվող դարավանդաձև մեծաթիվ այգիներ, որոնք հին Երևանի գյուղատնտեսական լանդշաֆտի հիմքն են հանդիսացել: Այդ իսկ պատճառով էլ ջրանցքն անցել է բազմաթիվ վերանորոգումներ ու վերակառուցումներ պատմական տարբեր դարաշրջաններում, չնայած որ նման կառույց պահելն ու սպասարկելն աշխատատար և թանկ հաճույք է եղել, մասավանդ՝ Երևանի տարածքի մշտական հեղեղումների պայմաններում, որոնք հսկայական վնաս են հասցրել թե՛ բուն քաղաքին և թե՛ նրա ջրաբաշխական համա-

կարգերին (Sargsyan, 2020):

Մամոնի ջրանցքը Հրազդանի կիրճում կառուցված մյուս ջրաշինական հուշարձանների հետ մեկտեղ Վանի թագավորության դարաշրջանում ստեղծված ջրանցքների՝ տևական և որոշակի ընդհատումներով շահագործման մի վաղ օրինակ է, որը ցույց է տալիս ջրային պաշարների կառավարման ավանդույթների շարունակական բնույթը, ինչպես նաև այն ներդրումը, որն ունեցել է միջնադարյան Հայաստանի բնակչությունն այն պահպանելու և զարգացնելու գործում:

### Քննարկում

Ներկայացված աշխատանքում քննարկեցինք Հայաստանի տարածքում վաղ միջնադարում կառուցված երկու ջրամբարներին՝ Թալինի և Երեբունյեի վերաբերող տվյալներ: Թալինի ջրամբարի պարագայում ցույց տրվեց, որ այն ջրաշինական կառույցի մի բացառիկ օրինակ է, որը ստեղծվել է ժամանակի ինժեներական գիտելիքների ամենաբարձր մակարդակով, սակայն միտված է եղել բացառապես ոռոգման ջուր ամբարելու համար: Տարածքի հավելյալ հնագիտական ուսումնասիրության արդյունքում փաստագրված ճնհայի և աղբյուրների ջրերի կուտակման նորահայտ լճակների նախնական ուսումնասիրության շնորհիվ գուցա հետագայում առաջարկեցինք այն վարկածը, որ դրանք նպատակաուղղված են եղել խմելու ջրի պաշարների կուտակմանը: Այսինքն՝ փորձ կատարվեց ցույց տալ, որ արդեն վաղ միջնադարի բնակչության համար ջրային պաշարների կառավարման հայեցակարգում կարելի էր տարանջատել ոռոգման ջուր և խմելու ջուր հասկացողությունները: Այսուհետև, համեմատության մեջ դնելով Թալինի ջրամբարի ամբարտակը Երեբունյեի հետ, մատնանշեցինք դրանց նմանություններն ու կառուցողական մոտեցումների տարբերությունները:

Հաջորդիվ նկարագրեցինք միջնադարյան Հայաստանի մի շարք նշանավոր ջրանցքների՝ Աշտարակի «Ականատեսի առվի» և Մաքենյաց «Մայր առվի» առանձնահատկությունները և համեմատեցինք դրանց ժայռափոր թունելները Հրազդանի կիրճի Դավնայի ջրանցքի փոքր թունելի հետ՝ ցույց տալով դրանց միջև առկա աղերսները, ինչի հիման վրա էլ եզրակացրեցինք, որ մեծ հավանականությամբ դրանք Վանի թագավորության դարաշրջանի ջրաշինական կառույցներ են, որոնք շահագործվել են միջնադարում և օգտագործվում են մեր օրերում:

Քննարկման ենթարկված մյուս ջրաշինական կառույցն Ակների ջրանցքն է, որն իր երկրաբանական-երկրաձևաբանական և շինարարական առանձնահատկություններով ամբողջությամբ տարբեր-

վում է նախորդ երկու ջրանցքներից և կառուցվել է հենց միջնադարում: Այսուհանդերձ, Ակների ջրանցքը սպառողներին մատակարարել է և՛ ոռոգման, և՛ խմելու համար պիտանի ջուր: Որպես հավելյալ օրինակ քննարկվեց նաև Գնիշիկաձորի ջրանցքը, որն ունի զուտ տեղական նշանակություն և ոռոգման ջուր է մատակարարել Նորավանքի վանքապատկան այգիներին: Չնայած փոքր ծավալներին և վիմագիր արձանագրությամբ վկայված չլինելուն՝ դրա նշանակությունը դժվար է թերագնահատել վանքապատկան տնտեսության առաջընթացն ապահովելու գործում:

Եվ վերջապես, քննարկման ենք ենթարկել Հրազդանի կիրճով անցնող ջրանցքներից մեկի՝ Մամոնի կամ Շահումյանի առվի ուսումնասիրության արդյունքում բացահայտված շինարարական փուլերը, որոնք արտահայտված են դրա մնացորդների կառուցողական մանրամասներում: Համաձայնելով ուսումնասիրողների կարծիքին, որ Մամոնի ևս ուրարտական ջրաշինական կառույցների դասին պետք է վերագրել, փորձել ենք ցույց տալ միջնադարում և խորհրդային շրջանում ջրանցքի վերանորոգման և վերակառուցման փուլերը, ինչի հիման վրա եզրակացրել ենք ներդրման այն հսկայական ծավալների մասին, որոնք կատարել է միջնադարյան Հայաստանի բնակչությունը դրանք սպասարկելու, վերանորոգելու և վերագործարկելու համար:

### Եզրակացություններ

Միջնադարյան Հայաստանի ջրաշինարարական մտքին և լավագույն ջրաշինական կառույցներին ու համակարգերին նվիրված ուսումնասիրությունն իրականացվել է վիմագրական և հնագիտական հարուստ համատեքստի տվյալների համադրությամբ: Հետազոտության արդյունքում ձեռք բերված տվյալներից կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանի բնակչության և կառավարման մարմինների ներդրումը ջրաշինական կառույցների նախագծման, ստեղծման և սպասարկման գործում ահռելի է, առանց որի տնտեսական կյանքի առաջընթացի ապահովումն անհնարին կլիներ: Գործնականում նրանք շարունակել են խնամել և շահագործել բրոնզ-երկաթի դարաշրջաններում ստեղծված կարևորագույն ջրաբաշխական համակարգերը, նաև ստեղծել նորերը: Դրանք կրել են ջրի շահագործման միևնույն ավանդույթները, որոնք ձևավորվել են նախապատմական և մինչպատմական ժամանակաշրջաններում: Ջրի օգտագործումը դիվերսիֆիկացվելուց բացի կանոնակարգվել և ապահովվել է դրա սպառման իրավական կողմը:

Այսուհանդերձ, չնայած թվարկված ձեռնար-

կումներին և ձեռքբերումներին, ոռոգման ջուրը միշտ էլ լիարժեք կերպով չի բավարարել Հայաստանի բնակիչների կենցաղի և գյուղատնտեսության կարիքները: Այն ունակ չեղավ լուծելու անգամ խորհրդային իշխանությունը՝ իր նախադեպը չունեցող ոռոգման ծրագրով, որը նաև սկսեց շահագործել Սևանա լճի ջուրը:

Կլիմայի գլոբալ ջերմացման, բնակչության և տնտեսության աճող պահանջների առկայությամբ Հայաստանի Հանրապետությունը ջրային պաշարների կառավարման և սպառման առումով, թերևս, կանգնած է նույնպիսի մարտահրավերների առջև, ինչ որ նրա անցյալի հասարակությունները: Կարծում ենք, որ միջնադարյան ջրաբաշխական համակարգերի համալիր ուսումնասիրությունը հնարավորություն կտա ոչ միայն արժևորել անցյալի մեծ փորձը և նոր համակարգերի ստեղծման գործընթացում կիրառել դրանք, այլ նաև դրանց մի սովոր մասը վերագործարկել ժամանակակից լուծումների ներդրմամբ և ծառայեցնել բնակչության ու տնտեսության արդի կարիքներին՝ այս ճանապարհով նաև երկարացնելով այդ կառույցների կյանքը և նպաստելով գիտահեն գրոսաշրջության զարգացմանը:

### Նշումներ և շնորհակալություններ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ՝ ՉԼԱԳ-6A080 ծածկագրով թեմայի շրջանակներում: Նշված աշխատանքները համաֆինանսավորվել են «Արենի-1 քարայր» կոնսորցիումի («Արենի-1 քարայր» գիտահետազոտական հիմնադրամ, ՀՀ) և «Գֆոելլեր Ռենեսանս ֆաունդեյշն» հիմնադրամի (ԱՄՆ) կողմից:

### Acknowledgements

The research was carried out with the support of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia under the code ՉԼԱԳ-6A080. The mentioned works were co-financed by the “Areni-1 Cave” consortium (“Areni-1 Cave” Scientific Research Foundation, RA) and the “Gfoeller Renaissance Foundation” (USA).

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

Arakelyan, B. (1958). *Cities and trades in Armenia IX-XIII centuries* (vol. I) (L. Khachikyan, Ed.). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).  
 Asatryan, Y. A. (1989). Talin's medieval water supply system. *Herald of Social Sciences*, 4 (556), 83-88 (in Armenian).  
 Asatryan, Y. A. (2004). *Monuments of Talin region* (K. Zoryan, Ed.). *Hushardzan* (in Armenian).

Avdalbegyan, T. (1927). *Two pages from the history of irrigation in Armenia and their practical consequences. I. Noratus stream, II. Gavar stream* (vol. II). Yerevan, Pethrat print (in Armenian).  
 Avdalbegyan, T. (1931). The old streams of New Bayazed and the irrigation prospects of the surroundings. *Bulletin of ASSR Institute of Science and Art*, 5, 90-112 (in Armenian).  
 Barkhudaryan, S. (1964). Remarks and new materials on the irrigation work of ancient Armenia. In Kh. Mirimanyan (Ed.). *Materials on the history of agriculture and peasantry of Armenia* (vol I, pp. 259-285). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).  
 Beglaryan, H. (1989). Horticulture in Medieval Armenia. *Herald of Social Sciences*, 11(563), 71-79 (in Armenian).  
 Gabrielyan, R. (2023). Canal of Amberdadzor. *Proceedings of the "Habitat and Economic Culture" Conference dedicated to the 100th anniversary of the birth of Derenik Vardumyan* (S. Hobosyan, Ed.), November 24. IAE, 74-77 (in Armenian).  
 Barkhudaryan, S. (compiler). (1960). *Divan Armenian lithography, Goris, Sisian and Khapan provinces* (H. Orbeli, & B. Arakelyan, Eds.), (issue II). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).  
 Barkhudaryan, S. (compiler). (1967). *Divan Armenian lithography, Vayots dzor: Yeghegnadzor and Azizbekov provinces* (K. Khafadaryan, Ed.), (issue III). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).  
 Barkhudaryan, S. (compiler). (1973). *Divan Armenian lithography, Gegharkunik: Kamo, Martuni and Vardenis provinces* (K. Khafadaryan, Ed.), (issue IV). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).  
 Avagyan, S., & Janpoladyan, H. (compilers). (1977). *Divan Armenian lithography, Ijevan province* (G. Grigoryan, Ed.), (issue VI). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).  
 Barkhudaryan, S., Khafadaryan, K., & Saghumyan, S. (compilers). (2012). *Divan Armenian lithography, Lori region* (G. Sargsyan, Ed.), (issue IX). Gitutyun (in Armenian).  
 Barkhudaryan, S. (compiler). (2017). *Divan Armenian lithography, Shirak region* (G. Sargsyan, & A. Harutyunyan, Eds.), (issue X). Gitutyun (in Armenian).  
 Tumanyan, G. (2001). Willow grove of Ashtarak (Traces of the Cosmic Tree Cult in Ashtarak). In A. Kalantaryan, & S. Harutyunyan (Eds.), *The ancient culture of Armenia* (pp. 17-20), Outlines of reports of the conference dedicated to the memory of Harutyun Martirosyan. IAE, RA NAS (in Armenian).  
 Khachatryan, M. (1971). The engraved drawing of the pre-Urartian water distribution system of Aragatsoth. *Historical and Philological Journal*, 3(54), 127-137 (in Armenian).  
 Khachatryan, J., & Kalantaryan, A. (1972). Classic and medieval monuments of Martuni and Vardenis regions. *Herald of social sciences*, 1(349), 58-67 (in Armenian).  
 Harutyunyan, S. (1978). *Anberd* (G. Karakhanyan, Ed.). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).  
 Hobosyan, S., Gasparyan, S., Harutyunyan, A., Saratikyan, S., & Amirkhanyan, A. (2017). *Armenian culture of*

- grapes and wine* (A. Bobokhyan, & A. Petrosyan, Eds.). IAE, RA NAS (in Armenian).
- Hovhannisyanyan, N., Yesayan, A., Bobokhyan, A., Dallakyan, M., Hobosyan, S., & Gasparyan, B. (2017). Armenian grapes and wine (B. Gasparyan, A. Danielyan, S. Hobosyan, & N. Hovhannisyanyan, Eds.). Yerevan, Antares (in Armenian).
- Khafadaryan, K. (1952). *The city of Dvin and its excavations: 1937-1950 of the archaeological expedition of the Academy of Sciences of the Armenian SSR, the results of the works* (B. Arakelyan, Ed.), (vol. I). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Khafadaryan, K. (1982). *The city of Dvin and its excavations: 1951-1972 of the archaeological expedition of the Academy of Sciences of the Armenian SSR, the results of the works* (vol. II). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Khafadaryan, K., & Kalantaryan, A. (2002). *Dvin II, The city of Dvin and its excavations (1973-1980)*, (G. Karakhanyan, Ed.). Archaeological excavations in Armenia (issue 20). Gitutyun (in Armenian).
- Ghevond Alishan (1893). *Sisakan. Topography of the Syunik world*. Venice, Mkhitarian Monastery, St. Lazarus (in Armenian).
- Matevosyan, K. (2017). *The epigraphic inscriptions and colophons of Noravank monastery* (A. Harutyunyan, Ed.). Mughni (in Armenian).
- Manandyan, H. (1936). *The main roads of Armenia according to the Peutingerian map*. Githrat (in Armenian).
- Bishop Mesrop (1912). *Irrigation of Etchmiadzin province* (A. Abrahamian, Ed.). Ararat, Official magazine of the Patriarchal Chair S. Etchmiadzin, 3, 232-241 (in Armenian).
- Archbishop Mesrop Magister (1936). *Historical information about the irrigation of Armenian lands*. Holy Jacobean, Jerusalem (in Armenian).
- Mnatsakanyan, S. (1956). *Architecture of rural settlements of Armenia*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Shahaziz, Y. (1987). *The history of Ashtarak* (P. Hakobyan, compiler of the manuscript and preface), (V. Mikaelyan, Ed.). Hayastan (in Armenian).
- Shirmazan, G. (1962). *Episodes from the history of irrigation in Armenia* (D. Gazazyan, Ed.). Haypetgyughhrat (in Armenian).
- Saghumyan, S. (1998). *Ashtarak. Historical events, monuments, lithographic inscriptions* (P. Hakobyan, Ed.). Gitutyun (in Armenian).
- Sargsyan, A. (2020). Floods of Yerevan (end of the 19th century - beginning of the 20th century). In K. Pahlevanyan, P. Avetisyan, S. Poghosyan, & H. Harutyunyan (Eds.). *A collection of conference materials dedicated to Yuri Mkrtyumyan's 80th birthday*. Yerevan, 73-78 (in Armenian).
- Sargsyan, L. (2007). Donation inscriptions of Armenia (9th-14th centuries), (G. Grigoryan, Ed.). Edit Print (in Armenian).
- Mesrovb Smbateants (1895). *Topography of Tsovazard province of Gegharkun, which is now New Bayazet province*. The Mother See of Holy Etchmiadzin, Vagharshapat (in Armenian).
- Virabyan, S. (1975). From the history of water construction and water use in medieval Armenia. *Historical and Philological Journal*, 1(68), 145-157 (in Armenian).
- Virabyan, S. (2003). Water construction works of the church in Aragatsotn province. *Proceedings of the Jubilee conference "Aragatsotn: Spiritual and cultural heritage" dedicated to the 1700th Anniversary of the Unction of the Mother Temple of Holy Etchmiadzin*. Oshakan, 44-45 (in Armenian).
- Tonapetyan, P. (2020). *Yereruyk. A famous ancient site of Christian Armenia*. Yerevan, Sargis Khachents (in Armenian and in French).
- Kalantar, A. (1937). An ancient water distribution system in Soviet Armenia (in connection with the problems of our water construction and animal husbandry development). *Bulletin of ASSR Institute of History and Literature. Githrat*, II, 171-194 (in Armenian).
- Kalantar, A. (2007). An ancient water distribution system in Soviet Armenia. In A. Kalantaryan (Ed.), *Armenia from the Stone Age to the Middle Ages* (vol. 4, pp. 281-297), Collection of writings, Series of scientific heritage. Gitutyun (in Armenian).
- Kalantaryan, A. (1976). *Dvin I, Excavations of the Central District, 1964-1970* (K. Khafadaryan, Ed.). Archaeological excavations in Armenia (issue 13). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Aghakhanyan, G., & Martirosyan, R. (1984). Water management construction in connection with the founding of the city of Erebuni. *Historical and Philological Journal*, 4(107), 194-198 (in Russian).
- Arakelyan, B. (1979). Notes on water supply and baths in the cities of ancient Armenia. *Bulletin of Social Sciences*, 10(442), 75-87 (in Russian).
- Yepremyan, R. (1992). *Water supply of ancient and medieval Armenia* (A. Barkhudaryan, Ed.). Yerevan, YerACI (in Russian).
- Khafadaryan, K. (1970). *Excavations of the city of Dvin: Archaeological discoveries of 1969* (B. Ribakov, Ed.). Nauka (in Russian).
- Khachatryan, M. (1976). About the ancient irrigation network of Aragatsotn. *Bulletin of Yerevan University*, 1(28), 121-129 (in Russian).
- Donabédian, P. (2021). Yereruyk: A Site Rich in Enigmas and Promises. The Armenian-French Archaeological Mission of LA3M in Armenia (2009-2016). In P. Avetisyan, & A. Bobokhyan (Eds.). *Proceedings of the International Conference "Archaeology of Armenia in Regional Context" dedicated to the 60th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography*, 9-11 July, 2019, Yerevan, IAE, 342-365.
- Kalantar, A. (1994). An Ancient Irrigation System in Armenia. In G. Karakhanian (Ed), *Armenia from the Stone Age to the Middle Ages* (pp. 29-35). Selected Papers, Civilisations Du Proche-Orient, Serie I, Archeologie et Environnement 2, Recherches et Publications, Neuchâtel-Paris



# CANAL CONSTRUCTION IN MEDIEVAL ARMENIA ACCORDING TO ARMENIAN EPIGRAPHIC SOURCES

Arsen Harutyunyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia,  
Matenadaran-Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts

## Abstract

The vital importance of water in Armenian reality has a centuries-old history. The first water cult symbols in the Armenian Highland can be found in petroglyphs. Later stelae were erected near the water sources and epigraphic inscriptions were engraved on the occasion of water construction works. The tradition continued in the Middle Ages as well, as evidenced by Armenian epigraphic inscriptions related to the construction of canals and other water structures. In terms of content, these have the same ideological background, that is, to provide water resources necessary for human activity (drinking and irrigation water). Horticulture, in particular, viticulture and winemaking also had a primary place in medieval agriculture, which is evidenced by numerous epigraphic inscriptions concerning the “soil and water” donations of gardens, lands, and villages.

There are preserved epigraphic inscriptions about bringing water to the settlements and gardens, building streams and canals, erecting khachkars on the occasion of water construction works, discounting the water tax, defining the right of water consumption, etc. The chronology of them covers almost the entire Middle Ages and the later period. We tried to present the tradition based on several key inscriptions, such as those known from Talin (783), Aruch (867), Jrvezh (1173), Amberd (first half of the 13th century), Old Halidzor (1265), Verishen (1294), Sotk (1569), etc.

**Keywords:** epigraphic inscription, canal, construction, erecting a monument, water tax, right of water consumption.

## ՋՐԱՆՑՔԱԾԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒԲ ԸՍՏ ՀԱՅ ՎԻՄԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Արսեն Հարությունյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
Մատենադարան - Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

## Ամփոփագիր

Ջրի կենսական նշանակության կարևորությունը հայ իրականության մեջ դարավոր պատմություն ունի: Հայկական լեռնաշխարհում ջրի պաշտամունքային առաջին խորհրդանիշները հանդիպում են դեռևս ժայռապատկերներում, ավելի ուշ ջրի ակունքների մոտ կոթողներ են կանգնեցվել, իսկ ջրաշինարարական աշխատանքների առիթով՝ վիմագրեր կազմվել: Ավանդույթը շարունակվեց նաև միջնադարում, ինչի մասին են վկայում ջրանցքաշինության և ջրային այլ կառույցների առնչությամբ հայերեն վիմագրերը: Բովանդակային առումով սրանք մինևսյն գաղափարական հիմքն ունեն, այն է՝ ապահովել մարդկային կենսագործունեության համար անհրաժեշտ ջրային պաշարները (խմելու և ոռոգման): Միջնադարյան երկրագործական մշակույթում և ստանդարտային տեղ ունեղ այգեգործությունը, ի մասնավորի՝ խաղողագործությունն ու գինեգործությունը, որի մասին են վկայում բազմաթիվ վիմագրերում այգիների, հանդամասերի, գյուղերի «հողով ու ջրով» արված նվիրատվությունները:

Մեզ են հասել բնակավայրեր ու այգիներ ջուր բերելու, առու-ջրանցք կառուցելու, ջրաշինական աշխատանքների առիթով խաչքար կանգնեցնելու, ջրահարկը գեղջելու, ջրօգտագործման իրավունք սահմանելու և համանման այլ բովանդակության վիմագրեր, որոնց ժամանակագրությունն ընդգրկում է գրեթե ողջ միջնադարն ու հետագա շրջանը: Իբրև այդպիսին, նախընտրել ենք ավանդույթը ներկայացնել մի քանի առանցքային վիմագրերի հիմամբ, որպիսիք հայտնի են Թալինից (783 թ.), Արուհից (867 թ.), Ջրվեժից (1173 թ.), Ամբերդից (13-րդ դ. առաջին կես), Հին Հալիձորից (1265 թ.), Վերիշենից (1294 թ.), Սոթքից (1569 թ.) և այլ հուշարձաններից:

**Հիմնաբառեր.** վիմագիր, ջրանցք, շինարարություն, կոթողի կանգնեցում, ջրահարկ, ջրօգտագործման իրավունք:

## Ներածություն

Շինարարական աշխատանքների առիթով վիճազիր կազմելու ավանդույթը հայ իրականության մեջ հայտնի է դեռևս նախաքրիստոնեական շրջանից: Վանի թագավորության սեպագրերի բովանդակության առանցքում կատարված շինարարական գործն ի հիշատակ ավանդելն էր, մի երևույթ, որն արտացոլվեց նաև քրիստոնեական գրավոր մշակույթում: Դրա առհավատյան տարաբնույթ շինարարությունների ու նորոգման աշխատանքների վկայությամբ հարյուրավոր արձանագրություններն են, որոնց շարքում հետաքրքրական են նաև ջրաշինությունների՝ առու-ջրանցքների, ջրավազանների (նավ (նով), միլ, ջուր, աղբյուր և այլն), ջրաղացների և նմանօրինակ այլ կենսական նշանակության շինաշխատանքների վերաբերյալ վիմագրական հիշատակությունները:

Ջրի և ջրօգտագործման մշակույթն արտացոլող վիմագրերն ուղղակիորեն փաստագրում են բնակավայրերը ջրով ապահովելու, առու-ջրանցք բացելու, այգի տնկելու, ջրահարկից ազատելու, ջրօգտագործման իրավունք սահմանելու և համանման այլ իրողություններ, որոնք կենցաղավարել են միջնադարյան Հայաստանում: Բավական է ասել, որ հայագիտությանը ցայժմ հայտնի ժամանակագրորեն վաղագույն հայերեն թվակիր վիմագիրը ևս ջուր բերելու, դեպի Թալին ջրանցք կառուցելու մասին է վկայում, որն իրագործվել է Հայոց ՄԼԲ., այն է՝ 783 թ.:

Միջնադարյան Հայաստանի ջրանցքաշինության կամ, առհասարակ, ոռոգման համակարգերի մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար էական նշանակություն ունի երևույթի համալիր ուսումնասիրությունն ըստ գրավոր սկզբնաղբյուրների: Մեզանում այն տևական ժամանակ հատուկ քննության նյութ չի դարձել, եթե նկատի չառնենք տարբեր առիթներով արված Ն. Մառի և Յա. Սմիռնովի, Ա. Քալանթարի, Ս. Տեր-Ավետիսյանի և ուրիշների մասնավոր անդրադարձները (Ter-Avetisyan, 2010, 463-470; Kalantar, 2007, 281-297; Marr, Smirnov, 1931): Թերևս միակ բացառությունն անվանի վիմագրագետ Մեդրակ Բարխուդարյանի ընդարձակ ու արժեքավոր հոդվածն է՝ նվիրված Հայաստանի ոռոգման խնդիրներին, որոնք ուսումնասիրողը քննել է հիմնականում վիմագիր վկայագրերի հիմամբ (Barkhudaryan, 1964, 259-285): Ջրօգտագործման խնդիրների վիմագրական արտացոլումները տարիներ առաջ ամփոփ ներկայացվել են նաև մեր կողմից (Harutyunyan, 2010, 69-75):

Սկսելով նախնադարյան հասարկության դարաշրջանում, ի մասնավորի՝ Արագածի և Գեղամա

լեռների բարձրադիր հատվածներում ջրանցքների կառուցման վաղագույն օրինակներից՝ Ս. Բարխուդարյանը փաստում է, որ Հայաստանում ջրանցքաշինությունը վաղեմի պատմություն ունի: Բարձրլեռնային արոտավայրերում փորված առուներից ու փոտրակ-ջրամբարներից կազմված ջրաբաշխական համակարգերն առավել կատարելագործվեցին առաջին պետականության՝ Վանի թագավորության ժամանակաշրջանում, երբ զարգանում էր դաշտային ու այգեգործական մշակույթը: Անշուշտ, սա տեղի էր ունենում ոռոգման կանոնավոր համակարգերի գոյության պայմաններում, երբ սկսեցին «մեծ ու փոքր գետերի ջրերի օգտագործման և հարթավայրերում մեծ լճերի կառուցման աշխատանքները» (Barkhudaryan, 1964, 261, 262): Դեռևս Ս. Բարխուդարյանն է արձանագրում, որ Վանի թագավորության սեպագրերն արդեն իսկ ազդարարում են հանրության կողմից ջրանցքաշինության կարևորման փաստը, ուստի պետք է ենթադրել, որ հենց նույն կարևորության գիտակցմամբ էր պայմանավորված նաև այդօրինակ աշխատանքները գրով վավերացնելն ու ամրագրելը: Տեղին է ասված, որ «Ուրարտական շրջանի ջրանցքները ճանաչվում են նրանց հատուկ տեխնիկայի՝ մեծամեծ քարերով ջրանցքի երեսները պատելու և նրանց ափերին՝ քարերի կամ հատկապես կանգնեցրած հուշարձանների վրա գրված սեպագիր արձանագրությունների շնորհիվ» (Barkhudaryan, 1964, 262): Գաղտնիք չէ, որ ինչպես սեպագրերի, այնպես էլ հայերեն՝ մեսրոպյան վիմագրերի կաղապարային առանձնահատկություններից էր գրի եղծումը՝ նգովքով ամրագրելը, այսինքն՝ կարճառոտ, երբեմն էլ ընդարձակ նգովքի բանաձևը, որ հիմնականում ամփոփում էր վիմագրի ավարտը, ուներ գիրը եղծումից, այն է՝ հիշատակը ոչնչացնելուց ապահովագրելու գործառույթ, քանզի հիշատակի պահպանումը սրբազան նշանակություն ուներ, որին էլ ձգտում էր ցանկացած նվիրատու կամ որևէ հիշարժան գործ կատարած անձ:

Այն, որ Վանի թագավորության ժամանակաշրջանում կատարված ջրանցքաշինական աշխատանքներն արտացոլվել են նախնառաջ տեղի սեպագրերում, վկայում է պատմահայր Մովսես Խորենացին: Վանի քաղաքամերձ ժայռի սեպագիրը Խորենացին ավանդաբար Շամիրամին է վերագրում ու համարում նրա կառուցած ջրանցքի վկայագիրը. «Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչազմում հարթեալ՝ բազում գիրս ի նմա գրեաց, որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ», այնուհետ. «Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել և ի բազում

տեղիս սահմանս նովին գրով հաստատեր» (Khorenatsi, 1991, 54):

Համանման է Վանա լճի հարավարևելյան կողմում գտնվող Մժնկերտ-Մեշինկերտի սեպագիրը՝ Մենուա արքայի օրոք (Ք.ա. 810-786 թթ.) ջրանցքի կառուցման վկայությամբ. «Խալդի աստծո գորությամբ, Մենուան՝ Իշպուինիի որդին, անցկացրեց այս ջրանցքը, որը «Մենուայի ջրանցք» է կոչվում... Ով արձանագրությունը ոչնչացնի, վնասի, որևէ մեկին ստիպի դա անել, կամ ասի, թե ես եմ այս ջրանցքը բացել, թող Խալդին, Թեյշեբան, Շիվինին և բոլոր աստվածները նրան ոչնչացնեն արևի տակ» (Harutyunyan, 2001, 92/62):

Առավել ուշագրավ է Արգիշտիի որդի Ռուսա II արքայի (Ք.ա. 685-645 թթ.) կանգնեցրած արձանագիր կոթողը Զվարթնոցում, որը հայտնաբերվել է 1900 թ. հուլիսի 11-ին Զվարթնոցն առաջինը հետազոտող Խաչիկ վարդապետ Դադյանի կողմից (նկ. 1): Կոթողի՝ 47 տողից կազմված սեպագրի համաձայն՝ Խալդի աստծո գորությամբ, Արգիշտիի որդի Ռուսա II արքայի հրամանով Կուարլինիի ամայի և անմշակ դաշտում այգի (խաղողուտ) է տնկվել, բնակավայր հիմնվել, իսկ Իլդարունի (Հրազդան) գետից Ումեշինի ջրանցքն է կառուցվել: Կատարված գործի հիշատակությանը հետևում է նգովքի՝ կանոնական դարձած բանաձևը. «Ով այս գիրը ջնջի, ոչնչացնի, կոթողը տեղահան անի ու ջուրը նետի կամ ասի, թե ինքն է արել ու իմ անունը ջնջի ու իր անունը գրի, թող Խալդին, Թեյշեբան, Շիվինին երկրի երեսից ջնջեն նրա անունը, ընտանիքն ու սերունդներին» (Basmajean, 1901, 225; Harutyunyan, 2001, 344-345/62):

Հետուրարտական շրջանում և, մասնավորապես, վաղ հայկական պետականության ժամանակաշրջանում ջրաշինարարական աշխատանքների վկայությամբ վիմագրերի բացակայությունը Ս. Բարխուդարյանն իրավացիորեն պայմանավորում է բուն ուրարտական ժամանակաշրջանում կառուցված առու-ջրանցքների նորոգմամբ, այսինքն՝ ավելի վաղ կառուցված ջրանցքները դեռևս շահագործելի են եղել անգամ բազմակի նորոգումներից հետո, ինչը, թերևս, բավարարել է առկա կարիքները (Barkhudaryan, 1964, 262):

Այդուհանդերձ, բերված օրինակներն ինքնին պարզում են, որ մեզանից դեռ դարեր առաջ ջուրը և ջրային համալիրները կենսական դեր ու նշանակություն են ունեցել մարդու կյանքում, ուստի լծվելով նաև ջրաշինարարական աշխատանքներին՝ մարդն իր կատարած գործն ամփոփել է քարակերտ մատյաններում:




նկ. 1. Ռուսա II արքայի կանգնեցրած արձանագիր կոթողը Իլդարունի (Հրազդան) գետից Ումեշինի ջրանցքը կառուցելու վկայությամբ, Ք. ա. 685-645 թթ.

### Ջրանցքաշինությունը միջնադարյան վիմագրերում


Ջրանցքաշինության առիթով վիմագիր կազմելու ավանդույթը շարունակվել է նաև միջնադարում՝ լայնորեն արտացոլվելով հայերեն վիմագրերում: Տարբեր բնակավայրերում, այգիներում ու հանդամասերում, ինչպես նաև վանքերում ու եկեղեցիներում ջուր բերելու, ջրաղաց ու աղբյուր կառուցելու, ջրահարկից ազատելու, ջրօգտագործման իրավունք սահմանելու և այլ առիթներով վիմագրեր են կազմվել ինչպես եկեղեցիների որմերին, ժայռաբեկորների հարթեցված նիստերին, այնպես էլ կոթողային հուշարձաններին, ի մասնավորի՝ խաչքարերին: Վերն արդեն նշեցինք, որ ցայժմ հայտնի հայերեն թվակիր վաղագույն վիմագիրն ընդունված է համարել Թալինի Կաթողիկե եկեղեցու հարավային մույթի արևմտահայաց նիստին պահպանված Հայոց ՄԼԲ. (232 թ.) կամ Փրկչական 783 թ. վիմագիրը:

րը՝ Քարկապանից դեպի Թալին ջուր բերելու վկայությամբ (նկ. 2ա, բ)։

**ՄԼԲ. (783) թուականութեան Հա՛յ/ոց, ես՝ Ուխտայտուր վանա՛յ/կ՛ա՛նս եւ Տուտի**



**եղբայր իմ, բե/րաք Ղաղղբիրանիս ի Քարկապ՛ա/նու վատեն (վ-ն՝ շրջված) ի Թալին, է յիշխ՛ա/ն՛աց ոք խլե, իմ մեղացս Ղար/տ՛ական եղի՛ցի::**



նկ. 2. Թալինի Կաթողիկե եկեղեցու վիմագիրը՝ ջուր բերելու վկայությամբ, 783 թ.

Արձանագրությունը քանիցս հրատարակվել է, սակայն տեղանքը, որտեղից ջուր է բերվել Թալին, երկմտելի է։ 19-րդ դարավերջին Հ. Ղևոնդ Ալիշանն այն վերծանել է «ի Սարկապանու դաշտէն» (Alis-han, 1890, 138), որին հետևել է նաև Ս. Բարխուդարյանը (Barkhudaryan, 1964, 264), իսկ Գարեգին Հովսեփյանն այն կարդում է «ի Քարկապանու՝ ատեն» (Hovsepean, 1913, 176)։ Հետագայում Կարո Ղաֆադարյանը, ավելի ուշ նաև Աշոտ Մանուչարյանը կարդացել են «ի Քարկապանու վատեն» (Ghafadaryan, 2007, 165; Manucharyan, 2019, 51, 52)։ Վիմագրի վերընթերցումը հաստատում է քարկապան բառի հիշատակումը, որը բառացի նշանակում է քարաշեն, ժայռերի միջով բացված անցք, թեև Քարկապանը նաև գետի անուն է, որն Արաքսի ձախակողմյան Վեղի վտակի օժանդակ մասն է և հոսում է ՀՀ Արարատի մարզում։ Նկատի առնելով հիշյալ տեղանքի աշխարհագրական առանձնահատկությունները՝ կարելի է բացատրել Թալինի վիմագրում վկայված Քարկապանի և գետանվան նույնացումը։ Այստեղ ուշագրավ է անհասկանալի թվացող վատեն (վիմագրում Վ-ն՝ շրջված) բառի առիթով վիմագրագետ-արաբագետ Ա. Մանուչարյանի տեսակետը, ըստ որի՝ այն արաբերեն ուադի՝ կիրճ բառն է, որ հայերեն արտասանվում է վադի կամ վատի ձևով, այսինքն՝ Քարկապանի կիրճից (Manucharyan, 2019, 52)։ Ստացվում է, որ Քարկապանը տեղանուն կամ առնվազն մանրատեղանուն է, որը պիտի հեռու չլիներ Թալինից։

Եթե Թալինի արձանագրությունն ուշագրավ էր իբրև ջրանցքաշինության վկայությամբ մեզ հասած թվակիր վաղագույն վավերագիր, ապա իր տեսակում ինքնատիպ է նաև Սյունյաց Հակոբ Դվինեցի եպիսկոպոսի նախաձեռնությամբ 932 թ. Վարարակն կոչվող աղբյուրներից դեպի Տաթևի վանքի ստորոտը բերված ջրանցքի կառուցումը։ Սյունյաց մետրոպոլիտ, պատմագիր Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ Հակոբ եպիսկոպոսն իշխան Փիլիպպեից գնում է Վարարակն կոչվող աղբյուրների ջրերն ու կառուցել տալիս մոտ 30 կիլոմետրանոց ջրանցքը՝ այն հասցնելով մինչև Ցաքուտ կոչվող տեղանքը. «...գանձագին ասնէ գջուրն Չագէձորոյ, որ Վարարակն կոչի, ի տեսնէ Փիլիպպէէ՝ որդոյ Վասակայ Սիւնեաց իշխանի, ընդ երկոտասան 1000 դրամի... եւ բազում աշխատութեամբ եւ մեծամեծ ծախսիւք ածեալ էր ջուր ի լեռնէն Չագէձորոյ եւ բերեալ ի Ցաքուտն, որ հանդէպ վանիցն յայնկոյս գետոյն եւ արար գամենայն վայրն առապար եւ փշալից վարդուտ եւ տնկալից...» (Orbelean, 1910, 253)։

Հետաքրքրական է, որ Հակոբ եպիսկոպոսը կատարված գործարքն ամրագրել է առուծախի մագաղաթե վճռագրով, որը ժամանակին ընդօրինակել է Ստեփանոս Օրբելյանը։ Բնագրում ուշագրավը ջրից օգտվելու իրավունքի սահմանափակումն է, որը հաստատվում է նաև նգովքի բանաձևով, ըստ այդմ՝ արդեն իսկ գնված և սեփականություն դարձած ջուրը (ջրանցքը) թեև կառուցվել է ի վայելումն «հասարակաց ամենեցուն», բայց «չկայ յայս ջրոյս

1 Ջրանցքի մասին ավանդազրույցներ կան. դրանցից մեկի համաձայն՝ ժողովրդի կողմից «Քեշիշ-արխ» կոչված ջրանցքն ավանդաբար մի քահանա է կառուցել, և երբ ջուրը հասել է վերոհիշյալ արձանագրությունը կրող ժայռին ու տեսել են, որ ոչ ժայռի ներքևից և ոչ բարձրից կարող է ջուրն անց կենալ՝ քահանան բացականչել է. «Ինչ ահագին ծայր է»։ Իսկույն ծայրը մեջտեղից ճեղքվել է, իսկ մշակը, այս տեսնելով՝ ասել է. «Տերտնը, ինչ լավ աչք ունիս... և հենց այս ասելուն պես քահանայի աչքն էլ տրաքվել է» (Lalayan, 2021, 25)։ Մեկ ուրիշն էլ վերաբերում է Տաթևի վանքը կառուցող վարպետի և նույն վանքի համար ջուր բերող կրոնավորի գրագին առ այն, թե ով շուտ կավարտի իր սկսած գործը։ Կրոնավորը որոշում է խաբել վարպետին և վիհի հակառակ կողմից կախ է տալիս մի սպիտակ սավան, որը հեռվից թափվող ջրի պատրասք է ստեղծում։ Այս տեսնելով՝ վարպետը կարծում է, թե պարտվել է, ու իրեն ցած է նետում տաճարի գմբեթից։ Կրան թաղում են հենց վանքի բակում, իսկ խաբեբա կրոնավորի առուն կոչում են Քահանայի առու, որ է՝ Քեշիշ արղ (Ghanalanyan, 1969, 92)։

հաշի ոչ Նորեցեաց (Նորիք - Ա. Հ.), ոչ Խոտանանեցեաց, ոչ Շնհերացեաց կամ Հալեցեաց (Հալիձոր - Ա. Հ.), ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կտրել և ոչ ի մարգ և ոչ պարտիզի ջուր տալ զառ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ» (Orbelean, 1910, 255): Մրան հետևում է նաև վաճառքի գիրը՝ կազմված Փիլիպպե իշխանի անունից, ուր ևս շեշտվում է վաճառքից հետո ջրից օգտվելու արգելքի մասին, քանզի «այլիզար (նզովյալ - Ա. Հ.) եմ ես (Փիլիպպեն - Ա. Հ.) և իմ զաւակք և այլ ազգայինք յայդ ջրոյդ յայսմհետէ մինչև յալիտեանս ժամանակաց. և չկայ Նորեցեաց կամ Խոտանանեցեաց կամ Շնհերայ և Հալեցեաց յայդ ջրոյդ հաշի ոչ շատ և ոչ սակաւ, ոչ յարտ հա-

տանել և ոչ ի մարգ զատել, որ մարդ եւ անասուն ջուր ըմպեն ի մատակէդ» (Orbelean, 1910, 256):


Մատենագրական նշված հիշատակություններն ավելի ուշ վավերացվում են նաև վիմագրով, սակայն ոչ թե ջրանցքի կառուցման, այլ՝ նորոգման առիթով (նկ. 3ա, բ):

Գորիսի Վերիշեն գյուղից մոտ 2 կմ հարավ՝ Վարարակն գետի ակունքների մոտ, «Ճղած քար» կոչվող տեղանքի մի մեծ ժայռաբեկորի հարթեցված մակերեսին 8 տողից արձանագրություն է կազմվել՝ Սբ Երրորդությունը խորհրդանշող երեք խաչաքանդակներին կից.



ա

բ



նկ. 3. Վարարակի ջրանցքի նորոգման վիմագիրը, 1294 թ. (Source: M. Kumunts)

**Յամի, յորում էր թվին՝ ՉԽԳ. (1294), ես՝ Տ[Է]ր Յոհանէս, կամա/ւս Ա[ստուծոյ] եւ աղաթիւք հոգևոր հաւր իմո Տ[Է]ր Հա/յրապետա, տարա զջուրս Վարարական ի Վարդուտն, գ/որ ա[ստուա]ծապատիւ եւ հոգևոր Տ[Է]ր Յակոբ գնեալ էր եւ / տարեալ բազում աշխատութեամբ եւ արդե[ա]մբք, գլխափան/եալն ի բազում ամանակաց կրկին նորոգեցաք յիշ/ատակ մեզ եւ նախնեաց մերոց, որք հանդիպիք Սբ Երր/որդութե[ա]մ[բ] յիշեցէք ի Բ[ր]իստոյս:**

Վիմագրում հիշատակված Հովհաննես եպիսկոպոսը Մյունխաց գահին նախորդել է պատմագիր Ստեփանոս Օրբելյանին (Smbatean, 1930, 346): Վիմագրում նա վկայաբերում է նաև իր նախորդներից Տեր Հայրապետ եպիսկոպոսի անունը, որի աղոթքներով և Աստուծո կամոք նորոգել է դեռևս Հակոբ եպիսկոպոսի գնած և մեծ դժվարությամբ կառուցած Վարարակի ջրանցքը, որը որոշ ժամանակ անց խափանվել էր (Barkhudaryan, 1960, 78): Հետաքրքիր է, որ իր հողվածում Ս. Բարխուդարյանը ջրանցքը նորոգված է համարում 1274-ին (Barkhudaryan, 1964, 266), թեև «Դիվանում» թվականը ճիշտ է կարդացել՝ ՉԽԳ., որ է՝ 1294 թ.: Վիմագրի վերնամասում նկատելի է արաբերեն երկտող գրություն,

որի գրչանկարն իր ժողովածուում հիշատակում է արաբագետ Ալեքսանդր Խաչատրյանը, սակայն չի մեկնում բովանդակությունը, քանի որ անձամբ տեսնելու հնար չի ունեցել (Khachatryan, 1987, 77): Ուշագրավ է նաև վիմագրի՝ ժայռաբեկորի վրա փորագրված լինելը, որն ինքնին հիշեցնում է ջրանցքաշինության առիթով կազմված ուրարտական սեպագրերի՝ դարձյալ ժայռերի հարթեցված մակերեսներին ու կոթողներին տեղակայելու սովորույթը:

Առհասարակ ջրանցքաշինությունը, լինելով նաև երկրի տնտեսական կյանքի զարգացման առաջնային գործոններից մեկը, մշտապես եղել է աշխարհիկ ու հոգևոր վերնախավի ուշադրության կենտրոնում: Այս տեսանկյունից Ս. Բարխուդարյանը փորձել է առկա փաստերի հիմամբ ջրանցքաշինական աշխատանքների չորս կարգ սահմանել՝ պետական, իշխանական - վանքական, համայնական ու անհատական (Barkhudaryan, 1964, 265-269): Վերջինի դեպքում ևս ջրանցքաշինության նախաձեռնողն իշխանն է կամ մեծահարուստ մեկը, որն իր նյութական միջոցներով հանձն է առնում հոգալու տարբեր բնակավայրերի ու վանքերի համար կառուցվելիք ջրանցքների, ջրատար համակարգերի, ջրաղացների և ջրային այլ համալիրների շինարարության ծախսերը:

Հետաքրքիր է, որ ջրաշինարարական աշխատանքների առիթով ևս խաչքար-կոթողներ են կանգնեցվել, որոնց վիմագրերն ինքնին պարզում են խաչքարերի կանգնեցման շարժառիթների տարատեսակ լինելը, երբ Քրիստոսի խորհրդանիշ խաչն իբրև պահապան ու պաշտպան պիտի լիներ ջրի ակունքին՝ ապահովելով կենարար ջրի, բարեբեր հողի ու սպասվելիք բերքի հարատևությունը: Այսօրինակ վիմագրերի շարքում նշելի է Սյունյաց

Հին Հայիձոր գյուղից ոչ հեռու՝ «Շրջիկ» կամ «Սոնու խութ» կոչվող տեղանքում ցայսօր կանգուն խաչքարի թիկունքի և կողային նիստի ընդարձակ վիմագիրը, ըստ որի՝ Սմբատ և Տարսայիճ Օրբելյան իշխանների օրոք՝ 1265 թ., ուն Գրգորիկն իր ջանքերով ջուր (վիմագրում՝ առու) է բերել, կես այգի տնկել, որն իշխան Տարսայիճ Օրբելյանի կողմից հաստատվել է սեփականության իրավունքի գրով, քանզի հողը 300 տարի ավեր էր (նկ. 4ա-դ):



Նկ. 4. ա-դ. Գրգորիկի կանգնեցրած խաչքարը հին Հայիձորում, 1265 թ.

**Ի թվիս :ՉԺԴ: (1265), ես՝ Գրգորիկ, բազում աշխատութեամբ բերի գառոյ/ս եւ տնկեցի զԲոխո/նաց կեսս իգիս վա/յելուչս, յիշխանութե[ան] ա[ստուա]ծասէր պար/ննացն Սնպատայ / եւ հարազատի իւրոյ՝ Տարսայիճին: Ես՝ / Տարս[այ]իճն, գիր տվի հ/այրենե[ա]յց ազգէ ա/զգ, :Յ: (300) ամ էր, որ ա/ւեր էր, թէ ոք ի հայոց կամ / ի տաճկաց խլել ջանայ, :ՅԺԸ: (318) հայր՝/ ապետացն նզոված եղիցի:**

Այսինքն, Գրգորիկն իր միջոցներով ջուր բերելով ու այգի<sup>2</sup> տնկելով՝ անմշակ ու խոպան հողն իշխանական գրով դարձրել է իր ժառանգական սեփականությունը (Barkhudaryan, 1960, 52; Barkhudaryan, 1964, 269, 270), մի բան, որն ամրագրված է նաև Մխիթար Գոշի Դատաստանագրքում. «յորժամ ատերս շինեացեն և հողս հատանիցեն ի մայրեաց, ստացուած լիցի անփոփոխ և որդոց նոցա յետ մահու» (Gosh, 2014, 150):

Այլ է ծագումով Սոթքի Գթաշեն հնավայրից, իսկ ներկայում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տարածքում կանգնեցված խաչքարի թիկունքի 1569 թ. վիմագրի բովանդակությունը, ըստ որի՝ Սոլթանդուլի հինգ որդիները՝ Տեր Դավիթն ու մյուս եղբայրները և Ղալամի թոռ Եղիշեն, որոնք Ամիրճանի ժառանգներն են, հայտնում են Սարդահանի սարի պոից, այսինքն՝ ջրանցքից մեծ դժվարությամբ Գթաշենի դաշտը ջուր բերելու և ոչ թե այգի տնկելու, այլ երկու ջաղաց՝ աղորիք կառուցելու մասին, որը նրանց ժառանգական սեփականությունն էր (Barkhudaryan, 1973, 299; Harutyunyan, 2016, 109) (նկ. 5ա-գ):

**Ա[ստուծո]վ մեք՝ Դաւ[իթ] Էրէցս, :Ե: (5) / որդիքս Սաւթան/դուլին, Եղիշին՝ թոռ/ս Ղալամին, որ ենք / ծնունդ Սարու Ամիր/ճանին, որ բազում ջան/իւ եւ հնարիւ բերել[ա]լ Սա/րդահնայ պոի սարին / ջուրն ի դաշտն Գթայ/շինոյ, շինեաց :Բ: (2) ջա/ղացն եթող հալյրեն/իք իւր ծնընդոց:**

2 Միջնադարյան վիմագրերում վկայված այգին խաղողի այգին է՝ խաղողուտը (Hobosyan, 2004, 80-85):




Նկ. 5. Սոթքի Գթաշեն հնավայրից Մայր Աթոռ Սբ Էջմիածին փոխադրված խաչքարը, 1569 թ.

Փաստելի է, որ ջուր բերելու կամ ջրանցք կառուցելու նախաձեռնողները գրեթե միշտ արձանագրել են նաև գործի դժվարությունն ու մեծ ջանք պահանջելը, ինչը նշանավորում են այդ առիթով կոթողի կանգնեցմամբ, իսկ գիրը հաճախ ամրագրում նգովքի բանաձևով:

Եթե Գրգորիկի ջանքերով ջուր է բերվել ու կես այգի տնկվել, իսկ Տեր Դավիթն ու եղբայրները հայտնում են ջուր բերելու ու երկու ջաղաց կառուցելու մասին, ապա Ամբերդում՝ Վահրամ Պահլավու-

նու կառուցած եկեղեցու հարավային պատի վիմագրերից մեկը հաղորդում է Իվանեի և Զաքարեի որդի Շահնշահի տերության ու գավառի վերակացու Վաչե Վաչուտյանի օրոք՝ 1212–1231 թթ. միջակայքում, Տեղերի վանքի Բողոցոց կոչվող առվի կեսը դեպի Ամբերդ բերելու մասին, որի դիմաց տեղի միաբանությունը պարտավորվել է Սբ Խաչի Շարաթ և Կիրակի օրերին պատարագել նրանց ննջեցյալների հոգիների փրկության համար (Ter-Minasyan, 1961, 50; Harutyunyan, 1978, 55-56) (նկ. 6ա, բ)։



Նկ. 6. Ամբերդի Վահրամաշեն եկեղեցու վիմագիրը, 13-րդ դարի առաջին կես

**Ի ժամանակս՝ տեր/ուրե[ան] Իանեի և Շահինշահի, վերակաց/ուրե[ան] գաւառիս Վաչեի, մեք՝ ամէն Ամբեր՝/դ տուաք զԲողոցոց/ս առ[ու]իս կէսն Տեղերո և սոքա հաստա/տեցին զԽաչին Շար/աթն և Կիրակէն պատ/արագ մեր ննջեցել/ոցս, ով չառնէ նզ[ովի]՝ յԱ[ստուծոյ] և ի ժողո՛վ[ոյ]ն. AMEN:**

Մենք այստեղ չենք անդրադառնա ջրից գանձվող ավգան կամ արգան կոչվող հարկին ու դրա վիմագրական դրսևորումներին (որպիսիք հայտնի են Սանահինի, Կեչառիսի, Թանահատի, Աղիտուի և այլ համայնքների վիմագրերից), քանի որ ժամանակին այս հարցը հանգամանորեն քննել է Ս. Բարխուդարյանն իր նշված հոդվածում (Barkhudaryan, 1964, 276-282): Դրանից գատ, թերևս ավելորդ չի լինի հիշատակել նաև արդեն բերված ջուրը բաշխելու,

դրանից օգտվելու իրավունք ու կարգ սահմանելու խնդիրը, որը սակավ արտացոլվել է նաև վիճագրերում:


Գյուղերի միջև ջուրը հավասար բաշխելու և այդ առիթով ծագած վեճի առումով ուշագրավ է Արունի տաճարի 867 թվակիր վիճագիրը, ըստ որի՝ ռոտգման ջրի օգտագործման համար վեճ է ծագել հարևան Կոշ, Արուն և Գավառ գյուղերի միջև<sup>3</sup>: Արունցիները բռնի կերպով սեփականացրել են

նաև մյուս երկուսին հասանելիք ջուրը, իսկ վեճը հարթել է սպարապետ (վիճագրում՝ ասպարապետ) Սմբատ Բագրատունու սպասավոր Վատամի որդի Գրիգորը՝ ջրաբաշխումը կատարելով ըստ նախնայաց կարգի, մեկուկես բաժին՝ Կոշին, մեկը՝ Արունին:

Արձանագրությունը գետնեղված է տաճարի հարավարևելյան ավանդատան դիմաց՝ որմնամույթի արևելյան նիստին (նկ. 7ա, բ).



ա



բ

Նկ. 7. Արունի տաճարի 867 թվակիր արձանագրությունը

**ՅԺԶ. (867) թուականին Հայոց յի/շխանութիւն] Աշոտայ եւ ի տերութիւն] Սմբատայ / Հայկոց ասպարապետի Բագրատունոյ եւ ի կաթաղիկ/տութիւն] Զաքարիայի, եղև կոի ընդ յԱրուն եւ ընդ Կոշ եւ / ընդ Գաւառն, էհար Արուն զԿոշ եւ զԳաւառն եւ կալաւ / զԿոշա վանականն եւ ի Քրթավանին ընդ անկին մինթա/սի վաճառեցին: Ես՝ Գրիգոր, որդի Վատամա, ծառա Սմբատա Բագրատունո, եկի հրամանա[ւ] Սմբատա եւ ես / հաւասարեցի զջուրն ընդ Կոշ եւ ընդ յԱրուն, զին/չ իւրեանց բնիկ ռասմ էր [եւ]այ, :Ա: (1) եւ կէս Կոշա եւ :Ա: Արճ/ո: Արդ, էթէ այլ որ հակառակել ջանա, այլ աւելի ո/ասմ յուզէ, :ՅԺԸ: (318) սուրբ հայրապետացն նզով]եա]լ լիցի եւ / ի Սմբատա մահուամբդ պատուհասի:**

Եթե Արուն, Կոշ և Գավառ գյուղերի ջրվեճը հարթվել է սպարապետ Սմբատ Բագրատունու միջամտությամբ, ապա Ջրվեժից հայտնի ավանդագրույցի «հերոս» Խաչատուրն իսկապես ջրվեճի (այստեղից էլ թերևս Ջրվեժ տեղանունը) զոհ է դարձել՝ սպանվելով կամ ինքնասպան լինելով ջրի ակուն-

քին<sup>4</sup>: Ավանդագրույցը վավերացնում է գյուղի կենտրոնում պահպանված և Վարդ կազմողի ձեռակերտը հանդիսացող երկվանջ տապանաքարի կիսաեղծ և մասամբ անընթեռնելի արձանագրությունը, որ բերում ենք Ս.Բարխուդարյանի վերծանմամբ (Barkhudaryan, 1963, 140) (նկ. 8).



նկ. 8. Ջրի համար նահատակված Խաչատուրի տապանաքարը, 1173 թ.

**Այս տուն սգո ... [Խաչատրո], որ սպանաւ ի / վերա ջրիս Ջրվեժո. կիսարեա ելի [յաշխարհէ, թողի] կսկի/ծ ծոողաց իմոց, որք [երկրպագէք սք նշանի]ս, յիշեսջիք ի Տ[է]ր, / թվիին] :ՈԻԲ: (1173), Վարդ:**

Բովանդակությամբ բավականին խոսուն տապանագիրը վկայում է ննջեցյալի՝ երիտասարդ հա-

3 Գավառը, ըստ Կ. Մաթևոսյանի, թերևս ներկայիս Շամիրամ գյուղն է (Matevosyan, 1987, 60):  
4 Ավանդագրույցի համաձայն՝ Ջրվեժը սակավաջուր է եղել, և հարևան գյուղերի հետ հաճախ վեճեր են ծագել խմելու ջրի համար: Ձորաղբյուրի (նախկին Թեջրաբաղ) հանդում գտնվող աղբյուրի ակունքը մաքրելուց հետո ևս ջուրը չի բավականացրել երկու գյուղերին, ուստի որոշել են, թե ով առաջինը զոհ կմատուցի աղբյուրի գլխին, հենց այդ գյուղի բնակիչներն էլ առաջինը կկարողանան օգտվել ջրից: Քանի որ Ձորաղբյուրի անասուններն ավելի մոտ էին, երիտասարդները վազում են մատաղացու ոչխար բերելու, ու մինչ նրանք կվերադառնային, ջրվեժի Խաչատուրն ասում է. «Թող ես զոհ դառնամ մեր գյուղի համար», ու հանելով դաշույնը՝ կտրում է պարանոցը (Barkhudaryan, 1963, 134):

սակում (կիսաարեայ) բաժին հասած եղերական մահվան մասին, իսկ սպանության կամ ըստ ավանդագրույցի՝ ինքնասպանության պատճառը գյուղերի ջրվեճն է եղել, ջրից առաջինն օգտվելու իրավունքի սահմանումը:

### Եզրակացություններ

Ջրանցքաշինության վկայությամբ վիճաբար օրինակները դեռ կարելի է շարունակել, սակայն եղածն էլ բավարար է հերթական անգամ վեր հանելու և նորովի անդրադառնալու քարեղեն սկզբնաղբյուրներում արտացոլված համանման դրվագներին: Դեռևս սեպագրերից հայտնի ջրանցքաշինական վկայություններն ավանդույթի ուժով շարունակվել են նաև հայ միջնադարյան վիճագրերում, ուր դրանք չեն սահմանափակվել միայն առու-ջրանցքների, ջրաղացների ու աղբյուրների շինարարության կամ նորոգման հիշատակություններով, այլ լուսաբանում են շատ ավելի նշանակալի երևույթներ, ինչպիսիք են ջրօգտագործումն ու ջրաբաշխումը, դրա իրավունքն ու հարկային պարտավորությունները, լայն առումով նաև՝ երկրի գյուղատնտեսության, այն է՝ այգեգործության, ի մասնավորի՝ խաղողագործության և գինեգործության զարգացումը:

Վկայաբերված վիճագրերն ուղղակիորեն պարզում են ջրանցքաշինության աշխարհագրական ու ժամանակագրական նկարագիրը, լուսաբանում նախաձեռնողների ու մեկենասների անունները և, իհարկե, ընթերցողների աղոթքներում հիշվելու և հիշատակն ավանդելու նրանց բաղձալի ցանկությունը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Alishan, Gh. (1890). *Ayrarat. nature visit to Armenia*. Venice, St. Lazarus (in Armenian).
- Arutyunyan, N. (2001). *Corpus of Urartian cuneiform inscriptions*. Gitutyun, (in Russian).
- Barkhudaryan, S. (1960). *Corpus inscriptionum Armenicarum: Goris, Sisian and Ghapan regions* (vol. 2). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Barkhudaryan, S. (1963). *Medieval Armenian Architects and Stone Masters*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Barkhudaryan, S. (1964). *Remarks and new materials on the irrigation work of ancient Armenia*. Materials of the history of agriculture and peasantry of Armenia (vol. I). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Barkhudaryan, S. (1973). *Corpus inscriptionum Armenicarum: Gegharkunik, Kamo, Martuni and Vardenis regions*

- (vol. 4), prepared for publication by S. Barkhudaryan. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Basmajian, K. (1901). The pole-shaped inscription of Zuartnots Church. *Ararat*, 4, 225-226 (in Armenian).
- Ghafadaryan, K. (2007). *The early types of Armenian writing, Pages of medieval Armenian culture and history* (compiled and prepared for publication by A. Kalantaryan, editor: P. Muradyan). Gitutyun, 123-188 (in Armenian).
- Ghanalanyan A. (1969) *Avandapatum*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Harutyunyan, A. (2010) The sphere of water use in Armenian epigraphs. *Echmiadzin*, 6, 69-75 (in Armenian).
- Harutyunyan, A. (2016). *Vagharshapat. monasteries and epigraphic inscriptions*. St. Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin (in Armenian).
- Harutyunyan, S. (1978). *Amberd*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Hobosyan, S. (2004). "Garden" in medieval Armenian epigraphs. *Armenian folk culture XII, materials of the republican conference dedicated to Mesrop Arch. Ashchyan* (S. Harutyunyan, & D. Vardumyan, Ed.). Mughni, 80-85 (in Armenian).
- Kalantar, A. (2007). An Ancient Water Distribution System in Soviet Armenia, Armenia. *From the Stone Age to the Middle Ages*. Collection of works. Gitutyun, 281-297 (in Armenian).
- Khachatryan, A. (1987). *Corpus of Arabic inscriptions of Armenia VIII-XVI centuries* (issue I). Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Khorenatsi, M. (1991). *History of Armenians* (M. Abeghyan, & S. Haroutionian, exam paper and introduction), (A. Sargsian, additions). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Lalayan, E. (2021), *Works* (S. Hobosyan, compiler and honor. editor), (vol. 4). HAI (in Armenian).
- Manucharyan, A. (2019). *Early Medieval Epigraphical Titles of Abbot Spiritual Position*. Ethnographic-Historical Studies of the History of the Armenian Church (S. Mkhitarayan, Ed.). Lusabats, 45-55 (in Armenian).
- Mar, N., Smirnov Y. (1931). *Vishaps* (vol. 1). *Proceedings of the State Academy of Material Culture History*. Leningrad, Iv. Fedorov (in Russian).
- Mkhitar Gosh. (2014). *Law Code, Torosean Kh.* (ed.), prepared for publication by G. Gasparian, "Armenian classical authors", Vol: 19, book 1, Yerevan (in Armenian).
- Orbelean, S. (1910). *History of the province of Sisakan*. N. Aghaneants (in Armenian).
- Smbatean, A. (1930). *A brief history of Tatev*. "Tatev" yearbook of literature and art, vol 6, Aleppo-Syria "Araks", 276-351 (in Armenian).
- Ter-Avetisyan, S. (2010). *The Shamiram canal built by the Urartian king Menua I*, *Armenian studies* (A. Kalantaryan, ed.). Gitutyun, 463-470 (in Armenian).
- Ter-Minasyan, E. (1961). *Antiquities and Inscriptions of Amberdadzor*. *Etchmiadzin*, 5, 45-56 (in Armenian).



# EVIDENCE OF WATER USE IN EPIGRAPHIC INSCRIPTIONS OF ARAGATSOTN

Ashot Manucharyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

## Abstract

The rich epigraphic heritage of the Aragatsotn region includes more than one and a half dozen inscriptions related to the use of water, which are dated from 783 to 1707. Those inscriptions were divided into two groups. In the first one, we included the inscriptions that tell about the construction of water pipelines, and ditches, their restoration, as well as building of a reservoir and a mill. The second group includes inscriptions attesting to the regulations of water use.

The Aruch inscription of 867 is of exceptional value. It is about a clash between three neighboring villages - Avan, Aruch and Gavarn - over the use of water. These villages were in the possession of the Armenian commander-in-chief, later King Smbat I Bagratuni (890–914). The conflict was fairly settled by Grigor Varamyan, the official of Smbat Bagratuni, according to the previously officially defined norms. The inscription ends with a sentence that is not found in the epigraphic sources known to us: violators will be executed by Smbat.

**Keywords:** water use, Aragatsotn, Talin, Aruch, inscription, ditch, collision, settlement.

## ՋՐՕՂՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԱԳԱՃՈՏՆԻ ՎԻՄԱԳՐԵՐՈՒՄ

Աշոտ Մանուչարյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

### Անվտիպագիր

Արագածոտնի մարզի վիմագրական հարուստ ժառանգության մեջ հանդիպում են ավելի քան մեկուկես տասնյակ արձանագրություններ՝ ջրի օգտագործման հետ կապված: Դրանք թվագրվում են 783-1707 թթ.: Այդ արձանագրությունները մենք բաժանել ենք երկու խմբի: Առաջինում ընդգրկել ենք այն արձանագրությունները, որոնցում խոսվում է ջրատարների, ջրազծերի, առուների անցկաման, դրանց նորոգման, ջրամբարի, ջրաղացի կառուցման մասին: Երկրորդ խմբում ներառվել են այն արձանագրությունները, որոնք վկայում են ջրի օգտագործման կարգավորումների մասին:

Բացառիկ աղբյուրագիտական արժեք է ներկայացնում Արուճի 867 թ. արձանագրությունը, որը վկայում է ջրի օգտագործման շուրջ երեք հարևան գյուղերի՝ Ավանի, Արուճի և Գավառի միջև ծագած կռիվի մասին: Այդ գյուղերը գտնվել են Հայոց գորապետ, հետագայի թագավոր Սմբատ I Բագրատունու (890–914) տիրույթներում: Խնդիրը Սմբատ Բագրատունու հրամանով արդարացի կերպով կարգավորել է նրա պաշտոնյա Գրիգոր Վառամյանը՝ ըստ նախկինում պաշտոնապես սահմանված չափաբաժինների: Արձանագրությունն ավարտվում է մեզ հայտնի վիմագրերում չհանդիպող վճռով. կարգը խախտողները մահապատժի կենթարկվեն Սմբատի կողմից:

**Հիմնաբառեր.** Արագածոտն, Թալին, Արուճ, ջրօգտագործում, վիմագիր, ջրատար, առու, վեճ, կարգավորում:

### Ներածություն

Արագածոտնի մարզի՝ մեզ հայտնի վիմական սկզբնաղբյուրներում հանդիպում են ջրի հետ կապված ավելի քան մեկուկես տասնյակ արձանագրություններ: Դրանք թվագրվում են VIII դ. վերջին քառորդից մինչև XVIII դ. սկիզբ: Այդ արձանագրությունները մենք դասակարգել ենք երկու խմբի: Առաջինում ընդգրկել ենք այն վիմագրերը, որոնցում խոսք է գնում ջրատարի (ջրազծի, առվի) անցկացման շուրջ (վեց արձանագրություն), ջրամբարի

շինության, ջրաղացի կառուցման մասին (մեկական վիմագրական փաստեր) և առվի նորոգման վերաբերյալ (երկու վիմական բնագիր): Ընդ որում, վերջիններս հետաքրքրական են նրանով, որ նույն առու նորոգվել է երկու անգամ՝ XIII դ. վերջին և XVII դ. վերջին-XVIII դ. սկզբին: Երկրորդ խմբում ներառվել են այն վիմագրերը, որոնք վկայում են ջրի օգտագործման կարգավորումը (երեք արձանագրություն), ջրաբաժնի նվիրատվությունը (մեկ վիմագրական փաստ) և ջրատարի ապահարկությունը (մեկ վիմական բնագիր):

Մույն հողվածում օգտագործվել են ոչ միայն ցարդ հայտի արձանագրություններ, այլև մեր կողմից վիմագրական դաշտային աշխատանքների ընթացքում ընդօրինակված, վերծանված և դեռևս չիրապարակված վիմագրերի վկայությունների ակնարկներ: Դրանց թիվը չորսն է:


Հայտնի է, որ երկրագործությունը Հայաստանում, ինչպես և մյուս նստակյաց ժողովուրդների մոտ, հին ժամանակներում եղել է տնտեսության առաջատար ճյուղը: Երկրագործության զարգացման, հողերի մշակման, նոր վարելահողերի յուրացման, հողատարածքների ընդլայնման համար կարևորագույն նշանակություն են ունեցել ջրանցքների, ջրամբարների կառուցումը, ջրատարների, ջրագծերի անցկացումը, առուներ փորելը: Զուգահեռաբար անհրաժեշտ են եղել ջրօգտագործման կարգի, չսփաբաժնի սահմանումը, ի հայտ եկած խնդիրների, վեճերի կարգավորումը:

Դրանց առնչվող հետաքրքրական հիշատակություններ են պահպանվել Արագածոտնի վիմագրերում: Այդ արձանագրությունների մեծ մասը՝ սկսած XIX դ., հրատարակվել է մի շարք ուսումնասիրողների կողմից: Նրանց վերծանությունները հիմնականում ճշգրիտ են, բայց երբեմն հանդիպում են անճշտություններ, տարբերություններ, բովանդակային թյուրըմբռնումներ, հատկապես՝ բնագրերում առկա արաբերեն բառերի իմաստային ընկալումների հետ կապված: Դա էլ օրինաչափ է, քանի որ այդ բառերն ուսումնասիրողներին անհասկա-

նալի են եղել, ուստի լրիվությամբ չեն ընկալվել բնագրային բովանդակությունները:

**Ջրագծերի, առուների անցկացում, ջրամբարների, ջրավազանների կառուցում**

1-1. Թալինի Ս. Կաթողիկե վանքի առաջնորդ Ուխտատուրը (բնագրում գրված է ՎԱՆԱՅԿԱՆ: Վաղ միջնադարում, երբ սուրբ ուխտի միաբանները՝ կրոնավորները, հրաժարվում էին նվիրապետական աստիճաններից, վանահայրը կոչվում էր վանական (Manucharyan, 2019, 45-55)) և նրա եղբայր Տուտին 783 թ. ուղղանկյուն երկաթագիր տառաձևերով արձանագրում են, որ իրենք **ԲԵՐՐ/ԱՔ ԶՆԱՂԲԻԻՐՄՆ Ի ԼՔԱՐԿԱՊԱ/ՆՈՒ ԲՎԱՏԵՆ Ի ԹԱԼԻՆ** (Ghafadaryan, 2007, 165) (Արձանագրության հինգերորդ տողի ՎԱՏԵՆ բառը Ղ. Ալիշանը պայմանականորեն վերականգնել է ԴԱՇՏԵՆ [Alis-han, 1890, 139], իսկ Գ. Հովսեփյանը դրա սկզբնամասում նշմարել է «Ի»- նմանվող տառի մնացորդ, բայց հարցականով վերծանել է ԱՄԵՆ (Hovsepyan, 1913, 10-11)) : Ի դեպ, այս վիմագիրը հայերեն թվագիր ունեցող ցարդ հայտնի վաղագույն շինարարական արձանագրությունն է (Avagyan, 1973, 312): ՎԱՏԵՆ բառը, որտեղ «Վ» սկզբնատառը շրջագիր է, ճիշտ է վերծանել Կ. Ղաֆադարյանը: Այն արաբերեն ۱۰۷ «ուադի» («հովիտ», «կիրճ») բառի հայերեն արտասանության ձևն է: Ստացվում է, որ ջրերը Թալին բերել են Քարկապանի (ներկայիս Ակունքի) հովտի (կիրճի) աղբյուրներից:




Նկ.1. Թալինի Ս. Կաթողիկե եկեղեցու 783 թ. վիմագիրը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)

Ըստ Ա. Ասատրյանի՝ 1972 թ. նոյեմբերին Թալինի միջնակարգ դպրոցի մի խումբ աշակերտներ ջրագիծ անցկացնելու համար փորված խանդակում պատահաբար նկատում են կավից պատրաստված երկու խողովակ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք VIII դարում կառուցված Ակունք-Թալին ջրատարի խողովակներից են: Հայտնաբերված խողովակները պատրաստված էին հատուկ կաղապարներով, որոնք իրար էին ագուցվում ելուստներով և փոսիկներով: Խողովակների երկարությունը

80 սմ էր, իսկ լանությունը մի կողմում՝ 12 սմ, մյուսում՝ 10 սմ, իսկ ելուստը՝ 2 սմ: Ակունքից Թալին մոտ 5 կմ է: Քանի հարյուրավոր նման խողովակ է անհրաժեշտ եղել ջրուղու անցկացման համար (Asatryan, 2022, 55-56): Ուշագրավ է փաստը, որ ջուրը ոչ միայն վանքն էր օգտագործելու, այլև ողջ Թալինը:


1-2. Բյուրականի Ս. Հովհաննես վանքի վանահայր Գրիգորը 984 թ. ձեռք է բերում Հայաթաղի ջրի ակունքները՝ **ԶՀԱՅԱ/ԹԱՂԻՆ ԶԱԿՆ ԴՐԻ** և այնտեղից **ԶԱՌՈՒՆ ՀԱՆԻ** (Ter-Minasyan, 1961, 48):



Նկ. 2. Բյուրականի Ս. Հովհաննես եկեղեցու 984 թ. վիմագիրը  
(Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)

1-3. Ոմն Յիսիհուր 1081 թ. սեփական միջոցներով կառուցում է ջրամբար՝ ՈՐ ԿԱՊԷՑ Ի ԾՈՒՎՆ, նաև առնում հովիտ և վարելահող ու նվիրում Քաղենիի (Դաշտաղենի) Ս. Քրիստափոր վանքին


(Gasparyan, 2008, 11, 52): (Յիսիհուր անունը ծագում է արաբ. Էջուս [իյսա] Հիտուս և հայերեն «հուր» բառից: Ստացվում է՝ Հիտուսի հուր):



Նկ. 3. Դաշտաղենի Ս. Քրիստափոր եկեղեցու 1081 թ. արձանագրությունը  
(Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)


1-4. Ս. Քրիստափոր եկեղեցու արևմտյան մասում գտնվում է երեք տողանոց արձանագիր բեկոր, որում խոսվում է վանքի միաբանների կող-

մից ջրատար անցկացնելու մասին (Manucharyan, 2024):




Նկ. 4. Արձանագիր բեկոր Դաշտաղենի Ս. Քրիստափոր եկեղեցու բակից  
(Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)

1-5. Մելիք անունով մեկը 1155 թ. մեծ ջրատար-ներով ջուր է բերել Կոշավանք (Manucharyan, 2024):



Նկ. 5. Կոշավանքի 1155 թ. արձանագրությունը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)


1-6. Մամայաթուն իշխանուհու մայր Վախա-խը 1221 թ. ջրատար է անցկացնում իր դստեր նորա-հիմն Տեղերի վանք և խաչքար կանգնեցնում **ԵՍ ՎԱԽ/ԱԽ ԶԶՈՒՐՍ ԲԵՐԻ ԵՒ Զ/ԽԱԶՍ ԿԱՆԿ-ՆԵՑԻ** (Ter-Minasyan, 1961, 54): (Muradyan, 1987, 209 [արձանագրության թվականը՝ 1201]; Karapetyan, 2013, 30; Արձանագրության թվականը ճիշտ է ըն-թերցել Ս. Կարապետյանը՝ 1221):



Նկ. 6. Տեղերի վանքի 1221 թ. արձանագրությունը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Ս. Կարապետյանի)


1-7. Հակոբ երեցը Աշտարակի Ս. Աստվածա-ծին Կարմրավոր եկեղեցու հարավային խաչաթևի արևմտյան եզրի 1292 թ. արձանագրությամբ հայտ-նում է, որ **ԸՍՏ ԿԱՐԻ ՄԵՐՈՅ ՆՈՐՈԳԵ/ՑԻ ԶՄԵԾ ԱՌՈՒ ՏԵՂՈՅՍ ԲԱԶՈՒՄ ԱԾԽԱՏՈՒԹԵ, ՈՐ ԽԱԽՏ ԷՐ Ի ՀԻՄԱՆՑ, / ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ** (Saghumyan, 1998, 156): (Արձանագրությունն այսօր ամբողջությամբ չի պահպանվել: Բնագրի առաջին հրատարակիչ Հովհ. Շահխաթունյանցի գործունեության տարիներին գրվածքը եղել է ամ-բողջական: Ս. Սաղումյանի պարզաբանմամբ՝ 1860 թ. եկեղեցուն կցվել է ժողովարան, որի ծածկի գե-րանների հենարաններ անելու դյուրին ուղին ընտ-րելով՝ ջարդել են որմնածքի քարերը՝ անվերադարձ ոչնչացնելով ջրանցքի նորոգման հիշատակագրի

կես մասը: Այն, տողանցելով եկեղեցին հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք գտնվող VII դ. շինարարական արձանագրությունը, շարունակվել է ցածում, որտեղ Հովհ. Շահխաթունյանցը կարդա-ցել է բնագրի շարունակությունը, որն ավարտվում է 1292 թվականով (Shakhkhatuneants, 2014, 264)):



Նկ. 7 Աշտարակի Ս. Աստվածածին Կարմրավոր եկեղեցու հարավային խաչաթևի արևմտյան եզրի 1292 թ. արձանագրությունը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)


1-8. Աշտարակի պատմական գերեզմանոցում, «Ծակ Խաչ»-ից մոտ 30 մ հարավ, կա սևագույն, դա-գաղաձև տապանաքար, որի հարավային նիստի արձանագրությունից իմանում ենք, որ այդտեղ ամ-փովված է Աշտարակի գյուղապետ Գոլոշենց Այվա-զը՝ վախճանված 1707 թ. (Saghumyan, 1998, 198): Ըստ տապանագրի՝ նա մտահոգ է եղել գյուղի խնդիրներով, և թեև փող չունենալով՝ կարողացել է նորոգել Աշտարակի Վերի (Մեծ) առուն:



Նկ. 8 Գոլոշենց Այվազի տապանաքարն Աշտարակի պատմական գերեզմանոցում (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)


Հետաքրքրական է, որ տապանագրի տակ պատկերված է Այվազը՝ մի ձեռքով դատարկ քսակ, մյուսով՝ գինու գավ բռնած: Ե. Շահազիզն Այվազ Գալաշյանի մասին (Ս. Սաղոմյանի ենթադրությանը՝ քաղված ժողովրդական գրույցներից) գրում է, որ նա իր ունեցածն ամբողջությամբ առվի վրա ծախսելով՝ գնացել է Արևմտյան Հայաստան, որտեղ գումար է հանգանակել ու բերել, մինչև վերջին կոպեկը գյուղի համար ներդրել (Saghumyan, 1998, 199; Shahaziz, 1987, 53) :

1-9. Տեր Մ(ա)նեն 1451թ. Թաթար կոչվող ջուրը բերում է Մաստարայի Ս.Հովհաննես վանք (Manucharyan, 2024):



Նկ. 9 Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցու վիմագիրը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)


1-10. Ուշիի վանքի տարածքում կա արձանագիր քար, ըստ որի՝ 1658թ. ուն **ԱԻՏՏԻՔ ԶՈՒՂՎԵՑԻ՝ ՈՐԴԻ ՆՈՒԲՎԵՐՏՈ**, կանգնեցրել է **ԶԶՐԱՂԱՅՍ ՅԻՇԱՏԱԿ / ՎԱՆԻՑ ՅՈՒՇԻՈՅ ՄԲ ՍԱՐԳՍԻ** (Manucharyan, 2024):



Նկ. 10 Ուշիի ջրաղացի կառուցման 1658 թ. վկայագիրը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)

1-11. Սաղմոսավանքի Ս. Աստվածածին եկեղեցի-գրատան հյուսիսային սյան վրայի արձանագրությանը Մանեսը և նրա եղբայրներ Վաչեն ու Գրիգորը հայտնում են, որ միաբանվելով Սաղմոսավանքի Ս. Ուխտին՝ **ՏՈՒԱՔ Ի ՄԵՐ ՀԱՅՅՈՒՆԻ՝ ԳԵՂԷՍ ԱՂԲՆԱԳԵՂՈ ՀԱՆԴԵՆ ԶՓՆԴԻԿԻ ՏԱՓՆ, ՈՐՉԱՔ ԶՈՒԲԻՆ ԴՈՒԴՐՍ ԳԱ :Ա: (1) /**

**ԳՈՒԹԱՆԻ ՀՈՂ ՃԱՂԱԳ/ՈՎՆ, ԶՐՈՎԻ** (Yeghiazaryan, 1961, 44) :



Նկ. 11 Սաղմոսավանքի Ս. Աստվածածին եկեղեցի-գրատան հյուսիսային սյան արձանագրությունը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)

Երեք նվիրատու եղբայրները, հնարավոր է, որ լինեն Վաչուտյան տոհմի ներկայացուցիչներ, քանի որ Աղբնագյուղը (ներկայիս Ափնագյուղը) մաս է կազմել այդ նշանավոր իշխանական տան տիրույթների: Կարծում ենք՝ արձանագրությունը XIV դարի է: ՈՐՉԱՔ-ը նույն ՈՐՉԱԿ-ն է: Այն նշանակում է ՈՐՉԱՓ (Ghazaryan, II, 2000, 350) :


Ավելորդ չենք համարում նշել, որ մեկ գույթանի հողը «(որքան գույթանը կարող է վարել մի օրում) հաասար է մօտաւորապէս 8/11 հեկտարի» (Malkhasyants, IV, 1944, 615) , այսինքն՝ մոտ 730 քառ. մետր:

Ճաղագը «մացառներով կամ թփերով ծածկված տեղն է» (Malkhasyants, III, 1944, 193):

**Ջրօգտագործման չափաբաժինների սահմանում, վեճերի կարգավորում**

2-1. Արուճի Ս. Կաթողիկե եկեղեցու հարավային պատի արևելյան ելուստին, ներքուստ, 13 տողով արձանագրված է հետևյալը.

**:ՅԺԶ: (867) ԹՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ, ՅԻ/ ՇԽԱՆՈՒԹԻ ԱՇՈՏՈՅ ԵՒ Ի ՏԵՐՈՒԹԻ ՍՄԲԱՏԱՅ՝ / ՀԱՈՑ ԱՍՊԱՐԱՊԵՏԻ ԲԱԳՐԱՏՈՒՆՈՅ ԵՒ Ի ԿԱԹԱՂԻԿՈՍՈՒԹԻ ԶԱՔԱՐԻԱԷ ԵՂԵՒ ԿՈՒԻ ԸՆԴ ԅԱՐՈՒՃ ԵՒ ԸՆԴ ԿՈՇ ԵՒ / ԸՆԴ ԳԱՒԱՌՆ: ԷՀԱՐ ԱՐՈՒՃ ԶԿՈՇ ԵՒ ԶԳԱՒԱՌՆ ԵՒ ԿԱԼԱԻ / ԶԿՈՇԱ ՎԱՆԱ ԿԱՆՆ ԵՒ Ի ՔՐԹՎԱՆԻՆ ԸՆԴ ԱՆԿԻՆ ՄԻՆ ԹԱ/ՆԻ ՎԱՃԱՌԵՑԻՆ: ԵՄ՝ ԳՐԻԳՈՐ, ՈՐԴԻ ՎԱՌԱՄԱ, ԾԱՌԱ ՍՄ/ ԲԱՏԱ ԲԱԳՐԱՏՈՒՆՈ, ԵԿԻ ՀՐԱՄԱՆԱԻ ՍՄԲԱՏԱ, ԵՒ ԵՍ ՀԱՒԱՍԱՐԵՑԻ ԶԶՈՒՐՆ ԸՆԴ ԿՈՇ ԵՒ ԸՆԴ ԅԱՐՈՒՃ, ԶԻՆ/Չ ԻՒՐԱՆՑ ԲՆԻԿ ՌԱՍՄ ԷՐ ԼԵԼ՝ :Ա: (1) ԵՒ**



Նկ. 12 Արունի Ս. Կաթողիկե եկեղեցու 867 թ. հրամանագիրը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի, գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)

**ԿԷՍ ԿՈՇԱ ԵՒ :Ա: (1)՝ ԱՐՃ/Ո: ԱՐԳ ԵԹԷ ԱՅԼ ՈՔ ՀԱԿԱՌԱԿԵԼ ՋԱՆԱ, ԱՅԼ ԱԻԵԼԻ Ռ/ԱՍՄ ՅՈՒԶԷ, :ՅԺԸ: (318) ՍՈՒՐԲ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՆՁՈՎՂԵԼԱՂԼ ԼԻՑԻ ԵՒ / Ի ՄԱԲԱՏԱ ՄԱՀՈՒԱՄԲ ՊԱՏՈՒՀԱՄԻ** (Matevosyan, 1987, 61):

Բացառիկ աղբյուրագիտական արժեք ներկայացնող այս արձանագրությունը հետաքրքրական է մի քանի առումով: Նախ, ըստ Ս. Ավագյանի, ինչպես հղում է Կ. Մաթևոսյանը, այս արձանագրությունն ջրօգտագործման չափը որոշող առայժմ հայտնի հնագույն վիմագրական վկայությունն է (Matevosyan, 1987, 59; Avagyan, 1978, 41): Նաև հնագույն է հայ սղագրության մեջ երկրորդ, երրորդ և չորրորդ տողերում ՅԻՇԽԱՆՈՒԹԻ, ՏԵՐՈՒԹԻ, ԿԱԹԱՂԻԿՈՍՈՒԹԻ բառերի «ԹԻԻՆ» վերջավորության ԹԻ պատվանշանով կրճատ գրվածքով (Hovsepyan, 1913, 12; Matevosyan, 1987, 60):

Այս վիմագրում որպես Հայոց (ա)սպարապետ հիշատակված է ոչ թե, ինչպես մատենագրական աղբյուրներն են վկայում, Աբաս Բագրատունին, այլ նրա եղբորորդի Սմբատը, որը, անշուշտ, հետագայի Սմբատ I Բագրատունի թագավորն է՝ 890–914 թթ.: Կարելի է ենթադրել, որ այդ պաշտոնը մի կարճ ժամանակ երիտասարդ տարիքում վարել է Սմբատ I-ը: Եվ երբ հայրը՝ Աշոտ իշխանաց իշխանը, երկրի ներսում 874 թ. ճանաչվել է Հայոց թագավոր, Սմբատն էլ, ինքնըստինքյան, դարձել է գահաժառանգ՝ որոշակի գործառնությունով: Դրանից անմիջապես հետո Հայոց սպարապետ է նշանակվել Աշոտ իշխանաց իշխանի եղբայր Աբասը:

Եվ ահա Սմբատ Բագրատունու տիրոջնություն գտնվող երեք գյուղերի՝ Արունի, Կոշի և Գավառնի միջև կոնիվ է ընկնում ջրի օգտագործման համար: Առաջին երկու գյուղերի անուններն էլ այսօր նույնն են: Ինչ վերաբերում է երրորդ բնակավայրին՝ Գավառնին, ապա Կ. Մաթևոսյանը չի բացառում, որ այն ներկայիս Շամիրամ գյուղն է (Matevosyan, 1987, 60): Ուշագրավ է ջրի շուրջ հակամար-

տությունը կարգավորող պաշտոնյայի անունը՝ Գրիգոր՝ որդի Վառամա (Վահրամա), որը մեր բացահայտմամբ՝ Պահլավունյաց տոհմի նախնիներից է (Manucharyan, 2015a, 30–45):

Հետաքրքիր է, որ Գրիգորը Սմբատ Բագրատունու հրամանով գալիս և տեղում խնդիրը լուծում է՝ ըստ Կոշի և Արունի բնիկ ոսամի (արաբ. *فام* = «գծագիր», «նախագիծ», «պլան») հիման վրա, ինչպես որ եղել էր, այսինքն՝ 1,5 Կոշին (ենթադրելի է, որ Կոշի հասանելիք բաժնից իր մասն ուներ Գավառն գյուղը, գուցե 0,5) և 1՝ Արունին:

Հարկ է նշել, որ այս արձանագրությունը հանգամանակից քննության է ենթարկել Թ. Արդալբեգյանը՝ 1930 թ. հունվարի 11-ին ԳԱ Արվեստի ինստիտուտում՝ հանդես գալով զեկուցմամբ: Սակայն զեկուցումը մնացել է անտիպ, մինչև որ Ա. Մաթևոսյանը հրատարակել է այն 1986 թ. (Markosyan, 1986, 65–80):

Ճիշտն ասած՝ համամիտ չենք գիտնականի հետ այն հարցում, որ «Քրթավան» տեղանունը կապում է «Քուրդ» հատուկ անվան կամ քրդերի հետ (Markosyan, 1986, 65–80):

Մեր հանգամանակից ուսումնասիրությամբ՝ Քրթավանը ներկայիս Ավան գյուղն է: Այն Քրթավան է կոչվել՝ կապված VII դ. նշանավոր գիտնական, աստվածաբան Թեոդորոս Քոթենավոր Ճգնավորի անվան հետ, որի հիմնադրած Արագածոտնի Ս. Աստվածածին դպրավանքը, մեր ճշգրտմամբ, գործել է ներկայիս Ավան գյուղում (Manucharyan, 2019, 56–65):

Ինչ վերաբերում է ԿԱԼԱԻ / ԶԿՈՇԱ ՎԱՆԱ ԿԱՆՆ ԵՒ Ի ՔՐԹՎԱՆԻՆ ԸՆԴ ԱՆԿԻՆ ՄԻՆ ԹԱՆԻ ՎԱՃԱՌԵՑԻՆ հատվածին, ապա կարիք չկա այն վերախմբագրելու և ԹԱՆ-ը ԹԱԼԻՆ դարձնելու, ինչպես կատարել է Թ. Արդալբեգյանը (Markosyan, 1986, 78–79): Վերոհիշյալ հատվածը պետք է թարգմանվի. «Վերցրեց (Արունը) Կոշավանի ջրանցքը, առուն («կանը») ծագում է արաբ.

«նա՛ն» «կղանա», «կղանաթ» բառից, որ նշանակում է «ջրանցք», «канал») և Քրթավանին պատշաճեցրեց (ընդ անկին )՝ մին թանով (աննշան գնով) վաճառելով»: («Անկ» նշանակում է «պատշաճաոր, պատշաճ, վայելույ, յարմար» [Ghazaryan, 2000, I, 101]:) Կոշավանքի ջրանցքը պետք է որ սկիզբ առներ աղբյուրներով հարուստ Ավան գյուղից, որին էլ այն մի թանի գնով վաճառել են:

Խիստ սարսափազդու է վիմագրի վերջաբանը, որը վճռին հակառակվողներին կամ սահմանվածից ավելին ուզողներին ոչ միայն արժանացնում է 325 թ. Նիկեական առաջին տիեզերաժողովի մասնակից 318 հայրապետների նգովքին, այլև սպառնում է Սմբատ Բագրատունու կողմից մահապատժով: Սա նշանակում է՝ որքան է կարևորվել խնդրի արդարացի լուծումը:

2-2. Ավելի մեղմ որոշում կայացվել է Հովհաննավանքում. Շահնշահ I Զաքարյանի իշխանության օրոք (1212-1251) սուրբ ուխտի միաբան եղբայրները՝ առաջնորդությամբ Սարգիս Միայնավորի, հաստատում են. **ԷԹԷ ԱՌԱՋՆՈՐԴ ԴԱՄ ԱՅԼ / ՈՔ ԶԵԿԵՂԵՑՈՅՍ ՄԻԱԲԱՆԱՅՍ / ԶՈՒՐ Ի ԴՈՒՍ ՏԱ, ՆՁՈՒՎԱԾ Է Ի ՏԷ** (Ghafadaryan, 1948, 96):

ԱՆՈՒԱՍԲՆԱՅԵԻՅ . . . .  
 ՈՇԵՆՆՇԱՅԻՆՇԱՅԻ . .  
 ՌԴԱԽՈՒՅԵՍԻ ԵԻՅ Ա . . . .  
 ՈՒՇԵՍԱԳԻՄԻԱՅԻ . . . .  
 ԲԱԵՔԱՔՄԲՈՒՄԻՍԿԱ . . . .  
 ԱՔԵՈՒԵԱՌԱՋՆՈՐԴԱ . . . .  
 ՈՔՁԵԿԵՂԵ ՑՈՅՍ . . . .  
 ԶՈՒՐԻ ԴՈՒՍՏԱՆՁՈՒԿ . . . .

նկ. 13. Արձանագրության գրչագիր Հովհաննավանքից (Գրչագիրը՝ Կ. Ղաֆադարյանի)

2-3. Եթե 984 թ. առաջին վիմագրով Բյուրականի Ս. Հովհաննեսի վանքի հայր Տեր Գրիգորը հայտնում է միայն Հայաթաղի աղբյուրներ ձեռք բերելու և առու անցկացնելու մասին, ապա նույն թվականի մեկ այլ արձանագրությամբ մանրամասնում է՝ սահմանելով նաև ջրօգտագործման չափաբաժինները.

+ ՆԼԳ (984), ԵՄ՝ ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐ, / ՈՐ ՀԱՅԱԹԱՂԻ ԶԱԿՄԵ ԴՐԻ ԵՒ ԶԱՌՈՒՍ ՀԱՆԻ ԵՒ ՏՐՈՒՆԻ ՀՐԱՄԱՆՈՎ ԶՀԱՅԱԹԱՂԻ / ՀԱՄԵՍ ԿՏՐԵՑԻ ԲԻՒՐԱԿԱՆԻ ՀԱՆԾԱԻԵՑ ՃԱՆԱՊԱՐՀԵՆ Ի ՎԵՐ, ՈՐ Ի ԴՐԱՑ ԱՆՑԱՆԻ ԵՒ / ԶՁՈՒՐՍ Ի ՇԱԲԱԹՈՒՆ :Գ: (3) ԱՐ Ի ԲԻՒՐԱԿԱՆ ԵՒ :Դ: (4) Ի ՀԱՅԱԹԱՂԵ (Ter-Minasyan, 1961, 48):



նկ. 14 Բյուրականի Ս. Հովհաննեսի վանքի 984 թ. արձանագրությունը (Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի)

Վիմագրից ակնառու է, որ Բյուրականը եղել է վանքապատկան գյուղ, քանի որ այդտեղ տնտեսական գործերը տնօրինում է վանահայրը: Անշուշտ, Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը (898-929) իր գանձագին դաստակերտ Բյուրականը կտակել է Հայոց նվիրապետությանը: Ի դեպ, Բյուրականն ուղ միջնադարում անգամ պատկանել է Մայր Աթոռին: Մտահոգ վանահայր Գրիգոր վարդապետը հայրապետական հրամանով (984 թ. Հայոց Մեծաց կաթողիկոսը Խաչիկ Ա. Արշարունին էր՝ 973-990), Հայաթաղի աղբյուրներից առու հանելով, այն վայրից, որ անցնում էր Բյուրականի անձավների ճանապարհի վերևով, կտրում է Հայաթաղի հասանելիքից և շաբաթական երեք օր ջուր հատկացնում Բյուրականին, իսկ Հայաթաղին՝ չորս օր: Չենք կարծում, թե Հայաթաղը նույնանա ներկայիս Անտառուտի հետ, որի «Ինաքլու» թուրքական անվանումը մեր երջանկահիշատակ ընկերոջ՝ բանասեր Սարգիս Միսիթարյանի բանավոր դիտարկմամբ՝ Իննակնյա (Աշտիշատի մոտ վաղագույն ժամանակներում գտնված պաշտամունքատեղիի նմանությամբ) հայկական տեղանվան նենգավոխված ձև է: Ի դեպ, Անտառուտում՝ Կաթնաղբյուր կոչվող վայրում, կա եկեղեցի-մատուռ, որի բակում աղբյուր է հոսում: Կաթնաղբյուրի մասին Գ. Տեր-Մկրտչյանը հայտնում է ազգագրական տեսանկյունից ուշագրավ տեղեկություն, այն, որ այդտեղ «ուխտի են գալիս այն մանկամարդ կանայք, որոնց կաթը կտրված է» (Ter-Mkrtychyan, 1979, 422) :

2-4. Կոշավանքի առաջնորդ հայր Յոհաննեսը ՇԺ (1061) թ. ԲԱՋՈՒԽՄ՝ / ԱՇԽԱՏՈՒԹՎԵԱՄԻՐ ՍԱՍՏԻԿ ԵՐԴՈՒԵԱԼ ԿՈՇԱ ՏԱՆՈՒՏԵՐԱԹՍ, / ԴԱՍՏԱՌՈՐՆ, ԱԻԱԳԵՐԵՑՆ, ՄԱՆԿԵՒԱԳՆ ԹԱՓԵՑԻՆ ԶԲՆԱՋՈՒՐ ԱՌՈՒՆ :Մ: (200) ԴԱՀԵԿԱՆԻ ԳԻՐ ՈՐ ԱԻԱԳԻՆ ՏԱՆ (Manucharyan, 2015b, 14-15):



ՅՄԱՐԻԱՆԵՆ ԵԿԵՂԵԳՈՒ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-  
ԱՅԻՆ ԿԱՏՈՒՄ ԵՄ ԿՅՈՒՍԻ-

նկ. 15 Կոշավանքի 1061 թ. վիմագիրը  
(Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի,  
գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)

Արձանագրության բովանդակությանն անդրադարձել է Ս. Հակոբյանը: Նա կարծել է, թե բնագրում խոսք է գնում «գրնաջուր առուի» անցկացման մասին, որը «բազում աշխատությամբ կատարել է հայր Հովհաննեսը Կոշի տանուտերերի հետ միասին՝ ծախսելով :Մ: (200) դահեկան» (Մխիթար վարդապետ Տեր- Մկրտչյանը վիմագրի թվականը կարդացել է սխալ՝ ՇԾ [1101] թ. [Mkhitar archimandrite Ter-Mkrtchean, 1903, 27]: Մյուսն ուղղել է Ս. Ավագյանը՝ ՇԺ [1061] թ. [Avagyan, 1978, 46, 100]: Երկրորդ տողում Մ. վրդ. Տեր Մկրտչյանը «աստիկ» բառը վերծանել է «ամսիկ», իսկ Ս. Ավագյանը՝ «Մաղատին» և հատուկ անուն կարծելով՝ այն գրել է մեծատառով: Մանկելվագը, որ կոչվել է նաև մանկտավագ, մանուկների, պատանիների քրիստոնեական և ֆիզիկական դաստիարակության դպրոցի տնօրենն էր: Աղբյուրներից մեզ հայտնի են Կոշի և Երզնկայի նման դպրոցները):

Ս. Ավագյանը, անհավանական համարելով Ս. Հակոբյանի տեսակետը, բնագրի հիմնական բովանդակությունից հասկանում է, որ «Կոշի վանահայր Յոհաննեսի, Կոշի տանուտերերի, դատավորի, ավագերեցի և մանկելվագի ջանքերով 200 դահեկանով թափել են, այսինքն՝ ազատել կամ գրավականը վերադարձնելով՝ հետ են վերցրել բնաջուր (բնական) առուն, 200 դահեկանը կամ ազատման գինը տալով Աւագին (աւագին), որը կամ անձնանուն է կամ իրավասու պաշտոնյա», այսինքն՝ «Կոշի վանքի առաջնորդ Յովանեսը և տեղի պաշտոնյաները 200 դահեկանով թափել են վանքին պատկանող առուն, աղբյուրը, որը, ըստ երևույթին, մինչ այդ վաճառված, խլված կամ գրավ դրված է եղել: Հնարավոր է նաև, որ այդ փրկագինը վճարվել է այն հողատերերին, որոնց հողամասերի միջով անցկացված է եղել բնաջուր առուն» (Avagyan, 1978, 46-48) :

Չի բացառվում, որ բնաջուր առուն լինի այն ջրանցքը, որը 867 թ. գրավել էին արուճցիները: Ինչ վերաբերում է «աւագ»-ին, ապա այն կարելի է հասկանալ՝ «գեղջուրագ»:

2-5. Աշտարակի Ս. Մարիանե եկեղեցու հյուսիսային պատին ներքուստ փորագրված է հետևյալ արձանագրությունը.

**ՅԻՇԽԱՆՈՒԹԵԼԱՆ՝ ԵՒ ՏԵՐՈՒԹԵ  
ՊԱՐՈՆ ԽՈՒԹ/ԼՈՒԲՈՒՎԱԻՆ, ԵՄ՝  
ԱԻԵՏԻՍ, ՈՐԴԻ ՏԵՐ ՈՒՍՈՒՄԻՆ, ԵՏՈՒ /  
ՅԻՄՈՒՄ ՁԵՌՆԱԻՈՐՈՒԹԵՍ ԶՎԵՐԻ  
ԱՌՎԻՆ ՁԵՌՆԱԻՈՐ/Ա ԶՈՒՐՆ Ի ՄԲ  
ՄԱՐԻԱՆԵՍ. . Ի ԹՎԻՆ ՉԼԴ (1285)  
(Saghumyan, 1998, 210):**



ՅԻՇԻՆՈՒԹԵԼԱՆ ԵՒ ՏԵՐՈՒԹԵ  
ՊԱՐՈՆ ԽՈՒԹ ԵՄ ՄԱՐԻԱՆԵ  
Ս. ԶՈՒՐՆ Ի ՄԲ ՄԱՐԻԱՆԵՍ  
ՉԼԴ Ի ԹՎԻՆ ՉԼԴ

նկ. 16 Աշտարակի Ս. Մարիանե եկեղեցու  
1285 թ. արձանագրությունը  
(Լուսանկարը՝ Ա. Մանուչարյանի,  
գրչագիրը՝ Գ. Համբարձումյանի)

Արձանագրությունը վերլուծության է ենթարկել Ս. Մաղումյանը՝ մասնավորեցնելով, որ «1283 թ. մահացած Մաղուն Բ-ի որդի, աթաբեկ և ամիրսպասալար Խությունբուդայի իշխանության ու տերության ներքո, որի հոժարությամբ Ավետիսը՝ տեր Ուսամի որդին, Վերի առվից իր՝ ձեռնավորի օգտին մասհանվող ջրաբաժինը զիջել է Մարինեին՝ վանքի կալվածքները ռոռգելու համար: Այս երևույթը ինքնին ընկալելի է, եթե նկատի ունենանք, որ Մարինեի հողային տիրույթները ընդլայնվում էին անընդմեջ, այգիները շատանում, որն էլ ավելի մեծ ծավալներ ընդունեց 14-րդ դ. առաջին տասնամյակներում» (Saghumyan, 1998, 210): Նկատենք, որ Խությունբուդան սույն վիմագրում չի հիշատակվում իր տիտղոսներով, որով փաստվեր, որ նա 1285 թ. եղել է Հայոց ու Վրաց աթաբեկ և ամիրսպասալար: Չի բացառված, որ Աշտարակ գյուղաքաղաքն առ ժամանակ պատկանել է Մահկանաբերդի Արծրունիներին, նախքան Աղբուղա Զաքարյանին անցնելը:

Ձեռնատրը «Գիւղի պաշտօնեայ (էր), որ հաւաքում էր պատրոնին (հողատիրոջ) հասանելիք բնական հարկը: Ձեռնատրները յատուկ տուրք էին հա-

ւաքում յօգուտ իրանց» (Malkhasyants, III, 1944, 166) :

Ավետիս ձեռնավորի հայրը՝ Տեր Ուսամը (Յուսամը, Հուսամը), Աշտարակի Կարմրավոր եկեղեցու բակի շրջայահյուս խաչքարի և պատմական գերեզմանոցի «Ծակ Խաչ»-ի պատվիրատուն է:

Ինչ վերաբերում է Վերի առվին, ապա դա նույն Մեծ առուն է, որը, ինչպես հիշում ենք, 1292 թ. հիմնովին վերանորոգել է Հակոբ երեցը, իսկ ուշ միջնադարում Գոլոշնց Այվազը:

### Եզրակացություններ

Այսպիսով, նկատում ենք, թե որքան հետաքրքրական վիմական տեղեկություններ կան ջրօգտագործման մասին հնում Հայաստանի սիրտը համարվող Արագածոտնում, որտեղ երբեմն հանդիպում են այլուստ անհայտ այնպիսի եզակի վկայություններ, ինչպիսին ջրի շուրջ կոնվին է, դրա կարգավորումը և վճիռը խախտողների նկատմամբ մահապատժի սահմանումը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Alishan, G. (1890). *Ayrarat Natural World of Armenia*. Venice, Mkhitarian Congregation Publishing House (in Armenian).
- Asatryan, A. H. (2022). Issues of monument preservation in Talin regional newspaper, Author's ed (in Armenian).
- Avagyan, S. A. (1973). *Phonology of epigraphic inscriptions (X-XIV centuries)*. Acad. of Sci. Arm. SSR (in Armenian).
- Avagyan, S. A. (1978). *Word analysis of inscriptions*. YSU (in Armenian).
- Gasparyan, R. R. (2008). A Newly Discovered Inscription from the Saint Christopher Monastery. *Etchmiadzin*, 11, 52-70 (in Armenian).
- Yovsepian, G. (1913). *The Art of Writing among Ancient Armenians, Part C, Map of Armenian Antiquities*, Vagharshapat, S. Etchmiadzin (in Armenian).
- Yeghiazaryan, H. S. (1961). *Saghmosavank, Echmiadzin*, Z, 33-46 (in Armenian).
- Karapetyan, S. C. (2013). Monastery of Tegher, *Vardzk*, 10, 1-31 (in Armenian).
- Hakobyan, S. E. (1957). *History of the Armenian peasantry (early feudalism era)*, vol. 1, Yerevan, Acad. of Sci. Arm. SSR (in Armenian).
- Ghazarian, R. S. (2000). *Grabar dictionary*, A, YSU (in Armenian).
- Ghafadaryan, K. G. (1948). *Hovhannavank and its inscriptions*. Acad. of Sci. Arm. SSR (in Armenian).
- Ghafadaryan, K. G. (2007). *Pages of Armenian medieval culture and history*. Gitutyun (in Armenian).
- Matevosyan, K. A. (1987). *Aruch. Armenia* (in Armenian).
- Malkhaseants, St. S. (1944a). *Armenian Explanatory Dictionary*, vol. III. Pethrat (in Armenian).
- Malkhaseants, St. S. (1944b). *Armenian Explanatory Dictionary*, vol. IV. Pethrat (in Armenian).
- Manucharyan, A. G. (2015). *Inscriptions as sources of political history of Armenia (IX-XIV centuries)*. YSU (in Armenian).
- Manucharyan, A. G. (2015). *Koshavank.. Lusabats* (in Armenian).
- Manucharyan, A. G. (2019). *Lithographic-historical studies of the history of the Armenian Church*. Lusabats (in Armenian).
- Manucharyan, A. G. (2024). *Field diaries*. Unpublished manuscript
- Markosyan, A. A. (1986). Tadeos Avdalbegyan's atypical study of "Water struggle in Armenia in the 9th century". *Herald of social sciences*, 4, 65-80 (in Armenian).
- Der-Mkrtchian, Mkhitar archimandrite (1903). *Several inscriptions collected during my agency*. Banaser, no. E, Paris, 26-32 (in Armenian).
- Muradyan, M. P. (1987). Khachkar of Vakhakh. *Bulletin of Yerevan University*, 1, 20-211 (in Armenian).
- Shahkhatunians, H. bishop. (2014). *Signature of the Catholic Church of Etchmiadzin and the Five Provinces of Ararat, work. A. Ter-Stepanyan*. S. Etchmiadzin, Mother See (in Armenian).
- Shahaziz, E. H. (1987). *The story of Ashtarak. Archaeological-historical theory* (compiled and edited by P. Hakobyan). Hayastan (in Armenian).
- Saghumyan, S. T. (1998). *Ashtarak. historical holes, monuments, tomb inscriptions*. NAS RA, Gitutyun (in Armenian).
- Ter-Minasyan, E. G. (1961). Antiquities and inscriptions of Amberdadzor. *Etchmiadzin*, E, 45-56 (in Armenian).
- Ter-Mkrtchyan, G. (1979). *Armenian studies*, work. P. Hakobyan, vol. A. YSU (in Armenian).



# HISTORY OF THE STUDY OF SUBMERGED MONUMENTS OF ARMENIA ACCORDING TO THE ARCHIVAL DOCUMENTS OF THE PROTECTION SERVICE

*Avetis Grigoryan*

*Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia,  
«Service for The Protection of Historical Environment and Cultural Museum-reservations» SNCO  
Yerevan State University*

## Abstract

Reservoirs are places of water accumulation, which are built on rivers, in canyons, by building dams in the narrowest part of their width. The flowing waters are collected in the reservoir through the dam and used for agricultural, energy and other purposes. The tradition of building reservoirs (dams) in Armenia and the Near Eastern region dates back to prehistoric times, since the Bronze-Iron Ages, reaching its maximum volume and quantity in the second half of the 20th century. Although reservoirs are considered to be important tools of economic development, they have a negative impact on immovable historical and cultural monuments located in the submerged zone, causing their partial or complete destruction.

The funds of the Service for Protection of Historical Environment and Historical-Cultural Museum-Reserves (Ministry of Education, Science, Culture and Sports of the RA) store remarkable documents, measurements and photographs of the 1960–1980s on the archaeological monuments located in the submerged zone of the Akhuryan, Aparan, Berkaber, Tolors reservoirs and the unfinished Kaps reservoir, their study and history of protection.

Like all over the world, Armenia has great experience in organizing the protection of monuments located in submerged zones. As studies show, this experiment was not always successful also in Armenia, as a result of which many important historical monuments, such as the medieval bridge of Akhuryan were lost.

**Keywords:** reservoir, submerged monument, archaeological study, excavations, displacement, protection.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋՐԱԾԱԾԿ ԶՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

*Ավետիս Գրիգորյան*

*ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պարմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ  
Երևանի պետական համալսարան*

*«...Ա՛յն դու լճակ կապուրակ,  
Բնչու՞ առար ջրիդ փակ,  
Մեր ծաղկաշար գյուղը հին,  
Վեհաշուք նկեղեցին ...»<sup>1</sup>:*

## Ամփոփագիր

Ջրամբարները ջրի կուտակման վայրեր են, կառուցվում են գետերի վրա, կիրճերում՝ դրանց լայնությամբ ամենանեղ հատվածում պատվար կառուցելով: Հոսող ջրերը պատվարի միջոցով հավաքվում են ջրամբարում և օգտագործվում գյուղատնտեսական, էներգետիկ և այլ նպատակներով: Հայաստանում և Առաջավորասիական տարածաշրջանում ջրամբարներ (պատվար-ամբարտակներ) կառուցելու ավանդույթը գալիս է դեռևս նախապատմական՝ բրոնզ-երկաթեդարյան ժամանակներից, ծավալների մեծությամբ և քանակով առավելագույնի հասնելով 20-րդ դ. երկրորդ կեսին: Թեև ջրամբարները համարվում են տնտեսական զարգացման կարևոր գործիքներ, սակայն բացասական ազդեցություն են գործում ջրածածկման գոտում հայտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա՝ պատճառ դառնալով դրանց մասնակի կամ ամբողջական ոչնչացման:

<sup>1</sup> Հատված՝ գյուղագիր Ալեքսանդր Սուքիասյանի «Կարոտ» բանաստեղծությունից՝ նվիրված ջրածածկ Տոլրս գյուղին [Sukiasyan, 2013, 38]:

ՀՀ ԿԳՄՄ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդերում պահվում են 1960–1980-ական թթ. ուշագրավ փաստաթղթեր, չափագրություններ և լուսանկարներ՝ Ախուրյանի, Ապարանի, Բերքաբերի, Տոլոբսի և անավարտ մնացած Կապսի ջրամբարների ջրածածկման գոտում գտնվող հնագիտական հուշարձանների, դրանց ուսումնասիրության և պահպանության պատմության վերաբերյալ:

Ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում մեծ փորձ կա՝ ջրածածկման գոտիներում հայտնվող հուշարձանների պահպանությունը կազմակերպելու: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, այդ փորձը ոչ միշտ է հաջողված նաև Հայաստանում, որի հետևանքով կորստի են մատնվել բազմաթիվ, այդ թվում՝ բացառիկ կարևոր պատմական հուշարձաններ, ինչպիսին է Ախուրյանի միջնադարյան կամուրջը:

**Հիմնաբառեր.** ջրամբար, ջրածածկ հուշարձան, հնագիտական ուսումնասիրություն, պեղումներ, տեղափոխում, պահպանություն:

### Ներածություն

Ջրամբարները ջրի կուտակման վայրեր են, կառուցվում են գետերի վրա, կիրճերում՝ դրանց լայնությամբ ամենանեղ հատվածում պատվար կառուցելով: Հոսող ջրերը պատվարի միջոցով հավաքվում են ջրամբարում և օգտագործվում գյուղատնտեսական, էներգետիկ և այլ նպատակներով (Melikyan, 1951, 5): Հայաստանում և Առաջավորասիական տարածաշրջանում ջրամբարներ (պատվար-ամբարտակներ) կառուցելու ավանդույթը գալիս է դեռևս նախապատմական՝ բրոնզ-երկաթե դարյան ժամանակներից, ծավալների մեծությամբ և քանակով առավելագույնի հասնելով 20-րդ դ. երկրորդ կեսին (Musheghyan, 1971, 207-215; Jalalbekyan, 1974, 157-162; Jalalbekyan, 1977, 47-51; Ponseti, López-Pujol, 2006, 151-188):

Թեև ջրամբարները համարվում են տնտեսական զարգացման կարևոր գործիքներ, սակայն բացասական ազդեցություն են գործում ջրածածկման գոտում հայտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վրա՝ պատճառ դառնալով դրանց մասնակի կամ ամբողջական ոչնչացման (Marchetti, Zaina, 2020, 1-10): Բնակչության ավելացումն ու կլիմայի գլոբալ ջերմացումն աշխարհում և մասնավորապես Մերձավորարևելյան տարածաշրջանում առավել սուղ է դարձնում ջրային ռեսուրսների պահպանման հիմնահարցը, մեծանում է էլեկտրաէներգիայի պահանջարկը, իսկ ռոզոգովի հողագործությունն ավելի մեծ տարածքներ է ընդգրկում: Այդ և այլ կարիքները բավարարելու համար ջրամբարների կառուցումն ավելի հրատապ է դառնում ինչպես Հայաստանում, այնպես էլ տարածաշրջանի և աշխարհի շատ երկրներում (Ponseti, López-Pujol, 2006, 151-188; Zarfl et al., 2014, 161-170):

ՀՀ ԿԳՄՄ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական մի-

ջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ֆոնդերում պահվում են 1960–1980-ական թթ. ուշագրավ փաստաթղթեր, չափագրություններ և լուսանկարներ՝ Ախուրյանի, Ապարանի, Բերքաբերի, Տոլոբսի և անավարտ մնացած Կապսի ջրամբարների ջրածածկման գոտում հնագիտական հուշարձանների, դրանց ուսումնասիրության և պահպանության պատմության վերաբերյալ: Արխիվային այդ տվյալներն ունեն սկզբնաղբյուրի արժեք և դրանց հրատարակումը կարևոր է ոչ միայն զուտ գիտական, այլ նաև հուշարձանապահպան գործունեության անցյալի փորձն արժևորելու տեսանկյունից:

### Ջրամբարաշինությունը և հուշարձանները

Ջրամբարները տնտեսական զարգացման կարևոր գործիքներ են: Դրանց շնորհիվ հնարավոր է լինում ոչ միայն պահպանել մեծ ջրային պաշարներ, այլ նաև դրանք ուղղել էներգետիկայի, գյուղատնտեսության, ձկնաբուծության, զբոսաշրջության, սպորտի և այլ ոլորտների զարգացմանը<sup>2</sup>: Այնուամենայնիվ, ջրամբարների կառուցումն ունենում է նաև բացասական ազդեցություն. ջրածածկման գոտում են հայտնվում քնակավայրեր, մշակելի հողատարածքներ, բնության, պատմության և մշակույթի հուշարձաններ: Նշված կորուստները սովորաբար լինում են անվերադարձ, մինչդեռ ամբարտակների կյանքի միջին տևողությունը 50-120 տարի է (Ronayne, 2005):

Չնայած ամբարտակների բերած սոցիալ-տնտեսական և այլ օգուտների, ինչպես նաև վնասների հետ կապված տարատեսական վերլուծությունների, Մերձավոր Արևելքում մեծ թափով շարունակվում է նոր ջրամբարների կառուցման գործընթացը<sup>3</sup>: Հարյուրավոր նոր ամբարտակներ են կառուցվում Թուրքիայում, Իրանում, Վրաստանում,

2 Ուշագրավ են դիտարկումները, թե ինչպես են ջուրն ու ջրամբարաշինությունը նպաստում ժամանակակից աշխարհում ազգաստեղծման և պետականաշինության գործընթացներին, կարծես կրկնելով այն արխետիպերը, երբ վաղագույն շրջաններում ջրային տարերքը, ջրային աստվածությունները և ջրերի հետ կապվող կրոնական-միստիկ պատմությունները կապվում էին աշխարհստեղծման և ազգաստեղծման գործընթացներին՝ որոնք ջրերի կառավարումը դարձնում էին պետության ստեղծման նախապայան (Բորոյայան 2020, 248–280; Գրեյկյան 2019, 35–71; Ծատուրյան 2007, 101–108; Conker 2018, 1–15):

3 Ջրամբարաշինությունը Մերձավոր Արևելքում ունի նաև լուրջ քաղաքական ենթատեքստ և ազդեցություն: Ամբարտակների

Ադրբեջանում, Իրաքում, Եգիպտոսում, Հայաստանում<sup>4</sup> և այլուր: Թուրքիան լավագույն օրինակներից է, թե ինչպիսի բացասական ազդեցություն է թողնում ջրամբարաշինությունը մշակութային ժառանգության վրա: 1960-ական թթ. սկսած բուռն ջրամբարաշինության հետևանքով մասամբ կամ ամբողջությամբ ոչնչացվել են հազարավոր հուշարձաններ, այդ թվում այնպիսի կարևոր հուշարձանախմբեր, ինչպիսիք են պատմական Ծոփք-Կոմնագենեի մայրաքաղաք բազմաշերտ Սամոսատը (թուրք.՝ Սամաստ) Եփրատի աջ ափին՝ Աթաթուրքի ջրամբարի կառուցման հետևանքով, հռոմեական ժամանակաշրջանի հուշարձան Կոմնագենեի Ջևգմա (հուն.՝ Ջեուգմա) քաղաքը և 12-13-րդ դդ. Հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլան (թուրք.՝ Հալֆեթի) Եփրատի աջ ափին՝ Բիրեյիքի ջրամբարի կառուցման հետևանքով, միջնադարյան քաղաք Հասանքեյքը Տիգրիսի աջ ափին՝ Իլիսուի ջրամբարի կառուցման հետևանքով և այլն (Marchetti et al., 2019, 17-28; Marchetti, Zaina, 2020, 1-10):

Ջրամբարների կառուցումով ոչ միայն մասնակիորեն կամ ամբողջությամբ ոչնչացվում են հնագիտական հուշարձանները, այլ նաև անդառնալիորեն փոփոխվում է մշակութային-պատմական լանդշաֆտը: Արդյունքում անհնար է դառնում վերականգնել այն տարածքը, որտեղ տեղի են ունեցել պատմական կարևոր իրադարձություններ, կամ դիտել այն տեսարանները, որոնք ոգեշնչել են պատմիչներին, նկարիչներին ու բանաստեղծներին<sup>5</sup>: Ջրամբարների կառուցման համար նպաստավոր գետահովիտները սովորաբար հարմարավետ բնական միջա-

վայրեր են եղել նախապատմական, հին և միջնադարյան ժամանակներում մարդկային հասարակությունների բնակեցման և մշակութային զարգացման լանդշաֆտի ստեղծման համար, ուստի առավել հարուստ են պատմական հուշարձաններով (Ponseti, López-Pujol, 2006, 151-188):

Ջրամբարներում հայտնվող հուշարձանների համար աշխարհում սովորաբար կիրառվում են երեք տեսակի լուծումներ<sup>6</sup>.

- ամրակայում/վերականգնում և հատուկ ջրամեկուսիչ պայմանների ստեղծումով տեղում պահպանում,
- տեղափոխում և մոտակա ավելի բարձր/անվտանգ վայրում վերականգնում<sup>7</sup>,
- հուշարձանների հնագիտական ուսումնասիրություն (նաև փրկարարական պեղումներ), փաստագրում, գտածոների դուրսբերում և հուշարձանի ջրածածկում (Ponseti, López-Pujol, 2006, 151-188):

Ստորև ներկայացնում ենք Հայաստանում խորհրդային իշխանության տարիներին կառուցված մի շարք ջրամբարների<sup>8</sup> ջրածածկման գոտում հայտնված հուշարձանների հնագիտական ուսումնասիրության պատմությունը՝ ըստ արխիվային նյութերի (նկ. 1):

### Ախուրյանի ջրամբարը

Ախուրյանի ջրամբարը<sup>9</sup> գտնվում է հայ-թուրքական սահմանին՝ ՀՀ Շիրակի մարզով և հայ-թուրքական սահմանով հոսող Ախուրյան գետի միջին հոսանքում, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան և

միջոցով գետային հոսքերի վերահսկողության լծակը հարևանների նկատմամբ տնտեսական և դրանից բխող քաղաքական ազդեցության վերածելու լավագույն օրինակներից է Թուրքիայի ազդեցիկ ջրային քաղաքականությունը Միրիայի և Իրաքի նկատմամբ՝ Եփրատի և Տիգրիսի ջրերի անհամաչափ օգտագործման միջոցով, որը ստորին հոսանքի երկրների ոռոգովի գոտիներում հանգեցնում է երաշտի և անապատացման [Jongerden, 2010, 137-143]: Հայաստանի մյուս հարևան սակավաջուր Իրանը երկարատև և խրթին հակասություն ունի Աֆղանստանի հետ՝ կենսական նշանակություն ունեցող սահմանային Հիլմենդ գետի ջրերի կառավարման հարցում [Khalid, Zahra, 2019, 594-605; Nagheeb, Warner, 2022, 551-573], իսկ Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտը լուծելու հարցում Ադրբեջանի ազդեցիկ քաղաքականությունն ունի նաև ջրային ենթատեքստ [Ahmadi et al., 2019, S1873-1888]:

4 ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. ծրագրով շարունակվելու են ջրային պաշարների մակերևութային հոսքի կառավարման նպատակով ջրամբարաշինության ծրագրերը: Դրանց շնորհիվ ունենալու ենք ջրային ռեսուրսների լրացուցիչ պաշար և ջրային հոսքերի կառավարման արդյունավետ համակարգ՝ հնարավորություններ ստեղծելով նաև ինքնահոս ոռոգման ջրի մատակարարման համար: Նախագծվելու է 15 ջրամբար, սկսվելու է դրանց կառուցումը [https://www.gov.am/am/gov-program/]:

5 Ջրածածկված պատմամշակութային հուշարձանների առատությամբ ամենահայտնի օրինակը Եգիպտոսի և Մուդանի տարածքում գտնվող և 1970 թ. շահագործման հանձնված Ասուանի հիդրոտեխնիկական համալիրն է՝ խոշորագույններից մեկն աշխարհում [Brew, 1961, 1-10]:

6 Ջրամբարների կառուցման հետևանքով ջրածածկման գոտում հայտնվող պատմամշակութային հուշարձանների հնագիտական ուսումնասիրության, այդ թվում լայնածավալ փրկարարական պեղումների իրականացման թերևս լավագույն փորձը ԱՄՆ-ում է, երբ 20-րդ դ. կեսերին կառուցվում էին տասնյակ խոշոր ջրամբարներ գրեթե բոլոր նահանգներում և փրկարարական պեղումներով վտանգված գոտիներից դուրս էին բերվում միլիոնավոր հնագիտական նմուշներ [Brew, 1961, 1-10]:

7 Լավ օրինակ է Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ադրբեջան նահանգում գտնվող և պատմական Տղմուտ գետի հետ նույնացվող Մակու (Ջանգմար) գետի վրա կառուցված Մակուի (Բարունի) ջրամբարի (նախագծման աշխատանքները սկսվել են 1985 թ.) ջրածածկման գոտում գտնվող և շինարարության ընթացքում [տարածքի պեղումները, կանգուն կառույցի և հայտնաբերված շինաքարերի տեղափոխումը կատարվել է 1987-1988 թթ.] մոտակա՝ 600 մ հեռավորությամբ բլրի վրա տեղափոխված ու 1988-2001 թթ. վերականգնված Ծործորի [Ձործորի] վանքի 14-րդ դ. թվագրվող միախորան, խաչքան հատակագծով կենտրոնագմբեթ Ս. Աստվածածին եկեղեցին [Harutyunyan, 1997, 3; Hakhnazaryan, 2012, 187-205]:

8 Ընդհանուր առմամբ ՀՀ-ում գործել են 83 ջրամբարներ:

9 Ջրի հայելու մակերեսը՝ 41.8 կմ², ծավալը՝ 525 մլն մ³ [Vardanyan et al., 2018, 59-67; Hakobyan et al., 1986, 128]:



Նկ.1. Հողվածում քննարկվող ջրամբարների տեղադրությունը ՀՀ քարտեզին, կազմ.՝ Գ. Առաքելյան, Ա. Գրիգորյան: (Source: D. Arakelyan, A. Grigoryan)

Անի համայնքներում և ԹՀ Կարսի նահանգի Կարսի և Ակյակայի<sup>10</sup> շրջաններում: Շահագործման է հանձնվել 1982 թ.:

1963 թ. սկսվել են ջրամբարի նախագծման աշխատանքները և պարզ է դարձել, որ ջրածածկման գոտում են հայտնվելու ՀԵՍՀ Ախուրյանի շրջանի Երազգավորս, Շիրակավան, Բայանդուր և Անիի շրջանի Իսահակյան, Վերին և Ներքին Ջրափի, Նորաբեր և Աղին գյուղերը:

Նկատի ունենալով, որ կառուցվելիք ջրամբարի տակ պիտի մնան պատմաճարտարապետական մի շարք կարևոր հուշարձաններ, Հայկական ՍՍՀ Պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչությունը 1966 և 1974 թթ. հետախուզել է ջրածածկման գոտում հայտնվող հուշարձանները և պատրաստել եզրակացություն այդ հուշարձանների հետագա պահպանության հարցերի կազմակերպման վերաբերյալ (Archive 1): Ջրածածկման գոտում էին հայտնվելու Շիրակավանի բազմաշերտ բնակավայրը, ձիթհանը, Երազգավորսի բազիլիկ եկեղեցին, Վերին Ջրափի կամուրջը, 19-րդ դ. եկե-

ղեցին, Ներքին Ջրափի քարավանատունը, կամուրջը և բրոնզեդարյան դամբարանադաշտը: Բացատրագրում նշվում է, որ անհրաժեշտ է նշյալ հուշարձանների պեղում, չափագրում և ֆոտոֆիքսացիա, իսկ քարավանատան դեպքում՝ նաև հուշարձանի տեղափոխում և այլ վայրում վերականգնում:

Նշվում է, որ Ներքին Ջրափի քարավանատունն ունի եռանավ հորինվածք, կառուցված է սև տուֆով, սրահները միացնող միջնորմներն ունեն ութական կամարակապ բացվածքներ, հարավային կողմում տանիքը մասամբ քանդված է (Yeghiazaryan, 1975, 52, 53):

Ներքին Ջրափի կամուրջը միջնադարյան Հայաստանի համանման ամենամեծ կառույցներից մեկն է, միակամար է, շինված է Ախուրյան գետի վրա, կիսավեր է, ունի հազվագյուտ մեծ չափեր՝ 34 մ բացվածք և 125 մ ընդհանուր երկարություն (Toramanyan, 1942, 336-338; Toramanyan, 1948, 201) (Նկ. 2): Ծառայել է ոչ միայն որպես կամուրջ, այլ նաև ջրանցույց (ջրատար կամուրջ/ակվեդուկ)<sup>11</sup>: Ավերվել է 1807 թ.՝ ռուս-թուրքական առաջին պատերազմի ժա-

10 Մինչև 1922 թ.՝ Շուրազեղ [Hakobyan et al., 1998, 150]:

11 Հայկական ճարտարապետության պատմության գիտակ Վարագդատ Հարությունյանն այս կամուրջը բնութագրել է որպես միջնադարյան Հայաստանի կամրջաշինական արվեստի գլուխգործոց և համեմատել՝ հռոմեական ժամանակաշրջանի

մանակ, Գյումրու մոտ՝ Ախուրյան գետի ափին տեղի ունեցած վճռորոշ մարտերի հետևանքով<sup>12</sup> (Parsamyan, 1954, 3-24): Անհրաժեշտ է համարվում, որ կամրջաշինական այդ բացառիկ նմուշը հատուկ մտահոգության առարկա դառնա: Այս համատեքստում ուշագրավ է մի առիթով ճարտարապետ Վ. Հարությունյանի հաղորդած տեղեկությունն այն մասին, որ ջրամբարի կառուցման ընթացքում հայ ջրաշինարարների միջոցով բանակցություններ են վարվել Կարսի նահանգապետի հետ, որպեսզի թույլտվություն տրվի՝ Ախուրյան գետի երկու ափերին գտնվող կիսավեր կամուրջը տեղափոխել ջրածածկման գոտուց, սակայն համաձայնություն չեն ստացել (Harutyunyan, 1997, 3):

Բրոնզեդարյան դամբարանդաշտը գյուղի հարավարևելյան կողմում է, բացվել է 1930-ական թթ.: Այստեղ անհրաժեշտ է կատարել հետախուզական պեղումներ: Ուշադրության են արժանի նաև գյուղում պահպանված 19-րդ դ. Շիրակի ժողովրդական ճարտարապետության լավագույն նմուշներ համարվող հազարաշեն բնակարանները և նույն ժամանակաշրջանի բազիլիկ եկեղեցին:

Վերին Ջրափիի կամուրջը գտնվում է գյուղի հարավարևմտյան կողմում, քանդակար Է, պահպանվել են միայն գետի աջ ափի խելի մնացորդները: Եկեղեցին կառուցվել է 1867 թ., ինչպես փաստաթղթում է նշված՝ առանձնակի արժեք չի ներկայացնում, ուստի սրա և Ներքին Ջրափիի գրեթե համաժամանակյա եկեղեցու տեղափոխումն անհրաժեշտ չէ: Վերին Ջրափիի եկեղեցուն հարավից կցված է կրկնահարկ զանգակատուն, որը միակն է իր տեսակի մեջ և թերևս ենթակա է տեղափոխման ու պահպանման:

Բայանդուրի հին գյուղատեղիում կան քրիստոնեական տաճարի ավերակներ, որոնք պետք է մաքրել, չափագրել, իսկ արժեքավոր և արձանագիր քարերը տեղափոխել: Գյուղատեղիում կա նաև քարե խարխիսներով փայտե կամուրջ: Երազգավորում<sup>13</sup> Ախուրյանի և Սևգետ վտակի միախառնման տեղում, կան միջնադարյան ամրոցի ավերակներ, արձանագրություններ, ինչպես նաև 19-րդ դ. քանդակար ձիթան: Վերջինս անհրաժեշտ է բացել և չափագրել<sup>14</sup>: Գյուղի հյուսիսարևելյան մասում՝ սարալանջի հեղեղատներում, տարածվում է ուշերոնզեդարյան բնակատեղին: Կա նաև ավերակ մատուռ, որն անհրաժեշտ է բացել և չափագրել:

Իսահակյան (նախկինում՝ Ղազարապատ)



Նկ. 2. Դեպի մայրաքաղաք Անի տանող Ներքին Ջրափիի կամուրջն Ախուրյան գետի վրա՝ հայ-թուրքական սահմանին, Թ. Թորամանյանի հավաքածու, 20-րդ դ. սկիզբ, © Պահպանության ծառայություն, հաշվառման № ԳԳ 383 ԱԱԹԼ 2/455:



Նկ. 3. Ներքին Ջրափիի միջնադարյան կամուրջն Ախուրյանի ջրամբարում, 2017 թ. [ԱԶՉԱԷՕԶ 2017]:

գյուղում կա 19-րդ դ. բազիլիկ եկեղեցի, որն անհրաժեշտ է չափագրել: Գյուղում պահպանվել են նաև կիկլոպյան շարվածքով ձիթանի ավերակներ, որը մաքրման և չափագրման կարիք ունի: Գյուղի հյուսիսային եզրին կան 10-11-րդ դդ. փոքրիկ եկեղեցու հիմնասպատեր, որոնք ենթակա են բացման և չափագրման: Իսահակյանում է գտնվել նաև գրող Ա. Իսահակյանի հայրական տունը, որն իսպառ ոչնչացվել է: Գյուղի նշված հուշարձանները ենթակա չեն տեղափոխման:

Աղին (կայարան) գյուղում կա մի մատուռ, որը ենթակա է չափագրման, և մի քանի խաչքար, որոնք քանդակագարդ բեկորների հետ ցանկալի է տեղափոխել Աղին գյուղի եկեղեցու մոտ, որը մնալու է ապագա ջրամբարի եզրին:

Եզրակացությունում նշվում է, որ ջրամբարի տակ են մնալու նաև Թուրքիայի Հանրապետության Կարսի նահանգի մի շարք բնակավայրեր և

կամուրջ-ակվեդուկների հետ [Harutyunyan, 1957, 67-82]:

12 Barajdaki su seviyesi düşüncü tarihi köprü gün yüzüne çıktı, <https://www.yenikonya.com.tr/>, հրապարակման ամսաթիվ՝ 25.09.2017, ներբեռնման ամսաթիվը՝ 01.03.2024:

13 Մինչև 1945 թ. կոչվել է Արալըխ [Hakobyan et al., 1988, 210]:

14 Երազգավորսի խաչանն հորինվածքով 7-րդ դ. եկեղեցին, 10-13-րդ դդ. բազմահարկ ամրոց-դղյակը և Զաքարյանների շրջանի ձիթանը պեղվել են 1977 թ. [Harutyunyan, 2012, 192-195]:



Նկ. 4. Ախուրյան գետը և Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Շիրակավանի կաթողիկե Ս. Ամենափրկիչ եկեղեցին, 20-րդ դ. սկիզբ, © Պահպանության ծառայություն, հաշվատման № ԳԳ 383 ԱԱԹԼ 2/429:



Նկ. 5. Մայրաքաղաք Շիրակավանի կաթողիկե Ս. Ամենափրկիչ եկեղեցու ավերակները Թուրքիայում՝ Ախուրյանի ջրամբարի եզրին, 2010 ական թթ., [https://www.vanker.org/, ներբեռնման ամսաթիվը՝ 01.03.2024]:



Նկ. 6. Ջրափիի քարավանատունը տեղափոխումից հետո, 1975 թ., © Պահպանության ծառայություն, հաշվատման №: 12/63

պատմաճարտարապետական հուշարձաններ: Հավանաբար ջրի տակ կանցնեն Տայյար գյուղը՝ ամրո-

ցով և քանդակազարդ ավերակ եկեղեցիով, Բաշ Շորագյալ գյուղը<sup>15</sup>՝ պատմական Շիրակավան/Երազգավորսը, որը 890-928 թթ. եղել է Բագրատունիների թագավորության մայրաքաղաքը՝ Հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունու կառուցած կաթողիկե Ս. Ամենափրկիչ<sup>16</sup> քանդակազարդ եկեղեցիով, ևս երկու եկեղեցի (մեկը՝ 7-րդ դ.), մեկ մատուռ, խաչքարերով գերեզմանոց, միջնադարյան Գեչիկալասի բերդը (նկ. 4, 5): Կջրածածկվի նաև Օղուզլու գյուղը՝ վաղմիջնադարյան կենտրոնագմբեթ շքեղ եկեղեցիով, Արգինա գյուղը՝ միջնադարյան նշանավոր Երգինա գյուղաքաղաքի, 9-10-րդ դդ. կաթողիկոսանիստ մեծ վանքի ավերակներով, Փիրվալի գյուղը՝ ավերակ ամրոցով, Աստախան (հնում՝ Աստեղանի) գյուղը՝ ավերակ ամրոցով, Մեծ և Փոքր Փարգետ գյուղերը՝ ավերակ ամրոցով, իջևանատնով, Ամենափրկիչ եկեղեցիով և քարաշեն աղբյուրներով: Ջրով են ծածկվելու նաև Ճարճագըլ, Ղալաչի, Ղարախաչ, Ջամուշլու, Վերին և Ներքին Աղուզում, Իլանլի, Գետիկ, Քինակ (պատմական Գինեկ) և Գարագուփալու (այլ անունը՝ Ավեր բերդ, որը չհաջողվեց մեզ տեղորոշել) գյուղերը՝ միջնադարյան գերեզմանոցներով և այլ հուշարձաններով: Եզրակացության հավելվածում նշվում է, որ ջրի տակ է անցնելու նաև Տիգնիս գյուղը, որտեղ հուշարձաններ չկան, քանի որ սա նոր գյուղ է՝ հիմնված 1868 թ.՝ Հին Տիգնիսից արևելք: Սակայն, ինչպես ցույց է տալիս մեր ուսումնասիրությունը, այստեղ ևս հուշարձաններ կային, մասնավորապես 1870 թ. կառուցված Ս. Մինաս եկեղեցին: Հավանաբար ջրածածկ կլինի նաև Մևրիկ գյուղը՝ ամրոցով, եկեղեցիներով, մատուռով և ձիթհանով: Որպես վերջաբան նշված է, որ Թուրքիայի կողմում ջրի տակ անցնող հին բնակավայրերի թիվը հավանաբար ավելի մեծ է, որը հնարավոր կլինի պարզել միայն մանրագնին տեղագնությունը: Նշվում է, որ անհրաժեշտ է պեղել այդ հուշարձանները, չափագրել, իսկ արձանագիր և քանդակազարդ քարերն ու կոթողները՝ տեղափոխել:

Հայկական կողմում գտնվող և ջրածածկման գոտուց տեղափոխման ենթակա հուշարձանները, մասնավորապես Ներքին Ջրափիի քարավանատունը, Վերին Ջրափիի կրկնահարկ զանգակատնով 19-րդ դ. եկեղեցին<sup>17</sup>, Շիրակավանի 7-րդ դ. եկեղեցին և բազմաթիվ արժեքավոր պատմաճարտարապետական կոթողներ 1970-1975 թթ. տեղափոխվել են նոր ստեղծված Ջրափի գյուղ և նույնությամբ

15 Այժմ՝ գ. Չեթինդուրակ:  
16 Եկեղեցին այժմ գտնվում է ջրամբարի անմիջապես ափին [https://www.vanker.org/]:  
17 Ս. Աստվածածին եկեղեցու հետ կապված կա ժողովրդական ավանդություն, ըստ որի, երբ եկեղեցին ջրածածկվել է, գյուղացիները նկատել են, որ ամեն գիշեր լույս է վառվում ջրի տակ, և երկյուղելով լուսարձակող եկեղեցու գոբությունից՝ տեղափոխել են ջրածածկման գոտուց և վերականգնել նոր գյուղից քիչ հեռու գտնվող մի բարձունքի վրա [ԴԲԱՆ, Կ. Galstyan, 2023]:



Նկ. 7. Զովունիի Պողոս-Պետրոս եկեղեցին, 20-րդ դ. սկիզբ, © Պահպանության ծառայություն, հաշվառման №:38/18

վերականգնվել՝ առանձնացված մեկ վայրում<sup>18</sup> (նկ. 6): Իսկ դեպի միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անի տանող ամենամեծ՝ Ներքին Ջրափիի նշանավոր կամուրջն ամբողջությամբ ջրածածկվել է և միայն հազվադեպ սակավաջուր տարիներին է մասամբ հայտնվում ջրից դուրս (Akchay-oz, 2017) (նկ. 3):

ՀԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Հուշարձանների պահպանության վարչության Ախուրյանի հնագիտական արշավախումբը 1977-1981 թթ. պեղումներ է կատարում ջրամբարի ջրածածկման գոտում՝ Հին Շիրակավան գյուղի հյուսիսարևելյան բարձունքի լանջերին և գագաթին գտնվող շուրջ 50 հա մակերեսով բազմաշերտ բնակավայրում և դամբարանադաշտում<sup>19</sup>: Ջրամբարի հայկական կողմի ավերին հետագա տարինարին ևս շարունակվում են հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունները՝ մասնավորապես Ջրափիի նշանավոր կամրջի դիմացի բլրի բարձունքի Ջրափի-1 ամբոցում և լանջերին տարածվող տա-

րածամանակյա բնակատեղիում, որը տարվա մի զգալի ժամանակահատվածում մասամբ հայտնվում է ջրածածկման գոտում (Yeganyan, 2017, 190-205):

### Ապարանի ջրամբարը

Ապարանի ջրամբարը<sup>20</sup> գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզով հոսող Քասախ գետի վերին հոսանքում՝ ՀՀ Ապարան համայնքում: Շահագործման է հանձնվել 1967 թ.<sup>21</sup>:

1958 թ. սկսվել են ջրամբարի նախագծման աշխատանքները և պարզ է դարձել, որ ջրամբարը ջրածածկելու է ՀԽՍՀ Ապարանի շրջանի Զովունի և Քասախ գյուղերը, ինչպես նաև 1939 թ. ապարանկեցված Ղուշի բնակատեղին (Simonyan, 1999, 112-122, 139-165): Ըստ հուշարձանների պահպանության կոմիտեի հնագիտական արշավախմբի ուսումնասիրությունն ամփոփող հաշվետվության՝ ջրածածկման գոտում են հայտնվելու Զովունիի վաղմիջնադարյան Պողոս-Պետրոս, Թուխ Մանուկ և Ս. Վարդան եկեղեցիները, միջնադարյան գերեզմանոցը<sup>22</sup>,

18 Հմմտ. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ (համացանց. հղում. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=12877>):

19 Հուշարձանախումբը ներառում էր վաղ բրոնզեդարյան բնակավայր, միջին բրոնզեդարյան բնակավայր և դամբարաններ, ուշ բրոնզեդարյան դամբարաններ, վաղ երկաթեդարյան բնակավայր և դամբարաններ, Վանի թագավորության ժամանակաշրջանի ամբոց-բնակավայր և դամբարաններ [Torosyan et al., 1993, 15-19]:

20 Ջրի հայելու մակերեսը՝ 7,9 կմ<sup>2</sup>, ջրի ծավալը՝ 91 մլն մ<sup>3</sup> [Hakobyan et al., 1986, 308]:

21 Ջրամբարի կառուցումը՝ որպես ջրաշինարարական խոշոր նախագիծ, ժամանակին ողջունվել և ժողովրդական բռուն արձագանք է ստացել, որոնք լավագույնս ամփոփված են հրապարակախոս Զ. Դարյանի օրագրություններում [Daryan, 1985, 118, 119, 340-346]:

22 Այլ աղբյուրներից տեղեկանում ենք, որ կիսով չափ ջրի տակ է մնացել նաև, հավանաբար, երկաթեդարյան դամբարանադաշտը [Petrosyan, 1988, 31]:



Նկ. 8. Զովունիի Թուխ Մանուկի պեղումները, 1966 թ.,  
 © Պահպանության ծառայություն, հաշվառման № L7/418:



Նկ. 9. Զովունիի Թուխ Մանուկի տեղափոխման  
 աշխատանքները, 1966 թ.,  
 © Պահպանության ծառայություն, հաշվառման № L7/187:



Նկ. 10. Զովունիի Թուխ Մանուկի տեղափոխման  
 աշխատանքները, 1966 թ.,  
 © Պահպանության ծառայություն, հաշվառման № L7/289

Քասախ և լքված Ղուշչի<sup>23</sup> գյուղերի 19-րդ դ. վերջին կառուցված փայտածածկ տանիքներով Ս. Աստվածածին եկեղեցիները: Նշվում է, որ Քասախի եկեղեցին կառուցված է հնի ավերակների վրա, իսկ Ղուշչիինը նորակառույց է և պատմաճարտարապետական որևէ արժեք չի ներկայացնում (Archive 2):

Հաշվետվությունում նշվում է, որ մշակութային մեծ արժեք է ներկայացնում ուղղանկյուն հատակագծով և գմբեթավոր սրահ հորինվածքով Պողոս-Պետրոս տաճարը (նկ.7): Հավանաբար կառուցվել է 4-րդ դ. հեթանոսական տաճարի հիմքերի վրա՝ Գնթունիների նախարարական տան գլխավոր իշխան Գրիգորի կողմից, քանի որ նրա անունն է հիշատակված կառույցի որմնամույթերից մեկին պահպանված արձանագրությունում: Եկեղեցին ունի տարբեր դարերում կատարված վերանորոգումների հետքեր (Sahinyan, 1968, 101-120; Petrosyants, 1980, 303-306): Գտնվում է գյուղի մեջ՝ ոչ մեծ բարձունքի վրա, և 1960-ական թթ. օգտագործվում էր որպես կոլտնտեսության հացահատիկի պահեստ:

Ս. Վարդան եկեղեցին բաղկացած է փոքր եկեղեցուց, կից երկհարկանի դամբարանից և նրան շարունակող նախարարահից: Համակառույցը թվագրվում է 5-7-րդ դդ.: Տանիքը քանդված է, պատերը մասամբ հողածածկ: Ըստ ավանդության՝ հուշարձանը կապվում է 451 թ. Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանի և վերջինիս հետ Ավարայրի ճակատամարտում զոհված Վարդանանց նահատակների հիշատակի հետ<sup>24</sup>: Եկեղեցու շուրջ տարածվում է գերեզմանոցը՝ վաղ և զարգացած միջնադարի քառակողոթներով, խաչքարերով ու տապանաքարերով: Մեկ ուրիշ՝ ավելի ընդարձակ գերեզմանոց կա գյուղի արևելյան եզրին՝ վաղմիջնադարյան, զարգացած և ուշ շրջանի նույնախի մահարձաններով:

Գյուղի հարավարևմտյան եզրին է գտնվում հավանաբար 4-րդ դ. վերաբերող, սրբատաշ սև տուֆով կառուցված և կղմինդրե ծածկով միանավ Թուխ Մանուկ եկեղեցին և շրջակայքում տարածվող գերեզմանոցը՝ մի քանի պահպանված տապանաքարերով: Եկեղեցին ունի մի քանի վերանորոգման հետքեր, որոնցից վերջինի՝ 1862 թ. վերաբերյալ կա արձանագրություն՝ հյուսիսային ճակատակալ մեծ քարին: Արևելյան մուտքի ճակատակալ քարին էլ կա հունարեն արձանագրություն:

Հաշվետվության հաջորդ հատվածում նշվում է, որ այս հուշարձանները կմնային ջրի տակ (Toramanyan, 1948, 198-200), եթե 1966 թ. հունվարի 19-ին

23 Ղուշչիի բնակչությունը 1939 թ. տեղափոխվել է Երևանամերձ Առաջին գյուղ, որը 1940 թ. վերանվանվել է Դավիթաշեն և մի քանի տարի անց միացել մայրաքաղաքին [Hakobyan et al., 1988, 44; Hakobyan et al., 1991, 589]:

24 Հավանաբար այս դամբարանում է թաղվել ճակատամարտի մասնակից իշխան Տաճատ Գնթունին, քանի որ Զովունին և շրջակայքը պատկանում էին Գնթունյաց նախարարական տանը [Sahinyan, 1968, 101-120; Mirijanyan, Aghayan, 2019, 106-116]:

ՀՍՍՌ Մինիստրների Սովետի Շինարարության գործերի պետական կոմիտեն չհրավիրեր գիտխորհուրդ և չմշակեր հուշարձանները փրկելու հրատապ միջոցառումների պլան (Archive 3): Նիստի օրակարգում դրված էր Ջովունու երեք հուշարձանների տեղափոխման խնդիրը: Մասնակիցների թվում էին հնագետներ Բ. Առաքելյանը, Ս. Բարխուդարյանը, ճարտարապետներ Վ. Հարությունյանը, Ռ. Իսրայելյանը, Ա. Սահինյանը, Յ. Թամանյանը և ուրիշներ: Գիտխորհուրդը որոշում է անմիջապես ձեռնամուխ լինել հուշարձանների տեղափոխման գործին և կազմել հանձնաժողով՝ աշխատանքները տեղում ղեկավարելու համար:

Մանրամասնորեն ներկայացվում է հաջորդ երկու օրերին հանձնաժողովի անդամների, պաշտոնյաների և կամավորների մեկնումը Ջովունի, շրջայցը հուշարձանների տարածքում, որի արդյունքում հանձնաժողովը կարծիք է հայտնում, որ եկեղեցիները կարելի է տեղափոխել Քասախ գետի աջ ափին գոյացող կղզու վրա:

Հաջորդ օրերին սկսվում են հուշարձանների համալիր հետազոտման աշխատանքները: Նախ չափագրվում է Ջովունու Թուխ Մանուկը, զուգահեռ կատարվում են պեղումներ՝ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող Արամ Քալանթարյանի ղեկավարությամբ (նկ. 8): Պեղումներով բացվում են պատերի հողածածկ հատվածները, գետնախարխիսները, հայտնաբերվում են թաղի թափված քարերը, քիվի հատվածներ, խեցանոթների և, հավանաբար, նախնական ծածկի կղմինդրի բեկորներ, հետազայում արված քարե ծածկի սալեր, արծաթե մեկ հին դրամ, 19-20-րդ դդ. պղնձե դրամներ, եկեղեցու հարավային կողմում՝ մուտքի մոտ հայտնաբերվում է հարթ տապանաքար: Հունարեն արձանագրության մասնագետը ընթերցում է մուտքի բարավորի վիմագիրը: Հաջորդ օրերին համարակալվում են հուշարձանի քարերը և փետրվարի 1-ին սկսվում են ապամոնտաժման աշխատանքները (նկ. 9): Փետրվարի 3-ին տեղ է հասնում նաև Երևանից բերված վերամբարձ կոունկը, որը մեկ օր թաղված էր Եղիպատրուշ (այդ տարիներին՝ Մոսկյան) գյուղից ներքև և վերագործարկվել էր ծանր տեխնիկայի օգնությամբ (նկ. 10, 11): Փետրվարի 9-ին ավարտվում են հուշարձանի տեղափոխման աշխատանքները և արշավախումբը վերադառնում է Երևան:

Բոլոր այս աշխատանքները կատարվում են արագընթաց տեմպով՝ հաշված օրերի ընթացքում՝ հունվար-փետրվար ամիսներին, քանի որ «սպագա ծովի» ջուրը աստիճանաբար մոտենում էր հուշարձաններին, լցվում պեղավայրեր (նկ. 12): Աշխատանքները դժվարանում էին ոչ միայն ձյան առատ



նկ. 11. Ջովունիի Թուխ Մանուկի տեղափոխման աշխատանքները, 1966 թ.,  
© Պահպանության ծառայություն, հաշվառման № L7/345:



նկ. 12. Ջովունիի Թուխ Մանուկի պեղումները, 1966 թ.,  
© Պահպանության ծառայություն, հաշվառման № L7/183:

տեղումների և դրա հետևանքով փակվող ճանապարհների, հողի սառած լինելու, այլ նաև այն պատճառով, որ դեպի Ջովունի տանող ամենակարճ ճանապարհին գտնվող կամուրջը հունվարի 27-ին ջրածածկ էր եղել: Կամրջի ջրածածկման հետևանքով հնարավոր չէր քարերը տեղափոխել նախապես որոշված վայր և հունվարի 28-ին հանձնաժողով է ժամանանում՝ փոխադրվող հուշարձանի նոր տեղը որոշելու համար: Ընտրվում է «Ժաչեղ» կոչվող վայրը, որը գեղեցիկ և հարմար դիրք ուներ շրջապատի նկատմամբ:



ա



բ

Նկ.13. ա) Զովունիի Պողոս-Պետրոս եկեղեցին, 2013 թ. (Source: Z. Galstyan),  
բ) Պողոս-Պետրոս եկեղեցին ջրածածկված, 2010 թ. (Source: A. Harutyunyan)

Այդ օրերին արշավախումբը շրջում է ջրածածկվող գյուղում, գերեզմանոցում հայտնաբերվում են մի քանի արձանագրություններ, որոնց մեծ մասը 18-19-րդ դարերի.

«Այս է տապան հանգուցիալ Կարապետ / Միհրանի որդի Համբարձում Սահակիանի / մահացավ 1928 թ. 20 մարտի»:

«Այս է տապան հանգուցիալ Տեր Յակոբ / քահանա մահտեսի Ղարիբիանի ձեռնադրիալ ի 1867 ամի ապրեցավ դաղաղ / կենոք մահվամբ 1911 ամի 19 ապրիլի»:

«Ի թն... Սբ խաչս բարեխոս Տեր Ովհաննեսի / ... ՈՁն .../ ...թանճ / ի նջեցել Ովն...»:

Ջրածածկման գոտում հայտնված հուշարձանների հետագա ճակատագրի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՍՍՀ Մի-

նիստրների սովետի շինարարության պետական կոմիտեն հուշարձանները տեղափոխում և նույնությամբ վերակառուցում է գյուղից դեպի արևելք գտնվող բարձունքին (Archive 4): Նախ տեղափոխվում է Թուխ Մանուկը: Պողոս-Պետրոսը և Ս. Վարդանը պեղվում են Արվեստի ինստիտուտի արշավախմբի կողմից: 1967 թ. ջրածածկման գոտուց տեղափոխվում է նաև Ս. Վարդանը: Թուխ Մանուկ և Ս. Վարդան եկեղեցիների տեղափոխումը հայ իրականության մեջ առաջին դեպքն էր, որ կատարվեց պատմաճարտարապետական հուշարձանի ամբողջական տեղափոխում իր նախնական վայրից<sup>25</sup>: Պողոս-Պետրոս եկեղեցու տեղափոխումը չի իրականացվում՝ բազմաթիվ վերակառուցումների և քարերի փխրությունության պատճառով: Հուշարձանը գտնվում է ջրամբարի եզրին և ջրի մակարդակի

25 Եկեղեցիներից բացի տեղափոխվում են նաև դրանց շրջակայքում գտնվող պատմաճարտարապետական կոթողները [Petrosyan, 1988, 31-36]:

առավելագույն նիշին հասնելու ժամանակ կիսով չափ հայտնվում է ջրի տակ, ինչը թողնում է քայքայիչ ազդեցություն քանդակար տաճարի վրա (նկ. 13): 1985 թ. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության նախագծային գրասենյակը կազմում է եկեղեցու տեղափոխման, վերականգնման և տարածքի բարեկարգման նախագիծ: Նախատեսվում էր հուշարձանը տեղափոխել 400 մ հյուսիս՝ ավելի բարձրադիր գոտի, սակայն նախագիծն այդպես էլ չի իրականացվում<sup>26</sup>:

Ջրի ճնշման և մշտական խոնավության պատճառով 1991 թ. մասամբ, իսկ 2005 թ.՝ ամբողջությամբ փլուզվում է եկեղեցու հյուսիսային պատը: Հաշվի առնելով հուշարձանի կարևորությունը, ինչպես նաև նրա խիստ վտանգված վիճակը՝ որոշում է կայացվում իրականացնել վերականգնողական աշխատանքներ: Այդ նպատակով անհրաժեշտություն է առաջանում պեղումներով բացել եկեղեցու հիմքերը, հայտնաբերել բացակայող շինաքերերը: Պեղումներն իրականացնում է ՀՀ Մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»-ը՝ 2014 թ. (հնագետ՝ Ա. Նալբանդյան) (Nalbandyan, 2014): Պեղումներից հետո, սակայն, հուշարձանի փլուզված պատի վերականգնում չի իրականացվում:

### Բերքաբերի ջրամբարը

Բերքաբերի ջրամբարը<sup>27</sup> գտնվում է հայ-ադրբեջանական սահմանին՝ ՀՀ Տավուշի մարզով հոսող Բերքաբեր գետի միջին հոսանքում, Իջևան համայնքի Բերքաբեր<sup>28</sup> գյուղի մոտ: Շահագործման է հանձնվել 1980 թ.:

1974 թ. սկսվել են ջրամբարի նախագծման աշխատանքները և պարզ է դարձել, որ ջրամբարը մասամբ ջրածածկելու է ՀԽՍՀ Իջևանի շրջանի Ջողագ և Գետաշեն<sup>29</sup> գյուղերի հողատարածությունները: Ջրածածկման գոտում են հայտնվելու նաև հնագիտական և պատմական մի շարք հուշարձաններ:

Հայկական ՍՍՀ Պետշինի Հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության պետին 1974 թ. ապրիլի 16-ին ուղարկված զեկուցագրից տեղեկանում ենք, որ ստեղծվել է հանձնաժողով՝ Իջևանի շրջանի Ջողագ գյուղում՝ համանուն

գետի վրա կառուցվելիք ջրամբարի տակ մնացող ճարտարապետական հուշարձանները տեղում ստուգելու և եզրակացություն կազմելու համար: Ստուգումը պարզել է, որ ջրամբարի կառուցման հետևանքով ջրի տակ է մնալու 3 կամուրջ և 1 քարավանատուն (Archive 5)<sup>30</sup>: Կամուրջներից առաջինը գտնվում է գյուղից մոտ 1 կմ հյուսիս-արևմուտք, միաթոփիչ է, կիսակլոր թաղով: Թաղը կառուցված է սրբատաշ, իսկ մյուս մասերը՝ կոպտատաշ և ճեղքված քարերով: Խելերից մեկը շարված է կոպտատաշ բազալտով ու կրաշաղախով, իսկ որպես մյուս խել՝ հարմարեցված է կոպտատաշ ժայռը: Արևելյան պատին ագուցված քարին փորագրված է արաբերեն արձանագրություն:

Գետի հոսանքն ի վար մյուս կամուրջը գտնվում է գյուղից մոտ 700 մ հյուսիս-արևմուտք, եռաթոփիչ է, կիսավեր: Գետի ձախ ափին պահպանվել է խելի ստորին մասը՝ 3 մ բարձրությամբ: Երրորդ կամուրջը գտնվում է գյուղից մոտ 400 մ հյուսիս-արևմուտք, դարձյալ կիսավեր է, պահպանվել է գետի աջ կողմի խելը՝ 2 մ բարձրությամբ: Հավանաբար 13-րդ դ. կառույց է:

Քարավանատունը գտնվում է գյուղի հյուսիսային կողմում, գետի ափին: Քանդակար է, պահպանվել են պատերի ստորին մասերը, բաղկացած է ընդհանուր 100 մ<sup>2</sup> մակերեսով աղյուսաշեն 5 սենյակներից: Հավանաբար 13-րդ դ. կառույց է և վերոնշյալ կամուրջների հետ միասին սպասարկել է միջնադարյան առևտրական ճանապարհը:

Հանձնաժողովը գտնում է, որ կանգուն կամուրջը պետք է տեղափոխել ջրածածկման գոտուց և վերականգնել, մյուս երկու կամուրջները և քարավանատունը՝ չափազրել և թողնել ջրի տակ:

Ջրամբարի շինարարությունն իրականացնող ՍՍՀՄ Մելիորացիայի և ջրային տնտեսության «Գլխահայրջին» վարչությանը, Հայկական ՍՍՀ Մելիորացիայի և ջրային տնտեսության մինիստրին և տեղակալին ուղղված 1976 թ. դեկտեմբերի 21-ի պաշտոնական գրություններից և պատասխաններից տեղեկանում ենք նաև, որ ջրամբարի տարածքում շինարարության ժամանակ բացվել են Ք.ա. 14-12-րդ դդ. դամբարաններ, բնակատեղի և դրանց պեղման, փաստագրման և ուսումնասիրման կարիք կա:

Դամբարանադաշտը գտնվում է ջրամբարի հարավային մասում և հիմնականում վերաբերում է

26 Հիշարժան է նաև ԵՊՀ հնագիտական ջոկատի կողմից 1986-1987 թթ. պեղված Ք.ա. 18-14-րդ դդ. թվագրվող դամբարանադաշտը ջրամբարի արևմտյան ափին, որտեղ երեք դամբարանների կրոմեխների քարերին և մեկ դամբարանի ծածկասալին հայտնաբերվել են փորագրելու միջոցով արված նշանագրեր: Նույնպիսի նշաններով չորս քարեր էլ արշավախումբը հայտնաբերում է մոտակա բլրին գտնվող համաժամանակյա ամրոցի հետախուզական պեղումներով [Muradyan, 1993, 130-105]:

27 Ջրի հայելու մակերեսը՝ 2.14 կմ<sup>2</sup>, ջրի ծավալը՝ 45 մլն մ<sup>3</sup> [Hakobyan et al., 1998, 414; Tadevosyan, 1983, 520]:

28 Մինչև 1978 թ. գյուղը կոչվել է Ջողագ [Hakobyan et al., 1986, 678]:

29 1968 թ. գյուղը վերանվանվել է Կիրանց [Hakobyan et al., 1991, 154]:

30 ՀՀ ԿԳՄՄՆ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության» ֆոնդերում պահպանվել են նշյալ հուշարձանների՝ 1950 թ. կազմված վկայագրերը:

վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանին, կից տարածվում է համաժամանակյա բնակատեղին: Ջրամբարի կառուցման աշխատանքների ժամանակ ոչնչացվել են մեծ քանակությամբ դամբարաններ, խաթարվել են բնակատեղիի մշակութային շերտերը: Հուշարձանախումբը, սակայն, մասամբ է ջրածածկված, մյուս մասը տարածվում է ջրամբարի ափերին: Ջրամբարի շահագործումից հետո՝ 1981 թ. ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Հայաստանի պատմության պետական թանգարանի արշավախմբերը պեղումներ են կատարում ջրամբարի եզրերին, բացվում են 22 հիմնահողային և 2 քարարկղային դամբարաններ, մեկ դամբարանաբլուր: Որոշ դամբարաններ մասամբ խաթարված էին, քանի որ ջրամբարաշինական աշխատանքների ժամանակ հեռացվել էին վերին շերտերը: Նույն դամբարանադաշտում 3 քարարկղային դամբարաններ էլ պեղվում են 1986 թ. ԵՊՀ հնագիտական գիտահետազոտական լաբորատորիայի արշավախմբի կողմից (Gasparyan, 1991, 114-128): Ուշագրավ է 1981 թ. պեղված դամբարանախումբը, որի թումբը մինչև ջրամբարի կառուցումը գրեթե հարթեցված էր, քանի որ տարածքն օգտագործվում էր որպես վարելահող, իսկ ջրամբարի շինարարության ընթացքում ամբողջությամբ հեռացվել էր հուշարձանի վերգետնյա հատվածը և նրա չափերը չէին երևում: Պեղումներով պարզվում է, որ դամբարանն ունեցել է մոտ 30 մ տրամագծով գլաքարե գրահ, փայտե ծածկով դամբարանախուց և վերաբերել է միջին բրոնզի դարի վաղ փուլի «բեղենյան» մշակույթին (Gasparyan, 1987, 229-233): 1986 թ. ԵՊՀ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի արշավախումբը, շարունակելով նույն դամբարանաթմբի պեղումները, բացում է երկրորդ դամբարանափոսը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հուշարձանը խաթարվել է դեռևս ուշ միջնադարում, երբ դամբարանին կից կառուցվել է բնակելի համալիր: Բերքաբերի տարածամանակյան հուշարձաններում (այդ թվում անտիկ բնակավայր և դամբարաններ) պեղումները շարունակվում են մինչև 1989 թ. (Simonyan, 2009, 215-232):

**Տոլորսի ջրամբարը**

Տոլորսի ջրամբարը<sup>31</sup> գտնվում է ՀՀ Սյունիքի մարզով հոսող Միսիան գետի ստորին հոսանքում, Միսիան համայնքում: Շահագործման է հանձնվել 1976 թ.:

1960-ական թթ. սկսվել են ջրամբարի նախագծման աշխատանքները և պարզ է դարձել, որ ջրամբարը մասամբ ջրածածկելու է ՀԽՍՀ Միսիա-

նի շրջանի Տոլորս և Աշոտավան գյուղերը (Sukiasyan, 2013, 25-39): Ջրածածկման գոտում էին հայտնվելու նաև այդ գյուղերում գտնվող մի շարք պատմաճարտարապետական հուշարձաններ: ՀՍՍՀ Պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության հնագիտական հանձնաժողովի (ղեկավար՝ հուշարձանագետ Ս. Մաղումյան և ուրիշ.) գեկուցագրից և տեղեկագրից իմանում ենք (Archive 6), որ տոլորսցիները 1970 թ. իրենց հետ հարևանությամբ կառուցված նոր գյուղ են տեղափոխել հին գյուղի մի շարք մեմորիալ հուշարձաններ: Հին (ջրածածկվող) գյուղում մնում է միայն 1861 թ. կառուցված միանավ բազիլիկ հորինվածքով, թաղակապ ծածկով և երկթեք տանիքով Ս. Հռիփսիմե եկեղեցին (նկ. 9): Կառուցված է կոպտատաշ, անկանոն քարերով և գլաքարերով, իսկ թաղակիր կամարները, որմնասյուները և արտաքին անկյունները կառուցված են տեղական սրբատաշ բազալտով և սպիտակավուն ավազաքարով: Եկեղեցին իր ճարտարապետական արժեքով կարևորություն չի ներկայացնում հայկական մշակութային կյանքում, ուստի նրա տեղափոխումն աննպատակահարմար է: Բացի այդ, քանի որ եկեղեցին կառուցված է մանրաքարով, ուստի նրա քանդում-տեղափոխումը և նոր տեղում վերակառուցումը անհնար է իրականացնել: Պատերը կտրելով և առանձին հատվածներով տեղափոխելով վերաշարումը նոր վայրում ևս հնարավոր չի իրականացնել, քանի որ պատերը խարխուլված են և ճաքած:

Այնուհանդերձ, եկեղեցու բակում ընկած են չորս խաչքարեր և մի քանի տապանաքար, իսկ պատերին ներսից ագուցված են յոթ խաչքարեր, մկրտության ավազանում և բեմի խորշերում էլ դրված են մի քանի խաչքարերի բեկորներ: Այդ խաչքարերը մշակութային կարևոր արժեք են և արժանի են պահպանության: Եկեղեցու պատերին ագուցված խաչքարերն ունեն արձանագրություններ, որոնք մասամբ ծածկված են սվաղով: Ուշագրավ է մուտքի բարավորի արձանագրությունը՝ հետևյալ բովանդակությամբ. «Կառուցու Սբ եկեղեցիս / յանուն սրբուհիոյն Հռիփսիմ/էի, արդեամբք - ծախովք Տոլորսեց/ի Սարգիս քահանայի եւ կողակցի / նորա Թագակիւլին եւ որդոց իւրոց Խշ/ատուր քահանային եւ տիրացու Գրիգորին / եւ կանց Սանդիստոյ եւ Հռիփսիմէի / ամի տն 1861-ին»<sup>32</sup>:

Ջրամբարի տակ է մնալու նաև Աշոտավան գյուղի միանավ բազիլիկ հորինվածքով Ս. Կարապետ եկեղեցին (նկ. 10): Կառուցվել է 1898 թ. և ճարտարապետական տեսանկյունից կարևորություն չի ներկայացնում: Եկեղեցու սեղանաքար է դարձված մի խաչքար՝ հետաքրիր կապգիր արձանագրությո-

31 Ջրի հայելու մակերեսը՝ 4.7 կմ<sup>2</sup>, ջրի ծավալը՝ 96.8 մլն մ<sup>3</sup> [Arushanyan, 1986, 43]:  
 32 Բարավորը խաչքարերի հետ տեղափոխվել է նոր գյուղի գերեզմանոց [Sukiasyan, 2013, 33-39]:



նկ. 14. Տոլորսի Ս. Հռիփսիմե եկեղեցին՝ ջրամբարի սակավաջուր ժամանակաշրջանում, լուսանկարը՝ Ա. Քեշիշյանի [«Սուզված» եկեղեցին եւ Տոլորսին նոր շունչ պարգևող Ջորին ու Սեյրանը, <https://mediamax.am/am/news/special-report/39392>, հրատարակման ամսաթիվը՝ 20.09.2020, ներբեռնման ամսաթիվը՝ 01.03.2024]:  
(Source: A. Qeshishyan)



նկ. 15. Տոլորսի Ս. Հռիփսիմե ջրածածկ եկեղեցին, լուսանկարը՝ Ա. Քեշիշյանի [«Սուզված» եկեղեցին եւ Տոլորսին նոր շունչ պարգևող Ջորին ու Սեյրանը, <https://mediamax.am/am/news/special-report/39392>, հրատարակման ամսաթիվը՝ 20.09.2020, ներբեռնման ամսաթիվը՝ 01.03.2024]:  
(Source: A. Qeshishyan)

յամբ. «Կաման ամենակալին Այ ես՝ Սասնայս / եւ որդին Գայլաձագ, կանգնեցաք զխաչս / յիշեցեք ի Քս: զփոփխիկ. թվ ՉՂԱ (1342 թ.):»։ Պատերի մեջ օգտագործվել են հին տապանաքարեր ու խաչքարեր:

Ելնելով ստուգումների արդյունքներից՝ հանձնաժողովը անսպասակապարմար և անկարելի է համարում Տոլորսի և Աշոտավանի եկեղեցիների տեղափոխումը, որոշվում է մանրամասն չափագրել և լուսանկարել եկեղեցիները, հանել Տոլորսի և Աշոտավանի եկեղեցիների պատերին ագուցված 8 խաչքարերը և մնացած 4 խաչքարերի հետ տեղափոխել նոր Տոլորսի գերեզմանոց և տեղադրել պատվանդանի վրա: Հանված խաչքարերի տեղը լցնել ցեմենտբետոն: Եթե երկրաբանական տվյալները բարենպաստ են, ապա հարկավոր է Աշոտավանի եկեղեցին շրջափակել բետոնե պատնեշով, քանի որ ամբողջությամբ ջրածածկ չի լինելու, և այդպիսով եկեղեցին կպահպանվի բետոնյա կղզյակի մեջ: Վերոնշյալ աշխատանքները պետք է իրագործել 1975 թ. ընթացքում, քանի որ այս տարվանից սկսվելու է ջրի կուտակումը ջրամբարում:

Զեկուցագրում ներկայացվում է նաև Տոլորս գյուղից արևմուտք գտնվող Ծղունի գյուղատեղին և գերեզմանոցը՝ հարուստ խաչքարերով ու տապանաքարերով, 20-ից ավելի արձանագրություններով: Մեջբերված են 4 վիմագրեր, սակայն նշվում է, որ այս գյուղատեղին և գերեզմանոցը ջրածածկման գոտուց դուրս են, և չի նկարագրում մյուս արձանագրություններն ու հուշարձանները:

Բացի նշված հուշարձաններից, տեղեկագրում նշված են այս գյուղերում գտնվող այլ հուշարձաններ

և, որոնց հետագա ճակատագրի վերաբերյալ տվյալներ չկան: Այդ հուշարձաններն են՝ Աշոտավանում՝ Սպիտակաշեն գյուղատեղին, Տոլորս գյուղում՝ գյուղամիջի 1617 թ. Ս. Գևորգ եկեղեցին: Նշվում է, որ Սպիտակաշենը գտնվում է Աշոտավանից հարավ՝ գետի աջ ափի բլրալանջին: Այստեղ պահպանվել են մի փոքրիկ եկեղեցու հիմնապատեր, շուրջը գերեզմանոց, որտեղ կա մեկ խոյաձև տապանաքար:

Ջրամբարի շահագործումից հետո Տոլորսի և Աշոտավանի եկեղեցիները ջրածածկ են արվում, չի իրականացվում Աշոտավանի Ս. Կարապետը բետոնե պատնեշով ջրից պաշտպանելու գաղափարը (նկ. 14, 15):

### Կապսի ջրամբարը

Կապսի ջրամբարը<sup>33</sup> գտնվում է ՀՀ Շիրակի մարզով հոտող Ախուրյան գետի վերին հոսանքում, Ամասիա համայնքում: 1982 թ. սկսվել են ջրամբարի նախագծման աշխատանքները և, ըստ ՀՍՍՀ Մելիտրացիայի և ջրային տնտեսության մինիստրության «Հայպետջրնախագիծ» ինստիտուտի կազմած նախագծի, գրեթե ամբողջությամբ ջրածածկելու էր ՀԽՍՀ Ամասիայի շրջանի Ջրաձոր գյուղը, ինչպես նաև Կապս, Ագիգրեկով (այժմ՝ Արեգնադեն), Գյուլիբուլաղ (այժմ՝ Բյուրակն) և Իլլի (այժմ՝ Հողմիկ) գյուղերի մշակովի հողեր և արոտավայրեր (Archive 7): Ստեղծվել է հանձնաժողով՝ Կապսի ջրամբարի տակ մնացող պատմահնագիտական հուշարձանները (հանձնաժողովի կազմում էին հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության պետի տեղակալ, հուշարձանագետ Ս. Սաղունյանը, ՀՍՍՀ

33 Նախատեսված էր, որ ջրամբարն ունենալու էր 4.5 կմ<sup>2</sup> ջրի հայելու մակերես և 110 մլն մ<sup>3</sup> ջրի ծավալ [Hakobyan et al. 1988, 951]:

ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ս. Հարությունյանը և ուրիշ.) հաշվառելու, նրանց հետագա պահպանության հետ կապված հարցերը ներկայացնելու համար: Հայկական ՄՍՀ Պետշինի Հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության պետին ուղղված զեկուցագրում հանձնաժողովը նշում է, որ Ամասիայի շրջանի Կապա, Արեգնադեն և Բյուրակն գյուղերի ջրածածկվող տարածքներում հուշարձաններ չկան: Հանձնաժողովը հարկ է համարում տեղագննել Հողմիկ գյուղի այն հատվածը, որը մնալու է ջրի տակ, քանի որ մտավախություն ունի, որ կարող են հուշարձաններ լինեն, ուստի անհրաժեշտ է տեղագննում և հետախուզական պեղումներ:

Ինչ վերաբերում է Ջրածոր գյուղին, ապա այն գրեթե ամբողջությամբ ջրածածկվելու է (գյուղից փրկվելու են 3-4 տուն): Գյուղի արևմտյան կողմի երկնասյուն բլրին կան հին ամրոցի, իսկ գագաթին՝ կլոր տաճարի ավերակներ, բլրի լանջերին ու ստորոտին սփռված են օբսիդիանի հատիչներ, քերիչներ և խեցեղեն մնացորդներ: Արևմտյան լանջի՝ շուրջ 10 հա տարածքում գտնվում է միջնադարյան բնակատեղին, որը լրիվ ջրածածկ է լինելու: Պետք է պեղել այս բնակավայրի որոշ հատվածներ՝ գաղափար կազմելու համար հուշարձանի մշակութային շերտերի վերաբերյալ: Ամրոցը և արևելյան լանջի 19-րդ դ. գերեզմանոցը, որը գուրկ է պատմահնագիտական էական արժեքից, չեն ջրածածկվելու:

Գյուղի կենտրոնում է գտնվում եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին, որն ըստ փայտյա խոյակի հիշատակագրության՝ կառուցվել է 1851 թ.: Կառուցված է կարմիր և սև սրբատաշ տուֆով, ունի փայտե ծածկ և այն պահող չորս զույգ փայտե սյուներ: Եկեղեցու պատերն արտաքուստ սրբատաշ են և գտնվում են կիսաքանդ վիճակում: Զեկուցագրում նշվում է, որ կառույցը կիսով չափ մնալու է ջրի տակ, ու քանի որ այն ոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում, պետական պահպանության տակ չի առնված և իմաստ չունի առաջ քաշել նրա հետագա պահպանության խնդիրը: Հանձնաժողովը եկեղեցու աղբի մեջ հայտնաբերում է մի զանգ՝ նման Հառիճավանքի գավթի ռոտոնդայից կախված զանգին: Գտածոն ունի ուշագրավ դրվագումներ, իսկ շրթին՝ արձանագրություն. «Յիշատակ է զանկուկըս այս Թաթեռսի և կողակցոյն Հօռօմսիմին և հօրըն յՕհաննէսին և մօրըն Գուգալին և որդոցըն յՕհաննէսին և / Սարգիսին և դուստերըն Վառվառին, որ ետուն Ջալաբկեչուտու<sup>34</sup> եկեղեցոյն Սուրբ Աստվածածնա թվ 1853, նոյեմբերի 13-ին»: Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում զանգը տեղափոխել

Մարմաշենի վանք՝ ցուցադրելու Էրեբունի թանգարանի մասնաճյուղում:

Գյուղի հյուսիսարևելյան եզրի 19-րդ դ. գերեզմանոցը ևս գուրկ է արժեքից և չի մնալու ջրի տակ: Սակայն մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ջրածորի ժողովրդական շենքերը, որոնց թիվն անցնում է մի քանի տասնյակը: Դրանք ունեն հատակագծային ուրույն լուծում, ներառում են բնակարանը, արտադրական և տնտեսական հատվածները, գուրը, հացատունը և այլն: Շիրակի ժողովրդական լավագույն տների այս խմբից արժե չափագրել և ֆոտոֆիքսացիայի ենթարկել մեկ տասնյակի չափ շենքեր: Նպատակահարմար է դրանցից առավել խոշոր և ամբողջական մի համալիր տեղափոխել Մարմաշեն և վերահավաքել մասնաճյուղի մոտ, դարձնել ազգագրական թանգարան:

Ջրի տակ են մնալու նաև Ախուրյանի գետեզրյա ժայռերի մեջ գտնվող բազմաթիվ քարայրների մի զգալի մասը: Այդ քարայր-կացարաններում մարդիկ ապրել են ընդհուպ մինչև մեր դարը և անհրաժեշտ է դրանցում իրականացնել հնագիտական աշխատանքներ:

Վերջում, հանձնաժողովը ֆինանսական միջոցներ է պահանջում Կապաի ջրամբարի տակ մնացող հետևյալ հուշարձանների հնագիտական ուսումնասիրման, չափագրման և տեղափոխման համար. պեղել Հողմիկ և Ջրածոր գյուղերի դամբարաններ, Ջրածորի հին և միջնադարյան բնակատեղիները, չափագրել և ֆոտոֆիքսացիայի ենթարկել Ջրածորի ժողովրդական տների (գլխատների) հինգ լավագույն համալիրները, Մարմաշեն տեղափոխել և նույնությամբ վերականգնել լավագույն գլխատունը, պեղել Ախուրյանի եզրի 5 քարայրները:

ՀՄՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության նախագծային գրասենյակի 1983 թ. փաստաթղթից իմանում ենք, որ կազմվել է նախագծից՝ Ջրածորի եկեղեցու տեղափոխման և վերականգնման: Նախագծում նշվում է նաև, որ եկեղեցու զանգը պահվում է գյուղի մի ընտանիքի մոտ, եկեղեցին հայտնվելու է ջրամբարի ջրածածկման գոտում և կառավարության որոշման համաձայն պետք է տեղափոխվի: Նշվում է նաև, որ տեղափոխման վայրը դեռևս հայտնի չէ:

1986 թ. Ախուրյան գետի վերին հոսանքում մասնավորապես ջրամբարի ջրածածկման գոտում, վերգետնյա հետախուզական աշխատանքներ է իրականացնում Հայաստանի ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (հնագետներ՝ Ա.Քալանթարյան, Ա.Գևորգյան):

34 Ջալաբկեչուտը Ջրածոր գյուղի անունն էր մինչև 1946 թ.:

Դրանց արդյունքների հիման վրա հաջորդ տարի հետախուզական պեղումներ են կատարվում Ջրածորի տարածամասակյա հուշարձաններում՝ ամրոց-բնակատեղիում, դամբարանադաշտում և Ախուրյանի կիրճում գտնվող քարայրներում (Hakobyan et al., 1993, 106-117)<sup>35</sup>:

1988թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով Կապսի ջրամբարի շինարարական աշխատանքներն ընդհատվում են և շահագործման չի հանձնվում: 2023 թ. վերսկսվել են շինարարական աշխատանքները: Նախատեսվում է վերջնարդյունքում ջրամբարում ջրի առավելագույն ծավալը հասցնել 60 մլն մ<sup>3</sup>:

### Եզրակացություններ

Ջրամբարաշինությունը թեև չափազանց կարևոր նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի տնտեսության, մասնավորապես՝ գյուղատնտեսության և էներգետիկայի զարգացման տեսանկյունից, սակայն բացասական ազդեցություն է թողնում տարածքում հայտնվող պատմամշակութային հուշարձանների վրա՝ խաթարելով պատմականորեն ձևավորված նշակութային լանդշաֆտը, ջրածածկելով հուշարձանները: Ինչպես աշխարհի բազմաթիվ երկրներում, այնպես էլ Հայաստանում ջրածածկման գոտիներում հայտնվող հուշարձանների պահպանությունը կազմակերպելու մեծ փորձ կա: Ցավոք, նաև Հայաստանում, ինչպես ցույց է են տալիս ուսումնասիրությունները, այդ փորձը ոչ միշտ է հաջողված, որի հետևանքով կորստի են մատնվել բազմաթիվ, այդ թվում բացառիկ կարևոր պատմական հուշարձաններ, ինչպիսին է Ախուրյանի միջնադարյան կամուրջը:

Հոդվածում ներկայացվում են արխիվային մի շարք տվյալներ՝ ջրածածկվող գոտիների հուշարձանների պահպանության վերաբերյալ, որոնք կարևոր են անցյալի ջանքերը և հաջողված փորձը ներկայացնելու տեսանկյունից: Հիշարժան են Ախուրյանի ջրամբարի ջրածածկման գոտուց Ներքին Ջրափիի քարավանատան, Վերին Ջրափիի 19-րդ դ. եկեղեցու, Շիրակավանի 7-րդ դ. եկեղեցու, Ապարանի ջրամբարից Ս. Վարդան և Թուխ Մանուկ եկեղեցիների արագընթաց հնագիտական ուսումնասիրության և տեղափոխման-վերականգնման աշխատանքները:

Ընդհանուր առմամբ ներկայացվում են հինգ (Ախուրյանի, Ապարանի, Բերքաբերի և Տոլորսի) ջրամբարների և մեկ չիրականացված ջրամբարի (Կապս) ջրածածկման գոտում հայտնված հուշարձանների ճակատագրի վերաբերյալ մտահոգությո-

յունները և իրականացված հնագիտական, ճարտարապետաշինարարական աշխատանքները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բացի քննարկված հինգ ջրամբարների ջրածածկման գոտիներում հայտնված հուշարձանները, Հայաստանում կան այլ ջրամբարներ ևս, որոնց կառուցմամբ մասամբ կամ ամբողջությամբ ջրածածկ են եղել բնակավայրեր և դրանցում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ: Այդ շարքում է Որոտան գետի վերին հոսանքում գտնվող ՀՀ ամենամեծ՝ Սպանդարյանի ջրամբարը (տարողությունը՝ 257 մլն մ<sup>3</sup>), որի կառուցման պատճառով 1984 թ. ապարնակեցվել են ՀԽՍՀ Միսիանի շրջանի Բորիտովկա և Բազարչայ գյուղերը և ջրամբարից ոչ հեռու ստեղծվել են երկու նոր բնակավայրեր՝ ՀՀ Մյունիքի մարզի Միսիան համայնքի Ծղուկ և Գորայք գյուղերը (Hakobyan et al., 1998, 672; Ordukhanyan, Kharibyan, 2021, 18-21): Մյուս Արփա գետի վերին հոսանքում գտնվող Կեչուտի ջրամբարն է (տարողությունը՝ 22.5 մլն մ<sup>3</sup>), որի կառուցման պատճառով (շահագործման է հանձնվել 1980 թ.) ապարնակեցվել է ՀԽՍՀ Ազիզբեկովի (1990 թ. վերանվանվել է Վայքի) շրջանի Կեչուտ գյուղը և վերակառուցվել գյուղից մի փոքր հյուսիս-արևելքում (Hakobyan et al., 1991, 94, 95; Avagyan, 2015, 12-15):

Դիտարկումները ցույց են տալիս, որ չնայած վերջին տարիներին էներգետիկայի նոր աղբյուրների ի հայտ գալուն, ինչպես նաև ընդարձակ բարեբեր տարածքներ զբաղեցնելու և մեծ ֆինանսական ծախսեր պահանջելու հետևանքով հատկապես ԱՄՆ-ում և Եվրոպայում նկատվում է միտում՝ նոր խոշոր ջրամբարների կառուցումից հրաժարվելու, սակայն հատկապես Մերձավորարևելյան տարածաշրջանում դեռ շարունակվում է ջրամբարաշինական ակտիվ գործընթացը՝ առավելապես գյուղատնտեսական նպատակներին ծառայեցնելու համար (Ponseti, López-Pujol, 2006, 151-188): Պայմանավորված կլիմայի գլոբալ ջերմացմամբ, առկա ջրամբարների պատվարների մաշվածության հետևանքով ջրի մեծ կորուստներով, ինչպես նաև ոռոգման ջրերի օգտագործման և կուտակման ոլորտում առկա լուրջ խնդիրներով՝ Հայաստանում ևս ընթացքի մեջ են ինչպես մի շարք փոքր, այնպես էլ խոշոր նախագծերի իրականացումը, որոնց թվում՝ Վեդիի (նախատեսվում է շահագործման հանձնել 2025 թ., ջրատարողությունը՝ շուրջ 29 մլն մ<sup>3</sup>) և Կապսի (նախատեսվում է վերջնարդյունքում ջրամբարում ջրի առավելագույն ծավալը հասցնել 60 մլն մ<sup>3</sup>) ջրամբարների կառուցումը:

Այսպիսով, ջրամբարաշինական նոր վերելքի պայմաններում պետք է շարունակել կարևորել

35 Ջրածորի հուշարձանախմբում հետազայում ևս կատարված հնագիտական աշխատանքների մասին [Yeganyan, 2017, 190-205]:

ջրամբարների ջրածածկման գոտիներում հայտնվող հուշարձանների ուսումնասիրումն ու պահպանումը՝ հաշվի առնելով անցյալի փորձը և աշխարհում կիրառվող ժամանակակից մոտեցումները:

## Նշումներ և շնորհակալություններ

Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ջրագտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» նախագծի (21AG-6A080) շրջանակում:

## Acknowledgements

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project № 21AG-6A080) entitled “Culture of water use in the Armenian Highland from antiquity to present days”.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Arushanyan, A. (1986). Tolors Reservoir. In V. Hambardzumyan, M. Arzumanyan, et al. (Eds.), *Armenian Soviet Encyclopedia* (vol. 12). Yerevan (in Armenian).
- Avagyan, H. (2015). *Kechut: From the pages of the annals, Yerevan. Lusabats* (in Armenian).
- Akchaeoz, V. (2017, September 27). The Nerkin Jrapis bridge has been discovered. “Akos” weekly (in Armenian). <https://www.agos.com.tr/>
- Bobokhyan, A. (2020). “Tarmana Sea and Mount Arara”: features of habitat organization in Lake Van basin BC in the 2nd millennium. *Herald of Social Sciences*, 3, 248-280 (in Armenian).
- Gasparyan, S. (1987). Excavations of the tomb in Berkaber village of Ijevan region. *Historical-philological journal*, 1, 229-233 (in Armenian).
- Gasparyan, S. (1991). Kur-Araxesian culture cemetery of Berkaber, *Herald of Social Sciences*, 6, 114-128 (in Armenian).
- Grekyan Y. (2019). Climate change and the decline of the Urartian state. *Herald of Social Sciences*, 2, 35-71 (in Armenian).
- Daryan, Z. (1985). *For us, our thousand full land: documentary story. Sovetakan grogh* (in Armenian).
- Yeganyan, L. (2017). Cyclopean fortresses on the banks of Akhuryan River. *Shirak center for armenological studies NAS RA. Scientific works*, 20, 190-205 (in Armenian).
- Yeghiazaryan, H. (1975). *Historical monuments of Shirak valley. Hayastan* (in Armenian).
- Tadevosyan, H. (1983). Joghas Reservoir. In V. Hambardzumyan, M., Arzumanyan, et al. (Eds.). *Armenian Soviet Encyclopedia*. Yerevan (in Armenian).
- Toramanyan, T. (1942). *Materials of the history of Armenian architecture, Collection of works. Armfan* (in Armenian).
- Toramanyan, T. (1948). *Materials of the history of Armenian architecture, Second collection of works. Academy of Sciences of Armenian SSR* (in Armenian).
- Torosyan, R., Khnkikyan, O., & Petrosyan, A. (1993). *Old Shirakavan (ancient settlement and burial ground), Archaeological works in newbuildings of Armenia (results of the excavation 1986-1987)*, volume I, Tiratsyan, G., Kalantaryan, A., & Areshyan, G. (Eds.), Yerevan, Publishing house of NAS of RA, 15-19 (in Armenian).
- Tsaturyan, Z. (2007). Water as an ancestry totem in the “Sasna Tsrer” epic, *Armenian folk culture, volume XIV, Materials of the republican scientific session*, Harutyunyan, S., & Hobosyan, S. (Eds.), Gitutyun, 101-108 (in Armenian).
- Hakhnazaryan, A. (2012). *The three monasteries of Artaz*. RAA publishing house (in Armenian).
- Hakobyan, T., Melik-Bakhshyan, S., & Barseghyan, H. (1986, 1988, 1991, 1998). *Dictionary of place names of Armenia and neighboring regions, with four volumes. YSU* (in Armenian).
- Hakobyan, H., Vardanyan, R., & Zinjirjyan, V. (1993). Preliminary results of archaeological excavations carried out in the upper stream of the Akhuryan River (in the area of Jradzor and Hoghmik villages), *Archaeological works in new buildings of Armenia (1986-1987 excavation results)*, Volume I, Tiratsyan, G. et al. (Eds.), Academy of Sciences of Armenian SSR (in Armenian), 106-117 (in Armenian).
- Harutyunyan, V. (1957). Secular architecture of medieval Armenia (general description), *Bulletin of social sciences of the Academy of Sciences ASSR*, 8, 67-82 (in Armenian).
- Harutyunyan, V. (1997). With the roads of Islamic countries. “Science” newspaper, 18 (104), 3 (in Armenian).
- Harutyunyan, S. (2012). Excavations of Yerazgavors in 1977. *Historical-philological journal*, 1, 192-195 (in Armenian).
- Melikyan, G. (1951). *How to build a kolkhoz reservoir. Haypethrat* (in Armenian).
- Mirijanyan, D., & Aghayan, S. (2019). Observations about Gntuni princely family’s domains according to the lithographic and writing sources. *Proceedings of the Institute of Archaeology and Ethnography*, 3, Dalalyan, T. et al. (Eds.). Yerevan, IAE, 106-116 (in Armenian).
- Musheghyan, G. (1971). The question of water supply in Erebuni and Teyshebaini. *Historical-philological journal*, 1, 207-215 (in Armenian).
- Muradyan, F. (1993). *Newly discovered marks from Aparan region, Archaeological works in new buildings of Armenia (1986-1987 excavation results)*, Volume I, editors: G., Tiratsyan et al. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Nalbandyan, A. (2014). *Report of Excavation of tehSt. Poghos-Petros Church in Zovuni*. Yerevan, scientific research center of historical and cultural heritage of Ministry of Culture of RA (in Armenian).
- Petrosyan, V. (1980). Inscriptions of Zovuni. *Historical-philological journal*, 3, 303-306 (in Armenian).
- Jalalbekyan, R. (1974). Dams of Mokhrablur. *Historical-philological journal*, 4, 157-162 (in Armenian).
- Jalalbekyan, R. (1977). Ancient water construction works in Armenia. *Science and technology*, 6 (166), 47-51 (in Armenian).

- Sahinyan, A. (1968). Architectural Group of Zovuni. *Herald of Social Sciences*, 1, 101-120 (in Armenian).
- Simonyan, M. (1999). *Zovuni: from days long past*. Tigran Mets (in Armenian).
- Simonyan, H. (2009). Joghaz-Berkaber. Tavush: material and spiritual heritage, Materials of the Republican scientific session (A. Kalantaryan, & H. Sargsyan, Eds.). Gitutyun, 215-232 (in Armenian).
- Sukiasyan, A. (2011). *Tolors*. VMV Print (in Armenian).
- Vardanyan, L., Azizyan, L., Misakyan, A., Surenyan, G., & Azizyan, H. (2018). Methodology for forecasting the annual maximum water level of the Akhuryan reservoir. *Bulletin of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Earth Sciences*, 1 (71), 59-67 (in Armenian).
- Parsamyan, V. (1954). The annexation of Eastern Armenia to Russia. *USSR Academy of Sciences Bulletin of social sciences*, 10, 3-24 (in Armenian).
- Petrosyants, V. (1988). *Historical-architectural monuments of Nig-Aparan*. Hayastan (in Armenian).
- Ordukhanyan, Z., & Kharibyan G. (2021). *Borisovka (Tshghuk)*. Copy print (in Armenian).
- Ahmadi, S., Hekmatara, H., Noorali, H., Campana, M., Sadeghi, A., & Pazhoh, F. (2022). The Hydropolitics of Upper Karabakh, With Emphasis on the Border Conflicts and Wars Between Azerbaijan and Armenia. *Geo-Journal*, 88(1), 1873-1888. <https://doi.org/10.1007/s10708-022-10714-4>
- Brew, J. (1961). Emergency Archaeology: Salvage in Advance of Technological Progress. *Proceedings of the American Philosophical Society*, 105(1), 1-10.
- Conker, A. (2018). Understanding Turkish Water Nationalism and its Role in the Historical Hydraulic Development of Turkey. *Nationalities Papers*, 46(2), 1-15. <https://doi.org/10.1080/00905992.2018.1473353>
- Jongerden, J. (2010). Dams and Politics in Turkey: Utilizing Water, Developing Conflict. *Middle East Policy*, 17(1), 137-143. <https://doi.org/10.1111/j.1475-4967.2010.00432.x>
- Khalid, I., & Zahra, S. (2019). Hydro-politics in Iran and Afghanistan: An Overview. *Pakistan Social Sciences Review*, 3(2), 594-605. [http://doi.org/10.35484/pssr.2019\(3-2\)46](http://doi.org/10.35484/pssr.2019(3-2)46)
- Marchetti, N., Curci, A., Gatto, M., Nicolini, S., Mühl, S., & Zaina, F. (2019). Multi-scalar Approach for Assessing the Impact of Dams on the Cultural Heritage in the Middle East and North Africa. *Journal of Cultural Heritage*, 37, 17-28. <https://doi.org/10.1016/j.culher.2018.10.007>
- Marchetti, N., & Zaina, F. (2020). OrientDams: The Impact of Dams on Cultural Heritage in the Middle East and North Africa. *Ancient Near East Today*, 8, 1-10.
- Nagheby, M., & Warner, J. (2022). The 150-year itch: Afghanistan-Iran Hydropolitics Over the Helmand. *Hirmand River. Water Alternatives*, 15(3), 551-573.
- Ponseti, M., & López-Pujol, J. (2006). The Three Gorges Dam Project in China: History and Consequences. *Revista HMiC*, IV, 151-188.
- Ronayne, M. (2005). *The Cultural and Environmental Impact of Large Dams in Southeast Turkey*. London, National University of Ireland, Galway and Kurdish Human Rights Project.
- Zarfl, C., Lumsdon, A., Berlekamp J., Tydecks, L., & Tockner, K. (2014). A Global Boom in Hydropower Dam Construction. *Aquatic Sciences*, 77(1), 161-170. <https://doi.org/10.1007/s00027-014-0377-0>

## ARCHIVES

- Archive 1, *Report on the construction of the Akhuryan Reservoir in Shirak Marz and the fixation, excavation, measurement, demolition-transportation and restoration of monuments of historical and architectural importance, which will remain under water, Service For The Protection Of Historical Environment and Cultural Museum-reservations (№ GG 1208 Hsh 4/1)*. The Ministry of Education, science, Culture and Sports of the Republic of Armenia,
- Archive 2, *Summary report of the results of the archaeological investigation of the Aparan region, Senior researcher of the Committee H. Yeghiazaryan, Service For The Protection Of Historical Environment and Cultural Museum-reservations (№ Hshgo 1/29)*. The Ministry of Education, science, Culture and Sports of the Republic of Armenia.
- Archive 3, *Report of works performed in Zovuni village of Aparan region, In 1966 January 20 to February 9 (displaced monuments), Service For The Protection Of Historical Environment and Cultural Museum-reservations (№ Hshgo 1/28)*. The Ministry of Education, science, Culture and Sports of the Republic of Armenia.
- Archive 4, *Aragatsotn region, Poghos-Petros church, Aparan reservoir, reoprt, Service For The Protection Of Historical Environment and Cultural Museum-reservations (№ Hshgo 2/35)*. The Ministry of Education, science, Culture and Sports of the Republic of Armenia.
- Archive 5, *Report on the construction of the Joghazi reservoir in Tavush province and the monuments of historical and architectural importance that will remain under the reservoir, Service For The Protection Of Historical Environment and Cultural Museum-reservations (№ 1208 Hsh 4/3)*. The Ministry of Education, science, Culture and Sports of the Republic of Armenia.
- Archive 6, *Riport on the construction of the Tolors reservoir in the area of Old Tolors and Ashotavan villages of Syunik marz and the monuments of historical and architectural importance that will remain under water, Service For The Protection Of Historical Environment and Cultural Museum-reservations (№ 1208 Hsh 4/4)*. The Ministry of Education, science, Culture and Sports of the Republic of Armenia.
- Archive 7, *Report on the accounting of historical and archaeological values, archaeological, architectural and modern monuments that will remain under water the Kapsi reservoir of Shirak province, Service For The Protection Of Historical Environment and Cultural Museum-reservations (№ GG 1208 Hsh 4/2)*. The Ministry of Education, science, Culture and Sports of the Republic of Armenia



# IRRIGATION SYSTEMS OF TERRACES IN ARMENIAN CULTURE

Rafik Gabrielyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

## Abstract

Irrigation systems of terraces are one of the important phenomena of Armenian culture. As a result of the flow of water, some soil erosion was taking place. At the same time, without water, the cultivation of terraced lands would be ineffective. Over time, the irrigation systems of terraces have acquired unique solutions adapted to the local landscape. In this article, an attempt is made to present the irrigation systems of the terraces on the basis of materials related to different historical and ethnographic regions and individual settlements of Armenia. An important part of them are canals built on slopes, norias, reservoirs constructed on steep terrain, etc. Water management within the directly irrigated plot is realised in two ways. In the first case, all terraces are irrigated from the main-stream, and in the second case, water is transferred from one terrace to another.

**Keywords:** landscape, terrace, arable farming, steep terrain, supporting wall, canal, stream, noria, reservoir.

## ԴԱՐԱՎԱՆՂՆԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Ռաֆիկ Գաբրիելյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

### Ամփոփագիր

Դարավանդների ոռոգման համակարգերը հայկական մշակույթի կարևոր երևույթներից են: Ջրի հոսքի հետևանքով տեղի էր ունենում որոշակի հողամաշում: Միաժամանակ առանց ջրի անարդյունավետ էր դառնում դարավանդային հողատարածքների մշակությունը: Ժամանակի ընթացքում դարավանդների ոռոգման համակարգերը տեղի լանդշաֆտին հարմարեցված լուծումներ են ձեռք բերում: Սույն հոդվածում փորձ է արվում Հայաստանի պատմագագրական տարբեր շրջաններին և առանձին բնակավայրերին վերաբերող նյութերի հիման վրա ներկայացնել դարավանդների ոռոգման համակարգերը: Դրանց կարևոր մասն են կազմում լանջով անցկացված ջրանցքները, ջրհան անիվները, գառիվայր տարածքի վրա կառուցված ջրամբարները և այլն: Անմիջապես ոռոգվող հողամասի ներսում ջրի կառավարումը կատարվում է երկու ձևով: Առաջին դեպքում բոլոր դարավանդները ոռոգվում են գլխավոր առվից, իսկ երկրորդ դեպքում ջուրը փոխանցվում է դարավանդից դարավանդ:

**Հիմնաբառեր.** լանդշաֆտ, դարավանդ, երկրագործություն, գառիվայր, հենապատ, ջրանցք, առու, ջրհան անիվ, ջրամբար:

### Ներածություն

Դարավանդային երկրագործության բնույթը հիմնավորապես ներկայացնելու համար կարևոր է ուսումնասիրել ոռոգման այն համակարգերը, որոնք հարմարեցված էին դարավանդային լանդշաֆտի պայմաններին: Ջրի հոսքի հետևանքով տեղի էր ունենում որոշակի հողամաշում: Մինչև ժամանակ առանց ջրի անարդյունավետ էր դառնում դարավանդային հողատարածքների մշակությունը: Հատկապես Հայաստանի ցածրադիր գոտիներում երկրագործությունն առանց ջրի անհնար էր: Զուգահեռ արձանագրենք, որ երկրագործական դարավանդները գտնվում էին գառիվայր լանդշաֆտի վրա, և դրանք ոռոգող ջրամատակարարման համակար-

գերը նույնպես պետք է հարմարեցված լինեին տեղանքի բարդ ռելիեֆին: Այս տեսանկյունից ջրի մատակարարման և գառիվայր տեղանքում դրա կառավարման խնդիրները ստանում են առաջնային կարևորություն:

Սույն հոդվածում ընդհանրական տվյալների համադրմամբ ներկայացրել ենք ջրամատակարարման համակարգերին վերաբերող որոշ մանրամասներ, դիտարկել դրանք համայնքի համագործակցության համատեքստում: Հնարավորության սահմաններում փորձել ենք պարզաբանել դրանց մաս կազմող իրերի և երևույթների ժողովրդական անվանումները:

## Մեթոդաբանությունը և տեսական հիմքը

Հոդվածի համար հիմք են ծառայել դաշտային ազգագրական նյութերը, որոնք հավաքագրել ենք Սյունիքի մարզում իրականացրած հարցազրույցների միջոցով:

Կիրառել ենք նկարագրական մեթոդը՝ հետազոտելով ավանդական մշակույթի տարրերը: Դրանք այսօր ունեն մանրակրկիտ մշակման և դասակարգման կարիք: Հիմնական դժվարությունը միջավայրերի, գոտիական տարբերությունների և էթնիկ տեղաշարժերի մեջ է: Գրառված տվյալները վերաբերում են տարբեր շրջանների, որտեղ, քաղաքական, տնտեսական և այլ խնդիրներով պայմանավորված, երբեմն տեղի են ունեցել վերաբնակեցումներ:

Տարբեր շրջաններին առնչվող նյութերի համադրումը ենթադրում է նաև վերակազմական մեթոդի կիրառման անհրաժեշտություն՝ բնականաբար առաջնորդվելով այնպիսի տվյալներով, որոնք մեծ մասամբ վերաբերում են գաղթվայր լանդշաֆտի վրա գտնվող բնակավայրերին. նմանատիպ ռեփլեքթիվ թելադրում է նույնական լուծումներ կիրառել տնտեսական համալիրի ենթակառուցվածքները ստեղծելիս:

Ինչպես էին կատարվում ջրամատակարարումը և ոռոգումը դարավանդային հողատարածքներում: Դաշտային նյութերը վկայում են, որ դարավանդային երկրագործությունը հարթավայրային երկրագործության ձևերից տարբերվում է ոռոգման համակարգերի ձևավորմամբ: Միաժամանակ ջրային պաշարների կառավարման խնդրի ուսումնասիրությունը որոշակի պատկերացում է տալիս հասարակության սոցիալական կազմակերպվածության վերաբերյալ (Akabado, 2015, 801): Երկրագործական դարավանդի ոռոգումը պահանջում է փոխհամաձայնեցված շարունակական վերահսկողություն սահմանել ջրի նկատմամբ, ինչն ուղղակիորեն կապվում է հասարակության համագործակցության ընդհանուր մեխանիզմների հետ (Barth, 1956, 1086):

## Երկրագործական դարավանդների տիպերն ու դրանց ժողովրդական անվանումները

Ըստ նախնական դիտարկումների՝ հայոց երկրագործական մշակույթում կարելի է առանձնացնել դարավանդների երկու հիմնական տիպ: Առաջինը այգեգործական դարավանդներն են, որոնք ունենում են չոր շարվածքով կառուցված քարե հենապատեր: Ավանդաբար այգիները գտնվում էին բնակավայրերից դուրս, չնայած որոշ վայրերում այդ կարգի այգիներ կային բնակավայրերի ներսում և

ստեղծում էին տպավորություն թե դարավանդային այգիները միաձուլված էին դարավանդային բնակավայրին: Ամասիայում, օրինակ, ազատ մնացած յուրաքանչյուր տարածք, անկախ իր չափից, կարող էր օգտագործվել այգի կամ պարտեզ հիմնելու համար (Simonean, 1966, 267): Այգեգործական այսպիսի դարավանդներով այժմ են ընկնում Երևանը (Հրազդան գետի կիրճի և Նորքի այգիները), Գետաշենը, Մեղրին, Արաբկիրը, Ակնը, Հաճնը, Արդվինը և այլն:

Երկրորդը դարավանդային բնույթի վարելահողերն են, որտեղ զբաղվել են դաշտավարությամբ: Վերջիններս էականորեն տարբերվում են այգեգործական դարավանդներից և ձևավորման բնույթով, և օգտագործման ու մշակման առումներով: Այսպիսի դարավանդները հիմնականում գտնվում են նախալեռնային գոտում: Որոշակի թեքության վրա գտնվող վարելահողեր մշակվում էին առանձնացված երկայնական հողակտորներով: Հողօգտագործման արդյունավետության և բերքի որակի բարելավման նպատակով վարելահողերը աստիճանաբար հարթեցնելու միտում կար (միաթև հերկի միջոցով): Այսպիսով, առանձին հարթակների միջև առաջանում էին հողաթմբեր, որոնք կատարում էին նույն գործառնությունը, ինչ քարե հենապատը՝ այգեգործական դարավանդի դեպքում:

Հայաստանում դաշտավարական այդպիսի դարավանդներով հայտնի են Սյունիքը (Լոր, Գետաթաղ, Շենաթաղ, Խնածախ, խոզնավար և այլն) և Վայոց Ձորը (Գնիշիկ, Բոլորաբերդ, Զատիթափ, Խաչիկ, Գոմք, Հերիեր և այլն):

Հայկական մշակույթում՝ այս ընդհանուր օրինակափոխության մեջ, կան բացառություններ: Քեսապում, օրինակ, դաշտավարական դարավանդներ հիմնելու դեպքում նույնպես կառուցում են քարե հենապատեր (Cholakean, 1995, 154-156):

Խարբերդի Բարջան գյուղում այգեգործական դարավանդները կոչվում էին պատով եգիներ/այգիներ (Tseron, 1938, 201-202): Կարելի է ենթադրել, որ դարավանդային այգին հարթ տեղամասում գտնվող այգուց զատելու հարցում ցուցիչ է հանդիսացել հենապատը, որը անվան համար մակդիրի գործառնությամբ է կատարում: Լոռիում նման այգիները հայտնի են ծապան անունով (Malkhaseants, 1944-2, 330; Ghazaryan, 1976, 508): Տնամերձ այգի-բանջարանց հանդիսացող դարավանդները Սյունիքի Մուցք գյուղում կոչվում են թախչիկ, իսկ թախչիկների միջանկյան հատվածները, հենաթմբերը՝ մարգ (Hovsepyan, Abrahamyan, Gabrielyan, 2023): Հավանական ենք համարում, որ թախչիկ անվանումը տալիս բառի ձևափոխված տարբերակն է: Վերջինս Սյունիքում օգտագործվում է որպես դաշտա-

վարական դարավանդներին տրվող անվանում (Galstyan & Sargsyan, 1981; Hovsepyan et al., 2023a; Hovsepyan & Gabrielyan 2023): Մյուս ուշագրավ անվանումը դևանդն է: Այն կարող է վերաբերել նվարելահողերին, նվարելներին, նվարտեզներին (Amatuni, 1912, 304): Մյուսիքի Քարաշեն գյուղում հանդիպում է նաև դրվանդ տարբերակով (Galstyan & Sargsyan, 1981), իսկ Լոռիում տարածված է այս անվան՝ եռանդ ձևը (Ghazaryan, 1976, 502):

### Ռոզման համակարգերի ստեղծումը

Հայկական լեռնաշխարհի բարդ ռելիեֆով պայմանավորված՝ ջրային պաշարներն պետք էր հայթայթել ձորերից հոսող հեղեղատներից, աղբյուրներից, գետակներից և լեռնային ժամանակավոր լճակներից: Սա նշանակում էր, որ որոշ դեպքերում հարկավոր էր ջրատար առուներ անցկացնել գառիվայր տեղամասերով՝ ձորերի լանջերով: Նման կառուցապատումները շինարարական սկզբունքներով տարբերվում են հարթ տարածքներում կառուցված օրինակներից: Որպես կանոն ջրանցքը կառուցվում էր համայնքի ուժերով և պահանջում էր օգտագործման որոշակի կանոնակարգ (Veis-fon-Weissengof, 1883, 162-163):

Չնչկաձագի տարածաշրջանը, օրինակ, հայտնի է իր տիպիկ դարավանդային բնությամբ: Այստեղ շատ գյուղեր բավարար չափով ջուր չունեին: Այն բերվում էր հեռվից առուների միջոցով: Ուշագրավ է փաստը, որ բոլորն ավանդաբար ընդունում էին առուները հանրության սեփականությունն են, հետևաբար օգտվում էին՝ առանց խտրականության: Ջրօգտագործումը ուներ հստակ կանոններ. ջրի բաշխման միակ սկզբունքը ընտանիքի մշակության ներքո գտնվող հողատարածքի չափն էր: Բոլորը խստորեն հետևում էին այդ կարգին (Ghazarean, 1971, 114): Համայնքի ընդհանուր պատկանելության ներքո գտնվող ջրատարները, մաքրվում էին բնակիչների համագործակցված աշխատանքի շնորհիվ (Zhamkochean, 1951, 18; Avagyan, 1998, 113; Gabrielyan, 2022):

Ազգագրական նյութերում պահպանվել է լանջով անցկացված ջրանցքի ժողովրդական անվանում: Ըստ Գրիգոր Տեր-Հովհաննիսյանի հաղորդած տեղեկությունների՝ նման ջրատարները Սևրի-Հիսարի հայության բարբառով կոչվում էին սեքի: Հեղինակը այս անվանումը թարգմանում է՝ դարուղի (Ter-Yovhannesean, 1965, 24): Այն լավագույնս արտացոլում է ջրատարի լանջային լինելը, քանի որ՝ դար նշանակում է՝ լեռնալանջ, բարձրավանդակ: Նշենք, որ առանց համատեքստի դարուղին կարող է հասկացվել նաև լեռնային արահետ իմաստով:

Լանջային գառիվայր տարածքով ջրատար

առուներ անցկացնելու համար հարկավոր է կիրառել կառուցողական նույն սկզբունքը, ինչ օգտագործվում է այգեգործական դարավանդներ ստեղծելիս: Ձորերից և կիրճերից հոսող ջրային ակունքների ուղղությունը կարգավորելու համար կառուցում էին հենապատեր և թմբեր, որոնք ձգվում են հորիզոնական ուղղությամբ՝ լանջից լանջ: Դրանք ունենում էին որոշակի անկման անկյուն: Նախ ընտրում էին համապատասխան կետը, որտեղից արվելու էր ջրառը, և այնտեղ կառուցում էին բանդը/պենտը, որը քարե ամուր պատվար էր: Գլխավոր առուն կառուցելիս նախ՝ լանջը փորելով ու ժայռերը ճեղքելով՝ որոշակիորեն հարթեցնում էին այնպես, որ ամփի համար բավական տեղ բացվեր, ապա՝ հարթեցված ուղու ներքևի հատվածում քարաթմբեր էին կառուցում, որը հենապատի դեր էր կատարում: Կախված լանջի թեքությունից, տեղանքի խորությունից՝ այս հենապատը կարող էր տարբեր բարձրություններ ունենալ: Այսպիսով, ջրի կորուստը մի կողմից նվազեցվում էր բնական լանջով, իսկ մյուս կողմից՝ նկարագրված հենապատով (Haykuni, 1894, 54; Kalantar, 1937, 180-181; Shirmazan, 1962, 158; Halajyan, 1973, 106; Minasean, 1974, 238; Shahaziz, 1987, 46; Aslanyan, 2002, 35):

Հայոց ավանդական մշակույթում, ինչպես և Դերսիմում, հենապատերի քարերի արանքը լցնում էին մի տեսակ կավ, որը չէր լուծվում ջրում, ընդհակառակը, ջրի հետ շփվելով՝ ամրանում էր: Այս նյութը իրականում հանքաքարի փխրուն մասերից մանրացրած, մոխրագույն, ավազի նմանվող հող էր (Halajyan, 1973, 106):

Լանջով անցկացված ջրանցքի դասական օրինակ է Արագածի Ամբերդաձորից սկիզբ առնող «12 բանդերը»: Այն հիշատակվում է Ալեքսանդր Խանադովի (Khan-Aghov, 1886, 272-273), Գրիգոր Ղափանցյանի (Ghapanecyan, 1944, 147) և Աշխարհբեկ Քալանթարի (Kalantar, 1937, 182-183) աշխատություններում (նկ.1): Այս համակարգը բաղկացած է համանուն թվով ջրատար առուներից: Դրանք գրեթե զուգահեռ են կառուցված և ունեն դարավանդային իրական համայնապատկեր: Ա. Քալանթարը այսպես է բնութագրում դրանց դարավանդան լինելը. «Գեղեցիկ է Ամբերդի ձորը, որի լանջով դեռ այսօր էլ մեկը մյուսի թիկունքն էլած 12 ջրանցքներ են ընթանում առաջ դեպի ներքևի գյուղերը» (Kalantar, 1925, 221): Ջրանցքի միջին երկարությունը մոտ ութ կիլոմետր է: Այն հատվածներում որտեղ ջրատարները հանդիպում են լեռնածալքերի, կառուցված են բարձր և ամուր հենապատեր՝ առանց շաղախի: Մեր արձանագրածների մեջ առկա են մինչև 2-3 մ բարձրությամբ պահպանված օրինակներ (նկ.2):



Նկ.1. Ամբերդաձորի «12 բանդեր» ջրանցքի ընդհանուր տեսքը (Source: A. Hakhverdyan)



Նկ.2. Ամբերդաձորի «12 բանդեր» ջրանցքի հենապատերից (Source: A. Hakhverdyan)

**Ջրի հան անիվներ<sup>1</sup>**

Հայերին ծանոթ է եղել ջրի հան անիվների միջոցով ջրատ իրականացնելու եղանակը, որը մեծ մասամբ հայտնի է հելլենիստական մշակույթի օրինակով: Հայ ազգագրությունը այս երևույթին հատուկ ուշադրություն չի դարձրել: Դրանք օգտագործվել են դարավանդային որոշ բնակավայրերում, օրինակ՝ Սեբաստիայի Ղուհճու գյուղում (Yerapuchean, 1967, 70), Ամասիայում (Simonean, 1966, 33), Արաբկիրում (Bakhtikean, 1934, 131), Չմշկաձագում (Gasporean, 1969, 125): Այս համալիրները եղել են նաև ոչ դարավանդային բնակավայրերում: Հ. Եսփուրճյանը

Բումտիկինին վերաբերող ազգագրական նյութերում հիշատակում է երկու վարպետների՝ Հովհաննես Գուրոճյանին և Տեղի Հաճի Գայսրյանին, ովքեր տիրապետում էին ջրի հան անիվ սարքելու արհեստին: Քաղաքի և շրջակա գյուղերի բոլոր ջրի հան անիվները նրանք էին պատրաստում (Yerapuchean, 1967, 70):

Հայոց մեջ ջրի հան անիվն ունի անվան մի քանի տարբերակներ: Ամասիայի և Չմշկաձագի խոսվածքներում դրանք կոչում էին տօլապ (Simonean, 1966, 928, 931; Gasporean, 1969, 125): Այս տարբերակով այն հանդիպում է նաև արևմտահայ գրական

<sup>1</sup> Չշիտթել ջրանիվների (տուրբին) հետ, որոնք նախատեսված են ջրի հոսքի ուժով, պտույտ ստանալու համար: Գոյություն ունեն ջրի հան անիվների տարբեր տեսակներ: Դրանցից ամենատարածվածը պտտվում է ջրի հոսքի ուժով և իր վրա ունի թիկեր՝ ինչպես ջրանիվը, այստեղից էլ գալիս է շփոթությունը, սակայն ջրի հան անիվի բուն գործառնությունը ջուրը վեր բարձրացնելն է: Ռուս.՝ водочерпальное колесо, чадуфон, անգլ.՝ noria:

լեզվում (Bakhtikian, 1934, 131; Yeapuchean, 1976, 70): Ըստ որոշ աղբյուրների՝ այս անվանումը թուրքերեն է (Cherechean et al., 1992, 1009), սակայն դա միայն առաջին հայացքից: Բառը արևմտահայերենում հնչում է դօլաբ: Դօլ բառարմատը, անկասկած, ծագում է դոյլ/դոյլ բառից (Amatuni, 1912, 173; Malkhaseants, 1944a, 547; Gabikian, 1952, 538), որը կապված է իրանական ծագման՝ *dōl\** բառի հետ (Acharean, 1926, 678-679): Ար վերջածանցը ակնհայտորեն նույնական է պարսկերեն՝ *āb\** թարգմանաբար՝ ջուր, բառին (Voskanyan, 2008, 70):

Արաբկիրում ջրհան անիվները կոչվել են կերտակ (Bakhtikian, 1934, 131): Վերջինս ավելի հայտնի է որպես մեկ այլ համալիրի անվանում, որով ջրհորից ջուր էին վերցնում: Այն աշխատում էր լծակների և ծանրոցի միջոցով (Malkhaseants, 1944b, 430): Այս անվան հարցում ժողովրդական ընկալման մեջ ըստ էության դեր է խաղացել համալիրների կատարած նույնական գործառնությունը և ոչ կառուցվածքը:

Ջրհան անիվներին տրվող մյուս անվանումը, որը շատ տարածված է, չարխն է: Այն ունի իր առանցքի շուրջը պտտվող անիվ իմաստը: Այս բառը միաժամանակ օգտագործվում է տարբեր իմաստներով (Yeghishean & Piperean 1960, 80-82; Gasparyan et al., 2007, 389):

Ջրհան անիվները կառուցում են գետերի այնպիսի հատվածներում, որտեղ ջրի մակարդակը գետնի մակարդակից ցածր է, և ջուրը վեր բարձրացնելու խնդիր կա: Հիմնական մասը փայտաշեն անիվ է, որը ուղղահայաց դիրքով պտտվում է իր առանցքի շուրջը: Շրջանի եզրերին տեղադրված են դույլեր և թիեր: Վերջիններս ապահովում են անիվի պտույտը ջրի հոսքի միջոցով՝ կատարելով ջրանիվի գործառնություն: Երբ անիվը սկսում է պտտվել, ջրով լի դույլերը բարձրանում են վեր և դատարկվում ջրհորդանի մեջ՝ այնտեղից փոխադրվելով առուններ (Yeghishean & Piperean, 1960, 80; Simonean, 1966, 1011; Yeapuchean, 1967, 70; Gasparyan 1969, 125):

Կարևոր է արձանագրել, որ որոշ բնակավայրերում ջրհան անիվները ավանդաբար մեծ տարածում են ունեցել, օրինակ՝ Ադանայում (Kurilev, 1976, 33), իսկ Ամասիայում գետերի եզրին գտնվող բոլոր այգիները ռոտգվում էին դրանց միջոցով (Simonean, 1966, 33):

### Դարավանդային ջրամբարներ

Դարավանդային ջրամբար ասելով՝ նկատի ունենք, որ այն կառուցված է լանջային տեղանքում: Դրանց գործառնությունը ջրային պաշարների կուտակումն, պահպանումն և հետագա օգտագործումն է: Ի տարբերություն լեռնային չրնակեցված գոտու, որ-

տեղ նման գործառնություն կատարում բնական ու արհեստական լճակները, բնակավայրերում խնդիրը փոքր-ինչ այլ է: Հատկապես դարավանդային բնակավայրերի ներսում տարածքի խնայողության խնդիր կա, և այդ մեթոդով ջուր կուտակելն անհարմարություն է ստեղծում:

Առհասարակ ջրի պահեստավորումն անչափ կարևոր խնդիր է եղել: Թունարգայի հայության շրջանում, օրինակ, ջրամբար կառուցելն ավանդաբար սուրբ գործ է համարվել՝ Երուսաղեմ ուխտի գնալու նման մի բան, քանի որ այս բնակավայրում ջրի խիստ անբավարարություն է եղել: Տեղի բարբառով ջրավազանը կոչվում էր՝ շէրինճ (թրք.՝ *sarnıçci*, ջրամբար) (Dermentjyan, 3013, 326): Բոլոր ջրավազանները ունեցել են գերդաստանային անվանումներ: Յուրաքանչյուր ջրավազանի շինարարության ավարտից հետո հոգևորականները կատարել են ջրօրհների արարողություն (Torosean, 1959, 34-42): Այս տեսանկյունից նշենք նաև, որ ջրի աղբյուր կառուցելը պատվաբեր է եղել նաև Ազուլիսում: Դրանք այստեղ կոչվում էին կիով/կիավ (Ayvazyan, 2006, 16):

Դարավանդային կառուցապատում ունեցող Ակն քաղաքում յուրաքանչյուր տուն իր առջև ջրամբար ուներ, որի պատերի բարձրությունը մինչև մեկ մետր էր: Դրանք օգտագործվում էին ռոտգման նպատակով և կոչվում էին կոշիղեր (Parsamean, Kechean, 1952, 57, 137): Քեսապի Պաշոտ գյուղում նույնպես յուրաքանչյուր ընտանիք ջրամբար ուներ՝ 5-6 մ խորությամբ: Դրանք իրենց մեջ էին ամբարում լանջային հեղեղատներից հոսող ջրերը (Cholakean, 1995, 328): Նմանատիպ ջրավազաններ եղել են նաև Ջեթունում: Տեղի բարբառով դրանք կոչվել են էօփ (Aharonean, Patkanean, 1960, 304): Այս առումով հետաքրքրական է, որ Քեսապում կէօփ (կուփ) է կոչվում աղբյուրի այն տեսակը, որի ջուրը հավաքվում է փոսի ձևով: Դրանք ունենում են մոտ կես մետր խորություն: Այս աղբյուրները չունեն ակնհայտ հոսք, այնտեղից ջուր են վերցնում՝ ամանը աղբյուրի մեջ սուզելով, շատ զգուշորեն, որ այն չպղտորվի (Cholakean, 1995, 162-163): Ուշագրավ է, որ այս անվանումը հիշեցնում է գուր բառը, որը նշանակում է ն՝ փոս, ն՝ ջրհոր (Malkhaseants, 1944a, 466; Cherechean et al., 1992, 417):

Ջառիվայր լանջերի խորքերից ջրի աղբյուրներ բացելու ուրույն ձևերով աչքի էր ընկնում Ազուլիսի հայությունը: Ակունքներ գտնելու համար ճեղքում էին ժայռերը և ընդերքից ջուր բխեցնում: Այս աղբյուրների ջրերը կուտակելու համար ազուլեցիները ժամանակին իրենց տների առջև կամ այգիներում կառուցել են մեծ ու փոքր ջրամբարներ: Դրանք երեք կողմից որմնափակ էին, իսկ թիկունքի կողմից



Նկ.3. Հին Հալիձորի դարավանդային ջրամբարը (Source: R. Gabrielyan)

հենվում էին բնական թեք լանջի վրա (Hakhnaza-rean, 1991, 93-96; Ayvazyan, 2006, 16-17): Այս նկարագրությունից ակնհայտ է դառնում, որ գործ ունենք դարավանդային ջրավազանների հետ:

Վայոց Ձորի Զատիթափ գյուղում՝ արտի վերևի մասում, ջրամբար էին շինում շատ պարզ եղանակով: Փոս էին փորում և հանված հողը սարքում հենաթումբ: Գարնանը՝ ձնհալի ժամանակ, ավազանները լցվում էին ջրով: Դրանք անվանակոչվում էին պատրաստողի անունով (Aslanyan, 2002, 31):

Մինչև այժմ գործող դարավանդային ջրամբար է պահպանվել հին Հալիձորում, որը օգտագործում են դարավանդային այգիները ոռոգելու համար: Այն գտնվում է սբ.Մինաս եկեղեցու մոտ: Ունի մոտ 1.5 մ խորություն: Ջրամբարը երեք կողմի պատերով մխրճված է գետնի մեջ, և միայն ներքևի պատը ամբողջությամբ բաց է (նկ.3): Այս պատի ստորին հատվածում խողովակ է տեղադրված, որը փակում են փայտե սեպի միջոցով: Այսպես ջուրը հավաքվում է ջրամբարում, ապա, ըստ անհրաժեշտության, հանում են սեպը և ջուրը բաց թողնում ոռոգում կատարելու նպատակով: Ջրամբարից քիչ վերև կա աղբյուր, որի ջուրն էլ լցվում է ջրամբարը (Hovsepian, Abrahamyan, Gabrielayan, 2023a): Այն ունի վիմագիր արձանագրություն, ըստ որի՝ կառուցվել է 1837 թվականին, Շահունց Հարությունի որդի Հայրումի կողմից:

Դարավանդային ջրամբարներն օգտագործվում էին ինչպես հողատարածքների ոռոգման, այնպես էլ մի շարք այլ կարիքների բավարարման նպատակով: Օրինակ՝ Բալուի Պաղին գյուղում ջրավազանները օգտագործվում էին յուղեղեն մթերքներ-

ըր զով պահելու համար (Yakobean et al., 1966, 97): Խարբերդի Հուսեյնիկ գյուղում դարավանդային ջրավազանները կավակերտ էին և օգտագործվում էին ինչպես բանջարանոցները, այնպես էլ ցորենի արտերը ոռոգելու նպատակով (Aharonian, 1965, 4):

Ամասիայում կար մի դարավանդային ջրամբար, որը շինված էր խիստ զառիվայրի վրա: Այն բավական տարողունակ էր և ոռոգում էր 100-ի հասնող այգիներ: Ուշագրավ է՝ վերոհիշյալ այգիների ոռոգման ժամանակաշրջանում մշակները 4-5 շաբաթով գալիս էին և բնակվում այգիների մեջ շինված տներում: Այս երևույթը ընդհանուր բառով կոչվում էր օղափոխություն:

### Երկրագործական դարավանդների ոռոգման ձևերը

Դարավանդային այգիներն ու պարտեզները գլխավորապես հիմնվում էին այն վայրերում, որտեղ հնարավոր էր ոռոգման ջուր հասցնել (Papukhyan, 1972, 42: Petoyan, 2016, 294): Այգու մի մասում երբեմն մշակում էին նաև բանջարեղեններ: Դարավանդային հողամասերի պարագայում ջրելու ճիշտ ձևերի կիրառումը առանցքային էր բերքատվության տեսանկյունից: Կարևոր էր այնպես անել, որ հողը հնարավորինս շատ ջուր ներծծեր, միևնույն ժամանակ պետք էր կատարելի դարձնել ջրի հոսքի քանակությունը, քանի որ շատ ջուր բաց թողնելու դեպքում դարավանդը կարող էր փլվել:

Որոշ շրջաններում, ոչ մեծ թեքության աստիճան ունեցող տեղամասում գտնվող այգիները ոռոգելու նպատակով կիրառվում էր խոսակցական լեզվում ընդունված «քոնդալան» կոչվող համակարգը:



Նկ. 4. Առանց հենապատերի դարավանդային պարտեզ Սյունիքի Շրվենանց գյուղում (Source: R. Gabrielyan)

Եթե բոլոր դարավանդները մի եզրից ունենում էին նույն թեքությունը, ապա ջրվում էին մայր առվից: Ռոտգումը սկսվում էր ամենացածր դարավանդից՝ աստիճանաբար բարձրանալով վեր: Սկզբում ջուրը իջեցնում էին ներքև և առաջինը ջրում ամենաստորին շարքը, և այդպես շարք-շարք բարձրանում դեպի վեր (Bdoyan, 1972, 135-138): Հաջորդ անգամ կարող էին ջրել վերից վար: Այս ձևի կիրառման պարագայում փոքրանում էր հողամաշման հավանականությունը, փաստացի այն կարող էր կատարվել միայն մայր առվի ափերից: Քանի որ ջուրը անմիջականորեն չէր փոխանցվում դարատափից դարատափ: Ջրի խնայողության և դարավանդների անխաթար մնալու առումով ռոտգման այս եղանակը բավական հարմար էր (Ըստ Սուրեն Հոբոսյանի բանավոր հաղորդման): Սյունիքի Շրվենանց գյուղում առկա է մարգերի ռոտգման նմանատիպ համակարգ: Այստեղ ամեն մի ընտանիքի պատկանող տնամերձ հողակտորը գտնվում է մի դարատափի վրա, այնպես, որ դարավանդային հենապատը մինևնույն ժամանակ ցանկապատ է ծառայում: Եզակի տնամերձներ հենապատեր չունեն, և մշակվող հողակտորը գտնվում է ազատ լանջի վրա: Նման դեպքում մարգերի առունները հորիզոնական դիրքով են բացում այնպես, որ դրանք նմանվում են իրարից անջատ առանձին թմբերի (Նկ. 4): Այսպես ածուները ինքնին հանդիսանում են հենաթմբեր: Ջուրը սակավ քանակությամբ իջեցնում են գլխավոր առվով միայն մի կողմից և ջրում յուրաքանչյուր թումբն առանձին այնպես, որ մի թմբից մյուսը հանկարծ ջուր չանցնի (Hovsepyan, Gabrielyan, 2023):

Ավելի մեծ թեքություն ունեցող հատվածները ռոտգելու համար «քոնդալան» համակարգը արդեն անարդյունավետ էր, քանի որ մայր առվով ջուրը ներքև իջեցնելու դեպքում դրա արգելակումը շատ դժվար կլիներ: Այս պարագայում ջուրը փոխանցում էին դարատափից դարատափ: Տվյալ ձևի կիրառումը պահանջում էր, որ դարատափերը հորիզոնա-

կան լինեին: Ռոտգման այս եղանակը օգտագործելիս յուրաքանչյուր դարատափի հենապատ արգելակի դեր էր կատարում: Այս համակարգի դեպքում, սակայն, մեծանում էր հողամաշման հավանականությունը: Հաշվի առնելով սույն հանգամանքը՝ ներքևի դարատափ փոխանցվող ջրի առուն անցկացնում էին անմիջապես դարավանդի վերին պատի մոտով՝ թիկունքի կողմի հենապատի եզրով: Ռոտգումը արդյունավետ կազմակերպելու համար միաժամանակ ջրում էին մի քանի դարավանդ՝ օգտագործելով սակավ քանակությամբ ջուր (Hovsepyan, Abrahamyan, Gabrielyan, 2023b):

Դարավանդային այգիների ռոտգման նմանատիպ եղանակի վերաբերյալ հիշատակություն ենք գտնում Չմշկածագ քաղաքին վերաբերող ուղեգրություններում (Gasporean, 1969, 124; Taylor 2016, 316):

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ մշակվող հողակտորներում ռոտգման բոլոր միջոցները և եղանակները միտված էին հողամաշումը նվազագույնին հասցնելուն:

**Եզրակացություններ**

Տարածքի յուրացման հայոց ավանդական եղանակներից է դարավանդային ռոտգման համակարգերի ձևավորումը: Երկրագործական դարավանդների ջրամատակարարման խնդիրները տևական փորձի արդյունքում ձեռք են բերել ուրույն լուծումներ: Առհասարակ, գառիվայր լանդշաֆտի պայմաններում երկրագործությանը ծառայող ռոտգման համակարգերը ստեղծվում են՝ հարմարեցվելով տեղանքի առանձնահատկություններին: Ջրային պաշարների ռացիոնալ օգտագործումը, թեքությունների վրա ջրի կառավարումը անհնարին կլինեին առանց այդպիսի համակարգերի, որոնց ստեղծումը բավական ծանր և տևական ընթացք է ունեցել: Այստեղից կարելի է հետևություն անել, որ

երկրագործական մշակույթի բուն կենտրոններում, այդ թվում՝ Հայաստանում, արմատացել է տարածքի հանդեպ ունեցած հոգատար վերաբերմունքը, որը ընդհանրապես բնորոշ է նստակյաց էթնիկ հանրություններին:

### Նշումներ և շնորհակալություններ

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Սուրեն Հոբոսյանին, Արսեն Բորոխյանին, Հակոբ Չոլաքյանին և Տորք Դալալյանին, ովքեր իրենց շահեկան խորհուրդներով նպաստել են հոդվածի ստեղծմանը: Ծնորհակալություն ենք հայտնում նաև վիճագրագետ Արսեն Հարությունյանին՝ հին Հայիճորի ջրավազանի կառուցմանը վերաբերող արձանագրության վերծանված տեքստը մեզ տրամադրելու համար:

Մյունիքի մարզում դաշտային աշխատանքները կատարվել են ՀՀ ԲԿԳԿ կողմից ֆինանսավորված 20TTSH-053 ծրագրի շրջանակում:

### Acknowledgments

We express our gratitude to Suren Hobosyan, Arsen Bobokyan, Hakob Cholakyan and Tork Dalalyan, who contributed to the creation of the article with their useful advice. We also thank the lithographer Arsen Harutyunyan for providing us with the decoded text of the protocol related to the construction of the old Halidzor reservoir.

Fieldworks in the Syunik province were carried out within the framework of project No. 20TTSH-053 funded by the HESC, Republic of Armenia.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Acharean, H. (1926). *Armenian radical dictionary*. vol. 1. YSU (in Armenian).
- Aharonean, A., & Patkanean, N. (1960). *Zeytun's history book*. Ararat (in Armenian).
- Aharonean, K. (1965). *Hyuseynik*. Hayrenik (in Armenian).
- Akabado S. (2015). A Bayesian Approach to Dating Agricultural Terraces: A case from the Philippines. *Antiquity*, 83, 801-814.
- Amatuni, S. (1912). *Armenian word and thing*. Mother Cathedral St. Etchmiadzin (in Armenian).
- Aslanyan, J. (2002). *Zaritat*. Without publication (in Armenian).
- Avagyan, S. (1998). *Sharur*. Tigran Mets (in Armenian).
- Ayvazyan, A. (2006). *Goghtn, abounding in wine*. A biographical review, photo picture book. Author's ed. (in Armenian).
- Bakhtikean, S. (1934). *Arabkir and surrounding villages*. Vahagn (in Armenian).
- Barth F. (1956). *Ecological Relationships of Ethnic Groups in Swat, North Pakistan*. *American Anthropologist*, 6, 1079-1089.
- Bdoyan, V. (1972). *Agriculture in Armenia*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Chercherean, G. et al. (1992). *A new dictionary of the Armenian language* (vol. 1). K.Tonikian and sons ed. (in Armenian).
- Cholakean, H. (1995). *Kesab* (vol. A). Publishing house of Hamazkayin Syria Department (in Armenian).
- Dermenjyan, M. P. (2013). *Armenian-Turkish dictionary*. Author's ed. (in Armenian).
- Fine-Dare, K., Selingmann, L. (2019). *The Andean World*. London and New York, Routledge.
- Gabikean, K. (1952). *Dictionary of the provincial Sebastian Armenian language*. Print. Saints Jacobean (in Armenian).
- Gabrielyan, R. (2022). *Field-Ethnographic materials*. Kotayk, Aragyugh, Armenia (in Armenian).
- Galstyan, S. A., & Sargsyan, R. S. (1981). Karashen, Goris-Yerevan. Without publication (in Armenian).
- Gasporean, H. (1969). *Chmshksatsag and Surrounding Villages*. Paykar (in Armenian).
- Gasparyan, G. et al. (2007). *Dialectal dictionary of the Armenian language* (vol. 4). Gitutyun (in Armenian).
- Georgian, G. (1970). *Chngushapatum*. St. Jacobean print (in Armenian).
- Ghapantsyan, G. (1944). *The cult of Ara Geghetsik*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Ghazarean, H. G. (1971). *History book of Chmshksatsag*. Association of Patriots of Mshksatsag, Beirut (in Armenian).
- Ghazaryan, V. G. (1976). *Ethnographic materials of Motkor, Lori province*. Archives of the Ethnography Department, Institute of Archeology and Ethnography, Fond 92, 1976, Typescript (in Armenian).
- Hakhnazarean, Y. (1991). Goghtn province. Without publication (in Armenian).
- Halajyan, G. (1973). *Ethnography of Dersim Armenians*. *Armenian Ethnography and Folklore* (vol. 5). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Haykuni, S. (1894). *Bagrevand. Jrabashkh province* (Part A). Print. Mother Cathedral of St. Etchmiadzin (in Armenian).
- Hovsepian, R., Abrahamyan, H., & Gabrielyan, R. (2023a). *Field-Ethnographic materials. Syunik, Halidzor*, Armenia (in Armenian).
- Hovsepian, R., Abrahamyan, H., & Gabrielyan, R. (2023b). *Field-Ethnographic materials. Syunik, Mutsk*, Armenia (in Armenian).
- Hovsepian, R., & Gabrielyan, R. (2023). *Field-Ethnographic materials. Syunik, Shrvanants*, Armenia (in Armenian).
- Kalantar, A. (1925). *Stone Age in Armenia*. *Nork*, 5-6, 207-232 (in Armenian).
- Kalantar, A. (1937). *An ancient water Distribution system in Soviet Armenia*. *Bulletin of the Institute of History and Literature, II*, 171-194 (in Armenian).
- Khan-Aghov (1886). *The Economic life of state Peasants of the Echmiadzin and Surmalinsky districts of the Erivan province*. *Materials for the study of the economic life of state peasants of the Transcaucasian region*, 3(1), 227-455 (in Russian).

- Kurilev, V. (1976). *Economy and material culture of the Turkish peasantry*. Science (in Russian).
- Malkhaseants, S. (1944a). *Armenian explanatory dictionary* (vol. 1). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Malkaseants, S. (1944b). *Armenian explanatory dictionary* (vol. 2), Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Minasean, P. (1974). *History book of Kyurin*. Sevan (in Armenian).
- Papukhyan, N. (1972). *National Architecture of Syunik*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Parsamyan, M., Kechean, A. (1952). *Akn and its citizen*. Publishing House of the Akn Patriotic Union of America (in Armenian).
- Petoyan, V. (2016). *Sasoun*. Nakhabem (in Armenian).
- Sarean, A. (1980). *History of Charmahal province*. Nayiri (in Armenian).
- Shahaziz, Y. (1987). *History of Ashtarak*. Hayastan (in Armenian).
- Shirmazan, G. V. (1962). *Episodes from the History of Irrigation in Armenia*. Haypetghughhrat (in Armenian).
- Simonean, G. (1966). *Book of memoirs of Pontic Amasio*. Without publication (in Armenian).
- Taylor J. (2016). *Journal of a Tour in Armenia, Kurdistan, and Upper Mesopotamia, with Notes of Researches in the Deyrsim Dagh*. *Journal of the Royal Geographical Society of London*, 38, 281-361 (in English).
- Ter-Yovhannesean G. (1965). *Historical book of Armenians of Sivri-Hisari*. Culture (in Armenian).
- Torosean, Y. (1959). *History of Armenian Tomartsa* (vol. A) Sevan (in Armenian).
- Tseron, M. (1938). *Barjanch village. Hamainapatum (1600-1937)*. Paykar (in Armenian).
- Veis-fon-Veissengof S. (1883). *Information about the state of irrigation in the Caucasus*. Caucasian Society of Agriculture (in Russian).
- Voskanyan, G. A. (2008). *Russian-Persian Dictionary*. AST, East-West (in Russian).
- Yakobean, Y. et al. (1966). *History of Paghnatun*. Hayreniq (in Armenian).
- Yeapuchean, H. Y. (1967). *Memorial of Rumtikin*. Publishing House of Rumtikin Patriotic Association (in Armenian).
- Yeghishean, V., Piperean, A. (1960). *History book of Atapazar "God-given" city*. Without publication (in Armenian).
- Yeremean, A. (1919). *Peria province of Isfahan, Nor Jugha*. Holy Savior Monastery print (in Armenian).
- Zhamkochean, B. (1951). *Haini. Topographical, Ethnographical, Historical*. Tonikian print (in Armenian).



# REFLECTION OF PROBLEMS RELATED TO IRRIGATION IN THE FOLKLORE OF THE ARMENIANS OF GARDMAN

*Gevorg Gyulumyan*

*Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia*

## Abstract

The present research is dedicated to the investigation of the irrigation systems of Gardman. Also, the circumstances of their presence or absence are considered in various settlements of the region, according to folklore material. Most of those materials remain unpublished. The present investigation has several features. Particularly it represents the region under consideration from an ethnographic and folkloristic point of view for the first time. Despite the existing problems, it includes a pretty big amount of information considering the issue.

**Keywords:** Gardman, Pip, Pambak, folklore, irrigation, ritual.

## ՌՈՌՈԳՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԳԱՐԴՄԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԵՉ

*Գևորգ Գյուլումյան*

*ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

## Անվտիպագիր

Հետազոտության մեջ անդրադարձ է կատարվել Գարդման գավառի ռոռգման համակարգերին, գյուղերից շատերում դրանց բացակայությանը և դրա հետևանքով ստեղծված բանահյուսական նյութին, որի մեծ մասը ցայսօր տպագրված չէ: Ուսումնասիրությունը, բացի գիտական և գիտահանրամատչելի հետաքրքրական կողմերից, ունի նաև մի շարք առանձնահատկություններ, որոնցից է, օրինակ, առաջին անգամ այդ տեսանկյունից տվյալ շրջանին անդրադառնալու ազգագրական-բանագիտական փորձը, որը մեկտեղում է երկրամասի՝ ռոռգման ջրին վերաբերող բանահյուսական մեծածավալ նյութ:

**Հիմնաբառեր.** Գարդման, Փիփ, Փամբակ, բանահյուսություն, ռոռգում, ծես:

## Ներածություն

Հոդվածում անդրադարձ է կատարվում Մեծ Հայքի Ուտիք նահանգի՝ 1988 թ. հայաթափված Գարդման գավառում (Հյուսիսային Արցախ) կենցաղավարած հավատալիքներին և ծեսերին, որոնք առնչվում են ռոռգման խնդրին: Ուսումնասիրության համար օգտագործվել են ինչպես նախորդ հետազոտողների (Երվանդ Լալայան, Գրիգորիս Աղվանյան, Մակար Բարխուդարյան, Ռուբեն Բաղրամյան, Ավետիս Շահումյան, Արագ Կարապետյան և այլք), այնպես էլ մեր դաշտային աշխատանքների նյութերը, որոնք գրառվել են Ադրբեջանական ԽՍՀ Շամքորի, Խանլարի, Շահումյանի, Քարհատի շրջաններից բռնագաղթած ու հիմնականում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Ճամբարակի շրջաններում վերաբնակեցված մի շարք բանասացներից: Նշենք, որ մեր ժամանակների և բռնագաղթի հիշյալ տարիների միջև մոտ երեսնամյա անջրպետը,

անցյալ դարի 30-40-ականների սերնդի մեծ մասի կյանքից հեռանալը, ինչպես նաև մի շարք բանասացների լուրջությունը մեզ հնարավորություն չեն ընձեռում համակողմանի ուսումնասիրություն իրականացնելու համար: Այնուամենայնիվ, հոդվածում հնարավորինս ժողովել ենք տարբեր տարիներին մեր կողմից գրառված, հարակից աղբյուրներից քաղված և թեմային առնչվող բանահյուսական արձակ և չափածո պատառիկներ:

Վաղնջական ժամանակներից բնակվելով լեռնային կտրտված ռելիեֆային գոտիներում՝ Գարդմանի հայությունը մշտապես կարևորել է ջուրը, այն համարել իր գոյության ամենաանհրաժեշտ պայմաններից մեկը, ինչի մասին վկայում են ստորև բերված բանահյուսական նյութերը: Այդ գոտիներում բնակության հաստատումը միայն բնական գործընթաց չէ: Դրան էապես նպաստել են թե՛ բնակլիմայական անբարենպաստ պայմանները, թե՛ երկրամասը պարբերաբար յուրացնելու փորձեր



Նկ. 1. Փիփ գյուղի համայնապատկերը, 1980-ականներ (Source: G. Alaverdyan)

իրականացնող քոչվոր ցեղերը: Օրինակ՝ գավառի ամենահայաշատ գյուղերից մեկը՝ Փիփը, սկզբնական շրջանում տեղակայված է եղել Շամքոր գետի հովտում՝ նկատի ունենալով տեղի բերրի հողատարածքներն ու ռոռզման ջրի հեշտ հասանելիությունը: Ամռան ամիսների սաստիկ շոգ եղանակը՝ մասամբ, և օձերի առատությունը բնակչությանը ստիպել են երկու անգամ փոխել բնակատեղին (Karapetyan, 2004, 257): Ըստ փիփեցիների՝ գյուղը մի քանի անգամ տեղափոխվել է բնակլիմայական պայմանների պատճառով:

«Առաջվանի մըր գնողը Շամխոր կետի ափին ա ըլէլ, բայց փիս շոքըրի, օցըրի պատճառով մի քանի հետի փոխըլ ըն գնողի տըղը, հու եկել վերջնական գնողի ներկա տըղը»<sup>1</sup>:

Ահա նման և նմանօրինակ մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ տարածաշրջանի գյուղերը (Փիփ, Ղոթյուլ, Խաչակապ և այլն) հայտնվել են ոչ այնքան բարենպաստ գոտիներում ռոռզման ջրի առումով՝ բնակավայրեր ջուր հասցնելու համար անընդհատ ելքեր փնտրելով: Այդ ելքերի փնտրտուքները տասնամյակների ու դարերի ընթացքում էապես ազդել են նրանց մտածողության և վարքի վրա՝ թողնելով անջնջելի հետքեր: Երկրամասը, իհարկե, հարուստ է խմելու սառնորակ ու քաղցրահամ ջրի պաշարներով: Ամեն գյուղ ունեցել է իր աղբյուրը կամ աղբյուրները, բայց դրանց գոյությունը, բնականաբար, չէր կարող լուծել մինչև 6–7000 բնակչություն ունեցող գյուղերի ռոռզման խնդիրները, մանավանդ այնպիսի լեռնային շրջաններում, ինչպիսին Գարդմանն է, որի գյուղերի մեծ մասը կառուցված է լեռների ու բլրակների լանջե-

րին, և նույնիսկ հարևանությամբ հոսող գետի ջուրը գյուղ հասցնելը գործնականում անհնար էր դառնում: Ըստ ազգագրագետ Ե. Լալայանի՝ ժամանակին գավառի միջին բարձրության գոտիները կառավարվում էին առանց ռոռզման համակարգերի, բացի խաղողի այգիներից ու բանջարանոցներից, որոնք տարածվում էին գետի ափին, և բացի Գետաշեն գյուղից, որտեղ հացահատկի բերքն ապահովելու համար ջրանցք էին կառուցել: Իրավիճակն այլ է ցածրադիր վայրերում կամ ձորերում ծվարած գյուղերում, որտեղ, հաճախակի հայտնվող մառախուտները որոշ չափով «լուծում» են ռոռզման խնդիրը (Lalayan, 1988, 277): Բանասացները հաղորդում են, որ կային տներ, որոնց դիրքը որոշ տնատերերի թույլ էր տալիս այս կամ այն աղբյուրն օգտագործել նաև ռոռզման նպատակով, բայց դրանք մատների վրա հաշվվող տներ էին<sup>2</sup>:

Ըստ անվանի բանագետ Սարգիս Հարությունյանի՝ մթնոլորտային երևույթները՝ անձրև, քամի, կայծակ, կարկուտ, խոր հետք են թողել մարդկային մտածողության վրա, «...հիմք դարձել տարբեր պատկերացումների, հավատալիքների, առասպելական գրույցների ու երգերի, ծիսապաշտամունքային արարողությունների» (Harutyunyan, 2000, 78): Ս. Հարությունյանի պնդումների ականատեսն ենք դառնում Գարդմանի բանահյուսությունն ուսումնասիրելիս. ջրի կարիքը ցայտուն արձագանք է գտել երկրամասի ժողովրդական բանահյուսության մեջ: Այսօր էլ գարդմանահայերից կարելի է լսել «ճըրնչոր ըլէս» անեծքը, որը երկրամասից սերող և մանավանդ երկրամասում ծնված և բռնագաղթած մարդիկ շատ ծանր են ընկալում: Այդ պակասը (սաև

1 Բանասաց՝ Հայկազ Մամիկոնյան, ծնվ. 1946 թ. Գարդմանի Փիփ գյուղում, մանկավարժ է: 1988-ից ապրում է Վարդենիսի շրջանի Փամբակ գյուղում: Նյութը գրի ենք առնել 2023 թ., Փամբակ գյուղում:

2 Բանասաց Արշավիր Գյուլումյանը պատմում է, որ Փիփ գյուղում հայտնի Նուռունց (Խոջայան) Հայկազը ռոռզման խնդիրը լուծելու նպատակով սեփական տան այգում մեծ ջրավազան էր կառուցել և տան կտորի ջրհորդաններն անցկացրել դրա մեջ, որպեսզի անձրևի ժամանակ ջուր հավաքեր և հետո անհրաժեշտաբար օգտագործեր:



Նկ. 2. Թարգմանչաց անապատ

խմելու) մարդկանց մտածելակերպի վրա այնպիսի հետք է թողել, որ տեղական գրույցների ընթացքում փոփոխության է ենթարկվել նույնիսկ պատմությունը. «Մըր գնդիցը մի պատառ հեռու, Շամխոր կետի կըշտին Սահակ Սեվադի բերթն ա շինած, էն վըխտումը նըրն պապըրն էդ բերթը շինել են ասոբի էտ թոնշումը, վըր կարան կըռվի վըխտումը թաքուն դըվըրըն կետիցը ճոյը յեր ունըն, ըլյետ թաքուն կնն բերթը մըտնըն հու կոխվ տան հարամնց հետ: Շատ հետի են հարամիքն ուզըլ վըրն տան, մըր դոլի մարդկանցը կըտորըն բերթը յեր ունըն, եկել են պատ ընգել բերթի կըլխավը, ամսոնցավ կըռիվ տըվըլ հու շիվար մընացըլ, թա էս վընց ա, վըր էդ սալդաթը ճըրնչոր չի ըլնում հու չոքի ուրանց ըղաքին: Բայց դե գյնցել չեն վըր բերթի տակավը թաքուն կեծան կա, սալդաթը դետը քնցել ա Շամխորի ափը, ցուրտ-ցուրտ ճոյըլ յեր կալ հու տարըլ վիրի դոլը: Տըհը հարամիքն էրգան ըն ճամբա պահըլ, վըր հըրըս էփ վըրայա հայը կըծրավի, կչոքի ուրանց դաքին, բայց ինչ չոքի, սամի գլավնին ճոյըն ա, ճոյըն ըլել ա, ճըրի տըր մարդը վընց տանիլ կըտա կոխվը»<sup>3</sup>:

Պատմիչ-կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած և վիպասան Մուրացանի միջոցով գեղարվեստականացված ու մեզ հասած պատմությունն ահա այսպես է «խմբագրվել» գարդմանահայության՝ հիշյալ բերդի շրջակայքում ծվարած գյուղերի բնակչության կողմից: Տողերը լավա-

գույնս հավաստում են վերը բերված մեր պնդումները: Այս կարճատև պատմության մեջ գրեթե չի խոսվում ո՛չ Սահակ Սևադա իշխանի, ո՛չ նրա ռազմիկների քաջության մասին: Նրանց հաղթանակը առավելապես պայմանավորվում է ջրի առկայությամբ: Նշենք հետաքրքրական մեկ փաստ ևս. տարածաշրջանի համարյա բոլոր աղբյուրները (խմելու և ոռոգման նպատակներով կառուցված) ժողովրդական բանահյուսության մեջ հիշատակվում են՝ կապված հերոսության, քաջության, անձնագոհության և բարության հետ: Սրանով կարելի է չափել ժողովրդի՝ ջրի հանդեպ ունեցած մեծ հարգանքը՝ վերը նշված դրվատելի արարքների վարձքը ո՛չ ավել, ո՛չ պակաս ջուրն է ժողովուրդն իր հերոսներին ու սրբերին պատվել է ոչ թե ոսկեգօծ դամբարաններով ու սրբատաշ քարերով, այլ աղբյուր-ջրով:

### Պատմական ակնարկ. Գարդման գավառի տարածքի ընկալումը

Բուն նյութի ընդգրկման տարածքը համապատասխանում է Գարդմանի կենտրոնական հատվածին, ստեպ-ստեպ շոշափվում է նաև ողջ երկրամասը՝ Գանձակից մինչև Թովուզի շրջան, որոնք, ըստ էության, ազգագրական կոտ շրջան էին կազմում (AFT-6, 1973)<sup>4</sup>: Այս մանրամասները հատուկ ենք ընդգծում, քանի որ ցայսօր հայ պատմագիտության մեջ Գարդմանի տարածքը միանշանակ չէ: Ըստ

3 Բանասաց՝ Հայկանուշ Պողոսյան, ծնվ. Գարդմանի Փիփ գյուղում, 1988-ից մինչև մահը՝ 2018 թ., ապրել է Վարդենիսի շրջանի Փամբակ գյուղում: Նյութը գրի ենք առել 2016 թ., Փամբակ գյուղում:

4 Երկրամասի սահմանների ճշգրտման հարցում հետաքրքրական է դիտարկել Հայ ժողովրդական հեքիաթների 6-րդ հատորը, որտեղ բովանդակային երկու բաժանումները կատարված են այսպես՝ «Արցախ-Ուտիք» և «Գանձակ-Տավուշ»: Դա ևս խոսում է այդ հսկայական տարածքի՝ մեկ ընդհանուր ազգագրական երակ ունենալու մասին և ապացուցում այդ մասին արված բազմաթիվ պնդումները, որոնք բերված են ստորև:



Նկ. 3. Բանանց գյուղը, 1980-ականներ  
(Source: S. Karapetyan)



Նկ. 4. Ղոթյուլ գյուղը 1984 թ. (Source: S. Karapetyan)

«Աշխարհացույցի»՝ գավառը համապատասխանում է միայն Ղազախի շրջանին (Yeremyan, 1963, 46), Ղ. Ինճիճյանն ու Թ. Հակոբյանը (Intchitchian, 1822, 338; Hakobyan 1984, 235-236) կարծում են, որ գավառը համապատասխանում է Շամքորի շրջանին (Հակոբյանի տեսակետը փոքր-ինչ այլ է): Մ. Բարխուդարյանը գրում է, որ գավառի սահմաններն ընդգրկում են Կուր և Շամքոր գետերի դաշտաբերանը և Մոսկի լեռնաշղթայի գագաթնագիծը (Barkhudarean, 1999, 285): Ղ. Ալիշյանը նշում է, որ գավառը հիմնականում համապատասխանում է Քարհատի (ներկայիս Դաշքեսանի) շրջանին՝ «ի հովիտս Ճիկերայ, Շեմքորայ եւ Խոջքարայ տարածանի եւ եզրն Կուրայ» (Alishan, 1855, 85), Մ. Յովհաննէսեանը գավառը համապատասխանեցնում է Կուր և Կողբ գետերի ավազանի միջակայքում ընկած տարածքին (Yovhannesean, 1970, 479): Բ. Ուլուբաբյանը տարածքը նույնացնում է Շամքորի ու շրջակա տարածքների հետ՝ չնշելով Ղազախի շրջանը (Slubabyan, 1981, 36): Գավառն ամենամեծ սահմաններով դիտարկում է Մ. Ջալալյանը. «Յարևելից ունի զլեառն Մոավ, յարևմտից՝ զՄիափոր գաւառ, ի հարավոյ՝ զծովակն Գեղամա, և ի հիւսիսոյ՝ զԳանձակ» (Jalaleants, 1958, 809): 1964 թ. Գարդմանին անդրադարձել է նաև Զ. Բունիաթովը՝ նշելով, որ գավառի տարածքը համապատասխանում է Գանձակ և Աղատն գետերի միջև ընկած տարածքին՝ Քուստիփառնես և Ջավե գավառները նույն-

պես նշելով որպես Գարդմանի տարածք (Bunyatov, 1964, 88): Ն. Ադոնցի հիշատակություններից հասկանալի է դառնում, որ դեռևս Արշակունիների թագավորության շրջանից Գարդմանացոց իշխանության տարածքը համապատասխանում է այսօրվա Շահումյանի շրջանից Գուգարք ընկած հատվածներին (մինչև Գուգարք)՝ Խանկարի, Դաշքեսանի, Շամքորի, Տավուշի, Թովուզի, Ղազախի շրջաններով (Adonts, 1987, 282, 294): Նմանօրինակ և տարարնայթ սահմանագատումներ են անում Կ. Գանձակեցին, Ա. Դավրիժեցին, Մ. Կաղանկատվացին և ուրիշներ (Gandzaketsi, 1982, 249; Davrizhetsi, 1988, 201; Kaghankatvetsi, 1969, 133): Համեմատաբար նոր շրջանի պատմագետների՝ մինչև հակասող տեսակետներն ու կրկնությունները պատմաբան Սլավա Սարգսյանն այսպես է մեկնաբանում. «Ըստ էության, Գարդմանի այս տեղադրությունն ապակողմնորոշել է ուսումնասիրողներին, որոնք, խորամուխ չլինելով պատմության ընթացքի և իրավահարաբերությունների մեջ, ձգտել են չշեղվել տրորված ճանապարհից» (Sargsyan, 1996, 4): Սևրի պայմանագրով Գարդմանը մտնում էր Հայաստանի Հանրապետության տարածքի մեջ (Galchyan, 2022, 38):

### Ջրի խնդիրը՝ պատմական լույսի ներքո

Ժամանակին Գարդմանով զբաղված, հատկապես այնտեղով անցած ականատես ուղեգիրներն ու փաստագրողները գավառի առավելություններն ու թերությունները նշելիս միշտ անդրադարձել են ջրի խնդրին: Ազգագրագետ Ե. Լալայանի հիմնարար աշխատությունը՝ «Գանձակի գավառ»-ը, բացի բուն ազգագրական-բանահյուսական նյութից, մեզ է փոխանցում պատմական հարուստ նյութ և բունագաղթի ստեղծած պատմելի պայմաններում հնարավորինս տեսանելի դարձնում երկրամասը: Օրինակ՝ արժեքավոր է նրա՝ գավառի տեղումների ծավալին ու քանակին վերաբերող զեկույցը, որը էական աղբյուր է մեր ուսումնասիրության համար: Քանի որ Ե. Լալայանի՝ Գանձակ այցի ժամանակ արդեն գործում էր օդերևութաբանական կայան, նրան հաջողվել է այդ կայանից ձեռք բերել տվյալ պահին նախորդող հինգ տարիների ցուցանիշներն ու պարզել, որ, օրինակ, հուլիս-օգոստոս ամիսներին ռոտզման ջրի սակավությունը դառնում է համարյա անտանելի. «Այս երկու ամիսը սաստիկ երաշտ է լինում և մեծամեծ վնասներ պատճառում» (Lalayan, 1988, 274):

Գավառի մասին բարձրարժեք հիշատակություններ ունի Մակար եպիսկոպոս Բարխուդարյանն իր «Արցախ» գրքում, որը նշված աղբյուրների մեջ ամենաձավալունն ու համապարփակն է: Նկարագրելով գյուղերը՝ Բարխուդարյանը, օրինակ, Մու-

լույս գյուղի մասին գրում է. «Հողն արքունի, լեռնային անջրդի և սակաւ արդիւնաւէտ» (Barkhutareants, 1999, 298), գրեթէ նույնանման միտք է հայտնում Ոսկանապատ գյուղի մասին. «Հողն արքունի, լեռնային անջրդի և սակաւ արդիւնաւէտ» (Barkhutareants, 1999, 300): Շարունակաբար խոսում է Վարդաշեն-Միրզիկ, Հարցհանգիստ, Նուզգեր, Փիփ և բազմաթիւ այլ գյուղերի մասին (Barkhutareants, 1999, 302, 310-312):

Կարևոր հիշատակություններ ունի նաև Գանձակի թեմի առաջնորդական փոխաւորող Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյանցը, ով Մակար Բարխուդարյանի «Արցախ» արժեքավոր աշխատությունից դեռևս հինգ տարի առաջ՝ 1890–1891թթ. շրջագայության ժամանակ, ուշագրավ գրառումներ է կատարել Հյուսիսային Արցախի վերաբերյալ և վերնագրել «Փոխաւորողական այցելութիւն ի վիճակին Գանձակու»: Աղվանյանցի ուղեգրական նոթատետրում Գանձակի գավառի ջրային խնդիրները լուսաբանող բազմաթիւ հիշատակություններ կան, որոնք կապված են ամենատարբեր գյուղերի հետ և լավագույնս արտացոլում են ամբողջական պատկերը:

Աղվանյանցը, խոսելով Գանձակ քաղաքի ոռոգման ջրի անմխիթար վիճակի մասին, գրում է. «Քիւրակ-չայի վերի կողմերը գիւղերի շատանալու համար հետզհետէ ջրեր պակսեր են» (Vardzk, 2021, № 15, 31):

Բաքվում լույս տեսնող «Կոմ(մ)ունիստ» թերթը 1925թ. 75-րդ համարում անդրադառնում է Խանլարի շրջանի Ոսկանապատ գյուղի ջրային խնդրին. «Գանձակի գավառի Վոսկանապատ գյուղի բնակիչները պարապում են հողագործությամբ և անասնապահությամբ: Սակայն ջրի պակասությունը գյուղացու աշխատանքները ջուրն ե թափում. ուստի գյուղացիք ստիպված պարապում են անխաղաղությամբ, վորպէսզի կարողանան մի կերպ իրենց գոյությունը քաշ տալ...» (Kom(m)unist, 1925, № 75, 3):

Գավառին հաճախ անասելի վնասներ էր հասցնում նաև երաշտը: Ըստ վերոնշյալ պարբերականի՝ հինգ տարի շարունակվող երաշտը Չարդախլու գյուղը հասցրել է չափազանց աղքատ վիճակի. «Շատերը, նույնիսկ, այսօրվանից իրենց վերջին լծկանը կամ տնային իրերը ծախում են՝ մոռացության տալով ամեն ինչ» (Kom(m)unist, 1925, № 126, 3):

Գրեթէ նույն երանգներով է ներկայացվում նաև Բրաջուր գյուղը (Kom(m)unist, 1925, № 130, 3):

Ջրի պակասը Գարդմանի որոշ հատվածներում նույնիսկ միջհամայնքային վեճերի պատճառ էր դառնում, ինչպէս Գետաշենի օրինակն է (Kom(m)unist, 1925, № 238, 3):

Գարդմանի ջրային խնդիրների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև վիպասան Բաֆֆին «Երկու ամիս Աղվանից և Սյունյաց աշխարհներում» (Raffi, 1987, 230-285) բարձրարժեք ուսումնասիրության մեջ:

### Անձրևաբեր և անձրևախափան ծեսեր

Գարդմանում ոռոգման խնդիրների հետ կապված բանահյուսական պատառիկները, անձրևաբեր, անձրևախափան և կարկտախափան ծեսերը, դրանցից բխող հմայական աղոթքներն արտահայտում են բնության երևույթների դեմ կռիվ տվող մարդու ապրումները, ոգևորությունները, հիասթափությունները, հույզերն ու հույսերը: Այդ նյութերի մեջ հիմնական տեղ են զբաղեցնում անձրևաբեր և անձրևախափան ծեսերին առնչվող տեքստերը, որոնք բազմաթիւ տարբերակներ ունեն, իսկ մի մասն էլ մեզ հասել է ոչ ամբողջական: Հուշարձանագետ Սամվել Կարապետյանն իր «Մոավականք» հիմնարար աշխատության մեջ գրում է, որ «մի քանի պարզ խաչքարերի, երբեմն ճարտարապետական արժանիքներով առանձնապես աչքի չընկնող մատուռների կամ հատուկ հատկությունների վերագրմամբ քարերի (օրինակ՝ իբրև բժշկող, անձրևաբեր և այլն) կարելի է հանդիպել բոլոր գյուղերում կամ նրանց մերձակայքում» (Karapetyan, 2019, 25): Այդպիսի բազմաթիւ աղբյուրներ է հիշատակում նաև Կիմ Ղահրամանյանն «Օջախի գիրք» (Ghahramanyan, 2002, 134-135) աշխատության մեջ: Այսինքն՝ նման ծեսերը կենցաղավարել են երկրամասի բոլոր գյուղերում, բայց, բնականաբար, ոչ բոլորն են փաստագրվել: Ստորև ներկայացված են դրանցից մի քանիսը:

#### Ա. Արթենասարի հետ կապվող ծեսերը:

Գարդմանում անձրևաբեր ծեսերից ամենահայտնին, որ հիմնականում տարածված էր Բանաց-Փիփ-Խաչակապ շրջանում, հետևյալն է. սաստիկ շոգերը, երաշտը կանխելու կամ վերացնելու նպատակակալիքով բնակիչները բարձրանում էին Արթենասարի գագաթը, Արթեն (Lalayan 1988, 431)<sup>5</sup> ճգնավորի գերեզմանի մոտից մի քար բերում, տանում դնում եկեղեցու ներսում: Առավոտյան ողջ գյուղի բազմությունը տեղի քահանայի հետ քարը տանում էր դաշտ, դնում ջրի մեջ սկսում էր անձրև տեղալ: Երբ ուզում էին՝ անձրևը դադարի քարը հանում էին ջրից:

Արթենասարի հետ կապվող անձրևաբեր այս ծեսի մի տարբերակ էլ ներկայացնում է Գրիգորիս եպիսկոպոս Աղվանյանցը, որն ավելի համապարփակ է պատում, քան Ե. Լալայանը կամ մեր գրառածը՝ թե՛ սյուժեի, թե՛ բովանդակության առումով: «Կպատմեն, թե, Արդինասարի գագաթի վերայ նա-

5 Ե. Լալայանը գրում է, որ անձրև առաջացնելու համար «Որևէ ճգնավորի գերեզմանից երկյուղածությամբ իջեցված քարը խաչով-խաչվառով, քահանաներով և ահագին բազմությամբ հանդիսավոր նետում են ջուրը, և անմիջապես անձրև է տեղում»:



Նկ. 5. Սահակ Սևադայի բերդը, 2022 թ.

հատակի տապան կայ, որ ուխտատեղի է: Նորան կից՝ տապանի ձևով ու մեծությամբ խոր ընկած բնական առաջան, լիք բարեհամ ջրով, որոյ ջուրն երբեք չի պակասեր: Երաշտ տարին անձրևային լինելու համար Գանձակէն կամ հայոց գիւղերէն քահանայ կերթայ, նոյն ուխտատեղէն մի քար կաննէ, նորա առաջանի ջրով կմկրտէ, իւր հետն առած կվերադառնայ: Աւանդութիւնը կասէ, եթէ քահանայն անկասկած հաւատ ունենայ, որ երբեք ի թիկունս կոյս չդառնայ, եւ ահա ինչ: Յարութիւն սարէն մի ամպ բարձրացած՝ հետզհետէ կծաւալի ու կջանայ քահանային (ընկերանալ, քաղաք) հասնել: Քահանայի վերադարձը մտեցած ժամանակին տեղական ժողովուրդը, քահանայից զգեստաւորեալ դասով, խաչ ու խաչվառով, խունկ ու մոմով թափօր կազմած, կընդառաջէ քարակիր քահանային: Եւ ահա եկեղեցական դասն ներդաշնակ օրհներգութեամբ սկսեց օրհնաբանել զԱստված: Թափօր ծանրագնացութեամբ կշարժի առաջ՝ դէպի Աստուծոյ տաճար: Բարեպաշտ ժողովուրդ մատաղներ կմորթի, աղքատներուն կբաժանեն» (Vardzk, 2021, № 16, 27):

Ի տարբերություն Ե. Լալայանի պատումի՝ այստեղ միահյուսվում են տեղի բնակչության բնապաշտական և կրոնական զգացմունքներն ու հավատը: Այսպես, թեպետ անձրևը Արթենասարից էր բերվելու, բայց Աղվանյանցի գրառած տարբերակում այն ոչ թե գյուղացիները, այլ աներկբա հավատ ունեցող, սրբակրոն քահանան էր բերում՝ որը հանդես է գալիս որպես մաքրակենցաղ մարդ, ի տարբերություն հեքիաթներում ու այլ ժանրերում հանդես եկող շատակեր, անազնիվ քահանայի կերպարի: Հանգամանքը հնարավոր է բացատրել նաև գրառողի անձով. այս տարբերակի դեպքում գործ ունենք կրոնավորի՝ եպիսկոպոս-բանահավաքի հետ: Ուշադրության արժանի է նաև ցախավելի գողության ու այրման տեսարանի բացակայությունը, որն, ըստ մեր ենթադրությունների, անկարևոր համարվելով հոգևորականի կողմից, դուրս է մղվել սյուժեից: Այս և նախորդ հանգամանք-պնդումները

ապացուցում են, որ եթե Ե. Լալայանը պատումը գրառել է այնպես, ինչպես լսել է, ապա Աղվանյանցը բավական մշակել է այն: Առավել հատկանշական է, որ անձրևի համար լեռան օգնությանը դիմած ժողովուրդը ցանկալի անձրևն ստանալուց հետո Աղվանյանցի պատումի մեջ Աստծուն է գոհունակություն հայտնում պարզևի համար. «Նոքա մինչ այս, մինչ այն, անձրև կսկսէ տեղալ: Հաւատաւոր ժողովուրդեան սրտագին օրհնութիւն ու գոհութիւն երկինք ի վեր կբարձրանայ: Կպատահի երբեմն, կասեն, որ աղեղն էլ իւր կամարը կկապէ» (Vardzk, 2021, № 15, 29): Այսինքն՝ մեծ հավատի շնորհիվ մարդիկ ստանում են ցանկալի անձրևն ու գոհունակություն հայտնում Աստծուն: Իհարկէ, այս պատումն արխաիկ ինչ-որ տարրեր է կրում երկու տարբեր՝ քրիստոնեական ու քրիստոնեական-հետքրիստոնեական սյուժեներ են միաձուլվել, որի արդյունքում առաջացել է այս պատումը: Սա տեղիք է տալիս ենթադրելու, որ այս ծեսերը գոյություն են ունեցել դեռևս վաղ շրջանում, բայց քրիստոնեության տարածումից հետո սյուժետային փոփոխության են ենթարկվել, քուրմը տեղը զիջել է քահանային, մեղյանը՝ եկեղեցուն, իսկ ավել-ցախավելի այրման գործընթացը մնացել է անփոփոխ:

Քարն այստեղ, ինչպես նկատում ենք, երկու հատկանիշ ունի՝ անձրևաբեր և անձրևախափան: Երբ այն դրվում է գետի մեջ, անձրև է տեղում, երբ հանում են, անձրևը դադարում է: Մանուկ Աբեղյանը գրում է, որը քարը կայծակի սիմվոլն է, իսկ կայծակը՝ ամպրոպի աստծո զենքը (Abeghyan, 1975, H-E, 168): Պարզ է՝ գործ ունեք ոչ թե սովորական, այլ առասպելաբանական շերտերի մնացուկի հետ, որը, գուցե անգիտակցաբար, բայց կենցաղավարել է մինչև 20-րդ դարը:

**Բ. Արթենասարի հետ կապված ծեսի արձագանքները ժամանակի մամուլում:** Անձրևաբեր ծեսի այս օրինակի մասին խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիներին կարդում ենք «Կոմ(մ)ունիստ» թերթում. «Մոտ որերս Գանձակի գավառի Բերաջուր գյուղի «գիտնականները» ժողվում են, վորպեսզի մի հնար գտնեն աստծուց անձրև հայցելու համար. շատ են մտածում, և վերջը վորոշում Արթունա սարից մի կտոր քար բերել, որինեկ, գետը զցել, վորպեսզի անձրև գա. բայց արի ու տես, վոր եղ «գիտնականներից» վոչ մեկն էլ հանձն չի առնում բարձրանալ սարը և կյանքը վտանգի յենթարկելով՝ քարը բերել: Միամիտի մեկը գտնվում է և համաձայնվում քարը բերել: Մինչ այդ գյուղի ջոջերը տերտերի հետ միասին պատրաստվում են քարը մեծ պատվով ու թափորով գետը զցելու համար: Մի օր չանցած բաշլըղի մեջ կապած քարը բերվում է: Հավաքվում են յեկեղեցում քարը որհնում և տանում գետը զցում, ի հարկէ, չնոռանալով գյուղա-



նկ. 6. Բանասաց Հայկանուշ Պողոսյան, 1900-ականների սկիզբ, գյուղ Փամբակ (Գեղարքունիք) Չիլինգարյանը, 1984 թ., Քարհատ շրջկենտրոն



նկ. 7. Բանասացներ Արշավիր Գյուլումյանը և Վարսենիկ Չիլինգարյանը, 1984 թ., Քարհատ շրջկենտրոն

ցիներից խաչհամբույր և այլ գումարներ հավաքել: Սակայն անձրևը չի ել մտածում արդարացնելու ջոջերի և տերտերի աղոթքներն ու օրհնանքները: Մեջ տեղ տիրացուն- ալևոր Մուքելը կոպեկ չի ստանում, և դրանից զայրացած ասում է,-

— Ինձ, հլևոր մարդուս փող չտվին, համա թոռ կգա հա՛, դորթ, թե սուտ՝ քարը զցեցին ջուրը, անձրևը վորտեղից կգա:

Թող բերաջուրցիները լավ հասկանան, վոր նման միջոցները միայն փողի թալակ են ու խաբեություններ» (Kom(m)unist, 1925, № 124, 3):

**Գ. Արթնասարից սկիզբ առնող ծեսի հիշողությունները մեր օրերում:** 2023 թ. ապրիլ ամսին՝ մեր դաշտային արշավի ժամանակ, Արթնասարի հետ կապված նմանատիպ պատմություն գրառեցինք նաև բանանցեցի բանասաց Մարտիրոս Չալումյանից, ով պատմությունը լսել էր իր համագյուղացի Կարապետ Բաբայանից (ծնվ. 1924) մինչև բռնագաղթը. «Մըր տերտերնին էն վախտը, Արթննս սարի կըլլին մատուռ կա քանդված, վըր ներքի դոլիցը պըրցըրնննս վիրի դոլը, հինգ ժամվա ճամբայա, քնցել են ըտեղից քարըր պիրել, վըր քըցէն կետը, վըր թոռ կն: Ուրենը մի տարի, վըր տերտերը քնցնձ ա ըլլում, վըր էլի Արթննսսարից քար պիրի, վըր քըցի կետը թոռ կա, վըր դաշտըրը, պննը ճըրէն, Աստափ, Թափանի դոլըրումը, թուրքըրը տըրնում ըն, թնրսի պըս էտ տարին շատ ա թոռ կնլիս ըլլում, ասում ըն՝ սն քարը տանում ա ընդե կետը քըցի, ավելի շատ տի թոռ կնլ: Ետենեն են

ընգն նում, վըր փըռնըն, քարը ծեռեն վըր ոնըն, կարում չեն, փախճում ա: Տն Վազգունց Փառի ոնընք, նըրնն նմին, Ստեփան Վարժապետը, էտ մասին կակրագ կըրել ա: Վերչը, ասմա, տերտերը հնրնոր թըլակա պանիր կերած, նըրան կարան փըռնըս»<sup>6</sup>:

**Դ. Գետը հակառակ վարելու ծեսը:** Լինում էին դեպքեր, երբ մարդիկ կեղծ արտասուք էին թափում, որպեսզի արտասուքը տեսնելով՝ երկինքն իրենց ջուր բաշխի: Իսկ շարունակվող անձրևը դադարեցնելու նպատակով քահանայի տանից ավել կամ գոմից ցախավել էին գողանում և վառում գյուղի հարակից բարձր լեռան վրա:

Լինում էին դեպքեր, երբ անձրևը չափազանց երկար էր տեղում և փչացնում ամբողջ տարվա բերքը՝ ավելի մեծ վնասներ հասցնելով, քան կարճատև կարկուտը կամ երաշտը կհասցներ: Այդպիսի ավերիչ անձրևի վկայություն կա «Մշակ»-ում (Mshak, 1912, № 89, 3)<sup>7</sup>: Ուշագրավ վկայություն կա նաև Բաքվում լույս տեսնող «Կոմ(մ)ունիստ» թերթում (Kom(m)unist, 1921, № 287, 4):

Ցավոք, չկա բացատրություն, թե, ըստ գյուղացիների, ինչպես էր այրվող ավելն ազդելու հորդ անձրևի վրա: Հավանաբար այստեղ գործ ունենք քրիստոնեական և հեթանոսական հավատալիքների ժողովրդական համադրման հետ: Կային այլ միջոցներ ևս: Անձրև բերելու նպատակով կանայք տղամարդու շոր էին հագնում, լծվում կամին և գետի հունը հակառակ ուղղությամբ վարում:

Ս. Հարությունյանը գրում է, որ «Ամպրոպի

6 Բանասաց՝ Մարտիրոս Չալումյան, ծնվ. 1958 թ. Գարդմանի Բանանց գյուղում, ապրում է ՀՀ Նոր գյուղ բնակավայրում, նյութը գրի ենք առել 2023 թ., Նոր գյուղում:

7 «...երեկոյեան ժամը 5 1/2-ին Ներքին-Շէնում ու մտակայ գիղերում տեղի ունեցաւ սաստիկ, անձրևախառն փոթորիկ, որը տևեց մինչև միս երեկոյեան ժամը 6-ը»:

աստծո կողմից օձին (վիշապ) հաղթելուց հետո ջուր է հորդում (անձրև է գալիս), օձը (վիշապ) թաքնվում է երկրային ջրերում» (Harutyunyan, 2000, 185): Առասպելաբանությունից հայտնի է, որ վիշապին բնորոշ է ջրերի ակերը փակելու սովորությունը: Քանի որ, ինչպես նշված է Ս. Հարությունյանի «Հայ առասպելաբանություն» աշխատության մեջ, վիշապը թաքնվում է երկրային ջրերի մեջ, ապա կարելի է ենթադրել, որ գետը վարելու արարողակարգը վիշապի դեմ մղվող կովի մի ծես է, որի արդյունքում նա սպանվում է կամ պարտվում և ազատում ջրերի ակեր: Վիշապի հետ կապվող այս հավատալիքն առկա է նաև «Մասնա ծոեր» էպոսում, որտեղ Պղնձե քաղաքի արքայադստեր համար Մանասարը կովում է վիշապի դեմ, և երբ հաղթում է նրան, վերջինս քաղաքի վրա ջուր է թափում (Sasna tsrer, A, 842-844; Sasna tsrer, B, 557-558): Այս մասին Մ. Աբեղյանը գրում է, որ «պարտվելով՝ վիշապը կորցնում է վերոհիշյալ բոլոր առասպելական խորհրդանիշները և բացում ջրի ակեր» (Abeghyan, 1975, 73):

Սա տարածված անձրևաբեր ծես է, որի մասին բազմիցս հիշատակում է նաև ազգագրագետ Ե. Լալայանը՝ հավելելով, որ երկու կին եզների փոխարեն լծվում են արոքին և սկսում գետի հունին հակառակ քաշել արոքը, իսկ երրորդ կինը՝ տղամարդու հագուստով, արոքին լծված կանանց հետ վարվում է այնպես, ինչպես հոտաղն է վարվում լծկանների հետ (Lalayan, 1988, 431): Մանուկ Աբեղյանն այս մասին գրում է, որ ծեսն իրացվում էր, եթե կանանց կողմից դրսևորվեր տղամարդկային հատկանիշներ՝ «տղամարդկանց արտաքին հատկանիշներն ու զբաղմունքն ընդօրինակելը (փափախ դնելն ու տղամարդու հագուստ կրելը... գետի ընթացքին հակառակ վարելը, եզներին որպես հոտաղ քշելն ու աղմուկով հայհոյելը)» (Abeghyan, 1975, 77):

Ազգագրագետի հաղորդած մեկ այլ պատումի համաձայն՝ ոտաբորբիկ կանայք աղաղակով ներխուժել են եկեղեցի, լացել, արցունք թափել, որպեսզի Աստված խղճա իրենց և անձրև տա (Abeghyan, 1975, 77):

Այս ծեսը շատ երկար է կենցաղավարել գարդմանահայության շրջանում: Դրա մասին է վկայում Ե. Լալայանի ու Աղվանյանցի գրառումներից մտ չորս տասնամյակ անց՝ 1925 թ. «Կոմ(մ)ունիստ» թերթում տպագրված հաղորդումը «Գառնակեր գյուղում վաղուց մնացած այսպիսի մի սովորություն կա, վոր յերբ յերկար ժամանակ անձրև չի լինում, գյուղի պատավ կանայք հավաքվում են ու գնում գետը, արոքով վարում: Մայիսի 8-ին ել եղ ելի նույնն արին, բայց, ավաղ, անձրև չթափվեց» (Kom(m)unist, 1925, № 112, 3):

Նույն թերթի հաջորդ համարներում հանդիպում ենք անձրևի սակավության պատճառով նմանատիպ ծեսի իրականացման: Թերթը գրում է, որ արդեն երկու տարի Գանձակի գավառը լուրջ վնասներ է կրում երաշտից. «Շվարած գյուղացիությունը սկսել է նախապաշարումների յետևից ընկնել. ամսույս 10-ին յերեք կին, ձեռնափայտը արոր շինելով, սկսել են գետը վարել և աղացած ցորենը ջրում ցանել, վոր անձրև գա, սակայն աստվածը անգոր ե մի բան անելու» (Kom(m)unist, 1925, № 115, 3):

### Ցասման խաչեր

Քարի հետ կապված անձրևաբեր ծեսերը միայն վերը նշվածով չեն սահմանափակվում: Վերոհիշյալ բանասաց Մ. Չալումյանի պատմածներից ամենաուշագրավը, թերևս, կույս աղջիկների՝ խաչքարերի վրա դույլերով ջուր լցնելու և անձրև ակնկալելու պատմությունն է, որն ինքը լսել է մինչև բռնագաղթը իր համագյուղացի Մանի Ջաղեթյանից. «Էն վախտ ազափ ըխճըկըքը, եթա թոռ կնիխ չի ըլել, վեդրոնըրով քնիխ են ըլել անխափորի ճուրը վըր ունիլիս, պիրիլիս լըցնիլիս խաչքարըրի վըրն, վըր թոռ կն»:

Այս ծեսը հիշեցնում է ցասման խաչերի հետ կապված հավատալիքների մասին, որոնց հայ բանագիտության մեջ առաջին անգամ անդրադարձել է Գարեգին Սրվանձտյանցը (Sruandzteants, 1874, 113-115): Ավելի ուշ ցասման խաչերի մասին կարդում ենք «Ազգագրական հանդեսում» (Journal of Ethnography, 1903, 201): Չնայած Գարդմանը լավ ուսումնասիրած հուշարձանագետ Մամվել Կարպետյանը գրում է, որ ցասման խաչեր պահպանվել են, օրինակ, Խլաթ գավառում<sup>8</sup> և Գարդմանում, չի հիշատակում այդպիսի գոնե մեկ նմուշ, այնուամենայնիվ, Ենթադրելի է, որ նախկինում եղել են նման խաչեր, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Չալումյանը իր պատմությունը լսել է անցյալ դարի 70-80-ական թթ. արդեն տարեց Մանի Ջաղեթյանից, որը, հնարավոր է, 1800-ականների ծնունդ է եղել:

### Կաթսայի տակը լիզելու և կատակ-հարսանիքի ծեսը

Անձրևաբեր ծեսի հետաքրքիր տարբերակ է կաթսայի տակը լիզելու եղանակով անձրև հայցելը: Ըստ ժողովրդական հավատալիքների՝ այն երեխան, ով լիզում էր կաթսայի (հիմնականում՝ մաճունի) տակը, նրա հարսանիքի օրը կամ ձյուն էր գալիս, կամ՝ անձրև՝ եղանակին համապատասխան: Այդ հավատալիքը կենցաղավարում էր նաև Գարդմանում, ավելին, մինչ օրս էլ այն շատ տարածված է գարդմանահայերի շրջանում: Երբ որևէ մեկի հարսանիքի օրը անձրև կամ ձյուն է տեղում, տարեց-

8 [https://www.facebook.com/berdagh/posts/1211056705745991?ref=embed\\_post](https://www.facebook.com/berdagh/posts/1211056705745991?ref=embed_post)

ներն ասում են. «Շան փրսա տննունս տոն (կամ՝ շան հարսը տննունս տոն), քորփն վրխտին հնլբնթ դրգանի տակը լնոգ ես տըվըլ»<sup>9</sup>: Ահա այդ հավատալիքը ժամանակի ընթացքում փոխվել ու դարձել է ծես: Ամռան տապերին, երբ երկար ժամանակ անձրև չի գալիս, ինչ-որ մի փոքր երեխայի կարգադրում են, որ կաթսայի տակը լիզի: Մարդիկ, սնահավատությամբ կարևորություն տալով, փոփոխում են այն՝ դարձնելով հստակ սյուժե ունեցող ծես: Քանի որ, ըստ հավատալիքների, տեղումը պետք է լիներ կաթսայի տակը լիզողների հարսանիքի օրը, լինում էին դեպքեր, երբ նրանց կատակ-հարսանիքն էին կազմակերպում, որպեսզի «թողը» (անձրևը) հավատա (Բանասաց՝ Վարսենիկ Չիլինգարյան):

**Նուրի, ճոլի, չոլի**

Հայաստանի ազգագրական գրեթե բոլոր շրջաններում հայտնի Նուրինի ծեսն ու դրան ուղեկցող բանահյուսական տեքստերը տարածված էին նաև Գարդմանում, որտեղ առավել հայտնի էր «ճոլի» անվամբ, ինչպես Լեռնային Արցախում, Մյուսիքում և Տավուշում: «Նուրին» անունով միայն մեկ օրինակ մեզ հաջողվեց գրանցել 2023 թ. մայիս ամսին Արեգունի գյուղում՝ Նուգգեր և Շահումյան գյուղերից բռնագաղթած բանասացներից: Ըստ վերջիններիս հաղորդած նյութի՝ երաշտը մեղմելու նպատակով յոթ տարբեր տներից մեկական հոգի եկել է, հետը մի կտոր ցան բերել, որով կրակ է վառել, երգելով գյուղում ման եկել, անուշեղեն բաժանել, որպեսզի անձրև գա: Բանասաց Ռիմա Գյուլումյանը<sup>10</sup> պատմեց, որ շրջելու ընթացքում իրենք հատուկ տիկիների են պատրաստել ու օդում թափահարելով՝ երգել.

«Նուրի նուրին եկել ա,  
Արջահուրին եկել ա,  
Մի կըտոր հաց պիրեք  
Թաթին տըրեք,  
Մի ծու պիրեք վարսը քըցեցեք»<sup>11</sup>:

Նուրինի ծեսի մասին հիշատակություն կա նաև Լուսիկ Աղամյանի «Չարդախլու» գրքում. «Կանայք փայտից «մարդ» էին սարքում, ցնցոտիներ հագնում և տալիս երեխաների ձեռքը: Երեխաները բակից բակ էին անցնում՝ երգելով.

Նուրի-Նուրին եկել ա,  
Աշտա հուրին եկել ա,  
Ձու տվեք՝ թաթին դնենք,  
Յուղ տվեք՝ պորտը քսենք:

Տանտերը պետք է որևէ բան տար ու ջուր լցներ Նուրիի ու երեխաների վրա:

Ով, ով զարմանք, պատահականությամբ, ամպեր էին բարձրանում, որոտ ու կայծակ էր լսվում, անձրև էր տեղում, ջրում դաշտ ու արտ, բացվում, բուրում էին ծաղիկները, ու մարդիկ հավատում էին այդ արարողությանը» (Aghamyan, 2004, 620):

Մյուս տարբերակներն հայտնի են «ճոլի» անունով: Որոշ հետազոտողներ ճոլին նույնացրել են Նուրիի հետ: Բանահավաք Կոնստանդին Մելիք-Շահնագարյանն այն համարում է երաշտ տարիներին աստծո գույթը շարժելու համար կատարվող երգ (Tmblachi Khachan, 1908, 67): Իսկ Գրիգոր Ղափանցյանը կարծում է, որ այն ջրի աստվածության հնագույն պաշտամունքի մնացուկ է Ղարաբաղի շրջանում (Soviet literature, 1940, 124-135): Հետաքրքրական է «ճոլի» անվան բացատրությունը, որը հաճախ ստուգաբանվում է «չոլի» ձևով, այսինքն՝ չոլ, դաշտ իմաստով: Կարելի է եզրակացնել, որ մարդիկ նկատի ունեն չոլում՝ դաշտում, տան սահմաններից դուրս կատարվող գործողություն, ծես: Այդ ծեսը երկրամասում այնքան հայտնի ու տարածված է եղել, որ դեռևս խորհրդային կարգերի նախնական շրջանում ժամանակի մամուլը քննադատում էր նման երևույթները. «Շամխորի գավառի Գառնակեր գյուղի պատավ կանայք գյուղի հավատացյալներից մատաղ են հավաքում, վոր աստված տեսնի ու առատ անձրև թափի: Մատաղն ել արին, իրենք ել կերան, կշտացան, բայց աստված անձրև չթափեց» (Kom(m)unist, 1925, № 119, 3):

Մատաղ հավաքելու այս դեպքը նման է «Նուրի-նուրի» ծեսին կամ, ինչպես Գարդման-Արցախում են ասում, «ճոլի»-ին: Փիփից բռնագաղթած և Փամբակում ապրող Օվան դային (Հովհաննես Կոստանդյան) պատմեց այդ ծեսի մասի. «Ճիրի-ճիրի ընիլիս են ըլել, պանն են վըր ընիլիս ըլել, ըտիլի-մըտիլի էլի, մղակ-մղակ, ով վըր պակաս ա ըլել, տարըլ ըն մի էրկու խնձիր տվըլ, մի էրկու կանփըտ տըվըլ, պանն, հու ասըլ Աստված կանչի թողը յետ ունի» :

Ե. Լալայանը Համբարձման տոնը նկարագրելիս անդրադառնում է այս ծեսին, բայց, ի տարբերություն Օվան դայու պատմած տարբերակի, այնտեղ տնետուն շրջողները ոչ թե ինչ-որ բան են բաժանում, այլ՝ ստանում: Նկատենք նաև, որ Օվան դայու պատմությունը կարծես լրացում-ապացույցը լինի Կ. Մելիք-Շահնագարյանի՝ վերը բերված պնդմանը:

Առավել հետաքրքրական է, որ հիշյալ թերթը դատապարտում է կատարվածը և գրում, որ պետք է վերջ տրվեն նման երևույթներին: Կարելի է ենթա-

9 Բանասաց՝ Վարսենիկ Չիլինգարյան, ծնվ. 1965 թ. Գարդմանի Ղոթյուլ գյուղում, ապրում է ՀՀ Փամբակ գյուղում: Նյութերը գրի են առնվել 2019 թ. Փամբակ գյուղում:  
10 Բանասաց՝ Ռիմա Գյուլումյան, ծնվ. 1959 թ. Շահումյան գյուղում, 1988 թ.-ից ապրում է Վարդենիսի շրջանի Արեգունի գյուղում: Նյութը գրի ենք առել 2023 թ., Արեգունի գյուղում:  
11 Բանասաց՝ Մու Հովհաննիսյան, ծնվ. 1955 թ. Քյամանդիր գյուղում, 1988 թ.-ից ապրում է Վարդենիսի շրջանի Արեգունի գյուղում: Նյութը գրի ենք առել Արեգունի գյուղում:

դրել, որ խորհրդային շրջանում այս և նմանօրինակ ծեսերը ճշմարտորեն ու վերացան գործող իշխանությունների կողմից, որովհետև «...շրջանի ու գյուղերի բուլշևիկ ղեկավարներից շատերը ժողովրդին արգելում էին կատարել իրենց դարավոր ծիսական արարողությունները եկեղեցում կամ տերտերի միջոցով» (Ghahramanyan, 2002, 137): Այս հանգամանքով կարելի է պայմանավորել նաև խորհրդային ավելի ուշ շրջանում ծեսերի իրացման նվազումը, իսկ հետագայում՝ իսպառ վերացումը:

**Կարկտախափան ծեսեր**

Անձրևաբեր, անձրևախափան ծեսերին գուգահեռ Գարդմանում բավական լայն կենցաղավարություն են ունեցել նաև կարկտախափան ծեսերը, որոնք նույնպես պայմանավորված էին մթնոլորտային անբարենպաստ տեղումներով: Այդ ծեսերից մի քանիսն այսօր էլ կենցաղավարում են, իսկ մեծ մասն արդեն մոռացության է մատնվում, ինչպես, օրինակ, ստորև ներկայացվող «Գնդիկ խաչ»-ը:

**Ա.** Կարկտախափան «Գնդիկ խաչ»․ Փիփ գյուղից Չարեքավանք տանող ճանապարհի վրա եղել է մի խաչ-սրբատեղի, որտեղ մարդիկ ուխտի են գնացել ու մոմ վառել: Բացի այդ, երբ կարկուտի ամպեր են կուտակվել, և, ինչպես տեղացիներն են ասում, «կարկուտի չանգը գնդը կալըլ ա», մարդիկ գնացել են «Գնդիկ խաչ»՝ ուխտի, գոհաբերություն (մատաղ) արել, որպեսզի սուրբն իրենց ցանքատարածությունները պաշտպանի ենթադրյալ կարկուտից՝ հեռացնելով կարկտային ամպերը կամ անձրևի վերածելով դրանք. «Մըր վըխտումն անթեն քնիլիս են ըլել խաչը, մոմ վառըլ, կըշտին քեփ արըլ, մատաղ արըլ հու եկել» (բանասաց՝ Արշավիր Գյուլումյան): Կարկտախափան կամ «կըրկըտըկըտոր» ծեսերը մեծ տարածում են ունեցել Գարդմանում, որոնց մի մասը պահպանվել է նաև այսօր՝ բռնագաղթից ավելի քան երեք տասնամյակ հետո:

Փամբակում պատմում են կարկտախափան ծեսի մի հետաքրքիր տարբերակի մասին. «Կարկուտը վըր կնիլիս ա ըլել, էնա մի հափուտ հըվաքըլ ըն, պիրել վըրհատ արըլ, կարկուտը ճիւր տաննան, կարկուտը ճիւր տաննան, կարկուտը ճիւր տաննան, հու, դե չգիտեն, վըրթըվերի կընանիքն ին վեդրեն վըր ունում ասում Աստված ջան էս էլ քու փայ ճիւրը, էս էլ քու փայ ճ իւրը, թա հըրը մըրթատըր: Կարկուտի վախտը ճիւրը լըցնում ըս, շըպրտում ասում Աստված ջան էս էլ քու փայը» :

Ավելին, բանասացը հավելեց նաև, որ ինքը մինչ օրս էլ հաճախ դիմում է ծեսի գործությանը. «Մին-մին միհի էլ ես էլ եմ չաշկըն լըսում, ճիւրը շըպըրտում, ասում Աստված ջան, էս քու փայը» (բանասաց՝ Ռայա Դաշյան) :

Կարկտախափան մեկ այլ ծես ևս գոյություն ունի. երբ երկինքը թխպում էր, եկեղեցու զանգերը

դողանջում էին, բնակիչները վառում էին Ավագ ուրբաթ օրվանից մնացած մոմը, տան կենցաղային իրերը դուրս հանում, գետնի վրա շամփուրներ ցցում և մի կարկուտը չորս մասի բաժանում, որպեսզի տեղումները դադարեն: Արտերը փրկելու նպատակով նրանք Զատիկի տոնից մինչև Եղիա մարգարեի տոնը բոլոր երկուշաբթի օրերը կիրակիի պես են պահում՝ մատաղներ անում, բաժանում ամենքին, իսկ Եղիա մարգարեի տոնին համընդհանուր «հասարակաց» մատաղ են անում (Lalayan 1988, 432): Արեգունի գյուղում բանասաց Սոս Հովհաննիսյանը պատմեց, որ կարկուտը դադարեցնելու նպատակով իրենք Նուզգեր գյուղում կացինը դնում էին դրսում հակառակ՝ սուր կողմը դեպի երկինք, որպեսզի կարկուտը փշուր-փշուր լինի:

Կացնի գործոնով պայմանավորված՝ կարկտախափան ծես հիշատակեց նաև Ռայա Դաշյանը. «Վըր կարկուտ ա եկել, կացնի քնիլավը կարկուտը կըտրատըլ ընք, մըթանն թա վըր հավիլի, թոն տաննան» (բանասաց՝ Ռայա Դաշյան):

Այս ծեսի ժամանակ աղի օգտագործումը ինքնանպատակ չէ, քանի որ հնուց այն հայտնի է եղել որպես ձյունը, սառույցը հալեցնող միջոց: Մարդիկ մտածում էին, որ աղ շաղ տալով՝ կարկուտը նույնպես կհալչի և անձրև կդառնա:

**Բ.** Փոքր երեխային դուրս հանելու ծեսը: Կարկտախափան և անձրևաբեր ծեսի այլ՝ գուցե ավելի զավեշտալի տարբերակ կար, որին նույնպես ականատես ենք եղել: Կարկուտի ժամանակ տան ամենափոքր անդամը՝ հիմնականում երեխան, կանգնում էր մուտքի դռան շեմին՝ դեմքով դեպի ներս, մեջքով դեպի դուրս, հետո կոանում, բացում հետույքը, որպեսզի կարկուտը խղճա նրան, չցանկանա ցավեցնել և փոխվի անձրևի:

Մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող ազգագրական շրջանում հատուկ մարդիկ են եղել՝ անձրևաբեր և կարկտախափան ծեսեր իրականացնող: Բանի որ քիչ չեն եղել դեպքերը, երբ ուժգին կարկուտը ամբողջովին ոչնչացրել է տարվա բերքը, մարդիկ սկսել են երկյուղել ծես իրականացնողներից՝ մտածելով, որ, եթե հանկարծ ինչ-որ բան նրանց ուզածով չանեն, կարկտագիր անողը գյուղի ամբողջ կարկուտն իրենց այգու վրա կթափի:

**Գ.** Բանանցեցի գրբաց Ակուփի ծեսերը: Կարկտախափան ծեսի լավագույն կատարողներից է եղել Բանանց գյուղի գրբաց Ակուփը (Հակոբ): Նա հայտնի էր ամբողջ գավառում, հեռավոր շրջաններից անգամ նրա մոտ էին գալիս այդ խնդրանքով: Համբարձման հաջորդ օրը մատաղների հետ մորթում էին նաև մի այլոջ, պարտադիր չայ, որի արյունով գրբացը թղթին գրում էր. «Մեծ և [գ]երաշնորհ Տեանն մեր տերն Յիսուս Քրիստոս յորժամ երթայր յերուսաղեմ, հարցին ցնա աշակերտքն. «ինչ արասցուք, յորժամ գայ անպ կարկուտից»: Պատասխանի

ետ նոցա տէրն մեր Յիսուս Քրիստոս. «ասացեք Առասի-Մառասի դեժ-դեժ» (Lalayan, 1988, 439): Ապա այս թուղթը ոլորելով՝ մի փայտի արանքում է դնում և տանում դնում արտի մի բարձր տեղում:

**Եզրակացություններ**

Բանահյուսական նյութի քննության արդյունքում եզրակացնում ենք, որ Գարդմանի գյուղերի մեծ մասը, ի սկզբանե կառուցված լինելով նախալեռնային ու լեռնային հատվածներում, մշտապես զգացել է ոռոգման ջրի պակասը, որը, ժամանակի ընթացքում արմատանալով, մարդկանց ստիպել է դիմել ամենատարբեր հնարքների ու սնահավատությունների, որոնց արդյունքում էլ ստեղծվել և մեզ են հասել հնայական ծեսեր, աղոթքներ, անեծքներ, օրհնանքներ և այլն:

Անկարող լինելով հաղթահարել բնության հարուցած դժվարություններն ու լուծել ոռոգման խնդիրը՝ մարդիկ սկսել են ջուր խնդրել «երկնքից», գյուղի քահանայից, ծառից, քարից կամ ժայռից: Այդ ծեսերը և ծեսերն ուղեկցող հնայախոսությունները

բավական տարբերվում են Հայկական լեռնաշխարհի մյուս գավառներում ստեղծված նմանատիպ նյութից՝ բացառությամբ Լեռնային Արցախի բանահյուսության, քանի որ թե՛ Դաշտային (Հյուսիսային) և թե՛ Լեռնային Արցախը սնվում են մեկ ընդհանուր ժողովրդական ճյուղից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրագործության համար ամենակարևոր պայմանի՝ ջրի դժվարիասանելիությունը ժամանակի ընթացքում էական ազդեցություն է գործել մարդկանց մտածելակերպի, խառնվածքի և առօրյա-խոսակցական բառապաշարի վրա, որի արդյունքում ձևավորվել են բանահյուսական բազմաթիվ նմուշներ: Դրանցից առաձին հմայք ունեն և ուշադրության են արժանի պատմական կարևորագույն անցքերի տեղական «լամբագրումները»: Այդպիսի եզակի նմուշ է, օրինակ, Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած և Մուրացանի կողմից գեղարվեստականացված, մեր գրառած նյութը 10-րդ դարի հայ իշխան Սահակ Սևադայի պատմության ժողովրդականացման վերաբերյալ:

Հավելված 1. Բանասացների ցանկ

Անուն ազգանուն	Մասնագիտությունը	Ծննդյան վայրը, թվականը	Որտեղ է վերաբնակվել	Գրառման վայրը, տարեթիվը
Արշավիր Գյուլումյան	Շինարար	Փիփ, Քարհատի (Դաշքեսան) շրջան, 1961, խորհրդային Ադրբեջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան, 2023
Վարսենիկ Չիլիզարյան	Տնային տնտեսուհի	Ղոթյուլ (Ջագլիկ), Քարհատի (Դաշքեսան) շրջան, 1965, խորհրդային Ադրբեջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան, 2023
Մարտիրոս Չալումյան	Շինարար, քանդակագործ	Բանանց, Քարհատի (Դաշքեսան) շրջան, 1958, խորհրդային Ադրբեջան	Ալվանք (Մեղրի), Նոր Վերինշեն (Քարվաճառ), Նոր գյուղ (Աբովյան)	Նոր գյուղ, ՀՀ Աբովյանի շրջան, 2023
Հայկազ Մամիկոնյան	Մանկավարժ	Փիփ (Ջագլիկ), Քարհատի (Դաշքեսան) շրջան, 1946, խորհրդային Ադրբեջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան, 2023
Հայկանուշ Պողոսյան	Տնային տնտեսուհի	Փիփ (Ջագլիկ), Քարհատի (Դաշքեսան) շրջան, 1936, խորհրդային Ադրբեջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան, 2016
Ռայա Դաշյան	Դաստիարակ	Փիփ (Ջագլիկ), Քարհատի (Դաշքեսան) շրջան, 1940, խորհրդային Ադրբեջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան, 2023
Սոս Հովհաննիսյան	Մանկավարժ	Քյամանդիր, Քարհատի (Դաշքեսան) շրջան, 1955-2024 խորհրդային Ադրբեջան	Արեգունի, ՀՀ Վարդենիսի շրջան	Արեգուն, ՀՀ Վարդենիսի շրջան, 2023
Հովհաննես Կոստանդյան	Անտառապահ	Փիփ (Ջագլիկ), Քարհատի (Դաշքեսան) շրջան, 1930, խորհրդային Ադրբեջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան	Փամբակ, ՀՀ Վարդենիսի շրջան, 2023
Ռինա Գյուլումյան	Տնային տնտեսուհի	Շահումյան, Քարհատի (Դաշքեսան) շրջան, խորհրդային Ադրբեջան, 1959	Արեգունի, ՀՀ Վարդենիսի շրջան	Արեգուն, ՀՀ Վարդենիսի շրջան, 2023

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Abeghyan, M. Kh. (1975). *Complete collection of works* (vol. 7). Institute of Literature Named After Manuk Abeghyan. USSR Academy of Sciences (in Armenian).
- Adonts, N. G. (1987). *Armenia in the era of Justinian. Hayastan* (in Armenian).
- Alishan, Gh. (1855). *Bulletin of the Great Armenians*. Venice, St. Lazar (in Armenian).
- Aghamyan, L. A. (2004). *Chardzkhlu. Zangak-97* (in Armenian).
- A. Nazinyan, & V. Svazlyan (1998), *Armenian Folk Tales* (S. Abrahamyan, Ed.), (vol. 6). IAE, RA NAS (in Armenian).
- Barkhutareants, M. (1999). *The country of Aghvan and neighbors. Artsakh. Gandzasar* (in Armenian).
- Bunyatov, Z. M. (1964). *Albanica III. About localization of Gardman region*. Herald of Academy of Sciences of Azerbaijan SSR, 4, 87-91 (in Russian).
- Davrizhetsi, A. (1988). *History*. Sovetakan grogh (in Armenian).
- Gandzaketsi, K. (1982). *Armenian history*, Sovetakan grogh (in Armenian).
- Galchyan, R. (2022). *The 2600-year history of the borders of Armenia*. Zangak (in Armenian).
- Ghahramanyan, K. H. (2002). *Book of Family*. Tigran Mets (in Armenian).
- Harutyunyan, S.B. (2000). *Armenian Mythology*. Beirut, Vahe Setean print (in Armenian).
- Intchitchiean, Gh (1822). *Signature of an old Armenian. According to the ancient and Middle centuries named chronologically. From the books of our ancestors and others. Mets Hayk*. Venice, St. Lazar (in Armenian).
- Jalaleants, S. (1842). *Journey to Greater Armenia* (part A.) Tpghis (in Armenian).
- Kaghankatvestsi, M. (1969). *History of Aghvanats world. Hayastan* (in Armenian).
- Karapetyan, S.G. (2004). *Northern Artsakh*. Gitutyun (in Armenian).
- Karapetyan, S. G. (2019). *History of Armenia, 5, Mrakavank*. Foundation for the Study of Armenian Architecture (in Armenian).
- Kom(m)unist (1921). *Editorial articles*, № 287, 3; 1925 № 75, 3; № 112, 3; № 115, 3; № 119, 3; № 126, 3; № 130, 3; № 238, 3 (in Armenian).
- Hakobyan, T. (1984). *Historical Geography of Armenia, Outlines*. YSU (in Armenian).
- Lalayan, Y. (1988). *Stories* (vol. 2). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Mshak (1912, 28 april). *Editorial article*, 89, 3 (in Armenian).
- Raffi (1987). *Collection of Articles*, 9. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Sargsyan, S. (1996). *Artsakh. Historical Geographical Adjustments*. Hay Edit (in Armenian).
- Sasna Tsrer. (1936). A (Edited by: M. Kh. Abeghyan and K. A. Melik-Ohanjanyan). Pethrat (in Armenian).
- Sasna Tsrer. (1951). B (Edited by: M. Kh. Abeghyan and K. A. Melik-Ohanjanyan). Haypethrat (in Armenian).
- Soviet Literature. (1940). 6, pp. 124-135 (in Armenian).
- Sruandzteants, G. H. (1874). *Grots and Brots and Davit of Sassoon or Mher's door*. Constantinopolis, E. M. Tntessean print (in Armenian).
- Tmblachi Khachan (Melik Shahnazaryan), K.K. (1908). *Zurna-Tmbla, B, Vagharshapat* (in Armenian).
- Ulubabyan, B. A. (1981). *Episodes of the History of the East Armenia V-VII centuries*. Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- Vardzk. (2021). *Editorial articles*, №15, pp. 29-31; № 16, p. 27 (in Armenian).
- Yohannesean, M. (1970). *The fortresses of Armenia*. Venice, St. Lazar (in Armenian).
- Yeremyan, S.T. (1963). *Armenia according to "Ashkharatsuits" (An experiment on the modern cartographic basis of the reconstruction of the Armenian map of the 7th century)*. USSR Academy of Sciences (in Armenian).



# THE SIGNIFICANCE OF THE CONSTRUCTION OF THE SHIRAK CANAL AND ITS REFLECTION ON FOLKLORE

*Hasmik Galstyan*

*Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
Shirak Center for Armenological Studies, NAS, Armenia*

## Abstract

The Shirak plain is a region with fertile soils and favorable climatic conditions for agriculture, the first evidence of which is known from the story reported by the historian Movses Khorenatsi on the gluttonous Shara and Shirak granaries. Since the 13th century the region with ancient irrigation traditions, gradually turned into a desert. During the tsarist rule, and after the Sovietization of Armenia, the issue of extracting water from Akhuryan for irrigation purposes was repeatedly raised, which was realised only in 1922–1925, with the construction of the Shirak Canal.

The construction of the Shirak Canal was a significant event for Soviet Armenia. After Sovietization, Armenia, exhausted by the severe consequences of the First World War, partially solved the problem of irrigation of the Shirak field, which contributed to the development of the regional economy. With the opening of the canal, the cultivation of sugar beet was started in the region, and the volume of grain cultivation expanded.

The Shirak Canal became one of the valuable symbols of Soviet Armenia and turned into a propaganda tool. It indicated the activities of the Bolsheviks, the foundations of Soviet Armenia, being built by the hands of workers and peasants.

The construction of the Shirak Canal is reflected not only in fiction, but also in folklore. Some stories related to the canal have acquired folkloric characteristics, and most of the conversations correspond to archival documents. Samples of lyrical folklore were created among the peasantry until the 1980s.

**Keywords:** Soviet Armenia, Shirak Canal, irrigation, water use, construction losses, Soviet propaganda, literature, lyrical folklore, Fridtjof Nansen.

## ՇԻՐԱԿԻ ՋՐԱՆՑՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՑՈՒՄԸ ԲԱՆԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՉ

### Հասանիկ Գալստյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

### Ամփոփագիր

Շիրակի դաշտավայրը բերրի հողերով ու գյուղատնտեսության համար բնակլիմայական բարենպաստ պայմաններով տարածաշրջան է, որի մասին առաջին վկայությունները տեսնում ենք պատմահայր Մովսես Խորենացու հաղորդած գրույցում՝ շատակեր Շարայի և Շիրակի ամբարների մասին: Ոռոգման հնագույն ավանդույթներ ունեցող տարածաշրջանը, սկսած 13-րդ դարից, հետզհետե ամայանում է և վերածվում անապատի: Նախ ցարական իշխանության օրոք, ապա Հայաստանի խորհրդայնացումից հետո բազմիցս դրվում է ոռոգման նպատակով Ախուրյանից ջուր հանելու խնդիրը, որը իրագործվում է միայն 1922–1925 թթ.՝ Շիրակի ջրանցքի կառուցմամբ:

Շիրակի ջրանցքի կառուցումը նշանակալի իրադարձություն էր Խորհրդային Հայաստանի համար: Առաջին աշխարհամարտի ծանր հետևանքներից ուժասպառ եղած Հայաստանը խորհրդայնացումից հետո մասամբ լուծեց Շիրակի դաշտի ոռոգման խնդիրը, ինչն էլ նպաստեց տարածաշրջանի տնտեսության զարգացմանը: Ջրանցքի գործարկմամբ սկիզբ դրվեց տարածաշրջանում շաքարի ճակնդեղի մշակմանը, ընդլայնվեցին հացահատիկի մշակման ծավալները:

Շիրակի ջրանցքի կառուցումն արտացոլվեց ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև ժողովրդական բանահյուսության մեջ: Ջրանցքին առնչվող որոշ իրապատում գրույցներ բանահյուսական հատկանիշներ են ձեռք բերել, իսկ գրույցների մեծ մասը համապատասխանում են ախիվային փաստաթղթերին: Գյուղացիության շրջանում ստեղծվում են քնարական բանահյուսության նմուշներ, որոնք կենցաղավարում են մինչև 1980-ական թվականները:

**Հիմնաբառեր.** Խորհրդային Հայաստան, Շիրակի ջրանցք, ռոտգում, ջրօգտագործում, շինարարական գոհ, խորհրդային քարոզչություն, գրականություն, քնարական բանահյուսություն, Ֆրիտյոֆ Նանսեն:

## Ներածություն

Հողվածը նվիրված է Խորհրդային Հայաստանում 20-րդ դարասկզբին իրականացված խոշորագույն ձեռնարկներից մեկին՝ Շիրակի ջրանցքին: Առաջին համաշխարհային պատերազմի վերքերից դեռ չամոքված, հազարավոր գաղթականներով լցված ու ավերակ դարձած երկրի համար չափազանց համարձակ մտահղացում էր ջրանցքի կառուցումը: Այն իրագործվեց բավականին սուղ միջոցներով, բանվորների ու գյուղացիների համառ աշխատանքի շնորհիվ: Ջրաշինարարության ոլորտում Շիրակի ջրանցքն առաջին կառույցն էր, որ լուծելու էր Շիրակի՝ հարյուրամյակներով լքված ու ամայացած բերրի դաշտերի ռոտգման խնդիրը: Այն դարձավ Խորհրդային Հայաստանի արժեքավոր խորհրդանիշներից մեկը և վերածվեց քարոզչության գործիքի: Նրանով մատնացույց էր արվում բոլշևիկների ծավալած գործունեությունը, բանվորների և գյուղացիների ձեռքով կառուցվող Խորհրդային Հայաստանի հիմքերը:

Հողվածը կառուցված է բանահյուսական և ազգագրական արդի գրառումների, արխիվային հարուստ նյութի, պարբերական մամուլում տեղ գտած հաղորդումների, Խորհրդային Հայաստանի ջրաշինարարական աշխատանքներին նվիրված մասնագիտական, ինչպես նաև գեղարվեստական գրականության հիման վրա:

Շիրակը հնուց ի վեր եղել է Հայաստանի բերքառատ գավառներից մեկը, աչքի է ընկել հողի բերրիությամբ, վարելահողերով ու արոտավայրերով, գետակների ու աղբյուրների առատությամբ և գյուղատնտեսության համար բնակլիմայական բարենպաստ պայմաններով: Շիրակի հացահատիկի շտեմարանները հոչակված են եղել ամենուր: Այս մասին է վկայում պատմահայր Մովսես Խորենացու հաղորդած առասպելը շատակեր Շարայի և Շիրակի ամբարների մասին. «Արամանյակի որդի Արամայիսն իր որդուն՝ բազմագավակ ու շատակեր Շարային, ամբողջ աղխով ուղարկում է մի մերձակա արգավանդ ու բերրի դաշտ, հյուսիսային լեռան Արագածի թիկունքում, որտեղ շատ ջրեր են հոսում. Նրա անունով, ասում են, գավառը կոչվեց Շիրակ: Ուստի թվում է, թե ճշտվում է գյուղացիների մեջ տարածված առասպելը. «Թե քո որկորը Շարայի որկորն է, բայց մեր ամբարները Շիրակի ամբարները չեն» (Khorenatsi, 1968): Ս. Սաղումյանի դիտարկմամբ՝ «Այս հինավուրց պատումը վկայում է, որ հնագույն դարերից Շիրակի բարեբեր հարթավայրում զբաղվել են երկրագործությամբ, անասնապա-

հությամբ, ընդլեռնի արտադրությամբ» (Saghumyan, 1998): Ախուրյանի ձախ ափին գտնվող Մարմաշեն գյուղի սեպագիր արձանագրությունը (Saghumyan, 1998) (ք. ա. 774 թ.) և Կուլիջանի (Արթիկ) սեպագիրը (Yeghiazaryan, 1975) (ք. ա. 714–685 թթ.) վկայում են Շիրակի դաշտի կարևորության մասին՝ սկսած անհիշելի ժամանակներից:

Բագրատունյաց հզորության դարաշրջանում Շիրակը վերածվել էր հայոց արքունի ոստանի, ուստի բնակավայրերի առավել խիտ ցանց ունեցող տարածաշրջաններից մեկն էր: X–XI դարերի հայ պատմիչ, աշխարհագրագետ Ստեփանոս Ասողկի վկայությամբ՝ «Շիրակում երկրամշակութիւնն այնպէս էր ծաղկած, որ մի դեզ հող բաց, անխնամ չէր մնացած» (Atrpet, 1924, 133): 1064 թ. սելջուկ սուլթան Ալի-Արսլանի ներխուժումից ու Հայաստանի հյուսիսային և կենտրոնական գավառների ավերումից սկսած՝ հարուստ ու մարդաշատ Շիրակը պարբերաբար հայտնվում է ամայության ու աղքատության մեջ: Որոշ հետազոտողների կարծիքով՝ «այն ճոխութիւնը, որ իւր հետքերը թողել է Շիրակում, ցույց է տալիս, որ Ասին ու Շիրակի դաշտը՝ Արևելյան ու Արևմտյան, պիտի ունենար գոնե երկու միլիոն բնակչութիւն, եթե ոչ ավելի: 19-րդ դարավերջին այդ դաշտը 300.000 մարդ չի կարողանում կերակրել» (Atrpet, 1924, 133):

Ատրպետն իր հողվածներից մեկում (1907թ.) գրում է, որ «Շիրակ գաւառի ձորերում, դաշտերում ու լեռներում անթիւ ատերակ առուների ու քանքանների հետքեր կան, որոնք կործանուած են չորս-հինգ դար առաջ: Այս առուները կենդանի ապացոյցն են, հաստատում են, որ մեր գաւառի ամէն կողմը ռոտգւած է եղել և մշակուած» (նկ. 1) (Atrpet, 1907, 1):



Նկ. 1. Կավե խողովակներ Մարմաշեն եկեղեցու տարածքից, 10–11-րդ դդ. (Source: H. Galstyan, R. Hovsepyan)



Նկ. 2. Ախուրյան գետը Կապսի ձորում (Source: H. Galstyan, R. Hovsepyan)

Նյութական մշակույթի մնացորդները վկայում են, որ Արագածի ստորոտները, որոնք այժմ են ընկնում ջրերի առատությամբ ու պարարտ հողով, բնակավայրեր հիմնելու հարմարավետ վայրեր են և հնագույն ժամանակներից բնակեցված են եղել խիտ ազգաբնակչությամբ:

### Շիրակի ջրանցքի կառուցման նախապատմությունն ու ընթացքը

Ոռոգումը հողի բերրիության արհեստական բարձրացման համակարգ է, գյուղատնտեսական արտադրության կարևոր միջոցներից մեկը, դրա ակտիվացման հիմնական նախադրյալը: Ալեքսանդրապոլի գավառը Ռուսաստանին միացնելուց հետո սկսեցին ուղիներ փնտրել տարածաշրջանում ոռոգման խնդիրը լուծելու համար:

19-րդ դարի կեսերից սկսած՝ բազմիցս դրվել է Ախուրյան գետից ջուր հանելու հարցը՝ Շիրակի սարահարթի մոտ 14.000 հա բերրի հողերի ոռոգման համար: 1894 թ. ինժեներ Ագապովը դիմում է նոր կազմակերպված Կովկասի ջրերի տեսուչին՝ խնդրելով իրեն իրավունք տալ վարձակալությամբ ջուր հանել Ախուրյան գետից (Նկ. 2): Ինչպիսիք քննարկվում է և մնում թղթի վրա: 1906 թ. Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը կրկին առաջ է քաշում Ախուրյանի վրա ջրանցքի կառուցման հարցը: Երկար գրազրույթից, հետախուզական ու նախագծման աշխատանքներից հետո 1914թ. հաստատվում է ինժեներ Ս. Ֆ. Զավալիշինի նախագիծն ու կառուցման նախահաշիվը (700.000 ռուբլի, նյութերը և աշխատուժը՝ 1915 թ. սակագներով): Առաջին համաշխարհային պատրազմի պատճառով գործը խափանվում է:

Ծրագիրը վերագործարկվում է միայն 1922 թվականին: Թալանված ու կեղեքված երկիրը ձեռնամուխ է լինում ջրանցքի կառուցմանը: Կարևորելով իշխանությունների դերը և որդեգրած քաղաքա-

կանությունը՝ Գ. Շիրմազանը գրում է. «Միայն նորաստեղծ Սովետական Հայաստանի բանվորագյուղացիական իշխանությունը լուծեց այդ կարևոր խնդիրը: Կարելի է ասել, որ ոչ մի երկրում, ոչ մի ուրիշ ժողովուրդ, ոչ մի ուրիշ իշխանություն չէր կարող առաջ բերել այնպիսի խանդավառություն ու խիզախում, ինչպիսին կենսագործեց մեր քաղցած որբերի ու գաղթականների երկիրը» (Shirmazan, 1962, 66):

Խորհրդային Հայաստանի առաջին ջրաշինարարության աշխատանքային խումբը պետք է լինել կիրթ ու գրագետ ղեկավարների, ուժեղ ու հմուտ վարպետների, արհեստավորների ու բանվորների բանակ: Աշխատանքի կազմակերպման ու ղեկավարման ամբողջ ծանրությունը տանում էր ջրանցքի կառուցման վարչությունը՝ երեք հոգուց բաղկացած. նախագահ՝ Արամ Շահգեղյան, փոխնախագահ՝ Արսեն Եսայան, գլխավոր ինժեներ և շինարարության պետ՝ Հովսեփ Տեր-Աստվածատրյան: Իրենց աշխատանքներով ու ակտիվությամբ այժմ են ընկնում փականագործ Մերգո Գյուլեցյանը, տոհմական քարտաշ-որմադիր Միրզաջան Հովհաննիսյանը (վարպետ Միրզաջանը), ով աշխատել էր նաև Բաքվում, Դոնի շրջանում, Թիֆլիսում, Երևանում, հմուտ հյուսն, որմնադիր ու քարտաշ ուստա Մացակը (Թամրազենց Մացակը), ով մինչև Շիրակի ջրանցքի շինարարությունը մասնակցել էր Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի նոր շենքի, Էջմիածնի նոր վեհարանի և այլ նշանավոր շենքերի կառուցմանը (Shirmazan, 1982, 7):

Շիրջրանցքի վարչության առաջին նախագահ Արամ Շահգեղյանի հաղորդմամբ՝ բազմաթիվ դժվարություններ են հաղթահարվել, մինչև որ աշխատանքներն ավարտին են հասցվել: Ընդհանուր ծախսերը հաշվարկվել են մոտ մեկ միլիոն ռուբլի, և «այդ փողն ստացվում էր մի օր Գործկոմի (Գործադիր կոմիտե) ֆոնդից, մյուս օրը՝ Պարեն բաժնից: Ստացվեցին նվերներ Ժողկոմխորհից (Ժողովրդա-



Նկ.3. Ջրանցույցներ (ակվեդուկներ) Մայիսյան գյուղի տարածքում (Source: H. Galstyan, R. Hovsepyan)

կան կոմիսարների խորհուրդ), ապա Պետքանակից, Յերևանից, Թիֆլիզից, անգամ Աբխազիայից» (Soviet Armenia, 1924, 194, 1.):

Շիրակի ջրանցքը կառուցվեց 1922–1925 թթ. Կապս գյուղի մոտ, ծովի մակերևույթից 1706,7 մ բարձրության վրա: «Ոռոգման ցանցը բաղկացած է գլխավոր մայր ջրանցքից՝ 21 կմ երկարությամբ, որից սկզբնական 2545 գծային մետրն անցնում է երեք թունելներով, շուրջ 74 կմ երկարությամբ բաժանարար առուներից և 168 կմ երկարությամբ ջրա-

հեռատար ցանցից: Մայր ջրանցքը և ամբողջ ցանցը սարքավորված է բազմաթիվ կառուցվածքներով՝ ջրանցույցներ, արագահոսքեր, հեղեղաթողներ, կամուրջներ, շյուզներ և այլն» (Shirmazan, 1962, 67) (նկ.3,4): Բաց հունով հոսելով Շիրակի արգավանդ սարահարթով՝ ջրանցքը թափվում է Կառնուտի ջրամբար (նկ.5):

Նորվեգացի բնեռախույզ, գիտնական, դիվանագետ և ակնավոր հումանիստ, խաղաղության նոբելյան մրցանակակիր Ֆրիտյոֆ Նանսենն, ով


1925թ. Հայաստան էր եկել խոպան հողերի մշակման ու արհեստական ոռոգման հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով, անձամբ ներկա է գտնվել Շիրակի ջրանցքի բացմանը: Իր «Խարված ժողովուրդ» գրքում գրում է. «Ամբարտակի, թունելի և ջրանցքի հետ կապված բոլոր աշխատանքները լավ տպավորություն էին թողել, փորձագետ Դավիդյանը ևս ետ չէր մնում իր գնահատականների մեջ: Նա դրանք որակեց որպես լավ մտահղացում, խելացի նախագիծ և խնամքով գլուխ բերված կառույց: Ամեն ինչից երևում էր, որ արհեստական ոռոգման կուլտուրան այստեղ անցյալ է ունեցել» (Nansen, 2000, 139) (սկ. 6):

Ջրանցքը կրում էր Վ. Ի. Լենինի անունը («1925 թ. հունիսի 21-ի երեկոյան տեղի ունեցավ Խորհրդային Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեի հանդիսավոր նիստը՝ Լենինականի և գավառային ու քաղաքային գործադիր կոմիտեների հետ համատեղ: Այս նիստում որոշում կայացվեց Շիրակի ջրանցքին տալ մեծ Լենինի անունը: 1925 թ. հունիսի 25-ի որոշմամբ կենտգործկոմի նախագահությունը հաստատեց այդ որոշումը» (Shirmazan, 1982, 9): Ժողովրդի մեջ տարածված անվանումներն են Լենջրանցք, Շիրջրանցք, Շիր-Լեն-Ջրանցք, Շիրակի ջրանցք, Շիր կանալ, Կապսի կանալ, կանալ, կանաֆ և այլն: Պաշտոնական գրագրության սկզբնական շրջանում նշվում է Ալկանալ (Ալեքսանդրապոլի կանալ) (National Archives of Armenia [NAA], fund 174, list 1, case 17, sheet 7) տարբերակով:

Չափազանց մեծ էր Շիրակի ջրանցքի տնտեսական նշանակությունը ոչ միայն Շիրակի, մասնավորապես՝ Ախուրյանի տարածաշրջանի, այլև Հայաստանի համար ընդհանրապես: Ջրանցքի գործարկմամբ կանաչապատվում է Լենինականն իր շրջակայքով, ընդլայնվում են հացահատիկի մշակման ծավալները, տարածաշրջանում սկիզբ է դրվում մեզ անծանոթ մշակաբույսի՝ շաքարի ճակնդեղի մշակմանը («Շաքարի ճակնդեղի մշակման և շաքարի պատրաստման փորձ մեզանում եղել է դեռևս 1850–57 թթ., երբ Ներսես Աշտարակեցին Էջմիածնում իր տրակառույց արհեստական լճի տակ մտցրել էր շաքարի ճակնդեղի մշակումը և կառուցել է շաքարի մի փոքր գործարան: Միայն Շիրակի ջրանցքի գործարկմամբ սկսվեց շաքարի ճակնդեղի կանոնավոր մշակումը» (Shirmazan, 1982, 10)): Մարմաշեն եկեղեցական համալիրի շրջակայքում տեղակայված Վահրամաբերդ (Ներքին Ղանլիշա) գյուղը ձորից տեղափոխվում է վերև և հիմնվում Շիրջրանցքի աջ ու ձախ կողմերում, ուր կուլտնտեսությունը սկսում է զբաղվել հիմնականում շաքարի ճակնդեղի մշակմամբ: Ջրանցքը գյուղացիներին ազատելու էր նաև ամենամեծ պատուհասից՝ երաշտից:



Նկ. 4. Ջրանցույցներ (ակվեդուկներ) Մայիսյան գյուղի տարածքում (Source: H. Galstyan, R. Hovsepyan)



Նկ. 5. Շիրակի՝ Լենինի անվան ոռոգման ջրանցքի հատակագիծը Գ. Շիրմազանի «Իրվագներ Հայաստանի ոռոգման պատմությանից» գրքից, Երևան, 1962



Նկ. 6. Թունելի ամրաբարակի շինությունը (1) և Շիրակի ջրանցքի բաց հունը Վահրամաբերդ գյուղից (2) (Source: R. Hovsepyan)



Նկ. 7 (1). Ֆրիտյոֆ Նանսենը Շիրակի ջրանցքը կառուցող շինարարների հետ: (Source: V. Tumasyan)

**Ջրանցքի բացումն ու  
Խորհրդային քարոզչությունը**

Շիրակի ջրանցքը ոռոգման առաջին խոշորագույն համակարգն էր Խորհրդային Հայաստանում: Այն ոռոգելու և բերրի էր դարձնելու մոտ 8000 հեկտար նոր անջրդի հողեր: 1925 թ. մարտի 8-ին ԽՍՀՄ արտգործժողկոմ Գեորգի Չիչերինը և խորհրդային գորահրամանատար Սեմյոն Բուդյոննին պաշտոնատար այլ անձանց ուղեկցությամբ ժամանում են Լենինական և գնում են Շիրջրանցքը տեսնելու: Նրանց պատվին կատարվում է ջրանցքի առաջին փորձարկումը: Հայկենտգործկոմի 3-րդ նստաշրջանի 1924 թ. նոյեմբերի 15-ի երեկոյան նիստում որոշվում է «Լենջրանցքի (Շիրակի ջրանցք) բացումը հարմարեցնել Կենտգործկոմի նստաշրջանի բաց-

ման օրվան (Նախագահ՝ Համբարձումյան, Հայկենտգործկոմի քարտուղար՝ Հ. Տատյան) (NAA, 1924, fund 174, list 1, file 38, sheet 21):

Ջրանցքի բացումը 1925 թ. հունիսի 21-ին էր, որը վերաձվում է համաժողովրդական տոնախմբության (Նկ. 7, 9–11): Բացմանը ներկա էին Անդրֆեդերացիայի, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ղեկավար գործիչներից շատերը՝ Սարգիս Լուկաշինը (ՀԿԿ կենտկոմի քարտուղար, (ՀՄԽՀ) Ժողտնտխորհի նախագահ), Միխայիլ Ցխակայան (Վրացական ՍՍՀ Կենտգործկոմի նախագահության նախագահ, Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի համանախագահ, ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության անդամ), Ֆիլիպ Մախարաձեն (Անդրֆեդերացիայի Պետպլանի, Վրաստանի ժող-



Նկ. 7 (2-10). Դրվագներ Շիրակի ջրանցքի բացման արարողությունից (լուսանկարները՝ Ֆրիտյոֆ Նանսենի)  
 (Source: V. Tumasyan, D.Malkhasyan)

կոմիտրիի, Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի նախագահ), Համիդ Սուլթանովը (Նախիջևանի ժողկոմիտրիի նախագահ) և ուրիշներ: Նանսենն այս օրը համեմատում է Անգլիայի Դերբիի օրվա հետ և նշում, որ վերջին անգամ այսքան ժողովուրդ տեսել էր 1922 թ. Թրակիայում, երբ հույներն ու հայերը թուրքերի ահից թողել էին իրենց տներն ու փախել (Nansen, 2000, 135): Համատարած աղքատության, թշվառության ու ավերակների համայնապատկերի վրա «մի իսկական ժողովրդական զբոսանք էր սա: Բոլոր ճանապարհները լցված էին մարդկանց հետիոտն խմբերով, ուղևորներով ծանրաբեռնված տարբեր կառքերով՝ եզներ կամ ձիեր լծված, գարդարված գույնզգույն ժապավեններով ու տարբեր

գույնի դրոշներով: Բոլորը զվարթ ու տոնական տրամադրության մեջ էին» (Nansen, 2000, 134-135): Պատմում են, որ Նանսենն անընդհատ լուսանկարում էր, իսկ երբ ջուրն առաջին անգամ հոսում է ջրանցքով, շատերի հետ միասին նա ևս ոգևորված այնտեղ է նետում իր լայնեզր գլխարկը (Arzumanyan, 1977, 179):

Շիրակի ջրանցքն առաջինն էր նաև այն իմաստով, որ կառուցվում էր հասարակ գյուղացու և բանվորների ձեռքով, չնայած որ Խորհրդային միությունում ընդունված էր ծանր ու տաժանակիր աշխատանքներն իրականացնել էժանազին աշխատուժի՝ ուղղիչ աշխատանքային գաղութների բանտարկյալների միջոցով:



Նկ. 8. Ջրանցույցների վիմագրերը. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» եռալեզու (հայերեն, վրացերեն, արաբատառ ադրբեջաներեն) հիշատակությամբ (Source: H. Galstyan, R. Hovsepyan)

Սկսած 1920-ականներից՝ Շիրակի ջրանցքը դարձավ Խորհրդային Հայաստանի ամենաարժեքավոր խորհրդանիշն ու խորհրդային քարոզչության հիմնական գործիքներից մեկը (նկ. 8): Այն դարձավ մի զենք, որով «բոլշևիկները խփում» էին իրենց հակառակորդներին: Ժամանակի պարբերական մամուլը հեղեղված էր այս իրադարձությանն առնչվող հրապարակումներով: Տարբեր հեղինակներ Շիրակի ջրանցքը բնութագրում են հետևյալ խոսքերով.

Խորհրդային Հայաստանի ամենաարժանավոր սինվոլ:

Շիր-Լեն-Ջրանցքը աշխատանքի հաղթական կոթող է:

Համառ փաստ է, հզոր արգումենտ:

Մեծ և վերջնական հաղթանակ:

Շիրակի գյուղացիության նոր ծծմայր:

Շիրջրանցքը Մեքքա է:

Տիտանական գործ է՝ ասորա-բաբելական դարաշրջանի հիշեցնող, և այլն:

Ջրանցքը կառուցող բանվորների ու գյուղացիների աշխատանքը բարձր էր դասվում «աստվածային հրաշքներից»՝ ասելով, որ «նույնիսկ Աստվածն ինքն էլ հազար տարի չարչարվեր, չէր կարող ջրանցքի մի սաժեն անգամ փորել» (Chubar, 1925, 41):

Գրական-հասարակական գործիչ Եղիա Չուբարի «Ջրանցքներ» գրքից տեղեկանում ենք, որ Շիրակի ջրանցքի կառուցման մասին տպավորությունների մատյան է եղել՝ «Շիր-ջրանցքի գիրքը» վերնագրով: Մեզ ջհաջողվեց գտնել այդ մատյանը, որն, անշուշտ, կարևոր փաստերով կլրացներ ջրանցքի մասին մինչ այժմ եղած հարուստ նյութը: Սակայն Չուբարի աշխատանքում պահպանվել են բավականին շատ մեջբերումներ Շիր-ջրանցքի գրքից՝ հայերեն, ռուսերեն, վրացերեն, թուրքերեն, լեհերեն, հունարեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով, որոնք, թեև վոր արտահայտություններ դարձած, շրջանառվում էին ժողովրդի մեջ:

Ով չի տեսել Շիրջրանցքը՝ նա չի տեսել Խորհրդային Հայաստանը:

Շիրջրանցքը կբացի հայոց մտքի ջրանցքները: Մեծի (Շիրջրանցքի) մասին փոքր բաներ չեն ասում:

Տպավորությունների մատյանում իրենց հուշերն ու կարծիքները թողած այցելուների անունները համեմատելով հայկական հին վանքերի պատերին փորագրած գրությունների հետ՝ Ե. Չուբարը գրում է, որ «Շիրջրանցքի գիրքը ինքնագիրների, անպետք ազգանունների ու անունների ժողովածու չէ: Շիրջրանցքի գիրքը Խորհրդային Հայաստանի

բանվորների ու գյուղացիների պայքարի ու շինարարության մեծ ազիտատոր է» (Chubar, 1925, 24):

Համատարած գովերգման ֆոնի վրա չի խոսվում շինարարության ընթացքում և դրանից հետո տեղի ունեցած ցավալի կամ ողբերգական իրադարձությունների՝ «շինարարական գոհերի» մասին: 1926 թ. գարնանը՝ թունելների մաքրման աշխատանքների ժամանակ, սառցաբեկորները կոտրելիս ջրի մեծ հոսք է լինում և բանվորների մեծ մասը մնում են ջրի տակ: Միևնույն անունով մի բանվորի օգնությամբ շատերը փրկվում են, իսկ վեց հոգի գոհվում են, երկուսը՝ Կապա (Մեզ չհաջողվեց պարզել կապսեցիները անունները), իսկ չորսը՝ Վահրամաբերդ գյուղերից (Հարությունյան Մինաս (մնացել է փլուզման տակ), Ավոյան Ադասի (Ադո) (մնացել է փլուզման տակ), Մկրտչյան Մկրտիչ (խեղդվել է), Հարությունյան Գարեն (խեղդվել է): Մինչև Խորհրդային միության փլուզումը այս գոհվածների ընտանիքներն ազատված էին խմելու և ոռոգման ջրի հարկերից (Galstyan, 2023, 7):

Ի հակադրություն այս ամենի՝ մամուլում տեղ գտած հրապարակումներից մեկում կարդում ենք հետևյալը. «Մարդկանց վնասվելու դժբախտ դեպքերի քանակի տեսակետից մեր տունները գուցե առաջին տեղը բռնի քչության տեսակետից: Նախ՝ աշխատանքների վայրում ոչ մի մահվան դեպք չի պատահել. Ճիշտ է, եղել է պայթյունից առաջացած միայն մի մահվան դեպք, բայց ոչ աշխատանքի վայրում. Ծանր ջարդվածքներ ստացել են միայն երեք հոգի-մեկի ոտքը և երկուսի թևը: 1200 սաժեն երկարությամբ տուններում այսքան փոքր թիվ դեռ չի արձանագրված տունների փորման պատմության մեջ» (Soviet Armenia, 1924, 194): Շիրակի ջրանցքի և Սպիտակ ծով-Բալթյան ջրանցքի կառուցման ծավալներն, անշուշտ, անհամեմատելի են, սակայն նշենք, որ պաշտոնական տվյալների համաձայն՝ Սպիտակ ծով-Բալթյան ջրանցքի կառուցման ժամանակ մահացել է 12300 բանտարկյալ (ոչ պաշտոնական տվյալներով՝ 50–86 հազար մարդ), ինչը պայմանավորված էր հիմնականում շինարարությունից առաջ ստեղծված արտակարգ իրավիճակներով (<https://ru.wikipedia.org/> [27.02.2024]):

### Շիրակի ջրանցքի կառուցման արտացոլումը գրականության ու բանահյուսության մեջ

Խորհրդային Հայաստանի շինարարական գործունեությունից ամենաշատը գրվել ու խոսվել է Շիրակի ջրանցքի մասին: Այն իր արձագանքը գտավ ժամանակակից գրողների՝ Գ. Մահարու, Ե. Չարենցի, Հ. Հակոբյանի, Ն. Զարյանի, Ստ. Զորյանի, Գ. Սարյանի, Սարմենի, Ատրպետի, Ալազանի, Գ. Աբո-

վի և այլոց գործերում: Հ. Հակոբյանի «Բոլշևիկ է Շիր կանալը» բանաստեղծությունը տարիներ շարունակ հայ գրականության դասագրքերի մեջ ընդգրկվել է որպես պարտադիր ուսուցանվող նյութ (Բանաստեղծությունն առաջին անգամ «Բայշեվիկ է Շիր-կանալը» վերնագրով հրատարակվել է «Մարտակոչ» օրաթերթում (Martakoch, 1924, 2):

Ջրանցքը կառուցող հյուսն, քարտաշ-որմադիր վարպետներից մեկը՝ ուստա Մացակը կամ Թամրազենց Մացակը, բանվորության մեջ հոչակված էր որպես ինքնուս բանաստեղծ: Նա մի բանաստեղծություն է նվիրում Շիրջրանցքի կառուցմանը: Իր «Հարսանիքը Լենջրանցքի» ոտանավորի մեջ Շիրակի ջրանցքը նմանեցնում է փեսացուի, որը Ախուրյանի խոր կիրճից իր կենարար ջրերով գալիս է արգասավորելու մայր հողը՝ Շիրակի արգավանդ դաշտերը (Shirmazan, 1982, 7):

Շիրակի ջրանցքի կառուցումն արտացոլվում է նաև խորհրդային շրջանի քնարական բանահյուսության մեջ: Ստեղծվում են երգեր ու խաղիկներ, որոնք ոգևորությամբ կատարվում էին ամենուրեք, երգվում էին աշխատանքի և ուրախության ժամերին, որպես պարերգեր՝ կատարվում էին պարտներում և հարսանիքների ժամանակ:

#### ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ

Էս աշխարհը մերն է,  
Տաշած քարը մերն է,  
Բանվորի քրտնքով շինած,  
Շիր-կանալը մերն է  
(Galstyan, 2008, 32):

#### ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ

Արփագյուղից սկիզբ առել,  
Դաշտով, ձորով առաջ եկել,  
Ջուր է տվել, ցան արտերին,  
Դաշտի ծարավ ծաղիկներին:  
Հետո մտել է գյուղերը՝  
Կապա, Մարմաշեն, Վահրամաբերդ...  
Ջան, Շիր-կանալ ջան,  
Ջան Սովետական,  
Հեյ ջան 100-ամյա  
Ամահ Շիր-կանալ  
(Galstyan, 2008, 3):

#### ՇԻՐ-ԿԱՆԱԼԸ

Յասաղուլ սարը, Արթիկ տուֆ քարը  
Ճեղքել են լանջերը՝ Շիր-կանալ բացել:  
Ջան, Ալազյազ ջան, ջան Սովետական,  
Հեյ, ջան 21-ամյա Կարմիր Մասկվա:

Մասկվան այսօր կարմիր է հագել,  
Իր ամբողջ աշխարհը լույս է տարածել:  
Արթիկ տուֆ քարը, Յասաղուլ սարը,  
Ճեղքել են լանջերը՝ Շիր կանալ բացել  
(Galstyan, 2008, 33):

Ջան, Ալագյազ ջան, ջան Սովետական,  
Հեյ, ջան 21-ամյա Կարմիր Մասկվա:

Համադրելով Շիրակի ջրանցքի կառուցմանն առնչվող բանահյուսական նյութերը պաշտոնական տվյալների հետ՝ տեսնում ենք, որ որոշ իրապատում գրույցներ բանահյուսական հատկանիշներ են ձեռք բերել, իսկ գրույցների մեծ մասը համապատասխանում են ախիվներում պահվող փաստաթղթային նյութին:

Ըստ պաշտոնական գրագրության՝ ջրանցքի կառուցման աշխատանքներն իրականացվել են երեք հերթափոխով՝ յուրաքանչյուրը ութ ժամ տևողությամբ, և վարձատրվել են ռուբլիով, ճիշտ ժամանակին: Մեր գրառած գրույցներից մեկի համաձայն՝ բանվորները բոլորով են՝ պահանջելով բարձր աշխատավարձ իրենց կատարած տաժանակի աշխատանքի դիմաց: Որոշել են բանվորներին վարձատրել ոսկով: Այս հանգամանքը մեծ ոգևորություն է առաջացրել: Նույնիսկ ծանոթ են «մեջ գցել վերևներում», որ անցնեն աշխատանքի: Մի անգամ հաշվապահը, ով ազգությամբ վրացի էր, ոսկիները բերելիս անհետանում է: Կարծում են, թե կողոպտել են ու սպանել նրան կամ հաշվապահն ինքն է ոսկիները վերցրել ու անհետացել: Մինչև այսօր էլ գարնանը, ջրամբարի մաքրման աշխատանքների ժամանակ, երբ բահով փորում են ձմռան ընթացքում կուտակված աղբը հեռացնելու համար, ղեկավարներն ասում են. «Փորեք, փորեք, բալքին (միգուցե) գտնիք էն չամադանով վրացուն» (Galstyan, 2023, 13):

Հայաստանի ազգային արխիվի «Հայջրտնտեսության վարչության գործում» (NAA, Fund 174, List 1, File 129, Sheet 5.) պահվում է հետևյալ գաղտնի գրությունը՝ ուղղված ՀՄԽՀ ժողկոմխորհին (1928 թ., դեկտեմբեր). «Ջրանցքում աշխատող պարսկական բանվորներին Մեղրու սահմանապահ զորամասն արգելում է Պարսկաստան վերադառնալուց տանել իրենց հետ ստացած ռոճիկները չերվոնեցներով, հայտարարելով, որ պիտի փոխադրել Պետբանկի միջոցով, իսկ Մեղրու պետբանկի բաժանմունքն էլ մեզ անհայտ պատճառներով հրաժարվում է փոխադրելուց: Ուստի խնդրում ենք թույլ տալ իրենց հետ տանելու դրամները չերվոնեցներով, կամ թույլ տալ Պետբանկին՝ փոխադրելու (Վարչության պետ՝ Այվազյան, գաղտնի մասի վարիչ՝ Կակոյան): Մույն փաստաթուղթը հիմնավորում է, որ, իրապես, Շիրակի ջրանցքի բանվորներին վարձատրել են ոսկեդրամներով՝ չերվոնեցներով (Հին Ռուսաստանում՝ հինգ կամ տասը ռուբլիանոց ոսկեդրամ (Malkhaseants 1945, 21)), ինչի մասին խոսվում է վերոբերյալ գրույցում:

Խորհրդային հայ ինժեներ-շինարար Գրիգորի Շիրմազանը, խոսելով ջրանցքի շինարարական

գործընթացների մասին, գրում է. «Ալեքսեյ Յակիմովը ղեկավարում էր ամենապատասխանատու աշխատանքները՝ պատվարի կառուցումն ու թունելների անցկացումը: Նրա հմտության շնորհիվ երեք թունելների հանդիպումները, որոնք փորվում էին մի քանի տեղից, կատարվեցին մեծ ճշտությամբ, անսխալ» (Shirmazan, 1962, 71): Այս փաստը հակադրվում է մեր գրառած գրույցի բովանդակությանը, ըստ որի՝ ինժեները հաշվարկների մեջ սխալվել է, և բանվորները հանդիպակաց փորելով՝ իրար չեն հանդիպել: Այս ամենը տեսնելով՝ ինժեներն ամոթից ինքնասպան է եղել (Galstyan, 2023, 14): Կարելի է ասել, որ Շիրակի ջրանցքին առնչվող որոշ իրապատում գրույցներ բանահյուսական հատկանիշներ են ձեռք բերել, իսկ գրույցների մեծ մասը համապատասխանում են ախիվներում պահվող փաստաթղթային նյութին:

### Եզրակացություններ

Շիրակի ջրանցքի կառուցումն աննախադեպ երևույթ էր ոչ միայն հարյուրամյակների ընթացքում կեղեքված ու ամայացած Հայաստանի, այլև նորաստեղծ Խորհրդային միության համար: Այս կառույցով հիմք դրվեց Խորհրդային Հայաստանի արհեստական ռոտզման համակարգի ձևավորմանը, ինչն էլ նպաստեց երկրագործական մշակույթի զարգացմանը:

Ջրանցքի կառուցմամբ պայմանավորված՝ լուծվեցին որոշ էկոլոգիական խնդիրներ, որոնցից առաջնահերթը Լենինական քաղաքի և հարակից տարածքների կանաչապատումն էր ու անտառաշերտերի ստեղծումը:

Ի տարբերություն ԽՍՀՄ-ում կառուցվող այլ ջրանցքների, որոնց շինարարությունն իրականացնում էին բանտարկյալներն ու գերեվարվածները, Շիրակի ջրանցքը կառուցվեց բանվորների ու գյուղացիների միասնականության և համերաշխ աշխատանքի շնորհիվ:

Ջրանցքի կառուցումը դարձավ Խորհրդային քարոզչության գործիք, ամենաքննարկվող և գովաբանվող իրողությունը 1922–1925 թթ. և դրանից հետո:

Շիրակի ջրանցքի կառուցումն իր լայն արձագանքը գտավ ոչ միայն գեղարվեստական գրականության, այլև բանահյուսության մեջ: Մույն հողվածում առաջին անգամ փորձ է արվում համադրել Շիրակի ջրանցքին առնչվող բանահյուսական նյութը արխիվային նյութի հետ: Արդյունքում տեսնում ենք, որ որոշ իրապատում գրույցներ բանահյուսական հատկանիշներ են ձեռք բերել, իսկ գրույցների մեծ մասը համապատասխանում են ախիվային փաստաթղթերին:

## Նշումներ և շնորհակալություններ

Հողվածը հրատարակվում է ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող՝ «Ջրօգտագործման մշակույթը հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (21AG-6A080 ծածկագրով) ծրագրի շրջանակներում: Սույն հետազոտության համար անհրաժեշտ բանագիտական, ազգագրական և արխիվային նյութերի հավաքման գործին մեծապես աջակցելու համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում «Գյումրի ՀԷԿ»-ի հերթափոխի պետ Ջորի Էլբակյանին, ում անվերապահ օգնության արդյունքում նյութը դարձավ առավել հարուստ ու հագեցած: Դաշտային հետազոտական աշխատանքներին մասնակցել է նաև ծրագրի ղեկավար Ռոման Հովսեփյանը:

## Acknowledgments

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of the Republic of Armenia (Research project № 21AG-6A080) entitled “Culture of water use in the Armenian Highland from antiquity to present days”. We express our deep gratitude to Zori Elbakyan, the head of the shift of “Gyumri HPP” for greatly supporting the collection of scientific, ethnographic and archival materials necessary for this research, as a result of whose unconditional help, the material became richer and fuller. Project leader Roman Hovsepyan also participated in the field research work.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- Arzumanyan, M. V. (1977). *Nansen and Armenia*. Hayastan (in Armenian).
- Atrpet (1907). The future of Alexandropol. *Akhurian* (literary daily), 5, 1 (in Armenian).
- Atrpet (1924). The Shirak Canal. Survey. *Handes Amsoorea*, 3-4 (in Armenian).
- Chubar, Ye. G. (1925). Canals (in Armenian).

- Galstyan, H. (2007). *Field folklore and ethnographic materials*. Shirak, Vahramaberd, sheet 25 (in Armenian).
- Galstyan, H. (2008). *Field folklore and ethnographic materials*. Shirak, Vahramaberd, sheet 32 (in Armenian).
- Galstyan, H. (2023). *Field folklore and ethnographic materials*. Shirak, Vahramaberd, Lenges, sheet 3, 13, 14 (in Armenian).
- Khorenatsi, M. (1968). *History of the Armenians*. Hayastan (in Armenian).
- Malkhaseants, St. (1945). *Armenian Explanatory Dictionary* (vol. 4). Academy of Sciences of Armenian SSR (in Armenian).
- How did we start (1924, August 24) Interview with the first chairman of the Shir Canal Department Aram Shahgeldyan. *Soviet Armenia*, 194, 1 (in Armenian).
- Without author. (1924). Martakoch, 29 November, 274 (529), 2, (in Armenian)
- Nansen, F. (2000). *Deceived People, Research Trip of the High Commissioner of the Commonwealth of Nations to Georgia and Armenia* (E. Makaryan, German translation). YSU (in Armenian).
- National Archives of Armenia (NAA), (1921-1938). Fund 112, list 1, File 163, 164, 165 (in Armenian).
- National Archives of Armenia (NAA). (1923-1924). *Department of Water Management under the Council of People's Commissars of the SSR of Armenia, Materials for the construction of the Alekpol irrigation canal*. Fund 174, list 1, case 17, sheet 7. (in Russian).
- National Archives of Armenia. (1924). *About the construction of Leninakan Shirkanal*. Fund 174, list 1, File 38, Sheet 21 (in Armenian).
- National Archives of Armenia. (1928). *Department of Water Management*. Fund 174, list 1, file 129, sheet 5. (in Armenian).
- Saghumyan, S. T. (1998). *Marmashen Monastery*. St. Etchmiadzin (in Armenian).
- Shirmazan, G. V. (1962). *Episodes from the history of irrigation in Armenia*. Haypetgyughrat (in Armenian).
- Shirmazan, G. V. (1982). *The Shirak Canal named after Lenin (on the occasion of the 35th anniversary of the opening of the canal and the 40th anniversary of the Sovietization of Armenia)*. National Archives of Armenia, Fund 810, list 1, File 32, Sheet 7 (in Armenian).
- Yeghiazaryan, H. S. (1975). *Historical monuments of the Shirak mountain valley*. Hayastan (in Armenian).



# PAST AND PRESENT IRRIGATION OPPORTUNITIES IN KESSAB DISTRICT

*Hagop Tcholakian*

*Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia*

## Abstract

In the Kessab region, the arable lands and gardens were not irrigated, in difference to vegetable gardens and nurseries. Spring water and rainwater were collected in various basins and from there they were distributed through streams opened on earth, stone and logs. Many did not have vegetable gardens. Some vegetables were grown in pots placed in the yard and irrigation water was brought by the shoulder.

In the 1970s, electricity became available, which fundamentally changed the possibilities of water use and irrigation. Apple and peach orchards also began to be irrigated. The villager opened artesian wells through his own resources, built his own reservoirs on his land or procured irrigation water for his gardens and vegetable gardens with large cisterns. Now the method of drip irrigation is spreading.

**Keywords:** waterless cultures, irrigated cultures, irrigation facilities, basin, well, stream, nursery, garden, mill, new opportunities.

## ՔԵՍԱԿԻ ՇՐՋԱՆԻ ՈՌՈԳՄԱՆ ՆԱԽԿԻՆ ԵՒ ԱՐԴԻ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Յակոբ Չոլաքեան*

*ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

## Ամփոփագիր

Քեսապի շրջանին մէջ ցանքերն ու պարտէզները եղած են անջրդի: Ջրարբի փոքրիկ տարածութիւնները եղած են բանջարանոցներն ու սածիլանոցները: Աղբիւրի և անձրևային ջուրերը հաւաքուած են տարատեսակ աւազաններու մէջ և անկէ՝ հողէ, քարէ և գերաններու վրայ բացուած առուններով բաշխուած են: Շատեր բանջարանոցային գետիներ չունէին: Որոշ բանջարեղէններ կը մշակէին բակին մէջ զետեղուած ամաններու մէջ, ռոտգման ջուրը ուսով կը բերէին:

1970-ական թուականներուն ելեկտրականութիւն եկաւ, որ հիմնովին փոխեց ջրօգտագործման և ռոտգման հնարաւորութիւնները: Խնձորի և դեղձի պարտէզներն ալ սկսան ջրարբի ըլլալ: Գիւղացին իր միջոցներով արթնգետան ջրհորներ բացաւ, իր հողին մէջ սեփական ջրամբարներ (սասո) կառուցեց կամ մեծ ջրատարներով ռոտգման ջուր հայթայթեց իր պարտէզներուն և բանջարանոցներուն: Այժմ կը տարածուի կաթիլային ռոտգման եղանակը:

**Հիմնաբառեր.** անջրդի մշակութիւններ, ջրարբի մշակութիւններ, ռոտգման միջոցներ, աւազան, ջրհոր, առուն, սածիլանոց, բանջարանոց, ջրաղաց, նորագոյն հնարաւորութիւններ:

## Ներածութիւն

Քեսապը 1939-ի Աղեքսանդրէթի սանճաքի Թուրքիոյ կցումէն ետք Սուրիոյ Լաթաքիոյ նահանգին մէջ 12 հայաբնակ գիւղերու սահմանամերձ լեռնային շրջան է: Շրջանի բնակչութեան գլխաւոր զբաղումներն էին հողագործութիւնն ու անասնապահութիւնը: Հողի եւ ռոտգման ջուրի օգտագործման եղանակները հոն դարերով եղած են նոյնը եւ նոյնութեամբ տեսած են մինչև 1960-ական թուականները, երբ կամաց-կամաց հիմնովին կը փոխուին հողի օգտագործման, մշակութեան եւ ռոտգ-

ման հնարաւորութիւնները:

Սոյն յօդուածին մէջ ներկայացուած են Քեսապի շրջանի ջուրի պաշարները, անջրդի եւ ջրարբի մշակութիւններն ու ռոտգման նախկին եղանակները եւ հնարաւորութիւններու ընդլայնումը 1970-ական թուականներէն ետք: Յօդուածը նոր խօսք է այդ պատմական ու ապրող հայ գաւառակին ազգագրական պատկերը ամբողջացնելու տեսակետէն:

Քեսապի հայոց նուիրուած տպագիր նիւթերը հպանցիկ ակնարկութիւններ ունին ընդհանրապէս հողի մշակութեան եւ ռոտգման կերպերուն մասին:

Պատմ-ազգագրական բնոյթի գործերը չեն անդրա-  
դարձած անոնց (Album, 1955; Temirian, 1956; Abe-  
lian, 2002.), իսկ գիտագրական գեղարուեստական  
գործերուն մէջ կարելի է հանդիպիլ այդպիսի նիւթե-  
րու (Abelian, 1968; Pajagian 2002) :

Մեր հիմնական աղբիւրները եղած են անջրդի  
եւ ջրարբի մշակութիւններուն, ջուրի պաշարներուն,  
տեղանքին եւ աշխատանքի կերպերուն, ռոտզման  
միջոցներուն եւ եղանակներուն ուսումնասիրու-  
թեան իմ դիտարկումներն ու դաշտային հետազո-  
տութիւնները, որոնք մասամբ մէկտեղուած են Քե-  
սային նուիրուած իմ նախկին աշխատասիրութիւն-  
ներուն մէջ (Cholakian, 1995-1, “Economy” chapter,  
151-221; Cholakian, 2020) :

Իմ տեղոյն վրայ կատարած դաշտային աշ-  
խատանքները կը շարունակեմ գրեթէ ամեն տարի:  
Յօդուածը կ'ամփոփէ այդ տուեալները:

### Ջուրի պաշարները

Քեսայի շրջանին մէջ ձմռան, մանաւանդ Յու-  
նուարէն Մարտ ամիսներուն միջերկրականեան յոր-  
դառատ ու երկարատեւ անձրեւներուն հետեւանքով  
ձորերը կը դորդան ահատր ու կործանարար հեղեղ-  
ներէն, ջրվէժները կը գահավիժին բարձունքներէն,  
ճամբաները քարուքանդ կ'ըլլան: Ամէն պատի տա-  
կէն աղբիւր մը կը բխի, որոնց տեղացին կու տայ  
խիվէօկ՝ խեուկ անունը: Այս եղանակային ակերը  
կը սրբեն կը տանին հողը, կ'այլանդակեն գիւղացիի  
արտին մակերեսը, աշնանացանի եւ գարնանացա-  
նի արտերը կ'ողողեն ցեխով՝ մելով, ատոր համար  
ալ գիւղացին ամռան այս տեղերուն եզրին առուներ  
կը բանայ կամ պիէլ՝ պել կը շինէ: Պելը մարդահա-  
սակ խորութեամբ ու շուրջ մէկ մետր լայնքով անցք  
է, որուն կէտը կը լեցնէ մանր ու միջակ քարերով ու  
կը ծածկէ հողով: Ասիկա ձմեռնային ակերու համար  
գաղտնի ջրանցոյց է: Ատոր ծայրը կը բացուի ար-  
տին մէկ կողմը, ձմեռնային առուներու կողմը: Անձ-  
րեուտ եղանակին քեսայցին պարտաւոր է միշտ  
զգոյշ մնալ, որպէսզի հաւանական հեղեղէ մը  
պաշտպանէ իր արտը, ճամբան եւ տունը: Գրեթէ  
անկարելի է տեղումներու հետեւանքով գետնա-  
սահքին եւ մեծ փլուզումներուն առաջքը առնել:  
Գետնասահքը աղէտի կը վերածուի, երբ կ'ըլլայ  
արագ ու կարճ ժամանակի մը ընթացքին անճանա-  
չելի կը դարձնէ տարածութիւն մը՝ սահանքի միջո-  
ցին կու տալով պարտէզներն ու տուները եւ երբեմն  
խլելով մարդկային զոհեր: Վերջին հարիւրամեա-  
կին քանի մը մեծ ու յանկարծակի սահանքներ կը  
պատահին: Գարատուրան գիւղին մէջ առաջինին,  
որ ժողովուրդը կը յիշէ Ճանիկուն սելը (Ճանոյին հե-  
ղեղը) անունով, կը կործանէ Վարի Թիթիգեան թա-  
ղին մէկ մասը, իսկ երկրորդին՝ Վերի Թիթիգեան

թաղը կը տուժէ: Տուներ ու բազմաթիւ պարտէզներ  
անհետ կը կորսուին լեռան բարձրադիր մէկ լանջէն  
սկսած սահանքին, որ տակն ու վրայ կ'ընէ ձորը իր  
ամբողջ լայնքով: Կ'ըլլան զոհեր:

1942 Յունուար 23-ին գետնասահքի հետեւան-  
քով ամբողջովին կը կործանին Գարատուրանի  
Գագագեան թաղը, Ղագարեան, Պոշնակեան եւ  
Կէօքճեան թաղերուն մէկ մասը, Գարատուրանի Ս.  
Աստուածածին եկեղեցին ու երկու դպրոց (“Hask”  
magazine, 1942, 27-28; “Hask” magazine, 1942, 122;  
Hask Magazine, 1944, 102-103): 1998 Մարտ 23ին տե-  
ղի ունեցած մեծ սահանք մը կը կործանէ նախկին  
Եարպեան թաղէն մինչեւ Սաղտճեան թաղի տա-  
րածքը: Կը տուժեն 18 ընտանիքներ:

Շրջանին մէջ այլ վայրեր ալ ենթակայ են սա-  
հանքի վտանգին: 1944ին Քեսայի մէջ կեղրոնա-  
կան թաղէն մեծ զանգուած մը փրթելով լեռան ստո-  
րոտէն կը թաւալի դարվար՝ կործանելով քանի մը  
տասնեակ տուներ: Այսօր այդ մասը փոս դիրք մը  
ունի ու շինարարութեան համար պիտանի չէ:

Սահանքի ենթարկուած այս վայրերը քեսայ-  
ցին խաղցուած կը կոչէ, այսինքն՝ խաղցած, շարժած  
գետին. սահանքը մաղի պէս կու տուած կ'ըլլայ հո-  
ղը, ատոր համար ալ խաղցած գետինները, որքան  
ալ մշակելի դարձնելու ճիգ եւ աշխատանք թափուի.  
ափաշափ խճաքարերով լեցուն կ'ըլլայ, այդ հողերը  
կը կոչուին շագշագ: Գիւղացին նոյն վայրին մէջ նոր  
արտ բանալու ծանր աշխատանքին լծուած է միշտ:

Հեղեղներն ալ երբեմն աղէտաբեր եղած են:  
Ձմեռնային գետահուները (խէ՛ստուօկ՝ խանտակ)  
յորդած են ու իրենց կլափին մէջ առած եզերքի  
պարտէզները՝ պատերով, ծառերով ու հողով: Հեղե-  
ղը միայն այս վերջին յիսնամեակին քանի մը ան-  
գամ կոխած է Քեսայը: Կասիոսի բարձրադիր լան-  
ջերէն հոսող ձմեռնային ջուրերը կ'անցնին Քեսա-  
յի կեղրոնէն: Մեծ հեղեղները քանդեցին քարաշէն  
մեծ կամուրջը, գետը եզերող պարիսպը եւ շարք մը  
խանութներ ու տուներ: Գարատուրանի Սաղտճեան  
թաղը (այժմ լքուած) ամէն ձմեռ ապրած է հեղեղին  
տակ մնալու վախը: Ձմեռնային գետերը կարճատեւ  
շրջան մը անանցանելի կ'ըլլային:

Վերջին յորդառատ անձրեւները սովորաբար  
կը պատահին Մայիսին: Կը պատահի, որ Մարտէն  
ետք ալ անձրեւները դադրին: Անկէ ետք գետերը ամ-  
բողջութեամբ կը ցամքին, ձմեռնային գետերուն հու-  
ները կ'երեւին իրենց լերկութեամբ: Պատերուն տա-  
կէն ժայթքող աղբիւրները՝ խեուկները, շուտով  
կ'անհետին, կը ցամքին, երբ սպառին անձրեւաջուրի  
մակերեսային ամբարները: Հողը կը սկսի ծարաւէն  
ճաթօտիլ: Աղբիւրները կամաց-կամաց կը սմքին, կը  
նիհարնան ու շատեր երբեմն ամբողջապէս կը ցամ-  
քին: Ջուրի տագնապը կը սկսի: Ասկէ ետք մինչեւ ուշ

աշուն քեսապցիին գլխատր հոգը կում մը ջուրը կը դառնար, որ կը գտնէր ահատր դժուարութեամբ:

Ջուրը կեանք է, ու ծարաւ մարդուն գաւաթ մը ջուր տուողին մատները ամէն օրհնութեան արժանի են: Քեսապի ժողովրդային «Ախ ջէօր մը» պարերգը այդպիսի օրհնութիւն մըն է.

Ախ, ջէօր մը, եանա եանա,  
Պուօղ ջէօր մը, եանա եանա,  
Ինծիկ ջէօր մը տըվուղէն  
Տումին ալէք մէտէօնքը,  
Օ՛ֆ, օյ օյ պուօղ ջէօր մը:  
Ախ ջուր մը, եանա-եանա,  
Պաղ ջուր մը, եանա-եանա,  
Ինծի ջուր մը տուողին  
Ապրին բոլոր մատները,  
Օ՛ֆ, օյ օյ պաղ ջուր մը:

Բոլոր գիւղացիները օղագուշակներ կը դառնային այս շրջանին: Լուսնի ձեւէն, լուսնի փուկերէն, հովի փչած կողմէն, ամպերու դիրքէն, ծովէն, կենդանիներու կարգ մը շարժումներէն կը կոահէին, թէ ինչպէս պիտի ըլլայ եղանակը՝ չոր արեւելեան, կակուղ արեւմտեան, անձրեային, ցօղառան եւ այլն: Չոր եղանակներուն երաշտէ կը վախցուէր. ատոր համար անձրեաբեր աղօթքներ կը կատարուէին եկեղեցիներուն մէջ, մանուկները չէօմչա կէլին (ծակոտկէն շերեփով հարսը) կը խաղցնէին ու աղբիւր կ'երթային գայն ջուրին յանձնելու համար: Չէօմչա կէլինը կանացի կերպարանքով խրտուիլակ է, ձեռքին ծակոտկէն շերեփ մը, որ տեղացող անձրելը կը խորհրդանշէ: Կը հաւատային, որ անձրելը պիտի չուշանայ: Կը պատահէր, որ թերեւ անձրեւներ պատահէին երբեմն, քիչ պարբերականութեամբ (Cholokian, 2023, 91-92) :

Քեսապցին մինչեւ 1960ական թուականները ջուրը հայթայթած է գլխատրաբար վտակներէ, աղբիւրներէ, հորերէ եւ ջրամբարներէ:

**Ա. Վտակները:** Ամբողջ շրջանին մէջ միայն երկու մշտահոս վտակներ կան՝ Տուգաղաճի եւ Կիւնկիրայի վտակները: Առաջինը կը գոյանայ Չինարճըգի, Չագալճըգի եւ Քէօրքիւնէի ակերէն, կը կոչուի Գուրաշէ, որ քիչ անդին դուրս կ'ելլէ շրջանի արեւելեան սահմաններէն: Տարուան որոշ եղանակներուն մանր ձուկերու վտառներ կը բարձրանային մինչեւ վտակին ակունքները: Անոր վրայ կը բանէին քանի մը ջրաղացներ:

Շրջանի արեւմտեան սահմանը՝ Լըղըջէօր (Լեղի ջուր) կոչուող հարթավայրէն մինչեւ ծովամերձ Ֆագը Հասան եւ Պետրուսիէ գիւղերը, նոյնպէս ջրառատ է: Լըղըջէօրը պատկանած է Սաստէ աւատատէր յոյն գերդաստանին: Անոնց կալուածներուն մէջ քեսապցիք քառորդով աշխատած են, բայց հոն կալուածներ գրեթէ չեն ունեցած: Ջրառատ է Պոխուլտարա (Մեղրաձոր) նեղ ձորը: Մեղրաձորը



Նկ. 1. Դէպի ալլուօր՝ գաղտնի ջրանցոյց տանող նայակին առուի մը պատը

խմբային պտոյտներու յարմար ու սիրելի վայր մը եղած է միշտ: Տեղոյն ջուրերը օգտագործուած են միայն ոռոգումի նպատակով, նեղ կիրճին շատ սեղմ պարտէզներուն համար:

Այս երկու վտակները, շուտով շրջանէն դուրս ելլելով, քիչ գործածուած են ոռոգման նպատակներով: Քեսապցին կ'ըսէ. «Թուրքը ակին կողքին ետուր կը գարնէ, հայը՝ լեռան վրայ»:

**Բ. Աղբիւրները:** Շրջանին մէջ կան ընդամէնը քանի մը յայտնի աղբիւրներ, որոնց համար դժուար թէ կարելի ըլլայ յորդաբուխ ըսել: Շատ ակեր Օգոստոս ամսուն մատ մը ջուր կ'ունենան կամ բոլորովին կը ցամքին:

Չինարճըգ, Քէօրքիւնէ եւ Էքիգօլուք գիւղերուն առջեւ ձգուող ձորերուն մէջ՝ մինչեւ Տուգաղաճի հարթավայրը, եղած են քանի մը ջրաղացներ: Ասոնք գործած են գլխատրաբար ջրառատ եղանակներուն: Աղբիւրներու ջուրերը ամբարտած են հսկայ աւազաններու մէջ: Չինարի մէջ կիսաւեր վի-

ճակով պահպանուած այսպիսի ջրաղացին համար կառուցուած է հսկայ պարիսպ, որուն վրայ կառուցուած քարէ առուով աւազանի ջուրը եկած հասած է ալլուօր. սա իրարու ագուցուած քարէ կլոր ագուզաներով կազմուած ջրանցոյց է մինչեւ փոսի ջրաղացը, շուրջ 30 մեթր վար (նկ.1) : Ջրաղացները կ'աշխատէին միայն աւազանները լեցուն ըլլալու պարագային: Ագուզաները ուրիշ տեղ կ'ըլլային քառակուսի՝ քառակուսի փորուածքով:

Իբրեւ շինուածք՝ աղբիւրները կ'ըլլային.

**ա) Գուր (կէօփ):** Գուրը առաւելագոյնը կէս մեթր խորութեամբ բացուած փոս մըն է, ուր կը հաւաքուի տեղոյն չափազանց տկար ջուրը: Գուրերու ջուրը կ'օգտագործէին գարնանային տնկումներու, վաղահաս ածուի, հովիւներուն եւ հօտին ըմպելի ջուր հայթայթելու նպատակով: Ոմանք կը ցամքին Յունիսին: Բոլոր գիւղերու շրջապատին մէջ կարելի էր գտնել այսպիսի մանր գուրեր:

Գուրի ջուրը կ'առնէին ամանը մէջը «մխել»ով եւ զգոյշ կ'ըլլային, որ չպղտորի: Հաւաքուած ջուրը սպառելով՝ կ'ընէին. «Կէօփը պուղուօծ ի» (գուրը պեղած է), այսինքն՝ պարպուած է ու կը սպասէին ժամեր, երբեմն օր, որ կրկին լեցուէր: Անոր մաքրութեան հոգ կը տանէին, պատերը կը ծեփէին ցելսով, որ ջուր չփախցնէր: Ըմպելի ջուր ունենալու համար երբեմն փշոտ թուփով մը կը ծածկէին, որ անասունները չաղտոտեն:

Կարծիք կար, թէ գուրերը պէտք չէ շատ փորել, խորունկցնել կամ ակը փնտռել, որովհետեւ այդ աշխատանքի ընթացքին այդ կաթ մը ջուրն ալ կրնար չքանայ, բոլորովին կորսուի:

Գուր աղբիւրներ կը բացուէին նաեւ գետնասահքի ենթարկուած գետիններուն մէջ: Այսպիսի վայրերու մէջ ակերը վստահելի չեն ու ամէն տարի գետնասահքի ենթարկուելով կը չքանան, կը ցրուին կամ տեղ կը փոխեն: Ջուրին երեւցած տեղը նոր գուր կը բանային, իսկ եթէ տեղանքը յարմար է՝ ջրդոն մը կը դնէին երեւցող ակին բերանը:

**բ) Գետահունի աղբիւրները:** Ձմեռնային հեղեղներուն բացած գետահունները շրջապատի համեմատ երբեմն չափազանց մեծ խորութիւններ ունին: Հոս ու հոն գտնուող աղբերակները կրնային թաղուիլ հեղեղներու բերած քար ու խիճին տակ: Գիւղացիները ուշ գարնան կ'իջնեն գետահունին մէջ ու լայնքին փորելով-փորփորելով կը պեղեն ակը ու անոր ցրուած ջուրերը առուի մը մէջ հաւաքելով՝ կը բերեն գետահունի մէկ անկիւնը, բերանը ջրդոն մը կը դնեն: Առուն կը ծածկեն տափակ քարերով: Ձմռան հեղեղները կրնան փոխել ակին տեղը, իսկ բոլորովին մանր ակերը կրնան թաղուիլ քարերու եւ խիճի հսկայ ալիքի մը տակ՝ ուրիշ հեղեղի մը կրկին լոյս աշխարհ գալու համար:

**գ) Մնայուն շինուածք ունեցող աղբիւրները:**

Ասոնք երկու խումբի կը բաժնուին: Առաջինները հազարամեակներու պատմութիւն ունին ու Գապ կը կոչուին: Ասոնք կան Գարատուրանի մէջ գտնուող երկու հնավայրերու կից, ուր թէեւ հնագիտական պեղումներ չեն կատարուած, բայց հողի աշխատանքներու ընթացքին երեւան ելած կարասային թաղումներ եւ կաւեղէն այլ իրեր ցոյց կու տան անոնց հնութիւնը: Առաջինը կը գտնուի Գարատուրան գիւղի ծովափին մէջ հին բնակավայրի մը հիւսիսարեւմտեան անկիւնը; Ան կը ներկայացնէ թիկունքէն ամբողջապէս գետնափոր եւ կրաշաղախով պատուած քառակուսի սենեակ մը, որուն պատերուն տակէն ակի ջուրերը կը հոսին ու ճակատային մասին վրայ գտնուող մուտքէն վար ջրդոնէն դուրս կ'ելլեն: Կառոյցի ճակատային պատի վերին բաժինը արդէն չկայ, չկայ նաեւ ծածկը, որ կողմնակի պատերու շարուածքին նայելով՝ ունեցած է քարէ կլոր ձեւ. այդպիսի տանիք մը պահպանուած է հնավայրի հարաւարեւելեան պարիսպին անկիւնը գտնուող Ս. Գէորգ կոչուող սրբավայրին կից: Նման կառոյց մը ունէր նաեւ Մանճիկեան-Գալեմտէրեան թաղերու Գապը, որուն ետին բացուած ջրհորի մը պատճառով աղբիւրը ցամքած է ու այժմ ամբողջապէս քանդուած: Գապ բառը պարսկերէնի մէջ ունի տուփ իմաստը, թրքերէն փոխառութեան մէջ ունի աման իմաստը. բառը ծագումնաբանական աղերս մը ունի հայերէն գաւաթ բառին հետ:

Մնայուն շինուածք ունեցող միւս աղբիւրները երկու տեսակ են. առաջինը սովորական պատ մըն է, ուր տեղադրուած է ջրդոնը (ուլուօկ) եւ առաջամասին՝ գուրը (գօռ): Շատ են այսպիսիները: Միւսները ունին խորանաձեւ հսկայ կառոյց՝ երբեմն ամբողջապէս պատուած սրբատաշ քարերով: Ասոնք ունին շուրջ 1.5–2 մեթր ստորին լայնք: Մէջտեղը դրուած կ'ըլլար քարէ ջրդոնը, իսկ անոր մէկ կողմը՝ աղբիւրի մնայուն ջրամանին խորշը (պէտրհուն): Կամարին տակ սրբատաշ քարի մը, իսկ երբեմն մարմարէ սալի մը վրայ կը փորագրէին խաչ ու արձանագրութիւն մը: Գուրը երբեմն ուղղակի շարուած կ'ըլլար աղբիւրին հետ: Կարգ մը աղբիւրներ ունէին փայտէ կամ քարէ գուտեր: Գուտին երկու կողմերը կը գետեղէին քարէ նստատեղիներ, ուր գիւղացին նստելով կուժը կը բռնէ ջրդոնին տակ: Այդպիսի գեղեցիկ կառոյց ունէր Ներքի Գիւղի (Էսկիւրէն) աղբիւրը: Անոր ճակատին ագուցուած էր քովի սրբավայրէն պեղուած ԺԵ.ԺԶ. դարերու հայկական փոքրիկ խաչքար մը: Հիմնովին վերանորոգուած է: Նոյնքան գեղեցիկ է Գարատուրան գիւղի Մանճիկեան թաղի ցամքած աղբիւրը (նկ.2), Էքիզօլուքի աղբիւրին նախկին կառոյցը, Քէօրքիւնէի աղբիւրը: Նման կառոյցներ ունեցած են Թեքնեճոքի եւ Քունաճլէքի աղբիւրները:



Նկ. 2. Աղբիւրի կառոյց, ցամբած, Գաբրատուրան

Ոմանց ակը կը գտնուի ստորգետնեայ քարապատ խորշի մը մէջ: Բուն ակը գտնելու համար նախ բացուած է խորունկ խրամատ մը, մինչեւ որ ակը գտնուած է ամուր գետնի մը մէջ կամ ժայռի մը տակ, սպա պատուած, տանիքը ծածկուած է սալքարերով ու թաղուած: Տարին մէկ-երկու անգամ գիւղացի մը ներս սողալով կը մաքրէ առուն: Եարալեան թաղի աղբիւրը ունէր շուրջ 10 մէթր խորութեամբ խորշ մը: 1998-ի սահանքին ջուրը անհետ կորսուեցաւ:

Աղբիւրները ընդհանրապէս կ'ունենան ընդարձակ հրապարակներ: Ասոնց մօտիկ կը գտնուէր մոխրանոցը (մախըրնոց), ուր կիները ամրան օրերուն լուացք ու լոգանք կ'ընէին աղբիւրին առջեւ, սահմանուած օրերուն:

**Գ. Ջրհորները:** Ջուրի մատակարարման երկրորդ գլխաւոր տեղը ջրհորն է: Անձնական ջրհորներէն բացի կային ամբողջ թաղին կամ գերդաստանի ընտանիքներուն պատկանող ջրհորներ: Ասոնք հասարակաց սեփականութիւն էին: Զուակներուն կալուածներ կտակող հայրը ջրհորը բոլորին կը ձգէր:

Ջրհոր բանալու համար նախ անհրաժեշտ էր որոշել տեղը: Գետինը պէտք չէ գետնասահքի ենթարկուած կամ նման վտանգի մը ենթակայ եղած ըլլար: Գետնասահքի ենթարկուած հողը ջուր չի պահեր: Ժայռոտ գետինը ջրհոր բանալու գործողութիւնը կը դժուարացնէ կամ բոլորովին կը խափանէ: Տեղանքը լաւապէս ճանչնալ հարկաւոր է: Ամենէն կարեւորը՝ պէտք էր յուսալ, որ որոշեալ տեղը ստորգետնեայ ակ կայ: Որոշ նշաններ յոյս կը ներշնչեն, ինչպէս՝ ծառին արտակարգ աճը, բոյսերուն փարթամութիւնը, հողին տեսակը: Պէտք չէ խաբուիլ երբեմն մինչեւ ուշ գարուն յամեցող թաց տեղերէն:

Ջուրին տեղը գտնելու ամէնէն տարածուած հնարքներէն մէկը նոնենիի ճիւղով մը կը կատարուի: Մարդը նոնենիին ոստը երկու ծայրերէն կ'առնէ իր ափերուն մէջ, անոր կու տայ աղեղի ձեւ ու կը պտտի արտին մէջ: Ստորգետնեայ ջուրին հոսանքին վրայ հասնելուն պէս նոնենիի ոստը արտակարգ կերպով շարժիլ կը սկսի՝ մարդուն մեծ ցնցումներ պատճառելով: Այդ ցնցումներէն ելլելով՝ ոմանք

մինչեւ իսկ ջուրին խորութիւնը կը գուշակեն: Այս ցնցումները ամէն անձի չեն պատահիր: Այս հնարքը մինչեւ այսօր ալ կը գործածուի. հաւատացողներ կան: Ամէն պարագայի՝ ջրհորը բախտ կը նկատուի, ջրհոր բացողը բախտախաղ խաղացողի հետ կը համեմատեն:

Ջրհորին տեղը որոշելէն ետք քիչ անդին կը դիզուի ջրհորին համար անհրաժեշտ քարը: Ջրհոր մը պատելու համար անհրաժեշտ է երկու տեսակի քար: Պատը կը շարուի երկար, մինչեւ կէս մէթր երկարութեամբ քարերով, որոնց ետին՝ շուրջ կէս մէթր, երբեմն ատլի տարածութեամբ տեղ կը լեցնեն միջակ մեծութեամբ քարեր: Այս բաժինը ջրհորին պատը կը պաշտպանէ գետնի թէթեւ սահանքէ կամ հրումէ եւ ջրհոր իջնող արտաքին ջուրերը կը գտէ:

Քարի պատրաստութենէն ետք կը սկսին փորել 5-6 մէթր տրամագիծով շրջանակ մը: Ջրհոր կը բանան Օգոստոսի 2-րդ կէսէն ետք միայն: Երրորդ մէթրէն սկսեալ գործը կը դժուարանայ, կը դառնայ վտանգաւոր ու կը պահանջէ անուագն վեց աշխատաւոր: Նախ փորուող շրջանակին մէկ քառորդին վրայ տախտակամած մատոյց կը կապուի: Ասիկա ամուր տախտակամած մըն է, որուն ամրացուած կ'ըլլայ ճախարակի եռոտանին: Նուագագոյնը հինգ հոգի գործի գլուխ կ'ըլլան, երկուքը՝ վար փորող եւ զամբիւղը հողով լեցնող, երկուքը վերը՝ զամբիւղը քաշող, եւ մէկն ալ ջրհորին բերանը՝ տախտակամածին վրայ. ասիկա աշխատանքը կը կառավարէ: Փլուզման վտանգը միշտ նկատի կ'առնուի:

Ջուրին հանդիպելու պարագային կը շարունակէին փորել, որովհետեւ ատիկա կրնայ հաւաքուած ջուր մը ըլլալ, երբեմն ջուրը փորուածքին հետ կը ցածնայ. պէտք է ջուրին երակը գտնել ու փորելը շարունակել տակաին մէկ մարդահասակ, մինչեւ որ ակը յատակէն բարձր մնայ: Ջուրին հանդիպելու պարագային ուրախութեան բացականչութիւններ կը լսուին, բանտորները տիրոջ աչքը կը լուսեն ու կերուխումի մը խոստումը կը խլեն անկէ: Ծեղի մը չափ ջուրը ակ կը նկատուի:

Երբեմն ջրհորները բոլորովին ցամաք կ'ելլեն: Աշխատանքը կը դադրեցնեն՝ ատլի խոր իջնելու վտանգէն վախնալով: Կը պատեն: Ջրհորը ճմրան մակերեսային ջուրերով կը լեցուի: Գիւղացին անով ալ կը գոհանայ, եթէ երբեք ջրհորը «ջուր բռնէ», այսինքն՝ հաւաքուած ջուրը շուտով ճամբայ գտնելով չերթայ ընդերք:

Փորուածքը աւարտելէն ետք վար կ'իջնէ որմնադիրը օգնականի մը հետ: Քարը զամբիւղով կ'իջեցնեն վար: Ջրհորին շարուածքը տարբեր վարպետութիւն կը պահանջէ, աստոր համար ալ տուներ կառուցող ամէն վարպետ ջրհոր պատել չի կրնար:

Ջրհորը պետք է կարասաձեռն ըլլայ: Ջրհորի որմնադիրը գրեթե մուրճ չի գործածեր, ո՛չ կշիռք ունի, ո՛չ չուան: Ան խոշոր քարերը այնպես կ'ազուցե իրարու, որ զիրար բռնեն ու առաջ չսահին: Շարուածքի ետին, շուրջ մեկ մեթր կամ ավելի տարածութիւն կը լեցնեն մանր քարերով: Պատը կը շարուի կլոր, թոնրաձեռն, յատակը մեկէն մինչեւ մեկուկէս մեթր տրամագիծով, որ հետզհետէ լայննալով ջրհորի կիսուն կը հասնի շուրջ երկու մեթրի, ապա կրկին կը նեղնայ, մինչեւ որ ջրհորի բերանը ունենայ յատակի մեծութիւնը, նոյնիսկ ավելի նեղ: Պատը կը հասցնեն գետնի մակերեսին, կը քակեն տախտակամածը ու ջրհորի բերանը երկու գերան կը նետեն ապահովութեան համար:

Շարուած վերջին քարին վրայ խոյ մը կը մորթեն եւ առատ օղիով խորովածի սեղան կը բանան բանուորներուն համար:

Ձմեռ մը անցնելէ ետք պատը կը բարձրացնեն շուրջ մեկ մեթր եւս՝ այս անգամ կրաշաղախով ու կոփուած քարով: Շարուածքը երկու աստիճանով կը բարձրանայ ջրհորին բերանը, ուր տախտակէ երդիք մը ամրացուած կ'ըլլայ, ապա ճախարակի յարմարանք ու տախտակէ դոյլ մը (նկ. 3): Մէկ - երկու տարին անգամ մը ջրհորները մինչեւ յատակը կը պարպեն, կը մաքրեն (պուղիլ՝ պեղել) ու տոպրակ մը կիր կը թափեն անոր մէջ: Վերջինը ունի հակա-նեխիչ յատկութիւն:

Քեասայի շրջանին ջրհորները ընդհանրապէս ունին 7-14 մեթր խորութիւն:

Յիշենք, որ աղբիւրներն ու ջրհորները յաճախ ունին կանացի անուն կամ ըստ ւանդավէպի մը՝ կապուած են կիներու հետ, ինչպէս՝ Պառաւին ջրհորը (Պատվօն ջրբուր), Աղջիկներուն աղբիւրը (Գըզլար փինարը), Միվտիկիի աղբիւրը: Տափասա կոչուող աղբիւրի մասին ւանդավէպը կը պատմէ, որ Աղջիկներու աղբիւրի առուակին մէջ մերկ ոտքերով խաղացող երկու դեռատի աղջիկներ կ'ենթակուին յարձակումի. անոնք երկու աղանի կ'ըլլան ու կը բարձրանան հեռու, կը նստին լեռան գագաթին, իրենց ոտքերէն կաթող ջուրը հոն աղբիւր կ'ըլլայ՝ Տափասա՝ գագաթնաջուր: Հետաքրքրական է նաեւ, որ աղբիւրներու քով գտնուող սրբատեղիներ կը կրեն Աստուածամօր անունը:

Շատ աղբիւրներու հետ կապուած կայ նաեւ արվանտի հաւատալիքը: Արվանտը վիշապն է: Բառը կու գայ Որոնդէս գետի անուան հնագոյն տարբերակէն՝ արանտի կամ արուանդու: Սակայն հետաքրքրական է, որ միայն Քեասայի բարբառը պահած է բառի հնագոյն ու բուն իմաստը՝ արվանտ՝ վիշապ: Փոքրիկները զգուշացնելու համար տակաւին կ'ըսեն. «Մը՛ մուտկընաք ատ տըղէօնքը, արվանտը կը պըղի սձի» (Մի մօտենաք այդ տեղանքը,



նկ. 3. Ջրհորի ծածկ

արվանտը կը կլլէ ձեզ): Կարգ մը աղբիւրներու մօտիկ գտնուող սրբավայրերուն մէջ կայ մարդակերպ այլ ոգի մը՝ Կիդիցիկ Պապուկը, որ կը նկատուի սրբավայրին տէրը: Այստեղ կայ դաշինք մը արվանտի եւ Կիդիցիկ Պապուկին միջեւ: Հաւատալիք կայ, որ երկուքը պահապանը կը նկատուին շրջակայքին (հնավայր, սրբավայր, աղբիւր) մէջ գտնուող «գանձ»ին: Ունանք կը հաւատան, որ անիկա նիթական գանձ է ու «կը հետեն» արուանտի բացած ճամբան: «Հիտել» կը նշանակէ հետքին հետեւիլ: Հետքը, կը հաւատան, ժայռերուն վրայ գտնուող օձի կաղապարով ոլորուն փոսորակն է, որ իբրեւ թէ գանձին կը տանի: Սրբավայրին, անոր տարածքին, պուրակին եւ մօտիկ աղբիւրին որեւէ վնաս հասցնողին Կիդիցիկ Պապուկը կը պատժէ արվանտի միջոցով: Գալէմտէրեան թաղին մօտիկ, Գապ կոչուող աղբիւրին տանիքը գտնուող ջրհորը վերջերս թաղեցիկները թաղեցին: Այդ ջրհորը չարիքի բոյն նկատուած է: Կը պատմուի, որ դար մը առաջ, հակառակ թաղեցիկներու ընդդիմութեան, ջրհորը կը բացուի ու կը կտրէ Գապի ջուրը: Իրօք, երաշտ տարիներուն աղբիւրը ամբողջութեամբ կը ցամքի: Քանի մը փորձանքներ պատահած են այդ ջրհորին գլխուն: Վերջինը պատահեցաւ 1971 Յուլիս 1-ին, երբ ջրհորին մէջ տեղաւորուած շարժիչին արտանետած կազը կը թունաւորէ ջրհորին մօտեցողները (11 հոգի), որոնք ուշաթափուելով իրարու ետեւէն ջրհոր կ'իյնան: Գալէմտէրեան եւ Մանճիկեան թաղէն կը գոհուին հինգ հոգի: Մարդիկ ըսին. «Արվանտը պըղից զիրինք» (Արվանտը կու տուաւ գանոնք) :

**Դ. Ջրամբարները:** Ջրամբարները կ'ըլլան բնական եւ արհեստական: Բնական ջրամբարները կը կոչուին գագ: Անստոյգ բառ մըն է, գուցէ հայերէն գոգ բառն է, որ իր բուն իմաստով ունի գուգ ձեւը: Ասոնք ապառաժներու վրայ գոյացած տարբեր չափի ու խորութեան փոսեր են, ուր հաւաքուած անձրեւաջուրին յաճախ պէտք ունեցած են հովիւներն ու հեռաւոր արտերու մէջ աշխատող մշակները (նկ. 4): Ջուրին մակերեսին կը դնէին թաշկինակ մը կամ գլխարկ մը, ուրկէ ջուրը կը սուզուէր, ապա ծնկաչոք



Նկ. 4. Կէտունէն գագը՝ Կատուին գագը, բնական ջրամբար



Նկ. 5. Արինճ

կը խմէին: Անձրեւէն առաջ փոսը կը մաքրէին ու ցախ մը կը դնէին վրան: Ամէնէն մեծերէն մէկը Գ-դըր լեռան հարաւային մէկ բարձունքին վրայ գտնուող Տոմուզ գագն է, որուն ջուրը կրնար քանի մը հեկթար հողի վրայ տնկուող ծխախոտի սածիլները ջրել:

Արիեստական ջրամբարները կ'ըլլային

**ա) Արինճ:** Կը գործածուի նաեւ արաբերէնէ եկող սահրիճ բառը: Ասոնք քարակոփ ու պատուած ջրամբարներ են եւ ունին հազարամեակներու պատմութիւն. այդպիսիներ շատ կան հիւսիսային Սուրիոյ մեռեալ քաղաքներու տարածքին մէջ: Գարատուրանի ծովամերձ տարածքին նկատուած են մէկ—երկու հատ:

Երկրորդ տեսակը կը բանային ջրհորի պէս, կը պատէին նոյն ձեւով, բայց կը գործածէին կոփուած քար ու կրաշաղախ, ապա պատն ու յատակը թանձր կրաշաղախով կը սուաղէին: Ջրամբարի շուրջը ամանաձեւ լայն շրջանակ մը նոյնպէս կրաշաղախով կը ծածկէին, որպէսզի այնտեղ տեղացող անձրեւաջուրն ալ հոսի ջրամբար (նկ. 5):

Ասոնց մէջ հաւաքուած անձրեւաջուրը միայն տնային գործածութեան եւ անասուններու համար

կը պահուէր: Հասկնալի է, որ ջրամբար ունէին միայն այն տուները, որոնց շրջակայքը աղբիւր չկար եւ հողը ջրհորի յարմար չէր: Այդպիսին էր Պաշտրս գիղը, ուր ամէն տուն իր ջրամբարը ունէր: Ընկալելի ջուրը կը բերէին հեռաւոր տեղերէն:

**բ) Հավուզ/պիլքի:** Առաջինը թրքերէնէն, իսկ երկրորդը արաբերէնէն կու գայ: Ասոնք կը գտնուէին աղբիւրներու առջեւ երկարող առուններուն վրայ: Քարով ու կրաշաղախով պատուած կ'ըլլային, առաջամասի ստորին տեղը կ'ունենային պլէգ, որ ջուր ամբարելու ատեն կը գոցէին, ջրտուքի ատեն կը բանային: Այս աւագանները կ'ունենային քառակուսի կամ կլոր ձեւ եւ մէկ մարդահասակ խորութիւն: Կարգ մը աղբիւրներու առջեւ կ'ըլլային մէկէ աւելի աւագաններ: Ջաղացքներու մօտ գտնուող աւագանները կ'ըլլային աւելի մեծ:

**գ) Պանտ:** Ասոնք լայնկեկ պատնէշներ էին աղբիւրի առուին վրայ: Յատուկ կը լայնցնէին ու եզերքը կ'ամրացնէին անթափանց ցեխով: Ջրտուքի ատեն պանտի բերանը կը բանային: Պանտերէն աւելի վար՝ կը գտնուէին սուլախները, որ նոյն ձեւով կառուցուած ջրամբարներ էին, կենդանիներու ջրտուքին համար: Պանտը կը կառուցէին, երբ հնարաւոր չէր ըլլար գետահունին մէջ աւագան կառուցել:

**Անջրդի եւ ջրարբի մշակութիւններ**

**Ա. Անջրդիները:** Նախ յայտնենք, որ շրջանին մէջ չկայ մշակութեան համար պիտանի գետին՝ առանց նոր հող բանալու: Գիւղացին նոր գետին կը բանար «տաքնել»ով: Տաքնել կը նշանակէ գիտինը մինչեւ կէս մեթրէն մինչեւ մէկ մեթր խորութեամբ դարձնել՝ զայն ազատելով ամէն տեսակ վայրի բուսականութեան հետքերէն եւ ժայռերէն ու բացուած նոր դարաւանդները օժտել բարձրաբերձ եւ ամուր պատերով (նկար 6 եւ 7): Պատերը կ'օգնէին, որ հողամաշում քիչ պատահի: Լեռնալանջերուն ու գառիթափերուն վրայ բացուած փոքր հողաշերտերը կը կոչէին խուփուօռ, յոգնակին՝ խուփրոկըննիք: Բառը կազմուած է հայերէն խուփ եւ առ արմատներէն, կը տրուի այն պզտիկ հողաշերտերուն, ուր դեռ կարելի է արօր բանեցնել: Շատ աւելի փոքր հողաշերտերուն, լեռնային ծերպերուն, ուր միայն փետատ կը բանի, կը տրուէր չագրագ՝ ծերպ անունը: Գիւղացին այս ծերպերուն առջեւ ձմռան հեղեղներուն քանի մը քար կը շարեր, քիչ մը հող հաւաքելու նպատակով ու արտի կը վերածէր: Ցանքի համար նախատեսուած համեմատաբար լայն գետինները կը կոչուէին թարլու, ծխախոտի արտերը՝ հագուրու, պարտէզները՝ պաղչու, սածիլանոցի նեղ դարաւանդները՝ սատըրնուց, բանջարանոցները՝ էծծէօք:

Տաքնած գետինները տարին անգամ մը գոնէ կը հերկուէին: Հերկը գետինը կը փրկէր մուխտտե-

րէ ու ամենէն կարեւորը՝ խոնաւութիւն կը պահէր: Հերկուած գետինները մակերեսէն 20 սմ վար հուօյթ (հիւթ, խոնաւութիւն) կը պահեն եւ պիտանի են ամեն տեսակ անջրդի մշակութեան: Ոմանք արօս գետիններուն մէջ խորա կը կանգնեցնէին. ասոնք հեռուէն նկատելի իրարու վրայ դրուած քարեր են, որ մարդիկ տեսնեն եւ իրենց հօտն ու նախիրը հոն չմտցնեն: Գիւղացին խորա կը դնէր խոտհարքի սահմանուած իր հողին մէջ:

Ջուրի սակաւութեան պատճառով Քեսապի մէջ բոլոր արտերն ու պարտէզները, բացի սածիլանոցներէն ու բանջարանոցներէն, մինչեւ 1960-ական թուականները անջրդի էին:

Աշնանացանը (ցորեն, գարի) կ'ըլլար աշնանային անձրեւներէն ետք՝ Հոկտեմբերէն Դեկտեմբեր, իսկ գարնանացանը կ'ըլլար Փետրուար եւ Մարտ ամիսներուն (սիսեռ, ոսպ, քուշնայ, հատ լոբի): Եթէ անձրեւը ուշանար, գիւղացին՝ առտուան մութ ու լոյսէն մինչեւ ուշ երեկոյ պէտք է պաշտպանէր դեռ չբուսած արտերը գաղթող թռչուններու երամներէն, իսկ ձմռան պիտի պաշտպանէր արտը հեղեղներէն:

Անջրդի էին բոլոր պարտէզները՝ թթաստանները, ձիթեստանները: Պարտէզները ընդհանրապէս խառն ծառատեսակներ կ'ունենային՝ թզենի, ձիթենի, թթենի, նոնենի, նշենի, ընկուզենի, ծիրանենի եւ այլն: Որթատունկի պատատուկ տեսակը կը մագլցէր այս ծառերուն վրայ: Բոլոր պարտէզները նոյնպէս գարնան երկու անգամ հերկի կ'ենթարկուէին: Հերկը կ'օգնէ, որ ծառին արմատները խորանան ու «հուօյթ քիշին» (հիւթ քաշեն):

**Բ. Մէկ անգամ ջրոտող տնկիները:** Մէկ անգամ կը ջրուէին ոչ բանջարանոցային տարեկան տնկովի մշակութիւնները՝ ծխախոտը, լոլիկը, եգիպտացորենը, սեխն ու ձմերուկը, աճուող, ձմեռնային դդուր, աւելը եւ այլն:

Ծխախոտի տնկումէն առաջ գետինը մէկ ամսուան ընթացքին երկու անգամ հերկուած կ'ըլլար: Ապա լուծով հագուրան կ'ակօսէին: Ծխախոտի սածիլները զամբիւղ-զամբիւղ կը տեղափոխուէին հագուրա, կը տնկուէին փոքիչով եւ մէկ թաս ջուր կը լեցնէին տակը: Ատով ալ կը վերջանար անոր ռոռգումը (ըռըղիլ՝ ռոռգել): Երկու օր ետք գիւղացին կը պտտէր արտին մէջ ու «կուրցած» փոսիկին մէջ տունկ մը եւս կ'աւելցնէր գաւաթ մը ջուրով: Լոլիկը կը տնկուէր ծխախոտի հագուրային պատերուն տակ, դարձեալ գաւաթ մը ջուրով: Ոմանք դարձեալ պատերուն տակ կը դնէին քանի մը փոսիկ եգիպտացորեն ու աւել: Ասոնք մէկ-երկու անգամ «կը պաղեցնէին», այսինքն՝ գաւաթ մը ջուր կու տային մինչեւ բուսնիրը: Ռոռգման գործը կը վերջանար: Ծառատունկերը դոյլ մը ջուրով կը տեղաւորէին Դեկտեմբեր-Յունուար ամիսներուն:



Նկ. 6. Դարասանդային պարտէզներ, Գարասաշ



Նկ. 7. Դարասանդներ

**Գ. Ջրաքի մշակութիւնները:** Ոռոգման պէտք ունէին միայն սածիլանոցները եւ ածուքները, այսինքն՝ բանջարանոցները:

Ասոնք կը գտնուէին աղբիւրներուն մօտիկ տարածութիւններու վրայ: Հոն ոմանք ունէին մէկ-երկու, շատ-շատ երեք սենեակի տարածութեամբ հողաշերտեր: Սածիլանոցները (սատըրնուց) հողային նեղ շերտեր էին կամ դարաւանդներ ու կը գտնուէին բանջարանոցներէն անդին, որովհետեւ սածիլի (սէտեր) պատրաստութեան ատեն աղբիւրները աւելի յորդ կ'ըլլային: Սածիլանոցներուն մէջ ամենէն մեծը ծխախոտի բաժինն էր, որովհետեւ ան պիտի տնկէր նուազագոյնը 3-4 հեքթար ծխախոտի հագուրան: Փոքրիկ ածու մըն էր լոլիկի բաժինը, աւելի փոքր՝ սմբուկի եւ պղպեղի, կաղամբի սածիլանոցները: Ռոռգման ջուրը աղբիւրի առջեւէն այս տարածքը կը հասնէր կան ուղղակի, կան աւազանի միջոցով: Գլխաւոր առուն բոլոր բաժնեկիցներով կը նորոգուէր,



Նկ. 8. Ոռոգման արհեստական ջրամբար

որովհետև ճմռան հեղեղները քարուքանդ ըրած կ'ըլլային զանոնք: Տեղ-տեղ սածիլանոց հասնող տարածքը կրնար ընդհատուիլ ձորակներով: Գիւղացին ձորակին միւս լանջին իր սածիլանոցներուն ջուր հասցնելու համար բարդի, ծրդի կամ նման ուղղաձիգ հսկայ գերան մը կը դնէր ձորին երկու կողմերուն վրայ, կը տաշէր, կը փորէր ու այդ առոտով ջուրը տեղ կը հասցնէր: Փայտեայ այս առուններուն կը տրուէր ուլուօկ անունը:

Բոլոր սածիլանոցներուն վրայ գիւղացին հիմքա ցախով ծածկ կը շինէր ու ցնցուղով կը ջրէր:

Բանջարանոցը (էծծէօք < ածու-ք) ոռոգման կարիք ունէր: Հոս մշակութիւնը երկու անգամ կ'ըլլար՝ Հոկտեմբերէն մինչեւ Մայիս: Ուշ աշնան կը տնկուէին սոխը, սխտորը, իսկ Փետրուարին՝ գետնախնձորը: Ասոնց ոռոգումը կը սկսէր երկու ամիս ետք, երբ հասակ առած կ'ըլլային: Կը բանային ակօսները ու կը ջրէին շաբաթը մէկ անգամ քանի մը անգամով, կը ձգէին որ սոխն ու սխտորը չորնան: Ապա կը կատարուէր բերքահաւաքը, ու ածուն կը փոխուէր ու նոր ածուներ կը բացուէին սմբուկի, պղպեղի, վարունգի, կաղամբի, մէկ անկիւնը մշտապէս կ'ունենային ազատգեղի եւ անուխի բաժինները: Հոն մէկ-երկու փոսիկ դդում կ'ըլլար ու շատ-շատ խնձորի եւ դեղձի մէկական ծառ ու նարնջենի: Ամռան եղանակին ջուրը աղբիւրէն դժուար թէ հասնէր հոն: Ջուրը ածու կը հասնէր՝ աւազանին կամ պանտին պլէզը բանալով: Առունները միշտ կը մաքրուէին մոլախտերէ, կը ծածկուէին խեչափառներու բացած խոռոչները: Աւազանը կը լեցուէր օրը մէկ անգամ, կարգով կու գային ջրտուքի: Ոռոգումը կ'ըլլար ուշ երեկոյէն մինչեւ առտու: Ածուները պէտք է ջրուէին շաբաթը երկու անգամ: Կարգը երբեք չէր խանգարուէր:

Բանջարանոցային եղանակին մարդիկ մշտական բնակութիւն կը հաստատէին իրենց հեռաւոր ածուններուն կից՝ ժամանակաւոր կացարաններու մէջ:

Շատեր ածուի համար հողաշերտ չունէին: Այդպիսիք կոտրած կուժեր, կարասներ, կրիճներ, թիթեղեայ ամաններ կը շարէին բակը ու անոնց մէջ կ'աճեցնէին յուրիս, մէկ-երկու թուփ պղպեղ, սմբուկ, ազատգեղ, անանուխ, շումրայ, ծաղիկներ: Բակի ծառին տակ կ'ունենային գոնեայի եւ լիֆի մէկական փոսիկ. ասոնք պատատուկ բոյսեր են: Գոնեայը կ'օգտագործուէր իբրեւ ջրաման, իսկ լիֆը՝ լուացումի ատեն: Ասոնց համար կիսը ուսով ջուր կը բերէր:

### Ոռոգման հնարաւորութիւնները 1970-ական թուականներէն ետք

Ոռոգման հնարաւորութիւնները քիչ մը աւելցան, երբ շրջան հասան ռետինէ խողովակները. Մարդիկ, մինչեւ 100-200 մէթր խողովակաշար փռելով, բարձրադիր տեղերէ ջուր բերին տուն ու հեռաւոր ածունները փոխարինեցին տնամերձով: Ասիկա օգնեց, որ ջուրի վատնումը կասեցուի:

1970-ական թուականներուն գիւղերը ելեկտրականութեամբ օժտուեցան ու գիւղական ճամբաները ասֆալթապատուեցան: Գիւղացին իր միջոցներով թրաքթորի ճամբաներ բացաւ դէպի իր հեռաւոր կալուածները: Գիւղատնտեսութիւնը հիմնովին փոխուեցաւ: Լուծը վերացաւ ու հերկող գործիքները մուտք գործեցին շրջան: Ցանքը գրեթէ ամբողջապէս վերացաւ, նոյնպէս ծխախոտի մշակութիւնն ու շերամաբուծութիւնը: Մեծ հոշակ ձեռք բերաւ Քեսապի խնձորը, նոյնպէս սալորը, դեղձն ու տանձը: Համատիրութեան եղանակով կառուցուեցաւ պտղաստանարան, ու ամբողջ տարին Քեսապէն Հալէպ եւ Լաթաքիա արտածուեցան Քեսապի պտուղները: Հետեւաբար շրջանի գրեթէ պիտանի գետինները վերածուեցան պարտէզներու՝ գլխաւորաբար խնձորենի, սալորենի, դեղձենի, ձիթենի, որթատունկ: Գետինները յարմարեցուցին այդ մշակութիւններուն: Փորոզ հսկայ մեքենաներով նեղ դարաւանդները վերածեցին հարթ ու ընդարձակ գետիններու՝ հսկայ ժայռաբեկորներով պաշտպանելով հողը հնարաւոր սահանքներէ:

Ասոնք մեծ մասով անջրդի էին, բայց տեսնելով պարտէզները ջրաբքի դարձնելու մեծ բարիքները՝ գիւղացիք ձեռք բերին ջրօգտագործման եւ ոռոգման նոր հնարաւորութիւններ: Մարդիկ տինամոյի եւ ջրհան մոթորներու միջոցով խորունկ ձորերէն ջուր քաշեցին դէպի իրենց պարտէզները: Այս հնարաւորութեան դիմաց գոյութիւն ունեցող աղբիւրները անբաւարար էին: Սկսաւ արթեղեան ջրհորներու բացումը: Ասիկա հիանալի արդիւնք տուաւ Տուգադաճի հարթավայրին մէջ, ուր այ կը գտնուի ստորերկրեայ ջուրերու մեծ պաշար: Բոլոր գիւղերու շրջապատին մէջ սկսաւ արթեղեան հորումներով կատարուած ջուրի փնտռուածքը, որ շատ անգամ

արդիւնաւէտ չէր ըլլար: Այդպիսի վայրերու մէջ ջուրի ստորերկրեայ ամբարներ քիչ կը հանդիպէին: Պէտք է գտնել ստորգետնեայ հոսող ջուրերու երակը: Տեղ - տեղ կը յաջողէր: Բայց այս ալ պատճառ կը դառնար, որ ցամքին հնօրեայ աղբիւրներն ու ջրհորները: Մէկ խօսքով արթեզեան ջրհորներն ալ անբաւարար դարձան: Սկսաւ ջրամբարներու կառուցումը. ռոռզման նպատակներով գիւղացիք նոր տեսակի ջրամբարներ (սատ) բացին իրենց պարտէզներուն մէջ: Մէկ հեքթար տարածութեան մէջ փորող մեքենաները հողը կը փորեն ու կը պարպեն ջրամբարը երիզող տարածութեան շուրջ: Մեքենան կրնայ մինչեւ հինգ մէթր խորութեան հասնիլ: Այս ջրամբարները ձագարածն էն: Ջրամբարին հողը պէտք է ջուր ամբարելու եւ պահելու յարմարութիւն ունենայ: Ամբարտակը կը լեցնեն ձմեռնային ջուրերով: Չմռան՝ մօտիկ գետակէն խողովակներով ջուր կ'ամբարեն անոնց մէջ (նկ. 8): Ատիկա պիտի բաւարարէր քանի մը հեքթար խնձորի այգին ջրել քանի մը անգամ Յուլիս-Օգոստոս ամիսներուն: Ջրամբարներն ալ սահմանափակ էին, որովհետեւ ամէն հող ջուր չէր պահեր: Վերջին հնարատրութիւնը ջուրը մեծ ջրատարներով պարտէզ բերելն էր: Վերջին տասնամեակին տարածուեցաւ կաթիլային ռոռզումը: Գիւղացին ջուրը կ'ամբարէ աւազաններու մէջ ու անկէ կը կատարէ կաթիլային ռոռզումը: Ջրանցքներ, եթէ չհաշունք շարքէ դուրս ելած նախկին առունները, չկան շրջանին մէջ: Գիւղացին ինք կը հայթայթէ ռոռզման անհրաժեշտ ջուրը:

### Եզրակացութիւններ

Քեսապ՝ իր 12 գիւղերով լեռնային եւ ոչ ջրանոս շրջան է:

Ռոռզման գլխաւոր պաշարները եղած են աղբիւրները, աւազաններն ու անձրեաջուրով լեցուած ջրամբարները:

Ռոռզման գլխաւոր մշակութիւնները եղած են բանջարանոցներն ու սածիլանոցները, ասոնցմէ դուրս բոլոր ցանքերը, պարտէզներն ու տնկարան-

ները (ծխախոտ, լոլիկ եւ այլն) եղած են անջրդի: Քիչեր ունեցած են բանջարանոցային հողատարածք եւ ջուրի պաշար:

Յատկապէս ռոռզման ու հողամշակութեան նախկին եղանակները, կերպերն ու միջոցները արտայայտուած են տեղւոյն հայերէն բարբառով:

1960–1970 թուականներուն հիմնովին կը փոխուի գիւղատնտեսութիւնը՝ հերկող ու փոխադրող մեքենաներու եւ ելեկտրականութեան առկայութեան պայմաններուն մէջ:

Կը բացուին սեփական արթեզեան ջրհորներ, կը կառուցուին սեփական մեծ ջրամբարներ կամ ջրատարներով ջուր տեղափոխելու միջոցներ կը ստեղծուին:

Նախկին սածիլանոցներն ու բանջարանոցները կը լքուին ու կը տեղափոխուին ատիլ ընդարձակ հողերու մէջ, խնձորի եւ դեղձի պարտէզները մեծ մասով կը դառնան ռոռզելի:

Կաթիլային ռոռզումը կը տարածուի:

### ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ REFERENCES

- The Disaster of Garaturan. (1942). *Hask magazine*, 1-2, 27-28 (in Armenian).
- The priest Gnel in Garaturan. (1942). *Hask magazine*, 7-8, 122 (in Armenian).
- The construction of Garaturan huts. (1944). *Hask magazine*, 5-7, 102-103 (in Armenian).
- Abelian, A. S. (2002). *Kesap and his villages* (in Armenian).
- Abelian, G. (1968). *Hele, Hele, Hele... Kesap* (in Armenian).
- Album from Kesap and its surroundings (1955). Beirut (in Armenian).
- Temirian, A. S. (1956). *Kesap* (in Armenian).
- Cholakian, H. (2020). *Material culture of Kesap* (in Armenian).
- Cholakian, H. (2023). *Native Armenians and other communities from historical Antioch and its surroundings* (in Armenian).
- Cholakian, H. (1995). *Kesap* (vol. A), (in Armenian).
- Pachagian, H. (2002). *Rural Images* (in Armenian).



# IRRIGATION SYSTEM ON THE ARMENIAN-AZERBAIJAN BORDER. THE CASE OF BERKABER (JOGHAZ) WATER RESERVOIR (TAVUSH REGION)

Ani Saratikyan, Tork Dalalyan

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

## Abstract

The construction of artificial reservoirs in the Armenian Highland for the purpose of efficient water resource utilisation has been of great importance in the organisation of the economy since ancient times. The creation of artificial irrigation systems gained new momentum in the 20th century, reaching its peak during the Soviet era, when the Shirak canal, Arpa-Sevan water tunnel, Aparan, Akhuryan, Azat, Joghaz (Berkaber) reservoirs, etc. were constructed.

The 60th anniversary of the Sovietization of Armenia was marked by the opening of a border reservoir in the village of Berkaber, the construction of which received significant attention in the Soviet Union. However, due to the first Artsakh war (1991-1994), the water supply system of this reservoir with the symbolic name Berkaber (“harvest-bringer”) was completely destroyed and ceased to contribute to the productivity of the surrounding gardens. At present, the reservoir has become a symbol of Armenian-Azerbaijani former friendship and current enmity. From an ethnographic perspective, the Berkaber Reservoir is of interest to some extent, but it is also noteworthy that its construction once became an occasion for new archaeological discoveries. The findings unearthed during the construction phase were incorporated into the collections of the History Museum of Armenia and the Berkaber village museum, which was established in parallel with the reservoir’s construction.

**Keywords:** Tavush, Joghaz, Berkaber, reservoir, border, war, excavations, museum.

## ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ. ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԿԱԲԵՐԻ (ՋՈԴԱԶԻ) ՋՐԱՄԲԱՐԻ ՕՐԻՆԱԿԸ

Անի Տարատիկյան, Տորք Դալալյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

### Ամփոփագիր

Հայկական լեռնաշխարհում ջրային պաշարների արդյունավետ օգտագործման նպատակով կառուցված արհեստական ջրամբարները հնուց ի վեր մեծ կարևորություն են ունեցել տնտեսության կազմակերպման գործում: Ոռոգման արհեստական համակարգերի ստեղծումը նոր թափ ստացավ XX դարում՝ իր բարձրակետին հասնելով խորհրդային իշխանության օրոք, երբ կառուցվեցին Շիրակի ջրանցքը, Արփա-Սևան ջրատար թունելը, Ապարանի, Ախուրյանի, Ազատի, Բերքաբերի (Ջոդազի) ջրամբարները, ևն: Հայաստանի խորհրդայնացման 60-ամյակը Բերքաբեր գյուղում նշանավորվեց սահմանամերձ ջրամբարի բացմամբ, որի շինարարական աշխատանքները մեծ հնչեղություն էին ստացել խորհրդային Միության տարածքում: Արցախյան առաջին պատերազմի պատճառով (1991-1994), սակայն, Բերքաբեր խորհրդանշական անունով այս ամբարի ջրամատակարարման համակարգն ամբողջովին քայքայվեց և դադարեց նպաստել շրջակա այգիների բերքաբերությանը: Այժմ ջրամբարը դարձել է հայ-ադրբեջանական նախկին բարեկամության և ներկայիս թշնամանքի խորհրդանիշ: Այս առումով այն որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ազգագրական տեսանկյունից, բայց նաև հատկանշական է, որ ջրամբարի շինարարությունը ժամանակին հնագիտական նոր գյուտերի առիթ դարձավ: Շինաշխատանքների ընթացքում հայտնաբերված գտածոները համարյա ինչպես Հայաստանի պատմության թանգարանի, այնպես էլ ջրամբարի կառուցմանը զուգընթաց հիմնադրված Բերքաբեր գյուղի թանգարանի հավաքածուները:


Հիմնաբառեր. Տավուշ, Ջոդազ, Բերքաբեր, ջրամբար, սահման, պատերազմ, պեղումներ, թանգարան:

### Առաջաբան

Սահմանային լարվածությունը լուրջ ազդեցություն է ունենում մերձսահմանային ջրային պա-

շարների օգտագործման վրա, ընդ որում խնդիրն ավելի է սրվում պատերազմական իրավիճակներում: 1990-ականներին՝ Արցախյան 1-ին պատե-

1 Չորս տարի առաջ նման լարվածություն ստեղծվեց Արցախյան վերջին պատերազմի (2020 թ.) արդյունքում, երբ ադրբեջանական կողմն անուղղակիորեն պայքար սկսեց ջրային պաշարներին տիրանալու համար՝ ինչպես Մյունխենի մարզի բարձրալեռնային Սև լճի հատվածում, այնպես էլ Գեղարքունիքի և Քարվաճառի սահմանագլխին՝ Սևանի ավազանի հարավ-արևելքում:



1



1



2



2

Նկ. 1. Բերքաբերի ջրամբարի ներկայիս տեսքն ու նախկին տարածքը (Source: A. Arzumanyan, A. Saratikyan)

Նկ. 2. Բերքաբերի ջրամբարը (Source: A. Saratikyan)

րազմի ընթացքում, հայ-աղբբեջանական սահմանի հյուսիսարևելյան հատվածում (Տավուշի մարզի տարածք) ամբողջովին կազմալուծվեց խորհրդային տարիներին ստեղծված ռոտգման համակարգը, որում հատկապես առանձնանում է Բերքաբերի կամ Ջողազի ջրամբարը (նկ. 1, 2): Վերջինս Տավուշի մարզի չորս սահմանամերձ ջրամբարներից ամենախոցելին է, քանի որ գտնվելով ՀՀ վարչական տարածքում՝ միաժամանակ դրա մի ափով է անցնում Աղբբեջանի սահմանը: Սա նշանակում է, որ ջրամբարում ձկնորսությամբ զբաղվող գյուղացիները կարող են անմիջականորեն հայտնվել Աղբբեջանի զինված ուժերի նշանառության տակ:

Մինչդեռ կառուցման փուլում Բերքաբերի ջրամբարը պարբերական մամուլում հիշատակվում է որպես ինտերնացիոնալ կառույց, որի վրա աշխատում էին հայ, ռուս, ուկրաինացի, աղբբեջանցի ջրաշինարարներ (Petrosyan & Gevorgyan, 1979, 3): Հատկանշական է, որ հայերն ու աղբբեջանցիները միասին են սկսել ջրամբարի կառուցումը և միասին այգիներ հիմնել դրա շուրջ: Ջրամբարը, սակայն, շահագործվել է ընդամենը 10 տարուց քիչ ավելի (1980-1991 թթ.) և դադարել գործել հայ-աղբբեջանական հակամարտության բռնկմամբ՝ Արցախյան

1-ին պատերազմի ընթացքում: Այժմ ջրամբարի մի մասը գտնվում է Աղբբեջանի տարածքում, մյուս մասը՝ Հայաստանում: Երկու հարևան ազգերի համար այն կարծես դարձել է «առճակատման» կետ, ուր նրանք հանդիպում են միայն որպես ձկնորսներ (նկ. 5, 6)<sup>2</sup>:

Խորհրդային շրջանում ջրամբարը ռոտգման ջուր է հասցրել ներկայիս Տավուշի մարզի Նոյեմբերյանի և Իջևանի շրջանների 11 գյուղերի (սրանցից 2-ում՝ Կոթի և Բերքաբեր, գրանցել ենք դաշտային ազգագրական նյութեր), ինչպես և Խորհրդային Աղբբեջանի 1 գյուղի: Ներկայում Ջողազի ջրամբարը մասնակիորեն սպասարկում է Տավուշի մարզի մոտակա մի քանի տնտեսություն միայն, սակայն չի կարող վերստին ամբողջ ծավալով շահագործվել, քանի որ մատակարարման ուղիները վերջնականապես քայքայված են: Բացի այդ, պոմպակայան հասնելու համար հարկավոր է հատել հայ-աղբբեջանական շփման գիծը և անցնել Ղազախի շրջանի Մազամ գյուղով, իսկ դեպի Նոյեմբերյան գնացող խողովակաշարը նույնպես մասամբ անցնում է Աղբբեջանի տարածքով (Hakobyan, 2019):

2 Բերքաբերում ձկնորսությունը երիտասարդների հիմնական զբաղմունքներից մեկն է. նրանք պատում են, որ նավակներով երբեմն աղբբեջանցի ձկնորսների են հանդիպում ջրամբարի կենտրոնում:

## Ներածություն

Բնական ջրային պաշարների արդյունավետ օգտագործման նպատակով ստեղծված արհեստական ռոտզման համակարգերը՝ ջրատարներ, ջրանցքներ, ջրամբարներ են, բնորոշ են կենտրոնաձիգ ուժեղ կառուցվածք ունեցող պետություններին և խտության որոշակի տեղաբաշխում ունեցող նստակյաց հասարակություններին: Եթե ինքնակառավարվող գյուղական համայնքներին և լեռնային լոկալ նշանակության հասարակություններին ներհատուկ են որոշակի կլիմայական պայմաններին իրենց կենսագործունեության հարմարեցումը և ապավինումը բնության «առատաձեռնությանը», ապա կազմակերպված պետական ազգերը փորձում են տնտեսական, մարդկային և նյութական կուտակված միջոցների հաշվին իրենք կառավարել բնական պաշարների շահագործումն ու օգտագործումը և միաժամանակ բնության տարերային հնարավորություններն ուղղորդել անհրաժեշտ «հունով»:

Սա ունի նաև գաղափարախոսական նշանակություն, քանի որ բնության բարեհաճությանն ապավինելիս մարդը կարծես մնում է կրավորական դիտորդի դերում և բնական պաշարների ուղղորդման հարցում սահմանափակվում է հմայական ու կրոնապաշտամունքային գործողություններով (դիցուք՝ անձրևի ձեռք, աղոթք, զոհաբերություն, նոր ժամանակներում՝ օդերևութաբանական կանխատեսում, են), մինչդեռ ջրանցք փորելիս, ջրամբար կառուցելիս, խողովակաշար անցկացնելիս նա դառնում է գործուն մասնակից և այդպիսով նաև նույնանում արարչագործ գերբնական էակին, որին նախկինում զոհեր էր մատուցում՝ մնալով նրա ողորմածության հույսին: Ռոտզման հզոր կառույց իրագործած արքան կամ իշխանը բանահյուսական-առասպելաբանական պատկերացմամբ հանդես է գալիս որպես գերագույն աստված՝ արարիչ (դեմիուրգ), ով փոխում է Երկրի մակերևույթի ռելիեֆը՝ արհեստական գետեր ու լճեր գոյացնելով:

Հայկական լեռնաշխարհի բոլոր երկրամասերը միավորած առաջին կենտրոնաձիգ պետությունը Վանի թագավորությունն էր, որի օրոք էլ Հայաստանի տարածքում սկիզբ է դրվում լայնածավալ ռոտզման համակարգերի շինարարությանը: Հնագիտական հետազոտությունները ռոտզման համա-

կարգերի հետքեր հայտնաբերել են դեռևս դրան նախորդող ժամանակաշրջաններում (Karapetyan, 1979), սակայն Վանի թագավորությունում ջրաշինարարությունը բարձրացվում է պետական մակարդակի՝ դառնալով արքայի մենաշնորհը. ամենախոշոր ու ամենահայտնի կառույցներից կարելի է թվել Մենուայի ջրանցքը (Շամիրամի առու), Ռուսայի լիճը (Քեշիշ-գյոլ - Քահանայի լիճ), Իդարունիայի կամ Կուադիսի ջրանցքը (Հրազդան-Ջվարթնոց), Արգիշտիխիսիլի-Արմավիրի ջրանցքը (Սարդարապատի ջրանցք), Արգիշտիի լիճը (Թոխմախան կամ Վարդավառի լիճ)<sup>3</sup>: Հատկանշական է, որ հիշյալ բոլոր կառույցներն ի սկզբանե կամ հետագայում պաշտամունքային իմաստավորում են ստացել, ինչը երևում է նաև դրանց ուշ անվանումներում:

Ուրարտական նշված կառույցների մի մասը, իր կենսունակության շնորհիվ, գյուղատնտեսական նպատակներով շարունակել է շահագործվել նաև մեր օրերում: Միջնադարյան Հայաստանում նույնպես կառուցվել են ջրային համակարգեր, հատկապես՝ տեղական նշանակության, ինչպես՝ Եղվարդի, Գնդեվազի, Ակների ջրանցքները, Քարաքթի (Դոլակի) «ծովակ»-ը, ևն (Shirmazan, 1962, 7, 47): Մեֆյան պետության գերիշխանության շրջանում, ենթադրաբար, շարունակել են իրագործվել ջրաշինարարական աշխատանքներ, ընդ որում վերոնշյալ կառույցների մի մասը վերանորոգվել և վերագործարկվել է:

Ջրաշինարարական աշխատանքների բուռն վերելքի հաջորդ նշանակալից շրջանը համընկնում է Խորհրդային գերիշխանության տարիներին, երբ ջրանցքների ու ջրամբարների կառուցումը կրկին ստանում է գաղափարախոսական հնչեղ նշանակություն:

## Ջրաշինարարությունը խորհրդային գաղափարաբանության մեջ

Ջրաշինարարական աշխատանքներին այնչափ մեծ կարևորություն է սկսում տրվել, որ նույնիսկ մանկապատենական «Պիոներ կանչ» թերթում էին տպվում դրանց վերաբերող գովաբանական հոդվածներ<sup>4</sup>: Խորհրդային տնտեսությունը ծրագրվում էր հնգամյակներով, և ահա 10-րդ հնգամյակի նշանակալից իրադարձությունների մեջ «Պատմաբանասիրական հանդես»-ում հատուկ

3 Վանի թագավորությունում երկրագործական աշխատանքների կազմակերպման մասին տե՛ս Harutyunyan, 1964. Էրեբունիի ցանքատարածքներն ու բանջարանոցները, խաղողի և պտղատու այգիները ռոտզվում էին Արգիշտի I-ին վերագրվող ջրանցքով՝ Հրազդան գետից [Թոխմախի] լիճ-ջրամբարում կուտակված ջուրը բաշխող բազմաճյուղ առուններով, այս մասին հանգամանորեն տե՛ս Musheghyan, 1971, 207-211:

4 Դրանցից մեկում, օրինակ, ասվում է. «Գործարկվել են Արևշարի, Մխչյանի, Նոյեմբերյանի ջրհան կայանները, Ապարանի, Մանթաշի, Սանաթրյուրի, Տաուշի, Ազարի, Բաշքենդի ջրամբարները, որոնք կյանք են տվել Թալինի, Հոկտեմբերյանի և այլ շրջանների հողերին: Այդ շրջաններում փարիներ առաջ հսկայական հողաբարձություններ ծածկված էին «հողե ծովերով» (Tadevosyan, 1978, 4):

շեշտվում են ջրաշինարարական (այդ թվում՝ Բերքաբերի) կառույցները. «Կալարավի Ախուրյանի, Ազարանի, Ջողագի ջրամբարների կառուցումը, միաժամանակ կսկսվեն Բջնիի, Գերիկի ջրամբարների և Թալինի ռոտզման սիստեմի երկրորդ հերթի կառուցման աշխատանքները» (Adonts, 1976, 27):

Խորհրդային տարբեր հրապարակումներում բազմիցս ընդգծվում էր, որ նախախորհրդային տարիների համեմատությամբ ռոտզեի հողատարածքների մակերեսն աճել է գրեթե 5 անգամ (Tadevosyan, 1978, 4), և միայն 10-րդ հնգամյակում, օրինակ, ռոտզեի հողատարածքները «կընդարձակվեն 20 հազար հեկտարով, 60 հազար հեկտար արոտատեղեր կջրարբիացվեն», իսկ «20 հազար հեկտարի վրա կկատարվեն եղած ռոտզման համակարգերի տեխնիկական բարելավման և ռոտզման ցանցի վերակառուցման աշխատանքներ» (Adonts, 1976, 27; Petrosyan & Gevorgyan 1979, 3):

Խորհրդահայ ճարտարագետ-ջրաշինարար Գրիգոր Շիրմազանը, ով առաջին անգամ փորձել է շարադրել Հայաստանի ռոտզման պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից, այսպես է բնութագրում վաղ խորհրդային տարիներին Հոկտեմբերյանի ռոտզման ցանցի վերջնական շահագործումից հետո (1936 թ.) հաստատված վիճակը. «Այսօր, ուր բացի օձերից ու կարիճներից ոչ մի կենդանի էակ չէր լինում, որտեղ արևի ճառագայթները չորացնում էին ամեն մի բույս, այժմ կենդանություն է տիրում, առաջներում ամայի հողերն ու ստորոտները կանաչին են տալիս և ուրախացնում անցողի աչքերը» (Shirmazan, 1962, 28): Ուշագրավ է, որ Հոկտեմբերյանի հեղաշրջումից հետո խորհրդահայ առաջին խոշոր ջրանախագիծը ոչ միայն հեղափոխական բազմանշանակ անվանում (և տեղայնացում) ուներ՝ «Սարդարապատ-Հոկտեմբերյանի ջրանցք», այլև ֆիզիկապես ծագումնաբանական ուղիղ շղթայով կապվում էր Արգիշտիի կառուցած ջրանցքին (Shirmazan, 1962, 16-20, 22): Զարմանալիորեն համընկնում են նաև տեքստերը, այսպես՝ Վանի թագավորության արքաները շինարարական բնույթի իրենց կաղապարային արձանագրություններում բազմիցս նշում են. «երկիրը ծարավ էր...», «հողը ամայի ու խոպան էր այստեղ...», «անմար-

դարնակ ու անապար վայր էր, որտեղ ոչինչ կառուցված չէր...», «մեծամեծ առնական գործեր կատարեցի...», «ջրանցք փորեցի... բերդ կառուցեցի...» (հմմտ. Harutyunyan, 2001, 207, 211-212, 214, ևն, նաև Salvini 2008-ի համապատասխան հատվածները):

Խորհրդանշական գուգադիպությամբ՝ խորհրդահայ առաջին խոշոր ջրաշինարարությունն իրագործվել էր Հոկտեմբերյանում (ներկայումս՝ Արմավիր), իսկ վերջիններից մեկը՝ Նոյեմբերյանում: Առաջին տեղավայրը (քաղաքը և շրջանը) անվանակոչված էր «Հոկտեմբերյան մեծ հեղափոխության» անունով, իսկ երկրորդը (քաղաքը և շրջանը)՝ Նոյեմբերյանի հեղաշրջման, քանի որ 1920 թ. նոյեմբերի 29-ը համարվում էր Հայաստանի խորհրդայնացման օր: Այդ օրը 11-րդ Կարմիր բանակը Ադրբեջանի Ղազախի շրջանից մտավ Իջևան, որտեղ և հայկական հեղկումը Ս. Կասյանի ղեկավարությամբ Հայաստանը հռչակեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Հատկանշական է, որ Բերքաբերի (Ջողագի) ջրամբարը կառուցված է հենց Նոյեմբերյանի և Իջևանի շրջանների սահմաններին:

### Բերքաբերի ջրամբարի կառուցումը

Տավուշի մարզում Վանի թագավորության կամ Սեֆյան շրջանի ռոտզման համակարգերի մնացորդներ հայտնի չեն, սակայն խորհրդային շրջանում այս տարածքը ևս անմասն չմնաց ժամանակի համար բնորոշ համընդհանուր ջրաշինարարական գործունեությունից, ինչի արդյունքում այժմ ՀՀ Տավուշի մարզը ջրամբարներով հարուստ մարզերից է. այստեղ են գտնվում Այգեձորի (Իսձորուտի), Հախումի, Բերքաբերի (Ջողագի/Ջողասի), Տավուշի ջրամբարները (Malinyan, 2008, 22, 109, 162, 182):

Հայաստանի խորհրդայնացման 60-ամյակը (1980 թ.) Իջևանի շրջանի Բերքաբեր (նախկին Ջողագ) գյուղում նշանավորվեց գյուղի և աղբրեջանական սահմանին կառուցված Ջողագի ջրամբարի բացմամբ<sup>7</sup>: «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրում հրապարակված՝ բացման արարողությունը պատկերող լուսանկարի ներքո գետեղված կարճ ակնարկը սկսվում է ուրարտական «երկիրը ծարավ էր...» դարձվածքին շատ նման նախադասությամբ.

5 1978 թ. դրությամբ ասվում էր. «Այսօր Հայաստանում գործում են ավելի քան 1500 ջրանցք և 150 ջրհան կայան, որոնք ռոտզում են 300 հազար հեկտար հողապարածություն» (Tadevosyan, 1978, 4):

6 Ըստ Շիրմազանի՝ «դեռ 8-րդ դարում (մ.թ.ա.) և էլ ավելի վաղ ժամանակներում անցկացված Սարդարապատի ռոտզման ցանցը, Սովետական Հայաստանի ջրաշինարարական աշխատանքների շնորհիվ համարյա կրկնապատկել է ռոտզեի փարածությունը և հազարավոր հեկտար ամայի, քարքարոտ հողեր ծածկվել են այգիներով» (Shirmazan, 1962, 29):

7 Ջրամբարի կառուցման նախապատրաստական աշխատանքները սկսվել են 1966 թվականին (Hakobyan 2019): Շինարարական աշխատանքներին վերաբերող փաստաթղթերը հիմնականում պահվել են Թբիլիսիի ազգային արխիվում, իսկ Հայաստանի տարածքում որոշ փաստաթղթեր կան Վանաձորում. այս քաղաքներում դեռ արիթ չի եղել արխիվային նյութեր ուսումնասիրելու: Ինչ վերաբերում է Հայաստանի ազգային արխիվին, ապա այստեղ մեզ հաջողվեց գտնել Ջողագի ջրամբարի հողահատկացման, ինչպես և ջրամբարի շինարարության հետևանքով Ջողագի պետական տնտեսությանը պատկանող՝ քանդվող մասնաշենքերի վերականգնման վերաբերյալ տվյալներ (National Archives of Armenia. 1975):



Նկ.3. Ջրամբարի շինարարական աշխատանքները և ջրամբարի տարածքի ջրաղացներից մեկը (Source: A. Arzumanyan)



Նկ.4. Մարշալ Բաղրամյանի այցը Տավուշի մարզի Կոթի գյուղ (Source: Armenpress)

«Հագեցնել հայրենի հողի ծարավը. իրականացել է հայ շինականի դարավոր այդ իղձը» (Female Worker of Armenia, 1981, 33): Առհասարակ, նման վերնագրերը հաճախակի են հանդիպում ջրաշինարարական աշխատանքները նկարագրող հրապարակումներում, այսպես՝ երկրաբան Հրայր Թադևոսյանի հոդվածը կոչվում է «Հնգամյակի կառույցներում կհագենա հողի ծարավը» (Tadevosyan, 1978):

Բերքաբերի ջրամբարը համարվում էր «10-րդ հնգամյակում» կառուցված ջրաշինարարական խոշոր նախագծերից մեկը՝ ի թիվս Ազատի, Տավուշի և Արծվաշենի (Բաշքենդի) ջրամբարների. հողվածագիրն ավետում է, որ «11-րդ հնգամյակի առաջին զարնանը Ջողազի ջրերը կհոսեն դեպի դաշտերը» (Female Worker of Armenia, 1981, 33): Ջրամբարի գործարկումից մեկ տարի առաջ՝ սփյուռքահայության համար հրատարակվող «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի առաջին էջին լույս է տեսնում հսկայա-

կան խողովակաշարի բերանը պատկերող լուսանկարը՝ հետևյալ մակագրությամբ. «Այս հսկայական խողովակներով Ջողազի ջրամբարի կենարար ջուրը կհասնի դաշտերին, այգիներին, կյանք կպարզևի հազարավոր հեկտար հողերի» (Voice of the Motherland, 1979, № 5 (705), 1):

Ջրամբարի շինարարությունը, սակայն, սկսվել էր դրանից 4 տարի առաջ՝ 1975 թ. և, փաստորեն, ավարտվել 4 տարվա մեջ՝ 1979 թ. (նկ. 3.1): Ջրամբարի կառուցմանը տրվող մեծ կարևորությունն արտահայտվել է նաև արտաքին քարոզչական դաշտում, մասնավորաբար՝ Սփյուռքի հայության մեջ՝ բարեշինվող և ծաղկող Հայրենիքի դրական պատկերը զարգացնելու նպատակով: Արդեն 1977 թ. խորհրդահայ նշանավոր գրող Հրանտ Մաթևոսյանի ելույթը՝ հայտնի լրագրող Հրաչյա Մաթևոսյանը, «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում գողտրիկ գեղարվեստական ակնարկ է գրում՝ «Հաղթանակի

թևերը» խորագրով, նվիրված Կոթի գյուղում<sup>8</sup> կատարվող աշխատանքներին և Բերքաբերի ջրամբարին: Ակնարկը սկսվում է տարածաշրջանի ժողովրդի բանաստեղծական գեղեցիկ նկարագրությամբ՝ կարծես հիմնավորելու համար իրենց աշխատասիրությանը համապատասխանող սպասելիքները պետությունից. «*Լուսավոր անտառները հուշում են, դարակազմիկ լեռները հուշում են, ջրերը պարզապես ասում են, որ այս երկիրը միշտ էլ բնակված է եղել ուժեղ մարդկանցով:... Այսպեղ ծնվող մարդիկ ձուլածո բնություն են, բնության որդիներ, որ գիտեն շնչավորել հողը, ժամանակի հեղքերը թողնել հողի վրա...*» (Matevosyan, 1977, 3): Այնուհետև հեղինակը նշում է տարածաշրջանի «հեղափոխական» անվանումը՝ որպես ևս մեկ հավելյալ հիմնավորում՝ այն բարեշինելու համար<sup>9</sup>: Հեղինակը շարունակելով գրում է, որ «*Հայաստանում ջրաշինարարական խոշոր ծավալի կառուցումների մեջ առաջին անուններից է Ջողագի ջրամբարը: Ջողագի ջրամբարը միայն այս գյուղում, իր կապույտ կենարար երանների, իր թևերի մեջ է առնելու 2300 հեկտար հողափարածություն»* (Matevosyan, 1977, 3):

Երկու տարի անց՝ 1979 թ., «Հայրենիքի ձայն»-ը կրկին երեք անգամ անդրադառնում է Բերքաբերի ջրամբարի կառուցմանը. հունվարին՝ խողովակաշարի լուսանկարով (տես վերը), իսկ հուլիսին՝ ընդարձակ խմբագրական հոդվածով, որում ասվում է. «*մեկ փարի հետո Իջևանի շրջանի Բերքաբեր գյուղի մոտ կծփան փասներորդ հնգամյակի խոշորագույն կառույցներից մեկի՝ Ջողագի ջրամբարի ջրերը: Գարնան ձնհալից ու անձրևաջրերից կուրակված ջրերի ծավալը կկազմի ավելի քան 45 միլիոն խոր. մետր»* (Voice of the Motherland, 1979, 3): Այս տողերը գրվելու ժամանակ արհեստական լիճն իր հարակից կառույցներով ու խողովակաշարերով արդեն իսկ որոշ չափով կերպարանք էր առել, իսկ Ջողագ գետն իր հոսանքը շարունակում էր երկաթբետոնե խողովակով, որն անցնում էր ջրամբարի պատվարի միջով (Voice of the Motherland, 1979, 3):

Բերքաբերի ջրամբարի շինարարությանը մասնակցում էին Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից, այդ թվում՝ Ադրբեջանից ժամանած ջրաշինարարներ: Ըստ նախագծի՝ այն



Նկ. 5. Ձկնորսությունը Բերքաբերում (Source: R. Chobanyan)

պետք է ջուր մատակարար ոչ միայն ՀԽՍՀ Նոյեմբերյանի և Իջևանի շրջաններին, այլև Ադրբեջանական ԽՍՀ Ղազախի շրջանին, - ասվում է «Հայրենիքի ձայն»-ի 1979 թ. երրորդ՝ դեկտեմբերյան անդրադարձում (Petrosyan & Gevorgyan, 1979, 3): Հաջորդ տարի արդեն պետք է լիներ ջրամբարի պաշտոնական բացումը:

Ջրամբարի շինարարության գործընթացը մեծ հնչեղություն ստացավ Խորհրդային Միության տարածքում՝ որպես առաջնահերթություն այդ տարածաշրջանի գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար. «*Եւ տես, ջրաշինարարական խոշոր կառույցներին ավելացավ ևս մեկը՝ գործարկվեց Ջողագի ջրամբարը: Մեր առաջընթացի հզոր փեմպերը հնարավորություն փնտցին կարճ ժամանակում ավարտել այս հսկայածավալ կառույցը: Միայն Ջողագ գետի հունը փակելու համար կա-*

8 Ջրամբարն, առաջին հերթին, նախատեսվում էր կառուցել հենց Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղին ոռոգման ջուր հասցնելու նպատակով (Hakobyan, 2019):

9 «*Գարերի ծնունդ Նոյեմբերյանը իր մայր Հայաստանի նման 1920 թվականի ծնունդն է, և մայր երկիրը ի պարիով հյուսիսից ծագած իր ազարարար արևի, նրան պարզեղ է արշալույսված անուն՝ Նոյեմբերյան (հին անունը՝ Բարանա): Եւ ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ սրանցելի այս աշխարհի վրա թևածում է հաղթանակի շունչը՝ ժամանակի ոգին...*» (Matevosyan, 1977, 3): Ուշագրավ է մի դրվագ, որ վերաբերում է Կոթի գյուղին. գյուղի պետական տնտեսությունը 1976 թ. արժանացել է առաջին կարգի դրամական մրցանակի՝ այն դեպքում, «երբ նրա հողերը ջրի մեծ պահանջ» ունին. այդ տոնը նշանավորվեց Մարշալ Բաղրամյանի՝ Կոթի այցով (Նկ. 4): Սակայն Ջողագի ջրամբարի կառուցումն էլ ավելի էր խանդավառել կոթեցիներին. «*Հիմա գյուղում, երբ խոսք է բացվում նվիրված աշխարհաբնի համար փրված միութենական մրցանակի մասին, նրանք վաղվա մեծ ակնկալիքով ասում են. «Մեր դրոշներն ու մրցանակները մի երկու փարի հետո կրենանք...»* (Matevosyan, 1977, 3): Տեղացիների խոսքով՝ բացի Մարշալ Բաղրամյանից, ջրամբարի կառուցմանը նախորդել է նաև ՀԽՍՀ Կոմկուսի կենտրոնի Ի-ին քարտուղար Կարեն Դեմիրճյանի այցը (1973 թ.) սահմանամերձ Կոթի և Բարեկամավան գյուղեր:



Նկ. 6. Ձկնորսությունը Բերքաբերում (Source: A. Saratikyan)

նուցվել է 1.279 մետր երկարության և 60 մետր բարձրության պարվար: Լեռնամբարձ ծովի հայելին կունենա 214 հեկտար մակերես, այստեղ կցվի 45 միլիոն խորանարդ մետր ջուր: Դա հնարավորություն կրա ոռոգելու Իջևանի, Նոյեմբերյանի շրջանների հողերը. հզոր պոմպերի շտրիկով ջուրը կբարձրանա նաև լեռները: Ոռոգելի կդառնան ևս 5 հազար հեկտար հողեր» (Voice of the Motherland, 1981, № 1, 33), ըստ այլ աղբյուրի՝ 4700 հեկտար (Petrosyan & Gevorgyan, 1979, 3):

Ջրամբարը ծովի մակերևույթից մոտ 650 մ բարձրության վրա է (Malinyan, 2008, 42, 162): Այն մեծությամբ հինգերորդ ջրային ավազանն է ՀՀ-ում Սևանա լճից, Ախուրյանի, Արփի-լճի և Սպանդարյանի ջրամբարներից հետո (Hakobyan, 2019), իսկ ՀՀ 84 ջրամբարների մեջ, փաստորեն, մեծությամբ 4-րդն է (Pipoyan et al., 2019, 21):

### Մշակութաբանական կոնտեքստը

Բերքաբերի ջրամբարը գտնվում է միջնադարյան նշանավոր Գավազան (Գվարգին) ամրոցի հարևանությամբ (Karapetyan, 2004, 436-437)՝ Ջողազ գետի միջին հոսանքի շրջանում, որը գոյանում է Ոսկեպար և Քարահան գետերի միախառնումից: Գավազան ամրոցի մասին բազմաթիվ ավանդագրույցներ կան, որոնք պատմում են, թե ինչպես են տարբեր ժամանակներում մարդիկ ձեռագիր մատյաններ և տարբեր գանձեր որոնել քարայրում (Sargsyan, 1989, 70-77):

Սահմանամերձ մարզ լինելով՝ Տավուշը նաև միջհանրապետական նշանակության ակտիվ հայադրբեջանական կոնտակտային գոտի է եղել խորհրդային շրջանում, քանի որ այստեղով է անցել Երևանից Ղազախ գնացող ավտոմայրուղին, որն այնուհետև շարունակվել է Ղազախ - Թբիլիսի և Ղազախ - Կիրովաբադ (Գանձակ) - Բաքու ուղղություններով:

Խորհրդային տարիներին երկու հարևան «եղբայրական հանրապետությունների» ժողովուրդները՝ հայերն ու ադրբեջանցիները, բարիդրացիական հարաբերություններ են ունեցել: Խորհրդային շրջանում այստեղ տարածված էր «դոստ»-ի ինստիտուտը, այն է՝ հայ ընտանիքներից շատերն ունեին իրենց ադրբեջանցի բարեկամը, որը կոչվում էր դոստ և գրեթե ազգականի կարգավիճակ ուներ (Hovhannisyan, 2022): Բերքաբերցի մեր գրուցակցի խոսքով՝ «Տոներին միշտ միասին էինք նշում, հատկապես մեր Վարդավառի օրը իրենք պարտադիր գալիս էին, իրար հետ լողանում էինք լճում, մասնակցում էին մեր սեղաններին»<sup>10</sup>: Մեկ այլ՝ կոթեցի մեր գրուցակցի խոսքով՝ «Ջրամբարի կառուցմանը մասնակցել են ամբողջ տարածաշրջանից՝ Կոթիից, Շուլավերից<sup>11</sup>, Ոսկեպարից, Ադրբեջանի մի քանի սահմանամերձ գյուղերից և այլն»<sup>12</sup>: Ըստ որոշ տեղեկությունների՝ ջրամբարի շինարարությանը ներգրավված է եղել մինչև 500 մարդ<sup>13</sup>:

Նախքան ջրամբարի շինարարության ավարտը հարակից գյուղերում ռոռգման հնարավորություն չկար: Ջրամբարի կառուցման մասին տեղացիները պատմում են. «Ջրամբարի տեղը երկու ջրաղաց կար (տե՛ս նկ.3.2), ֆերմաներ կային, դրանք քանդեցին, որ տեղը սարքեն ջրամբարը: Բացումը մեծ տոն էր, երգ-երաժշտություն, մեծ ուրախություն

10 Հաղորդել է՝ Գրիշա Մանթաշյանը (ծնվ. 1940 թ.), գ. Բերքաբեր (Տավուշի մարզ). գրառել ենք 2023 թ. հուլիսի 23-ին Բերքաբերում:  
 11 Գյուղ Վրաստանի Քվեմո Քարթլի մարզի Մաննետլի շրջանում:  
 12 Հաղորդել է՝ Ստեփան Վերանյանը (ծնվ. 1949 թ.), գ. Կոթի (Տավուշի մարզ). գրառել ենք 2023 թ. հուլիսի 23-ին Կոթիում: «Շինարարությանը մասնակցում էին Կոթիից, Աջաջից, Ոսկեվանից, շրջակա գրեթե բոլոր գյուղերից» (հաղորդել է՝ Գրիշա Մանթաշյանը. գրառել ենք 2023 թ. հուլիսի 23-ին Բերքաբերում):  
 13 Հաղորդել է՝ Ալբերտ Մադաթյանը, գ. Բերքաբեր (Տավուշի մարզ), եղել է Բերքաբերի գյուղապետ (1999-2022 թթ.) և գյուղի մեխանիկ ջրամբարի կառուցման ժամանակ. գրառել է լրագրող Թաթուլ Հակոբյանը 2019 թ. Բերքաբերում (Hakobyan 2019):



Նկ.7. Բերքաբերի «Խաղաղության այգին» (Source: R. Chobanyan)

էր... Սարքելուց հեկո մերձակայքում դեղձի ու փանձի այգիներ հիմնեցին»<sup>14</sup>: Ջրամբարի ջուրը հասնում էր մինչև ամենահեռավոր գյուղը՝ Բարեկամական: Հատկանշական է, որ Կոթի և Բարեկամական գյուղերում ջրի պակասի պատճառով ռոտգովի այգիներ չկային: Մինչ այդ մասնակի ռոտգով էին կատարում գյուղի գետակից հանված առուների միջոցով:

«Կառուցման աշխատանքներին զուգընթաց այգիներ էին հիմնվում հայրկապես Կոթիում, քանի որ գյուղը հողափառածքների մեծ բաժին ուներ: Ջրի քանակն այնքան մեծ էր, որ նախագիծ էր քննարկվում Կոթիից այն կողմ (դեպի Ս. Սարգիս վանքի մերձակա փարածք) նոր այգեգործական գյուղ հիմնելու մասին»<sup>15</sup>: Եթե Կոթիում հիմնականում պտղատու այգիներ էին հիմնվում, ապա Ոսկեվանում և Բաղանիսում, ջրամբարի գլխավոր ինժեների՝ Ռաֆայել Վարդանյանի խոսքով, զարգացել են ծխախոտագործությունն ու հացահատիկի մշակությունը (Hakobyan, 2019):

Ջրամբարի շինարարությանը զուգահեռ ու նաև դրանից հետո ընթացել են նաև հնագիտական աշխատանքներ: Պեղումների ընթացքի մասին մեր գրուցակիցը հետաքրքիր հուշեր է պատմում. «Ջրամբարի շինարարության ժամանակ ես 10 փարեկան էի: Ջրամբարի կառուցումից հեկո՝ 1987 թ. մասնակցել եմ պեղումներին, հենց լճամերձ փարածքում դամբարաններ էինք պեղում, հեկո դրանք փարան Երևան, թանգարան, պեղումները ընդհատվեցին պարերազմի պարճառով»<sup>16</sup>:

Խորհրդային շրջանում Բերքաբերի ջրամբար

ըն ռոտգովան ջուր է հասցրել ներկայիս Տավուշի մարզի Նոյեմբերյանի և Իջևանի շրջանների 11 գյուղերի՝ Կոթի (այն ժամանակ՝ Շավարշավան), Բարեկամական, Ոսկեվան, Բաղանիս, Ջուջևան, Կիրանց, Բերքաբեր, Ծաղկավան, Սարիգյուղ, Սևքար, Աչաջուր, իսկ Իջևանի շրջանի Ազատամուտ ավանն այս ջրամբարից ստացել է խմելու ջուր՝ համապատասխան գտում անցնելուց հետո: Ջրամբարից ռոտգովան ջուր է մատակարարվել նաև Խորհրդային Ադրբեջանի Ղազախի շրջանի Ֆարահլի գյուղին: Ջրամբարի առաջին աստիճանի պոմպակայանում տեղադրված էին տասնմեկ ջրմուղ պոմպեր. դրանցից չորսը ջուրը մղում էին դեպի Իջևանի շրջանի գյուղեր, չորսը՝ դեպի Նոյեմբերյանի շրջանի գյուղեր, իսկ երեքն Ադրբեջանի Ղազախի շրջանի Ֆարահլի գյուղի համար էին (Hakobyan, 2019):

Արցախյան առաջին պատերազմի բռնկման ժամանակ՝ 1991 թ. ապրիլին, երբ այստեղ մտան ռուսական զորքերը, ջրամբարը դադարեց շահագործվել (Hakobyan, 2019), տարիների ընթացքում ջրամատակարարման համակարգը քայքայվեց: Գյուղացիները սկսեցին փակել մատակարարման ուղիները՝ սեփական կարիքները բավարարելու համար: Այժմ այն սպասարկում է մոտակա ընդամենը մի քանի տնային տնտեսություն:

Երազելով խաղաղության մասին՝ Բերքաբեր գյուղի բնակիչները վերջին տարիներին վերականգնել են ջրամբարի ափին գտնվող հին այգիները և վերանվանել «Խաղաղության այգի» (նկ.7): Ջրամբարի շինարարության ավարտից հետո Ջողազի ջրերի մեջ բաց էին թողել ծածանի և կարպի

14 Հաղորդել է՝ Գրիշա Մանթաշյանը, գրառել ենք 2023 թ. հուլիսի 23-ին Բերքաբերում:

15 Հաղորդել է՝ Ստեփան Վերանյանը, գրառել ենք 2023 թ. հուլիսի 23-ին Կոթիում:

16 Հաղորդել է՝ Ալեքսանդրը (ծնվ. 1963 թ.), գ. Բերքաբեր (Տավուշի մարզ). գրառել ենք 2023 թ. հուլիսի 23-ին Բերքաբերում:



Նկ. 8. Բերքաբերի ջրամբարի շինարարության ժամանակ հայտնաբերված միջնադարյան կարասը (Source: A. Saratikyan)

ձկնկիթ<sup>17</sup>: Մինչև հիմա էլ բնակչությունը զբաղվում է ձկնորսությամբ<sup>18</sup>: Ջողագի ջրամբարի հարևանությամբ՝ Ադրբեջանի տարածքում, հետագայում կառուցվել է ևս մեկ ջրամբար (Աբասբեյլի ջրամբար), որը շահագործվում է մինչ օրս:

**Ջնագիտական կոնտեքստը**

Բերքաբերի ջրամբարի մերձակա տարածքում է գտնվում Հայաստանի բրոնզեդարյան նշանավոր դամբանաշտերից մեկը (Areshyan et al., 1987): Դեռևս 1966 թվականին՝ ջրամբարի կառուցման նախապատրաստական աշխատանքների ընթացքում տարածքը փորելու ժամանակ, ըստ գյուղացիների, գետնի խորքերից հին իրեր էին նկատվել: Այդ է պատճառը, որ շատերի տներում այսօր կան արժեքավոր դամբարանային նյութեր, ինչպես, օրինակ, Հ. Ազիզբեյկյանի անձնական հավաքածուի ապակե սրվակները, զարդերը, հունական և հռոմեական արծաթե դրամները (Simonyan, 2009, 222):

Այսպիսով, ջրամբարի շինարարությունը ոչ միայն գյուղատնտեսական իրավիճակի կարևոր մասն էր կազմում, այլև գիտական նոր իրողությունների սկիզբ ազդարարեց (Gasparyan, 1987, 229; Simonyan, 2009, 215)<sup>19</sup>: Բերքաբերի հնագիտական շերտի մասին մոտավոր պատկերացում ստեղծվեց արդեն 1975 թ., երբ համակարգված շինարարական աշխատանքներ էին կատարվում, և նկատվել էին տարբեր դարաշրջանի հնագիտական հուշարձաններ՝ վաղ բրոնզի դարի բնակավայր և դամբանադաշտեր, միջին և ուշ բրոնզի դարի հսկա դամբանաբլուրների խումբ, անտիկ շրջանի թաղումներ, ուշմիջնադարյան գյուղատեղ, գերեզմանոց, խաչքարեր ևն (Simonyan, 1987, 28): Տարբեր տարիների այստեղ պեղումներ են իրականացրել ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ), Հայաստանի պատմության պետական թանգարանի (ՀՊԹ) և Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) արշավախմբերը՝ հիմնականում ջրամբարի հարավային ափի երկայնքով շուրջ 2 կմ ձգվող հուշարձանախմբում (Gasparyan, 1987, 229; Simonyan, 2009, 216-222):

1981 թ. ՀԱԻ և ՀՊԹ համատեղ ուժերով պեղվել են մասնակի ավերված՝ վաղ բրոնզի և միջին բրոնզի դարի վաղ փուլի մի շարք դամբարաններ (Gasparyan, 1987, 229-233; Simonyan, 1987, 28): Արդեն 1986 թ. ԵՊՀ Հնագիտության լաբորատորիայի Ջողագի արշավախումբը (ղեկավար՝ Գրիգոր Արեշյան, արշավախմբի պետ՝ Հակոբ Սիմոնյան) աշխատանքներ են կատարել վտանգված հուշարձաններում. դրանք էին «Գիլասկուտ հողեր» և «Մեդյաններ» տեղամասերը: Առաջին տեղամասում պեղվել էր մի դամբանաբլուր, որի վերին սևահողային շերտն ավերվել է ջրամբարի շինարարության ժամանակ (Simonyan, 2009, 216)<sup>20</sup>: Ինչպես պեղող հնագետներն են նշում, բացված թաղում-գոհաբերությունների հետ հայտնաբերված խեցեղենի բեկորները վկայում են, որ դամբանաբլուրը պատկանել է միջին բրոնզի վաղ փուլի բեդենյան մշակույթին և թվագրվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 2-րդ կեսով: Պեղումների մյուս տեղամասում կուրարաքսյան մշակույթի վերջին փուլին պատկանող (մ.թ. ա. 3-րդ հազարամյակի կես) դամբարաններ են պեղվել

17 Այս մասին նշում է Թ. Հակոբյանը (Hakobyan, 2019), նաև գրառել ենք 2023 թ. հուլիսի 23-ին Բերքաբեր գյուղում տեղի ձկնորսներից:  
 18 Ձկնորսությամբ զբաղվելն այստեղ խիստ վտանգավոր է. 2014թ. դեկտեմբերի 14-ին ադրբեջանցիները Բերքաբերի բնակիչ, ձկնորս՝ Ադասի Թամրազյանի վրա բազմաթիվ գնդակներ են արձակել: Այս մասին տես «Կյանքի համար վտանգավոր ձկնորսություն՝ հայ-ադրբեջանական սահման հանդիսացող ջրամբարում», <https://168.am/2015/01/29/450131.html>, 03.03.2024:  
 19 «Այսրեղ փաստագրվել են շենգալիթյան [կուր-արաքսյան] մշակույթի բնակավայր և սրան պատկանող դամբարանադաշտեր, միջին բրոնզի դարի վաղ փուլի և ուշ բրոնզի դարի դամբանաբլուրներ, անտիկ ժամանակաշրջանի բնակավայր և թաղումներ, զարգացած և ուշ միջնադարյան գյուղատեղիներ»:  
 20 «Դամբարանը ոռոգման խողովակաշարի անցկացման ժամանակ ավերածության էր ենթարկվել՝ պատերի վերին շարքը քանդել հարթեցրել էին, իսկ արևելյան թևը կտրել էին ոռոգման խողովակաշարի համար փոս փորելիս»։ Վերոնշյալ շինարարական աշխատանքների վերաբերյալ մեզ հասցողվեց գտնել եզակի մի լուսանկար (տես նկ. 3.1):


(Simonyan, 1987, 28): Ուշ շրջանի գտածոներ են հայտնաբերվել «Գիլասկուտ հողեր» հանդամասից 300 մ հարավ-արևմուտք գտնվող «Մուղնու խաչ» տեղամասի բնակավայրի տարածքում, որտեղ բացվել են քարաշար պատերով երեք կիսաքանդ սենյակներ և տնտեսական հոր: Այստեղից հայտնաբերվել են ջնարակված և հասարակ խեցեղենի բազմաթիվ բեկորներ, որոնք թվագրվում են XVIII-XIX դդ. (Simonyan, 1987, 28-29):

Ջրամբարի շինարարական աշխատանքների և պեղումների ընթացքում հայտնաբերված գտածոները համարեցին ինչպես ՀՊԹ-ի, այնպես էլ գյուղի նորաստեղծ թանգարանի հավաքածուն: 1965 թ. Նորայր Արզումանյանի ջանքերով հիմնադրված այս թանգարանի հավաքածուն մեծ մասամբ գտնվել է ջրամբարի շինարարության ժամանակ, վերաբերում է վաղ բրոնզի դարից մինչև ուշ միջնադար ընկած ժամանակաշրջաններին: Հետաքրքիր է հատկապես մեկ տոննա տարողությամբ կարասը (նկ. 8):

Դեռևս 2014 թ., երբ հանդիպեցինք Ն.Արզումանյանին, նա մեզ պատմեց թանգարանի հիմնադրման, ինչպես նաև ժամանակի մեծությունների՝ հատկապես Հովհաննես Շիրազի հետ կապված իր հուշերի, նամակների և լուսանկարների մասին (նկ. 9, 10): Թանգարանի ցուցանմուշների հանդեպ նա առանձնահատուկ վերաբերմունք ուներ: Հավանաբար այդ պատճառով է, որ բոլոր փաստաթղթերը մահից առաջ (2018թ.) նա հանձնեց Հովհաննես Շիրազի տուն-թանգարանին, քանի որ Բերքաբերի թանգարանը պարբերաբար թիրախավորվում էր Ադրբեջանի կողմից (հատկապես 1992 թվականին է մեծապես տուժել հրետակոծությունից):

### Եզրակացություններ

Նախկինում մի քանի հազար հեկտար հողատարածք ոռոգված ջրամբարն այսօր անգործության է մատնված, դրա աշխատանքը դադարել է հայադրբեջանական հակամարտության պատճառով: Ջրամբարի դիրքն այնպիսին է, որ պոմպակայանները շահագործելու համար պետք է հատել Ադրբեջանի վարչական սահմանը, ուստի քանի դեռ հայադրբեջանական հակամարտությունը չի կարգավորվել, ջրամբարի վերագործարկման հնարավորությունը քիչ հավանական է: Բացի այդ, ջրամբարից դեպի Նոյեմբերյանի գյուղեր ջրախողովակաշարն անցնում է Ադրբեջանի տարածքով, հիմնական խողովակաշարը և ցանցը թալանված են, ըստ էության անհրաժեշտ կլինի նոր խողովակաշար և նոր ներքին ցանց կառուցել: Ջրի պակասի պատճառով սահմանամերձ մի շարք գյուղերում մեծաքանակ հողատարածքներ այժմ անջրդի են: Անգործության



նկ. 9. Նորայր Արզումանյանը Հովհաննես Շիրազի և որդիների հետ (Source: A. Arzumanyan)



նկ. 10. Նորայր Արզումանյանը Բերքաբերի թանգարանի իր աշխատասեղանի մոտ (Source: A. Saratikyan)

մատնվելով՝ մարդիկ լքել են իրենց տները, ինչպես, օրինակ, սահմանամերձ Բարեկամավան գյուղում, որն այժմ ընդամենը մի քանի տնտեսություն ունի:

Սահմանամերձ Բերքաբերի տեսարժան վայրերից մեկն այսօր գյուղի պատմազգագրական թանգարանն է: Չնայած թանգարանի անմխիթար պայմաններին՝ այնտեղ պահվում են գյուղի անցյալի վերաբերյալ մեծարժեք նմուշներ: Հնագիտական իրերից բացի՝ թանգարանում տեղ են գտել նաև Բերքաբերի ջրամբարի կառուցման շինարարական

աշխատանքների լուսանկարները, նախկինում՝ Ջողազ, այժմ՝ Բերքաբեր այցելած նշանավոր մարդկանց այցերի վկայությունները:

### Նշումներ և շնորհակալություններ

Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Ջրօգտագործման մշակույթը Հայկական լեռնաշխարհում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» նախագծի (21AG-6A080) շրջանակում:

Շնորհակալություն ենք հայտնում Անի Արզումանյանին՝ անձնական արխիվից մեզ լուսանկարներ տրամադրելու համար:

### Acknowledgements

The research was funded by the Higher Education and Science Committee of MESCS of Republic of Armenia (Research project № 21AG-6A080) entitled “Culture of water use in the Armenian Highland from antiquity to present days”. Special thanks to Ani Arzumanyan for providing us with photos from his personal archive.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ REFERENCES

- Adonts, M.H. (1976). The national economy of Armenian SSR in the tenth five-year period. *Historical-Philological journal*, 1, 16-28 (in Armenian).
- Areshyan, G.E., Simonyan, H.E. & Gasparian, S.E. (1987). Newly discovered Tombs in Joghaz. *Scientific session dedicated to the results of archaeological field work in Armenian SSR in 1985-1986, Theses of reports* (B.N. Arakelyan, Ed.), *On the 80th anniversary of the birth of Karo Ghafadaryan*. Academy of Sciences of Armenian SSR, 6-8 (in Armenian).
- Areshyan, G.E., Simonyan, H.E. (1989). Archaeological Works in Joghaz monument group (1987). *Scientific session dedicated to the results of archaeological field work in Armenian SSR in 1987-1988, Theses of reports* (G. Tiratsyan, Ed.). Academy of Sciences of Armenian SSR, 5-7 (in Armenian).
- Satisfy the thirst of the Native land (Editorial review). (1981). *Female Worker of Armenia*, 1, 33 (in Armenian).
- Gasparian, S.E. (1987). Excavations of Tombs in the Berkaber village of Ijevan region (scientific information). *Historical-Philological journal*, 1, 229-233 (in Armenian).
- Gasparian, S.E. (1991). The Cemetery of Berkaber Kura-Araxes Culture. *Herald of Social Sciences*, 6, 114-128 (in Armenian).
- Harutyunyan, N.V. (1964). *Agriculture and cattle breeding in Urartu*. Academy of Sciences of Armenian SSR (in Russian).
- Harutyunyan, N.V. (2001). *Corpus of Urartian Cuneiform Inscriptions*. Gitutyun (in Russian).
- Hakobyan, T.A. (2019). *Berkaber (Joghaz) reservoir. How the 10 villages of Tavush flourished* (in Armenian). <https://www.civilnet.am/news/193557>
- Hovhannisyan, E.H. (2022, November 4). We Used to be Good “Dosts”: Armenian Memories About Tovuz Railway Station and the State Policy of Shared Infrastructures. *Caucasus Edition: Journal of Conflict Transformation*. <https://caucasusedition.net/we-used-to-be-good-dosts-armenian-memories-about-tovuz-railway-station-and-the-state-policy-of-shared-infrastructures/>
- Jalalyants, S. (2016). *Journey to the great Armenia* (parts A, B). Dall (in Armenian).
- Karapetyan, L.L. (1979). Irrigation and watering of Armenia of the Late Bronze Age. *Historical-Philological journal*, 1, 59-74 (in Russian).
- Karapetyan, S.G. (2004). *Northern Artsakh* (Book Z). Gitutyun (in Armenian).
- Malinyan, R.T. (2008). *Dictionary of Place-names of Tavush marz*. HGM (in Armenian).
- Matevosyan, H.I. (1977). Wings of victory. *Voice of the Motherland*, 19 (615), 3-4 (in Armenian).
- Musheghyan, G.R. (1971). The problem of Irrigation system in Erebuni and Teishebaini. *Historical-Philological journal*, 1, 207-211 (in Armenian).
- National Archives of Armenia. (1975, February 21). *Minutes of the session of the Executive Committee of the Ijevan District Soviet of Workers' Deputies of Armenian SSR* (Chairman of the Session: E. Babayan, secretary of the session: D. Karapetyan) (in Armenian).
- Petrosyan, M., & Gevorgyan, M. (1979, December 5). Blue Veins (Martin Petrosyan's interview with Marlen Gevorgyan, Head of "Glkhayrshin" department). *Voice of the Motherland*, 49 (749), 3-7 (in Armenian).
- Pipoyan, S.Kh., Arakelyan, A.S. & Hepinyan, M.R. (2019). The Ichthyofauna of Joghaz reservoir (Tavush marz, Republic of Armenia). *Biological journal of Armenia*, 3(71), 20-24, (in Armenian).
- Salvini, M. (2008) *Corpus dei testi urartei*, 1: Le iscrizioni su pietra e roccia (Documenta Asiana 8), 3 vol. 31 cm, I: Testi (653 p.), II: Thesaurus (503 p.), III: Carte, fotografie e disegni (390 p.), CNR/Istituto di studi sulle civiltà dell'Esgeo e del Vicino Oriente, Rome.
- Sargsyan, E.G. (1989). *Caves reveal their secrets*. Hayastan (in Armenian).
- Shirmazan, G.V. (1962). *Episodes from the History of Irrigation in Armenia*. Haypetghughhrat (in Armenian).
- Simonayn, R.A. (2009). *Traditional ways of fishing in Tavush*. In A. Kalantaryan, & H.Sargsyan (Eds.), *Tavush. Material and Spiritual Heritage* (233–235), *Proceedings of the republican scientific session, Ijevan, Dedicated to the 50th anniversary of the Institute of Archeology and Ethnography*. Gitutyun (in Armenian).
- Simonyan, H.E. (2009). Joghaz-Berkaber. In A. Kalantaryan, & H. Sargsyan (Eds.), *Tavush. Material and Spiritual Heritage* (pp. 215-232), *Proceedings of the republican scientific session, Ijevan, Dedicated to the 50th anniversary of the Institute of Archeology and Ethnography*. Gitutyun (in Armenian).
- Simonyan, H.E. (1987). Fieldwork of Research Laboratory of Archaeology in 1986. In Yu. L. Vardanyan (Ed.), *Yerevan University Scientific Information Journal*, 2(58), 21-29.

Tadevosyan, H.T. (1978). The five-year Structures will Satisfy the thirst of the Land. *Pioner Kanch*, 71 (4131), 4 (in Armenian).

Tadevosyan, H.T. (1983). Joghaz reservoir. In V. Hambardzumyan et al. (Eds.) *Soviet Encyclopedia of Armenia*. Armenian Encyclopedia (in Armenian).

Photo description. (1979). *Voice of the Motherland*, 5 (705), 1 (in Armenian).

Aqueducts will stretch up the slopes. (1979). *Voice of the Motherland*, 27 (727), 3 (in Armenian).

## AUTHORS

## ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

**Hamazasp Abrahamyan**

ORCID: 0009-0004-1403-0929

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
 History museum of Armenia  
 abrahamyanhamazasp@gmail.com

Համազասպ Աբրահամյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
ավագ լաբորանտՀայաստանի պատմության թանգարան, գիտաշխատող-  
ֆոնդայակահ**Ani Adigyoalyan**

ORCID: 0009-0004-0166-6389

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
 History Museum of Armenia,  
 aniadigyoalyan@gmail.com

Անի Ադիգյոզալյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
ավագ լաբորանտ

Հայաստանի պատմության թանգարան

**Tigran Aleksanyan**

ORCID: 0000-0001-9971-1651

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
 tigranalexanyan@yandex.ru

Տիգրան Ալեքսանյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
գիտաշխատող**Dmitri Arakelyan**

Ph.D. in Geology

ORCID: 0009-0007-6176-445X

Institute of Geological Sciences, NAS, Armenia  
 dm\_prezident@yahoo.com

Դմիտրի Առաքելյան

Երկրաբանական գ. թ.

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ,  
ավագ գիտաշխատող**Hayk Avetisyan**

Doctor in History, Professor

ORCID: 0009-0005-4335-5930

Yerevan State University, Department of Archeology and  
 Ethnography and Archaeological Research Laboratory  
 Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
 h.avetisyan@ysu.am

Հայկ Ավետիսյան

պատմական գ. դ., պրոֆ.

Երևանի պետական համալսարան, Հնագիտության  
և ազգագրության ամբիոնի վարիչ, Հնագիտական  
հետազոտությունների լաբորատորիայի ղեկավար  
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ**Mikayel Badalyan**

Ph.D. in History

ORCID: 0000-0002-7848-1356

Institute of History, NAS, Armenia  
 miq.badalyan@gmail.com

Միքայել Բադալյան

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ,

Հին դարերի բաժնի վարիչ

**Arsen Bobokhyan**

Ph.D. in History

ORCID: 0000-0002-2277-8281

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
 Yerevan State University, Faculty of History  
 arsen.bobokhyan@sci.am

Արսեն Բոբոխյան

պատմական գ. թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
տնօրեն

Երևանի պետական համալսարան,

Պատմության ֆակուլտետ, դոցենտ

**François Fichet de Clairfontaine**

Ministry of Culture, France

<https://orcid.org/0009-0006-6804-8897>

declairfontaine@hotmail.fr

Ֆրանսուա Ֆիշե դը Գլեֆոնտեն

Ֆրանսիայի Մշակույթի նախարարություն

**Tork Dalalyan**

Ph.D. in Philology

ORCID: 0000-0002-8686-5341

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
 torqdal@yahoo.com

Տորք Դալալյան

բանասիրական գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի  
Բանագիտության բաժնի վարիչ**Henrik Danielyan**

ORCID: 0009-0001-2132-4608

Independent Researcher

henrikh.danielyan@gmail.com

Հենրիկ Դանիելյան

անկախ հետազոտող

**Stéphane Deschamps**

ORCID: 0000-0002-8034-4887

Ministry of Culture, France

stephane.deschamps@culture.gouv.fr

Ստեֆան Դեշանպ

Ֆրանսիայի Մշակույթի նախարարություն

**Rafik Gabrielyan**

ORCID: 0009-0005-5965-2614

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
rafik.gabrielyan.93@gmail.com

Ռաֆիկ Գաբրիելյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
կրտսեր գիտաշխատող**Hasmik Galstyan**

Ph.D. in Philology

ORCID: 0009-0005-0144-6922

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
Shirak Center for Armenological Studies, NAS, Armenia  
hasmikgalstyan1979@gmail.com

Հասմիկ Գալստյան

բանասիրական գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների  
կենտրոն,  
գիտաշխատող**Boris Gasparyan**

ORCID: 0009-0004-9118-9175

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
Yerevan State University, Department of Archeology and  
Ethnography  
borisg@virtualarmenia.am

Բորիս Գասպարյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
գիտաշխատող

Երևանի պետական համալսարան, դասախոս

**Philip Glauberman**

ORCID: 0000-0002-2970-2247

The Catalan Institute of Human Paleoeology  
and Social Evolution  
Universitat Rovira i Virgili, Researcher, Tarragona, Spain  
phil.glauberman@gmail.com

Ֆիլ Գլաուբերման

Մարդու պալեոէկոլոգիայի և սոցիալական էվոլյուցիայի  
Կատալոնիայի ինստիտուտՌովերա և Վիրգիլի համալսարան, Տարագոնա,  
Իսպանիա, գիտաշխատող**Artak Gnuni**

Ph.D. in History

ORCID: 0009-0009-5137-4233

Yerevan State University, Chair of Archaeology and  
Ethnography, Archaeological Research Laboratory  
uruatry@rambler.ru

Արտակ Գնունի

պատմական գ. թ.

Երևանի պետական համալսարան, Հնագիտության և  
ազգագրության ամբիոն, դոցենտ  
Հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի  
ավագ գիտաշխատող**Avetis Grigoryan**

Ph.D. in History

ORCID: 0009-0009-1379-3939

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
“Service for The Protection of Historical Environment and  
Cultural Museum-reservations” SNCO  
Yerevan State University  
grigoryan.avetis.9@gmail.com

Ավետիս Գրիգորյան

պատմական գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
գիտաշխատողՀՀ ԿԳՄՄՆ «Պատմամշակութային արգելոց-  
թանգարանների և պատմական միջավայրի  
պահպանության ծառայություն» ՊՈԱԿ  
Երևանի պետական համալսարան**Gevorg Gyulumyan**

ORCID: 0009-0006-8185-149X

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
gyulumyan1910@mail.ru

Գևորգ Գյուլումյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
կրտսեր գիտաշխատող**Artak Hakhverdyan**

ORCID: 0009-0007-2278-209X

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
Architectural Modelling Research Group  
architecart25@gmail.com

Արտակ Հախվերդյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության  
ինստիտուտ, Ճարտարապետական մոդելավորման  
գիտահետազոտական խմբի ղեկավար

**Arsen Harutyunyan**

ORCID: 0000-0002-4890-5584

Ph.D. in History

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

Department of Epigraphy

Matenadaran - Scientific Research Institute of Ancient

Manuscripts named after Mesrop Mashtots

ars.vimagraget@gmail.com

Արսեն Հարությունյան

պատմական գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

Վիճակագրության բաժնի վարիչ

Մատենադարան - Մեսրոպ Մաշտոցի անվան հին

ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, ավագ

գիտաշխատող

**Hayk Haydosyan**

ORCID: 0009-0005-4598-4570

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

Shirak museum of regional studies

haykhay@rambler.ru

Հայկ Հայդոսյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

կրտսեր գիտաշխատող

Շիրակի երկրագիտական թանգարան

**Roman Hovsepyan**

Ph.D. in Biology

ORCID: 0000-0002-7004-1145

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

Archaeobiology and Ethnobiology Research Group

roman.hovsepyan@yahoo.com

Ռոման Հովսեփյան

կենսաբանական գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

Հնակենսաբանության և էթնոկենսաբանության

գիտահետազոտական խմբի ղեկավար

**Ruben Hovsepyan**

Ph.D. in History

ORCID: 0009-0004-2066-5517

Armenian-Russian Slavic University

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

Yerevan State University

rubenhovsepyan7@gmail.com

Ռուբեն Հովսեփյան

պատմական գ.թ.

Հայ-ռուսական Մլավոնական համալսարան, դասախոս

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

կրտսեր գիտաշխատող

Երևանի պետական համալսարան

**Ashot Manucharyan**

Ph.D. in History

ORCID: 0009-0007-7783-8580

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

ashot.manucharyan.1959@mail.ru

Աշոտ Մանուչարյան

պատմական գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

ավագ գիտաշխատող

**Varduhi Melikyan**

ORCID: 0009-0005-4519-1861

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

vard.melikyan@mail.ru

Վարդուհի Մելիքյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

գիտաշխատող

**Levon Mkrtchyan**

ORCID: 0000-0003-2221-4776

"Service for The Protection of Historical Environment and Cultural Museum-reservations" SNCO

Shirak Center for Armenological Studies, NAS, Armenia

levoncultur@gmail.com

Լևոն Մկրտչյան

ՀՀ ԿԳՄՄՆ «Պատմամշակութային արգելոց-

թանգարանների և պատմական միջավայրի

պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, գլխավոր

մասնագետ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների

կենտրոն, կրտսեր գիտաշխատող

**Samvel Nahapetyan**

ORCID: 0009-0006-2984-7741

Independent researcher

samuelnahapetyan@gmail.com

Սամվել Նահապետյան

անկախ հետազոտող

**Arman Nalbandyan**

ORCID: 0009-0003-4965-2691

"Scientific Research Center of Historical and Cultural Heritage" SNCO

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia

hnagetyan18@gmail.com

Արման Նալբանդյան

«Պատմամշակութային ժառանգության

գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ, հնագիտական

խմբի ղեկավար

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,

գիտաշխատող

**Artur Petrosyan**

ORCID: 0000-0003-4804-5593

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
artur.petrosian@yahoo.com

Արթուր Պետրոսյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
գիտաշխատող**Hamlet Petrosyan**

Doctor in History, Professor

ORCID: 0009-0009-4916-1916

Yerevan State University, Department of Cultural Studies  
Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
Research Group for the Study of the Historical and Cultural  
Heritage of Artsakh  
hpetrosy@gmail.com

Համլետ Պետրոսյան,

պատմական գ. դ., պրոֆ.

Երևանի պետական համալսարան,

Մշակութաբանության ամբիոնի վարիչ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
Արցախի պատմամշակութային ժառանգության  
ուսումնասիրության գիտահետազոտական խմբի  
ղեկավար**Ani Saratikyan**

ORCID: 0009-0007-7455-6350

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
anisaratikyaniae@gmail.com

Անի Սարատիկյան

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
կրտսեր գիտաշխատող**Gagik Sargsyan**

ORCID: 0009-0008-3448-488x

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
gaganj@rambler.ru  
Գագիկ ՍարգսյանՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
գիտաշխատող**Anzhela Tadevosyan**

ORCID: 0009-0009-0985-3353

Vagharshapat Historical-Ethnographical Museum, Director  
anzhela.tadevosyan@gmail.com

Անժելա Թադևոսյան

Վաղարշապատի պատմազգագրական թանգարան,  
տնօրեն**Hagop Tcholakian**

Doctor in History

ORCID: 0009-0003-4072-728X

Institute of Archaeology and Ethnography, NAS, Armenia  
hagopcholakian@hotmail.com

Յակոբ Չոլաքեան

պատմական գ. դ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
գլխավոր գիտաշխատող

THE CULTURE OF WATER USE IN ARMENIA  
FROM ANCIENT TIMES TO OUR DAYS

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

«ԱԻԿԱ-Արմենիա, ժամանակակից արվեստի ինստիտուտ» հրատարակչություն

**Տեքստային խմբագրում**

Տիգրան Ռշտունի  
Աշոտ Գալստյան  
Եվա Մնացականյան  
Մարիամ Կարապետյան  
Հակոբ Մադոյան  
Գագիկ Պետրոսյան

**Text editing**

Tigran Rshtuni  
Ashot Galsyan  
Eva Mnacakanyan  
Mariam Karapetyan  
Hakob Madoyan  
Gagik Petrosyan

**Սրբագրում**

Թեհմինա Մարության

**Proofreading**

Tehmina Marutyan

**Տեխնիկական խմբագրում**

Աստղիկ Մարտիրոսյան

**Technical editing**

Astghik Martirosyan

**Կազմ և էջադրում**

Արթուր Հարությունյան

**Cover and pagination**

Arthur Harutyunyan

**Շապիկի լուսանկարը**

Դ. Առաքելյան  
Ախուրյանի ջրամբարը, 2022

**Photo on cover**

D. Arakelyan  
Akhuryan reservoir, 2022

ISBN 978-9939-9339-1-7



9 789939 933917



ՀՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՃԱԿՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՆԵՐ ՕՐԵՐԸ